ՀԱՅԿ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

А. Е. САРКИСЯН

ЗАПАДНОАРМЯНСКИЙ И ВОСТОЧНОАРМЯНСКИЙ ЛИТЕРАТУРНЫЕ ЯЗЫКИ

(СОПОСТАВИТЕЛЬНОЕ-ТИПОЛОГИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ)

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1985

809.198.1

ԱՐՁԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

(ՋՈՒԳԱԴՐԱԿԱՆ-ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)

Ա 71966

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1985

ԳՄԴ 81.22
Ս259

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների թեկնածու Լ. Ս. Հովսեփյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների թեկնածուներ Տ. Մ. Ավետիսյանը և Բ. Կ. Ղազարյանը

Սարգսյան, Ս. Ե.

Ս259 *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ: (Զուգադրական-տիպաբան. քննություն)/Պատ. խմբ. Լ. Ս. Հովսեփյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1984.328 էջ. Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Հր. Աճառյանի անվ. լեզվի ին-տ:*

Մենագրության մեջ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների համակողմանի զուգադրական քննությամբ բացահայտվում են արդի հայերենի երկու լեզվավիճակների հանրույթներն ու առանձնահատկությունները ըստ լեզվական մակարդակների (հնչույթաբանություն, բառագիտություն, ձևաբանություն, շարահյուսություն): Հարացուցային և շարակարգային քննությամբ, քանակական և որակական մեթոդների կիրառմամբ պարզվում է ոչ միայն արևելահայերենի և արևմտահայերենի տիպաբանական մերձակցության աստիճանը, այլև ճշտվում է նրանց դիրքը աշխարհի լեզուների ընդհանրական տիպաբանական դասակարգման սխեմայում:

Նախատեսված է լեզվաբանների և հայագետների համար:

4602010000
U $\frac{}{703(02)-84}$ 76—84

ԳՄԴ 81.22

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Հայերենագիտությունը վերջին տասնամյակներում աննախընթաց ղարգացում է ապրել։ Հրատարակված բազմաթիվ մենագրություններում մանրազնին ուսումնասիրության են ենթարկվել հայերենի տարբեր փուլերը, կիրառվել են ավանդական և նորագույն մի շարք մեթոդներ։ Բնականաբար, քննության ծիրից դուրս չեն մնացել նաև արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարաբերության հարցերը, թեև առ այսօր նշված գրական լեզուների քիչ թե շատ ամբողջական զուգադրության փորձեր չեն կատարվել։

Սույն աշխատությունն այդ ասպարեզում կատարված առաջին փորձը է, ուր ժամանակակից հայոց գրական լեզվի երկու վիճակները զուգադրվում են ըստ լեզվական հիմնական մակարդակների՝ հնչույթային, բառային, ձևաբանական, շարահյուսական։ Արևելահայերենի և արևմտահայերենի մերձակցության աստիճանը, փոխհարաբերության իրական պատկերն ունենալու համար, բնականաբար, անհրաժեշտ է նշված լեզվավիճակների ամբողջական և նեառողական զուգադրություն կատարել։

Անուրանալի է զուգադրական-տիպաբանական հետազոտությունների խոշոր ավանդը ինչպես ոչ ցեղակից, այնպես էլ ցեղակից լեզուների քննության ասպարեզում։ Լեզվական երևույթների զուգադրությամբ, տիպաբանական (քանակական և որակական) մեթոդների կիրառմամբ նպատակ է հետապնդվել պարզել արևելահայերենի և արևմտահայերենի լեզվակառուցվածքային ընդհանրություններն ու առանձնահատկությունները։

Ինչպես քննության ընթացքում, այնպես էլ բուն լեզվաբանական քննությանն անցնելուց առաջ հետազոտողի առջև դրվում են մի շարք հարցեր։ Ամենից առաջ այն, թե ի՞նչ երևույթների հետ գործ ունենք՝ միևնույն լեզվի տարբերակների՞, տարբեր լեզուների՞, թե մի կողմից գրական լեզվի և մյուս կողմից՝ բարբառի վրա բարձրացած գրական տարբերակի՞ հետ։

Հայտնի է, որ ճակատագրի բերումով աշխարհաբարի ձևավորման ժամանակ հայոց գրական լեզուն ներկայացավ երկփեղկված՝ գրական արևելահայերեն և գրական արևմտահայերեն վիճակներով։ Պատասխանելու համար այն հարցին, թե ինչ հարաբերության մեջ են գտնվում նշված լեզվավիճակները, ամենից առաջ անհրաժեշտ է հստակորեն տարբերակել երկու կարգի չափանիշներ՝ արտալեզվական և լեզվական։ Կարո՞ղ են, արդյոք, որոշիչ լինել արտալեզվական այնպիսի գործոններ, ինչպես տվյալ ժողովրդի տարբեր պետությունների կազմի մեջ մտնելը. դրա հետևանքով առաջացած քաղաքական, տնտեսական, մշակութային տարբեր պայմաններում գտնվելը, աշխարհագրական դիրքով անջատվածությունը։ Մի շարք լեզուների ընձեռած փաստերը վկայում են, որ նշված հանգամանքների բավական երկար գոյատևումը կարող է վճռորոշ դեր խաղալ. մեկնակից լեզուները կարող են աստիճանաբար հեռանալ իրարից, բնութագրվել զարգացման տարընթաց միտումներով, ձեռք բերել բացարձակ ինքնուրույնության։ Նման պայմաններում միանգամայն հնարավոր է, որ մեկ լեզվի երկու տարբերակների միջև, երկար ժամանակահատվածում բավարար կապի և շփման բացակայության հետևանքով, առաջանան երկու ինքնուրույն լեզուներ։

Արևելահայերենի և արևմտահայերենի անգամ թոուցիկ զուգադրությունը ակնբախ է դարձնում նրանց միջև եղած շփման կետերի ոչ թե նվազեցումը, այլ ընդհակառակն՝ աճը։ Մանավանդ մեր դարի կեսերից սկսած երկու գրականներում էլ շոշափելի են դարձել փոխներթափանցման երևույթները՝ արևելահայերենի ազդեցությունը արևմտահայերենի վրա և հակառակը։ Երկու գրականների լեզվական իրակությունների կենդանի սերտաճման հետաքրքիր փաստեր կարող է տալ ծագումով արևմըտահայի արևելահայերենը։ Այդ առումով հիանալի նմուշ է Վահրամ Փափազյանի լեզուն։ Ջենք խոսում այլևս Լևոն Շանթի և Կոստան Զարյանի լեզվի մասին։

Լեզվաբանության համար վճռորոշ են ոչ թե արտալեզվական երևույթները, այլ լեզվական գործոնը։ Հարկ է նշել, որ արդի հայերենի նշված վիճակների հնչույթային, քերականական կառուցվածքների, բառապաշարի ոլորտում եղած տարբերությունները արևելահայերենը բնավ անհամատեղելի չեն դարձնում արևմտահայերի համար և հակառակը։ Ընդ որում առկա լեզվական տարբերությունները հաճախ պայմանավորված են հայերենին ընդհանրապես հատուկ համանշային շարքերի մրցակցության մեջ տարբեր ընտրություններով, արդյունք են հայերե-

նին ընդհանրապես հատուկ մի շարք արտահայտչաձևերից գերազանցապես այս կամ այն ձևին նախապատվություն տալու (հմմտ., օրինակ՝ ախոյան—մրցուդ, սպիտակ—ճերմակ, վատ—գեշ-ի կիրառությունը երկու գրականներում)։

Չի կարելի լեզվական ինչ-ինչ տարբերությունների վրա հիմնվելով՝ շուտափույթ եզրակացնել, որ գործ ունենք տարբեր ազգային լեզուների հետ։ Լեզվաբանությանը հայտնի են դեպքեր, երբ մեկ լեզվի երկու տարբերակների միջև եղած տարբերություններն շատ ավելի են, քան երկու տարբեր, բայց ցեղակից լեզուների միջև (օրինակ՝ ռետոռոմաններենի էնգադին և սելվի տարբերակների միջև անհամապատասխանություններն ավելի մեծ թիվ են կազմում, քան իսպաներենի և պորտուգալերենի միջև. տե՛ս ՆԱ. 10)։ Հետու չգնալով՝ օրինակներ կարելի է բերել հենց հայերենից։ Հիմնվելով եղած անհամապատասխանությունների վրա, հայոց լեզվի բարբառների մեծ մասը, նույն մոտեցմամբ, իսկապես անհնար կլիներ մեկ լեզվի մեջ մտցնելը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ մեկ բարբառի ներկայացուցիչը կարող է այլ բարբառով խոսողին բնավ չհասկանալ։ Անհասկանալիությամբ հանդերձ, դրանք չեն դադարում նո՛ւյն հայոց լեզվի բարբառները լինելուց։

Վերոհիշյալ հարցին, թե ինչ կարգի երևույթների հետ գործ ունենք՝ լեզվի՞, տարբերակի՞, թե արևելահայ գրական լեզվի, իսկ արևմտահայ գրական տարբերակի, հայագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել (հմմտ. Լէ)։ Ներկայիս ընդունելի է հետևյալ տեսակետը. աշխարհաբար կամ արդի հայերեն լեզուն ունի երկու գրական դրսևորումներ, որոնք «մեր ազգային գրական լեզվի գոյության երկու ձևերն են» (Գ. VII)։ Անժխտելի է, որ թե՛ արևելահայերը, թե՛ արևմտահայերը երբեք էլ չեն ընդունում երկու տարբեր ազգային լեզուների գոյության փաստը։ Հայոց ազգը մեկ ազգային լեզու ունի՝ ժամանակակից հայոց լեզուն իր երկու գրական դրսևորումներով, որոնք մեր հետագա շարադրանքում կներկայացվեն գրական լեզու հորջորջումով, ուր լեզու տերմինը որոշ պայմանականություն ունի։ Նշելով, որ հայոց լեզուն ներկա համաժամանակյա կտրվածքով մեզ տրված է երկու վիճակով կամ տարբերակով՝ արևելահայերեն և արևմտահայերեն, սխալ կլիներ նրանցից մեկն ու մեկին առավելություն տալով՝ մյուսն իսպառ անտեսելը։ Գրական արևելահայերենը Սովետական Հայաստանում բարձրացել է պետական լեզվի աստիճանի, որի շնորհիվ լայնորեն ընդարձակվել են նրա գործառական ոլորտները, ենթարկվել որոշակի կանոնարկման։

Գրական արևմտահայերենը XX դ. սկզբին Արևմտյան Հայաստանի բնակչության բնաջնջումից՝ առաջին ցեղասպանությունից հետո շարունակում է գոյատևել իբրև սփյուռքահայության լեզվահաղորդակցման միջոց: Երկու գրականներով էլ ստեղծվել է հարուստ գրականություն:

Պետական լեզվի աստիճանի բարձրացած արևելահայերենը լեզվակառուցվածքի զարգացման ընդհանուր միտումներով, ինչպես նշվեց, ազդում է գրական արևմտահայերենի վրա: Վերջինս իր հերթին նույնպես նկատելի ազդեցություն ունի գրական արևելահայերենի վրա: Մեկ խոսքով, արևելահայ և արևմտահայ լեզվավիճակներից յուրաքանչյուրը բնութագրվում է հարուստ ավանդույթներով, բայց զարգացման տարբեր հեռանկարներով: Արևելահայերենի զարգացման համեմատաբար լայն հնարավորությունները, ինչպես նաև արևմտահայերենի անորոշ հեռանկարը առիթ են տվել որոշ լեզվաբանների պնդելու, որ գրական արևելահայերենը զարգանալու է «դեպի համազգային լեզվի բարձունքը» (տե՛ս Գ. VII—VIII): «Արդի հայերենի բացատրական բառարանի» առաջաբանում շեշտելով արդի հայերեն և ժամանակակից հայերեն տերմինների իմաստային տարբերությունը, գրված է. «Այս բնութագրությամբ «արդի հայերեն» անվանումը տարբերակվում է «ժամանակակից հայերեն» տերմինից, որով մեզ մոտ անվանում են մեր գրական և խոսակցական լեզուներից (ազգային լեզվի տարբերակներից) միայն մեկը՝ արևելահայերենը» (նույն տեղում):

Ինչ խոսք, որ արևմտահայերենի «մահախոսականը» կարդալը տակավին շատ շուտ է և խիստ վիճարկելի: Մանավանդ եթե հաշվի առնենք, որ իր գոյապայքարում արևմտահայերենը իրավունք ունի ապավինելու իր կենսալից թևին՝ արևելահայերենին:

Հայերենագիտության մեջ մինչև վերջին ժամանակներս բավարար չափով չի ուսումնասիրվել այն հարցը, թե ի՛նչ աստիճանի, կոնկրետ տվյալներով, ընդհանրություններ և տարբերություններ կան մեր երկու գրական լեզուների միջև: Ավելին, դեռևս չի պարզվել, թե առկա տարբերությունները ինչպիսի բաշխվածություն ունեն ըստ լեզվական մակարդակների:

Մինչդեռ այդ հարցի լուծումը կարող է մեծապես նպաստել մեր գրական լեզուների ոչ թե մեխանիկական մերձեցմանը, այլ վերջիններիս համար զարգացման ընդհանուր ուղիներ մշակելու գործին:

Հանրահայտ իրողություն է, որ հայոց լեզվի քննությունը լեզվաբանական նորագույն (կառուցվածքային, փորձառական) մեթոդներով

կատարվել է հիմնվելով բացառապես գրական արևելահայերենի նյութի վրա. մի բան, որ ինչ որ տեղ խանգարել է հայոց լեզվի կառուցվածքի ամբողջական նկարագրմանը:

Այլ լեզուների հետ համեմատության եղրեր փնտրելուց բացի և ամենից առաջ հայ լեզվաբանության կարևոր խնդիրներից պետք է լինի, անտարակույս, նաև այն, թե ի՞նչ է ճնարավոր և ի՞նչ է բացառվում մեր երկու լեզվավիճակներում:

Ահա այդ նպատակին է ծառայում ներկա ուսգադրական քննությունը, որն իր եղանակով բնութագրողական աշխատանք է, ուր ժամանակակից հայոց լեզուն բնութագրվում է իմն իր մեջ:

Հաջորդ հարցը, որ ծագում է նախքան բուն ուսգադրական քննության անցնելն, այն է, թե ի՛նչը պետք է դրվի հետազոտության հիմքում, ուսգադրվող գրական լեզուներից ո՛րն է դիտվելու համեմատելի եղր: Թվում է, առաջանում է, այսպես կոչված, էտալոն կամ միջակա լեզու ընտրելու խնդիրը:

Պետք է ասել, որ արևելահայերենի և արևմտահայերենի ուսգադրական քննության ժամանակ նման միջակա լեզու ստեղծելու անհրաժեշտություն բնավ չի առաջանում. որպես համեմատելի եղր, ուսգադրության եղակետ կամ հիմք կարելի է ընդունել ինչպես արևելահայերենը, այնպես էլ արևմտահայերենը:

Ներկա ուսգադրության հիմքում դրվում է արևելահայ գրական լեզուն և վերջինս հետևողականորեն ուսգադրվում է գրական արևմտահայերենին: Այսպիսով, փաստորեն, ժամանակակից հայոց գրական լեզուն տիպաբանական բնութագրման է ենթարկվում, ինչպես նշվեց, իմն իր մեջ:

Ընդ որում թեև լեզվաբաններից ոմանք բուն տիպաբանական քննության սկիզբը համարում են այն պահից (և միայն այն պահից), երբ դուրս ենք գալիս ցեղակից լեզուների ուսգադրության ոլորտից դեպի ոչ ցեղակից լեզուների ուսգադրության ոլորտը (հմմտ. Ծ), ըստ էության, սակայն, տիպաբանական և ոչ տիպաբանական ենթություն որակումը սոսկ ցեղակցությամբ և ոչ ցեղակցությամբ չի պայմանավորվում: Անշուշտ, ցեղակից լեզուների դեպքում ընդհանրություններն ըստինքյան ենթադրելի ու ակնկալելի են:

Հայտնի է, որ Շլեգելների ըմբռնմամբ, տիպաբանական մերձակցությունը կանխորոշում է ծագումնաբանական ընդհանրություն, որն ըստ էության սխալ է: Հակառակ տեսակետը նույնպես (ոչ ցեղակից լե-

ղունների զուգադրությունը տիպաբանական համարելը) վիճարկելի է։

Հետևելով Սկալիչկային (հմմտ. ՇԴ), ցեղակից լեզունների զուգադրությունը համարում ենք միկրոտիպաբանություն, ոչ ցեղակից լեզուներինը՝ մակրոտիպաբանություն։

Այս առումով մեր երկու գրական լեզունների զուգադրությունը կարելի է կատարել նույն սկզբունքներով և մեթոդներով, ինչ ցեղակից լեզուներինը։ Ընդ որում ինքնըստինքյան հասկանալի համարելով առկա ընդհանրությունները, ավելի մեծ ուշադրություն է դարձվում լեզվական առանձնահատկություններին, քանի որ վերջիններս ավելի մեծ իրազեկում են պարունակում։

Ներկա զուգադրական քննության ժամանակ հաշվի են առնվել հետևյալ հիմնական սկզբունքները.

1. Ուսումնասիրության ընթացքում հենվել ենք համակարգային երևույթների վրա։ Նախքան զուգադրությունը պարզվել են երկու գրականների լեզվական անփոփոխակները, վերջիններս և նրանց փոփոխակների միջև առկա հարաբերությունները։ Զուգադրությունը կատարվել է ըստ գործառական հավասարարժեք միավորների, խուսափելու համար մեկ լեզվական ձևի փոփոխակը մյուսի անփոփոխակի հետ նույն մակարդակի վրա դնելուց։

2. Յուրաքանչյուր լեզվական երևույթի քննության ժամանակ նկատի է առնվում զուգադրվող միավորի լեզվի ընդհանուր համակարգում ունեցած տեղն ու նշանակությունը (արժեքը)։ Ընդ որում, համակարգի բաղադրիչ տարրերը զուգադրվում են ըստ որոշակի համակարգային ոլորտների (օրինակ՝ հնչույթային համակարգն ըստ ձայնավորական և բաղաձայնական ոլորտների և այլն)։

3. Լեզվական ընդհանրությունների և առանձնահատկությունների բացահայտումը կատարվել է ըստ առանձին մակարդակների, որոշակի հաջորդականությամբ՝ հնչույթային, ձևաբանական, շարահյուսական։ Ընդ որում մեկ մակարդակի քննությունից ստացած տվյալները, անհրաժեշտության դեպքում, հաշվի ենք առել հաջորդ մակարդակի երևույթները «արժևորելիս»։ Հայտնի է, որ մի մակարդակի քննությունից կարելի է, թեկուզև ընդհանուր, պատկերացում կազմել հաջորդ մակարդակի առանձին հատկանիշների մասին։ Այսպես, օրինակ՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների հնչույթային կառուցվածքների զուգադրությունից հետևում է, որ արևելահայերենի եռաշարք բաղաձայնական հակադրությունների (Բ–Պ–Փ, Դ–Կ–Ք և այլն) դիմաց արևմտա-

հայերենի երկշարք հակադրությունների (Բ–Փ, Գ–Ք և այլն) առկայությունը ինքնին ենթադրել է տալիս արևմտահայերենի բառաքերականական, ձևաբանական կառուցվածքներում համանուն բառերի համեմատաբար մեծ կշիռը (հմմտ. արևել. գար–կար–ֆար, ղեր–սեր–քեր և արևմտ. գար–ֆար–ֆար, ղեր–քեր–քեր և այլն)։

4. Տիպաբանական հետազոտություններում հաճախ բավարարվում են լեզվակառուցվածքների այնպիսի զուգադրությամբ, ուր հաշվի է առնվում տվյալ լեզվի միայն մեկ գործառական վիճակը, գերազանցապես գրական լեզուն։ Մինչդեռ լեզվի ընդհանուր տեսության համար էական է նաև տվյալ լեզվի գործառական մյուս տարբերակների հաշվառումը։ Այդ առումով արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրությունը կարելի է կատարել երկու պլանով՝ լայն և նեղ։ Լայն առումով այն կարելի է իրագործել երկու լեզուների ինչպես գրական (գրավոր և բանավոր), այնպես էլ խոսակցական տարբերակների քննությամբ։

Անշուշտ, այդպիսի խիստ ընդգրկուն հետազոտությունը ապագայի գործ է։ Դա հնարավոր է իրագործել արդի հայերենի գործառական բոլոր տարբերակների ամբողջական, հնարավորին չափ սպառիչ նկարագրություններն ունենալուց հետո։

Այսպիսով, ներկա աշխատանքում որդեգրվել է քննության նեղ առումը, ուր զուգադրվում են միայն գրական լեզուների տվյալները։

Զուգադրության ընթացքում հաշվի են առնվել գրական լեզուների ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր (բերանացի) տարբերակների առանձնահատկությունները։ Որոշ դեպքերում (օրինակ՝ գրական արևմտահայերենի հնչույթային կառուցվածքում ձայնեղի և շնչեղ խուլի դիրքային առանձնահատկությունները բացահայտելիս) շատ ավելի արդյունավետ կարող է լինել գրական լեզվի բանավոր տարբերակի քննությունը։

Եթե գրական արևելահայերենի կանոնական արտասանության հուսալի տեղեկատուներ գտնելը ոչ մի դժվարություն չի ներկայացնում, ապա միանգամայն բարդ է վիճակը արևմտահայերենի կանոնական արտասանության ճշգրտման պարագային։ Գրական արևմտահայերենի բանավոր տարբերակի ուսումնասիրության համար հիմք են ծառայել Կիպրոսի Մելքոնյան կրթական հաստատության ուսուցչական կազմի և բարձր դասարանների սովորողների գրական կանոնական խոսքը, կիպրահայ ռադիոժամերի արտասանական օրինաչափությունները, այլև Մերձավոր և Միջին Արևելքի հայաշատ գաղութների գրական խոսքը,

որ հեղինակն աշխատանքի բերումով ունկնդրել, ձայնագրել և քարտագրել է 1972—1976 և 1978—1982 թվականների ընթացքում:

Ինչպես ցույց են տալիս նորագույն ուսումնասիրությունները (Ե. ԻԴ), արևելահայ կանոնական արտասանության ոլորտում տեղի են ունեցել որոշակի փոփոխություններ: Հետաքրքիր է պարզել, թե ինչ վիճակ է գրական արևմտահայերենի արդի փուլում: Հարկ է հիշեցնել, որ Հ. Աճառյանի և Հ. Գազանճյանի դասական աշխատությունների հրապարակումից ավելի քան կես դար է անցել: Բնական է ենթադրել, որ արևմըտահայերենի կառուցվածքը ևս ենթարկվել է որոշ տեղաշարժերի, փոփոխությունների, որոնք նկատի են առնվել ներկա աշխատանքում:

5. Հարց կարող է առաջանալ, թե ղուգադրական քննությունը արտահայտության պլանի՞ց պետք է տանել դեպի բովանդակության պլանը, թե հակառակը: Անշուշտ, կարելի էր շարադրանքը տանել ներհինից դեպի արտաքինը՝ ձևականը, շարահյուսական կարգերի քննությունից անցնել ձևաբանական կարգերի և գործառույթների արտահայտման արտաքին եղանակներին, հաշվի առնելով, որ վերջիններս աչքի են ընկնում դրսևորման բազմազանությամբ: Թեև այդպիսով լեզվի անկրկնելի ձևը ավելի ցայտուն կդրսևորվեր, սակայն, ինչպես նկատել է Գ. Ջահուկյանը, «Մենք դեռևս չունենք բովանդակության տարրերի բացահայտման այնպիսի մի ընդհանրական բանալի (իմաստաբանական համընդհանուր ուսմունք), որ հնարավորություն տար թափանցելու բոլոր լեզուների բովանդակության կողմի մեջ» (ԼԳ. 99):

Այդ պատճառով ներկա ղուգադրական քննությունը հարմար ենք նկատել սկսել արտահայտության պլանից՝ դնալով դեպի բովանդակության պլանը:

6. Ինչպես հայտնի է, ղուգադրության ժամանակ լեզվական համապատասխանությունները հիմք են ծառայում այն դեպքում, երբ նրանց միջև ընդհանրությունները քիչ են: Հակառակ դեպքում, երբ ղուգադրվում են մերձավոր ցեղակից լեզուներ, որոնք բազմաթիվ կառուցվածքային ընդհանրություններ ունեն, կարևորությամբ հաշվի են առնըվում լեզվական տարբերությունները: Ընդ որում ընդհանրությունների աճմանը ղուգընթաց՝ կարող են հաշվի առնվել նաև առավել նվազ տարբերությունները, որոնք ընդհանուր լեզվաբնութագրման ժամանակ կարող էին նաև չմատնանշվել: Հասկանալի է, որ հայոց լեզվի երկու գրական վիճակների ղուգադրության ժամանակ, բնականաբար, կիրառվել է վերջին մոտեցումը՝ տարբերությունների հաշվառումը:

7. Լեզվի պատմությունն ուսումնասիրելիս միշտ չէ, որ գործ ենք

ունենում հարյուրամյակներով սահմանազատված լեզվական իրակուբյունների հետ: Երբեմն մեկ-երկու սերնդի աչքի առաջ նկատելի տեղաշարժեր են կատարվում լեզվի կառուցվածքում: Ուստի արդի հայերենի շարժընթացը, զարգացման ուղղվածությունը առավել հստակ պատկերացնելու համար մեր գրականների համար առանձնացրել ենք երկու փուլ՝ ա) նոր շրջան, որ ընդգրկում է մեր դարասկզբից մինչև հիսունական թվականները, բ) նորագույն շրջան, որ ընդգրկում է XX դարի կեսերից մինչև մեր օրերը: Ենթափուլերի տարբերակմամբ հնարավորություն է ընձեռվել ոչ միայն պարզել արդի լեզվավիճակների մերձակցության աստիճանը, այլև բացահայտել աշխարհաբար լեզվի զարգացման ընդհանուր ուղղվածությունը:

8. Ջուգադրության ընթացքում նկատի է առնվել յուրաքանչյուր լեզվական երևույթի գործառական բեռնվածությունը տվյալ համակարգում: Եթե տիպաբանորեն նույնական կոչենք լեզվական այնպիսի երևույթներ, որոնք տվյալ համակարգում ունեն նույնական գործառություն, ապա անհրաժեշտություն է առաջացել ոչ միայն նշել, թե երկու գրականներում ինչպիսի լեզվական միավորներ են առկա, քննվող միավորները ինչ տարբերիչ հատկանիշներով են բնութագրվում, այլև՝ ինչպիսի գործառական բեռնվածություն են կրում: Այսպես, օրինակ՝ թե՛ արևելահայերենի և թե՛ արևմտահայերենի հնչույթային համակարգերում առկա է Թ հնչույթը, որն երկու գրականներում էլ օժտված է միևնույն տարբերիչ հատկանիշներով. այդուհանդերձ արևմտահայերենի Թ-ի և արևելահայերենի Թ-ի միջև գործառական առումով նույնություն լինել չի կարող, որովհետև մեկը (արևելահայերենի Թ-ն) հանդես է գալիս որպես եռաշարք հակադրության բաղադրիչ՝ Դ–Տ–Թ, մյուսը՝ արևմտահայերենինը՝ երկշարք հակադրության անդամ՝ Դ–Թ: Նշանակում է, որ արևմտահայերենի Թ հնչույթը գործառական ավելի մեծ բեռնվածություն է կրում, քանի որ նա, բացի արևելահայերենին հատուկ Թ-ի հիմնական դիրքերից, հանդես է գալիս նաև այնպիսի ոլորտներում, որտեղ արևելահայերենը հանդես է բերում Դ հնչույթը:

9. Արտահայտության և բովանդակության պլանների հարաբերակցային քննության դեպքում ի հայտ բերված առանձնահատկությունները աշխատանքում ներկայացվում են համապատասխան նշումով: Այնտեղ, որ տվյալ ձևը (ածանցը, բառը և այլն) հատուկ է միայն արևելահայերենին, ներկայացվում է 1 նշանով: Եթե տվյալ ձևը հատուկ է միայն արևմտահայերենին, ապա տրվում է 2 նշանով: Այդ առանձնահատկությունները կարող են լինել՝ միևնույն գործառության, քերակա-

նական միևնույն կարգի արտահայտման համար լեզվական տարբեր միջոցների օգտագործումը և, հակառակը՝ միևնույն լեզվական միջոցների օգտագործումը տարբեր քերականական գործառույթություններ արտահայտելու համար: Ըստ այդմ պետք է նշել հետևյալը. երկու գրական լեզուների տիպաբանական անհամապատասխանությունները գերազանցապես պայմանավորված են ընտրության հետևյալ հիմնական տիպերով. ա) ազատ—ոչ ազատ ընտրություն և բ) նշանակիր—աննշանակիր ընտրություն:

Ազատ ընտրությունը առկա է այն դեպքում, երբ հեշտությամբ կարելի է այս կամ այն ձևային, իմաստային կամ գործառական դասի մեջ մտնող տարրը փոխարինել նույն դասի մեջ մտնող մեկ այլ տարրով:

Ոչ ազատ ընտրությունը պայմանավորված է այն բանով, որ իրացվում է տվյալ համակարգի թույլատրելի հնարավորություններից մեկը:

Նշանակիր ընտրությունը առկա է այն դեպքում, երբ նույն դասի մեջ մտնող մեկ այլ լեզվական տարրի ընտրության դեպքում փոխվում է ասույթի բովանդակությունը: Ազատ աննշանակիր ընտրությունը հնարավոր է լեզվի այնպիսի երկու ձևերի միջև, որոնք հավասարապես թույլատրելի են կառուցվածքի և կանոնի համար:

Ինչպես ցույց կտրվի հետագա շարադրանքում, երկու գրականներում հիմնականում կիրառվում է ազատ աննշանակիր ընտրության ձևը:

10. Ներկա զուգադրական քննության ընթացքում կիրառվել են որակական և քանակական մի շարք մեթոդներ: Նկատի ունենալով, որ ցանկալի արդյունք կարելի է ստանալ այդ մեթոդների համակցված կիրառմամբ՝ հնարավորին չափ տեղ է տրվել թե՛ մեկին, թե՛ մյուսին: Հաշվի են առնվել փորձառական ուսումնասիրությունների տվյալները, փորձ է կատարվել բացահայտելու մեր երկու գրականների հավելուրդայնության աստիճանը:

Լեզվաբանական ուսումնասիրություններում վիճակագրական մեթոդների կիրառման անհրաժեշտությունն անուրանալի է: Մեր երկու գրական լեզուների զուգադրական քննության ժամանակ վիճակագրական փորձերի անհրաժեշտությունն ավելի սուր է զգացվում, որովհետև շատ հաճախ նույն երևույթն առկա է երկուսում էլ, սակայն տարբեր բեռնվածություններով, հաճախականությամբ, ընդգրկման ծավալներով, ուստի և՝ տարբեր արժեքներով: Առանձին դեպքերում հաճախականության մոտ արժեքներ ունեցող երևույթների միջև տարբեր ոլորտային բաշխվածություն է լինում: Այսպես, օրինակ՝ երկու գրականներում էլ առկա են Ի և Ու հոլովումները: Այդուհանդերձ նշված հոլովումները

իրենց համակարգերում ոլորտային միանգամայն տարբեր բաշխվածություն ունեն. եթե արևելահայերենի հոգնակի թվում բոլոր հոլովումներին պատկանող գոյականները թեքվում են Ի հոլովմամբ (մայր—մոր—մայրերի, գինի—գինու—գինիների), ապա արևմտահայերենում, հակառակը, բոլոր հոլովումների, այդ թվում նաև Ի հոլովման պատկանող անունները թեքվում են Ու հոլովմամբ (գետ—գետի—գետերու, մարդ—մարդիկ—մարդեր—մարդերու և այլն)։

11. Ձուգադրության հիմքում դրվել են երկու լեզվավիճակներին բնորոշ ինչպես հնչյունական, այնպես էլ քերականական հատկանիշների փնջեր։ Հատկանիշներն ընտրելիս նկատի են առնվել կառուցվածքային էական հատկանիշները, քանի որ պատահականորեն ընտրված հատկանիշները պարզապես հավելուրդային կարող են լինել։

Գ. Ջահուկյանի կողմից հայագիտության մեջ մշակվել և կիրառվել է բազմահատկանիշ դասակարգման մի մեթոդ (տե՛ս ԼԴ), ուր հեղինակն առաջին անգամ թվային որոշակի տվյալներով քննել է լեզվական այլ վիճակներին զուգընթաց, նաև արևելահայ և արևմտահայ գրական լեզուների մերձակցության աստիճանը, բարբառային հիմքերից նրանց հեռացման, այսպես կոչված «մաքրության աստիճանը»։

Գ. Ջահուկյանի վիճակագրական բազմահատկանիշ դասակարգումը հնարավորություն է տալիս, ի թիվս այլ հարցերի, «ավելի որոշակիորեն պատկերացնելու գրական լեզուների և բարբառների փոխհարաբերությունը» (նույն տեղում)։

Անտարակույս, սույն մեթոդի օգտագործումը խիստ արդյունավետ է այն դեպքում, երբ, ինչպես հեղինակն է նշում, ցանկանում ենք պարզել գրական լեզուների՝ բարբառների հետ ունեցած մերձակցության աստիճանը։ Այլ է պարագան, երբ դրվում է մեր երկու գրական լեզվավիճակների փոխհարաբերության հարցն իմքինե։ Վերջին դեպքում առանձին հատկանիշներ դառնում են հավելուրդային (օրինակ՝ քմայնացած ձայնավորների առկայությունը, երկար և կարճ ձայնավորների տարբերակվածությունը, նմանօրինակ այլ հատկանիշների հաշվառումը երկու գրականների համար)։ Ուստի Գ. Ջահուկյանի կողմից ներկայացված ցանկում որոշակի փոփոխություններ պետք է կատարել, հաշվի առնելով կառուցվածքաիպաբանական առանձնահատկությունները։

Վերոհիշյալ սկզբունքների հետևողական կիրառմամբ ստացված արդյունքները, կարծում ենք, ավելի հստակ պատկերացում կարող են տալ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների փոխհարաբերության մասին, վեր հանելով յուրաքանչյուր լեզվական մակարդակի կառուց-

վածքային ընդհանրություններն ու առանձնահատկությունները: Վերջինիս պարզաբանումը, վստահաբար, հայերենագիտության համար որոշակի արժեք և կարևորություն է ներկայացնում:

Ինձելով մեր երկու ազգական լեզուների ամբողջական զուգադրական քննության առաջին փորձը, սույն մենագրությունը հազիվ թե զերծ լինի վրիպումներից, առանձին բացերից և թերություններից: Մենք սիրով հաշվի կառնենք արվելիք առարկայական բոլոր դիտողությունները:

Ա II 71966

ԳԼՈՒԽ Ա. ՌԱԶԻՆ

ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Երկու գրական լեզուների հնչակառուցվածքները կարելի է քննել երկու տարբեր առումներով՝ ըստ ա) հնչյունական և բ) հնչույթաբանական երևույթների։ Առաջին դեպքում գործ ունենք զուգադրական հնչյունաբանության և երկրորդ դեպքում՝ զուգադրական հնչույթաբանության հետ։ Եթե զուգադրական հնչյունաբանության պարագային քննվում են հնչյունների կազմավորման, խոսքի հնչերանգային առանձնահատկությունները, ապա հնչույթաբանական զուգադրությունը խարըսխվում է գործառական (ֆունկցիոնալ) հատկանիշի վրա. բացահայտվում են հնչույթները ըստ տարբերիչ հատկանիշների և այլն։

Ներկա զուգադրության ժամանակ հաշվի են առնվում ինչպես հընչյունական, այնպես էլ՝ հնչույթային կառուցվածքները։

ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդի հայերենի երկու գրական վիճակների հետևողական զուգադրական քննության հիմքում դրվում են երկուսի հնչույթային կառուցվածքները։

Նախքան բուն զուգադրական քննությանն անցնելը պարզվել է յուրաքանչյուրի հնչույթային կառուցվածքը, հնչույթային փոխհարաբերություններն ըստ ոլորտային առանձին խմբերի։ Ըստ այդմ, սկզբում բացահայտվել են երկու գրականների հնչույթային կառուցվածքների միավորներն ու նրանց ներքին փոխհարաբերությունները առանձին-առանձին (ինքնին) որպես ինքնուրույն, ներփակ համակարգեր և ապա միայն կատարվել է վերջիններիս համակարգային զուգադրությունը։ Այդ կապակցությամբ նշենք, որ եթե արևելահայերենի համար հնչույթային կառուցվածքի նկարագիրը տալը առանձին դժվարություն չի ներկայաց-

ՀԱՅԿ ԱԱՍՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

նում (նկատի ունենք, որ այդ ուղղությամբ լույս են տեսել մի շարք մենագրություններ՝ ժԶ, ժէ, ԻԴ, ի), ապա արևմտահայերենի համար նույն բանը դժվար է ասել, որովհետև նրա հնչույթային կառուցվածքի նկարագրությունը առայժմ հրապարակի վրա չկա։

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների հնչույթային համակարգերի զուգադրական քննությունը կատարելուց հետո (համակարգի տիպաբանություն), անցնում ենք, այսպես կոչված, տեքստի տիպաբանության, այսինքն՝ բացահայտվում են երկու շարակարգերի առանձնահատկությունները. այդ ձևով ավելի հստակ է դառնում այն հարցի պատասխանը, թե ինչպես են իրացվում երկու համակարգերը։ Այդ ընթացքում, բնականաբար, կատարվում է վիճակագրական քննություն, որպեսզի վերջինիս օգնությամբ քանակային որոշակի արժեքների համեմատություն կատարվի։

Այսպիսով, հնչույթային համակարգի զուգադրությունը բաժանվում է երկու ենթագլուխների՝ հարացույցի և շարակարգի։ Հարացույցում գործ կունենանք հնչույթների, նրանց տարբերիչ հատկանիշների հետ, իսկ շարակարգում՝ հնչույթների իրացված միավորների՝ հնչյունների վիճակագրության, նրանց գործառական բեռնվածության հետ։ Այդ մոտեցմամբ, լեզվական միավորների հարաբերությունների հարացույցային և շարակարգային տիպերը ոչ թե կհատակագծվեն տարբեր «թագավորությունների» և կկտրվեն վերջիններիս միջև առկա որոշակի կապերը, այլ որոշ չափով չեն անտեսվի փոխներթափանցման այն երևույթները, որոնց անտեսումը, ինչպես նկատել է Գ. Ջահուկյանը, արդի լեզվաբանական մի շարք ուսումնասիրությունների հիմնական թերությունն է (ԼԳ. 101)։

ա) Հ ա ր ա ց ո ւ յ ց

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների հնչույթային համակարգերի ձայնավորական ոլորտը աչքի է ընկնում ավելի մեծ ընդհանրությամբ, քան բաղաձայնական ոլորտը։ Երկու լեզվավիճակների ձայնավորական ոլորտները բաղկացած են վեց հնչույթներից. դրանք են՝ Ա, ե, Ը, ի, ՈՒ, Ո։

Ձայնավոր հնչույթների քանակային տարբերակում (այսինքն՝ երկար և կարճ ձայնավորներ) չունեն երկու գրականներն էլ։ Գրաբարի համեմատությամբ, երկու գրականներն էլ չունեն երկբարբառներ և, բնականաբար, եռաբարբառներ։ Երկու գրականների հնչույթային մի-

վորների քանակը ամբողջությամբ ներկայացնելուց առաջ հարկ է նշել, որ մի շարք լեզուների հնչույթների քանակը պարզելը այնքան էլ դյուրին գործ չէ. այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ ամեն մի լեզվի հնչույթային համակարգում վիճելի հարցեր են ծագում կապված հընչույթների քանակի, հնչույթային տարբերակների փոխհարաբերության հետ և այլն (ԽԲ, ԽՋ)*: Այդ առումով, եթե արևելահայերենի հնչույթային կառուցվածքի միավորների քանակը վիճելի հարցեր չի հարուցում, ապա արևմտահայերենի համար հարցը հարաբերաբար բարդ է:

Հնչույթային համակարգերի զուգադրության ժամանակ վերջին ժամանակներս տարբերում են միջուկային և եզրային երևույթներ: Հնչույթային համակարգի միջուկին են պատկանում տվյալ լեզվի հիմնական երևույթները, այն դեպքում, երբ եզրային են դիտվում եզակի, երկրորդական երևույթները, որոնք տվյալ համակարգում առանցքային չեն: Ներկա զուգադրության ժամանակ ամենից առաջ հաշվի են առնվում միջուկային երևույթները:

Ընդունված է, որ հնչույթային կառուցվածքի եզրային երևույթների շարքին են դասվում ձայնարկություններում, բնաձայնական բառերում, ինչպես նաև փոխառյալ բառերում հանդես եկող առանձին հնչյունական երևույթներ, որոնք հաճախ լեզվի կանոնական մակարդակով չեն պայմանավորված: Այդ տեսանկյունով մոտենալով հարցին, կարելի է ասել, որ երկու գրականներում էլ ֆ հնչույթը եզրային երևույթների թվին է պատկանում: Առանց բացառության, այն հանդես է գալիս կամ բնաձայնական բառերում (օ՜ֆ, ո՜ւֆ և այլն) կամ փոխառություններում: Հարկ է նշել, որ եզրային երևույթները, ինչպես նաև միջուկայիններն, մեկընդմիշտ տրված և անփոփոխելի երևույթներ չեն. ավելին, նույն երևույթը մեկ լեզվում կարող է վերաբերել միջուկին, իսկ մյուսում՝ եզրային ոլորտին: Եթե արևելահայերենում, օրինակ, վերջնավանկային դիրքում ο հնչույթի թուլացմամբ ը-ի վերածվելը եզրային երևույթ է (համմտ. դիրեկտոր—դիրեկտր, ագիտատոր—ագիտատր), քանի որ այն առկա է միայն փոխառյալ բառերում և այն էլ ոչ միշտ է գործում (քանի որ լեզվական կանոնով ընդունված չէ), ապա արևմտահայերենում այդ երևույթն ընդհանրապես բացակայում է: Մեկ այլ օրինակ՝ սպ, ստ, գբ և այլ երկբաղաձայն կապակցությունները (առանց «ուղեկցող» ը-ի)

---

*Համմտ., օրինակ, ռուսերենի հնչույթային համակարգը, ուր վիճելի է (ґ), (к'), (х') հարցը, սրանք կամ դիտվում են իբրև (ґ), (к), (х) հնչույթների դիրքային տարբերակներ կամ իբրև առանձին հնչույթներ:

մտել են արևելահայերենի միջուկային երևույթների շարքը, այն դեպքում, երբ արևմտահայերենում նրանք եղրային երևույթ են (ստանալ—ըստանալ, սկիզբ—ըսկիզբ և այլն)։ Այդ նշանակում է, որ եղրային և միջուկային երևույթների միջև սահմանները քարացած չեն։

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ (վոկալիզմ). աշխարհի լեզուների ձայնավորական ոլորտում կիրառվող հատկանիշների ընդհանուր տիպաբանական դասակարգում կատարելիս առաջին հերթին առանձնացվում է դասակարգման հիմքում դրվող հատկանիշների երկու շարք՝ որակական և քանակական։

Քանակական բնույթի հատկանիշներ են՝ ձայնավորների երկարությունը, երկհնչույթայնությունը (երկբարբառայնությունը) և այլն. դրանք մեր երկու գրականներում էլ բացակայում են, ուստի ղուգադրության ժամանակ դրանք պարզապես հավելուրդային հատկանիշներ են։ Երկու գրականներում էլ ձայնավորային ոլորտում գործում են միայն որակական բնույթի հատկանիշներ. դրանք են՝ բարձրությունը, շարքը (կապված լեզվի և ծնոտի դիրքի հետ), շրթնայնությունը։ Դասակարգման ժամանակ հնարավոր է, որ առանձին լեզվաբաններ որակական այս կամ այն հատկանիշը բնորոշ համարեն տվյալ լեզվին, մյուսները՝ ոչ։ Օրինակ՝ շրթնայնությունը ըստ Գ. Ջահուկյանի հայերենի համար հավելուրդային հատկանիշ է (ԼԲ), մինչդեռ այլ լեզվաբաններ այն համարում են էական հատկանիշներից մեկը, իսկ, ասենք, կոկորդայնության հատկանիշը ընդհանուր առմամբ հայերենին հատուկ չէ։

Երկու գրականներում էլ ձայնավորների որակը բնութագրվում է նշված երկու հատկանիշների (բարձրություն և շարք) համակցումով։ Ստորև տրվում է երկու գրականների ձայնավորների տախտակն ըստ բարձրության և շարքի հատկանիշների (տե՛ս էջ 21)։

Համաձայն որոշ տեսությունների, այդ երկու հատկանիշը մեկ ընդհանրական հատկանիշ է դիտվում (համմա. այդ կապակցությամբ Գակի աշխատանքը նվիրված ֆրանսերենի և ռուսերենի ղուգադրության (ԽԲ. 39)։ Այսպիսի մոտեցումը ճիշտ չէ. այդ կարելի է հիմնավորել հենց հայերենի ընձեռած փաստերով։ Այսպես, միևնույն բարձրության միավորները տարբերվում են շարքով. օրինակ՝ միջին բարձրությամբ բնութագրվող միավորները՝ է, ո, ոի, տարբերակվում են շարքով՝ առաջին շարքի՝ է, միջին շարքի՝ ը, հետին շարքի՝ ո։ Հարկ է նշել, որ հնչույթների շարքի մասին խոսելիս նկատի ունենք խոսքի շղթայում նրանց ուժեղ դիրքը. ուժեղ դիրք է դիտվում համապատասխան հնչույթի առանձին

Շարք / Բարձրացում	Առաջին շարք	Միջին շարք	Հետին շարք	
			շրթնայնութ.	ոչ շրթնայնութ.
Վերին (նեղացվածք.)	*i*	—	*ու*	
Միջին	*է*	*ը*	*o*	
Ստորին (բերբացվածք.)	—	—		*ա*

(առանձնացած) արտասանությունը, երբ բացառվում են «դրացի» բաղաձայնների ազդեցությունները։

Ըստ ընդհանրական տիպաբանական սխեմայի, աշխարհի բոլոր լեզուների ձայնավորային ոլորտի հիմքում ընկած է առաջնային (միջուկային) հետևյալ հարաբերությունը (ՄԲ. 8).



Ինչպես տեսնում ենք, ձայնավորների նվազագույն քանակը երեքն է, որ բացի բարձրության և շարքի հատկանիշներից բնութագրվում է նաև շրթնայնությամբ։ Ընդ որում շրթնայնությունը դիտվում է իբրև բոլոր լեզուների համապատասխան ոլորտում հանդես եկող էական (միջուկային) հատկանիշ. ուստի հայագիտության մեջ արտահայտված այն միտքը, որ շրթնայնությունը հավելադրային հատկանիշ է, ըստ էության չի հիմնավորվում աշխարհի լեզուների համապատասխան ոլորտի տվյալներով։ Իհարկե, եթե նկատի ունենանք, որ ըստ Մարտինեի (Կէ. 66) էական տարբերիչ հատկանիշների թիվը ձայնավորային ոլորտում տատանվում է երկուսի շուրջը, ապա միանգամայն տեղին է Գ. Ջահուկյանի այն դիտողությունը, որ տնտեսման սկզբունքով հայերենի վեց ձայնավորների բնութագրման համար երեք հատկանիշը բավական է։ Իրոք, երկու զրականների ձայնավորները կարելի է բնութագրել երեք հատկանիշով։

Երկու գրական լեզուներում էլ՝

1. Բարձրությունն հատկանիշով բնութագրվում է երեք հնչույթ։

2. Շարքը հնչույթների տարբերակման գործում հանդես է գալիս ոչ ինքնուրույն կերպով, այլ շրթնայնություն հատկանիշի ուղեկցությամբ։ Այսպես՝ իր (առաջին շարք + ոչ շրթնայնացած)—ուր (հետին շարք + շրթնայնացած)—էր (միջին շարք + ոչ շրթնայնացած)—որ (հետին շարք + շրթնայնացած)։

Այսպիսով, շրթնայնությունը կարելի է դիտել իբրև ուղեկցող-կոնստիտուտիվ հատկանիշ, այսինքն՝ այնպիսի վճռական (էական) հատկանիշ, որ այդուհանդերձ ուղեկցող հատկանիշ է։

3. Ընգայնությունը (ընգային ձայնավորների առկայությունը) բացառվում է։

4. Բացառվում է նաև ձայնավորների երկարությունը։

5. Թեև ոչ բնորոշ գծերից մեկն էլ երկհնչույթայնությունն է, սակայն առկա է մենահնչույթի և երկհնչույթի միջակա օղակ հանդիսացող մի միավոր՝ յ հնչույթը, որը տարբեր կերպ է մեկնաբանվում հայերենագետների կողմից։ Ընդհանրապես այն դիտվում է իբրև կիսաձայն, երկհնչյուն կազմող տարր և այլն (յ-ի մասին հմմտ. լբ)։

Սովորաբար լեզուների հնչույթային համակարգի ձայնավորական ոլորտը ներկայացվում է եռանկյունու տեսքով։ Անշուշտ, եռանկյան գծապատկերը լեզվից լեզու ունենում է իր տարբերությունները, ըստ ավյալ կոնկրետ լեզվի առանձնահատկությունների։ Մեր երկու գրականների ձայնավորական ոլորտները կարելի է ներկայացնել հետևյալ ընդհանրական գծապատկերով։



Ինչպես կարելի է տեսնել գծապատկերից, Ը հնչույթը որոշակի կապի մեջ է ոչ միայն Ե և Օ հնչույթների, այլև Ի և ՈՒ հնչույթների հետ։ Ը-ն միջակա դիրք է գրավում մյուս ձայնավորների նկատմամբ։ Ինչպես նշվեց, որպես ձայնավորների էական հատկանիշներ հայոց լեզվում հանդես են գալիս լեզվի դիրքի և բարձրության տարբերություն-

նները (ըստ այդմ առաջ են գալիս երեք շարքի և երեք աստիճանի հակադրություններ)։ Վեց ձայնավորներից երկու գրականներում էլ միջին դիրքը գրավում է Ը հնչույթը, որը յուրահատուկ կապ է ստեղծում մյուս ձայնավորների միջև։

Երկու գրականների ձայնավորական ոլորտի ընդհանրություններից է այն, որ վեց հնչույթներից երեքը (այսինքն՝ ձայնավորների 50 տոկոսը) միջին շարքի միավորներ են. դրանք են՝ ե, Ը, օ ձայնավորները։ Եթե Ը հնչույթը կարելի է դիտել իբրև ձայնավորների «ճամփաբաժանում» գտնվող միավոր, ապա նրանից առաջ գտնվում է ե ձայնավորը (առաջին շարք) և նրան հաջորդում է օ հնչույթը, որպես ետին շարքի ձայնավոր։

Վեց ձայնավորներից միայն երկուսին է հատուկ շրթնայնություն-ոչ շրթնայնություն հակադրությունը։ Այս փաստը արձանագրելով՝ ակադ. Գ. Ջահուկյանը, ինչպես նշվեց, շրթնայնացման հատկանիշը դիտել է իբրև արևելահայերենի համար հավելուրդային հատկանիշ (ԼՒ. 78)։ Պետք է ասել, որ այն էական հատկանիշ է երկու գրականների ձայնավորական ոլորտի համար, եթե մանավանդ նկատի ունենանք Միլևսկու դասակարգման սկզբունքները։

Երկու գրականների ձայնավորական ոլորտի նկարագրման համար ընտրվել են հետևյալ չորս զույգ տարբերիչ հատկանիշները՝ թավություն-անոսրություն, բեմոլ տոնայնություն—հասարակ տոնայնություն, բարձր տոնայնություն—ցածր տոնայնություն, շրթնայնություն—ոչ շրթնայնություն։

Նշված հակադրություններով երկու գրականների ձայնավորական ոլորտը ներկայացնում է հետևյալ պատկերը.

Աղյուսակ № 2

Տարբերիչ հատկանիշ	Ա	Ո	ՈՒ	Ե	Ի	Ը
Բեմոլ տոնայնություն—հասարակ տոնային.	0	+	+	−	−	0
Թավություն—անոսրություն	+	−	−	+	−	−
Բարձր տոնայնություն—ցածր տոնայնություն	0	−	−	+	+	0
Շրթնայնություն— ոչ շրթնայնություն	−	+	+	−	+	−

Հայերենագիտության մեջ այն կարծիքն է հայտնվել, որ «ժամանակակից հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ գրական տարբերակ-

ների միջև առկա տարբերությունները հատկապես ուժեղ են դրսևորվում հնչյունաբանության մեջ, ավելի փոքր չափով ի հայտ են գալիս ձևաբանության, բառագիտության և շարահյուսության մեջ» (կե)։ Իրականում, առ այսօր ոչ միայն որակական, այլև քանակական համաստիճան տվյալներով չի պարզվել նշված լեզվավիճակների ընդհանրությունների և տարբերությունների աստիճանը։ Այնպես որ հենց այնպես a priori կարելի է պնդել նաև հակառակը՝ ձևաբանական և շարահյուսական մակարդակների տարբերությունները ավելի շատ են, քան հնչյունային կառուցվածքում եղած անհամապատասխանությունները։ Անշուշտ, տրվյալ հարցի պատասխանը կարելի է ստանալ ամբողջական զուգադրությունից հետո միայն. այժմ նշենք միայն, որ երկու գրականների հնչույթային մակարդակների տարբերությունները ձայնավորական ոլորտում չեն կենտրոնացած. այդպիսիք պետք է փնտրել բաղաձայնական ոլորտում։

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ. երկու գրական վիճակների ձայնորդները համընկնում են ինչպես թվապես (վեց միավոր), այնպես էլ որակական հատկանիշներով։ Ստորև տրվում է երկու գրականների ձայնորդների կառուցվածքային ընդհանրական գծապատկերը (լբ)։



Եթե Յակոբսոն-Ֆանտ-Հալլեի 12 զույգ տարբերիչ հատկանիշներից հանենք այն բոլորը, որոնք հավելուրդային են հայոց լեզվի ձայնորդների համար, ապա տեսանելի մոտեցման դեպքում կարելի է երեք զույգ տարբերիչ հատկանիշներով նկարագրել ձայնորդային ենթաոլորտը։ Այդ հատկանիշներն են՝ բրթռայնություն / ոչ բրթռայնություն, ընդգայնություն / ոչ ընդգայնություն, վերատամնայնություն / ոչ վերատամնայնություն։

Ստորև ներկայացվում է հայոց լեզվի երկու վիճակների ձայնորդների տախտակն ըստ տարբերիչ հատկանիշների։

Գրական արևմտահայերենում վերատամնայնություն / ոչ վերատամնայնություն հակադրությունը, արևելահայերենի համեմատությամբ, հարաբերաբար թույլ է դրսևորվում: Նշված հակադրության թուլացման պատճառով արևմտահայերենում Ր–Ռ հնչույթների տարբերակումը հաճախ հստակ չի դրսևորվում և տեղիք է տալիս ուղղագրական սխալների: Արևմտահայերենի Ր հնչույթի արտաբերման ժամանակ լեզվի ծայրը, արևելահայերենի Ր-ի համեմատությամբ, ավելի բարձր դիրք է գրավում և դրանով թուլացնում վերատամնայնություն/ոչ վերատամնայնություն հակադրությունը, որով վերատամնային Ռ-ն հակադրվում է ոչ վերատամնային Ր-ին: Դրանով է պայմանավորված նշված հնչույթների տարբերակման դժվարությունը. միաթրթռություն / բազմաթրթռություն

Աղյուսակ № 3

Հատկանիշ / Հնչույթ	Լ	Ր	Ռ	Մ	Ն	Յ
Թրթռայնություն /ոչ թրթռայնություն	—	+	+	—	—	—
Ռնգայնություն ոչ ռնգայնություն	—	—	—	+	+	—
Վերատամնայնություն ոչ վերատամնայնություն	+	—	+	—	+	—

Հակադրությունը տվյալ դեպքում հավելուրդային է: Նշված հակադրություններով բոլոր ձայնորդները, բացի Յ-ից, կազմում են որոշակի փընջեր՝ թրթռուններ (Ր, Ռ), ռնգայիններ (Մ, Ն), վերատամնայիններ (Լ, Ռ, Ն): Միայն Յ-ն է, որ մնում է բոլոր հակադրությունների նկատմամբ «անտարբեր»: Թվում է, այս առանձնահատկությունը ևս խոսում է այն մասին, որ Յ-ն գտնվում է բուն ձայնավորների և ձայնորդների «միջակա գոտում»:

Երկու գրականների հնչույթային համակարգերի բուն տարբերությունները ի հայտ են գալիս արևելահայերենի եռաշարք և արևմտահայերենի երկշարք բաղաձայնական ոլորտներում:

Նկատի առնելով, որ Պ, Տ, Կ, Ծ, Ճ հնչույթները գրական արևմտահայերենում վերացել են, ապա կարելի է ասել, որ բաղաձայնների դասակարգման երկրորդ հիմքում տեղի է ունեցել որոշակի փոփոխություն ձայնեղներ—պարզ խուլեր—շնչեղ խուլեր գծապատկերում պարզ խուլերի վերացմամբ (նե. 74): Այդպիսով, բաղաձայնական ոլորտում հանդես եկող հատկանիշներից արևմտահայերենի համար շնչեղություն-

ոչ շնչեղության հակադրությունը հավելուրդային է, քանի որ նրա այդ հատկանիշով գրական արևելահայերենի բաղաձայնական ոլորտում հակադրվում են Փ, Թ, Ք, Ց, Չ հնչույթները Պ, Տ, Կ, Ծ, Ճ, հնչույթներին, ապա վերջիններս, ինչպես նշվեց, գրական արևմտահայերենին հատուկ չեն:

Գրական արևմտահայերենի երկշարք բաղաձայնական համակարգի մասին հարկ է ավելացնել հետևյալը. ժամանակին արևմտահայերենի լավագույն գիտակներից սկսած մինչև մեր դարի 50—60-ական թվականների լեզվագետները (Հ. Գաղանճյան, Զ. Մելքոնյան և այլք) առանց երկմտելու ընդունել են արևմտահայերենի բաղաձայնական համակարգում պարզ խուլերի բացակայությունը, «Մեսրոպյան շրջանի հնչումների մեջ կատարված փոփոխությունը», ի հակակշիռ արևելահայերենի, որ պահպանել է հին հայերենի բաղաձայն հնչյունների համապատասխան որակները: Ավանդական այդ տեսակետին պետք է ավելացնել հետևյալը. գրական արևմտահայերենի արդի վիճակը ներկայացնում է հարաբերաբար ավելի բարդ պատկեր, քան կար դարասկզբին, կամ անգամ 30—40-ական թվականներին: Սփյուռքի գոյատևման տասնամյակներին արևմտահայ մազապուրծ հատվածները ապաստանելով Միջին և Մերձավոր Արևելքի երկրներում, Հունաստանում և այլուր, շարունակաբար շփման մեջ դնելով տեղացի (բնիկ) բնակչության լեզվական աշխարհի հետ, նույնպես որոշ չափով յուրացրել են նաև բաղաձայնական համակարգի առանձին հնչյունների որակները: Ազդեցության նմանօրինակ երևույթներ հեշտ է նկատել բառապաշարի, քերականական առանձին կառուցվածքների մեջ, հատկապես դարձվածաբանության: Անժխտելի է ազդեցությունը նաև հնչյունական կառուցվածքի վրա: Այսպես, հունահայ դաղութում ներկա սերունդը հունարենի ազդեցությամբ սկսել է Պ, Տ, Կ և այլն գրույթները հնչել նաև իբրև Պ, Տ, Կ պարզ խուլեր: Ստացվում է երկվություն: Երկրորդական վարժարաններում, գրական մշակման ենթարկված խոսքում կանոնական է (ուստի և հանձնարարելի) պարզ խուլ գրույթների ձայնեղացած հնչումը: Խոսակցական մակարդակում պարզ խուլերը հատակորեն տարբերակվում են:

Սփյուռքահայ բեմական խոսքը, պաշտոնական ելույթները, ռադիո-հաղորդումները, վարժարանները աշխատում են պահպանել գրական կանոնական այն հնչումը, որ եղել է դարասկզբին արևմտահայ գրական լեզվում: Ուրեմն, երկշարք բաղաձայնական համակարգի մասին խոսելիս նկատի պետք է ունենալ այն արդեն նշմարելի փոփոխությունը, որ կատարվել է պարզ խուլ գրույթների հնչման մեջ՝ հնչում թե՛

իբրև ձայնեղներ, թե՛ իբրև պարզ խուլեր։ Քանի որ կանոնական մակարդակը այդ փոփոխությունը չի արձանագրել և շարունակում է արհեստականորեն վերստեղծել երկշարք բաղաձայնական հակադրությունների պատկերը նոր սերնդի համար էլ, դիտում ենք արևմտահայ գրական լեզվի բաղաձայնական համակարգը երկշարք հակադրությունների տեսանկյունով։ Խոսակցական լեզվի ոճական տարբերակներում առանձնացնում ենք եռաշարք՝ պարզ խուլեր—ձայնեղներ—շնչեղ խուլեր համակարգի գոյությունը։ Գրական լեզվի և խոսակցականի ոճական տարբերակների հարցին կանդրադառնանք հետագա շարադրանքում, այժմ նշենք միայն, որ գրական արևմտահայերենի նորմավորումը արդի փուլում որոշ պայմանականություններ ունի, չասելու համար որոշ արհեստականություն, եթե նկատի ունենանք, որ արդեն երեք սերունդ շարունակ արհեստականորեն «վերստեղծվում է» XX դ. տասական թվականների նորմավորված գրական արևմտահայերենը։ Ընդհանուր հայերենին հատուկ բառապաշարի մեջ եռաշարք բաղաձայնական համակարգից երկշարքի անցնելու դեպքում, արևմտահայերենում պետք է առաջանային նմանաձայն (նույնահունչ) շարքեր, ինչ որ և տեղի է ունեցել։

Բաղաձայնական ոլորտում շարքերից մեկի վերացմամբ առաջացող համանունության հարցի հետ կապված հարկ է նշել հետևյալը. համաձայն հնդեվրոպաբանության ավանդական տեսության, քառաշարք բաղաձայնական համակարգ ունեցող հիմք լեզվից հին հայերենին անցնելու ժամանակ տեղի է ունեցել բաղաձայնական շարքերից մեկի (շնչեղ ձայնեղների) կորուստ. մինչդեռ դրա հետևանքով բառապաշարում առանձնապես նկատելի համանուն բառազույգեր չեն առաջացել։ Նորագույն վարկածով (ԽԳ), հիմք լեզուն ևս ունեցել է եռաշարք բաղաձայնական համակարգ։ Հայերենում նմանաձայնության երևույթներ չառաջանալը դեռևս այդ տեսակետին ի նպաստ կռվան չի կարող ծառայել։

№ 4 աղյուսակում ներկայացվում են երկու գրականների բաղաձայնական ոլորտները (բացի ձայնորդներից). աստղանիշով տրվող հնչույթները հատուկ են միայն արևելահայերենին։ Ինչպես երևում է աղյուսակից, տարբերիչ հատկանիշների ցանկից դուրս ենք թողել ձայնավորություն—բաղաձայնություն հակադրությունը, քանի որ այն հատուկ է բոլոր հնչույթներին, և առանձին աղյուսակով ներկայացվող բոլոր բաղաձայնները ըստ այդ հակադրության կստանան միևնույն նշանը (—)։ Համեմատության համար ենք դնում նաև աղմկայնություն—ոչ աղմկայնություն

Աղյուսակ № 1

Հատկանիշ / Հնչույթ	ա	ջ	ժ	ճ*	շ	յ	թ	զ	ղ	ձ	ծ*	տ*	ս	ր	դ	ղ	կ*	խ	փ	հ	վ	ց*	ց	ր
Շփականություն — ոչ շփականություն	+	+	+	+	+	+	−	+	−	+	+	−	+	−	−	+	−	+	−	+	+	−	+	−
Հպականություն — ոչ հպականություն	+	+	−	+	−	+	+	+	+	−	+	+	−	+	+	−	+	−	+	−	−	+	−	+
Ձայնեզություն — ոչ ձայնեզություն	+	+	+	−	−	+	−	+	+	+	−	−	−	−	+	+	−	−	−	−	+	+	+	+
Ըմպանայնություն — ոչ ըմպանայնություն	+	−	−	−	−	+	+	−	−	−	−	−	−	+	−	−	−	−	+	+	−	−	−	−
Ետնալեզվայնություն — ոչ ետնալեզվայնություն	+	+	+	+	+	−	−	−	−	−	−	−	−	+	+	+	+	+	−	−	−	−	−	−
Առաջնալեզվայնություն — ոչ առաջնալեզվայնություն	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	−	−	−	−	−	−	−	−	−	−	−

* Աղյուսակում ստորակետ ունեցող հնչույթները հատուկ են միայն արևելահայերին։

հատկանիշը, քանի որ բերվող բաղաձայնները (ձայնորդներից բացի) բնութագրվում են աղմկայնությամբ, ուստի այդ դեպքում էլ աղյուսակում բոլոր բաղաձայնների դիմաց կդրվեր + նշանը և հնչույթային հակադրությունների մասին խոսք լինել չէր կարող:

Շփականություն—ոչ շփականություն և ցպականություն—ոչ ցպականություն հակադրությունները ներկայացվել են առանձին տարբերիչ հատկանիշների տեսքով, որպեսզի, այսպես կոչված, հպաշփականները նույնպես բնութագրվեն:

Աղյուսակում ձայնեղություն հատկանիշի հակառակ բևեռը վերցվել է ոչ թե խլությունը, այլ ոչ ձայնեղությունը, որ իր մեջ ներառում է ինչպես պարզ խլությունը, այնպես էլ շնչեղ խլությունը: Ընդ որում եթե վերջին երկուսը հատուկ են արևելահայերենին, ապա արևմտահայերենում գործում է ձայնեղություն—շնչեղ խլություն հակադրությունը:

Տարբերիչ հատկանիշներով կարելի է որոշել նաև համակարգի «եզրային» հնչույթները: Այդպիսին է երկու գրականների Ֆ-ն, որ ամենաքիչ հակադրական զույգեր է կազմում և հիմնականում «չեզոք» դիրք է գրավում:

Հարցն այնպես պետք չէ պատկերացնել, թե այս կամ այն հնչույթի կամ հնչույթային խմբերի առկայությունը նշելով երկու գրականներում, ինչպես և ընդհանրապես որևէ լեզվում, հաստատած կլինենք այդ միավորների ընդհանրությունը: Բնավ. դրա համար պետք է պահպանվի տվյալ միավորների հարաբերությունների ընդհանրությունը:

Հնչույթային մակարդակում հարաբերությունների ընդհանրություն ասելով պետք է հասկանալ միևնույն միավորի երկու համակարգերում ունեցած հնչույթաբանական հակադրությունների նույնությունը (ԼՋ, 260—261, կն):

Նկատի ունենալով, որ գործնականում անհնար է գտնել այնպիսի լեզուներ, որոնց հնչույթային կառուցվածքները լիովին իրար «ծածկեն», բնականաբար, մեր երկու գրականների հնչույթային համակարգերն էլ չեն կարող ամբողջապես համընկնել: Ահա հենց դրա համար էլ զուգադրությունը կատարվել է ըստ կառուցվածքի առանձին հատվածների (հատվածային բնույթով):

Թ. Միլևսկին, հենվելով հարյուրավոր ամերիկյան և կովկասյան լեզուների տիպաբանական ուսումնասիրություններից ստացած տվյալների վրա, աշխարհի լեզուներին բնորոշ հնչույթային տարբերությունները բաժանում է առաջնայինի և երկրորդայինի: Առաջնային հակադրու-

Յուների համակարգը, ըստ Միլևսկու, բոլոր լեզուների համար բաղկացած է տասը հնչույթից. դրանք են՝ Ա, Ի, ՈՒ ձայնավորները և Պ, Տ, Կ, Լ, Մ, Ն, Ր, Ռ բաղաձայնները։ Եթե այդ համակարգը լիովին դրսևորվում է գրական արևելահայերենում, ապա արևմտահայ գրականում, ինչպես արդեն գիտեք, Պ, Տ, Կ պայթական բաղաձայնների շարքը ներկայացվում է կամ Բ, Դ, Գ ձայնեղների, կամ Փ, Թ, Ք շնչեղ խուլերի շարքով։

Մեր երկու գրականներում հավասարապես օգտագործվող գրույթների արևմտահայերենում ունեցած արժեքները կարելի է ներկայացնել հետևյալ պատկերով.



Դրա հետևանքով արևմտահայերենի բաղաձայնական ոլորտը կարելի է ներկայացնել հետևյալ պարզեցված հակադրության պատկերով.

Բ ____ Փ
Գ ____ Ք
Դ ____ Թ
Ձ ____ Ծ
Ջ ____ Չ

Այս երևույթը հատակ կերպով ներկայացվել է արևմտահայերենի նշանավոր քերական Հ. Գազանճյանի կողմից։ Նա գրել է. «Միջակ և թավ բաղաձայններու հնչումներուն նույնացումը պատճառ եղած է, որ

կարգ մը հայերեն (իմա՝ արևմտահայերեն—Ա. Ս.) բառեր դառնան նույնհնչյուն կամ նմանաձայն բառեր, որոնք սկզբնապես նույնհնչյուն չէին. օրինակ՝

գող և քող
թև դև
ձախ ցախ և այլն։

Այսպիսի բառեր կկոչվեն նմանաձայն բառեր» (ԺԳ. 23)։

Ինչպես տեսնում ենք, արևմտահայերենում ձայնեղություն—խլություն հակադրությունը «մաքուր» ձևով հանդես չի գալիս. խլությունը այնտեղ ներկայացվում է շնչեղություն հատկանիշով զուգակցված։

Երկու գրականների ձայնավորների և բաղաձայնների քանակային հարաբերությունը հետևյալ տեսքն ունի.

Հնչույթ	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Ձայնավորներ	6	6
Կիսաձայն	1	1
Բաղաձայններ	29	24
Ընդամենը	36	31

Եթե նկատի ունենանք, որ աշխարհի լեզուներում հնչույթների քանակը տատանվում է 10-ի և 70-ի միջև (տրվում են ստորին և վերին՝ նվազագույն և առավելագույն սահմանները), ապա կարելի է ասել, որ մեր երկու գրականները իսկապես միջին դիրք են գրավում աշխարհի լեզուների շարքում։ Սակայն, ինչպես նշվից վերը, քանակային առերևույթ համապատասխանությունները որակական հարաբերությունների նույնությամբ չեն բնութագրվում։

Եթե արևելահայերենի համակարգում ձայնավորները միայն 13,69% են կազմում, ապա արևմտահայերենի համակարգում ձայնավորները կազմում են 19,4%։

Արևելահայերենի բաղաձայնական ոլորտի համեմատությամբ, արևմտահայերենի համապատասխան ոլորտը զգալիորեն ապքատ է, որ նպաստում է համակարգում ձայնավորների ունեցած տեսակարար կշռի ավելացմանը, թեև, ինչպես ցույց կտա շարակարգի քննությունը, իրացման պայմաններում ձայնավոր-բաղաձայն բաշխման արժեքները համընկնում են։

Երկու գրականներին էլ՝ 1) հատուկ է բաղաձայնեցման երևույթը։

Բաղաձայնեցումը ծառայում է ձայնավորների (գերազանցապես՝ երկու) կուտակումից խուսափելուն: Այսպես, օրինակ՝ բարի-ոմ>բարվոմ, առուակ>առվակ, էդուարդ-էդվարդ և այլն: 2) Իրար հաջորդող ձայնավորներից բաղաձայնեցման է ենթարկվում առաջինը. ինչպես, օրինակ՝ բարի-ացական>բարյացական (տե՛ս նաև վերոբերյալ օրինակները): Այս երևույթը շատ ավելի հետևողական կերպով գործում է արևելահայերենում:

Ջուտ արևմտահայերենին բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

1. Երկու կից ձայնավորներից դարձյալ առաջինի սղումը. օրինակ՝ մի՛ ըներ—մ'ըներ, չի՛ ըլլար—չ'ըլլար:

2. Նույն ձայնավորի (մասնավորապես Ի-ի) հաջորդելության ավելի լայն հնարավորությունները, արևելահայերենի սահմանափակ թվով անուններին (հատկապես փոխառյալ բառերի) դիմաց. արևմտ. գինիի, կաշիի, գոտիի, արևել. գինու, կաշու, գոտու և այլն:

Որպես երկու գրականներին հատուկ ընդհանուր գիծ, որ գալիս է հին հայերենից, պետք է նշել նաև երկու ձայնավորների «բախմամբ» նոր ձայնավորի հանդես գալը՝ Ի—Ա>Ե՝ գինիատուն—գինետուն, ճոճիաստան—ճոճեստան և այլն: Երկու գրականներում էլ կարելի է գտնել «շեղումներ» կանոնից, որ բացահայտ սխալ օրինակներ են. հիշենք Տ. Զրաքյանի «նոճաստանը» («ճոճեստանի» փոխարեն):

Ըստ դիրքային առանձնահատկությունների, երկու գրականների բաղաձայնները բնութագրվում են հետևյալ գծերով.

1. Նույն բաղաձայնների «հանդիպումը»՝ հաջորդականությունը հնարավոր է տարբեր բառերի կամ ձևույթների կցման, հաջորդման պայմաններում. օրինակ՝ անգութ թագավոր, անուշ շշուկ և այլն: Արևմտահայերենում նման երևույթներ հարաբերաբար քիչ են ստեղծվում մի անորոշ հոդի և քերականական կառուցվածքի ինքնատիպ երևույթներով պայմանավորված: Այսպես, օրինակ՝ արևել. մի հաբ բեր—արևմտ. հաբ մը բեր:

2. Նույն բաղաձայնների «բախման»՝ կից հնչման ժամանակ արևելահայերենը միատում ունի նմանօրինակ դեպքերը հնչել իբրև երկար բաղաձայն՝ գարուն ահա, մի քիչ շիր և այլն, արևմտահայերենը նույն դիրքում սովորաբար հնչում է որպես երկգագաթ բաղաձայններ (նրանց միջև որոշ դադար ստեղծելով):

3. Բաղաձայնների որակական փոփոխություններ (քմայնացում և

հատկապես՝ շրթնայնացում) հատուկ չեն երկու գրականներին: Ընդ որում արևելահայերենում ինչ-որ չափով քմայնացումը դրսևորվում է ույթյուն, ույթյան և այլ ձևերում, յ կիսաձայնի աղդեցությամբ թ-ի քմայնացմամբ՝ ց-անման հնչմամբ: Արևմտահայերենում նշված երևույթը չի գործում:

4. Վերջապես, երկու գրականներին հավասարապես հատուկ երևույթ է Ր բաղաձայնին հաջորդող բառավերջային Հ-ի սղումը (մի քանի բացառությամբ, ինչպես՝ նիրհ, ժպիրհ և այլն)՝ աշխարհ, ճանապարհ և այլն: Արևմտահայերենին բնորոշ է մի շարք բազմավանկ ձայնավորների սղման երևույթը՝ մոռնալ, գիրնալ և այլն:

Արևելահայերենի հնչյունները հարաբերաբար ավելի կապակցված են, արտասանական առանձնահատկություններով պայմանավորված, արևմտահայերենի հնչյունների արտասանությունը աչքի է ընկնում առավել հստակությամբ և ուժգնությամբ: Դրանով է նաև պայմանավորված այն, որ հնչյունները արևմտահայերենում խոսքի շղթայում մեկը մյուսից հարաբերաբար անկախ են, քան արևելահայերենում: Այդ է նաև պատճառը, որ արևմտահային արևելահայի խոսքը ավելի արագ է թվում: Իրականում հաճախ գործ ունենք հնչյունների արտասանական առանձնահատկությունների՝ հնչաշղթայական տարբերությունների հետ, քան բուն խոսքի տեմպի (արագության) հետ: Այդ մասին կխոսվի շեշտի և հնչերանգի հարցի կապակցությամբ:

Ստորև ներկայացվում է երկու գրականների հնչույթային առաջնային և երկրորդային տարրերի հարաբերության պատկերը (ըստ Ռ. Միլևսկու մեթոդի):

Բերված թվային տվյալների զուգադրությունից պարզվում է, որ ձայնավորական ոլորտում երկրորդային տարրերով հարաբերաբար հարուստ է արևմտահայերենը՝ —10,65 տոկոս, արևելահայերենի —13,4 արժեքի դիմաց: Բաղաձայնական ոլորտի երկրորդային և առաջնային տարրերի հարաբերությունը երկու գրականներում հետևյալ պատկերն է ներկայացնում՝ արևելահայերեն՝ 83,33 և արևմտահայերեն՝ 80,64 տոկոս:

Հնչույթային համակարգի առաջնային և երկրորդային տարրերի հարաբերությամբ ստացած արժեքներով աշխարհի լեզուները դասակարգվում են երկու խմբի՝ ձայնավորական և բաղաձայնական:

Պետք է ասել, որ սովորաբար ավելի տարածված են բաղաձայնական լեզուները: Ձայնավորական տիպին են պատկանում այն բոլոր լեզուները, որոնց համապատասխան համակարգում ձայնավորների երկ-

բորդային տարրերի տոկոսը բարձր է ղրույից, իսկ բաղաձայնական տիպին՝ այն լեզուները, որոնց բաղաձայնական երկրորդային տարրերի տոկոսն է բարձր ղրույից։ Այդ արժեքներով մեր երկու գրականները կդասվեն բաղաձայնական խմբին, թեև, ինչպես ցույց են տալիս արդյունքները, արևմտահայերենը հարաբերաբար ավելի մոտ է ձայնավորական խմբին։ Դա պայմանավորված է ոչ թե ձայնավորների թվի ավելացմամբ, այլ, արևելահայերենի համեմատությամբ, բաղաձայն հնչույթների քանակի նվազմամբ։

Աղյուսակ № 5

Հնչույթներ	Առաջնային տարրեր		Արևելահայերեն			Արևմտահայերեն		
	թիվը	տոկոսը	առաջ. տարրը. թիվը	առաջ. տարրը. տոկ.	երկ. տարրը տոկ.	առաջ. տարրը թիվը.	առաջ տարրը տոկ.	երկր. տարրը. տոկ.
Ձայնավորներ	3	30	6	16,6—	13,4	6	19,35	—10,65
Ընդային բաղաձայններ	2	20	2	5,5—	14,5	2	6,45	—13,55
Նայեր	1	10	3	8,33—	— 1,67	3	9,67	— 0,33
Շփականներ	1	10	8	22,2	+12,2	8	25,8	+15, 8
կիսաշփականներ			6	16,6	+16,6	4	12,9	+12, 9
Պայթականներ	3	30	9	25	— 5,	6	19,35	—10,65
Ընդամենը բաղաձայններ	7	70	30	83,33	—13,33	25	80,64	—10,64
Ընդամենը հնչույթներ	10	100	36			31		

Ինչպես նշվել է գրաբարի տիպաբանական բնութագրին նվիրված աշխատանքում (ԼՋ), թեև վերոհիշյալ սկզբունքներով Ր. Միլևակին տիպաբանական ղուգադրություն է կատարել հարավամերիկյան և կովկասյան բազմաթիվ լեզուների հնչույթային կառուցվածքների միջև, սակայն, ըստ էության, այդպիսի մեթոդով կարող են վեր հանվել միայն ամենաընդհանուր երևույթներ։ Չէ՞ որ հենց ինքը՝ Միլևակին հնչույթային կառուցվածքների ընդհանրություններն ու առանձնահատկությունները բացահայտելու գործում պահանջում է հիմնվել հավասարարժեք հնչույթների վրա։

Որպես հավասարարժեք հնչույթների լուսաբանություն, Ր. Միլևակին բերել է հայերենի և հունարենի հնչույթների հետևյալ օրինակը. t:d և t:th հնչույթների հնչույթային հակադրությունները հավասարարժեք են, որտեղ որպես աննշանակիր միավոր հանդես է գալիս t-ն, որն առաջին դեպքում կազմում է խուլ-ձայնեղ հակադրությունը, երկրորդ դեպքում ոչ-շնչեղ-շնչեղ հակադրությունը։ Ուրեմն, հայերենի Տ–Դ–Թ հնչույթները հավասարարժեք են հունարենի t, d, th-ին։ Հակառակ այդ

հնչույթների հավասարարժեքությանը, դրանք նույնական չեն, որովհետև հայերենի հնչույթները, բացի հունարենի հնչույթների հետ ունեցած նույնական հակադրություններից, հանդես են գալիս նաև տարբեր հակադրությունների մեջ՝ t:c և th: c՝: Վերջիններս բացակայում են հունարենում, քանի որ c և c՝ հնչույթները հունարենի համակարգում բացառված են (ՄԲ)։ Ռ. Միլևսկին առաջարկել է նաև հնչույթային համակարգի ընդհանրության աստիճանը հավասարարժեք հնչույթների միջոցով որոշելու հետևյալ բանաձևը՝ $\frac{a-b}{a+b}=x$, որտեղ a-ն երկու լեզուների հավասարարժեք հնչույթների գումարն է, b-ն՝ ոչ հավասարարժեք հնչույթների գումարը, իսկ x-ը՝ համակարգերի նմանության աստիճանը։ Նշված մեթոդը, ինչպես ընդունում է նաև հեղինակը (ՄԲ), գործնականում կիրառելը կապված է մի շարք անհարմարությունների հետ և հետո, հաճախ հստակ արդյունքների չի հասցնում։ Անտարակույս, տարբեր լեզուների, այդ թվում նաև մեր երկու գրականների հնչույթային համակարգերի միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները ավելի ցցուն դրսևորվում են լեզվի իրացված վիճակում՝ խոսքի շղթայում։

Հետևելով Գ. Ջահուկյանի այն դիտողությանը, որ լեզվի և խոսքի հստակ տարբերակումը, առանձնացումը բնավ չի նշանակում նրանց առանձին թագավորությունների հատակացնել, պետք է հաշվի առնել փոխներթափանցումները և այլն (ԼԳ), գտնում ենք, որ համակարգի մասին մեր պատկերացումը ավելի հստականում է շարակարգի՝ տեքստի քննության։ Պատահական չէ, որ տիպաբանական գրականության մեջ զուգադրությունների ժամանակ կարևորությամբ հաշվի է առնվում նաև շարակարգը։

բ) Շ ա ր ա կ ա ր գ

Զուգադրական քննության ժամանակ որոշակի կարևորություն է ստանում նաև հնչույթների՝ խոսքում «ձեռք բերած» արժեքների՝ հաճախականությունների պարզաբանումը։ Տարբեր լեզուների վիճակագրական քննությունը աստիճանաբար ավելի մեծ ուշադրության է արժանանում. դա պայմանավորված է վիճակագրության շնորհիվ լեզվական որոշակի օրինաչափությունների բացահայտմամբ։

Եթե մինչև հիմա գործ ունեինք հարացուցային հնչույթաբանության հետ, ապա այժմ անցնում ենք շարակարգային հնչաբանության։

Ստորև գործ կունենանք խոսքում հնչյունների ունեցած գործառա-

կան դերի, բնութագրությունների հետ։ Ժամանակին լեզվաբան Ա. Պիշկովսկին գրել է, որ գտնել բացարձակ հնչավիճակագրական սվյալներ, գրեթե անհնար է։ Ինչո՞ւ, որովհետև վիճակագրական արժեքները կախված են ինչպես սվյալ կոնկրետ հատվածի բնույթից, ոճից և այլն, այլև հնչույթային կամ հնչյունաբանական տառադարձությունից և այլն (ՄԶ, կԴ. 286—299)։ Ինչպես հայտնի է, տարբեր հետազոտողներ ներկայացրել են, օրինակ՝ ռուսերենի, ֆրանսերենի և այլն ամենահաճախական հնչույթների վիճակագրական արժեքների անհամապատասխանությունը (խԲ. 34)։

Այդ առումով հետաքրքիր է պարզել, թե մեր երկու գրականների ամենահաճախական հնչյունների արժեքների միջև նույնպես նմանօրինակ տատանումներ կա՞ն, թե ոչ։ Արդյոք գրաբարի վիճակագրական սվյալների առնչությամբ արտահայտած կարծիքը (Հայերենի վիճակագրական հարաբերաբար կայուն պատկեր ունենալը (ԼԶ) հիմնավորվո՞ւմ է մեր երկու գրականների սվյալներով։

Բնականաբար, առաջանում է հնչավիճակագրական քննություն կատարելու անհրաժեշտություն։ Տիպաբանական գրականության մեջ հատուկ ուշադրություն է դարձվում տեքստի, այսպես կոչված, բաղաձայնական հագեցվածությանը, այսինքն սվյալ լեզվում բաղաձայն և ձայնավոր հնչյունների հարաբերությանը տեքստում (կն. 3—14, ՄԴ)։

Բազմաթիվ լեզուների հնչաշղթաների զուգադրությունը ցույց է տալիս, որ բաղաձայն-ձայնավոր հարաբերության ցուցիչը լեզուներում ունի վերին սահմանը (շեմը)՝ 2,0, երբ յուրաքանչյուր բաղաձայնի ընկնում է երկու ձայնավոր և հակառակը, ստորին շեմը, երբ յուրաքանչյուր ձայնավորի ընկնում է երկու բաղաձայն՝ 0,5։ Դատելով մեր երկու գրականների հնչույթային միավորների համակարգային հարաբերություններից՝ կարելի է կարծել, որ հայերենը պատկանում է լեզուների ծայրահեղ-բաղաձայնական տիպին.

	Արևելահայերեն		Արևմտահայերեն	
	թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Ձայնավորներ	6	16,67	6	19,36
Բաղաձայններ	30	83,33	25	80,64

Սթև հիմք ընդունենք միմիայն վերոհիշյալ սվյալները, շատ հավանական է, որ միանգամայն կասկածելի եղրակացության հանգենք, քանի որ իրականում որևէ լեզվի ձայնավոր-բաղաձայն իրական հակադրության պատկերը ի հայտ է գալիս այդ լեզվի իրացված վիճակում՝

տեքստում: Ավելացնենք նաև, որ լեզվաբանության մեջ այն կարծիքն է իշխում, որ որևէ լեզվի համակարգում առկա ձայնավորների թիվը հակադարձ համեմատական է տեքստում նրանց ձեռք բերած հաճախականությանը:

Դեռևս գրաբարի հնչույթային համակարգի վիճակագրական քննության ժամանակ պարզվել էր, որ համակարգում ձայնավորներ-բաղաձայններ 18,2—81,8 հակադրության փոխարեն տեքստում առկա է համապատասխանաբար 44—55 հակադրությունը (ԼՋ. 275—277): Իսկ ինչպիսի՞ն է պատկերը մեր երկու գրականներում. հարցի պատասխանը կարող է տալ միայն վիճակագրական քննությունը:

Գրական արևելահայերենի հնչույթային վիճակագրության մի փորձ կատարել է Մ. Մելքումյանը՝ հիմք ունենալով միայն տնտեսագիտական տեքստեր (ընդ որում սահմանափակ ընտրանքի ծավալի պատճառով այդ փորձը որոշ չափով կորցնում է իր արժեքը (ՄՄ): Երկու գրականների հնչյունական կառուցվածքի վիճակագրություն կատարել է Հ. Աճառյանը «Վիճակատար քերականության» ներածության հատորում (Ջ):

Աճառյանի նպատակը լեզվի բարեհնչության աստիճանը պարզելն է եղել, այլև լեզվի սեղմության բացահայտումը: Հենց այդպես էլ Աճառյանը վերնագրել է դեռևս 1912 թ. «Ոստան» ամսաթերթում արևմտահայերենով տպագրած հոդվածը՝ «Հայերենի ներդաշնակության աստիճանը թվաբանական հաշվով»: Հետագայում այդ հոդվածը աննշան փոփոխություններով մտել է «Վիճակատար քերականության» մեջ (էջ 258—277): Հենց սկզբից Հ. Աճառյանը նշում է, որ ամեն վիճակագրություն, եթե նկատի ունի լեզվի իրական վիճակը, պետք է հենվի ոչ թե տառերի վիճակագրության վրա, այլ հնչյունների. այսպես. «տառե՞րը պիտի նկատի առնենք թե ձայները» հարցումից հետո եզրակացվում է՝ ձայները (իմա՝ հնչյունները): Մինչդեռ հետագա քննության ընթացքում Հ. Աճառյանը գրական արևմտահայերենի համար նշում է նաև պ, տ, կ, ծ, ճ պարզ խուլերի վիճակագրությունը, որ տարակուսանք է առաջացնում. կամ Աճառյանը այդ տառերով նշել է ձայնեղների շարքը՝ բ, գ, դ, ձ, ջ, կամ էլ՝ գրական արևմտահայերենի համար եռաշարք բաղաձայնական արժեքներ՝ բ–պ–փ, գ–կ–ք և այլն: Ավելի հավանական է առաջինը, քանի որ Աճառյանը նշել է արևմտահայերենի պարզ խուլերի ձայնեղացումը և ձայնեղների շնչեղացումը, այնպես որ դրանից հետո դարձյալ եռաշարք հակադրություններ ներկայացնելիս ըստ էության տառերը նկատի ունի:

Յուրաքանչյուր վիճակագրական քննության հենվում է որոշակի մոտեցման, սկզբունքների վրա. ամենից առաջ առաջանում է ընտրանքի ծավալի հարցը: Ինչպիսի՞ հատվածներ պետք է ընտրվեն, ո՞ր հեղինակներից: Ընտրանքի ծավալի և այլ հարցեր հատուկ չենք քննում, նկատի ունենալով այդ հարցին նվիրված հայերեն լեզվով բավարար գրականության առկայությունը (ԻԲ):

Ընտրանքի ծավալի հարցը ծառացել է նաև Հ. Աճառյանի վիճակագրության ժամանակ: «Ի՞նչ հատվածներ. վերցնել իբրև նմուշ: Դուրյանից, Պեշիկթաշլյանից, Օտյանից, Տեմիրճիպաշլյանից, Նար-Պեյից, Պարոնյանից և ուրիշ նշանավոր գրողներից էջեր վերցնել, թե նախորդ գրաբար հատվածները աշխարհաբար թարգմանել»—գրում է Աճառյանը (Զ. 254): Աճառյանն ի վերջո ընտրել է վերջին ուղին այն պատճառաբանությամբ, որ նախ նշված հեղինակներից «գրեթե ոչ մեկը մաքուր աշխարհաբար չի գրել. բոլորն էլ խառն են, գրաբարի մնացորդներով: Հետևաբար՝ նրանցից կազմված աստիճանաչափը չէր կարող ուղիղ լինել»: Աճառյանի մտահոգությունը որոշակի հիմքեր ունի. իրոք, Պետրոս Դուրյանի ու Մկրտիչ Պեշիկթաշլյանի շրջանի արևմտահայերենը գրական նորմավորման այն աստիճանին չէր հասել, ինչ որ մեր դարի 10-ական թվականներին. այդ նշանակում է, որ կարելի էր (պետք էր) հատվածները ընտրել դարասկզբի գրողների գործերից: Բայց Աճառյանը դիմել է թարգմանական հատվածների վերլուծությանը: «Երկրորդ ձևին դիմելով՝ մենք պիտի ուսնեայինք մի քանի առավելություններ. նախ պիտի կարողանայինք գրաբարը համեմատել ուղղակի աշխարհաբարի հետ...» (Զ. 255):

Հ. Աճառյանի նպատակը պարզ է. նա փորձում է գրաբարից սկսած տալ մեր գրական լեզուների հնչյունական վիճակագրությունները միևնույն հատվածների թարգմանությամբ:

Ներկա վիճակագրական քննության համար տվյալ սկզբունքը ընդունելի չէ այն պատճառով, որ մեր նպատակը երկու գրականները քննության առնելն է ինքնակա, անկախ վիճակով: Իսկ դրա համար, մեր կարծիքով, ճշգրիտ արդյունքներ կարող ենք ստանալ միայն ինքնուրույն և ոչ թե թարգմանական հատվածներ նկատի առնելով:

Ի տարբերություն Հ. Աճառյանի մոտեցման (խուսափել տեքստերում նույն բառերի կրկնությունից), մեր ընտրած հատվածներում այդպիսիք մերժելի չեն դիտվել, որովհետև իրականում բնական խոսքում (գրավոր կամ բանավոր) բառակրկնություններն անխուսափելի են:

Թեև վիճակագրության համար ընտրված հատվածների ժամանա-

Աղյուսակ № 6

Հեղինակ	Շիրվանզադե		Նար-Դոս		Դ. Դեմիրճյան		Ռ. Զարյան		Վ. Փափազյան		Ընդամենը	
Հնչյուն	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1 Ա	279	16,296	281	15,724	458	12,967	210	13,925	216	13,926	1444	14,311
2 Ն	174	10,161	159	8,897	311	8,805	137	9,084	141	9,090	929	9,137
3 Ե (է)	131	7,651	148	8,282	294	8,323	152	10,07	144	9,284	869	8,612
4 Ր	148	8,614	154	8,617	313	8,861	119	7,891	127	8,188	861	8,533
5 Ի	85	4,964	113	6,323	218	6,172	85	5,636	99	6,382	600	5,946
6 Ը	80	4,672	66	3,693	220	6,228	70	4,641	56	3,610	492	4,876
7 Մ	72	4,205	91	5,092	159	4,501	67	4,442	73	4,706	462	4,578
8 ՈՒ	80	4,672	60	3,357	133	3,765	54	3,580	67	4,319	394	3,904
9 Յ	53	3,095	85	4,756	108	3,057	56	3,713	68	4,384	370	3,666
10 Ո (Օ)	56	3,271	61	3,413	137	3,878	46	3,050	58	3,739	358	3,548
11 Վ	50	2,920	70	3,917	115	3,255	56	3,713	64	4,126	355	3,518
12 Կ	50	2,920	59	3,301	113	3,199	54	3,580	52	3,352	328	3,250
13 Տ	41	2,394	56	3,133	100	2,831	42	2,785	49	3,159	288	2,854
14 Ս	39	2,278	55	3,077	79	2,236	45	2,984	40	2,578	258	2,556
15 Լ	50	2,920	23	1,287	58	1,642	40	2,652	33	2,127	204	2,021
16 Ց	27	1,577	26	1,454	75	2,123	33	2,188	33	2,127	194	1,922
17 Հ	37	2,161	28	1,566	62	1,755	30	1,989	26	1,776	183	1,813
18 Ր	28	1,635	32	1,790	55	1,557	21	1,392	23	1,482	159	1,575
19 Թ	28	1,635	26	1,454	43	1,217	26	1,724	33	2,127	156	1,546

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
20 Գ	27	1,577	20	1,119	70	1,981	13	0,862	4	0,257	134	1,328
21 Դ	17	0,992	21	1,175	37	1,047	24	1,591	12	0,773	111	1,100
22 Ե	30	1,752	12	0,671	38	1,075	9	0,596	19	1,225	108	1,070
23 Զ	11	0,642	17	0,951	42	1,189	14	0,928	23	1,482	107	1,060
24 Է	13	0,759	20	1,119	37	1,047	20	1,326	15	0,967	105	1,040
25 Ը	20	1,169	13	0,727	33	0,934	10	0,663	23	1,482	99	0,981
26 Ժ	8	0,467	27	1,510	25	0,707	18	1,193	6	0,386	84	0,832
27 Ի	19	1,109	9	0,503	41	1,160	5	0,331	6	0,386	80	0,792
28 Լ	16	0,934	5	0,279	38	1,075	9	0,596	4	0,257	72	0,713
29 Խ	14	0,817	15	0,839	21	0,594	11	0,729	8	0,515	69	0,683
30 Ծ	3	0,175	8	0,447	32	0,906	8	0,530	10	0,644	61	0,604
31 Կ	4	0,233	6	0,335	21	0,594	7	0,464	16	0,386	44	0,436
32 Հ	9	0,525	6	0,335	15	0,424	4	0,265	2	0,128	36	0,356
33 Ձ	6	0,350	4	0,223	9	0,254	6	0,397	5	0,322	30	0,297
34 Ղ	5	0,292	5	0,279	11	0,311	4	0,265	2	0,128	27	0,267
35 Ջ	2	0,116	5	0,279	9	0,254	3	0,198	4	0,257	23	0,227
36 Ն	—	—	1	0,005	2	0,056	—	—	—	—	3	0,029
Ընդամենը	1712		1787		3532		1508		1551		10090	

կագրական կտրվածքը լայն է, այնուհանդերձ դրանք համաժամանակյա բնույթ ունեն։ Թեև, առաջ անցնելով, ասենք, որ հայոց լեզվի տարբեր փուլերի (գրաբար, աշխարհաբար) հնչյունական վիճակագրության պատկերը հիմնականում նույնն է մնում։

Գրական արևելահայերենի համար վիճակագրության են ենթարկվել հետևյալ հատվածները.

1. Շիրվանզադեի «Քաոս» վեպի առաջին մասի երկրորդ հատվածը՝ «Երեք երեկո շարունակ հոգեհանգիստ էր կատարում» նախադասությունից մինչև «Իսկ ամուսնանալ կարող էր միայն իր շռայլ կենցաղը փոխելուց հետո» նախադասությունը։

2. Նար-Դոսի «Ես և նա» պատմվածքի սկզբից մինչև «սակայն շարունակեմ պատմությունս» նախադասությունը։

3. Դ. Դեմիրճյանի «Նարգիզ» պատմվածքն ամբողջությամբ։

4. Ռուբեն Զարյանի «Հուշապատում»-ի երկրորդ հատորից «Հարություն Կալենց» բաժնի սկզբից մինչև «Իսկ աչքերը նայում էին թախիծով» նախադասությունը։

5. Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացքի» 2-րդ գրքի սկզբից մինչև «Ղանթարը իր ազմկոտ ներկայությամբ» նախադասությունը։ Գրական արևմտահայերենի վիճակագրության համար ընտրվել են հետևյալ հատվածները.

1. Գրիգոր Զոհրապի «Ճիտին պարտքը» նորավեպի առաջին երկու մասերը (որպես արևմտահայ արձակի դասական շրջանի նմուշ)։

2. Լևոն Բաշալյանի «Միջերկրականի հիշատակներ»-ի երկրորդ մասի «Մաթաբանի ճգնավորը» գործի աստղանիշից հետո ընկած հատվածը. «Այս տարի երկու շաբաթ առաջ...»-ից մինչև «...ինչ համայնթափություն» (որպես նույն շրջանի ուղեգրության նմուշ)։

3. Շահան Շահնուրի «Նահանջն առանց երգի» վեպի մուտքը (իբրև ժամանակակից սփյուռքահայ գրականության դասական նմուշ)։

4. Անդրանիկ Ծառուկյանի «Մանկություն չունեցող մարդիկ» վեպակի առաջին հատվածը (որպես ժամանակակից արձակի նմուշ)։

5. Վահե-Վահյանի «Ոսկի կամուրջ» գրքի «Գրողներու հանգստյան տունը» հատվածը (իբրև տպավորությունների նմուշ)։

6. Զարեհ Որբունու «Վարձու սենյակ» գրքի առաջին էջը (3-րդ), մինչև «...կը ղարնէր ուրիշի մը»։

Վիճակագրության տվյալները տրվում են № 7 աղյուսակում։

Վիճակագրական արդյունքները հաստատում են այն կարծիքը, որ համակարգում եղած բաղաձայնների թիվը հակադարձ համեմատական

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
լ	23	1,45	35	1,82	32	2,45	34	1,45	23	0,99	7	1,34	154	1,54
փ	27	1,70	22	1,14	18	1,38	34	1,45	38	1,64	9	1,72	148	1,48
բ	20	1,26	37	1,92	15	1,15	28	1,19	30	1,29	7	1,34	137	1,37
ղ	12	0,76	21	1,09	15	1,15	30	1,28	33	1,42	6	1,14	117	1,17
ջ	14	0,88	15	0,78	27	2,07	27	1,15	27	1,16	4	0,76	114	1,14
շ	11	0,69	19	0,99	8	0,61	30	1,28	27	1,16	8	1,53	103	1,03
ո	12	0,76	21	1,09	11	0,84	21	0,90	16	0,69	1	0,19	82	0,82
ի	10	0,63	16	0,83	11	0,84	16	0,68	17	0,73	3	0,57	73	0,73
չ	5	0,32	15	0,78	14	1,07	13	0,55	14	0,60	3	0,57	64	0,64
չ	7	0,44	8	0,41	6	0,46	8	0,34	7	0,30	2	0,38	38	0,38
ժ	1	0,06	3	0,16	3	0,23	6	0,26	7	0,30	3	0,57	23	0,23
ձ	—	—	—	—	—	—	—	—	1	0,04	—	--	1	0,01
Ընդամենը	1583		1927			1306	2339		2321		524		10000	

Աղյուսակ № 7

Հեղինակ	Լ. Բաշալյան		Գ. Զոհրապ		Շ. Շահնուր		Ա. Ծառուկյան		Վ. Վահյան		Զ. Որբունի		Ընդամենը	
Հնչյուն	Քիվը	%-ը	Քիվը	%-ը	Քիվը	%-ը	Քիվը	%-ը	Քիվը	%-ը	Քիվը	%-ը	Քիվը	%-ը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ա	213	13,46	275	14,28	172	13,17	305	13,04	333	14,35	62	11,83	1360	13,60
Ն	169	10,68	185	9,60	101	7,73	224	9,58	239	10,30	49	9,35	967	9,67
Ի	140	8,84	154	7,99	122	9,34	217	9,28	195	8,40	50	9,54	878	8,78
Ր	114	7,20	148	7,68	103	7,89	177	7,57	203	8,75	52	9,92	797	7,97
Ը	102	6,44	106	5,50	76	5,82	144	6,16	126	5,43	33	6,30	587	5,87
Ի	82	5,18	108	5,60	65	4,98	117	5,00	135	5,82	30	5,72	537	5,37
ՈՒ	67	4,23	94	4,88	56	4,29	74	3,16	105	4,52	17	3,24	413	4,13
Գ	60	3,79	89	4,62	51	3,90	109	4,66	69	2,97	21	4,00	399	3,99
Յ	66	4,17	72	3,74	46	3,52	90	3,85	101	4,35	10	1,91	385	3,85
Վ	68	4,30	64	3,32	55	4,21	91	3,89	81	3,49	18	3,44	377	3,77
Օ	52	3,28	87	4,51	40	3,06	93	3,98	65	2,80	25	4,77	362	3,62
Մ	56	3,54	50	2,59	42	3,22	83	3,55	79	3,40	20	3,82	330	3,30
Պ	51	3,22	55	2,85	43	3,29	60	2,57	65	2,80	17	3,24	291	2,91
Ռ	28	1,77	39	2,02	40	3,06	75	3,20	70	3,02	22	4,20	274	2,74
Թ	41	2,59	51	2,65	25	1,91	48	2,05	71	3,06	9	1,72	245	2,45
Ս	47	2,97	44	2,28	32	2,45	48	2,05	45	1,94	6	1,14	222	2,22
Չ	25	1,58	42	2,18	23	1,76	46	1,97	41	1,77	13	2,48	190	1,90
Յ	36	2,27	20	1,04	35	2,68	51	2,18	28	1,20	6	1,14	176	1·76
Ջ	24	1,51	32	1,66	19	1,45	40	1,71	30	1,29	11	2,10	156	1,56

է նրանց տեքստում ունեցած հաճախականությանը։ Այսպես, 83% բաղաձայնները տեքստում կազմում են ընդամենը 59%. համապատասխանաբար ընդամենը 17% կազմող ձայնավորները տեքստում ստանում են շուրջ 42%-ի արժեք։

Նշանակում է հարյուր հնչյունից արևմտահայերենում 42-ը ձայնավոր է (ի միջի այլոց այդ թիվը գրաբարում շուրջ մեկ տոկոսով ավելի է. նկատի պետք է ունենալ, որ գրաբարը հարուստ էր երկբարբառներով և այլն)։

Աղյուսակից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. Գրական արևմտահայերենը հայոց գրական լեզուներին հատուկ սկզբունքից չի շեղվում. բաղաձայն-ձայնավոր հարաբերակցության մեջ ձգտում է դեպի ձայնավորային լեզուների խումբը, այն դեպքում, երբ միայն համակարգում բաղաձայնների գերակշռությունը որոշակի է. ավելացնենք նաև, որ այդ դեպքում արևմտահայերենը արևելահայերենի բաղդատությամբ անգամ աչքի է ընկնում ձայնավորային հարաբերաբար բարձր տոկոսով՝ 17-ի դիմաց 19 տոկոսով։

2. Վիճակագրական ավյալներով ամենահաճախական հնչույթները երկու գրականներում էլ նույնն են՝ Ա, Ն, Ե, Ր։

Ըստ վիճակագրության տվյալների, առաջին յոթ ամենահաճախական հնչույթները կազմում են տեքստի շուրջ 52 տոկոսը։ Այդ յոթնյակի մեջ են մտնում, բացի վերոհիշյալ չորս հնչույթներից, նաև Ի, ՈՒ, Ը ձայնավորները։ Այսպիսով, յուրաքանչյուր հարյուր հնչույթի կեսից ավելին ձայնավորներ և ձայնորդներ են։ Ընդ որում ձայնորդներից և-ն իր հաճախականությամբ զիջում է միայն Ա ձայնավորին (100 հնչյունից 10-ը՝ Ն է)։

Ն-ի ամենահաճախական բաղաձայն լինելը երկու գրականներում էլ մի շարք հանգամանքներով է պայմանավորված. նշենք դրանցից մի քանիսը.

1. Այն հանդես է գալիս ամենահաճախական ածանցների կազմում՝ ություն, ական, ուն, ան, ունի և այլն։

2. Այն հոգնակազմ թեքույթների տարր է (ներ)։

3. Բայաձևերի երրորդ դեմքի (հոգնակի թիվ) ցուցիչ է՝ գրեն, կըգրեն և այլն։

4. Որոշիչ հոդ է (տղան, գինին)։

Ամենահաճախական հնչույթների պատկերը վկայում է, որ Թ. Միլևսկու առաջարկած աշխարհի լեզուների հնչույթների առաջնային շար-

քը հատակորեն դրսևորվում է հայերենում, ուր հանդես են գալիս ոչ միայն Ա–Ի–ՈՒ–Է ձայնավորային հակադրությունները, այլև Ն–Ր առաջնային հնչույթային միավորները։

Երկու գրականներին բնորոշ ընդհանուր հատկանիշներից է Ը հընչույթի բարձր հաճախականությունը։

Ստացված տվյալները վկայում են, որ լեզուն ունի վիճակագրական կայուն արժեքներով բնութագրվող որոշակի հնչույթային ոլորտներ (ինչպես ձայնավորական, այնպես էլ մանավանդ բաղաձայնական ենթահամակարգի ներսում եղած ոլորտներ)։ Եթե տվյալ ոլորտում միավորներից մեկը (որևէ հնչույթ) դուրս է գալիս, ապա նրա վիճակագրական բեռնվածությունը բաշխվում է տվյալ ոլորտում եղած մյուս միավորների վրա։ Այսպես, հատաշարք՝ Բ–Պ–Փ, Գ–Կ–Ք, Դ–Տ–Թ, Ջ–Ծ–Ց և Ջ–Ճ–Չ հակադրությունները կազմում են համապատասխան հատնդամ ոլորտներ արևելահայերենում և երկանդամ ոլորտներ արևմտահայերենում՝ Բ–Փ, Գ–Ք, Դ–Թ և այլն։

Իմանալով արևելահայերենին հատուկ հատնդամ հակադրությունների անդամների վիճակագրությունը առանձին-առանձին, կարելի է պընդել, որ նրանց ընդհանուր միջին արժեքը համապատասխանում է արևմըտահայերենի երկշարք համապատասխան ոլորտի անդամների վիճակագրական արժեքների գումարին։ Այսպես, եթե գրաբարի և գրական արևելահայերենի վիճակագրական տվյալները (ԼՋ, Գ) համեմատենք վերոհիշյալ աղյուսակի համապատասխան տվյալների հետ, կստացվի հետևյալ պատկերը.

Է. Աղայանի տվյալները գրաբարի համար	Մեր տվյալները արևելահայերենի համար	արևմտահայերենի համար
Դ—1,35	Դ—1,71	Դ—2,91
Տ—2,85	Տ—2,32	
Թ—1,40	Թ—1,12	Թ—2,45
Ընդամենը՝ 5,51	Ընդամենը՝ 5,15	Ընդամենը՝ 5,35

Եթե Է. Աղայանի և մեր տվյալների (արևելահայերենի համար ստացած) միջինը հաներ՝ 5,38, ապա այն գրեթե կհնչեներ արևմտահայերենի համապատասխան արժեքին՝ 5,35։

Նույնն է պատկերը նաև բաղաձայնական մյուս ոլորտներում։ Ստորև տրվում են համապատասխան արժեքների զուգադրությունները.

Գրաբար (Աղայանի տվյալները)	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Բ—1,058	Բ—1,053	Բ—1,37
Պ—0,249	Պ—0,833	
Փ—0,420	Փ—0,233	Փ—1,48
Ընդամենը՝ 2,427	Ընդամենը՝ 2,119	Ընդամենը՝ 2,85

Ինչպես տեսնում ենք, այս դեպքում, ճիշտ է, համընկնումները բացարձակ չեն, բայց տարբերություններն էլ միայն շուրջ կես տոկոս են կազմում: Նույն երևույթն է առկա նաև այսպես կոչված բարդ պայթաշփականների ոլորտում.

Գրաբար (է. Աղայան)	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Զ—0,37	Զ—0,51	Զ—1,14
Ծ—0,45	Ծ—0,52	
Ց—2,70	Ց—3,02	Ց—1,77
Ընդամենը՝ 3,52	Ընդամենը՝ 4,25	Ընդամենը՝ 2,90

Ինչպես տեսնում ենք, բարդ պայթաշփականների դեպքում տարբերությունը համեմատաբար մեծ է ստացվում (խոսքն, անշուշտ, համապատասխան արևմտահայերենի՝ Զ–Ց շարքին համապատասխան շարքի՝ Զ–Ց ոլորտի մասին է, որովհետև Ջ–Ճ–Չ շարքի դեպքում տարբերությունը կես տոկոսից փոքր է ստացվել:

Այսպես՝

Գրաբար (է. Աղայան)	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Ջ—0,52	Ջ—0,25	Ջ—0,38
Ճ—0,18	Ճ—0,12	
Չ—0,757	Չ—1,53	Չ—1,55
Ընդամենը՝ 1,559	Ընդամենը՝ 1,425	Ընդամենը՝ 1,94

Նկատի առնելով, որ բայական ժամանակներից սովորաբար ներկան համեմատաբար ավելի բարձր հաճախականություն ունի և գրական արևմտահայերենում այն կազմվում է կը (գը) եղանակիչով, հետաքրքիր է տեսնել, թե ինչպիսի փոփոխություններ են առաջանում Գ–Ք հակադրության ոլորտում: Բերենք հետևյալ տվյալների զուգադրությունը.

Գրաբար (Է. Աղայան)	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Գ—1,524	Գ—0,833	Գ—3,99
Կ—2,427	Կ—1,913	
Ք—1,524	Ք—1,980	Ք—2,74
Ընդամենը՝ 5,575	Ընդամենը՝ 4,725	Ընդամենը՝ 5,73

Ինչպես տեսնում ենք, արևելահայերենի 15 և արևմտահայերենի 10 հնչույթների ոլորտներում միայն այս դեպքում է, որ տարբերությունը համեմատաբար շոշափելի է. այն կազմում է մեկ տոկոսից ավելի: Պատճառը, ինչպես նշվեց վերը, կը(գը)-ի բարձր հաճախականությունն է, որը նշանակալիորեն մեծացնում է տվյալ հնչույթի արժեքը (հմմտ. Է. Աղայանի վիճակագրության 1,524-ի դիմաց 3,99 տոկոս):

Ստորև ներկայացնում ենք մեր երկու գրական լեզուների հնչույթների գործառական բեռնվածությունների զուգակշիռ-պատկերը (աղյուսակ № 8):

Հիմք ունենալով № 8 աղյուսակում եղած տվյալները, գծապատկերով ներկայացնում ենք այդ արժեքների համամասնությունները: Գծապատկերում ուղղահայաց գծի վրա տրված են հնչույթների արժեքները, հորիզոնական գծի վրա՝ հնչույթները: Ընդ որում արևելահայերենի հնչույթները ներկայացվել են հոծ գծով, արևմտահայերենինը՝ կևատգծով:

Ինչպես հստակորեն երևում է գծապատկերից՝ երկու գրականների գործառական բեռնվածության կորերը հիմնականում համընկնում են և շեղումներ են տալիս միայն այն դեպքում, երբ արևմտահայերենում տվյալ հնչույթը կատարում է արևելահայերենի երկու հնչույթի դեր (օրինակ՝ Գ, Բ, Զ և այլն):

Գծապատկերից կարելի է հանգել հետևյալ եզրակացության. արդի հայերենի երկու գրական վիճակների հնչույթային յուրաքանչյուր ոլորտ աչքի է ընկնում իրեն հատուկ վիճակագրական ցուցիչներով (արժեքներով): Տվյալ ոլորտի միավորներից որևէ մեկի ցածր հաճախականության դեպքում մեծանում է նույն ոլորտի մյուս հնչույթների հաճախականությունը: Վերջապես, արևելահայերենի նուազարք բաղաձայնական ոլորտների վիճակագրական ցուցիչների գումարը ընդհանուր գծերով համընկնում է արևմտահայերենի երկշարք բաղաձայնական ոլորտների վիճակագրական տվյալների գումարին:

Տեքստի բաղաձայնական հագեցվածության աստիճանը, ինչպես նշվում է արդի լեզվաբանական աշխատություններում (Խ. 35), այ-

Արևելահայերեն			Արևմտահայերեն	
կարգահամար	հնչույթ	%-ը	հնչույթ	%-ը
1	Ա	14,31	Ա	13,60
2	Ն	9,14	Ն	9,67
3	Ե (է)	8,61	Ե(է)	8,78
4	Ր	8,53	Ր	7,97
5	Ի	5,95	Ը	5,87
6	Ը	4,88	Ի	5,37
7	Մ	4,58	ՈՒ	4,13
8	ՈՒ	3,90	Գ	3,99
9	Ց	3,67	Վ	3,85
10	Օ(ո)	3,55	Ց	3,77
11	Վ	3,51	Օ	3,62
12	Կ	3,25	Մ	3,30
13	Տ	2,85	Դ	2,91
14	Ս	2,56	Ռ	2,74
15	Լ	2,02	Թ	2,45
16	Ձ	1,92	Ս	2,22
17	Հ	1,81	Հ	1,90
18	Ռ	1,57	Ձ	1,76
19	Թ	1,55	Ջ	1,56
20	Գ	1,33	Լ	1,54
21	Ջ	1,10	Փ	1,48
22	Բ	1,07	Բ	1,37
23	Դ	1,06	Ղ	1,37
24	Պ	1,04	Զ	1,14
25	Ղ	0,98	Շ	1,03
26	Ծ	0,83	Ր	0,82
27	Շ	0,79	Խ	0,73
28	Խ	0,71	Չ	0,64
29	Ր	0,68	Չ	0,38
30	Չ	0,64	Ժ	0,23
31	Փ	0,44	Ֆ	0,01
32	Ժ	0,36		
33	Զ	0,30		
34	Ճ	0,27		
35	Ջ	0,23		
36	Ֆ	0,03		

սինքն՝ ձայնավոր և բաղաձայն հնչյունների հարաբերակցությունը տիպաբանական կարևոր ցուցիչներից է։ Ինչպես հայտնի է լեզվաբանական գրականությունից (կե), աշխարհի լեզուներում այդ ցուցիչը տատանվում է 2,0-ից (երկու ձայնավոր մեկ բաղաձայն (մինչև 0,5) մեկ ձայնավոր երկու բաղաձայն)։ Մեր երկու գրականներում ձայնավորների և



բաղաձայնների քանակային հարաբերությունը հետևյալ պատկերն ունի.

	Արևելահայերեն			Արևմտահայերեն		
	համակարգ		տեքստ	համակարգ		տեքստ
Ձայնավորներ	6	13, 89	41,2	6	19,4	41,37
Բաղաձայններ	30	86, 11	58,8	25	80,6	58,63

Ինչպես տեսնում ենք, համակարգում առկա նշանակալից տարբերությունը խոսքում գերազանցապես հարթվում է: Երկու գրականներում էլ ձայնավոր-բաղաձայն հարաբերակցությունը ստանում է հետևյալ արտահայտությունը՝ 41—59: Ըստ այդ տվյալի, կարելի է ասել, որ արևելահայերենն ու արևմտահայերենը աշխարհի լեզուների շարքում միջին դիրք են գրավում:

Հայերենի տեքստի բաղաձայնական հագեցվածության աստիճանը ուղղակի վկայում է այն իրողությունը, որ հայերենում բաղաձայնական կապակցություններ թույլատրելի են միայն որոշ (բառիս արևելահայ իմաստով) սահմաններում: Իհարկե, պետք չէ կարծել, թե ունենալով միևնույն ցուցիչները, երկու գրականներում հավասարապես թույլատրելի են միևնույն կապակցությունները: Բնավ, ինչպես պարզ

կդառնա բաղաձայնական կապակցությունների աղյուսակից (էջ 58), արևելահայերենը արևմտահայերենի համեմատությամբ թույլատրում է բաղաձայնական առանձին կապակցություններ բառասկզբում և բառավերջում, որոնք արևմտահայերենին բնորոշ չեն։

Ձայնավորների և բաղաձայնների բաշխումը ավելի համաչափ է խոսքում, քան բառարանում։ Այսպես, արևել. գիրք—գրքի>գըր-ի, վարդ—վարդից>վար-դից և այլն։ Արևմտահայերենն այն առանձնահատկությունն ունի, որ հիմքի ձայնավորը գերազանցապես պահում է անփոփոխ, այն դեպքում, երբ արևելահայերենն այն սովորաբար վերածում է անգիր Ը-ի (արևմտ. գիրք—գրքի—գիր-ի)։ Հնչավիճակագրության արդյունքները որոշ գաղափար են տալիս նաև ավյալ լեզուների քերականական կառուցվածքի առանձնահատկությունների մասին։ Բերենք մի օրինակ՝ արևելահայերենի Ի ձայնավորը արևմտահայերենի նույն հնչույթի համեմատությամբ ավելի հաճախական է, բայց ահա արևմտահայերենի Ու հնչույթը ավելի բարձր արժեքներ ունի, քան արևելահայերենի Ու-ն (համապատասխանաբար 7 և 8 կարգահամարներ)։ Այդ ուղղակի վկայում է այն մասին, որ արևելահայերենում Ի-ն որպես հոլովական թեքույթ ավելի մեծ դեր է կատարում, քան արևմտահայերենի համապատասխան հնչույթը և հակառակը՝ նույն դերով արևմտահայերենի Ու-ն ավելի մեծ բեռնվածություն ունի։ Ինչպես ցույց կտրվի հոլովական հարացույցի քննության ժամանակ, իսկապես, երկու գրականների հոդնակիների զուգադրությունը դրա լավագույն ապացույցն է։

Հնչույթների հաճախականությունը, ի վերջո, ցույց է տալիս, թե խոսքի գործարանները ինչպիսի բեռնվածություն ունեն։ Ըստ բարձրացման՝ երկու գրականներում ձայնավոր հնչույթներն ունեն բաշխման հետևյալ պատկերը.

Բարձրացում	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Վերին Ի, ՈՒ	9,85	9,50
Միջին Է, Ը, Օ	16,91	18,27
Ստորին Ա	14,31	13,60

Ինչպես տեսնում ենք, մեր երկու գրականների վերին շարքի ձայնավորները իրենց արժեքներով համընկնում են, իսկ ստորին շարքի Ա ձայնավորի արժեքների տարբերությունը էական չէ. միակ քիչ թե շատ զգալի շեղումը տալիս են միջին շարքի ձայնավորները։ Ընդ որում արև-

մըտահայերենը, արևելահայերենի համեմատությամբ, ավելի շատ է դիմում միջին շարքի ձայնավորներին: Դա, անշուշտ, պայմանավորված է դարձյալ քերականական կառուցվածքի առանձնահատկություններով: Այսպես՝ արևմտահայերենի բացառականը կազմվում է արևելահայերենի իցէ-ի փոխարեն է-ով, որն էլ բարձրացնում է է-ի հաճախականության արժեքը: Ը-ն նույնպես արևմտահայերենում բարձր արժեքներ ունի, քանի որ այն հանդես է գալիս կը եղանակիչի կազմում, իսկ վերջինս մեծ դեր ունի արևմտահայերենի բայի խոնարհման համակարգում: Այստեղ դեր ունի նաև արևմտահայերենում՝ բաղաձայնական զուգորդությունների մեջ, արևելահայերենի համեմատությամբ, Ը-ի անփոփոխ հանդես գալը (նկատի ունենք հատկապես բառասկզբի դիրքը): Միջին շարքի ձայնավորներից Ը-ն երկու գրականներում էլ հանդես է գալիս որպես «ոչ-մշակութային» ոլորտի հնչույթ (բնաձայնական բառերում, նմանաձայնություններում և այլն՝ զրզրոալ, ճրոճրոալ, ճրոճրոոց, բրրբխկոց, էրրմբրնջյուն և այլն): Հետաքրքիր է նշել, որ ինչպես ընդհանրապես հայերենում, այնպես էլ մեր երկու գրականներում՝ բնաձայնական բառերի արմատներում (հանած ածանցներն ու քերականական մասնիկները) հանդես է գալիս միայն Ը-ն:

Ըստ շարքի երկու գրականների ձայնավորների բաշխումը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Շարք	Հնչույթներ	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Առաջին շարքի	Ի, է	14,56	14,15
Միջին շարքի	Ը	4,88	5,87
Երեն շարքի	ՈՒ, Օ, Ա	21,76	21,35

Ջուգադրվող ավյալները, բացառությամբ միջին շարքի Ը ձայնավորի, գերազանցապես համընկնում են (անհամապատասխանությունները կես տոկոս իսկ չեն կազմում): Միջին շարքի դեպքում եղած մեկ տոկոսի շեղումը դարձյալ պայմանավորված է քերականական կառուցվածքի վերոհիշյալ առանձնահատկությամբ՝ ԿԸ եղանակիչի Ը բաղադրիչով:

Շրթնայնությունը երկու գրականներում ունի հետևյալ արժեքները. արևելահայերենում՝ 7,45%, արևմտահայերենում՝ 7,75%: Դարձյալ արժեքների զարմանալի համընկնում:

Եթե ամփոփենք բերված ավյալները, ապա կարելի է ասել, որ երկու գրականների ձայնավորական ոլորտում ունեցած մեծ ընդհանրու-

Թյունները որոշակի կերպով ի հայտ են բերվում տեքստում նրանց ունեցած գրեթե բացարձակ համապատասխանող արժեքներով (երկուսում էլ, օրինակ՝ ետին շարքի ձայնավորները զգալի տոկոս են կազմում՝ շուրջ 21 %, միջին բարձրացումը գերակշիռ դիրք է գրավում)։

Տարբեր է բաղաձայն հնչույթների տեքստում ունեցած բաշխվածությունը։ Ըստ ձայնի մասնակցության՝ խոսքում բաղաձայնների բաշխումը մեր երկու գրականներում ունի հետևյալ տեսքը.

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Ձայնորդներ	28,62	27,15
Ձայնեղ բաղաձայններ	3,98	9,79
Ուլեր	14,82	9,99 (շնչեղ խուլեր)

Եթե երկու գրական լեզուների ձայնորդների արժեքները էական տարբերություններ չեն տալիս, քանի որ այդ շարքը ինչպես համակարգում, այնպես էլ տեքստում երկուսում էլ նույն պատկերն ունի, ապա ձայնեղների և խուլերի արժեքների միջև զգալի տարբերություններ կան. բնականաբար, ինչպես սպասելի էր, արևմտահայերենի ձայնեղների արժեքները շուրջ 6 տոկոսով բարձրացել են, ըստ այդմ համապատասխանաբար գրեթե նույնչափ իջել է խուլերի արժեքը։

Եթե արևելահայերենը հնդեվրոպական մի շարք լեզուներին հատուկ գիծը պահպանում է (խուլ բաղաձայնների գերակշռությունը ձայնեղների հարաբերությամբ՝ մոտավորապես 15%-ի համեմատությամբ), ապա արևմտահայերենին այն բնորոշ չէ. այստեղ գոյ ունենք ձայնեղների և խուլերի հավասարակշռության հետ (երկուսում էլ շուրջ 10 տոկոս)։

Կարելի է նույն ձևով ներկայացնել երկու գրականների բաղաձայնների հարաբերությունը ըստ կազմության եղանակի, ըստ կազմության տեղի և այլն, սակայն, ինչպես ցույց են տալիս արժեքները, նրանք հիմնականում համընկնում են։

Տիպաբանական գրականության մեջ (կե. 31—39) այն համոզումը կա, որ շփական բաղաձայնների շարքում առաջնալեզվայինները հարաբերաբար ավելի հաճախական են (t, d), քան հետնալեզվայինները, և հաճախականության ամենափոքր արժեքներով բնութագրվում են շրթնայինները՝ p, b։ Այժմ տեսնենք, թե ընդհանուր հնդեվրոպական (հա-

մահնդեվրոպական) այդ երևույթի (ընդհանրույթի) համեմատությամբ ինչպիսի պատկեր են տալիս մեր երկու գրականները.

Հնդեվրոպական լեզուներ	t(6,4)	k(3,7)	d(3,1)	p(2,8)	b(1,2)	g(1,0)
Արևելահայերեն	տ(2,8)	կ(3,2)	դ(1,1)	պ(2,4)	բ(1,1)	գ(1,1)
Արևմտահայերեն	թ(2,4)	ք(2,7)	դ(2,9)	փ(1,5)	բ(1,51)	գ(3,9)

Ինչպես երևում է համեմատությունից, արևելահայերենում, ինչպես նաև հնդեվրոպական լեզուներում, խուլ հնչյունները ավելի հաճախական են, քան ձայնեղները (ընդ որում ամենահաճախականը տ-ն է, իսկ հայերենում՝ կ-ն), բայց ըստ աստիճանական նվազման արժեքների՝ որոշ տարբերություններ են առկա: Նախ աչքի է զարկում, բացի տ և կ հնչյուններից, դ, պ, բ, գ հնչյունների համեմատաբար հավասարաչափ բաշխումը (մոտ հաճախականություններ ունենալը):

Այսպիսով, ամենահաճախական հնչյունների հաջորդականության մեջ հայերենում առկա է տեղաշարժ (կ-ն ավելի հաճախական է, քան տ-ն): Այդ դարձյալ պայմանավորված է քերականական համակարգում կ-ի ունեցած հարաբերաբար մեծ բեռնվածությամբ. այդ է նաև պատճառը, որ արևմտահայերենում գ-ն այդքան բարձր արժեքներ է ստացել և ավել ամենաբարձր շեղումը՝ 3,99:

Համեմատությունից պարզվում է, որ տ-ի տեղաշարժը (ըստ հաճախականության շարքի) զուտ արևելահայերենին հատուկ երևույթ չէ. արևմտահայերենում այն դրսևորվել է թ-ի տեղաշարժով (համապատասխանաբար ունենալով 2,45 և 2,74%):

Արևելահայերենի և արևմտահայերենի հնչույթային վիճակագրությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

1. Ի տարբերություն կառուցվածքային մակարդակում ունեցած տարբերությունների, հնչավիճակագրական քննության ոլորտում ի հայտ են բերվում զգալի ընդհանրություններ:

2. Ամենից առաջ երկու լեզվավիճակներն էլ բնութագրվում են կայուն վիճակագրական արժեքներով, այսինքն՝ հնչույթների բեռնվածության ցուցիչները էական շեղումներ չեն տալիս: Վերջինս կարելի է դիտել իբրև հայերենին հատուկ ընդհանրույթ:

Այժմ անցնենք երկու գրականների հնչյունական շարակարգայնության հարցին: Ինչպես նշվել է լեզվաբանական գրականության մեջ (տե՛ս 54), հնչյունական կապակցությունների ուսումնասիրությունը տեքստում պակաս կարևորություն ունեցող տիպաբանական ցուցիչներից չէ, քան, ասենք, համակարգում այս կամ այն հնչույթի առկայությու-

նը։ Այլևս չենք նշում այն մասին, որ անգամ երկու լեզուներում միևնույն հնչույթների առկայությունը դեռևս չի նշանակում, որ նրանց կապակցելիության հնարավորությունները նույնպես համընկնում են։

Տարբեր լեզուների ուսումնասիրության արդյունքների համաձայն (ՀԲ), անգամ միևնույն որակով բնութագրվող հնչույթները լեզուներում աչքի են ընկնում կապակցելիության տարբեր արժեքներով (հնարավորություններով)։ Ինչպես որ յուրաքանչյուր հնչույթի (հնչյունի) հաճախականության արժեքների մեկնաբանման ժամանակ անընդհատ վկայակոչվում էին ձևաբանական հատկանիշները, նմանապես հնչյունների կապակցելիությունը կապված է թե՛ ձևաբանական, թե՛ շարահյուսական իրողությունների հետ։

Երկու գրականներում հնչյունական կապակցելիության ամբողջական պատկերը ունենալու համար բոլոր իրացված կապակցությունները քննվել են հետևյալ պայմաններում՝ ա) արմատի ներսում, բ) արմատի և ածանցի կցման կետում և գ) բառերի կցման կետում (խոսքի շղթայում)։ Դա պայմանավորված է նրանով, որ երբեմն առանձին հնչյունակապակցություններ, որոնք բացառվում են արմատի ներսում, առկա են լինում արմատի և ածանցի հատման կետում և կամ՝ բառերի միացման (այսպես ասած՝ կարերի) տեղում։ Ընդ որում յուրաքանչյուր դեպքում, ինչպես առհասարակ ընդունված է ընդհանուր լեզվաբանական գրականության մեջ, կարելի է առանձնացնել նաև ենթատիպեր։ Այսպես, առաջին դեպքում կարելի է առանձնացնել երկու ենթատիպ՝ ա) արմատի սկզբում առկա հնչյունակապակցություններ և բ) արմատի վերջում եղած հնչյունակապակցություններ։

Արմատի (կամ բառի) միջակա դիրքում հանդես եկող բաղաձայնական կապակցությունների մասին խոսելն ավելորդ է, քանի որ այդպիսիք հայերենում բացառվում են. երբ բաղաձայնական կապակցությանը հաջորդում է որևէ հնչյուն (բնականաբար՝ միայն ձայնավոր), իսկույն տեղի է ունենում բաղաձայնական կապակցության «տրոհում»՝ վերջին բաղաձայնը անցնում է կցված ձայնավորին և փաստորեն վերանում է անգամ մինչ այդ եղած վերջադիր բաղաձայնական կապակցությունը. այսպես՝ ազգ—ազգի (ազ-գի), տոհմ—տոհմի (տոհ-մի) և այլն։ Օրինաչափությունը նույն ձևով է գործում երկու գրականներում էլ։ Ուրեմն, հայերենի մասին խոսելիս կարելի է նկատի ունենալ միայն միջակա դիրքի բաղաձայնական հաջորդականությունները (տարբեր վանկերի միջև բաշխվող միավորները)։

Նախ ներկայացնենք երկու գրականների ձայնավորների հետ կապված ընդհանուր գծերը.

1) Մեկ վանկի սահմաններում ձայնավորների կապակցության բացակայությունը երկուսում էլ: Ձայնավորների հաջորդականության մեջ (տարբեր վանկերում) նշելի է Ա-ի դերը իբրև հետևանք Ա-ով վերջացող նախածանցի և Ա-ով սկսող արմատի (բառի) «հանդիպման»՝ ամենաարագ, ամենաարգասավոր և այլն: Նկատելի է, որ արագ խոսքում, հատկապես արևելահայերենում, նրանց (նույն հնչյունների) միջև դադարը հասցվում է նվազագույնի: Արևմտահայերենին այն ոչ միայն բնորոշ չէ. այլև նման հաջորդականությունները (ամենաարագ և այլն) ընդունելի չեն դիտվում և փոխարինվում են վերլուծական կառույցներով՝ ամենեն արագ և այլն: Այնպես որ, եթե այս երևույթը արևելահայերենում նշենք + նշանով, ապա արևմտահայերենում այն լավագույն դեպքում կարելի է ներկայացնել ∓ ձևով:

2. Եթե բուլլատրվում են ձայնավորական հաջորդականություններ նախածանցի և արմատի (բառերի) հատման կետում, ապա այդպիսիք բացառվում են բառի ներսում (արմատի ներսում), եթե գործ ունենք բնիկ հայկական բառաշերտի հետ: Ձայնավորների իրար հաջորդելը բառի սահմաններում վկայում է ավյալ բառի փոխառյալ լինելը, ուստի կարող է դիտվել իբրև օտարաբանության ցուցիչ. այսպես՝ առուա, լառւագին և այլն: Նման ձևերը շատ ավելի բնորոշ են գրական արևելահայերենին:

3. Առաջացող ձայնավորական հաջորդականությունները վերացվում են՝

ա) Նրանց միջև կիսաձայն յ-ի օգնությամբ. արևելահայ. ռադիո—ռադիոյի, արևմտահայ. Սիամանթո—Սիամանթոյի և այլն:

բ) Նրանցից առաջին ձայնավորի բաղաձայնեցմամբ (այդ մասին տե՛ս սույն աշխատանքի համապատասխան բաժինը), ինչպես՝ էդուարդ—էդվարդ. արևմտահայ. եդուարդ, առուական—աւվական և այլն:

գ) Երկու ձայնավորներից մեկի (առաջինի) անկմամբ, օրինակ՝ արևելահայ. կը ասեմ—կասեմ, կը երգեմ—կերգեմ. արևմտահայ. կը երթամ—կ'երթամ, կը բսեմ—կ'բսեմ և այլն:

դ) Երկու ձայնավորների կապակցությամբ առաջացող որակական փոփոխությամբ և մեկ՝ նոր ձայնավորի հանդես գալով՝ գիներատուն-գիներատուն:

Բաղաձայնական կապակցություններ և հաջորդականություններ:

Մեր երկու գրականներում էլ ավելի հաճախ պետք է խոսել բաղաձայնական հաջորդականությունների մասին, քան թե կապակցությունների: Բաղաձայնական «հագեցվածության» աստիճանով կես դար առաջվա արևելահայերենն ու արևմտահայերենը էական տարբերություններ չէին տալիս, այնինչ արդի փուլում այդպիսիք զգալի են:

Երկու գրականներում էլ բառասկզբում կարող են հանդես գալ ինչպես բոլոր ձայնավորները, այնպես էլ բոլոր բաղաձայնները (երկուսում էլ Ր-ն թույլ դիրք է. այն կարող է հանդես գալ միայն սահմանափակ թվով բառերում՝ rոպե, Բաֆֆի և այլն: Ընդ որում արևելահայերենի համեմատությամբ այն շատ ավելի թույլ դիրք է արևմտահայերենում. համմտ. Ռաֆֆի գրության ձևը, rոպե բառի փոխարեն վայրկյան-ի գործածությունը):

Մեզնեն հանդիպել էր այն եղրակացության, որ գրաբարը «հակառակ գրային տևաքին, բառասկզբում չուներ բաղաձայնական խմբեր» (համմտ. Դ. 237): է. Աղայանը ներկայացրել է հետևյալ կանոնը. «Եթե ս, զ, շ բաղաձայն կապակցություններն սառցվել են արմատական ձայնավորի սղումով, ապա նրանց միջև արտասանվում է ը գաղտնավանկը, իսկ եթե այդ կապակցությունները ձայնավորի սղումով չեն առաջացել, ը ձայնավորն արտասանվում է նրանցից առաջ»: Աղայանը միաժամանակ նշում է, որ «ժամանակակից հայերենում էլ գրեթե այդպես է» (Դ. 239): Այսինքն՝ սրգալ, շրեղ, բայց ըստահամ, ըսկիզբ և այլն: «Գրաբարի քերականություն» գրքում է. Աղայանը գրել է. «ժամանակակից հայերենում ը-ն արտասանվում է այդ կապակցությունների մեջ, եթե գիտակցվում է բառի կազմությունը (օրինակ՝ սրգալ), այն դեպքում, երբ բառի կազմությունը չի գիտակցվում, ապա դրանք անցնում են սկզբից ը ստացողների շարքը, բայց այստեղ էլ նկատվում է նախահունչ ձայնավորի վերացում և ստանալ, սպանել, սպանդանոց, զգույշ և բազմաթիվ բառերի սկզբում ը արտասանվում է սովորաբար բաղաձայնով հանգող բառերից հետո (մի գիրք ըստացա), իսկ ձայնավորահանգ բառի հաջորդելիս, ինչպես և առանձին՝ այդ ը-ն սղվում է՝ մի՛ սպանիր, ստանալ, սկիզբ և այլն» (Դ. 239):

Աշխարհի լեզուների միջև եղած տարբերությունները ի հայտ են գալիս նաև բաղաձայնական կապակցությունների հնարավոր տիպերի և իրացումների ոլորտում: Կան լեզուներ, ուր թույլատրվում են ոչ միայն երեք, չորս, այլև հինգ բաղաձայնով կապակցություններ (օրինակ՝ ռուսերենում): Հայերենի համար ընդունված է այն կարծիքը, որ բաղա-

ձայնական կուտակումներ նրան հատուկ չեն. միայն գրային ձևում են հանդես գալիս երեքից ավելի բաղաձայնական հաջորդականություններով բառաձևեր. հմմտ. Հ. Աճառյանի բերած չմշտնջենավոր ձևը, ուր փաստորեն և ոչ մի բաղաձայնական կապակցություն չկա, քանի որ մեկ վանկի սահմաններում կից բաղաձայնները բաժանվում են «փըրկարար» ը-ով: Այդ առումով հետաքրքիր է պարզել, թե բաղաձայնական կապակցությունների հնարավոր իրացումները երկու գրականներում ինչ ընդհանրություններ և առանձնահատկություններ ունեն: Սովորաբար բաղաձայնական կապակցությունները ներկայացվում են ըստ բառի մեջ գրաված դիրքի՝ բառասկզբնային և բառավերջային: Ըստ այդմ էլ հաջորդաբար 9-րդ և 10-րդ աղյուսակներում ներկայացվում են երկու գրականների բառասկզբնային և բառավերջային բաղաձայնական կապակցությունները:

Ինչպես երևում է աղյուսակներից, երկու գրականներն էլ, հնդեվրոպական մյուս լեզուների բաղդատությամբ, բաղաձայնական կապակցություններով հարուստ չեն, որ ինչ-որ տեղ կարող է ծառայել իբրև լեզվի բարեհնչունության ցուցիչ: Բառասկզբի համեմատությամբ, երկու գրականների բառավերջը աչքի է ընկնում բաղաձայնական կապակցությունների բազմազանությամբ: Նկելով հանդերձ բառասկզբի դիրքում բաղաձայնական կապակցություններով արդի հայերենի աղքատ լինելը, պետք է շեշտել, որ արևելահայերենը այդ հարցում որոշապես տարբերվում է արևմտահայերենից. եթե արևմտահայերենում այդպիսի կապակցությունները հանդես են գալիս միայն յ-ի «մասնակցությամբ» դրաբարյան երկբարբառների դիրքում՝ գյուղ, կյաճ, տյառն և այլն, ապա արևելահայերենում, բացի այդպիսի կապակցություններից, առկա են նաև շպ, շտ, շկ, շփ, շմ, շբ, սպ, ստ, սկ, սփ, սբ, սմ, զբ, զգ կապացությունները, ուր ը-ի առկայությունը կարելի է դիտել վերապրուկային երևույթ:

Այդ կապակցությունները արևմտահայերենին հատուկ չեն, քանի որ դրանք արտասանվում են նախահունչ ը-ով կամ տրոհվում են տարբեր վանկերի:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ արևմտահայերենը բառասկզբնային դիրքում բաղաձայնական կապակցություն (բացի յ-ից) բացառում է, կարելի է ասել, որ այդ յ-ն դեռևս լիովին չի կորցրել երկբարբառի բաղադրիչ լինելու իր հատկանիշները, ուստի ճիշտ կլինի այն որակել իբրև երկբարբառակերպ, ինչ որ նշել է Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքում (էջ 86):

Բաղաձայնական կապակցություններ բառասկզբում

Առաջին բաղաձայն			երկրորդ բաղաձայն				երրորդ բաղաձայն	
	պ, տ, կ, փ, թ, ք		բ, գ, դ,		յ		բ, վ, յ	
	արևել.	արևմտ.	արևել.	արևմտ.	արևել.	արևմտ.	արևել.	արևմտ.
Շ	շպար շտապ շկոլա շփոթ շքեղ Շթայն	— — — — — —			շյուղ	շյուղ	Շտրաուս	—
Ս	սպանել ստուգ սկիզբ սփոփ սթափ սքեմ	— — — — — —			սյուք	սյուք	սարուակ սովար սկյուռ սփյունք	— — —
Զ			զբաղմունք զգույշ	— —				
Գ Կ Ք Բ Պ Փ Դ Տ Թ					գյուղ կյանք — բյուր պյուճ փյուր դյուրին տյառն թյուր	գյուղ կյանք քյուրդ բյուր — փյուր դյուրին տյառն թյուր		
Ձ					ձյութ	ձյութ		

* Արևմտահայերենի համար բ, գ, դ, ձ գրույթները համապատասխանում են փ, f, թ, ց հնչույթներին, ինչպես որ պ, կ, տ գրույթները՝ բ, գ, դ հնչույթներին: Այսինքն, աղյուսակում նկատի ենք առել բառերի գրության ձևը:

Բաղաձայնական կապակցություններ բառավերջում

Առաջին բաղադրիչ	Երկրորդ բաղադրիչ				Երրորդ բաղադրիչ	
	բ, գ, դ, պ, կ, տ, փ, ք, թ, ձ, ջ, ց, ս, ծ, շ, ժ, հ		մ, ն		ք, կ	
	արևելահայերեն	արևմտահայերեն	արևել.	արևմտ.	արևել.	արևմտ.
1	1	3	4	5	6	6
Բ	Նուբը դորդ արդ վարկ պարտ թարմ թարթ սարք վարձ վերջ հարց հարս կուրծ քարշ վարժ նիրհ	Նուբը դորգ արդ վարկ պարտ թարմ թարթ սարք վարձ վերջ հարց հարս կուրծ քարշ վարժ նիրհ	թարմ	թարմ	պարտք շնորհք	պարտք շնորհք
Ր	կառք	կառք				
Ն	հինգ հունդ թանկ կանտ կանք կանթ հունձ ականջ ցանց չանս	հինգ հունդ թանկ կանտ կանք կանթ հունձ ականջ ցանց չանս			անցք բրյանակ գդանակ	անցք
Մ	թամբ ամպ կամք բամփ ոտմս	թամբ ամպ կամք բամփ ոտմս				
Ղ	կողը հաղթ ազա կողք մազձ քազց	կողը հաղթ ազա կողք մազձ քազց	կողմ	կողմ		
Յ	այը այդ այդ այտ մուլկ կայք գայթ այծ այց այս հուլյժ	այը այդ այդ այտ մուլկ կայք գայթ այծ այց այս հուլյժ	կայմ լայն	լայն		
Չ	ազդ ազդ	ազդ ազդ	հազմ	հազմ		

1	2	3	4	5	6	7
Ս	սասա ասք սոսկ դուսպ	սասա ասք սոսկ դուսպ				
Շ	վաշխ վաշտ մաշկ	վաշխ վաշտ մաշկ	հաշխ	հաշխ		
Խ	բախտ խուխս	բախտ խուխս				
Ղ	բողկ ճեղք աղտ մաղձ	բողկ ճեղք աղտ մաղձ	կողմ	կողմ		
Ծ	ծածկ	ծածկ				
Կ	տակտ ակտ	— —				

Լեզվի զարգացման արդի փուլում բաղաձայնական կուտակումներ ստեղծելու արևելահայերենի միտումը դեռևս բախվում է հայերենին ընդհանրապես հատուկ բաղաձայնական կապակցություններից «հեռու մնալու» ձգտմանը։ Արևմտահայերենը այդ հարցում «ավանդապահ» է։

Երկու գրականներում էլ բաղաձայնական հաջորդականությունները հաճախ հանդիպում են ածանցի և արմատի կցման կետում, ինչպես, օրինակ՝ մակբայ, դերբայ և այլն։ Նման դեպքերում նրանք սովորաբար բաշխվում են կից վանկերի միջև, ուստի կապակցության մասին խոսելը ճիշտ չի լինի։ Երբեմն բաղաձայնական կապակցությունից խուսափելու համար երկու գրականները դիմում են տարբեր միջոցների. այսպես, օրինակ՝ համալսարան բառն արևելահայը հնչում է թույլ լ-ով՝ համասարան (առանց ը-ի), իսկ արևմտահայը հստակորեն հնչում է ինչպես լ-ն, այնպես էլ ը-ն՝ համալըսարան (ինչպես առանձին հնչվող լըսարան բառը)։ Երկու դեպքում էլ արդյունքը բաղաձայնական կապակցության վերացումն է։ Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բաղաձայնական կապակցությունների վերացման գործում հիմնական դերը ստանձնել է ը-ն (առանձին դեպքերում՝ յ-ն)։

Երբ բառասկզբնային բաղաձայնական կապակցություններում ը-ի տարբերակը բացառվում է (ինչպես, օրինակ՝ սպորտ—արևելահայ., սփոր—արևմտահայ.), գերազանցապես նշան կարող է ծառայել բառի փոխառյալ լինելու. ընդ որում գրական արևմտահայերենում այդպիսիք

տիպական չեն, քանի որ ճիշտ ձևերը՝ մարզանիմ և այլն, չունեն բաղաձայնական խճողում: Այսպիսով, այնտեղ, ուր բառավերջային դիրքում արևմտահայերենը տվյալ կապակցությունը չունի, ազդանշան կարող է լինել արևելահայերենում տվյալ բառի փոխառյալ լինելու (համմտ. տակտ, ակտ, պակտ և այլն):

Արևելահայերենի հակամետ լինելը բաղաձայնական նոր կապակցություններ ստեղծելու՝ խախտում է «ավանդական» հայերենի ընդհանրությունը՝ բաղաձայնական կապակցությունները ը-ով անջատելու սկզբունքը, թուլացնելով այդպիսիք հատկապես փոխառյալ բառերում (օրինակ՝ սպրինտ, սպեկտր և այլն): Նմանապես արևելահայերենում թուլացել է ձայնավորների կողք կողքի (հաջորդական) հանդես գալուց հնարավորին չափ խուսափելու միտումը, այն դեպքում, երբ արևմտահայերենում այն որոշապես դրսևորվում է. համմտ. արևելահայերենի ամենաարագ, ամենաարդյունավետ և այլ ձևերը արևմտահայերենի ամենեն արագ, ամենեն արդյունավետ վերլուծական ձևերի հետ, ուր վերջիններս գերազանցապես պայմանավորված են նույն ձայնավորի հաջորդելիությունից խուսափելու ձգտումով:

Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում բառամիջի ձայնավորի սղման հետևանքով (հատկապես ա-ի) առաջացել են բաղաձայնական նոր հաջորդականություններ, ինչպես՝ ելլել, կլլել, գիրնա՞ և այլն. սրանք, անշուշտ, ոչ թե կապակցություններ են, այլ հաջորդականություններ:

Վանկ: Վանկը տարբեր լեզուներում միևնույն կառուցվածքը չունի: Այսպես, հայտնի է, որ որոշ լեզուներում բացի ձայնավորներից վանկարար են նաև ձայնորդները. մյուսներում կարող են վանկ կազմել միայն ձայնավորները: Վանկարար տարրի այդօրինակ տարբերությունները կարևոր նշանակություն են ստանում լեզուների կառուցվածքային ընդհանրույթների և տարբերությունների բացահայտման գործում, ծառայելով որպես լեզվաբանական տիպաբանության էական հատկանիշ:

Վանկի տիպաբանական քննությանը նվիրված աշխատանքներում վերջին ժամանակներս պահանջ է դրվում ոչ թե հնչույթների, այլ հընչույթային խմբերի ընդունումը որպես վերլուծության միավորների (ՇԷ, 272): Հիմք են ընդունում այն իրողությունը, որ հնչույթների կազմը անգամ ցեղակից լեզուներում դժվար համեմատելի է և ամենակարևորը՝ վանկի մեջ հնչույթային կազմի հաշվառումը անհրաժեշտաբար բազմաթիվ միավորների հետ գործ ունենալու պահանջ է դնում՝ CVC, CCV, VCC, CCVC, CCVCCC, CVCCCC, CCCVC, CCCV, CVCCC,

CC և այլն։ Միևչդեռ հնչույթային խմբերի ընդունման դեպքում մըշտում է միայն չորս հնչույթային բլոկ՝ V, CV, VC, CVC։

Եթե այդ պահանջի հաշվառումը, իրոք, կարող է այլ լեզուների քննության ժամանակ գործը հեշտացնել, ապա հայերենի համար մի առանձին արժեք չունի, որովհետև մեր երկու գրականները բնութագրվում են սահմանափակ վանկատիպերով. նրանցում բացառվում են հետևյալ վանկատիպերը՝ CCCV, CCCVC, CCVCCC։

Նշանակում է, ընդամենը ինը վանկատիպ ունեցող հայերենի համար նշված սկզբունքի կիրառումը լեզվի իրական պատկերը ի վիճակի չի լինի արտացոլել։ Այդ պատճառով էլ սույն ուղղության ժամանակ նշված սկզբունքը չի կիրառվել։

Երկու գրականներում առկա վանկատիպերը բերվում են № 11 աղյուսակում (միավանկ բառերի օրինակով)։

Աղյուսակ № 11

Բաց վանկատիպեր	Արևելահայերեն	Արևմտահայերեն
V	ու	ու
CV	դու	մը
CCV	սպի	—թյու—
Փակ վանկատիպեր		
VC	իր	ան
CVC	գիր	տատ
VCC	արտ	ինչ
CCVC	ձյուն	ձյուն
CVCC	թռնկ	թռնկ
CCVCC	կյանք	կյանք

Երկու գրականներում էլ բաղաձայնական կապակցություններով վանկատիպերը հանդիպում են հաճախ վերջածանցի սահմաններում (համմ. բյանց, բյամբ և այլն)։ Բաղաձայնական կուտակումների մասին կարելի է խոսել, ըստ էության, բառավերջի դիրքում, բայց ինչպես տեսնում ենք, այդ կապակցություններում հանդես են գալիս այնպիսի միավորներ (ձայնավորներ՝ լ, մ, ն, ր), որոնք այլ լեզուներում կարող են բնութագրվել նաև վանկարարության արժեքով։ Ջարմանալի կերպով այսքան խիստ սահմանափակ բաղաձայնական կուտակումներ ունեցող հայերենի համար մի գերմանացի կևդ-հայագետ, ինչպես գրել է Հ. Աճառյանը (համմ. Ջ, Ներածության հատորը), ասել է, թե ինչպիսի՞

բաղաձայնական խճողումներով լեզու է հայերենը և իբրև ապացույց բերել է գրաբարյան չմշտնջենավոր բառը, ուր միայն վեց բաղաձայնից հետո է հանդես գալիս առաջին ձայնավորը։ Այո՛, բայց վեց բաղաձայն տարից հետո, որովհետև այդ բառում իսկ ոչ մի բաղաձայնական կապակցություն չկա. չկա ոչ մի վանկ, ուր երկու «դրկից» բաղաձայններին միևնույն ը-ն չբաժանի։

Երկու գրականներում էլ բաց վանկատիպերը համեմատաբար փոքրը տոկոս են կազմում (ընդամենը 33 տոկոս) հնարավոր վանկատիպերի հարաբերությամբ, այնինչ տեքստում (ինչպես ցույց կտրվի քիչ հետո) նրանց գերակշռությունը որոշակի է (երկուսում էլ այդպիսիք կազմում են 67%)։

Երկու գրականներում էլ վանկի սահմանը անցնում է գերազանցապես երկու «դրկից» բաղաձայնների միջև։

Բաց վանկին նախապատվություն տալու ձգտումը երկու գրականներում, որ հատակորեն կերևա վիճակագրական արդյունքներն ամփոփող աղյուսակից (տե՛ս աղյուսակ № 12), բախվում է հակառակ միտում ունեցող երևույթների հետ առանձնապես արևելահայերենում, ուր առեղծվում են ղգալի թվով փակ վանկերի հնարավորություններ, հատկապես փոխառյալ բառերի միջոցով։

Վանկատիպերի առանձնացման հարցի հետ կապված հարկ է հիշեցնել հետևյալը. «Հայերենի «ը» ձայնավորի հնչույթայնության հարցը» հոդվածում (ՊԲՀ, 1966, № 4, էջ 147) Ա. Խաչատրյանը ապացուցում է, որ մի շարք բառերում բաղաձայնական կապակցությունները արտասանվում են առանց ը-ի. բերվում է բառերի մի երկար շարք, որոնցից արժե թվել հետևյալները՝ ստույգ, սփյուռք, զրոսաճ, ճրաշալի, ճրապարակ և այլն։ Այդ իրողությունը հաստատվում է նաև Ռ. Թոխմախյանի «Ժամանակակից հայերենի բառային շեշտի բնույթը» աշխատանքում (ԺՋ, 156)։ Պետք է ասել, սակայն, որ այն բնորոշ է միայն արևելահայերենին, ուստի համապատասխան բաղաձայնական կապակցություններով վանկատիպեր միայն արևելահայերենում պետք է առանձնացվեն. արևմտահայերենում ինչպես նշված բառաձևերը, այնպես էլ բոլոր այն բաղաձայնական կապակցությունները (բառասկզբում հատկապես), ուր իբրև երկրորդ բաղադրիչ հանդես չի գալիս յ-ն, հընչվում են ը-ով՝ ըշտապ, ըզրաղում և այլն։

Ինչպես երևում է աղյուսակից, բոլոր վանկատիպերի արժեքները երկու գրականներում էլ համընկնում են. չկա ոչ մի վանկատիպ, որ

գրականներից որևէ մեկում թեկուզ մեկ %-ի տարբերություն տա։ Այդ էլ խոսում է այն մասին, որ անգամ բաղաձայնական կապակցություններով վանկատիպերի հարցում (վիճակագրական բեռնվածության առումով) էական շեղումներ չեն առաջանում։

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում վանկի ամենահաճախական տիպն է բաղաձայն+ձայնավոր երկհնչույթ բաց վանկը։ Այն կազմում է տեքստում կիրառված բոլոր վանկատիպերի գրեթե կեսը (շուրջ 49%)։ Ի միջի այլոց, այդ արժեքով երկու գրականները ընդհանրույթ են հանդես բերում հնդեվրոպական մի շարք լեզուների հետ, ինչպես ռուսերենի, ֆրանսերենի և այլն (համմտ. խԲ, 61), թեև վերջիններս բնութագրվում են համապատասխան վանկատիպի 55%-ով։

Ըստ նվազող հաճախականության՝ երկու գրականներում էլ ամենահաճախական հաջորդ վանկատիպն է ԲՁՐ. այն կազմում է շուրջ 36%։

Նույն վանկում «դրկից» բաղաձայն ունեցող բոլոր տիպերի արժեքների ընդհանուր գումարը 7%-ի սահմանը չի անցնում։

Բաց և փակ վանկատիպերի տոկոսային հարաբերությունը երկու գրականներում ներկայացնում է հետևյալ պատկերը.

Բաց վանկատիպեր					
Արևելահայերեն	*Նար-Դոս*	*Շիրվանզադե*	*Դեմիրճյան*	*Զարյան*	*Փափազյան*
	53,13	*53,22*	*55,40*	*53,05*	*55,05*
Արևմտահայերեն	*Զոհրապ*	*Բաշալյան*	*Ծառուկյան*	*Վահե-Վահյան*	*Որբունի*
	53,91	*57,09*	*52,32*	*55,95*	*50,45*
Փակ վանկատիպեր					
Արևելահայերեն	*45,87*	*45,78*	*44,50*	*47,95*	*43,95*
Արևմտահայերեն	*45,19*	*42,01*	*47,58*	*44,05*	*49,55*

Ըստ այդմ, եթե արևելահայերենի բաց վանկատիպերի միջին արժեքն է 54,38, ապա արևմտահայերենինը կազմում է 54,41% (0,03%-ի տարբերությունը ուղղակի աննշան է)։

Այժմ պարզենք, թե ինչ % են կազմում մենահնչույթ և երկհնչույթ վանկատիպերը երկու գրականներում.

Արևել.	*Նար-Դոս*	*Շիրվանզադե*	*Դեմիրճյան*	*Զարյան*	*Փափազյան*	*Ընդամ.*
	57,38	*59,52*	*57,87*	*57,25*	*58,53*	*58,08*
Արևմտ.	*Զոհրապ*	*Բաշալյան*	*Ծառուկյան*	*Վ. Վահյան*	*Որբունի*	*Ընդամ.*
	59,78	*60,61*	*55,38*	*59,99*	*53,57*	*58,45*

Աղյուսակ № 12

Հեղինակ	Նար-Դոս «Ես և նա»		Շիրվանզադե «Քաոս»		Դեմիրճյան «Նարգիզը»		Ռ. Զարյան «Հուշապատ.»		Վ. Փափազյան «Հետազոտ.»		Ընդամենը	
Վանկերի տիպերը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը
V	47	6,258	35	4,901	63	4,309	29	4,677	28	4,347	202	4,819
CV	346	46,071	341	47,759	729	49,863	297	47,903	330	51,242	2043	48,747
VC	38	5,059	49	6,862	54	3,693	29	4,677	19	2,950	189	4,509
CVC	252	33,555	246	34,453	516	35,294	213	34,354	233	36,180	1460	34,836
VCC	26	3,462	6	0,840	25	1,709	12	1,935	7	1.086	76	1,813
CCV	6	0,798	4	0,560	18	1,231	3	0,483	3	0,465	34	0,811
CVCC	30	3,994	30	4,201	45	3,077	34	5,483	13	2,018	152	3,626
CCVC	6	0,798	3	0,420	9	0,615	3	0,483	6	0,931	27	0,644
CCVCC	—	—	—	—	3	0,205	—	—	5	0,775	8	0,190
Ընդամենը	751		714		1462		620		644		4191	

Հեղինակ / վանկերի տիպերը	Գ. Զոհրաբ «Ճիտին պարապքը»		Լ. Բաշալյան «Մաթաբանի ճղնաժողովը»		Ա. Ծառուկյան «ՄանկուԹ. չունեցող մարդ.»		Վահե-Վահյան «Ոսկի կամուրջ»		Զարեհ Ոբբուեի «Վարձու սենյակ»		Ընդամենը	
	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը	Թիվը	%-ը
V	47	5,745	27	4,122	40	4,219	53	5,492	14	6,422	181	5,022
CV	390	47,677	343	52,366	453	47,784	479	49,637	95	43,577	1760	48,834
VC	52	6,356	27	4,122	32	3,375	47	4,870	8	3,669	166	4,606
CVC	273	33,374	205	31,297	364	38,396	307	31,813	92	42,201	1241	34,433
VCC	15	1,833	11	1,679	5	0,527	14	1,450	4	1,834	49	1,360
CCV	4	0,488	4	0,610	3	0,316	8	0,829	1	0,458	20	0,555
CVCC	25	3,056	33	5,038	42	4,430	40	4,145	4	1,834	144	3,996
CCVC	11	1,344	4	0,610	8	0,843	15	1,554	—	—	38	1,054
CCVCC	1	0,122	1	0,152	1	0,105	2	0,207	—	—	5	0,139
Ընդամենը	818		655		948		965		218		3604	

Եթե նկատի ունենանք, որ երկու գրականներում էլ եռահնչույթ ԲՁԲ տիպը կազմում է բոլոր վանկատիպերի շուրջ 35%-ը, ապա դրանց ընդհանուր գումարը կկազմի 93%: Մնացած յոթ %-ի մեջ են մտնում մյուս բոլոր վանկատիպերը: Նշանակում է, մեր երկու գրականներում բաղաձայնական կապակցություն չունեցող վանկատիպերը կազմում են տեքստի 93%-ը: Սա արդեն ինքնին խոսում է մեր երկու գրականների բարեհնչունության մասին:

Այժմ պարզենք, թե ինչպիսի հարաբերություն է առկա մեր գրականների վանկերի քանակի և հնչույթների թվի միջև:

Գերմանական լեզուների քննությամբ Պ. Մենցերատը և Վ. Մայեր-Էպլերը այն եզրակացության են հանգել, որ բառի երկարացմամբ փոքրանում է հնչույթներ-վանկեր հարաբերության ցուցիչը (այլ կերպ ասած՝ մեկ վանկին ավելի քիչ հնչույթ է ընկնում բազմավանկ բառերում): Իսկ ինչպիսի՞ն է վիճակը մեր երկու գրականներում: Այս հարցը դիտարկվել է գրաբարի տիպաբանական բնութագրման ժամանակ (ԼՋ. 284) և նշվել է, որ նախ պետք է պարզել, թե ինչն է առնվում իբրև վերլուծության միավոր՝ բա՞ռը, թե խոսքի շղթան: Ժամանակին իրավացիորեն քննադատվել է Մենցերատի և Մայեր-Էպլերի մոտեցումը, որովհետև նրանք հիմք են ընդունել հնչույթային բառարանը (հմմտ. ՄՐ):

Նկատի առնելով այն հանգամանքը, որ, ինչպես գրաբարում, այնպես էլ արդի հայերենում այլ լեզուների բաղդատությամբ (հմմտ. գերմաներենի հետ) բազմահնչույթ վանկերը լայն տարածում չունեն և, որ ավելի կարևոր է, բառի երկարացմամբ փաստորեն հայերենում բազմահնչույթ վանկերի հնարավորություն է ստեղծվում, Մենցերատի և Մայեր-Էպլերի դիտարկած երևույթը հայերենին բնորոշ չէ: Երկու գրականներում էլ հնչույթներ/վանկեր հարաբերությունը բառի երկարացմամբ էական տատանումներ չի տալիս: Այդ արժեքներով հայերենը գրեթե հավասարակշռված վիճակ է ներկայացնում:

Ստորև տրվում են հնչույթ / վանկ հարաբերության արժեքները երկու գրականներում (այսինքն՝ միջին հաշվով քանի հնչույթ է ընկնում մեկ վանկին).

	Նար-Դոս	Շիրվանզադե	Դեմիրճյան	Ռ. Զարյան	Վ. Փափազյան	Ընդամ.
Արևել.	2,38	2,39	2,41	2,43	2,41	2,41
Արևմտ.	Զոհրապ	Բաշալյան	Շառուկյան	Վ. Վահյան	Որբունի	Ընդամ.
	2,35	2,42	2,47	2,41	2,49	2,42

Այսպիսով, երկու գրականներում էլ բացառիկ համապատասխա-

նությամբ յուրաքանչյուր վանկի միջին հաշվով ընկնում է 2,4 հնչույթ։ Դա լիովին համապատասխանում է նախորդ քննության ընթացքում ստացած տվյալներին՝ երկհնչույթ բաց և եռահնչույթ երկփակ վանկատիպերի ամենահաճախական լինելու վերաբերյալ։ Իսկապես, երկու վանկի պարունակած հնչույթների թիվը հավասար է մոտավորապես հինգի. ըստ այդմ կարելի է երկու գրականների բառի հիմնական կառույցը ներկայացնել որպես երկհնչույթ ԲՋ (բաց) և եռահնչույթ ԲՋԲ (երկփակ) տիպերի կապակցություն։

Երկու գրականներում էլ՝ 1) յուրաքանչյուր բառ բաղկացած է նվազագույնը մեկ վանկից. չկան այնպիսի նախդիրներ (բացառությամբ գ և ս բառակազմական մասնիկներից), որոնք վանկ չեն կազմում (համմտ. ռուսերենի в, к, с մասնիկները). 2) երկուսում էլ հնարավոր են այնպիսի, այսպես ասած, եղրային տարրեր, որոնք վանկ չեն կազմում (օրինակ արևմտահայերենում մի՛ ըներ—մ՛ըներ, գ+իմ և այլն), ինչպես նաև որոշ ձայնարկություններ՝ սսս՛, ղղղ՛...

Պետք է ասել, սակայն, որ արևմտահայերենի բառի երկարությունը կարծեք թե ավելի փոքր է. այդ մասին մեզ նախագիտելիք կարող է ծառայել նախորդ շարադրանքում քննած այնպիսի երևույթն, օրինակ, որ արևելահայերենի ամենաառաջ և այլն ձևերի դիմաց արևմտահայերենը նախընտրում է վերլուծական կառույցներ՝ ամենեն առաջ և այլն։ Թե ինչպիսին է բառի միջին երկարությունը ըստ վանկերի թվի, կարելի է պարզել միայն վիճակագրական քննությամբ։ Բացի վերոհիշյալ վիճակագրությունից կատարվել է նաև Նար-Դոսի «Պայքար» վեպից և Վ. Թեքեյանի «Մարք Ֆուրիոնի արկածը» վիպակից երկու հատվածների վիճակագրություն (ՀԴԳ-ի համապատասխան հատորների 576 և 358 էջերը)։

Վիճակագրությունը կատարվել է ըստ բառարանի և ըստ տեքստի։ Ստորև ներկայացվում են արդյունքներն (ըստ տոկոսային արժեքների).

Բառի մեջ վանկերի թիվը	Արևելահայերեն		Արևմտահայերեն	
	տեքստ	բառարան	տեքստ	բառարան
0	—	—	—	—
1	23	36,5	28	43
2	37	39,5	38	29,5
3	21	15	22	24,5
4	16	7,5	10	1,5
5	2	1,5	1,5	0,75
6	1	—	0,5	0,75
7 և ավելի	—	—	—	—
Բառի մեջ վանկերի միջին թիվը	2,4	1,97	2,20	1,89

Ստացված արդյունքները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերով.



Արևելահայերենի տեքստը ներկայացվում է երկար և կարճ գծերով, բառարանը՝ գծիկներով, իսկ արևմտահայերենի տեքստը՝ երկար գծով, բառարանը՝ մեկ երկար և երկու փոքր գծիկներով։

Ինչպես տեսնում ենք, երկու գրականներում էլ բառի նվազագույն երկարությունը հավասար է մեկ վանկի։ Գծապատկերի կորերից երևում է, որ երկու գրականներում էլ շուրջ քառասուն %-ը կազմում են երկվանկ բառերը։ Հինգ և ավելի վանկատիպերով բառերը կազմում են տեքստի հազիվ երկու %-ը։ Ամենահաճախական բառերը երկու գրականներում էլ գերազանցապես միավանկ են (դերանուններ, շաղկապներ և այլն)։

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բառի միջին երկարությունը տեքստում ավելի մեծ է, քան բառարանում (տեքստի 2,4-ի փոխարեն բառարանի 1,97 և համապատասխանաբար 2,2-ի փոխարեն 1,89)։ Պետք է ասել, որ հնդեվրոպական մի շարք լեզուներում հակառակ երևույթն է, ուր տեքստում բառի երկարությունը նվազում է (համմտ. ԽԲ, 63)։ Այն պայմանավորված է հայերենում թեքույթների (հոլովական և խոնարհման վերջամասնիկների) կցական

բնույթով: Ուրեմն, հայոց լեզվի երկու գրական տարբերակներն էլ բնութագրվում են բառի կառուցվածքի կցականությամբ:

Այն ենթադրությունը, որ արևմտահայերենի բառը ավելի կարճ է արևելահայերենի բազդատությամբ, հաստատվում է վիճակագրությամբ. շուրջ կես %-ով արևելահայերենի բառն ավելի երկար է: Դա պատճառաբանվում է մի շարք հանգամանքներով, որոնցից կարևորն է արևմտահայերենի բառի (արմատի) միջակա ձայնավորի սղումը (հմմտ. արևելահայ. մոռանալ, գիրանալ, արևմտահայ. մոռնալ, գիրնալ և այլն):

Բառարանի և տեքստի զուգադրությունը ցույց է տալիս, որ բառի հարաբերական երկարությունը երկու գրականներում բացատրվում է մի շարք հանգամանքներով: Դրանցից են ձևաբանական և բառակազմական առանձնահատկությունները. երկուսում էլ ածանցները նվազագույնը մեկ վանկից են կազմված: Սահմանափակ թիվ են կազմում այն ածանցները, որոնք կցվելով արմատին, նոր վանկ չեն ավելացնում (ց, ֆ և այլն): Բառի թեքման (հոլովման, խոնարհման) ժամանակ ավելացող թեքույթները սովորաբար նոր վանկ են կազմում և ավելացնում բառի մեջ վանկերի թիվը՝ բառի երկարությունը: Որպես թեքման նմուշ վերցնենք երկու գրականների բայը.

Արևելահայերեն	Արևմտահայերեն
գրել (2) ասել (2)	գրել (2) ըսել (2)
գրում է (3) ասում է (3)	կը գրէ (3) կ'ըսէ (2)
գրեց (2) ասաց (2)	գրեց (2) ըսաւ (2)
գրելու է (4) ասելու է (4)	պիտի գրէ (4) պիտի ըսէ (4)

Ինչպես տեսնում ենք, արևելահայերենի հարացույցում միայն անցյալ կատարյալն է, որ անորոշի հետ նույնանում է վանկերի թվով (2), մինչդեռ արևմտահայերենում ձայնավորով սկսվող բայի ներկան նույնպես բնութագրվում է նույն վանկաքանակությամբ: Մնացած դեպքերում այն ավելանում է մեկ-երկու վանկով:

Նույն երևույթն է առկա նաև հոլովման հարացույցում: Ուրեմն, որպես երկու գրականների ընդհանրույթ կարելի է նշել, որ բառի ուղիղ ձևի համեմատությամբ թեք ձևերը նվազագույնը մեկ վանկ ավելի են պարունակում:

Գրաբարից ավանդված ներքին թեքման ձևերը, -ություն ածանցով վերջացող գոյականները (հմմտ.՝ մայր—մոր, մարդկություն—մարդկության և այլն) երկու գրականներում լայն տարածում ունեն. այդպիսով, նկատելի է նաև ուղղական և սեռական-տրական հոլովների նույն վան-

կաքանակութիւնն ունենալու երեւոյթը։ Ընդ որում, նթե մի շարք դեպքերում արեւելահայերենը զուգահեռաբար կիրառում է ավանդական-գրական և խոսակցականին բնորոշ ձևերը՝ աչյուն—աչյան, անկյուն—անկյան և այլն, ապա արևմտահայերենում լայն կիրառություն են ստացել արտաքին թևքմամբ ձևերը՝ աչյուն, անկյուն և այլն։ Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում –ություն ածանցով գոյականների հոգնակին, սեռական-տրականը, նախընտրաբար կազմվում է համեմատաբար կարճ՝ յանց ձևով (արևել. ուսումնասիրություն—ուսումնասիրությունների, արևմտ. ուսումնասիրությանց)։

Հնչյունական փոխակերպում. հայտնի է, որ միևնույն ձևույթը, հիմքը, ածանցը, փոխակերպվելով, կարող են հնչյունական այլ տեսք ստանալ։ Հաշվի առնելով փոխակերպման պայմանները, սովորաբար տարբերում են դիրքային և պատմական հնչյունափոխության երևույթները։ Հանրահայտ է, որ առաջին դեպքում նկատի են առնվում այնպիսի հնչյունական փոփոխությունները, որոնք պայմանավորված են լեզվի զարգացման տվյալ փուլի օրինաչափություններով, երկրորդ դեպքում՝ այսպես ասած, քարացած ձևերով, որոնք դրսևորվում են տվյալ փուլում ձևաբանության և հատկապես բառակազմության ոլորտում։

Մեր երկու գրականների հնչյունական փոխակերպման ընդհանուր գծերը գալիս են, բնականաբար, գրաբարից՝ տէր—տիրոջ, սէր—սիրոյ և այլն, բայց այդ ընդհանրություններին զուգընթաց՝ առկա են նաև հընչյունափոխական մեխանիզմի առանձնահատկություններ, որոնք արևմտահայերենում աղբյուր ունեն միջին հայերենի շրջանում ձևավորված երևույթները։

Ի տարբերություն արևելահայերենի, որ հիմնական գծերով պահպանում է գրաբարյան հնչյունափոխության դրույթները, արևմտահայերենը ի հայտ է բերում որոշակի տարբերություններ՝ ա) թևքման (հատկապես հոլովման) ժամանակ հիմքը անփոփոխ պահելու ձգտումը այնպիսի բառերում, որոնք հայոց լեզվի զարգացման նախորդ փուլերում ենթակա են եղել հնչյունափոխության. օրինակ՝ տուն—տուներու, մուկ—մուկերու, ջուր—ջուրերու, սիրտ—սիրտերու, կին—կիներու և այլն (համմտ. Զեպաքանութիւն բաժինը), բ) դրա փոխարեն բառակազմական հիմքերը հնչյունափոխելու միտումը (կլանել—կլլել, անկանել—ընկնել—իյնալ և այլն)՝ պայմանավորված շեշտի յուրահատկություններով։

Թևքման ժամանակ արևմտահայերենում առկա են այնպիսի կըրկնակ ձևեր (հնչյունափոխված և անհնչյունափոխ), որոնք իմաստային որոշակի տարբերակում են ստացել։ Այսպես, օրինակ՝ գլուխ, մարմին,

ճակատ բառերի հնչյունափոխված գլխէն, մարմնէն, ճակտէն ձևեր ունեն մարմնի մաս իմաստը, այն դեպքում, երբ գլուխէն, մարմինէն, ճակատէն արտահայտում են ղեկավար մարմնի, ռազմաճակատի իմաստ: Այդպիսով, բազմիմաստ բառերի կամ համանունների տարբերակումը առանձին դեպքերում գործվում է թե՛ հոլովներում հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերի հակադրությամբ:

Վերջապես, արևելահայերենում առկա հնչյունափոխական, այսպես ասած, fարացած ձևերը արևմտահայերենը հիմնականում ենթարկել է ընդհանուր օրինաչափություններին. համմ., օրինակ՝ մարդ—մարդիկ—մարդկանց (արևել.) և մարդ—մարդեր—մարդերու (արևմտ.), կին—կանայք—կանանց (արևել.) և արևմտահայերենի կին—կիներու և այլն:

Արևելահայերենին հատուկ հնչյունափոխական այս երևույթները բացատրվում են պատմականորեն, հին հայերենի հոլովման օրինաչափությունների պահպանմամբ: Արևմտահայերենը, փաստորեն, բացառությունները աշխատում է ենթարկել գործող օրինաչափություններին: Ուրեմն, այս հարցում արևելահայերենը ավելի «ավանդապահ» է:

Երկու գրականների բառակազմության ոլորտում առկա հիմնական տիպերը ներկայացվում են աղյուսակ № 14-ում:

Բառակազմական հնչյունափոխության տիպերի զուգադրությունը պարզում է հետևյալը.

1. $Ձ_1 > Ձ_2$ (մեկ ձայնավորի հնչյունափոխությունը այլ ձայնավորի), ինչպես նաև $Ձ > ⊗$ (ձայնավորի սղում) տիպերը երկու գրականներում էլ գրեթե նույն պատկերն են ներկայացնում. ա) լիահունչ ձայնավորներից միայն ե(է)-ն է փոխվում ի-ի. մնացած դեպքերում նրանք վերածվում են ը-ի, որ գրությամբ նշվում է միայն տողադարձի ժամանակ. բ) ա>ը հնչյունափոխությունը ներկայացվում է եզակի նշումով և տիպական չէ երկու գրականներին: $Ձ_1 > Ձ_2$ և $Ձ > ⊗$ տիպերը երկու գրականներում էլ արդյունք են պատմականորեն գործող մեխանիզմի. գ) նույն տիպերն ունենալով հանդերձ, արևմտահայերենն ի հայտ է բերում որոշակի առանձնահատկություններ. այսպես, օրինակ՝ արդուն—արդենալ-ը արևմտահայերենում ձայնավորի հնչյունափոխության (ոչ-ը) օրինակ է և ոչ թե ձայնավորի սղման, ինչպես արևելահայերենում՝ արդուն—արդնանալ:

Արևելահայերենի համար բերված կացին—կացնահար օրինակը, երբ $Ձ > ⊗$ տիպի նմուշ, հատուկ չէ արևմտահայերենին, ուր ի-ն բառակազմության մեջ մտնում է անփոփոխ՝ կացին—կացինահար:

2. Երկու գրականներում էլ $Ձ > Բ$ (ձայնավորների բաղաձայնեցում)

f_2	$\otimes f_2$	$\otimes$	f_1	$\otimes$	$\otimes_2$	$\otimes_1$	Ընդհանուր տերմին
ձայնեղ պայթական ձայնեղ շփական ձայնեղ հնչական ձայնեղ հարական	ձայնեղ ձայնեղ ձայնեղ ձայնեղ	—	ձայնեղ ձայնեղ ձայնեղ ձայնեղ	—	ձայնեղ ձայնեղ ձայնեղ ձայնեղ	—	—
ձայնեղ պայթական ձայնեղ շփական ձայնեղ հնչական ձայնեղ հարական	ձայնեղ ձայնեղ ձայնեղ ձայնեղ	—	խուլ խուլ խուլ խուլ	—	ձայնեղ ձայնեղ ձայնեղ ձայնեղ	—	—
խուլ պայթական խուլ շփական խուլ հնչական խուլ հարական	խուլ խուլ խուլ խուլ	—	ձայնեղ ձայնեղ ձայնեղ ձայնեղ	—	խուլ խուլ խուլ խուլ	—	—
խուլ պայթական խուլ շփական խուլ հնչական խուլ հարական	խուլ խուլ խուլ խուլ	—	խուլ խուլ խուլ խուլ	—	խուլ խուլ խուլ խուլ	—	—

տիպը սահմանափակ ընդգրկում ունի։ Այն մանավանդ խիստ սահմանափակ է արևմտահայերենում, ուր թեև նշվում է ու-ի վերածվելը վ-ի, սակայն այդ վ-ն դեռևս պահպանում է երկբարբառային հնչումի որոշ հետքեր։

3. ՁՒ>Ձ (երկհնչյունի վերածվելը ձայնավորի) նույնպես պատմականորեն գործող օրինաչափության արդյունք է, որ դրսևորվում է երկու գրականներում էլ։ Ընդ որում եթե արևմտահայերենը հիմնականում հետևողականորեն պահպանում է ավանդական օրինաչափությունը (համմտ., օրինակ՝ յա-ե՝—վայրկյան—վայրկենական, ժանյակ—ժանեկավոր և այլն), ապա արևելահայերենում այդ օրինաչափությունը սկսել է խախտվել և ներկայիս շատ ավելի գործածական են երկհնչյունների անհնչյունափոխ տարբերակները (համմտ. վայրկյանական, ժանյակավոր, խառույկահանդես արևմտահայերենի վայրկենական, ժանեկավոր, խառուկահանդես)։ Այդպիսով, արևելահայերենը բնութագրվում է զուգահեռ ձևերի (ույ–ու, ույ–ույ, յա–ե, յա–յա և այլն) լայն կիրառությամբ. ինչպես, օրինակ՝ ճնշույթային—ճնշուրային, մշակույթային—մշակուրային և այլն։

Արևմտահայերենը հատկապես հետևողականորեն կիրառում է յու–ե ավանդական հնչյունափոխության տիպը։ Եթե արևելահայերենում այդ տիպը ներկայացվում է խիստ սահմանափակ նմուշներով (համմտ. միություն—միութենական, առումիություն—առումիութենական և այլն), ապա արևմտահայերենում այն գործուն օրինաչափություն է (օրինակ՝ աոյուն—աոենակից, յա–ե՝ հոբելյան—հոբելենական և այլն)։ Ուշեմն, կարելի է ասել, որ եթե արևմտահայերենը բառակազմության մեջ հիմնականում հետևողականորեն երկհնչյուններր վերածում է պարզ ձայնավորների, ապա արևելահայերենը խախտելով ավանդական օրինաչափությունը, ստեղծում է զուգահեռ ձևեր, զարգացման ընդհանուր միտում ունենալով երկհնչյունների անփոփոխ պահելը։

4. Վերջապես, երկհնչյունի սղման երևույթը երկու գրականներում էլ ի հայտ է գալիս սահմանափակ նմուշներով. համմտ., օրինակ՝ սառույց—սառցահատ։ Ընդ որում, ըստ էության, այն բնորոշ չէ արևմտահայերենին։

Երկու գրականների, «ամենակայուն» ձայնավորը, որ հնչյունափոխության չի ենթարկվում, օ-ն է։ Ո և ա ձայնավորների սղման եղակի օրինակները, որ տակա են երկու գրականներում էլ (համմտ. աղյուսակ

№ 14) միջին հայերեն→արևմտահայերեն→արևելահայերեն ազդեցության արդյունք են։

Երկու գրականներում էլ խիստ սահմանափակ տարածում ունի $Բ_1$—$Բ_2$ (մեկ ձայնավորի հնչյունափոխվելը մյուսով՝ առնմանություն) տիպը, որ գրական կանոնական մակարդակում հիմնականում վերացվում է։ Արևելահայերենի համար բերված գ—ֆ (թագ—թաֆավոր) տիպը եղակի և անգամ ինչ-որ տեղ վիճարկելի է։ $Բ_1$—$Բ_2$ տիպի (առնմանության) մասին (վազ+ֆ→վասֆ, աճ+բիծ→աճբիծ և այլն) Գ. Ջահուկյանը գրել է. «ա) գրական արտասանության մեջ ըստ հնարավորին աշխատում են խուսափել այս կարգի նմանեցումից (առնմանության տրվյալ դեպքերից), բ) գրության մեջ այս կարգի փոփոխությունները չեն նշանակվում» (Լ. 93)։ Անշուշտ, եթե խոսքը աճբիծ-ի և ամբասիր-ի մասին է, նման գրությունները թափանցել են նաև բառարանների մեջ (հմմտ. Գ), թեև իբրև հանձնարարելի ձևեր նշվում են աճբասիր, աճբիծ գրությունները։ Հարկ է անդրադառնալ նաև խոսքի շղթայում հնչաբաժի ունեցած դերին։ Երկու գրականներում էլ սպասարկու բառերը կապվում են նյութական իմաստ արտահայտող բառերին՝ կազմելով մեկ միասնական հնչաշղթա։ Սովորաբար լեզուներում առանձնացվում են նյութական իմաստ արտահայտող բառերի կապակցելիության երեք հնարավոր տարբերակներ (հմմտ. ԽԲ)՝

1. Երբ բառերը որոշապես բաժանվում են իրարից։

2. Երբ շարահյուսորեն կապակցված բառերը միավորվում են մեկ հնչաշղթայի մեջ։

3. Երբ լեզուն անտարբեր է տվյալ երևույթի նկատմամբ՝ թույլատրում է ազատ տարբերակներ։

Մեր երկու գրականները, ըստ էության, պատկանում են առաջին տիպին։ Այսինքն, ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բառային շեշտն իր սահմանազատիչ դերով որոշապես բաժանում է բառերն իրարից (բացառություն են կազմում ը-ով վերջացող, այլև նախահար բառերը)։ Ընդ որում խոսքի արագ կամ դանդաղ տեմպով պայմանավորված (տե՛ս ԺԶ) կարող են առաջանալ հնչաշղթաների տրոհման տարբերակներ։

Սովորաբար, բաղաձայնական կապակցությամբ վերջացող բառի և ձայնավորով սկսվող բառի միջև կատարվում է նախորդ բառի վերջին բաղաձայնի փոխանցում հաջորդ հնչաբաժին՝ Մի լավ գիրք ասա կարդամ/Մի լավ գիր-քասա կարդամ։ Այս առումով, եթե երևույթի առկայությունը նշանակենք+նշանով, բացակայությունը՝ —-ով, մեր երկու

գրականները կարելի է ներկայացնել հետևյալ ձևով՝ արևելահայ. +, արևմտահայերեն՝ ∓։

Այսինքն, արևմտահայերենում բառային ամբողջությունները ավելի հստակ են առանձնացվում և հնչաշղթային տարբերակները հարաբերաբար սահմանափակ են։ Այնուամենայնիվ, երկու գրականներում էլ բառի սահմանները միշտ չէ, որ համընկնում են հնչյունական վանկի սահմանների հետ. այսինքն՝ վանկային և բառային սահմանները քարացած չեն և փոփոխության ենթարկվող երևույթներ են։ Այսպես՝ գիրք բայց գըր-ի, սերմ բայց սեր-մեր և այլն։ Ահա թե ինչու երկու գրականներում (և հատկապես արևելահայերենում) առկա են այնպիսի հնչյունակապակցություններով վանկեր, որոնք բացակայում են առանձին վերցրած բառերում (բառի ուղիղ ձևերում)։ Արժե հիշեցնել թեկուզ թյանց, թյամբ ձևերը։

Այսպիսով, թեև երկու գրականներում էլ բառը հնչյունականորեն կայուն միավոր է, բայց, այդուհանդերձ, թուլատրվում են աղատ տարբերակներն արևելահայերենում ավելի լայն չափերով, իսկ արևմտահայերենում՝ հարաբերաբար նվազ։

Հնչեռանգ. հնչերանգի միավորներն են՝ շեշտը, մղեղայնությունը, տեմպը, դադարը, տոնի աստիճանը, տեմբրը։ Շեշտը նույնպես տիպաբանական զուգադրության ցուցիչ կարող է ծառայել, սակայն արևմտահայերենի շեշտի փորձառական քննություն տակավին չի կատարվել, թեև դատելով նույն հարցի վերաբերյալ արևելահայերենի քննության արդյունքներով (ԺՋ), ընդհանուր գծերով կարելի է բնութագրել նաև արևմտահայերենի շեշտը (լսողական տվյալներով) և կատարել զուգադրություն։

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
1. Լարվածություն	+	+
2. Երկարություն	+	+
3. Տոնի փոփոխություն (փակ վանկերում) (+)		+

Բառային շեշտը երկուսում էլ՝

1. Սահմանազատիչ դեր ունի և ընկնում է բառի վերջին վանկի վրա (բացառությամբ սպասարկու բառերի և մասնիկների, ինչպես նաև Ը ձայնավորի վերջնային դիրքի, երբ շեշտվում է վերջընթեր վանկը)։

2. Հնչաշղթայում բառական միավորները և հնչյունական բառերը հիմնականում համընկնում են։

3. Երկուսում էլ բառային շեշտը ուժային է։

4. Բոլոր շեշտակիր վանկերը անշեշտներից ավելի երկար են։

5. Երբեմն, ինչպես վկայում են արևելահայերենի ավյալները, շեշտակիր վանկի տևողությունը կրկնակի անգամ երկար է անշեշտ վանկի տևողությունից։

6. Հիմնական տոնի փոփոխությունը երկուսում էլ պայմանավորված է ավյալ հաղորդակցական տիպի հնչերանգային կառուցվածքով։

7. Վերջապես, բազմավանկ բառերի բառային շեշտը երկուսում էլ ունի այն բնորոշ գիծը, որ շեշտակիր և անշեշտ վանկերը բաշխվում են որոշ ռիթմական հաջորդականությամբ. ընդ որում որոշակի միտում կա յուրաքանչյուր երրորդ վանկը շեշտել (ԺՉ, 206—207)։ Ըստ արևելահայերենի շեշտաբանության՝ բառասկիզբն ու բառավերջը ունեն երկար տևողություն՝ բառամիջի վանկերի տևողության համեմատությամբ։ Ըստ էության արևմտահայերենում այդ օրինաչափությունը գործել է միջին հայերենի շրջանից սկսած, այնքան թույլ է հնչվել բառամիջի վանկարար ձայնավորը, որ դրանով պայմանավորված՝ տեղի է ունեցել բառամիջի ձայնավորի սղում։ Համմտ. մոռանալ—մոռնալ, գիրանալ—գիրնալ և այլն (օրինակները տե՛ս Բառագիտություն բաժնում)։

Եթե զուգադրենք երկու գրականների շեշտի կանոնական ձևերից ունեցած շեղումները, ապա կտեսնենք, որ այն ավելի բնորոշ է արևելահայերենին։ Այսպես՝ վիճելի է արևելահայերենի համար Անգլիա, դիսերտացիա և այլ բառաձևերի շեշտադրության (տեղի) հարցը՝ վերջի՞ն վանկի, թե՞ նախավերջին և այլն վանկի վրա։ Այդ պայմանավորված է նաև ավյալ լեզվական համակարգում փոխառությունների որոշակի կշռով և ազդեցությամբ։

Կարելի է ասել, որ շեշտակիր վանկի և անշեշտ վանկի միջև առկա տարբերությունը արևմտահայերենում ավելի ղգալի է, քան արևելահայերենում։ Տոնի փոփոխության երևույթը նույնպես արևմտահայերենում հարաբերաբար մեծ դեր ունի։

Երկու գրականների շեշտը իմաստազատիչ դեր չունի. այն կատարում է բառավերջի ազդանշանի (բառի ավարտի) դեր, բացի այդ, կատարելով շարահյուսական որոշակի գործառույթ (միավորում է բառերը ռիթմական որոշակի խմբերի և շարույթների)։ Բազմաբարդ բառերում հավելական շեշտերը կատարում են սովորաբար իմաստակիր բաղադրիչներն ընդգծող դեր (ընդ որում երկար բառերում հատկապես շեշտվում են արմատային մասերը)։

Շեշտից հետո հնչերանգի ամենաէական միջոցն է տեմպը, ապա՝ դադարը և հատկապես մեղեդայնությունը։ Տեմպը և դադարը քիչ են

ուսումնասիրված արևելահայերենի համար (այլևս չենք խոսում արևմտահայերենի մասին)։ Եթե համառոտաբար ներկայացնելու լինենք երկու գրականների հնչերանգի զուգադրության տվյալները, ապա կարելի է նշել, որ ընդհանուր առմամբ արևելահայերենի տեմպը արագ է թվում արևմտահայերենի համեմատությամբ (գոնե այդպիսի զգացողություն ունեն հաճախ արևմտահայերը)։ Տարբեր առիթներով այն կարծիքն է արտահայտվել, որ արևելահայն ավելի արագ է խոսում, քան արևմտահայը։ Մի կողմ թողնելով այլ կարգի հատկանիշներ. օրինակ՝ լեզվին վատ տիրապետելու ժամանակ հաճախ խոսքի տեմպը արագ է թվում և այլն։ Նկատելի է, որ արևմտահայի խոսքում շարույթների և ֆրազների միջև եղած դադարներն ավելի հստակ են ընդգծվում, գոնե ավելի զգալի են, քան արևելահայի, թեև ֆրազներն ու շարույթներն ինքնին հնչվում են գրեթե նույն արագությամբ։ Ուրեմն, պետք է ընդունել, որ արևմտահայերենի տեմպը որոշ չափով դանդաղ է։ Արևելահայերենի խոսակցական տարբերակի և ռադիո-հեռուստատեսային հաղորդումների լեզուն արևմտահայերենի համեմատությամբ արագ է։ Այս հարցում վերջնական հստակություն մտցնելու համար հարկ կլինի ուսումնասիրել խոսքի տեմպն ընդհանրապես երկու գրականներում էլ (արագ, դանդաղ, սովորական՝ ըստ շարույթների, բառակապակցությունների և այլն)։

Արևմտահայերենի տեմպի քննությունը մանրամասն ներկայացված է մեր «Գրական արևմտահայերեն» աշխատանքում (տպագրության մեջ է)։ Ստորև տրվում են մեր երկու գրականների տեմպի միջին արժեքները։

	հնչ/վրկ	մվրկ
Արևելահայերեն	13,6	74
Արևմտահայերեն	11,5	87

Արևմտահայերենի տեմպը համեմատաբար դանդաղ է (եթե գրական արևելահայերենում մեկ վայրկյանում միջին հաշվով արտաբերվում է 13,6 հնչյուն, ապա արևմտահայերենի համապատասխան արժեքն է՝ 11,5 հնչ/վրկ)։ Արևմտահայերենի խոսակցական տարբերակը միջակա դիրք է գրավում՝ 12,5 հնչ/վրկ։ Եթե զանց առնենք հանպատրաստից խոսքը, որ սովորաբար բնութագրվում է դանդաղ տեմպով, ապա խոսակցական տարբերակի տեմպը համեմատաբար արագ է։ Այսպես, օրինակ՝ գրական արևմտահայերենի 11,5 հնչ/վրկ արժեքի դիմաց խոսակցական արևմտահայերենն ունի 12,5 հնչ/վրկ արժեք։ Վերջապես հարկ է նշել, որ արևմտահայերենի տարբեր ոճերի տեմպային արժեքների շեղումները աննշան են։

Երկու գրականներում էլ կառուցվածքաշարահյուսական, տրամաբանական-հաղորդակցական և ոգացական-արտահայտչական գործառութիյունները կարող են արտահայտվել բառական միջոցներով (մասնիկներով, սպասարկու բառերով և այլն) և շարահյուսորեն (շարադասութիյան հատուկ կառուցվածքով և այլն)։ Այսպես՝ երկուսում էլ հարցումը հաճախ արտահայտվում է հնչերանգով, շարադասութիյունը հարցում արտահայտելու գործում այնպիսի մեծ դեր չունի, ինչպես, ասենք, ֆրանսերենում։

«Լրաբերում» տպագրված իրենց հոդվածում («Խոսքի տեմպը», 1974, № 6) Ա. Խաչատրյանը, Ռ. Թոխմախյանը և Հ. Ջաքարյանը արևելահայերենի խոսքի տեմպի մասին գրում են հետևյալը. «Ակնհայտ է, որ դանդաղ տեմպի ընթացքում ը-ի արտասանութիյունը ավելի որոշակի է ու հստակ (անդ., էջ 107). այն նույնիսկ գործածվում է այնպիսի դեպքերում, երբ ժամանակակից հայերենի արտասանության նորմավորման միտումը ը չարտասանելն է։ Օրինակ՝ «ես ստիպված եմ հայտարարելու» շարույթում «ես» և «ստիպված» բառերի միջև սովորաբար, միջին և արագ տեմպով ընթացող խոսքում ը ձայնավորը չի արտասանվում։ Իսկ դանդաղ տեմպով խոսքի մեջ, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչների մոտ, հաճախ այն արտասանվում է»։

Այդ երևույթը չի գործում արևմտահայերենում, ուր խոսքի տեմպից անկախ նման վիճակներում ը-ի արտասանութիյունը միակ կանոնական ձևն է։ Այդտեղից էլ կարելի է եզրակացնել, որ արևմտահայերենի խոսքի տեմպը արևելահայերենի համեմատութիյամբ դանդաղ է և գործում է արևելահայերենի դանդաղ տեմպի սկզբունքը (ը-ի արտասանութիյունը բոլոր դեպքերում)՝ «ես ըստիպված եմ»։

Մեղեդայնութիյունը հնչերանգի էական բաղադրիչներից է։ Ցավոք, հնչերանգի բնագավառում տիպաբանական ուսումնասիրութիյունները վերջերս են ծավալվել և դեռևս շատ բան կա անելու այդ ասպարեզում։ Երկու դրականների «Ինչո՞ւ-որ հարցման հնչերանգի զուգադրութիյունը» թեմայով կարդացած իր զեկուցման մեջ Ս. Ղուկասյանը հանգում է այն եզրակացութիյան, որ տարբեր են երկու դրականների հաճախականութիյան և ինտենսիվութիյան ցուցիչները։ Տարբեր են հատկապես նվազագույն հաճախականութիյան տեղայնացումները. եթե արևելահայերենում դրանք բնորոշ են վերջին վանկին, ապա արևմտահայերենում՝ սովորաբար ընկնում են նախավերջին և կամ էլ՝ նրան նախորդող վանկի վրա։ Էական տարբերութիյունը ի հայտ է գալիս հիմնական տոնի շարժման կորագծում. ի տարբերութիյուն արևելահայերենի, որտեղ այն բարձրա-

ցող-իջնող է, արևմտահայերենում բարձրացող-իջնող-բարձրացող է կամ իջնող-բարձրացող: Այդ նշանակում է, որ վերջին վանկի ինտենսիվությունը արևմտահայերենում զգալիորեն աճում է:

Մեղեդույթի ուսումնասիրության ժամանակ, սովորաբար, որպես ելակետային (միջուկային) իմաստային տիպ են ընդունում պատմողական ավարտուն նախադասությունը: Մյուս բոլոր տիպերը դիտվում են որպես ելակետային տիպի փոխակերպումներ: Ելակետային (այսինքն՝ պատմողական ավարտուն) նախադասությունների մեղեդույթի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բազմաթիվ լեզուներում ասույթի տվյալ տիպում մեղեդայնության արժեքներն ամենաշատ համընկնումներն են տալիս: Այդպես է նաև մեր երկու գրականներում: Եթե պատմողական տիպում մեղեդայնության արժեքների միջև երկու գրականներում տարբերություններ գրեթե չկան, ապա մյուս տիպերում այդպիսիք ի հայտ են գալիս: Հարցման տիպերում արևելահայերենին հատուկ է իջնող մեղեդույթը, իսկ արևմտահայերենում տոնի ընթացքը ավելի փոփոխական է (ինչպես բարձրացող-իջնող-բարձրացող, այնպես էլ իջնող-բարձրացող հիմնական տոնի շարժման ուղղությամբ): Դա էլ խոսքին որոշակի մեղեդային բնութագիր է տալիս. ահա թե ինչու արևմտահայերենի խոսքը ավելի նրաժշտական է թվում:

ԳՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեև երկու գրականները կիրառում են միևնույն այբուբենը, բայց նրանց ուղղագրությունը տարբեր է և այդ ևս կարող է դառնալ զուգադրական-տիպաբանական հետազոտության նյութ: Քանի որ գործ ունենք այբբենական գրության հետ, ապա առաջանում է հնչյուն/տառ հարաբերության պարզաբանման հարցը երկու գրականներում էլ: Հանրահայտ է, որ կատարյալ այբբենական գիրը որպես կանոն ենթադրում է փոխադարձ միանշանակ համապատասխանություն՝ հնչյունների (հնչույթների) և տառերի միջև, այսինքն՝ յուրաքանչյուր հնչյունի համապատասխանում է մեկ տառ և հակառակը: Իհարկե, իրականում անհնար է գտնել մարդկային մի այնպիսի լեզու, ուր հնչյուն/տառ համապատասխանությունը նմանօրինակ բացարձակ համընկնում ա, և այբուբենից օգտվող գրեթե բոլոր լեզուներում առկա են իդեալական պատկերից շեղումներ: Ահա հենց այդ շեղումների աստիճանը (ցուցիչը) կարող է ծառայել որպես տվյալ լեզվի գրային համակարգը և ուղղագրությունը բնութագրող տիպաբանական ցուցիչ (հմմտ. ԽԲ. 74):

	արևելահայերեն	արևմտահայերեն
Հնչույթների թիվը	36	31
Նշանների տիպերը		
ա) պարզ տառեր	38(37)	38
բ) տառակապակցություն	1 (ու)	1 (ու)
գ) կցագրություն	1(և)	1(և)

Ինչպես տեսնում ենք, տարբեր հնչույթային քանակ ունենալով հանդերձ, երկու գրականները ունեն նույն գրային միավորների քանակը: Միակ տարբերությունը կարելի է նշել ւ-ը, որ արևելահայերենում առանձին չի գործածվում և հանդես է գալիս որպես ու-ի բաղադրիչ: Ուրեմն, կարելի է ասել, որ արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, գրային և հնչույթային համակարգերի զգալի անհամապատասխանություն գոյություն ունի:

Գրային անհամապատասխանության (ասիմետրիայի) տիպերը կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով (ըստ Վ. Գակի, տե՛ս խր. 75):

Աղյուսակ № 15

Տառի և հնչյունի հարաբերությունը	Վերլուծական պլան		
	Շարակարգային (նշանի սահմանի խախտում)	Հարացուցային (շեղում նշանի միասնականությունից)	Նշանաբանական (շեղում նշանի կողմերից մեկից)
$S < Ն$	x (սինթետիկ) [ks] [համադրական] գրույթ	c [k] կամ [s] բազմիմաստ գրույթ	Cie [ʒ̄ɔ̄ɑ̄n] գրո գրույթ
$S > Ն$	qu վերլուծական [k] (անալիտիկ) բարդ գրույթ	c կամ k հոմանիշ [k] գրույթներ	banc [bɑ̃] համր գրույթ

Զրո գրույթները ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում հանդես են գալիս միայն հապավումներում, ինչպես՝ մ. թ. ա. (մեր թվականությունից առաջ), ընկ. Միքեասյան (ընկեր Միքեասյան) և այլն: Այդ համառոտագրումները, կրճատումները և այլն արտասանվում են ամբողջությամբ:

Երկու գրականներում էլ՝

1. Համադրական գրույթներ են ե-ի և ո-ի բառասկզբնային դիրքը (յե, վո): Այդ երկու նշաններին պետք է ավելացնել և-ը, որ երբք հնչույթի համապատասխանող տառ է (յեվ):

2. Որպես վերլուծական (բարդ) գրույթ հանդես է գալիս միայն ու-ն (բաղկացած ո-ի և ւ-ի բաղադրությունից): Այդ նշանակում է, որ եզակի օրինակը դիտելով իբրև բացառություն, կարելի է ասել, որ երկու գրականների գրային համակարգում վերլուծականությունը բնորոշ հատկանիշ չէ:

3. Համանիշային գրույթները երկուսում էլ ե և է, ինչպես նաև՝ ո և օ են՝ համապատասխան դիրքերում։

Բազմիմաստությունը հարաբերաբար ավելի բնորոշ է արևմտահայերենի գրույթներին՝ ինչպես գ և f(f), դ և թ(թ), բ և փ(փ) և այլն։

Համր գրույթ է որոշակի դիրքերում երկու գրականների ի-ն՝ ճանապարհ, չինորհիք և այլն։

Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում յ-ն բառավերջի դիրքում գերազանցապես համր հնչույթ է՝ արքայ, ընծայ և այլն։

Եթե համեմատելու լինենք բոլոր վերոհիշյալ ասիմետրիկ երևույթները, ապա կտեսնենք, որ գրույթային և հնչույթային անհամապատասխանությունները ավելի բնորոշ են արևմտահայերենին։ Արևելահայերենի ուղղագրության հիմքում դրվել է հենց այն սկզբունքը, որ գրության և հնչյունական համակարգերի անհամապատասխանությունները հասցվեն նվազագույնի։ Սակայն, ընդհանուր առմամբ, արևելահայերենի որդեգրած ուղղագրությունը չվերացրեց որոշ անհամապատասխանություններ. դրանք այդպես էլ մնացին գրության համակարգում, թեև դրանց թիվը հասցվեց նվազագույնի։

Արևելահայերենի կողմից մերժված գրային նշաններից արևմտահայերենը ունի ապաթարցի նշանը։

Որպես ընդհանուր երևույթ պետք է նշել, որ երկու գրականների ուղղագրության սկզբունքները հնչույթային են։ Ընդ որում արևելահայերենի հնչյուն (հնչույթ)-տառ հարաբերությունը ավելի հետևողական է, քան արևմտահայերենինը։

Ընդհանրապես, ինչպես հայտնի է, ուղղագրությունը լեզուներում երկու հիմնական գործառություն է կատարում։ Նախ՝ տարբերակման գործառությունը. գրությամբ տարբերակվում են այնպիսի բառեր և քերականական ձևեր, որոնք թեև տարբեր իմաստ ունեն, սակայն հնչվում են միատեսակ։ Որպես նմուշ կարելի է բերել արևմտահայերենի գայլ (ֆայլ) և ֆայլ ղուգադրությունը։ Ուղղագրության երկրորդ կարևոր գործառությունն է միօրինակացումը. այս երևույթի հետ գործ ունենք այն դեպքում, երբ նույն ձևով գրվող արմատները կամ քերականական ձևերը ունենալով հանդերձ մեկ նշանակություն, տարբեր հնչում (արտասանություն) ունեն։

Հետաքրքիր է նկատել, որ երկու գրականներում էլ միօրինակացման գործառույթը դեր չի խաղում։ Դրա փոխարեն տարբերակման գործառույթը հատուկ է երկուսին էլ և առանձնապես՝ արևմտահայերենին։ Դա պայ-

մանավորված է ոչ միայն եռաշարք բաղաձայնական գրային համակարգը պահպանելու հետ (ունենալով հանդերձ երկշարք բաղաձայնական համակարգ), այլև ուղղագրության առանձնահատկություններով։ Այնտեղ, որտեղ արևելահայերենը տարբեր իմաստ ունեցող բառերի համար տալիս է գրության միաձևություն, ինչպես՝ սեր (կաթի սեր)—սեր (զգացում), հոտ (ոչխարի հոտ), հոտ (բույր) և այլն, արևմտահայերենը, շնորհիվ տարբերակման գործառության՝ գրությամբ վերացնում է նմանաձևությունը. ինչպես՝ սեր—սէր, հոտ—հօտ և այլն։

Դրանով է պայմանավորված նաև այն հանգամանքը, որ արևելահայերենի համար որդեգրած ուղղագրական համակարգը անընդունելի մնաց արևմտահայության համար։ Այսպիսով, արևմտահայերենի ուղղագրությունը խարսխվում է ավանդական և ստուգաբանական սկզբունքների վրա (տարաժամանակյա բնույթի), իհարկե արևմտահայերենը, ինչպես և արևելահայերենը (հմմտ. ԼԲ, 115), հենվում է նաև համաժամանակյա սկզբունքների վրա (հնչույթային և ձևաբանական)։ Վերջապես, ինչպես նշել է Գ. Ջահուկյանը. «Հայերենում ձևաբանական սկզբունքը գործում է միայն առնմանական փոփոխությունների դեպքում, երբ ձևույթները գրվում են միևնույն ձևով, անկախ նրանց հնչույթների առնմանական փոփոխությամբ թելադրված ձևերից, ձևաբանական են կողմ (կոխք), վազմ (վասք), անբիծ (ամբիծ) տիպի գրությունները» (անդ)[115]։

* * *

Այսպիսով, երկու գրականներում էլ բացառվում է ձայնավորների ֆանակային տարբերակումը. երկուսում էլ գործում են միայն որակական հատկանիշներ։

Շնչեղությունը թեև առկա է երկուսում էլ, բայց արևելահայերենում այն էական տարբերիչ հատկանիշ է։

Խոսքում արևմտահայերենի հնչյունները հարաբերաբար ավելի կայուն են. արևելահայերենի հնչյունների համեմատությամբ ավելի քիչ են ենթակա սղման, քմայնացման և այլն։ Արևմտահայերենում հնչյունափոխությունը մեծ դեր է խաղում հատկապես բառակազմության ոլորտում։

Թեև երկու գրականներն էլ ըստ համակարգի պատկանում են բաղաձայնական խմբին, սակայն տեքստում նրանք ընդհուպ մոտենում են ձայնավորական լեզուներին։ Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ երկու գրականներն էլ ձգտում են երկհնչույթ բաց վանկատիպի գերակշռության։

Հակառակ բաղաձայններով հարուստ լինելուն (արևելահայերենն ավելի, քան արևմտահայերենը) երկու գրականներն էլ բնորոշվում են վերջիններիս սահմանափակ կապակցելիությամբ և դա հանգեցնում է վանկատիպերի սահմանափակ քանակին: Ըստ էության երկուսում էլ դրսևորվում են միայն ինը վանկատիպեր: Երկու գրականները բնութագրվում են վիճակագրական կայուն արժեքներով: Նրանց գործառական բեռնվածության կորերը համընկնում են և շեղումներ տալիս են միայն այն դեպքում, երբ արևմտահայերենում ուժգնությունը կատարում է արևելահայերենի երկու հնչյունի դեր:

Տեքստի բաղաձայնական հագեցվածությամբ արևելահայերենն ու արևմտահայերենը միջին դիրք են գրավում լեզուների շարքում: Եթե արևելահայերենը հնդեվրոպական լեզուներին հատուկ գիծը պահպանում է՝ խուլ բաղաձայնների գերակշռությունը ձայնեղների հարաբերությամբ, ապա արևմտահայերենում առկա է ձայնեղների և շնչեղ խուլերի հավասարակշռությունը:

Բաղաձայնական կապակցությունները հատուկ են երկու գրականներին էլ, սակայն որոշակի սահմանափակումներով. ընդ որում այդպիսիք (կապակցությունները) ավելի բնորոշ են արևելահայերենին:

Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում բառամիջի ձայնավորի սղման հետևանքով (հատկապես ա-ի) առաջացել են կրկնաբաղաձայններ (հմմտ.՝ կլլել, սպաննել, ելլել և այլն):

Ճիշտ կլինի մեր երկու գրականներում ավելի հաճախ խոսել բաղաձայնական հաջորդականությունների, քան կապակցությունների մասին:

Երկու գրականներում էլ միտում կա բաղաձայնական կապակցությունները կից վանկերի միջև բաշխելու:

Արևելահայերենը արդի փուլում «խախտում է» հայերենի ավանդական սկզբունքը՝ բառասկզբի բաղաձայնական կապակցությունները ը-ով հնչելը:

Հայերենի նյութի հիման վրա Մենջերատի և Մայեր-Էյլերի դիտարկած սկզբունքը չի տարածվում. բառի երկարացմամբ հայերենում բազմահնչույթ վանկերի հնարավորություն է ստեղծվում:

Երկու գրականներում էլ բառի միջին երկարությունը տեքստում ավելի երկար է, քան բառարանում. դա վկայում է նրանց բառի կառուցվածքում դրսևորվող կցականության մասին: Ընդ որում, արևելահայերենի համեմատությամբ, արևմտահայերենի հնչաբառը մասամբ ավելի կարճ է:

Վերջապես, արևմտահայերենի խոսքը բնութագրվում է մեղեդույթի ավելի մեծ բազմազանությամբ:

Գրաբանության մեջ երկու գրականներում էլ գործում է տարբերակման գործառույթը, որ առանձնապես մեծ դեր ունի արևմտահայերենում: Արևմտահայերենի ուղղագրությունը խարսխվում է ավանդական և ստուգաբանական սկզբունքների վրա (տարաժամանակյա բնույթի): Վերջապես, ինչպես արևմտահայերենը, այնպես էլ արևելահայերենը հենվում են նաև համաժամանակյա (հնչույթային և ձևաբանական) սկզբունքների վրա:

ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մեր երկու գրականների, ինչպես և ընդհանրապես որևէ երկու լեզվի, բառապաշարի զուգադրական քննությունը կարելի է կատարել ինչպես առանձին բառերի, այնպես էլ բառախմբերի իմաստային դաշտերի, բառաիմաստաբանական կարգերի առումով։ Հանրահայտ է, որ միևնույն բառերի առկայությունը երկու գրականներում էլ դեռևս չի նշանակում, որ գործ ունենք նրանց արտահայտած իմաստների ծավալային համընկնումի հետ։ Նույն հնչյունական «թաղանթին» ունեցող բառերը, եթե անգամ տարբեր իմաստներ չեն արտահայտում, ապա հաճախ չեն «ծածկում» իրար իրենց իմաստային նրբերանգներով, փոխաբերական իմաստներով և այլն։ Որպես ապացույց ասվածի բերենք երկու գրականների լար և շոր բառերի զուգադրության օրինակը։ Ասել, որ նշված բառերը առկա են երկու գրականներում էլ, ամենևին չի նշանակում թեկուզ մոտավոր պատկերացում տալ նրանց բառային արժեքների մասին, բառապաշարային համապատասխան ոլորտում կատարած դերի առումով։ Ներկայացնենք լար և շոր բառերի իմաստային բոլոր հնարավոր դրսևորումները երկու գրականներում.

Արևելահայերեն

լար *(մեծ մասամբ արևմտահայ գործածությամբ)*

1. *Կտոր, կերպաս*
2. *Ջգեստ, հագուստ*
3. *Քուրջ, փոշելաթի, ջնջոց*
4. *Անկողին, տեղաշոր*
5. *Կաշենման կտոր, որով երբեմն կազմում են դրքեր և այլն*
6. *Շորի ծվենի՝ պատառ*

Արևմտահայերեն

1. *Հագուստի կտոր*
2. *Կտավ*
3. *Անդրեզ*
4. *Մաքրելու համար գործածվող կտոր. ջնջոց, հնացած քուրջ*
5. *Միջոցին համազգեստ. մասնավոր օրերի համար պահված (ՀՀՆԲ, 211)*

7. Մաշված՝ պատառոտված ցնցոտի
8. Փխբ. կամազուրկ՝ անգործունյա մարդ, փալաս

Շոր 1. Զգեստ, հագուստ — Մանուկների լաթ
2. Զգեստի կտոր — Սպիտակեղեն
3. Լաթ իբրև ջնջոց, ոտքերը մաքրելու փոշուց և այլն
4. Երեխայի բարուրի կտորեղեն
5. Ծածկոց, ծածկույթ
6. Փխբ. որևէ բան պատող շերտ, ծածկույթ

Ինչպես տեսնում ենք նշված բառերի զուգադրությունից, լաթ-ը, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում հագուստի կտոր է, միագույն համազգեստ և այլն։ Արևելահայերենում լաթ-ը (եթե զանց առնենք արևմտահայ գործածությունները, որ նշում է նաև ժՀԲ) գերազանցապես նշանակում է կաշեճման կտոր (հմմտ. լաթակազմ գիրք), մաշված՝ պատառոտված ցնցոտի։ Ճիշտ է, հնացած լինելու (քուրջի) իմաստ այն ունի նաև արևմտահայերենում, բայց իր չորրորդական իմաստով։ Վերջապես, արևմտահայերենի լաթ-ին բնորոշ չէ արևելահայերենի նույն բառին հատուկ փոխաբերական իմաստը՝ կամազուրկ, անգործունյա մարդու իմաստով։ Վերջինս հենց շեշտում է, թե արևելահայերենում լաթ բառի հիմնական իմաստը ինչի հետ է կապվում (ցնցոտի)։

Արևելահայերենում լաթ և շոր բառերը շատ ավելի սերտ առնչություն ունեն, քան արևմտահայերենում, ուր շոր բառը հարաբերաբար խիստ սահմանափակ իմաստներով է բնութագրվում՝ մանուկների լաթ և սպիտակեղեն։ Այնինչ, արևելահայերենում շորը առաջին հերթին զգեստ է, հագուստ, որ ընդհանրապես արևմտահայերենին բնորոշ չէ։ Արևելահայերենում շոր բառի միայն չորրորդ իմաստն է համընկնում արևմտահայերենի արտահայտած իմաստին՝ երեխայի բարուրի կտորեղեն։

Ընդամենը երկու բառ, բայց իմաստային ինչպիսի «տարաստիում». տակավին չենք խոսում արտահայտած առանձին իմաստների «փոխներթափանցումների» (մեկ գրականից մյուսին անցնելու) մասին ինչպես

ավյալ օրինակում արևելահայերենի լաք բառն է կրել արևմտահայերենից։ Միայն խորքային քննությամբ կարելի է պարզել բառերի աշխարհի անկրկնելի պատկերը։

Սովորաբար հայերենին նվիրված ձեռնարկներում, աշխատություններում, շեշտելով արևելահայերենի և արևմտահայերենի համընդհանուր բառապաշարը, գրվում է. «Միայն շատ սակավաթիվ բառեր ունին իմաստի տարբերություններ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներուն մեջ. օրինակ՝ ձգել՝ բառը արևելյան հայերենին մեջ կնշանակե «ամուր մը քաշել դեպի իր կողմը», իսկ արևմտյան հայերենի մեջ՝ «թողուլ որ վար իյնա», թեև արևելահայ լեզվի մեջ ալ այս իմաստն ունի (բաժակը ձեռքից ձգեց կոտրեց)։ Ախոյան բառը արևելահայ լեզվի մեջ ընդհանրապես «մրցորդ-ի, հակառակորդ»-ի իմաստ ունի, մինչդեռ արևմտահայ լեզվի մեջ պահած է իր բուն՝ նախնական իմաստը՝ «նախամարտիկ, քաջարի». նաև՝ «մրցակից»։ Ոչինչ բառը արևելահայ լեզվի մեջ հաճախ կնշանակե «ոչ գեշ, բավական լավ», նույնիսկ «լավ». օրինակ՝ «Ինչպե՞ս եք» հարցման հաճախ կպատասխանվի՝ «Ոչինչ», այսինքն՝ «Գեշ չեմ, լավ եմ». մինչդեռ արևմտահայ լեզվի մեջ այդ բառը պահած է իր բուն՝ ժխտական իմաստը։

Այդպիսի տարբերիմաստ բառեր շատ քիչ են։ Հայերենի բառային կազմի ամբողջ հարստությունը հավասարապես կգործածվի գրական հայերենի երկու տարբերակներուն մեջ ալ» (Բ. 19)։

Որպեսզի պարզ դառնա, որ այդ այնքան էլ ճիշտ չէ և որ միայն բառերի նույն շարքի առկայությունը երկուսում էլ բոլորովին էլ չի նշանակում, թե գործ ունենք համարժեք միավորների հետ, բերենք բառային հետևյալ շարքը (սլաքներով ցույց են տրվում իմաստային կապերը, համապատասխանությունները).



Երբ արևելահայն ասում է. «Բանավոր եմ արտահայտվելու»: Արևմտահայը ըմբռնում է իբրև տրամաբանված խոսելու հավաստում: Երբ արևմտահայն է շեշտում խոսքի բեռաճգի լինելը (իբրև ոչ-գրավոր), ապա արևելահայն այն շատ ավելի ըմբռնում է իբրև անգիր խոսք, որի համար արևմտահայը կնախընտրեր գոց-ը, որտեղից՝ գոցաբան: Գոցը իբրև փակ-ի հոմանիշ բնորոշ է արևմտահայերենին: Իսկ ահա փակն ու փականքը երկուսում էլ բնութագրվում են ծավալային միևնույն արժեքներով:

Այսպիսով մեկ բառի իմաստային դաշտի ճշգրտման ժամանակ քննությունը բավական հեռու կարող է տանել և միջտեղ բերել ընդհանրությունների և առավել ևս՝ տարբերությունների, առանձնահատկությունների ներքին դրությունը: Գործածված դրություն բառը առկա է երկու գրականներում էլ, բայց նրանք բնութագրվում են իմաստային տարբեր դաշտերով. արևելահայերենում այն գերազանցապես նշանակում է՝ կացություն: Այսպես՝ «Դրությունը լիբանանում» նախադասությունը արևելահայը մեկնաբանում է իբրև կացությունը Լիբանանում: Ըստ արևմտահայի, նույն նախադասության մեջ գործածված դրություն բառը նշանակում է դիրք, սիստեմ (սկզբունքների ամբողջություն), ճորիենված: Վերոհիշյալ իմաստն արտահայտելու համար արևմտահայը կգործածեր «Կացությունը Լիբանանում» արտահայտությունը: Հեռու չգնալու համար վերցննենք գեշ բառը: Արևմտահայերենում գեշ չեմ նշանակում է վատ չեմ, մինչդեռ արևելահայն այդ բառը նախ և առաջ ըմբռնում է իբրև գեղեցիկի հականիշ, ուստի՝ գեշ չեմ—տգեղ չեմ: Գեշ չըլլար արևմտահայերեն արտահայտությունը արևելահայերենում ունի վատ չէր լինի համապատասխանությունը:

Ուրևմն ոչ թե պետք է բավարարվել բառերի արտաքին կողմի նույնությամբ, նշելով, որ երկու գրականներում էլ առկա են տվյալ բառերը, այլ վեր հանել այդ բառերի նշանակությունների շարժընթացը, ծավալային հարաբերությունները: Այդ ընթացքում կարևոր է նաև պարզել, թե երկու գրականներին բնորոշ բառային շարքերից այս կամ այն առարկան, երևույթը նշելու համար ինչ բառ է ընտրում արևելահայերենը կամ արևմտահայերենը, ինչպիսի իմաստային տարբերակում է դնում: Այսպես, օրինակ՝ պատճառով բառը, ինչպես նաև շնորհիվ-ը առկա են երկու գրականներում էլ, սակայն գրական արևմտահայերենում պատճառով և շնորհիվ բառերը ստացել են որոշակի իմաստային տարբերակվածություն: Պատճառով-ը որոշապես արտահայտում է բացասական

Երևույթ, շնորհիվ-ը՝ դրական։ Այսպես՝ երկրաշարժի պատճառով (կամ՝ պատճառավ), իսկ բարեկամության շնորհիվ։ Արևելահայերենում նման տարբերակվածություն չի ըմբռնվում և կիրառվում են ինչպես բարեկամության շնորհիվ, այնպես էլ բարեկամության պատճառով ձևերը (վերջինս արևմտահայերենի համար ուղղակի սխալ կիրառություն է դիտվում)։ Ինչո՞ւ են բերվում այս օրինակները, ասելու այն հանրահայտ իրողությունը, որ մեր երկու գրականների բառամթերքի անգամ առանձին բառերի իմաստային դաշտերը չեն պարզաբանված, այլ միայն հայտարարված է նրանց ընդհանրությունը։ Մինչդեռ հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվում բառերը գոյություն ունեն ոչ թե ցաք ու ցրիվ կամ ոչ այնպես, ինչպես սովոր ենք տեսնել մեր բառարաններում, այլ որոշակի իմաստային բառախմաստաբանական խմբերով, բացահայտելով այդ խմբերի մեջ մտնող բառային միավորների իմաստային առանձնահատկությունները։ Ինչպես որ հնչույթաբանության մեջ տարբերիչ հատկանիշներով ներկայացվում են հնչույթային համակարգի միավորները, այնպես էլ յուրաքանչյուր բառի իմաստը կարելի է ներկայացնել նվազագույն իմաստային հատկանիշների փնջով։ Արևելահայերենի նյութի վրա առայժմ միայն սահմանափակ թվով բառիմաստային խմբեր են քննվել (նկատի ունենք է. Միրաքյանի և ժ. Մանուկյանի ուսուերեն լեզվով հրատարակած աշխատանքները շարժում ցույց տվող աստցական բայերի վերաբերյալ)։

Բառագիտության ասպարեզում առայժմ այդպիսի մոտեցմամբ անհնար է քննել մեր երկու գրական լեզուները։ Սակայն կարելի է քննել ինչպես բառակազմական միջոցների (կազապարների) հնարավորությունները ու իրացումները երկուսում, այնպես էլ բառիմաստների ծավալը, բառապաշարի ոլորաններում դրսևորվող անհամաչափությունները, բազմիմաստության, հականշության և հոմանշության երևույթները և այլն։

Սկսենք երկու լեզուների անվանողական միջոցների զուգադրությունից, այսինքն լեզվական աշխարհից դուրս եղած ամեն ինչի (մեկ խոսքով՝ իրականության) բառային արտահայտման միջոցներից։ Լեզուներում այդ միջոցները երկու խմբի են բաժանվում՝ ներքին և արտաքին։ Եթե ներքինի դեպքում խոսքը լեզվի ներքին միջոցներով ա. նոր բառերի կազմման, բ. եղած բառերի վերիմաստավորման և գ. բառակապակցության մասին է, ապա արտաքին միջոցներ ասելով հասկացվում են փոխառությունները։

Ինչպիսի ընդհանրություններ, հատկապես առանձնահատկություն-

ներ են ի հայտ բերում արևելահայ և արևմտահայ գրական լեզուները նշված բնագավառում, կքննվի ստորև։

Բառապաշարի հարստացման ներքին միջոցները. *անվանողության ներքին միջոցներից երկու գրականներում էլ գերիշխում է բառակազմական եղանակը (ածանցմամբ և բառաբարդմամբ)՝ նոր առարկաներ և իմաստներ արտահայտելու համար։ Այդ հատկանիշը տիպաբանական ընդհանրույթ կարելի է դիտել ընդհանուր հայերենի համար։ Հ. Աճառյանը գրաբարի բառակազմական հնարավորությունները զուգադրելով հին հունարենի և մի շարք այլ լեզուների հնարավորությունների հետ, եզրակացրել է (Հ, 237), որ այնտեղ, որտեղ հունարենն անգամ երկու բառով է արտահայտում տվյալ իմաստը, գրաբարը, շնորհիվ իր ճկուն բառակազմության, ի վիճակի է լինում արտահայտելու մեկ բառով. համմտ. մեծաձայն —φωνὲσ μεγάλες և այլն։ Բառակապակցությամբ նոր իմաստ արտահայտելու եղանակը հավելյալ կամ ծայրահեղ միջոց է երկու գրականների համար հավասարապես։ Այսպես՝ նոր անվանումների 90%-ից ավելին օտար բառի դիմաց բառ են ներկայացնում։ Ուրեմն, կարելի է ասել, որ ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում գերիշխում է բառակազմության կաղապարների համադրության եղանակը, ի հակակշիռ վերլուծականության։ Հարկ է նշել նաև, որ բազմաթիվ բառաձևեր, որոնք մեր դարասկզբին վերլուծական ձևեր էին, ինչպես՝ կիր առնել, գործ ածել և այլն, վերջին 2—3 տասնամյակների ընթացքում զարգացել են դեպի համադրականություն՝ կիրառել, գործածել և այլն։*

Այդ հարցում վերլուծական ձևերից համադրականության անցնելու նպատակամղվածությամբ արևմտահայերենը համեմատաբար ավելի պահպանողական է։ Բառակազմության մեջ երկու գրականներում էլ, ինչպես կերևա հետագա շարադրանքից, լայն տեղ է գրավում մասնիկավորումը, որ կցականության ցուցիչ է տվյալ դեպքում։ Այսպես, Ա. Աբրահամյանի տվյալներով, հայերենում շուրջ վեց հազար բայաձևեր կազմված են մասնիկավորմամբ (համմտ. Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, դիրք Ա, 1962, էջ 70)։

Նոր բառերի կազմման մեխանիզմը թեև ընդհանուր է երկու գրականներում, սակայն հանդես են գալիս մասնակի տարբերություններ։ Դրանք կքննվեն համապատասխան բաժիններում (ածանցում, բառաբարդում և այլն)։ Որպես երկու գրականների անվանողական ոլորտի տարբերություն կարելի է նշել հետևյալը. բառերի ընդհանուր թիվը

(քանակը) արևելահայերենում հարաբերաբար ավելի արագ է աճում, քանի որ արևելահայերենը հաճախ բառային ղուգահեռներ շատ է ստեղծում՝ սեփական, ներքին միջոցներով և փոխառությամբ՝ դիրեկտոր—տնօրեն, նոտա—ձայնանիշ և այլն։ Ընդ որում ղուտ հայկական տարբերակը սովորաբար նույնանում է արևմտահայերենի կիրարկած ձևի հետ։

Հարկ է նշել, որ զարգացման արդի փուլում ավելի ու ավելի շոշափելի են դառնում երկու գրականների փոխազդեցության և փոխներթափանցման երևույթները։ Դա նկատվում է հատկապես գեղարվեստական գրականության լեզվում. հմմտ. Մ. Դալչոյանի, Վ. Պետրոսյանի, Հ. Միքոնյանի, Հ. Մաթևոսյանի ստեղծագործություններում արևմտահայերենին հատուկ բառագործածության օրինակները. արևելահայերենից արևմտահայերենին անցած բառաձևերը շատ ավելի են։

Ընդունելով հանդերձ փոխներթափանցումների ասպիճանաբար գերակշիռ դիրք գրավելը, չի կարելի երկու գրականների բառապաշարային համակարգերը ներկայացնել խառնաշփոթ կերպով, ցաք ու ցրիվ, ինչպես, դժբախտաբար, արվում է լեզվաբանական որոշ աշխատանքներում։ Այսպես, Ռ. Շալունցը գրել է (ԺՊ. 5). «Քանի որ երկու տարբերակների (իմա՝ արևելահայերենի և արևմտահայերենի) համար էլ բառապաշարը գրեթե ընդհանուր է, և հայության երկու հատվածների համար էլ այն հավասարապես հասկանալի է, ուստի ուսումնասիրության ընթացքում գրական հայերենի ամբողջ բառապաշարը դիտել ենք որպես ընդհանուր համակարգ»։ Հավասարապես հասկանալի լինելը ոչ մի հիմք չի տալիս բառապաշարը դիտելու որպես մեկ ընդհանուր համակարգ։ Այդ կարելի էր, թերևս, միայն երկու գրականների բառապաշարի ոլորտների համակարգային քննությունից հետո։ Մի բան, որ չի արվել, այլ հենց սկզբից հիմք է ընդունվել արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարի գրեթե ընդհանուր լինելը։ Մինչդեռ նախ անհրաժեշտ էր պարզել, թե գրեթե–ն լեզվական ինչ մեծություն է արտահայտում։ Վերջապես այդ հարցի պատասխանը, ինչպես նշվեց, կարելի էր հուսալ ոչ թե քննության առաջաբանում, այլ հետազոտության արդյունքում։

Հայտնի է, որ բառակազմության մեջ լեզուները որոշակի ընդհանրություններ և առանձնահատկություններ են դրսևորում երկու առումով. ա) բառակազմական միջոցներով (բառաբարդման, ածանցման տեսակարար կշռով և եղանակներով), բ) իմաստաբանական բառակազմական կարգերով՝ իմաստաբանական կարգերով (տիպերով)։ Վերջիններս ընդ-

հանուր լեզվական երևույթներ են (համմտ. ԽԲ, 241), քանի որ ներկայացնում են առարկաների, հատկանիշների, գործողությունների և այլն միջև ամենաընդհանուր հարաբերությունները: Սակայն նույն կարգերի առկայությունը երկու գրականներում դեռևս չի նշանակում, որ նրանցում այն նույն դերն ու ընդգրկումը ունի: Այսպես՝ գունային նրբերանգների ընդգծումը կաս, նեփ և այլ մասնիկներով (կաս կարմիր, նեփ նեռմակ և այլն) շատ ավելի բնորոշ է գրական արևմտահայերենին, քան գրական արևելահայերենին: Նման մասնիկները ավելի բնորոշ են արևելահայերենի խոսակցական, ժողովրդական ոճին: Մեկ այլ օրինակ՝ ժամանականշումը արևմտահայերենում տարածված է արտահայտել քառորդներով՝ վեցին fառորդ մնացած, fառորդ անց, արևելահայերենում տարածված ձևն է՝ ժամանակի բոպիներով նշումը՝ վեցն անց է 15 րոպե: Արևմտահայը մոտակա օրերի նշումը արտահայտում է առավելապես շաբաթվա օրերով՝ երկուշաբթի, չորեքշաբթի և այլն, այն դեպքում, երբ արևելահայը նախընտրում է ըստ ամսվա օրերի ձևը՝ ամսի հինգին, վեցին և այլն:

Բառակազմական միջոցները. *երկու գրականներում նոր բառեր կազմելու հիմնական եղանակները կարելի է ներկայացնել հետևյալ պատկերով.*

	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Ածանցում		
Նախածանցում	+	+
վերջածանցում	+ +	+ +
նախածանցավերջածանցում	+ +	+
Բառաբարդում		
Ձևաբանական հատկանիշով (համադրությամբ)	+ +	+ +
վերլուծական եղանակով (վերլուծական)	+	+ +
բաղմաբաղադրիչ բարդ. (բաղմահամադրականութ.)	+ +	+
Կոնվերսիա		
խոսքամասային փոխանցում	+	+
Հապավում	+ +	+

Նոր բառեր կազմելու հիմնական եղանակները երկու գրականներում էլ ածանցումն է (գերազանցապես՝ վերջածանցումը) և բառաբարդումը (համադրությամբ)։ Մնացած միջոցները բառակազմության հիմնական եղանակներ չեն։ Արևմտահայերենը հարաբերաբար հաճախ է դիմում վերլուծական եղանակին, այնինչ արևելահայերենը մանավանդ լեզվի զարգացման նորագույն փուլում, տերմինաշինության, գիտության և տեխնիկայի բուռն զարգացմամբ պայմանավորված՝ դիմում է բառաբարդման բազմաճամադրական եղանակին, օրինակ՝ հատուցագործիֆաշինական, ցեխաջրաբուժություն, դիմաբվաժամանականիշային և այլն։ Արևելահայերենի բաղդատությամբ, հապավման եղանակը արևմտահայերենին բնորոշ չէ։ Նշված բառակազմական եղանակների (միջոցների) մասնակատարային ընդհանրություններն ու տարբերությունները կներկայացվեն քառ առանձին եղանակների (ածանցում, բառաբարդում և այլն)։

Բառաբարդում

Բառաբարդումը երկու գրականների բառակազմության գլխավոր միջոցներից մեկն է, որն ածանցման հետ միասին բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից է։ Երկու գրականներում էլ բարդության ամենատարածված տիպը երկարմատ բարդությունն է. բացի երկարմատ բարդության տիպից, հայերենին բնորոշ է նաև հոարմատ բարդության տիպը։ Քառարմատ և ավելի բարդության տիպերը ընդհանրապես քիչ են և մասնավորապես հատուկ են գրական արևելահայերենին, բնորոշ լինելով գիտատեխնիկական լեզվին։ Նկատի ունենալով բարդության, որպես բառակազմական լայն հնարավորություններով օժտված միջոցի, առանձնահատկությունները՝ երկու գրականներում էլ անհրաժեշտ է առանձնացնել բարդ բառ կառուցվածքային տիպը, ինչպես որ այդ անհրաժեշտ է գտնում գերմանական լեզուների համար է. Մակաևը (համմ. Ծ.)։

Բառաբարդումը որպես բառակազմության միջոց լեզվի զարգացման արդի փուլում ոչ միայն պահպանել է նախորդ փուլերին հատուկ լայն հնարավորությունները, այլև սերման շատ ավելի մեծ հնարավորություններ է ստացել մանավանդ արևելահայերենում, համմ. ռազմահայրենասիրական, առևտրատնտեսագիտական, կոլտնտեսա-լուսավորական, պատմալեզվագրական, ռազմահաղաքական և այլն։ Նման կազմություն-

ները գրական արևմտահայերենի մեջ ներթափանցել են սովորաբար սրևելահայ գրականից։

Հայերենի բարդության բաղադրիչների փոխհարաբերության հարցը քննվել է մի շարք հայագետների կողմից՝ Ա. Այտընյան, Մ. Աբեղյան, Է. Աղայան, Ա. Մուրվալյան, Հ. Բարսեղյան, Տ. Ավետիսյան, Հ. Դաղանճյան, Զ. Մելքոնյան և այլք։ Այս հարցին անդրադարձել է Տ. Ավետիսյանը իր «Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը» աշխատության մեջ, մասնավորաբար կապված երկուսից ավելի արմատներով բարդության բաղադրիչների հարաբերության հետ (հմմտ. ԼՉ. 54—55)։

Հանրահայտ է, որ բարդության բաղադրիչներից առաջինը երկու գրականներում էլ հիմնականում հանդես է գալիս որպես վերջադիր արմատի որոշիչ կամ լրացում. այսինքն՝ բարդության բաղադրիչների մեջ առանձնացվում են լրացում-լրացյալի հարաբերություններ. ըստ այդմ երկու գրականներում էլ բարդության գերադաս անդամը վերջնային դիրք է գրավում։ Հայագիտության մեջ նշվել են նաև այն դեպքերը, երբ բարդության բաղադրիչների միջև համադասական հարաբերություն է առկա (հմմտ. ԺԲ, ԺԳ, ԴԵ). այդպիսի հարաբերություն է առկա շաղկապներով բաղադրված բարդության բաղադրիչների միջև՝ առևտուր, առուտուր, ելևմուտ, ելումուտ և այլն։ Այդ նշանակում է, որ շաղկապներով բարդությունները որոշակիորեն տարբերվում են հոդակապով բարդություններից, ընդ որում վերջիններս սովորաբար դիտվում են որպես իսկական բարդություններ (հմմտ. Հ. Դաղանճյան, Զ. Մելքոնյան), ապա շաղկապներով բարդությունները՝ աճիսկական։ Իսկական և անիսկական բարդություն տերմինների և դասակարգման սկզբունքների մասին քիչ հետո. այժմ քննենք այն հարցը, թե ու և և շաղկապները, որպես բարդության կցող տարրեր, կարելի՞ է արդյոք նույնացնել հոդակապի հետ։ Ահա թե ինչ է գրում այդ կապակցությամբ Տ. Ավետիսյանը. «Հատուկ ուշադրության են ներկայացնում երկարմատները, որոնց բաղադրիչները իրար են միացված ու և կապող ձայնավորներով (հոդակապ)։ Մենք ա-ի, ու-ի և և-ի միջև առանձին գործառական տարբերություն չենք տեսնում և գտնում ենք, որ ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը համաժամանակյա կտրվածքով քննելիս միանգամայն թույլատրելի է ու-ն և և-ը հոդակապ համարելը։ Այս երկուսը միացնելու և իբրև «կապող ձայնավոր» անփոփոխակի տարբերականեր դիտելու դեպքում ամենից ավելի հարմար է հոդակապ անվանումը» (ԼՉ. 58)։ Մեր կարծիքով, նման մոտեցումը չի արդարացնում իրեն. հենց թեկուզ համաժամանակյա կտրվածքով հարցին մոտենալու դեպ-

քում ու և շաղկապների և ա հոդակապի միջև գործառական տարբերությունները ակնհայտ են. ա-ն որպես հոդակապ քերականական ոչ մի իրազեկում չի կրում և այդ պատճառով էլ անտեսվում է մի շարք լեզվաբանների կողմից. ի տարբերություն ա հոդակապի, և, ու հանդես են գալիս խոսքի մասային իրենց հիմնական տարբերակիչ հատկանիշով՝ համադասական կապակցության միջոցներ. հենց դրանով էլ դրսևորվում է նրանց և ա հոդակապի գործառական հիմնական տարբերությունը. եթե հոդակապը հանդես է գալիս որպես լրացում-լրացյալ հարաբերության ցուցիչ, ապա շաղկապները գերազանցապես համադասական կապակցության առկայության նշան են: Ահա թե ինչու հատկապես արևմտահայ քերականագիտության մեջ իսկական են նկատվում հոդակապով բարդությունները, ոչ-իսկական՝ առանց հոդակապի կազմվածները. ընդ որում իսկական են դիտվում նաև այնպիսի բարդությունները, որոնք թեև հոդակապ չունեն, բայց այն զեղչված է կամ ընկած (ինչպես՝ ընկեր-վարական, ընկերավարական. բարդության երկրորդ բաղադրիչի ձայնավորասկիզբ լինելու դեպքում ա հոդակապը զեղչվում է, ինչպես՝ ևերկապնակ, բայց ևերկաման): Նշանակում է ա հոդակապի առկայությունը գերազանցապես բարդության բաղադրիչների միջև ստորադասական հարաբերության առկայության ցուցիչ է, ընդ որում հոդակապին հաջորդող բաղադրիչի վերադասությամբ: Վերջնային անդամի համար հայագիտության մեջ գործածվել են հիմնաբառ և որոշիչ բառ (նախադաս բաղադրիչի համար) տերմինները (ԺԳ. 137): Այդ անվանումները ըստ էության ճիշտ չեն, քանի որ բարդության մեջ գործ ունենք ոչ թե իսկական բառերի, այլ բաղադրիչների հետ, քանի որ բարդությունն ինքը մեկ բառային ամբողջություն է ներկայացնում:

Բարդության տիպերի ավանդական դասակարգումը, առանձին տարբերությունները զանց առած՝ հիմնական դծերով հայագիտների մոտ համընկնում է՝ իսկական բարդություններ, կցական բարդություններ, կրկնավոր բարդություններ:

Բարդության չորս տիպ է ընդունվում արևմտահայ արդի քերականագիտության մեջ. «Բարդումները կրնան ըլլալ 1) իսկական, 2) ոչ-իսկական, 3) իսկական-կրկնավոր, 4) ոչ-իսկական-կրկնավոր» (Ինճ. 153):

Հայագիտության մեջ վերջին ժամանակներս քննադատական խոսք է սկսվել բարդության տեսակների դասակարգման ավանդական սկզբունքների դեմ. խոսքը հատկապես իսկական և անիսկական բարդությունների մասին է, որոնց դասակարգման հիմքում դրված տարբերիչ

հատկանիշը ճիշտ չի ընտրված երկու դրականներում էլ... ըստ այդմ էլ հաճախ այնքան էլ հեշտ չէ որոշելը՝ տվյալ բարդությունը իսկակա՞ն է, թե ոչ, քանի որ միախառնվել են դրանց դասակարգման տարբերիչ հատկանիշները (այսպես, օրինակ՝ Ս. Էլոյանը չի ընդունում անիսկական տիպը)։ Ահա թե ինչ է գրում այս մասին Ռ. Մկրտչյանը. «Հաճախ դասակարգվող միավորները չեն հակադրվում իրենց հիմնական հատկանիշներով, այն դեպքում, երբ լինելով տարբեր տիպի բարդություններ, նրանք պետք է ունենային, ծայրահեղ դեպքում, մեկ տարբերիչ հատկանիշ։ Իսկական և անիսկական բարդությունների հակադրության ժամանակ բարդության մեկ տիպը ի հայտ է բերում մյուսի հատկանիշները» (Ռ. Մկրտչյան, Հայերենի բարդ բառի բաղադրիչների իմաստաբանական հարաբերությունը» դիս. աշխ. ինքնառեֆերատ)։

Ըստ այդմ հայագիտության մեջ վերջերս ավելի նպատակահարմար են գտնում բարդ բառերի դասակարգումը կատարելիս հենվել ոչ թե իսկական և անիսկական դասակարգման սխեմայի վրա, այլ բառի կառուցվածքային հատկանիշների հիման վրա, այնպիսի հատկանիշների, ինչպիսիք են՝ ձևաբանական ինքնուրույնության աստիճանը՝ ինքնուրույն շեշտակրություն, դադարի առկայություն և այլն, ըստ այդմ կարելի է տարբերակել բարդության երկու տիպ՝ համադրական և հարադրական (վերլուծական) բառատիպեր (ժԶԼ. հ. 1)։ Առաջին խմբում կմտնեն ոչ միայն իսկական, այլև անիսկական բարդություններից կցականները և այլն, իսկ վերլուծական բառախմբի մեջ կմտնեն հարադրությունները՝ հարադիր բարդությունները, կրկնավորների մեծ մասը (խումբ-խումբ). կրկնավորների այն խումբը, որտեղ բառային միասնականությունը սերտաճման է հասել, ինչպես՝ տեսակ «քահանա» և այլն, կպատկանի համադրական բառաբարդման տիպին։

Կան հոդակապով մի շարք այնպիսի բարդություններ, որտեղ ստորադասական (լրացում-լրացյալ) հարաբերության փոխարեն առկա է համադասական հարաբերություն, ինչպես, օրինակ՝ պայծառավայր, մեծասքանչ և այլն, որոնց ընդհանուր թիվն առանձնապես մեծ չէ։ Ամանոր, Միջագետք և այլն բարդություններում փաստորեն վերջին բաղադրիչն է լրացումը՝ Ամանոր—նոր տարի, Միջագետք—գետերի մեջ։

Երկու դրականների բառակազմության մեջ ընդունելով բարդ բառ կառուցվածքային միավորը, վերջինիս մեջ առանձնացնում ենք երկու տիպ՝ վերլուծական բառ և համադրական բառ։ Նշված բարդության տիպերը ունեն ձևական տարբերակիչ հատկանիշ, այն է՝ դադարը, որ գրա-

յին համակարգում դրսևորվում է անջատ գրությամբ՝ վեր կենալ[1], վար զարնել[2] և այլն, այլև կրկնավորների ժամանակ: Ճիշտ է, վերլուծական բառին հատուկ է մեկ հատկանիշ ևս՝ կրկնակ բառային շեշտը, ինչպես՝ վրա վազել, ճուպ տալ և այլն, բայց նման երևույթ կարող է հանդես գալ նաև և, ու շաղկապներով կցական բարդությունների ժամանակ՝ ելևմուտ, ելումուտ և այլն: Այնպես որ շեշտի հատկանիշը տարբերիչ հատկանիշ չէ:

Կրկնավորների, որպես վերլուծական տիպի, օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ գրության մեջ այդպիսիք կարող են ներկայացվել նաև առանձին-առանձին, առանց գծիկի:

Երկու դրականներում էլ որպես համադրական բառի ցուցիչ կարող են դիտվել ինչպես Ա. Հոդակապը, այնպես էլ երբեմն այդպիսի դերով հանդես եկող ե ձայնավորը, ինչպես՝ ճոճեստան (ճոճիաստան), հաշվեհարդար (հաշիվահարդար): Եթե առաջին օրինակում բառի վերջնային դիրքում է հանդես գալիս Ի-ն, որ միանալով Ա-ին, հնչյունափոխվում է ե-ի, երկրորդ օրինակում Ի-ն առկա է բառի վերջին բաղաձայնից առաջ՝ բաժին—բաժնետոմս:

Եթե համադրական բառի ցուցիչ կարող է դիտվել հոդակապը, ապա վերջինիս բացակայությունը դեռևս համադրական բառի բացակայություն չի նշանակում, որովհետև Ա-ն դեղչվում է երկրորդ բաղադրիչի ձայնավորով սկսելու դեպքում՝ լայնեզր, ավազերից և այլն, իսկ հաճախ էլ՝ պարզապես հանդես չի գալիս (թերևս այդպիսի բարդությունները կարելի է դիտել իբրև շարահյուսական կապակցություններ):

Որպես կանոն, կարելի է նշել նաև այն, որ այնպիսի նորագույն բարդությունների դեպքում, ուր առաջին բաղադրիչը փոխառյալ արմատ է, երկրորդը՝ հայկական, և առաջին բաղադրիչը ձայնավորահանդ է, դերազանցապես Ո-ով, հոդակապ չի դրվում, այսպես՝ ավտոմրցում, կինոդերասան, միկրոկաղապար և այլն: Նշված տիպը դերազանցապես հատուկ է գրական արևելահայերենին, արևմտահայերենին այն հատուկ չէ՝ փոխառությունների ժամանակ պատճենման ինքնատիպ սկզբունքներով պայմանավորված:

Նախքան բառաբարդման առանձին տիպերի քննությանն անցնելը պարզենք երկու գրականներում բառի երկարության և բառի խորության փոխհարաբերության հարցը. ինչպես ընդունված է լեզվաբանության մեջ (ՇԳ. 1957, № 5), բառի խորությունը որոշվում է նրա մեջ եղած ձևույթների թվով, իսկ երկարությունը՝ վանկերի:

Այդ առումով ինչպիսի պատկեր են ներկայացնում մեր երկու գրականները, ի մասնավորի բարդության ոլորտում։ Յուրաքանչյուր բարդ բառ նվազագույնը երկձևույթ միավոր է, որի երկարությունը նույնպես հավասար է երկուսի, քանի որ յուրաքանչյուր ձևույթ բաղկացած է նվազագույնը մեկ վանկարար ձայնավորից, ուստի, որպես կանոն, երկարմատ բարդությունների ժամանակ բառի երկարությունը չի կարող բառի խորությունից փոքր լինել. ընդ որում երկու գրականներում էլ երկարմատ բարդությունների ժամանակ նրանց թվային մեծությունները համընկնում են՝ տրնտես, ջրհան, կերկեր, տեռտեր և այլն։ Սովորաբար թվային անհամապատասխանության ժամանակ ավելի է լինում վանկերի քիվը։

Որպես կանոն, բառաբարդման ծավալմանը զուգընթաց՝ բառի խորության և երկարության հարաբերությունը փոխվում է՝ երկարության թվային արժեքների աստիճանական մեծացման հետևյթով, ինչպես անհամ-ա-գործ-ա-կց-ություն (5 ձևույթ, ա հոդակապը ձևույթ դիտելու դեպքում՝ 6 ձևույթ) և անհա-մա-գոր-ծակ-ցու-թյուն՝ 7 վանկ։ Հետաքրքիր է պարզել նաև ձևույթների, այսպես կոչված, կարերի և վանկերի սահմանների հարաբերության հարցը։ Ինչպես և սպասելի է, նրանց պարատադիր համընկնումը բնորոշ հետևյթ չէ երկու գրականներին էլ. այսինքն՝ ձևույթային սահմանները միշտ չէ, որ համընկնում են վանկային սահմանների հետ (չասելու համար՝ հաճախ չեն համընկնում), ընդ որում բառի երկարությանը զուգընթաց մեծանում է նրանց սահմանների անհամընկնելիության աստիճանը, որովհետև յուրաքանչյուր նոր կցվող ձևույթի դեպքում տեղի է ունենում այդ և նախորդ ձևույթների վանկերի նոր վերաբաշխում և հայերենին հատուկ օրինաչափությամբ տեղի է ունենում բաղաձայնական կապակցությունների բաշխում հարակից վանկերի միջև, ինչպես՝ նեղ-միտ, նեղ-մր-տո-րեն, բա-րե-սիրտ, բա-րե-սր-տո-րեն և այլն։

Լեզվի զարգացման արդի փուլում նոր, ավելի բարդ հասկացությունների արտահայտման պահանջով պայմանավորված, աստիճանաբար մեծանում է նաև ինչպես բառի երկարության, այնպես էլ, բնականաբար, խորության սահմանը, նկատի ունենք ոչ միայն սովորական բարդությունները, այլև հատկապես մեր դարաշրջանին հատուկ այնպիսի կազմություններ, ինչպիսիք են՝ ռազմաօդերևութաբանական, հանրալեզվաբանություն և այլն։ Գրական արևելահայերենում, ինչպես պարզվեց հնչույթաբանությունից, արևմտահայերենի համեմատությամբ, միտում է նկատվում բառի ինչպես խորության, այնպես էլ երկարու-

թյան հարաբերական մեծացման։ Ահա թե ինչու արևմտահայ քերականագիտության մեջ ընդունված այն կարծիքը, որ «երեք ավելի բառով բարդություն չ՚ըլլար և եթե ըլլա, խորթ է և խոտելի» (ԺԹ. 138), գրական արևելահայերենի համար կիրառելի չէ. հիշեցնենք՝ ժողկրթբաժվար, ներագրալուսանկար և բազմաթիվ ձևեր, ուր այդ սկզբունքը չի գործում։ Այդ հարցում արևմտահայերենը դիմում է հայերենի բառակազմական լայն հնարավորություններից՝ չափավոր կերպով օգտվելու գիտակցական սկզբունքին՝ խուսափելով երկար բառերից և գերապատվություն տալով վերլուծական բառաձևերին։ Այնպես որ կարելի է նշել, մի կողմից, գրական արևելահայերենի բառի հարաբերական երկարության և խորության իրողությունը արևմտահայերենի համեմատությամբ և, մյուս կողմից՝ գրական արևմտահայերենի բարդության ոլորտում վերլուծական բառատիպի գործառական ավելի լայն բնույթը։ Հմմտ. ամենավճռական, սաբսափելիորեն և նման ձևերի մասին Հ. Գազանճյանի մոտեցումը, որի համաձայն՝ այդ բառերի «վերլուծական ձևերը ամենեն վճռական, սարսափելի կերպով ավելի նախապատիվ են,—նախամեծար են նաև հարադրյալ բայերը, փոխանակ անոնց հոմանիշ շինծու բարդ ձևերուն, ինչպես թույլ տալ—թույլատրել, ուշի գալ փոխանակ ուշաբերի և այլն» (ԺԹ. 138)։ Եթե մի կողմ թողնենք այդ ձևերի շինծու հորջորջումը, ապա կարելի է նկատել հետևյալ իրողությունը. արևմտահայերենին բնորոշ վերլուծական նշված ձևերը հատուկ են նաև արևելահայերենի խոսակցական տարբերակին, առավել ևս՝ ժողովրդական-բարբառային ոլորտին. նկատելի է, որ առօրյա խոսակցության ժամանակ թույլ տալ վերլուծական ձևն օգտագործող արևելահայը գրական-գրաված տարբերակին անցնելու ժամանակ ինքնաբերաբար անցնում է՝ թույլատրել և նման ձևերի օգտագործմանը։

Համադրական բարդություն

Երկու գրականներում էլ համադրական բարդությունները զգալի մաս են կազմում ոչ միայն բարդությունների, այլև ընդհանրապես բառակազմության մեջ. այդ առումով կարելի է նշել հայերենի (իմա՝ արևելահայերենի) շրջուն բառարանի հիման վրա Տ. Ավետիսյանի ստացած տվյալն այն մասին, որ երկարմատ հոդակապով բարդությունները կազմում են շուրջ 30 տոկոս (12)։

Որպես ընդհանրություն նշելի է այն իրողությունը, որ երկու գրականներից որևէ մեկում կազմված նորաբանություն-բարդությունը իր կառուցվածքային հատկանիշներով միանգամայն հարազատ է մյուսի կա-

ռուցվածքին: Այնպես որ կարելի է երկու գրականների համար արձանագրել բառակազմական տեխնիկայի ընդհանրության փաստը:

Որպես այդ տեխնիկայի առաջին ցուցիչ կարելի է նշել հոդակապով բարդությունները կամ ավանդական տերմինով՝ իսկական բարդությունները: Օրինակներ՝ երգացանկ, գրամեքենա, կարգախոս[2], հանդիսասրահ, լուսագիր և այլն:

Ի միջի այլոց ճիշտ կերպով քննադատելով բարդությունների ըստ իսկական և անիսկական խմբերի դասակարգումը, Ռ. Մկրտչյանը իր հետագա շարադրանքի մեջ փաստորեն շարունակում է ավանդական կազապարի կիրառումը (ԺԲ. 89—94):

Հնարավոր չէ նշել հոդակապով բարդություններից թեկուզ մեկ քիչ թե շատ էական հատկանիշ, որով տարբերվեին մեր երկու գրականները: Խոսքն, անշուշտ, միևնույն տեխնիկայի իրացման տարբեր հնարավորությունների մասին չէ, ինչպես՝ հետուառացույց—հետոառեսիլ—հետոացոլ և այլն:

Հետաքրքիր է նշել նաև, որ հոդակապով բարդությունների զարգացման միտումները նույնպես երկու գրականներում համընկնում են. ինչպես նկատել են հայագետները, արդի փուլում տեղի է ունենում բարդությունների մեջ հոդակապից խուսափելու միտում:

Բառակազմական ընդունված սկզբունքների «շեղումներն» անգամ երկու գրականներում համընկնում են. այսպես, հանրահայտ է, որ ի+ա «բախմամբ» հանդես է գալիս ե ձայնավորը, ինչպես՝ ճոճի+աստան> ճոճեստան, բայց ահա երկուսում էլ հանդիպում է ճոճաստան սխալ ձևը:

Բառակազմական տեխնիկայի երկու գրականներում ունեցած ընդհանրությունը սոսկ խոսքով հաստատած չլինելու համար կարելի է համեմատել նրանցում տարբեր խոսքի մասերի պատկանող միավորների միացմամբ կազմված բարդությունները (հմմտ. ԺԲ, 139—140 և ԺԲ, 91—93):

Երկու գրականներում էլ որպես բարդության առաջին բաղադրիչ կարող են հանդես գալ, բացի շաղկապից, մյուս բոլոր խոսքի մասերը. այլ է պատկերը վերջնային բաղադրիչների դեպքում, քանի որ սովորաբար մակբայները նախադաս կիրառություն ունեն: Սովորական երևույթ է բարդության երկու բաղադրիչների միևնույն խոսքի մասին պատկանելը՝ գոյական-գոյական, ածական-ածական և այլն: Ընդ որում երկուսում էլ բարդության երկու բաղադրիչների միևնույն խոսքի մասին պատկանելության դեպքում կարող է փոխվել ստացված բարդ բառի

խոսքամասային պատկանելությունը, ինչպես այդ տեղի է ունենում գոյական+գոյական կապակցությունների մի մասի դեպքում՝ աղյուծաթաթ: Ստորև աղյուսակով տրվում են երկու գրականների բառաբարդման տիպերն ըստ բաղադրիչների և ստացած արդյունքի խոսքամասային պատկանելության (համապատասխան օրինակներով).

Աղյուսակ № 16

Առաջնային բաղադրիչ	*Երկրորդային (վերջնադիր) բաղադրիչ*	*Ինչ խոսքի մաս են կազմում*	*Օրինակ*
գոյական	*գոյական*	*գոյական*	*գետաբերան*
գոյական	*գոյական*	*ածական*	*կոնածև*
գոյական	*ածական*	*ածական*	*արևամած*
գոյական	*բայարմատ*	*գոյական*	*ծաղկաքաղ*
գոյական	*բայարմատ*	*ածական*	*պղնձակուռ*
գոյական	*կապ*	*գոյական*	*տողատակ*
գոյական	*կապ*	*ածական*	*մարդամոտ*
ածական	*գոյական*	*գոյական*	*ժանտախտ*
ածական	*գոյական*	*ածական*	*խուռներամ*
ածական	*ածական*	*ածական*	*լիառատ*
ածական	*բայարմատ*	*ածական*	*նրբանկատ*
թվական	*գոյական*	*գոյական*	*քառանկյուն*
թվական	*գոյական*	*ածական*	*հոտածայն*
թվական	*թվական*	*թվական*	*տասներկու*
թվական	*բայարմատ*	*ածական*	*քառատրոփ*
դերանուն	*բայարմատ*	*ածական*	*ինքնաշեն*
դերանուն	*գոյական*	*ածական*	*ինքնագլուխ*
դերանուն	*բայարմատ*	*գոյական*	*ինքնահոս*
դերանուն	*բայարմատ*	*ածական*	*նաստեր*
դերանուն	*ածական*	*ածական*	*նամոլ*
բայարմատ	*գոյական*	*գոյական*	*մարգագաշտ*
բայարմատ	*բայարմատ*	*գոյական*	*վազանց*[1]
բայարմատ	*բայարմատ*	*ածական*	*հիասքանչ*
մակբայ	*գոյական*	*ածական*	*միշտուրց*
մակբայ	*ածական*	*ածական*	*միշտադալար*
մակբայ	*գոյական*	*գոյական*	*հնոանկար*
մակբայ	*բայարմատ*	*գոյական*	*վայրէջք*
մակբայ	*բայարմատ*	*ածական*	*հաղվագյուտ*
կապ	*բայարմատ*	*գոյական*	*վրաերթ*[1]
կապ	*գոյական*	*գոյական*	*հետգրություն*
կապ	*բայարմատ*	*ածական*	*նախընթաց*

Աղյուսակից կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների. առաջնային բաղադրիչի համեմատությամբ, բարդության երկրորդ բաղադրիչի վերում կարող են հանդես գալ հարաբերաբար սահմանափակ թվով խոսքի մասեր (գերազանցապես չորս՝ գոյական, ածական, բայ, թվական):

Եթե երկրորդ բաղադրիչը բայ է, ապա բարդության խոսքամասային պատկանելությունը երկընտրանքի տեղիք չի տալիս. այն նույնպես բայ է:

Միայն ածականն է, որ կարող է ստացվել այլ խոսքի մասերի պատկանող միավորների սերտաճումից՝ թվական + գոյական՝ եռաձայն, գոյական + գոյական՝ ճարսխրա և այլն:

Եթե բարդության երկրորդ բաղադրիչը գոյական է, ապա ստացված բարդ բառը կարող է լինել ինչպես գոյական, այնպես էլ ածական:

Խոսքամասային հնարավոր կապակցելիությամբ ստացած բարդությունները հետևյալ թվային հարաբերությամբ են դասդասվում. գոյականների՝ 12, ածականների՝ 18 և թվականների՝ 1:

Բարդության վերոհիշյալ տիպերի մեջ չեն ներկայացվել ավանդական տերմինով՝ կցական բարդությունները, թեև վերջիններս նույնպես, ինչպես նշվել է, մտնում են համադրական խմբի մեջ:

Եթե համադրական բարդության բաղադրիչների միջև ոչ թե ստորադասական, այլ համադասական հարաբերություն է առկա, ապա հանդես են գալիս բարդության նոր տիպեր, թվական + թվական՝ քառամիկ, դերանուն + դերանուն՝ այսինչ[1], ինքզինք[2], ածական + ածական՝ ծուռումուռ, ճոռաճոր, մակբայ + մակբայ՝ դեմուդեմ, ձայնարկություն՝ վախվախ, ճչչիճչ և այլն: Ինչպես նկատելի է, բերված բոլոր օրինակներն էլ ավանդական տերմինով կցական բարդություններ են:

Ուշեմն, կարելի է նշել, որ համադասական հարաբերությամբ բնորոշվող բաղադրիչները հաճախ նույն խոսքամասային պատկանելությունը ունենալով՝ ստացված բարդ բառը նույնպես միևնույն խոսքի մասային արժեքն է ունենում, մի բան, որ պարտադիր չէ ստորադասական հարաբերությամբ համադրական բառի դեպքում, ինչպես՝ ճարսխրա (ածական) և այլն:

Երկու գրականների բառակազմության ոլորտում որոշակի դեր ունեն կրկնավոր կազմությունները. ընդ որում երկուսում էլ կրկնավորները տարբեր աստիճան են ներկայացնում և ըստ այդմ էլ դասակարգվում տարբեր խմբերի միջև՝ ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական: Եթե մի կողմ դնենք՝ ճոռաճոր, վայվայ, դեմուդեմ և այլ համադրական

կրկնավորները, որտեղ ակնհայտ է բաղադրիչների կրկնությունը, ապա երկու գրականներում զգալի թիվ են կազմում այնպիսի բարդությունները, ուր բաղադրիչներից առաջինը կամ վերջինը հնչյունական փոփոխության են ենթարկվել՝ սղում, հնչյունափոխություն և այլն: Այսպես՝ բարբառ, հայթայթել, կսկիծ և այլն: Որոշ դեպքերում այնպիսի փոփոխություն և սերտաճում է առկա երկու բաղադրիչների միջև, որ բարդ լինելը չի գիտակցվում և համաժամանակյա մոտեցմամբ խոսք անգամ չի կարող լինել բարդ բառի մասին. համմա. կկու=կու-կու, կամ՝ գրգիռ=գիռ-գիռ և այլն:

Կրկնությունը համադրական բառի սահմաններում իր հնչյունափոխական սկզբունքներով երկու գրականներում էլ նույն պատկերն ունի, ինչպես՝ միևնույն բարադրիչի կրկնության դեպքում, եթե վերջնային հնչյունը ռ է, ապա առաջին բաղադրիչի ռ-ն փոխվում է ր-ի, ինչպես՝ գրգիռ, բրբիռ, բարբառ և այլն: Այդ ընդհանրությունը պայմանավորված է լեզվի նախորդ շրջանում գործող օրինաչափությամբ:

Վերլուծական բարդություն

Կրկնավոր հարադրությունները մտնում են վերլուծական բառախմբի մեջ՝ նկատի ունենալով դասակարգման վերոհիշյալ սկզբունքները՝ դադարը, ընդ որում ինչպես նախդիրների՝ առ և այլն, շաղկապների՝ ու, և առկայության, այնպես էլ բացակայության դեպքում հիմնական տարբերիչ հատկանիշը մնում է արտասանության մեջ հարաբերական դադարի առկայությունը, գրության մեջ՝ գծիկը կամ անջատ գրությունը: Քանի որ խոսքը միևնույն բառի (արմատի) կրկնության մասին է, ապա բնականաբար կրկնավոր հարադրությունների դեպքում գործ ունենք միևնույն խոսքամասային բաղադրիչների կապակցման հետ: Սա մակբայակերտության կարևոր միջոցներից մեկն է (կրկնությամբ ածականները և այլն դառնում են մակբայ, ինչպես, օրինակ՝ մեծ—մեծ-մեծ, մանր—մանր-մանր և այլն):

Գոյականական բաղադրության խոսքի մասային պատկանելությունը հիմնականում փոխվում է և կազմվում կամ ածական՝ զույգ-զույգ, կամ մակբայ՝ բառ առ բառ: Այսպիսով, գոյականների կրկնության դեպքում հաճախ փոխվում է բարդ բառի խոսքիմասային պատկանելությունը, մնացած դեպքերում գործ ունենք, թեև հնարավոր է միևնույն խոսքի մասի ոլորտում փոխվի նրանց խմբավորման տիպը, ինչպես այդ տեղի է ունենում թվականներով

կրկնավորների դեպքում՝ հինգ (դասական թվական), հինգ-հինգ (հնգական, բաշխական թվական)։

Երկու գրականներում էլ արմատի կրկնությամբ հիմնականում արտահայտվում են հետևյալ իմաստները՝ բազմակիություն (հոգնակիություն՝ գունդ-գունդ—գնդեր), իմաստի սաստկացում (տաք-տաք, մեծ-մեծ), գործողության տևականություն և ինտենսիվություն (գնալ-գնալ[1], երթալ-երթալ[2], բզիկ-բզիկ ընել[2], պատառպատառ անել[1] և այլն)։

Երկու գրականներում էլ կրկնավորների այն տիպը, ուր երկրորդ բաղադրիչի առաջին հնչյունը (բաղաձայնը) փոխվում է, ինչպես՝ բաներ-մաներ, տուն-մուն, սուտ-մուտ և այլն, ինչպես նաև հնչյունի հավելում է կատարվում՝ ամաև-չամաև, առոք-փառոք և այլն, հատուկ են ավելի խոսակցական տարբերակին, քան գրական բարձր ոճին։

Հարկ է նշել, որ ինչպես կրկնավորների, այնպես էլ հատկապես հարադիր բարդությունների (վերլուծական բառերի) մեկ միավոր, մեկ բառ ընդունելու գործում մեծ դեր ունի ձևաբանորեն ընդմիջարկելի (խոցելի) չլինելու հատկանիշը։ Ահա թե ինչու բառային ամեն մի կրկնություն չէ, որ կազմում է վերլուծական այնպիսի բառատիպ, որ կոչում ենք՝ կրկնավոր. բերենք հանրահայտ օրինակը՝ շաղկապների կրկնությամբ՝ և՛ ... և՛..., թե՛... թե՛ և այլն։

Եթե կրկնավորների վերոհիշյալ տիպերը շատ ավելի տարածված են խոսակցական ոլորտում, ապա վերլուծական բառի այնպիսի տիպը, որն ավանդական տերմինով կոչվում է հարադրական բարդություն, մեծ տարածում ունի երկու գրականներում էլ։

Բառակազմության ինչպես համադրական, այնպես էլ վերլուծական կաղապարները երկու գրականներում էլ հիմնականում համընկնում են։ Այսինքն՝ չկա նրանցից որևէ մեկին բնորոշ մի կազմություն, որ խորթ լինի մյուսին։ Երկուսում էլ սահմանափակ հարաբերություններով բնորոշվող խոսքի մասերը՝ դերանունները, բնաձայն բառերը և ձայնարկությունները բնորոշվում են կապակցելիության նվազ հնարավորություններով։

Բառաբարդման մասին մինչև այժմ ասվածը վերաբերում էր ըստ էության երկարմատ բարդություններին։ Եթե վերջիններիս բաղադրիչները ներկայացնում են երկու կարգի հարաբերություն՝ ստորադասական և համադասական, ապա եռարմատ և ավելի բարդությունների ժամանակ պատկերն ավելի բարդ է լինում, թեև այս դեպքում ևս գործում է հայերենին ընդհանրապես հատուկ վերջնային բաղադրիչի ձևաբանա-

կան-ձևակազմական կենտրոն լինելը. նկատի ունենք ոչ այնքան շեշտը, թեքման ենթարկվելը և այլն, որքան խոսքիմասային պատկանելության որոշման հարցը:

Երկուսից ավելի բաղադրիչներով բարդությունների միավորների հարաբերության հարցին անդրադարձել են Տ.Ավետիսյանը և հատկապես Ռ. Մկրտչյանը (ԺԱ, ԺԲ): Վերջինիս կողմից ի մասնավորի քննվում է այն դեպքը, երբ բարդության առաջին երկու բաղադրիչները իրար նկատմամբ համադաս են և ստորադասվում են վերջնային բաղադրիչներին:

Ջանց առնելով թեքման հատկանիշից զուրկ խոսքի մասերը, նշենք այն փաստը, որ երկու գրականներում էլ վերլուծական բարդությունները հանդես են գալիս որպես մեկ ամբողջական միավոր, եթե նկատի ունենանք նաև նրանց ձևաբանական կարևոր հատկանիշներից մեկը՝ թեքման յուրահատկությունը. նմանօրինակ կազմություններում թեքման ենթակա բաղադրիչը վերջին բաղադրիչն է. ինչպես՝ լաց ու կոծ—լաց ու կոծի և այլն: Երկու գրականներում էլ ազգականանիշ վերլուծական բառերի բաղադրիչները առանձին-առանձին ենթակա են հոլովման (ընդ որում առաջին բաղադրիչը մնում է սեռական հոլովով). ինչպես՝ մայր ու աղջիկ—մոր ու աղջկա, հայր ու որդի—հոր ու որդու:

Այդ երևույթը ընդհանրապես մյուս գոյականներին հատուկ չէ: Զուգադիր բայերի երկու բաղադրիչներն էլ հավասարապես ենթարկվում են թեքման (շաեել-պաեել, շաենցի-պաենցի և այլն):

Երկու գրականների բարդության իմաստային վերլուծությունը նույն պատկերն է ի հայտ բերում: Բարդության բաղադրիչների միջև հետևյալ հիմնական հարաբերություններն են առկա. ա) որոշիչ որոշյալի՝ սգահանդես, բ) հատկացուցիչ հատկացյալի՝ չրհոր, գ) բացահայտիչ-բացահայտյալի՝ վաճառանուկ (վահան ձուկ), մարգարտածաղիկ (օրինակները Հ. Գազանճյանինն են, ԺԳ, 138): Նշված շարահյուսական կապակցության մասին Ռ. Մկրտչյանը իրավացիորեն նկատում է. «Բացահայտիչ-բացահայտյալ շարահյուսական կապակցությամբ բաղադրիչներով բարդ բառեր ժամանակակից հայերենում չկան» (139): Որպես պատճառ նշվում է բացահայտիչի որոշվող լրացում լինելը, որի հետևանքով այն գերազանցապես արտահայտվում է բառակապակցությունների միջոցով, դ) խնդիր-խնդրատու՝ օրենսդիր, ե) համադաս հարաբերությամբ բարդություն՝ մեծամասնիչ: Տիպերը տրվում են ըստ Հ. Գազանճյանի (ԺԳ. 137—138):

Այսպիսով, կարելի է նշել երկու գրականների բառակազմական ո-

լոբատում բառաբարդման ընդհանուր տիպաբանություն ունենալը՝ արևելահայերենի հարաբերաբար ավելի հարուստ բառաբարդման (բազմաբարդ բառի կառուցվածքի կամ բաղմահամապրականության) դիմաց արևմտահայերենի այդ միջոցի հարաբերաբար սահմանափակ կիրառելիությամբ:

Ա Ծ Ա Ն Ց Ո Ւ Մ

Ածանցումը երկու գրականների բառակազմության լայն հնարավորություններով օժտված միջոցներից է: Գրական արևելահայերենի բառի կառուցվածքի վերլուծությանը նվիրված իր վերոհիշյալ աշխատության մեջ Տ. Ավետիսյանը գրել է. «Հետազոտությունները ցույց են տալիս, որ ժամանակակից հայերենում բարդացման տեսակարար կշիռը համեմատաբար մեծ է ածանցման համեմատությամբ» (ԺԱ. 29): Հետաքրքրքիր է, թե ի՞նչը նկատի ունի հեղինակը՝ զուտ կամ մաքուր բարդությունը և նմանապես մաքուր ածանցումը, թե՞ հետազոտության տվյալների մեջ նկատի են առնվում նաև բարդ ածանցավոր բառերը: Ըստ էության վերցվում են միայն երկարմատ առանց հոդակապի և հոդակապով տիպերը և արմատ+ածանց, արմատ+հոդակապ+ածանց տիպերը: Այդպիսով, իրոք, ածանցման հնարավորությունը կազմում է 15%, իսկ բարդացմանը՝ 30%: Բայց չէ որ համեմատությունը կատարվում է միայն երկարմատ բարդության և մեներածանց բառերի միջև. բացի այդ, հայերենի բառամթերքի միայն մոտավորապես մեկ երրորդի տվյալներով (շուրջ 60 հազար բառ) վերջնական եզրահանգման դժվար է հանգել:

Հանրահայտ է, որ, ասենք, եռարմատ բարդությունների տեսակարար կշիռը հայերենում զգալիորեն փոքր է (չենք խոսում այլևս քառարմատների մասին), մինչդեռ երկածանց, եռածանց բառերի թիվը և նրանց գործառական բեռնվածությունը (հաճախականությունը) մեծ է. օրինակ՝ լուսավորչականություն բառի մեջ առկա է 4 ածանց: Տ. Ավետիսյանի այն եզրահանգումը (ԺԱ. 29), թե «ոչ միայն եղած բառերի մեջ են բարդացումները մեծ թիվ են կազմում, այլև ստեղծվող բառերի (ընդգծումը մերն է—Ա. Ս.)», կապ ունի ոչ միայն հայերենի բարդության երևույթի հետ ինքնըստինքյան, այլև փոխառու լեզվի (արևելահայերենի համար՝ ռուսերենի, արևմտահայերենի համար՝ գերազանցապես ֆրանսերենի) համապատասխան ձևերի գլխավորապես երկարմատ բարդություններ լինելու հետ. ինչպես՝ самосвал—ինքնաթափ[1]: Փոխառու լեզվում ածանց+արմատ տիպի դիմաց հայերենում առկա է նաև երկարմատ բարդության տիպը, ինչպես՝ опись—գույքագրում: Վերջապես, փո-

խատու լեզվի բառակապակցությունները հայերենը հաճախ արտահայտում է բարդությամբ. ինչպես, օրինակ՝ средство передвижения—փոխադրամիջոց, инспектор ГАИ—ավտոտեսուչ *և այլն։*

Երկու գրականների համար էլ կարելի է առանձնացնել ածանցների հետևյալ տիպերը (սահմանվել են Գ. Ջահուկյանի կողմից գրական արևելահայերենի համար)։

a *կարգի նախածանցներ՝* աև, դժ, ժժ, ապ, ա, չ (դժգույն[1]—ժրժգույն[2]) *ածականակերտ ածանցներ են, եթե արմատից աջ ուրիշ ածանց հանդես չի գալիս՝* անվարժ, *իսկ արմատից աջ այլ ածանցի առկայության դեպքում հանդես է գալիս ընդհանուր սկզբունքը՝ բառի խոսքամասային պատկանելություն, պայմանավորում է վերջնային դիրքում գտնվող ածանցի բնույթը՝* с *կարգի դեպք՝* ուրյուն-ով գոյական՝ անվարժություն *և այլն։*

b *կարգի նախածանցներ («ժամանականիշ»՝ կրկնություն՝* վեր(ա)...

b[1] *կարգի նախածանցներ («տարածական»՝* անդր-(անդրադարձ), առա, ենթ, ենր, մակ *(մականուն),* հար *(յար),* պար *(պարագա),* տար *(տարաժամ) և այլն։*

c *կարգի վերջածանցներ (գոյականակերտ)՝* անակ, անոց, անք, առաձ, առք, ատակ, իստ, իճք, իք, մուճք, յակ, յուն, որդ, ոց, պաճ, պանակ, ստաճ, ված/վածք, ցի(ացի)եցի, ուրյուն, ուճի, ում, ույր, ուկ, ույց, ունդ, ունք, ունի, ուստ, ուրդ, ուք, ույք, ք։

d *կարգի վերջածանցներ (ածականակերտ)՝* աշ, արիմ(երիմ), եմ/իմ, եցիկ, ոտի, (ա)վոր, (ա)վետ, ավուն, եղ, կոտ, ոտ, իկ, լիկ, ուկ, (ա)գույն, իճ, աճ, ուճ, առար, իշ, ովի, ուճակ: *Այս շարքին, որ հատուկ է երկու գրականներին էլ, կարելի է ավելացնել միայն արևմտահայերենին հատուկ կեկ (կակ) և շի ածանցներ՝* լայնկեկ, խոշորկեկ, մեծկակ, լայնշի *և այլն։*

e *կարգի վերջածանցներ (մակբայակերտ)՝* (ա)բար, (ա)պես, ոբեն, ովին: *Այս շարքի մեջ, մակբայակերտության հատկանիշը նկատի ունենալով, որոշ վերապահությամբ կարելի է դնել նաև ակի, այն, իճ, ուկ ածանցները, որոնք բացի մակբայակերտությունից, ուրիշ խոսքի մասեր կազմելու ընդունակություն ունեն։*

Երկու գրականներում էլ արմատի աջ մասը հարաբերաբար բազմանդամ է. խոսքը ոչ միայն ածանցների թվային քանակին է վերաբերում, այլև կաղապարակազմ ածանցների կարգերի թվին։ Դա երևում է հենց թեկուզ արևելահայերենի համար Գ. Ջահուկյանի բերած բառակազմական ամենաբազմանդամ կաղապարից (((a+)b+)b₁+)A(+c)

+d(+e))) (ան-վեր-արա-ա-դր-ող-ական-որեն), որն ըստ էության նույն տեսքն ունի նաև արևմտահայերենի համար:

Եթե արմատից ձախ հանդես են գալիս միայն a և b(b¹) կարգի ածանցները (նախածանցները), որոնցից առաջինում բացառողական (ժխտական) ածանցներ են՝ ան, դժ, ամ, ա և այլն, ապա վերջիններս հիմնականում, ինչպես նշել է Գ. Ջահուկյանը (ԺԲ, 152), բայական ածանցներ են, ընդ որում b կարգի ածանցները «արտահայտում են «ժամանակային» (կրկնություն՝ վեր(ա), երկրորդ կարգի (իմա b¹—Ա. Մ.) ածանցները—արա(ա), ենք(ա), միջ(ա), ներ(ա) և այլն՝ տարածական իմաստներ» (153): Այսպիսով, իսկապես, անուրանալի է այդպիսի ածանցների իմաստային որոշակի առնչությունը (կապը) տեղի և ժամանակի մակբայների հետ: Հենց դրա համար էլ հայերենի այդպիսի ածանցների մասին ակադ. Գ. Ջահուկյանը գրում է, որ դրանք «բառիս բուն իմաստով ածանցներ չեն» (153):

Ինչպես որ արևելահայերենի արմատից ձախ ընկած մասի շուրջ արտահայտված իրողությունները բացարձակապես համընկնում են արևմտահայերենի համապատասխան երևույթին, այնպես էլ նույն պատկերն է արմատից աջ եղած մասի խնդրում: Այստեղ երկու գրականներում էլ ածանցումը ստանում է դրսևորման հարաբերաբար լայն հնարավորություններ և կարգեր: Ընդհանրական կաղապարի մեջ ըստ հաջորդականության դրվում են՝ գոյականակերտ ածանցները (c), ածականակերտ ածանցները (d) և վերջապես՝ մակբայակերտ ածանցները՝ վեցերորդ կարգի՝ e: Հեշտ է նկատել, որ գոյականակերտ և ածականակերտ վերջածանցները կարող են փոխադարձաբար նախորդել և հաջորդել իրար, ըստ այդմ տարբերակվելով նախադիրքային և վերջադիրքային խմբերի (տերմինները Գ. Ջահուկյանինն են):

Ընդ որում երկու գրականների մասնակաղապարներում միևնույն կարգի ածանցների զուգորդումը թույլատրելի է: Միևնույն ածանցը առանձին դեպքերում կարող է նույն բառի սահմաններում հանդես գալ երկու անգամ, ինչպես՝ գրականագիտական, բեռականագիտական և այլն:

Տ. Ավետիսյանը (անդ) գրում է. «...հնարավո՞ր է արդյոք, որ միևնույն ածանցը կրկնվի բառի ներսում: Մեզ այդպիսի միայն երկու դեպք է հանդիպել՝ ածականական, գոյականական» (էջ 44): Բերված օրինակներից երևում է, որ Տ. Ավետիսյանը նկատի ունի ոչ թե բառի ներսում ածանցի կրկնությունը (ինչպես գրականագիտական-ի դեպքում), այլ նույն ածանցի իրարահաջորդումը (զուգորդելիությունը բառի սահման-

ներում)։ Այդ երևույթը չի սահմանափակվում բերված երկու օրինակներով. կարելի է ավելացնել հետևյալները՝ բվականական, բերականական, գրականական և այլն. վերջին բառը արևելահայերենում հնացած ձևերի թվին է պատկանում (ինչպես՝ նաևդես գրականական), իսկ արևմըտահայերենում՝ ոչ։ Հարկ է ավելացնել նաև, որ ական+ական ածանցահաջորդման մեջ առաջին ական-ը գոյականական արժեք ունի, երկրորդ ական-ը՝ ածականական՝ գոյական / գոյական+ական։

Ածանցների ջահուկյանական դասակարգմամբ միանգամայն պարզ է դառնում, թե յուրաքանչյուր նոր ածանցի ավելացմամբ, ըստ տվյալ ածանցի կարգի (c, d, e), ի՛նչ խոսքամասային փոխանցումներ են հնարավոր, եթե սկզբունք ենք ընդունում այն, որ, առանձին բացառությունները զանց առած, վերջնային դիրքում c կարգի ածանցները (գոյականակերտները) ստեղծում են գոյական, d կարգի (ածականակերտ) ածանցները՝ ածական և e կարգի (մակբայակերտ) ածանցները՝ մակբայներ։ Այստեղից էլ՝ բայարմատ+d տալիս է գոյական ձև+ույթ, ավելացնելով ստացվածին c կարգի մասնիկ, ստացվում է ածական՝ ձևույթային։ Խոսքիմասային փոխանցումների լավագույն նմուշ կարող է ծառայել լուս+ավոր+չ+ական+ություն, ուր առկա է գոյական+ածական+գոյական+ածական+գոյական փոխանցումների շղթան։ Բավական է նայել վերջնային դիրքում հանդես եկող ածանցի դասին և իսկույն որոշել ստացված բառի խոսքամասային պատկանելությունը։

Ըստ բառակազմական (ածանցման) հնարավորությունների երկու գրականներում էլ ծայրագույն դիրք են գրավում բայական և մակբայական արմատները. ընդ որում եթե առաջիններդ սերման տեսակետից ամենաբեղուն են, ապա վերջիններդ՝ մակբայները, ընդհակառակը, բոլոր կարգի բառարմատներից սահմանակ հնարավորություններ ունեն։ Մակբայական արմատներից հարաբերաբար լայն հնարավորություններ ունեն ածականական արմատները, իսկ գոյականական արմատները միջակա դիրք են գրավում ամենալայն հնարավորություններով օժտված՝ բայարմատների և ածականական արմատների միջև։ Նշված իրողությունը թվային հետևյալ արտահայտությունը ունի, ըստ Գ. Ջահուկյանի մասնակազապարային բանաձևերի (տե՛ս ԼԲ. 154)։ 32 մասնակազապարային բանաձևերից իրացվում են բայարմատներից 23-ը, գոյականական արմատներից՝ 20-ը և վերջապես՝ մակբայական արմատներից՝ ընդամենը 5-ը։

Երկու գրականներում էլ գործառական լայն հնարավորություննե-

րով օժտված են նախածանցներից ան-ը (ժխտական) և վերջածանցներից՝ ություն-ը:

Արևելահայերենին և արևմտահայերենին բնորոշ է մի երևույթ ևս. հնից ժառանգած ածանցական կազմությունները կայուն են. այսինքն՝ բաղադրիչ միավորների միջև այլ ածանցներ չեն կարող ներթափանցել:

Հարկ է նշել, որ ինչպես կաղապարավորման, այնպես էլ ածանցների ցանկը ներկայացնելու ժամանակ ածանցները դիտվել են որպես ամբողջական միավորներ և ընդունվել է, որ նրանցից շատերը կարող են ներկայացնել իրենց մասնակաղապարներով, այսինքն՝ կազմված լինել բաղադրիչ առանձին տարրերից, ինչպես վածք-ը բաղկացած է վ–ած–ք բաղադրիչներից:

Բացի ժխտական նախածանցումից, մյուս կարգի նախածանցները երկու գրականներում էլ ներկայացվում են բացարձակապես նույն շարքով, որն ավանդված է հունաբան հայերենի ժամանակներից (հմմտ. ԼԲ, այլև՝ Ա. Մուրադյան, Հունաբան դպրոցը...):

Արդի հայերենի ածանցների լիակատար ցանկի զուգադրությունից հատակ կերպով երևում է, որ երկու գրականներն էլ ածանցման ոլորտում գերազանցապես նույն պատկերն ունեն.

1. Երկուսում էլ ածանցները ներկայացվում են, աննշան բացառությամբ, միևնույն ցանկով. ընդ որում գործուն և ոչ գործուն (քարացած) ածանցների շարքերը լիովին համընկնում են. չկա մի ածանց, որ նրանցից որևէ մեկում լինի գործուն, մյուսում՝ ոչ և հակառակը: Այսպես՝ երկուսում էլ գործուն ածանցներից են՝ ություն, այիճ, ուհի, ույթ, ական և այլն: Վերջին տասնամյակներում մանավանդ ույթ-ը հանդես է գալիս իբրև նորաբանությունների հզրային բաղադրիչ՝ համույթ, նորույթ, գործառույթ և այլն: Արևելահայերենում ույթ-ով կազմված տերմիններն այնքան շատ են, որ պատճառ են դարձել արձակագիր Մ. Արմենի «Հոգատարույթ» հղելույթի: Ույթ-ով կազմված լեզվաբանական տերմիններից կարելի է նշել մի քանիսը՝ ձիշտույթ, ձևույթ, գրույթ, բառույթ, իմաստույթ և այլն:

Գրական լեզուներում սերման առումով բացարձակ համընկնումով են բնութագրվում հատկապես ոչ գործուն ածանցները, օրինակ՝ –եք ածանցը երկուսում էլ իրացվում է միայն խիստ սահմանափակ ձևերում՝ փաթեք, ձմեր:

2. Հարկ է նշել, որ երկու գրականներում առկա ածանցների ձևային տարբերությունները պայմանավորված են հիմնականում արտաբա-

ականական երևույթներով (հատկանիշներով). այսպես, արևելահայերենի են, ան ածանցների դիմաց արևմտահայերենում գործառում է ն ածանցը, բառամիջի ձայնավորների արևմտահայերենին հատուկ սղման հետևանքով՝ գողնալ, մոռնալ, կրնալ արևմտահայերենի ձևերի համապատասխան արևելահայերենը՝ գողանալ, մոռանալ, կարենալ:

3. Ածանցների և խոսքամասային (բառահիմքային) կապակցելիության հնարավորությունները նույնպես վեր են հանում ընդհանուր հայերենի ածանցմանը հատուկ հետևյալ գծերը. ա) զուգորդման լայն հնարավորություններով են օժտված գոյականը, ածականը և բայը, ապա՝ մակբայը, բ) հաճախ բառարմատ+ածանցի զանազան զուգորդությունները կարող են երկարժեք լինել (երկու խոսքի մաս ներկայացնել)՝ ածական և գոյական կամ՝ ածական և մակբայ:

4. Միջածանցումը հատուկ է բայերին: Այն հիմնականում արտահայտում է գործողության կրկնություն, ինտենսիվություն, բազմակիություն՝ ծակոտել, կտրատել, կտրտել և այլն:

5. Երկու գրականներում էլ սովորականը երկհնչույթ կամ եռահընչույթ ածանցական կազապարն է: Քիչ են քառահնչույթ ածանցման տիպերը. հնգահնչույթ ածանցի յոթ նմուշ կա՝ ամենա, անդակ, որայ, պանակ, պատիկ, երորդ, ություն: Նշված ածանցներից ությունն է, որ հաճախական է և դրանով է պայմանավորված, որ մեր գրականների բառի երկարությունը (վանկաքանակությամբ) մեծ է ստացվում գրաբարի համեմատությամբ: Վեցահնչույթ ածանցի մեկ նմուշ կա միայն երկու գրականներում՝ ենական, հետևյալ խիստ սահմանափակ նմուշներով՝ պապենական[1], մորենական[2]: Դրանք ծագումնաբանորեն երկու ածանցի (ենի+ական) բաղադրություն են. ինչպես հայր+ենի+ական—հայրենական:

Միայն մեկ լեզվին հատուկ ածանցներն աննշան թիվ են կազմում. կարելի է նշել արևելահայերենին հատուկ փոխառյալ իսա ածանցը՝ մարբսիսա, կոմունիսա և այլն, արևմտահայերենին հատուկ կեկ (կակ), շի ածանցները՝ լայնկեկ, մեծկակ, լայնշի և այլն:

6. Ձուլենալով հանդերձ քերականական սեռ, ուիի ածանցով երկու գրականներն էլ բնական սեռի հատակ տարբերակում են մտցնում այն աստիճան, ինչ հատուկ չէ անգամ քերականական սեռ ունեցող մի շարք լեզուների. համմ. բժշկուհի, ինժեներուհի[1] ձևերը ռուսերենի համապատասխան բառաձևերի հետ՝ врач, инженер և այլն:

Ուիի վերջածանցի սերման հնարավորությունները վերջին շրջանում

հատկապես ընդարձակվել է արևելահայերենում. նրանով կազմվել են բազմաթիվ մասնագիտությունների, մարզաձևերի վերաբերյալ իգական սեռ հատկանշով բառեր՝ ճակնդեղագործուհի, շախմատիստուհի, լողորդուհի և այլն:

7. Երկու դրականների ածանցման ընդհանուր պատկերը խոսում է նաև այն մասին, որ ի տարբերություն նախաածանցավոր (նախածանցներով հարաբերաբար հարուստ) լեզուների, հայերենը ածանցների ընդհանուր թվի մեկ տասներորդն է հատկացնում նախադաս դիրքին և, ըստ էության, բնութագրվում է ածանցների վերջադասությամբ (վերջածանցներով):

Ածանցների մասին ամբողջական գաղափար տալու համար հարկ է անդրադառնալ այնպիսի ձևերի գործածությանը (գործ, բան, գետ և այլն), *որոնք որոշ լեզվաբանների կողմից որակվել են իբրև ածանցակերպեր: Հատկապես արևելահայերենում այդպիսիք, հանդես գալով բառի վերջնային դիրքում, փաստորեն կատարում են ածանցի դեր և կարելի է ասել, իսկապես ածանցի արժեք են ստանում՝ գաջագործ, երկաթագործ, պղնձագործ, հաճիագործ (երկու դրականներին հավասարապես բնորոշ օրինակներով),* լեզվաբան, ինէաբան, բուսաբան, ինաբանգետ, լեզվագետ, ապրանքագետ և այլն:

Նույն այդ գետ, բան, գործ հնչյունակապակցությունները, երբ հանդես են գալիս բառի սկզբնային դիրքում (բառասկզբում) արմատային ձևեր են և արտահայտում են նյութական իմաստ: Այսպես, գրող բառում ունենք գր (գըր) արմատը և ող ածանցը, իսկ մատենագիր, պատմագիր, վիպագիր և այլն ձևերում գիրը ածանցային իմաստ է արտահայտում: Ուրեմն, ամեն ինչ կախված է դիրքից:

Նշված ձևերի ածանց լինելու օգտին է խոսում այն փաստը, որ նրանցով բավական դյուրին է կազմել նորանոր բառեր, ուր վերջնային դիրքում հանդես եկող այդ նախկին արմատները կարելի է փոխարինել բուն ածանցներով և իմաստային նույն բեռնվածությունը կպահպանվի, ինչպես, օրինակ՝ գաջագործ—գաջող, ներկարար—ներկող:

Այսպես ասած, ածանցակերպերը կամ, ավելի ճիշտ, արդի փուլում հանդես եկող բուն ածանցները ընդհանուր առմամբ հատուկ են երկու դրականներին էլ. հատկապես արևելահայերենում մասնագիտությունների տարբերակման հետ կապված՝ վերջին տասնամյակներում առաջացել են բազմաթիվ կազմություններ, ուր վերջնային դիրքում հանդես են գալիս այդպիսի նախկին բառարմատներ. այսպես՝ գնաց-ով՝ տիեզերագնաց, լեռնագնաց, ծովագնաց և այլն, գործ-ով՝ փականագործ,

պանրագործ, սառնարանագործ և այլն, բան-ով՝ ուտուցմաբան, օդերևույթաբան և այլն։

Այն բոլոր ձևերը, որոնք առկա են արևելահայերենում, բայց չկան արևմտահայերենում, հավասարապես հնարավոր են նաև նրանում և ուղղակի չեն իրացված արտալեզվական՝ կյանքի, պայմաններով պատճառաբանված։

Երկու գրական լեզուներին հատուկ ածանցների ընդհանուր թիվը շուրջ երեք հարյուր է (ներառած այսպես կոչված ածանցակերպները)։ Այդ առումով հարկ է նշել, որ հայերենագիտական աշխատություններում բերվող ածանցների ցանկերը հաճախ չեն ընդգրկում անգամ բուն հետազոտության մեջ ներկայացված որոշ ածանցներ։ Այսպես, օրինակ՝ «ժամանակակից հայոց լեզու» եռահատոր հրատարակության առաջին հատորում խոսելով հանդերձ նոր առաջացած ածանցների (-գործ, -վար, փոխառյալ ածանցների (-իստ, -իզմ, -իտ և այլն) մասին, ժամանակակից հայերենի ածանցները ներկայացնող ցանկում դրանք ամբողջովին դուրս են թողնվել (ԻԲ. 476)։ Նշված ցանկում ներկայացված 201 ածանցների շարքում տեղ են գտել որոշ թվով հնացած և բարբառային ածանցներ (հմմտ. նույն տեղը, էջ 476), որոնք ներկայացվել են աստղանիշով տարբերակված ձևով։ Ցանկում բերված ածանցները դասակարգված են ըստ իմաստային հատկանիշի։ Նույն հնչյունական կառուցվածքն ունեցող, բայց տարբեր իմաստներ արտահայտող ձևերը ներկայացվել են առանձին-առանձին։ Ինչպես, օրինակ՝ իկ ածանցը ներկայացվում է երեք գլխաւորով՝ 1. -իկ (լավիկ), 2. -իկ (բացառիկ) և 3. -իկ (ճնդիկ)։ Այդ միանգամայն ճիշտ մոտեցումը երբեմն չի գործադրվել. այսպես, օրինակ՝ աև- նախածանցը ներկայացվում է իբրև միայն ժխտում արտահայտող ածանց, այնինչ աև-ը ունի նաև չափազանցության իմաստ՝ սահմանա—անսահման (անսահմանը նշանակում է ոչ թե սահման չունեցող, այլ չափազանց մեծ, լայն)։

Պետք է նշել, սակայն, որ այդ բոլոր տարբերակումները երկու գրայիններում էլ հիմնականում նույն պատկերն են ներկայացնում։ Անշուշտ, տարբերություններն ի հայտ են գալիս այդ ածանցների (հատկապես նրա խոսքը նորակազմ և փոխառյալ ածանցների մասին է) կիրառության ասպարեզում. դրանք սովորաբար լայն տարածում ունեն արևելահայերենում և համեմատաբար սահմանափակ գործածություն ունեն արևմտահայերենում (վերոբերյալ արտալեզվական պատճառներով պայմանավորված)։

Այսպիսով, արևելահայերենի և արևմտահայերենի ածանցման և բառաբարդման քննությունից հետևում է, որ հայերենում իբրև ընդհանրույթ պետք է դիտել բառավերջի ոչ միայն fեռակաճական (հմմտ. քերականության բաժինը), այլև բառակազմական իրազեկման կենտրոն լինելը: Բառավերջում են տեղայնանում շեշտը, հոլովման և խոնարհման վերջավորությունները. ըստ բառավերջի է որոշվում բառի խոսքիմասային պատկանելությունը, եթե գործ ունենք ածանցավոր կազմություններ կամ բարդություններ հետ:

Բառակազմական հնարավորությունների իրացման առումով՝ արևելահայերենը, ի տարբերություն արևմտահայերենի, մանավանդ վերջին տասնամյակներում, լայնորեն օգտագործում է ընդհանուր հայերենին հատուկ բազմաբաղադրիչ բարդություններ կազմելու ներքին հնարավորությունը. օրինակ՝ աերոլուսանկարահանություն, էլեկտրագազաեռակցող, հիդրոտուրբինաշինություն, մոտոբազմամատուիկ և այլն: Արևմտահայերենը, ինչպես նշվեց, աշխատում է խուսափել բազմաբաղադրիչ կառուցվածքներից, դիմելով վերլուծական եղանակին:

Երկու գրականների բառակազմության ոլորտի տարբերություններից մեկն էլ ի հայտ է գալիս հապավումների հարցում. արևելահայերենը հասարակական կյանքի մեջ համապատասխան երևույթների տարբերակման, հիմնարկությունների, ձեռնարկությունների, այլազան կազմակերպությունների անվանումների անվանական բարդ ձևերի (բառակապակցությունների) փոխարեն հաճախ է դիմում հապավման եղանակին՝ բարձրագույն ուսումնական հաստատություն—բուհ, երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ—ԵՊԻ, Համամիութենական լենինյան կոմունիստական երիտասարդական միություն—Համկեմ և այլն: Ընդ որում արևելահայերենը լայնորեն օգտվում է ինչպես վանկային (ժողկրթբաժվար), այնպես էլ տառային (ՀՍՍՀ) և վանկատառային (Համկեմ) հապավման տեսակներից:

Հապավումներից լայնորեն օգտվելը արևելահայերենի բառի հարաբերական երկարության կրճատման միջոցներից է. դրա շնորհիվ որոշ չափով փոքրանում է արևելահայերենի բառի միջին երկարությունը, որ այնուհանդերձ գրաբարի և արևմտահայերենի համեմատությամբ ավելի երկար է (տե՛ս Հնչույթաբանություն բաժինը):

Արևմտահայերենը խիստ սահմանափակ չափերով է օգտվում հապավումներից, այնպես որ, իրականում, այդ միջոցը նրան հատուկ չէ:

Արևմտահայերենին բնորոշ չեն այսպես կոչված նոր տիպի իսկական բարդությունները, այսինքն՝ փոխառյալ և սեփական բաղադրիչ-

ներով բաղադրված բարդություններ։ Դրանք սովորաբար կազմվում են կիսո, հիդրո, սպորտ, մոտո, ռադիո և այլ փոխառյալ բաղադրիչներով և հայերեն բառերով, ընդ որում փոխառյալ բաղադրիչները գերազանցապես նախադաս դիրք են ունենում՝ կիսոնկարահանում, հիդրոշինարար (ջրաշինարար), ռադիոբեմականացում, սպորտհրապարակ, մոտոմրցում և այլն։ Հեշտ է նկատել, որ նոր տիպի իսկական բարդությունների մի զգալի մասը ձևավորվել է հապավման ճանապարհով։ Պետք է նշել, որ այդ միջոցը, եթե արևմտահայերենում սահմանափակ կիրառություն ունի, ապա արևելահայերենում էլ երբեմն չարաշահվում է։ Դրանով պայմանավորված՝ արևելահայերենի բառի միջին երկարությունը գնալով մեծանում է։

Բառապաշարի ոլորտում հատուկ տեղ են գրավում տերմինային արժեք ունեցող բառերը, որոնց ղուգադրությունը հետաքրքրական շատ երևույթներ կարող է ի հայտ բերել։

Տերմինաբանության հարցերը գրական արևելահայերենում պետական ուշադրության առարկա են. ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր տերմինաբանական կոմիտեն նորմավորում է տերմինաշինության և կիրարկության գործը։ Գրական արևմտահայերենը որոշապես անհավասար պայմաններում է գտնվում։ Զրկված լինելով բարձրագույն ուսումնական հաստատությունների լեզու լինելուց, չունենալով պետական լեզվի հարուստ գործառույթները, զուրկ լինելով տնտեսական, հասարակական կյանքի այլազան բնագավառների պաշտոնական գրագրային լեզու լինելու յուրահատուկ կողմերից, արևմտահայերենը արևելահայերենի զարգացման ընթացքի համեմատությամբ, աստիճանաբար տեղի է տալիս։ Այնպես որ բնական գիտությունների մի շարք ճյուղերի համար արևելահայերենում ստեղծված բազմահազար տերմինների դիմաց արևմտահայերենը ունի հազիվ մի քանի հազար ձևեր և, բնականաբար, այնպիսի ճյուղերի, ինչպես, օրինակ՝ կենսաֆիզիկայի, միկրոկենսաբանության և այլն, տերմինային բառաշերտի զուգադրությունը ըստ էության ոչինչ չի կարող տալ։ Երկու գրականների զարգացման անհամաչափությունը (արևելահայերենի բուռն զարգացումը՝ հետագա կանոնավորման, մշակման և հարստացման ուղղությամբ և արևմտահայերենի հնարավորին չափ անաղարտ պահելու ձգտումը, տասական թվականների գրական արևմտահայերենի պատկերը՝ տեղքայլը, կամ ըստ որոշ լեզվաբանների՝ ցավալի նահանջը) արտահայտվել է դեռևս 50-ական թվականներին. հմմտ. Քաջունու, Հացունու դիտողությունները արևմտահայերենի ուղղագրության վերաբերյալ։

Կա մի ուրիշ իրողություն էլ. արևմտահայերենը հաճախ այս կամ այն նորաբանությունն է ստեղծում, պատճենելով հարյուրավոր տերմիններ, որոնք սակայն գործառական կենդանի ոլորտից զուրկ լինելով, փաստորեն մնում են բառարաններում, առանց կիրարկվելու (հմմտ. Հ. Պարոնյանի ծաղրը Լուսինյանի ֆրանսերեն-հայերեն բառարանի մասին)։ Այսինքն՝ արևմտահայերենի անգամ բառարաններում առկա բազմաթիվ տերմինները մնում են անգործածելի՝ նաև համապատասխան միջավայրի բացակայության պատճառով։ Ուրեմն, տերմինային բառապաշարի գործածության հարցում արևմտահայերենը, անտարակույս, զիջում է արևելահայերենին (չի բացառվում նաև վերջինիս մեջ ինքնահնար տերմինների առկայությունը. մեկ խոսքով՝ հատկանշական է արևմտահայ բազմաթիվ տերմինների կենսունակությունից զուրկ լինելը)։

Մեր երկու գրականների տերմինային արժեք ունեցող բառապաշարային շերտերի զուգադրությամբ կարող են մասնավորաբար պարզվել հետևյալ հարցերը. ինչպի՞սի հարաբերությամբ են հանդես գալիս սեփական բառամթերքը և օտարաբանությունները, պատճենման ի՞նչ տեխնիկա է կիրառվում յուրաքանչյուրում, բառակազմական ինչպիսի՞ միջոցներով են ստեղծվում նորաբանությունները և այլն։ Դրա համար քննության են առնվել երաժշտական, աշխարհագրական և քիմիական տերմինների ոլորտները, ինչպես նաև երկու գրականների զուգահայեցական անվանումները։

Երաժշտական (երաժշտագիտական) տերմինների զուգադրությունը բերում է հետևյալ եզրակացությունների.

1. Դրական արևելահայերենի բաղդատությամբ, արևմտահայերենի կողմից զրեթե բոլոր օտար տերմինների հայացման, պատճենման ձգտումը։ Արդեն տերմին բառն էլ արևմտահայերենում «հայացված» է՝ եղր, տերմինաբանությունը՝ եղրաբանություն կամ հատկաբանություն։ Մ. Գույումճյանի «Ընդարձակ բառական հայերեն-անգլիերեն լեզվի» գրքի (էջ 984—992) երաժշտական բառացանկում առկա ավելի քան 700 երաժշտական տերմիններից միայն շուրջ 20-ն է, որ զուտ փոխառություն է, ինչպես՝ ռումպա, սօնար, ֆիլհարմոնիք և այլն։ Մնացած դեպքերում, որպես սկզբունք, արևմտահայերենը դիմում է օտարաբանություններից խուսափելու, անպայման օտար տերմինները «հայացնելու» (հայերեն արմատներով արտահայտելու) միջոցին. արևելահայերենը ավելի ազատ է այդ հարցում։ Այսպես, միայն է. Փաշինյանի «Հարմոնիայի դա-

ագրքի» առաջին տասնհինգ էջերից դուրս գրված օտար տերմինները նույնությամբ փոխառելու շուրջ քառասուն օրինակ կա. ինչպես, օրինակ՝ հարմոնիա, իմաեռվալ, նոտա, ժաներ, մաժոր, ակորդ, կվարտային, կվինտային և այլն։

Այլևս չենք խոսում տրիանդաէքսիֆոնային գերլադային համակարգ և նման տերմինների մասին։ Որպեսզի թյուրիմացություն չառեղծվի, նշենք, որ այդ տերմինը առեղծել է դասագրքի հեղինակը՝ Փաշինյանը. այսինքն՝ օտարաբանության մեղ հայտնի ճանապարհով չէ, որ մտել է հայերենի մեջ, այլ հենց սկզբից «առեղծվել» է հայերենի բառապաշարում։

Օտար տերմինների փոխարեն գրական արևմտահայերենը առեղծել է ինքնուրույն (ոչ-փոխառյալ) համարժեքները, ինչպես՝ դաշնակարան, միջոց, ձայնանիշ (խազ) և այլն։

2. Նկատելի է, որ առանձին դեպքերում արևելահայերենում զուգահեռաբար գործածվում են ինչպես օտար տերմինը, այնպես էլ նրա պատճենված՝ թարգմանված հայերեն տարբերակը. օրինակ՝ հարմոնիա և ներդաշնակարան (համմա. Փաշինյանի դիրքը)։ Որոշ դեպքերում օտար տերմինը և նրա պատճենումը տարբեր իմաստային ծավալ առանալով՝ կիրառվում են տարբեր նշանակություններով՝ կոնցեռտ և համերգ։ Օ. Համբարձումյանի համերգը, իսկ Ա. Խաչատրյանի դաշնամուրի կոնցերտը։

3. Հարկ է նշել նաև, որ մի քանի արևելահայերենում զուգահեռաբար գործածվում են նույն իմաստն արտահայտելու համար օտար տերմինը և սեփական միջոցներով կերտված համարժեք բառը, ապա արևմտահայերենում հաճախ զուգահեռաբար կիրարկվում են միևնույն օտար տերմինին համարժեք հայերենի մեկից ավելի բառ-տերմիններ. համմա. օրինակ՝ ձայնանիշ, երգանիշ, խազ (նոտա), դաշնոն—ձեռնադաշնակ (ակորդեոն) և այլն։ Ուրեմն, կարելի է ասել, որ արևելահայերենը ձգտում է տերմիններու միանշանակության և միաձևության, այն դեպքում, երբ արևմտահայերենում առկա է տերմինային բազմաձևության և նմանաշության երևույթը։

Դա պայմանավորվում է տերմինաբանական համապատասխան հսկողության և պարտադրող մարմնի բացակայությամբ։ Երբեմն էլ առկա է նշվածի հակառակ երևույթը, երբ օտար մի քանի տերմինների դիմաց արևմտահայերենը օգտագործում է հիմնականում մեկ հայերեն տերմին. այսպես, օրինակ՝ եղանակ—տոն, մելոդիա, արիա երեք տար-

բեր իմաստների համար (հմմտ. Մ. Գույումճյանի բառարանի էջ 985), այն դեպքում, երբ արևելահայերենում ըստ արտահայտելիք իմաստի կիրառվում է համապատասխան տերմինը։

4. Երկու գրականներում զուգահեռաբար կիրառվող երաժշտական հայկական բառամթերքից կարելի է նշել հետևյալները՝ դաշնակաձար, երգեհոն, զուգերգ, մեներգ, քավչուրակ, խմբերգ, տավիղ, փող, ճառյակ և այլն։ Ակնհայտ է, որ դրանց գերակշիռ մասը սկսել է կիրառվել հայերենի զարգացման դեռևս հին շրջանում։

5. Երկու գրականներում էլ հավասարապես փոխառած տերմիններից են՝ սոնատ[1], սօնար[2], կանտատա[1]—ֆանդադա[2], օրատորիա[1]—օրատորիօ[2] և այլն։

6. Արևելահայերենի փոխառյալ բառերի դիմաց արևմտահայերենում սեփական բառամթերքով պատճենմամբ են արտահայտվում հետևյալ տերմինները. յուշիկ—ադաժիո, շարանվագ—սյուիտա, ներդաշն—ակորդ, վիպանվագ—ռեչիտատիվ, նվագահանդես—կոնցերտ, վիպերգություն—ռոմանս, նրբասիրից—կլարնետ, տաղիմն—կանտատա, և այլն։ Այդ ձևով արևմտահայերենը պատճենում է գրեթե բոլոր տերմինները՝ բաս—բամբ, ալտ—բարձր, բեմոլ—կիսվար, սոպրանո—բարձրագիլ, զիլ, պրելյուդ—բացերգ, բալլադ—գեղոն, գողտերգ, դիեզ—կիսվեր, ակորդեոն—դաշնօն, սուբդոմինանտ—ենթախազ, լիբրետո—երգաբատերագիրք, դիվերտիմենտո—զվարթանվագ, բալետ—բատերապար, օպերա—բատերերգություն, պոլկա—լեհապար, օպերետ—կարճ բատերերգություն, նոտաների գիրք—խազգիրք, սոլֆեջիո—խազերգություն, մեցո սոպրանո—կիսազիլ, ռիթմ—կշռույթ, կշիռ, ռիթմիկ—կշռական, ռապսոդիա—հագներգություն, սիմֆոնիա—համանվագ, սիմֆոնիկ—համանվագային, սոնատա—հատանվագ, իմպերվալ—միջոց և այլն։

7. Ստորև բերվող շարքերից զուգահեռաբար երկու ձևերն էլ կիրառում է արևելահայերենը, արևմտահայերենը՝ միայն առաջին ձևերը. աշխույժ—ալեգրո, եռանվագ—տրիո, երաժշտանոց—կոնսերվատորիա, յոթնյակ—սեպտետ, քավածայն—բարիտոն, կիսաբարձր—կոնտրալտո, ձեռնադաշնակահար—ակորդեոնիստ, մաղթանվագ—հիմն, ությակ—օկտետ, մանրապար, մանրակավալ—մենուետ, ցայգանվագ—սերենադ, ցայգերգ—նոկտյուրն և այլն։

8. Առանձին դեպքերում օտար տերմինի փոխարեն կիրառվող հայերեն համարժեքները երկու գրականներում արմատային մասով համընկնելով՝ տարբերություններ են ի հայտ բերում ածանցական մասում.

ինչպես, օրինակ՝ -իչ և -ու ածանցների միջոցով՝ սոլիստ բառի համար արևելահայ. մեներգիչ, արևմտահայ. մեներգու: Արևմտահայերենի -իչ-ով ձևը՝ մենաևվագիչ, հատուկ չէ արևելահայերենին: Ու-ով կազմված ձևերից կարելի է նշել նաև նագներգու (ռապսոդ) բառը, որ դարձյալ հատուկ է գրական արևմտահայերենին:

9. Բոլոր օտար բառերի դիմաց զուտ հայկական տերմինների կերտման արևմտահայերենին հատուկ ձգտումը, թեև պայմանավորված է որոշակի, ինչպես նշվեց, օբյեկտիվ պայմաններով (ձուլման վտանգ, գործառական նեղ պայմաններ, ուստի և լեզվական ծայրահեղ խստապահանջության ձգտում), այնուամենայնիվ առանձին դեպքերում հասցրվում է ծայրահեղության. ինչպես, օրինակ՝ պոլկան դարձել է լեհապար, իսկ կլարնետը՝ ևրբարիճգ, լիբրետոն՝ երգաբատերագիրբ և այլն:

10. Հարկ է նշել նաև, որ գրական արևելահայերենում որպես տերմինաշինության գործոն մասնիկներ զուգահեռաբար կիրարկվում են -իստա և -հար ածանցական ձևերը՝ կիթառիստա—կիթառահար:

Նկատելի է, որ հայերեն արմատի դեպքում կիրարկվում է -հար վերջածանցը՝ սրճգահար, ջութակահար, բավջութակահար, թմբկահար, տավղահար և այլն:

Արմատի փոխառյալ լինելու դեպքում կցվում է -իստա վերջածանցը՝ ակորդեոնիստա, ֆյամանշիստա, բառիստա, բանդուրիստա և այլն: Ինչպես նշվեց վերը, գրական արևմտահայերենում առկա ընդհանուր ձգտման (հայացման) առկայությամբ պայմանավորված՝ հանդես է գալիս միայն -հար վերջածանցը: -Իստա ածանցի մասին լեզվաբանական գրականության մեջ կարդում ենք. «Այս ածանցը հիմնականում գործածվում է փոխառյալ բառերում և սակավ դեպքերում է հայերենում կազմում նոր բառ: Այդպիսիք են՝ բառիստա, ֆյամանշիստա» (ԻԲ. Ջ. 127): Ասվածը ճշտումի կարիք ունի. ակնհայտ է, որ ածանցից ձախ ընկած մասը նույնպես փոխառություն է: Լեզվի զարգացման հնագույն շրջանում կատարված փոխառությունների նկատմամբ օրինքը կարող է նաև չգործել, այդպիսի բառերը «բնիկ» դիտելով:

Այսպիսով, երկու գրականներում էլ, ըստ էության, երաժշտական գործիք նվագողի իմաստ արտահայտելու հիմնական ածանցն է -հար-ը. հմմտ. դաշնահար—ակորդեոնիստա: Որպես սահմանափակ ոլորտ ունեցող ածանցներ նշելի են՝ -հան-ը (երգահան), -ող-ը՝ ցայգերգող[2] (serenader) և այլն:

Աշխարհագրական տերմինների զուգադրության համար ընտրվել է պետությունների անունների ոլորտը, որտեղ ի հայտ են գալիս երկու գրականների միջև տակա հետևյալ տարբերությունները.

1. Անվանումների մյուս ոլորտների նման, այստեղ ևս երկու գրականները հետևում են փոխառու լեզվի մեջ ավյալ բառի ինչվանը, իսկ քանի որ արևելահայերենը փոխ է առնում գերազանցապես ռուսերենից, արևմտահայերենը՝ ֆրանսերենից, նշված լեզուներում փոխառյալ բառերի հնչման առանձնահատկություններով պայմանավորված՝ առաջանում են նաև բառաձևային որոշակի տարբերություններ մեր երկու գրականների միջև: Դրանցից նշենք հետևյալները. ա) վերջամանիկային տարբերություններ՝ Պարագվայ[1]—Բարակուէյ[2], Ուրուգվայ[1]—Ուրուկուէյ[2]: բ) Մի շարք պետությունների անվանումների մեջ արևելահայերենում առկա վերջածանցային -իա մասնիկը արևմտահայերենում բացակայում է՝ Ճապոնիա[1]—Ճաբոն[2], Շվեդիա[1]—Շուէտ[2], Պորտուգալիա[1]—Բորթուգալ[2]: գ) Առանձին դեպքերում -իա մասնիկի փոխարեն արևմտահայերենում հանդես է գալիս ա-ն, ինչպես՝ Ֆրանսիա[1]—Ֆրանսա[2], Հոլանդիա[1]—Հոլանտա[2], Իսլանդիա[1]—Իսլանտա[2], Նոր Զելանդիա[1]—Նոր Զելանտա[2], Բելգիա[1]—Պելճիքա[2]: Ինչպես տեսնում ենք, այս կաղապարը բավական տարածված է: դ) Արևելահայերենում -ա-ով վերջացող բառի դիմաց արևմտահայերենում առկա առանց ա-ի և որոշակի հնչյունափոխության ենթարկված ձևը՝ Արգենտինա[1]—Արժանթին[2]:

2. Ինչպես նկատելի է, երկու գրականների աշխարհագրական (իմասնավորի՝ պետությունների) անվանումների միջև եղած ձևային տարբերությունները հիմնականում կենտրոնացած են բառավերջում (փոխառու լեզվում ածանցային արժեք ունենալու հանգամանքով): Այդպիսիք, առկայն, բացի բառավերջից, դրսևորվում են նաև բառամիջում, ինչպես՝ Վենեսուելա[1]—Վենեցուելա[2], Ռումինիա[1]—Ռումանիա[2], Սիրիա[1]—Սուրիա[2], Ֆիլիպինյան կղզիներ[1]—Ֆիլիպյան կղզիք[2] և այլն:

3. Առանձին դեպքերում տերմինային տարաձևությունները առաջանում են բառասկզբում, պայմանավորված հնչյունի սղումով, այլև հնչյունափոխությամբ, օրինակ՝ Իսպանիա[1]—Սպանիա[2], Կուբա[1]—Քուպա[2]:

4. Վերջապես, եղակի դեպքերում, առաջին կետում նշված երևույթով պայմանավորված՝ առաջանում են ձևային էական տարբերություններ, ինչպես՝ Դանիա[1]—Տանեմարք[2]: Ամփոփելով, կարելի է նշել, որ երկու գրականները աշխարհագրական անվանումների ոլորտում ի հայտ են բերում զգալի տարաձևություններ:

Քիմիական տարրերի պարբերական համակարգի տերմինների զու-

գաղությունը երկու գրականներում հանգեցնում է հետևյալ եղրակացությունների.

1. Պատմական Հայաստանում հնուց ի վեր օգտագործված մետաղների և այլ նյութերի անվանումները երկու գրականներում աչքի են ընկնում նույնաձևությամբ, ինչպես, օրինակ՝ աճագ, արծաթ, երկաթ, կապար, ոսկի, պղինձ, սնդիկ և այլն:

2. Ինչպես և այլ լեզուներում, քիմիական տարրերի նշանակալից մասը երկու գրականներում էլ զուտ փոխառություններ են (անգամ արևմտահայերենում՝ վերոհիշյալ սկզբունքի առկայության դեպքում) քիմիական տարրերի շուրջ 60%-ը (103-ից շուրջ 60-ը), ինչպես՝ արգոն, ցինկ (զինկ)[2], լանթան, կորալտ, բիսմուտ, տանտալ, ռադոն և այլն: Բացի նշված բառերից, արևելահայերենում փոխառությունների թիվը շատ ավելի է. մի շարք դեպքերում, երբ հնարավոր է թարգմանել փոխառու լեզվում տերմինի արտահայտած իմաստը, արևմտահայերենը սովորաբար դիմում է «պատճենման» սկզբունքին, ինչպես՝ ֆոսֆոր—լուսածին, պլատին—լուսնոսկի, անտիմոն—ծարիր, ցեզիում—խաժիկ, յոդ—մանիշ: Երբեմն ամբողջությամբ օտար տերմինը ի վիճակի չլինելով թարգմանելու, «հայացվում է» տերմինի սկիզբը, ինչպես՝ ևեոդիմ—նորադեմիոն, ևեռն—նորոն, գլյուցինիում—ֆաղցրիոն, պրազեոդիմ—կանաչ աղիմիոն և այլն:

3. Երբեմն երկու գրականներում էլ համապատասխան տերմինը ինքնուրույն արտահայտվում է հայերեն համարժեքներով, սակայն գրսևորվում է բառակազմական տարբեր «իրացումներով», ինչպես C-ի համար՝ ածխածին[1]—բնածուխ[2]:

4. Երկու գրականներում էլ քիմիական տերմինների կազմման ժամանակ որպես գործուն ածանցներ հանդես են գալիս հետևյալները. արևելահայերենում՝ -իում, -ում, որոնց համապատասխանում են արևմտահայերենի դարձյալ գործուն ածանցներ -իոն, -ոն-ը՝ բերիլիում—բերիլիոն, գերմանիում—գերմանիոն, թալիում—թալիոն և այլն: Իոն-ի արևմտահայերենում սերման լայն հնարավորություններ ունենալու մասին է վկայում այն փաստը, որ յուրաքանչյուր նոր հայտնաբերված քիմիական տարր անպայման ձևավորվում է այդ մասնիկով, ինչպես՝ Այնշտայնիում—էյնշտեյնիոն: -Ոն-ը այնպես է մերվել արևմտահայերենի քիմիական տարրերի անվանումներին, որ գիտակցում է որպես այդպիսի տերմինակազմիչ և հանդես է գալիս հայերեն արմատների բաղադրությամբ. այսպես՝ արևելահայերենի Սելենին արևմտահայերենում համապատասխանում է Լուսնիոնը, ակտինիումին՝ Լուսոնը և այլն:

Որպես տերմինակազմիչ վերջնամասնիկ արևմտահայերենում կարելի է նշել նաև, դարձյալ ֆրանսերենի ազդեցությամբ, -իճ-ը, ինչպես, օրինակ՝ ֆառ-ը—ծորին, բրոմի հոմանիշը՝ ժահին: Բայց -իոն, -ոմ, -ոն, -ծիճ վերջամասնիկների համեմատությամբ -իճը խիստ սահմանափակ տարածում ունի:

5. -Միճը նույնպես հանդես է գալիս որպես տերմինակազմիչ տարր երկու գրականներում էլ՝ բթվածիճ, ջրածիճ. արևմտահայերենում այն ավելի լայն տարածում ունի, ինչպես՝ ալյումիճ—պաղեղածիճ, ազոտ—բորակածիճ, ֆոսֆոր—լուսածիճ և այլն:

Դարասկզբին ֆրանսերենի ազդեցությամբ արևմտահայերենում կիրառված քիմիական մի շարք տերմինների մասնիկներ՝ աա, իա, ուա հետագայում գործածության լայն շրջանակներ չստացան և նրանցով կազմված ձևերը, ինչպես՝ աա—բնածխաա (կարբոնաա) այժմ հայտնի է բնածուխ ձևով, ծծմբիա (սուլֆիա), ուա—բթվուա և այլն (համմ. ԺԳ. էջ 134):

6. Տերմինային պատճենման, թարգմանության հարցում արևմտահայերենը հետևողականորեն կիրառում է իր որդեգրած սկզբունքները, որոնք երբեմն հասցնում են ծայրահեղության, հայացնելով՝ սիցիլիու-մը—բնագայլախազ, ազոտ—բորակածիճ և այլն (համմ. նաև էէ):

Բերված օրինակներում օտար տերմինների առավելություններից է հենց թեկուզ նրանց որոշակի սեղմությունը: Ահա այդ սկզբունքը, որ այլ պարագաներում հաշվի է առնվում, քիմիական տերմինների ոլորտում երբեմն անտեսվում է. օրինակ՝ ֆլոր կարճ ձևի փոխարեն արևմտահայերենը նախընտրում է ֆլորիոն ձևը:

Գրական հայերենում տերմինային բազմաձևությունների խուսափելու ուղղությամբ այժմ հսկայական աշխատանք է տարվում: Ահա թե ինչ է նշվում այդ կապակցությամբ ճյուղային բառարաններից մեկի («Ռուս-հայերեն ֆիզիոլոգիական տերմինների բառարան») առաջաբանում. «...Գիտական աշխատություններում հաճախ են օգտագործվում լատիներեն, անգլերեն կամ ռուսերեն տերմիններ, այն դեպքում, երբ կան հայերեն ոչ պակաս բարեհնչուն և դիպուկ համանիշներ: Բացի դրանից, տարբեր գիտաշխատողներ, փորձելով օգտագործել հայկական տերմիններ, միևնույն երևույթի կամ հասկացության համար հաճախ կիրառում են տարբեր բառեր և արտահայտություններ, որոնք երբեմն ոչ միայն ճիշտ չեն, այլև ստեղծում են մեծ շփոթ ու խայտաբղետություն» (անդ, էջ 5): Այդ նշանակում է, որ ինչպես առհասարակ գիտա-

տեխնիկական տերմինաբանությանն է հատուկ, գործ ունենք երկու կարգի երևույթների հետ. մի դեպքում՝ առանց խորականության, օգտագործվում են օտար տերմինները, երբ հրապարակի վրա կան բավական հաչող մայրենի ձևերը և մյուս դեպքում՝ կա մաքրամոլության ծայրահեղ վիճակ, երբ բոլոր օտար տերմինները ճղնում են «հայացնել» և արդելք հանդիսանում որևէ փոխառության, այդ ձևով կարելով լեզվի հարստացման արտաքին աղբյուրը: Բնականաբար, երկու ուղիներն էլ ծայրահեղ լինելով՝ ընդունելի չեն: Հարցի ճշգրիտ լուծումը պետք է գտնել ընտրելով միջին և խոհեմ ճանապարհը. այն դեպքում, երբ մայրենի լեզվի բառամթերքը չունի համապատասխան տերմինի համարժեքը, առանց վարանելու դիմել փոխառության, ինչ որ անում է արևելահայերենը:

Վերջինիս հատուկ է առաջնորդվելը ոչ թե մաքրամոլության չափանիշներով, այլ այն բանով, թե որքանով ճիշտ և հարազատ է արտահայտում տվյալ հայերեն համարժեքը միջազգային կամ օտար տերմինը: Այսինքն՝ հաշվի է առնվում տերմինային համարժեքությունը, այն դեպքում, երբ լեզվի գոյապայքարի պատճառներով պայմանավորված՝ արևմտահայերենը սկզբունք է ընդունում լեզուն օտար փոխառություններից հեռու, «անաղարտ» պահելը: Ահա թե ինչու արևելահայերենը նույն իմաստի համար օգտագործում է հաճախ օտար բառ, արևմտահայերենը՝ բնիկ. հարցն այն է, որ հայերեն համանիշը «ծածկում է» տվյալ տերմինի ոչ ամբողջական ոլորտը. մի օրինակ վերոհիշյալ ֆիզիոլոգիական բառարանից. «ֆիզիոլոգիա տերմինը թարգմանելիս գերապատվությունը տվել ենք «ֆիզիոլոգիային» և ոչ թե «բնախոսությանը». բնախոսություն տերմինը, մեր կարծիքով, ոչ բոլոր դեպքերում է համարժեք ձևով փոխարինում ֆիզիոլոգիային (անդ, էջ 7)»: Կարելի է օրինակները շարունակել, բայց երևույթը միանգամայն պարզ է, որ որևէ տերմինի թարգմանության ժամանակ պետք է հաշվի առնել նաև տվյալ տերմինի իմաստային բոլոր կիրառություններն ընդգրկող դաշտը և եթե հայերեն համարժեքը ի վիճակի է կատարելու օտար տերմինի բոլոր կիրառությունները, ապա անվերապահորեն պետք է դիմել բնիկ հայերեն բառի գործածությանը:

Հայոց լեզվի գիտատեխնիկական տերմինաբանության հարաճուն զարգացման ներկա ժամանակաշրջանում կիրառվող օտար տերմինները կարելի է դասակարգել երկու խմբի՝

1. Տերմիններ, որոնք չունեն իրենց դուգահեռ հայերեն տարբերակները: Հայոց լեզվի բառաստեղծական լայն հնարավորությունների շնոր-

հիվ այդպիսիք թվապես (քանակապես) փոքր տոկոս են կազմում։ Դրանք շատ ավելի քիչ են գրական արևմտահայերենում։

Խոսակցական արևմտահայերենում փոխառությունների թիվը եթե ոչ ավելի, գոնե պակաս չէ արևելահայերենից. համմտ. «Թրաֆիկի մեջ ինկա, և ախիդան եղավ»—«ինքնաշարժների խճողման մեջ ինկա, և արկած (վթար) եղավ...» և այլն։

2. Տերմիններ, որոնք ունեն հայերեն զուգահեռ ձևերը։ Այդպիսիք երկու գրականներում էլ շատ ավելի մեծ թիվ են կազմում։ Օտար և հայերեն տերմինների մրցակցության հարցը ներկայիս հայ տերմինագիտության կարևոր խնդիրներից է։ Տերմինային կրկնակ ձևերից որևէ մեկին առաջնություն տալու կամ չտալու հարցը, ինչպես նշվեց, արևելահայերենում կառավարվում է հատուկ մարմնի՝ տերմինաբանական կոմիտեի, կողմից, մինչդեռ այդ գործը արևմտահայերենում իրականացվում է առանձին անհատների ճիգերով։

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև տերմինների խոնքամասային պատկանելության հարցը։ Ինչպես այլ լեզուներում, երկու գրականներում էլ, տեխնիկական և մաթեմատիկական տերմինների ղգալի մասը գոյականներ են, ընդ որում՝ տեխնիկայում ղգալի թիվ են կազմում բայանունները։ Մինչդեռ մաթեմատիկական տերմինների ոլորտում ղգալի տոկոս են կազմում նաև ածականները, որոնց մեծ մասը հանդես է գալիս նաև գոյականաբար։ Արդի հայերենը մաթեմատիկական տերմինների շոշափելի մասը ժառանգել է գրաբարից և երկու գրականներում ընդհանուր է։ Այդպիսիք ժամանակին (սկսած Շիրակացուց) փոխառվում էին պատճենմամբ։

Թեև բայ-տերմինների թիվը ղգալիորեն քիչ է, բայց նրանք, ինչպես այլ լեզուներում, երկու գրականներում էլ հաճախ են հանդես գալիս որպես բառակապակցությունների բաղադրիչ։

Եթե բժշկագիտական, կենսաբանական և այլ տերմիններին, լեզվի ոչ տերմինային արժեք ունեցող բառերին հատուկ հականշային շարքեր կազմելը հատուկ չի լինում, ապա մաթեմատիկական տերմինների համար սովորաբար այն բնորոշ է լինում, ինչպես՝ մեծ–փոքր, համաչափություն–անհամաչափություն և այլն։ Հենց թեկուզ բերված օրինակներից կարելի է նկատել, որ տերմինային հականիշներ կարող են կազմվել ինչպես նույն արմատից, ժխատական ածանցներով, այնպես էլ տարբեր արմատների միջոցով։

Ինչպիսի՞ն է օտար փոխառությունների միջոցով պատճենված

բառերի փոխառու լեզվում ավյալ բառերի ձևաիմաստային փոխհարաբերության հարցը. հետաքրքիր է նկատել, որ այսպես կոչված «անհաջող տերմինների» թիվը մաթեմատիկայում շատ չէ: Ընդ որում եղածների զգալի մասը «պատճառաբանված է» փոխառու լեզվով. այսինքն՝ պատճենված տերմինը ունենում է նույն թերությունը, ինչ որ առկա է եղել նաև փոխառու լեզվում: Այսպես, օրինակ՝ հայերենում ունենք «անսահման փոքր» մաթեմատիկական տերմինը, որ ռուսերենի бесконечно малая տերմինի թարգմանությունն է (ֆրանս. infiniment petit և այլն: Այս տերմինի թերության մասին ժամանակին նշել է Խինչինը (ԿԶ. 36). «Անսահման փոքր» տերմինը ժամանակավրիպանք է պարզապես. այն հարկ է փոխել «անսահման նվազող» կամ այլ տերմինով, քանի որ «անսահման փոքր» տերմինը մատնանշում է ոչ թե նրա չափերը (անսահման փոքրը կարող է լինել նաև անսահման մեծ), այլ նրա փոփոխության բնույթը (բնութագիրը)»:

Լեզվի զարգացման արդի փուլում արևելահայերենը հարաճուն կարիք է զգում նորանոր տերմինների՝ գիտության, տեխնիկայի բուռն զարգացմամբ պայմանավորված, մինչդեռ գրական արևմտահայերենը նման սուր կարիք, անհրաժեշտություն չի զգում՝ վերոհիշյալ պատճառներով պայմանավորված: Թերևս այդ պատճառով արևմտահայերենում ստեղծված գիտական տերմինների զգալի մասը այդպես էլ մնում է բառարաններում, կիրառման ասպարեզ չգտնելով:

Այլ է տեխնիկական տերմինաբանության պարագան՝ ճեռատեսիլ, ճեռածայն, պատկերասփյուռ, շարժանկար և այլն, որոնք հանդես են գալիս նաև չեզոք ոճում և լայնորեն կիրառվում են լեզվահաղորդակցման ընդհանրական ոլորտում:

Հետաքրքրական է նշել, որ ի տարբերություն մի շարք լեզունների (ռուսերեն, պարսկերեն և այլն), մեր երկու գրականները հիբրիդ-տերմինների կիրառության քիչ են դիմում հետևյալ պատճառով. ավյալ հունական կամ լատինական նախամասնիկները գերազանցապես թարգմանված են հայերենի լեզվի զարգացման դեռևս գրաբար շրջանում. հիշեցնենք հունաբան դպրոցի ժամանակ պատճենված նախամասնիկները: Այդուհանդերձ, հանդիպում են նաև այնպիսի հիբրիդ-տերմիններ, ինչպիսիք են՝ էլեկտրասարք[1], էլեկտրասարք[2], էլեկտրակայան[1], էլեկտրակայան[2] և այլն: Երկու գրականներում էլ հարաբերաբար ավելի քիչ են այնպիսի հիբրիդ-տերմինները, ուր օտար բաղադրիչը հանդես է գալիս վերջնային դիրքում. սովորաբար փոխառությունների ժամանակ բա-

ռերը վերցվում են կամ ամբողջությամբ, կամ թարգմանվում են բոլոր բաղադրիչները։ Շատ ավելի տարածված է օտար բառարմատի, ածանցավոր բառի և սեփական (հայկական) ածանցի բաղադրությունը՝ կոմունիստ—կոմունիստական, կոմունիստաբար, վալենտականություն, ավիամոդելային և այլն։

Օտար տերմինների պատճենման ժամանակ միշտ չէ, որ ուղղագիծ կերպով արևելահայերենը նույնությամբ բառը առնում է ռուսերենից, իսկ արևմտահայերենը՝ ֆրանսերենից. լավագույն դեպքերում կատարվում է զուգադրություն փոխատու լեզվում և միջազգային ոլորտում տվյալ տերմինի ունեցած իմաստների միջև։ Բերենք մի օրինակ՝ «Որոշ տերմիններ թարգմանելիս նկատի ենք ունեցել նրանց ֆիզիոլոգիական իմաստը,—կարդում ենք «Ռուս-հայերեն ֆիզիոլոգիական տերմինների բառարան»-ի առաջաբանում,—և ոչ թե ռուսերեն բառի ճիշտ բառադրանային նշանակությունը։ Օրինակ՝ «խոլոդնոկրովնոյե ժիվոտնոյե» և «Տեպլոկրովնոյե ժիվոտնոյե» տերմինները հայերեն ենք թարգմանել համապատասխանաբար «փոփոխաջերմ կենդանի» և «կայունաջերմ կենդանի», քանի որ «Սառնարյուն կենդանի» և «Տաքարյուն կենդանի» տերմինները իմաստի տեսակետից ճիշտ չեն» (էջ 5)։ Որպես հիմնավորում բերվում է հունարենում տվյալ միավորի ունեցած իմաստը։

Բերենք հիբրիդ-տերմինների մի քանի նմուշ, որոնց ա) առաջին բաղադրիչը օտար բառ է, իսկ երկրորդը՝ հայկական՝ ավիատիեզերական, վիտամինաճաղց, ալերգիական և այլն, բ) երկրորդ բաղադրիչը փոխառություն է՝ առանցքապլազմա, հակաթրոմբին, ջրասպորա և այլն։

Հիբրիդ-տերմիններով հարաբերաբար ավելի հարուստ է գրական արևելահայերենը։ Տերմինի ամբողջությամբ պատճենման (հայացման) դեպքում բառի երկարության տեսակետից հայերեն համարժեքը սովորաբար կամ նույն վանկաքանակն է ունենում, կամ՝ 1—2 վանկով կարճ է ստացվում փոխատու լեզվի համապատասխան տերմինից։ Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, սակայն բավարարվենք վերոհիշյալ բառարանի միայն առաջին երեք էջերից քաղածով.

(4)Аббревиация—*կարճացում (3)*
(5)Абдоминальный—*որովայնային (5)*
Абдукор (3)—*զատիչ (2)*
Аберрация (4)—*շեղում (2)*
Абиогенный (4)—*անկենսածին (4)*
Аболиция (4)—*վերացում (3)*
Автопоилка(5)—*ինքնախմոց (4)*
Автотомия(4)—*ինքնահատում(4)*
Агент (2)—*գործոն (2)*
Агломерат(4)—*կույտ (1)*
Адаптация (4)—*հարմարում(3)*
Адекватный (4)—*նույնական(3)*

Абсорбент (3)—*ներծծիչ (3)* Аденома(4)—*գեղձուռուցք(3)*
Авитаминоз(5)—*վիտամինազրկություն(5)* Абсорциометр(4)—*ներծծաչափ (4) և այլն։*

Անշուշտ, ագրոմեռատ-կույտ-ի նման դեպքեր հազվադեպ են, ուր օտար բառավանկ տերմինի դիմաց հայերենում առկա է միավանկ տերմինը։ Քննած հատվածում առկա են նաև դեպքեր, երբ հայերեն համարժեքները ավելի երկար են ստացվել։ Ահա դրանցից՝ աբիոզ—անկենսունակություն, աբիտոֆիա—անկենսասնություն, ավտոռադիոգրաֆիա—ինքնաճառագայթագրություն, ագամիա—անզուգավորություն և այլն։ Նման դեպքերում սովորաբար հայերենում հանդես են գալիս ություն, ային երկարավուն ածանցներ։ Այդ է պատճառը, որ հայերեն տերմինները երկարավուն են, ինչպես, օրինակ՝ ամինոգրաֆիա—ջրաբաղանթագրություն, ամուզիա—աներաժշտականություն, անտրոպէկոլոգիա—մարդամիջավայրաբանություն և այլն։ Ընդ որում երկար տերմինների «տիպաբանությունը» նույնն է նաև արևմտահայ գրականում. պատճառներից մեկը նույնն է՝ ություն, ային, ական ածանցների հնչյունառատությունը։

Օտար տերմինների փոխառության դեպքում անգամ երկու գրականներում հաճախ առաջանում են որոշակի ձևական (հիմնականում՝ հընչյունական) տարբերություններ։ Դրանք գերազանցապես պայմանավորված են փոխառու մեկ լեզվի փոխարեն երկու լեզուներով, որոնց միջ փոխառյալ բառն արդեն ունի հնչյունական-արտասանական որոշակի տարբերություններ, ինչպես, օրինակ՝ բալեա—բալե, բրոնխիա—բրոնշիա և այլն։ Առաջինները ռուսերենից են անցել արևելահայերենին, երկրորդ ձևերը՝ ֆրանսերենից արևմտահայերենին։ Նույնն է նաև բուֆետ-բուֆե-ի դեպքում։ Այստեղից կարելի է եզրակացնել, որ արևմտահայերենը փոխառության ժամանակ հետևել է ֆրանսերենի ոչ թե գրությանը, որտեղ այդ ա-ն կար, այլ արտասանությանը։

Եթե երկու գրականների փոխառությունների աղբյուրը պարզ է և հայագիտության մեջ տարակարծության տեղիք չի կարող տալ, ապա դեռևս չի ուսումնասիրված այն հարցը, թե նորագույն փոխառությունները արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարի ի՞նչ տոկոսն են կազմում։ Որպես մի փորձ, վերցրեցինք 1971 թ. ռուսերենով հրատարակված «Словарь новых слов и значений» բառարանը, որը պարունակում է շուրջ 3500 բառ և նշանակություն։ Բնականաբար, այդ

բառերը կապված լինելով հասարակական կյանքի, գիտության և տեխնիկայի արդի հեղափոխության հետ, հիմնականում պետք էր արտացոլվեին նաև արևելահայերենում, որպես միևնույն սոցիալական պայմաններում գործառող լեզու: Մոտավոր հաշվումներով այդ ցանկի հազարից ավելի բառ գործածության մեջ է մտել նաև արևելահայ գրական լեզվում, թեև դրանց միայն մի չնչին մասն է արտացոլված մինչ այժմ տպագրված բացատրական բառարաններում: Բառարաններից դուրս մնացած նոր բառերի և իմաստների հավաքման գործը հաջողությամբ կատարում է Ֆ. Խլղաթյանը: Արդեն լույս է տեսել «Նոր բառեր և իմաստներ» վերնագրով բառարան-տեղեկատուի առաջին պրակը, որ պարունակում է շուրջ հազար բառ և նշանակություն: Բերենք մի քանի նմուշ նոր բառերի ցանկից. ավտոսիրող, ավտոկռունկավար, ավտոմոբիլաշինարար, ավտոալի, ավտոմոտովինեակախաղ, ալգորիթմ, ալերգիկ և այլն:

Ֆ. Խլղաթյանի բառարանում և ընդհանրապես մամուլում տեղ գտած նորաբանությունների զգալի մասը ուղղակի փոխառություններ են: Դրանց գերակշիռ մասը արևմտահայերենում, հասարակական կյանքի պայմաններով պատճառաբանված, տեղ չունի, մի փոքր մասն էլ ներկայացվում է հայերեն պատճենումներով: Ուրեմն, նոր բառերի և իմաստների այն ուղղակի հեղեղը, որ առկա է գրական արևելահայերենում, անհամեմատ թույլ կերպով է տեղ գտնում արևմտահայերենում:

Հարկ է ավելացնել, սակայն, որ բառապաշարի հարաճուն ծավալումը էական փոփոխություններ չի առաջացրել արևելահայերենի ամենահաճախական բառերի ցանկում: Հայտնի է, որ լեզվի ամենահաճախական 1000 բառը «ծածկում է» այդ լեզվի որևէ (ոչ մասնագիտական) տեքստի 80 տոկոսը: Բ. Ղազարյանի «Հաճախականության բառարանի» առաջին հազար բառի քննությունը պարզեց, որ նորագույն փոխառությունները կազմում են բառապաշարի այդ մասի հազիվ 1,5 տոկոսը:

Փոխառությունների և օտարաբանությունների հարցում արևմտահայերը հետաքրքրական ձև են որդեգրել. գրավոր լեզվում բոլոր օտարաբանությունները ընդգծվում են (համմտ. Հ. Աճառյան, Լիակատար քերականության ներածություն հատորը): Այդպիսով հեշտությամբ կարելի է որոշել տեքստի մաքրության աստիճանը: Որքան քիչ են տեքստում ընդգծված բառերը, նշանակում է այնքան մաքուր է տվյալ հեղինակի լեզուն: Մինչև հիմա արևմտահայ գրավոր լեզվում կիրառվում է այդ սկզբունքը, մանավանդ պարբերականներում: Դա խթան է հանդիսանում

լրջորեն հետևելու մայրենի լեզվի մաքրությանը։ Հետաքրքրական է, որ արևելահայերենից կատարած վերատպագրություններում ժամանակ նույնպես կիրառվում է այդ սկզբունքը. մուգ տառատեսակով ընդգծում են փոխառյալ բառերը, օտարաբանություններ։

Մեկ խոսքով, ակնհայտ է փոխառությունների հարցում գրական արևմտահայերենի ունեցած անզիջում պահպանողական դիրքը։ Ցավոք, նույնը չենք կարող ասել խոսակցական արևմտահայերենի մասին, ուր մանավանդ վերջին տասնամյակներին թափանցել են բազմաթիվ օտաբաբանություններ՝ բառեր, արտահայտություններ, դարձվածքներ և այլն. ընդ որում, եթե դարասկզբին փոխառությունների աղբյուրը ֆրանսերենն էր, ապա այժմ աղբյուրները շատացել են և դրանց մեջ անպայման պետք է հիշատակել նաև անգլերենը։ Անգլերենից խոսակցական արևմտահայերենին անցած փոխառություններից են վերոբերյալ ձևերը՝ թրաֆիկ (խճողում), փարֆինգ (կայան, կանգառ), ախպդան (արկած, վթար) և այլն։

Օտարաբանությունների հարցում երկու գրականները իրարից հետևյալ «տիպաբանական» ընդհանրությունը. փոխառում են արմատը, իսկ բայական վերջավորությունը (օժանդակ բայաձևերը և այլն) դնում են հայկականը՝ փարֆինգ ընել[2], խող տալ[1]։ Արևելահայերենը (խոսքը՝ խոսակցական տարբերակի մասին է) արմատական մասը փոխառում է ռուսերենից, իսկ խոսակցական արևմտահայերենը՝ ինչպես ֆրանսերենից, անգլերենից, այնպես էլ՝ այն լեզվից, որի գերակայության տարածքում է գտնվում արևմտահայերենի այդ տարբերակը՝ արաբերենից, հունարենից, թուրքերենից և այլն։

Հայտնի է, որ լեզուներում հետաքրքրությամբ փոխառնվող բառաշերտերից են գումանվանումները։ Այսպես, օրինակ՝ ֆրանսերենն անգամ հիմնական գումանվանումների մեծ մասը փոխառել է գերմանական բարբառներից, իսկ ռուսերենը՝ ֆրանսերենից (համմա. Վ. Գակ, Ջուգադրական բառագիտություն, էջ 192)։ Ինչպիսի՞ պատկեր են ներկայացնում մեր երկու գրականները գումային անվանումների խնդրում, ճի՞շտ է արդյոք այն կարծիքը, որ հայերենը հարուստ չէ գումանվանումներով։ Պատասխանելու համար այդ հարցին առանձին-առանձին ուսումնասիրվել են գումանվանումները երկու գրական լեզուներում և ստորև ներկայացվում է նշված բառաշերտի ղուգադրությունը։

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում հիմնական գումանվանումները փոխառություններ են պարսկերենից. այս-

պես, օրինակ՝ կարմիր, սև, սպիտակ պահլավական փոխառություններ են։ Բնիկ հայկական գունանվանումն է դեղինը։ Երկու գրականներում էլ գունային անվանումները արտահայտվում են գերազանցական ածականներով՝ կապույտ, ճերմակ և այլն։ Առանձին գունային նրբերանգներ նշելու համար երկու գրականներն էլ դիմում են ավյալ գունային նրբերանգով բնորոշ առարկայի հետ համեմատության միջոցին՝ բոնգազույն, նարնջագույն և այլն։ Դրան նախորդող աստիճանում գործածվում են վերլուծական ձևեր՝ վարդի գույն, բալի գույն և այլն։

Հետաքրքիր է առանձին գունանվանումների հաճախականության ղուգադրումը. քանի որ արևմտահայերենի համար հաճախականության հավաստի տվյալներ չկան, ուստի ներկայացնենք արևելահայերենի գունանվանումների հաճախականությունը ըստ Բ. Ղազարյանի բառարանի։ Ստորև ներկայացվող ցանկում գունանվանումները տրվում են ըստ նվազող հաճախականության։

Հիմնական գույն	Հաճախականութ.	Հիմնական գույն	Հաճախականութ.
Կանաչ—	923	Սպիտակ	657
Սև—	863	Ճերմակ	373
Կապույտ—	733	Դեղին	172
Կարմիր—	668	Գորշ	97

Համաձայն հնդեվրոպական առանձին լեզուների գունանվանումների վիճակագրության՝ ամենահաճախական գունանվանումներն են՝ սևը, սպիտակը և կարմիրը։ Հայերենում ըստ նվազող հաճախականության՝ կանաչը, սևը և կապույտը։ Թեև ճշգրիտ մոտեցմամբ, իրականում, հայերենում առաջին տեղը պրավում է սպիտակը (եթե սպիտակի արժեքին գումարենք ճերմակի արժեքը, կստանանք 1030, որ ավելի բարձր է, քան կանաչի արժեքը՝ 923)։ Արևմտահայերենում ճերմակի հաճախականությունը ավելի բարձր է առանց հաշվարկի էլ։ Պարզապես վիճակագրական արժեքներով արևմտահայերենում սպիտակն ու ճերմակը իրենց տեղերը փոխում են։ Պատահական չէ, որ հայերենում հենց այդ գույներով՝ կանաչ, սև, կապույտ, կարմիր, ստեղծված են բազմաթիվ դարձվածքներ, արտահայտություններ և այլն, օրինակ՝ կանաչ ճանապարհ, սև սիրտ, կանաչ-կարմիր և այլն։ Հանրահայտ է, որ գույնի բողած տպավորությունը հաճախ կապվում է առարկայի արտաքին տեսքի հետ. այստեղից էլ առաջանում են որոշակի առարկաներին հատուկ գունանվանումներ։ Մի շարք լեզուների պես (ֆրանսերեն, ռուսերեն և այլն) դեռևս հին հայերենում գունային առանձին անվանումներ կապված էին

ձիերի գույների հետ՝ շառատ—թուխ կարմիր ձի (հմմտ. շառագունել), աշխետ—դեղնավուն կարմիր ձի: Դրաբարում սև գույնը որոշակիորեն կապվել է ձիու գույնի հետ՝ սեաւն (հմմտ. Հեծաւ արի արեայն Աւրտաշէս ի սեաւն գեղեցիկ): Արդի լեզվում այլևս այդ կապը չի գիտակցվում: Այդպես հատուկ գունային տարբերակումներ են տրվել աչքերին, մազերին. հմմտ. խաժ՝ երկնագույն, կապտավուն, որտեղից հատուկ անունը՝ խաժակ(ն), պլուզ (կապուտաչյա), ալի, շեկ (ալեխառն, շիկահեր), խարտյաշ և այլն:

Հայտնի է նաև, որ լեզուներում առաջացած գունային նոր նրբերանգների անվանումները տրվում են ըստ 1) բույսերի, 2) կենդանիների, 3) հանքանյութերի, 4) բնության և երևույթների և վերջապես 5) տարբեր առարկաների, նյութերի համապատասխան գույների:

Երկու գրականներում էլ գունային նրբերանգները արտահայտվում են հաճախ բույսերի համապատասխան գույներով՝ վարդագույն, շուշանագույն, ճարճատագույն և այլն: Երկուսում էլ գունանվանումների ցանկը կարելի է ընդարձակել -ագույն, -ավուն, -թույր ածանցներով: Երկու գրականներում գունային անվանումների ցանկը պարունակում է շուրջ 400 բառ-միավոր: Այսինքն՝ փաստորեն հայերենում գունանվանումների շերտը բնավ աղքատ չէ: Հետաքրքիր է, թե գունային հիմնական և երկրորդական տոների անվանումները ի՛նչ հարաբերությամբ են հանդես գալիս բառակազմության մեջ. ստորև տրվում են գունային անվանումների (հիմնական խմբավորումների) թվային մեծությունները (այսինքն այն, թե տվյալ գունանվանումով քանի բարդության բաղադրիչ է հանդես գալիս).

սև—33	*կարմիր—81*	*կանաչ—26*	*դոշ—33*
սպիտակ—48	*դեղին—62*	*կապույտ—54*	

Հայտնի է, որ գունային անվանումների խիստ տարբերակումը սկսվել է XIX դ. կեսերից: Այսպես, Նիկ Վոլտերի «Կանդիդում» կա գույնի 22 անվանում, Պրևոյի «Մանոն Լեսկոյում»՝ 20, ապա Ֆլոբերի «Տիկին Բովարիում»՝ 621, «Սալամբոյում»՝ 509, Զոլայի «Ժերմինալում»՝ 814: Եվ դա բնական է, որովհետև իսկապես XIX դ. գունային երանգներին շատ մեծ տեղ տրվեց (հմմտ. տպավորապաշտության ամբողջ ուղղությունը): Հետագայում, հատկապես մեր դարի կեսերին ոչ միայն գունային անվանումների կիրարկման հաճախականությունը մեծացավ, այլև ընդարձակվեց նրանց ցանկը: Դարձյալ բնական մի շարք

պահանջների հետևանքով. նոր և խայտաբղետ արտադրատեսակների և նրանց ճշգրիտ ու միանշանակ անվանումներ ունենալու անհրաժեշտությամբ պայմանավորված: Բնականաբար, ինչպես այլ լեզուներում, մեր երկու գրականներում նույնպես, գունային տարբերակման ուղղությամբ ղգալի փոփոխություններ են տեղի ունեցել, պայմանավորված նաև թարգմանության ժամանակ վերլուծական կամ բառաբարդման ճանապարհով համապատասխան գունային նոր անվանում ստեղծելով: Նման օրինակ գունային մի շարք նրբերանգներ են օգտագործվել, ասենք, Ժ. Սիմենոնի թարգմանություններում (թեև այդտեղ մենք գործ ունենք կրկնակի թարգմանության հետ՝ ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն): Համապատասխան գունանվանման բացակայության դեպքում երկու գրականներն էլ հաճախ դիմում են տվյալ գույնով օժտված առարկայի և գույն (երբեմն՝ ե) վերջաբաղադրիչի կիրառությանը՝ կիճամոնագույն, բրոնզե, արծաթե և այլն: Այդուհանդերձ, գունային նրբերանգների արտահայտման հիմնական ուղին, ինչպես այլ լեզուներում, երկու գրականներում էլ հիմնական գույնի անվանման ձևափոխությունն է: Գույնի ճշման (ճշգրտման) համար օգտագործվում են հետևյալ միջոցները. ա) ուժգնության ածանցները, բ) գույնի ինտենսիվությունը ճշգրտող բառեր, գ) տվյալ նրբերանգով օժտված առարկայի փոխանվանական կիրառություն, դ) նրբերանգի հետ միախառնված հիմնական գույների մատնանշում (ինչպես՝ դեղնակարմրավուն):

Նշենք հիմնական գույների մի քանի ուղղակի և փոխաբերական՝ երկրորդական իմաստներ երկու գրականներում.

1. Սևը, որպես սպիտակի, լույսի (լուսավորի հակադրություն, ունի մի շարք փոխաբերական, երկրորդական իմաստներ, ինչպես, օրինակ՝ ծանր, սև աշխատանք, նախնական՝ սևագրություն, մահագույժ՝ սև թույր, վատ կյանք՝ սև օր, անցանկալի՝ սև ցանկ, ամոթալի վիճակ՝ սևերես, ոչ օրինական առևտուր՝ սև շուկա և այլն:

2. Կանաչը՝ (կանանչը)[2] իր երկրորդական իմաստով նշանակում է խակ, չհաս, այդտեղից էլ՝ անփորձ, սկսնակ: Կանաչ նշանակում է նաև թարմ՝ կանաչ-չոր հակադրության մեջ: Գունային իմաստների փոփոխությունները հաճախ կապված են կյանքի մեջ տեղի ունեցող փոփոխությունների հետ: Օրինակ՝ լուսակիրի լայն տարածմամբ կանաչ ճանապարհ արտահայտությունը հանդես է եկել մի շարք լեզուներում, նշանակելով՝ բաց, ազատ ճանապարհ: Այս դեպքում կանաչը սկսեց հանդես գալ կարմիր գույնի հետ հակադրությամբ՝ կարմիր-փակ, կա-

ճաշ–բաց: *Կանաչը ունի նաև չհղոքության իմաստ՝* կաճաշ գոտի—*կանաչ գիծ (կռվող կողմերի միջև)*:

3. Կապույտը հայերենում ունի հիմնականում մաքրության, պարզության իմաստ. համմ. կապույտ երկինք, կապույտ երազ, կապուտաչյա հայրենիք *(Ե. Չարենց)*: *Պարզության, մաքրության ընդգծումը առանձին դեպքերում հանգեցնում է գույնի կրկնության՝* կապտակապույտ, մաֆրամաֆուր *(Վ. Դավթյան)*:

Ներկայացնենք գունանվանումների կազմման թվային արժեքներն ըստ վերոհիշյալ չորս խմբերի. Հայերենում գունային անվանումներ ամենից շատ կազմվում են բույսերի անուններից (42), ամենից քիչ՝ կենդանիների անուններից (ընդամենը 12), միջին դիրք են գրավում հանքանյութերի անունների բաղադրությամբ կազմվածները (31) և բնության երևույթների և զանազան առարկաների անվանումներով բաղադրված գունանվանումները, ինչպես՝ ծիածանագույն:

Թեև գունային ուժգնություն արտահայտելու համար երկու գրականներում էլ առկա են նեփ–, կաս–, սեփ– *և այլն նախամասնիկները՝* նեփ–ճերմակ, կասկարմիր, սեփ սև *և այլն, սակայն ըստ էության դրանք ավելի բնորոշ են արևմտահայերենին. նշված մասնիկները ավելի հաճախ հանդես են գալիս արևելահայերենի խոսակցական տարբերակում:*

Գունային ուժգնությունը արևելահայերենում հարաբերաբար ավելի հաճախ արտահայտվում է գունանիշ արմատի կրկնությամբ (բացի վերոհիշյալ կապտակապույտ*–ից,* զորշագորշ, բուխ–բուխ *և այլն)*:

բ) Գույնի ուժգնությունը ճշգրտող բառերից են արևելահայերենում վառ, մուգ, բաց *բառ-մասնիկները, արևմտահայերենում՝* վառ, գոց, բաց: *Գունային թույլ երանգավորում նշող* –ավուն *վերջամասնիկը ընդհանուր է երկու գրականներում էլ՝* կաճաշավուն, կարմրավուն *և այլն: Նույն իմաստը արևելահայերենում կարելի է արտահայտել նաև վերլուծական կառույցով՝* գունաթափման աստիճան ցույց+տվող *կապակցությունն՝* կաճաշին տվող, կապույտին տվող: *Արևմտահայերենում նույն իմաստն արտահայտելուն է ծառայում* –կիկ[2] *մասնիկը՝* դեղինկեկ, կարմրկեկ *և այլն: Բայց գույնի համար է ծառայում նաև* ժեռ *վերջամասնիկը՝* դեղնաժեռ—*բաց դեղին,* մրճաժեռ (մրճաժոռ)—*բաց մրագույն, թխամած:*

Հարաբերաբար քիչ տարածում ունի –ոտ–ով *գույնի նվազում արտահայտելը՝* դեղնոտ—*մի քիչ դեղին: Խոսակցականից գրականին անցած հետևյալ կառույցը նույնպես շատ ավելի բնորոշ է արևելահայե-*

բևեռին՝ գունավանում + ավյալ գույնը առավել ցայտուն դրսևորվող գոյական բարդությամբ՝ բուխ-թաճառ, բուխ մուր-սև, սև-մուր (սև-մուր ամպեր—Ա. Խաչակյան)։

Բազմագունությունը երկու գրականներում էլ արտահայտվում է նաև կրկնությամբ՝ գույնզգույն, գույն-գույն։

դ) Փոխաբերական գունանվանումները սովորաբար հեշտ չեն վերարտադրվում մեկ լեզվից մյուսում. օրինակ՝ հայերեն ասում ենք մեխակագույն, հասկանալով կարմիր գույնը, մինչդեռ մեխակը կարող է լինել նաև սպիտակ և այլն։

դ) Երկու գրականներում տարածված երևույթ է նաև հիմնական գույնի մատնանշումը նրբերանգի հետ միախառնված՝ դեղնակարմրավուն, դեղնաճարճագույն, կապտականաչավուն և այլն։

Այսպիսով, երկու գրականներում էլ գունային նրբերանգները տարբերակվում են հաճախ ոչ թե առանձին բառերով, այլ համապատասխան գունային անվանման և բառաքերականական համապատասխան փոփոխականներով՝ -գույն, -երանգ, -է, կեկ[2] վերջամասնիկներով, ինչպես նաև մուգ, բաց, գոց, վառ գունաճշգրտող բառերով (բաց կարմիր, մուգ դարչնագույն և այլն)։ Մուգ, գոց, բաց, վառ բառ-մասնիկների առկայության դեպքում բացառվում է -կեկ[2], ավուն վերջածանցների առկայությունը։

Գունային նրբերանգները երկու գրականներում էլ դուրս են բերվում հիմնական գույների անվանումների բարդացումից՝ դեղնակարմիր, կապտականաչ և այլն։

Երկու գրականներում էլ գունային անվանումները գոյականացվում են, թեև ոչ միշտ՝ կարմիր—կարմիրներ, դեղին—ոսկու իմաստով։

Յուրաքանչյուր գույնի, նրբերանգի հետ կապված է լեզվական որոշակի պատկերացում։ Այսպես, հայերենում դեմքի կարմրությունը կարող է արտահայտվել հետևյալ տարբերակումներով՝ շիկնել (ամոթից), շառագունել (նույնը), կարմրել, կարմրատակել (զայրույթից, տհաճ կարմրություն)։

Հանրահայտ է, որ լեզվից լեզու գունանվանումները համընկնում են իրենց գլխավոր իմաստներով, սակայն տարբերակվում են նրբերանգներով, դարձվածային միավորներում ունեցած իմաստներով։ Այսպես, օրինակ՝ արևելահայերենում որոշակի նրբերանգներով են տարբերակվում սպիտակ—ճերմակ գունանվանումները։

Ինչպես նշվել է, բառը մեկուսացված չի հանդես գալիս բառապա-

շարում, այլ բազմաթիվ բառերի հետ ունեցած ներքին, յուրահատուկ իմաստային կապերով, աղերսներով, իբրև այս կամ այն իմաստային դաշտի միավոր։ Հրապարակի վրա եղած հայերեն բառարանները առայժմ չեն ներկայացնում բառապաշարի իմաստային դաշտերը, հակառակ իրենց պարունակած հսկայական բառամթերքի։ Արևելահայերենի նյութը ներկայացնող բառարաններում հաճախ կողք կողքի ներկայացվում են նաև արևմտահայերենի բառային միավորները, առանց ոլորտային հստակ տարբերակման։ Այդպիսով խաթարվում է բառապաշարային շերտերի համակարգային փոխհարաբերությունների պատկերը։

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներում գերակշռում է գրաբարի բառամթերքը։ Եվ դա պատահական չէ, որովհետև, ինչպես նշվել է հայագիտության մեջ, աշխարհաբարի բառապաշարը ձևավորվելու և մշակվելու ընթացքում որպես աղբյուր կիրառվեց ոչ թե միջին գրական հայերենը, որը լեզվի բնականոն զարգացման ընթացքում (հին>միջին>նոր) պետք է ըստինքյան ենթադրվեր, այլ հին գրական հայերենը (գրաբարը)։ Որպես պատճառ սովորաբար նշվում է այն, որ «միջին գրականը միասնական և կուռ չլինելով՝ կատարյալ չէր, իսկ հին գրականը մշակված էր ու կանոնավոր» (Հայերենի պատմական քերականություն, հ. Ա, էջ 155)։ Եթե մի կողմ թողնենք կուռ, կատարյալ և մշակված ածականները, որոնք համենայն դեպս քիչ բան են ասում, ապա կարելի էր շեշտը դնել միջին գրական հայերենի գրության և հընչումի անմիօրինակության և բառիմաստային թույլ նորմավորման վրա։ Այդուհանդերձ, որոշ հետազոտողների կողմից (հմմտ. վերը) կարծես անտեսվում է այն իրողությունը, որ հատկապես արևմտահայերենի համար զգալի չափով փոխառվեց հենց միջին հայերենի բառամթերքը. մի բան, որ այդպես չեղավ գրական արևելահայերենի համար։ Այնպես որ մեր երկու արդի գրական լեզուների բառապաշարային տարբերությունների մեջ պետք է առանձնացնել այն դեպքերը, երբ արևելահայերենը բառը վերցրել է գրաբարից, արևմտահայերենը՝ միջին հայերենից։ Այդպիսի բառերի մի զգալի մասը (օրինակ՝ ոտ, աղոտ, լմնցնել և այլն) Մ. Մուրադյանի դասակարգմամբ մտցվում են բարբառային բնույթի տարբերությունների մեջ (նույն տեղում, էջ 156)։

Պետք է ասել, որ այդ առումով բառապաշարի շերտերը հետևողականորեն դասդասելիս առաջանում են որոշակի դժվարություններ. իսկապես բառը համարել փոխառություն միջին գրական հայերենի՞ց, թե՞ բարբառներից, եթե այն առկա է եղել երկուսում էլ և մեծ է, ասենք, գրական արևմտահայերենի մեջ։

Առնենք fով *բառը. ըստ Հ. Աճառյանի վկայության,* fով *բառը կիրառված է Մ. Ուռհայեցու, Մ. Հերացու գործերում և այլն (այսինքն՝ միջին գրական հայերենում). այդ դեպքում ինչո՞վ հիմնավորել այն մոտեցումը, որի համաձայն* fով *բառը դրվում է բարբառային այն բառերի ցանկի մեջ, որոնք գրական արևմտահայերենի մեջ են մտել «առանց փոփոխության ենթարկվելու» (տե՛ս Մ. Մուրադյան, ՀԼՊՔ, 156):*

Հաշվի առնելով վերոհիշյալը, ճիշտ կլիներ, եթե fով*-ը դրվեր միջին գրական հայերենից արևմտահայերենին անցած բառերի շարքում:*

Առանձին դեպքերում, որպես ցուցիչ այն բանի, թե տվյալ բառը հին գրական հայերենի՞ց է առնված, թե բարբառներից, կարող է ծառայել Ա. Այտընյանի «Քննական քերականություն» աշխատության մեջ առաջ քաշված հետևյալ սկզբունքը. եթե տվյալ բայահիմքից չի կարելի կազմել –իչ-ով *բայանուն, ապա նշանակում է գործ ունենք բուն աշխարհաբար բայի հետ. այսպես, օրինակ՝* գոցել, ուզել, աճել (ընել)[2], փընտրել (փնտռել)[2] *և այլն (հմմտ. Ա. Այտընյան, Քննական քերականություն, էջ 101): Հարկ է ավելացնել, սակայն, որ տվյալ սկզբունքը ունի նաև բացառություններ. ճիշտ է ուզիչ չկա, ինչպես նաև՝ ընիչ, փնտռիչ, սակայն միանգամայն հնարավոր է հենց բերված ցանկից գոցիչ[2]-ը. իբրև բացիչ-ի հականիշ:*

Այժմ ներկայացնենք երկու գրականների բառապաշարի զուգադրության ըստ՝ 1) գրաբարից ավանդված և 2) բարբառների և միջին հայերենի ճանապարհով աշխարհաբարի մեջ մտած բառաշերտերի:

1. Գրաբարից ավանդված բառացանկում կարելի է առանձնացնել երկու շերտ՝ ա) բնիկ *բառերի և բ) փոխառությունների, որոնց տարբերակումը ժամանակակից հայի համար հեշտ գործ չէ (եթե զուտ ստուգաբանական նպատակներ չեն հետապնդվում): Այսպես, օրինակ՝ այսօրվա հայախոսի համար* բոլ, աճուրդ, զոհ *և այլն ընկալվում են որպես բնիկ հայկական բառեր:*

Բառապաշարի ներկա զուգադրությունից դուրս թողնելով գրաբարյան այնպիսի բառերի քննությունը, որոնք երկու գրականներում էլ պահվել են նույնությամբ (անփոփոխ), հատուկ ուշադրություն ենք դարձրել այն երևույթներին, երբ ա) երկու գրականներից միայն մեկում է առկա տվյալ գրաբարյան բառը և բ) երբ բառն այլի է ընկնում հիմքի կամ խոնարհիչի տարբերություններով: Բերենք օրինակներ ըստ նշված խմբերի.

ա) գրական լեզուներում բառի առկայությամբ/բացակայությամբ բնութագրվող շերտ.

անագան—ուշ	*ավասիկ—ահա(վասիկ)*
ապաքեն—իսկապես (հիրավի)	*երկնչիլ—վախենալ*
զգենուլ—հագնել	*ղենուլ—մորթել*
ընկլուզել—խորասուզվել	*իցիվ—երանի (թե)*
կուլ տալ	*մերովսանն—մենք մեր կողմից*
ղողիլ—ծածկվել	*(մեր ուժերի համեմատ) և այլն:*

բ) բառի ձևաբեականական փոփոխությամբ բնութագրվող բառաշերտ: Պետք է ասել, որ մեր երկու գրականներում տվյալ շերտը անհամեմատ հարուստ է բառի առկայությամբ/բացակայությամբ բնութագրվող բառաշերտից: Ընդ որում ձևաբերականական էական տարբերություններով աչքի է ընկնում արևմտահայերենը: Ստորև բերվող ցանկում առաջադիր բառը արևմտահայերենին հատուկ ձևն է ներկայացնում, վերջադիրը՝ արևելահայերենինը.

առնուլ—առնել	*խնուլ—խցել*
հառնուլ—հառնել	*նրախա—նրեխա*

Նկատելի է, որ բերված բառերի զգալի մասը -ուլ *լծորդությամբ գրաբարյան ձևեր են. բնական է, որ այդ լծորդությունը գրական արևելահայերենին հատուկ չլինելով՝ համապատասխան ձևերն էլ վերածվել են* -ել-ի: *Այս բառերի մեծ մասը ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի բացատրական բառարանում բերվում է առանց ոլորտային պատկանելությունը, առանձին դեպքերում՝ հնացած լինելը նշելու: Համաժամանակյա մոտեցմամբ, դրանց միայն մի մասը իսկապես պետք է դիտել իբրև գրական արևմտահայերենի համար հնացած ձևեր՝* ղողել (ծածկել), զգենուլ (հագնել) *և այլն:*

Գրական արևմտահայերենում կիրառվում են գրաբարյան այնպիսի բայաձևեր, որոնց համարժեքները գրական արևելահայերենում միջածանցային հնհնդական փոփոխությունների են ենթարկվել: Այսպես, օրինակ՝ զարկանել—զարկել, թափուցանել—թափցնել, մատուցանել—մատուցել, կասեցուցանել—կասեցնել *և այլն: Արևմտահայերենին հատուկ է նաև գրաբարյան առանձին հոլովական ձևերից (հատկապես՝ դործիականի) առաջացած մակբայների կիրառությունը. ինչպես՝* աճա-

պարաճոf—շտապելով, անձկաճոf—մեծ կարոտով (անձկությամբ), ընտրաճոf—ընտրությամբ, իրավ—իրոf, դժվարավ—դժվարությամբ, հրապարակավ—հրապարակով, կանխավ—նախապես, կարգավ—կարգով, դյուրավ—դյուրությամբ և այլն:

Ի հակառակ վերոհիշյալի, հաճախ գրական արևելահայերենը պահպանում է դրաբարյան բառը, մինչդեռ գրական արևմտահայերենում դրա փոխարեն կիրառվում է նոր բառ (գերազանցապես բարբառային ոլորտից անցած ձև): Այսպես, օրինակ՝ անդրանիկ բառի փոխարեն գործածվում է առջինեկ ձևը (օրինակները տե՛ս գրական արևմտահայերենի բարբառային շերտի ուսումնասիրությանը նվիրված բաժնում):

Բառերի մի ամբողջ շարք մինչև 20-ական թվականները հավասարապես հատուկ է եղել երկու գրական լեզուներին էլ: Հասարակական կյանքի տարբնթաց զարգացմամբ, դրանց մի զգալի մասը հատկապես գրական արևելահայերենի համար դարձել է հնացած: Այդ գլխաբառերից հետո բառարանները հիմնականում նշում են վերջիններիս հնացած լինելը: Մինչդեռ, քանի որ այդպիսի բառարաններում սովորաբար բերվում են նաև գրական արևմտահայերենին հատուկ բառաձևերը, ճիշտ կլիներ յուրաքանչյուր օրինակի համար մատնանշել բառի ներկայիս ունեցած գործածության ոլորտները (կիրառվում է միայն արևմտահայ ոլորտում կամ հակառակը), մի բան, որ հազվադեպ է արվում: Այսպես՝ աղխատախնամ բառի համար նշվում է, որ այն կիրառվել է մինչև հեղափոխությունը և այժմ սփյուռքահայ գաղթօջախներում շարունակվում է գործածվել: Նույնն է պարագան նաև կաղանդ, կաղանդացույց բառերի: Մինչդեռ կաղանդել բառի համար նշվում է նրա հնացած լինելը, կիրառության ոլորտների մասին ոչինչ չմատնանշելով: Այդ ձևով հնացած է որակվում նաև ապաթարցը, որը գրական արևմտահայերենի կենսագրության կարևորագույն նշաններից է, կրթարանը, որի դիմաց արևելահայերենը գործածում է դպրոց, ուսումնարան բառերը:

Սաորև արվում է բառերի այն ցանկը, որ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի բառարանում բերվում է որպես հնացած բառ, նկատի ունենալով միայն գրական արևելահայերենի ոլորտը, մինչդեռ դրանք շարունակում են լայնորեն կիրառվել սփյուռքահայության կողմից, իբրև գրական արևմտահայերենի կենսունակ բառեր. հոգաբարձու, հոգաբարձություն, ատենապետ, ատենախոս, ատենաբանել, ատենաբանություն, ատենապետական, բանախոսություն, բանախոսել, դիվան, դիվանապետ, դիվանադպիր, երեսփոխան, երեսփոխանություն, երեսփոխանա-

կան, կրթաթոշակ, կրթասիրական, ձախողանք, մաքրագործել, մաքրագործություն և այլն։

Գոյություն ունի բառերի մի շարք էլ, որ հնացած է ոչ միայն գրական արևելահայերենի, այլև, ըստ էության, գրական արևմտահայերենի համար. այսպես, օրինակ՝

կագ—կոխիվ, վեճ	խլատեռ—շղարշ
խեռութիւն—անհնազանդություն	խառել—ոլորելով պոկել և այլն։

Մի շարք բառաձևեր, որոնք ժամանակին գործածվել են ինչպես արձակի, այնպես էլ չափածոյի մեջ արևմտահայ դասականների գործերում, ներկայումս գրական ոլորտի գործածությունից դուրս են մնացել. օրինակ՝ զակատյալ (ԴՋ), ընդուլնել (ԴՎ), կաշկան (ԴՎ) և այլն։

Զակատյալ ձևի հետ կապված հարկ է նշել հետևյալը. յալ-ով վերջացող բազմաթիվ բառերի դիմաց մեր բացատրական բառարաններում առկա «հնացած» նշումը վերաբերում է գրական արևելահայերենին, որովհետև գրական արևելահայերենի ած-ով ձևերի դիմաց արևմտահայերենը գործածում է սովորաբար յալ-ով ձևեր. ինչպես՝

լուսավորյալ—լուսավորված	թորյալ—թորած
զարմացյալ—զարմացած	զարգացյալ—զարգացած։

Երկու գրական վիճակների բառապաշարի զուգադրությունից հեշտությամբ նկատելի է, որ արևմտահայերենում զգալի տեղ են գրավում գրաբարյան այնպիսի բառերը, որոնք արևելահայերենում գործածությունից դուրս են մղված։ Նույն երևույթն է առկա նաև դարձվածաբանական միավորների, նախդրավոր կապակցությունների հարցում։ Արևմտահայերենը հաճախ է դիմում գրաբարյան նախդրավոր ձևերին. այսպես՝ առ ի շգոյե, ըստ կարելվույն, միով բանիվ, հակառակ հանուանէ և այլն, որոնց համապատասխան արևելահայերենի ձևերը զգալի չափով հեռացել են գրաբարյանից, որոշապես մոտենալով խոսակցական լեզվին։ Հարկ է նշել, սակայն, որ վերջին շրջանում գրական արևելահայերենում նույնպես սկսել են աշխուժանալ գրաբարյան նախդրավոր առանձին ձևեր՝ ի շահ, ի նպաստ և այլն։

Այդ առումով հետաքրքրական է խոսակցական լեզու—գրական լեզու փոխհարաբերությունը երկու գրականների համար՝ նկատի ունենալով բառապաշարային երևույթները։ Հայտնի է, որ գրական արևելահայերենը վեր է բարձրացել գերազանցապես Արարատյան բարբառի հիմքից, ինչպես որ գրական արևմտահայերենը հիմնվել է Պոլսի բար-

բառի վրա։ Եթե զուգադրենք խոսակցական այն վիճակները, որոնց վրա բարձրացան նշված գրականները, ապա կարելի էր նշել պոլսահայ խոսակցականի երքաբանություններով խճողված լինելը։ Պետք չէ մոռանալ, որ, ի վերջո Հայկազյան բառարանն անգամ, որպեսզի հայերեն բառի բացատրությունը մատչելի դարձնի, բերում է բառի թուրքերեն համարժեքը։ Այդ պայմաններում, գրական արևմտահայերենի կազմավորման շրջանից սկսած, բոլոր փուլերում զգալ է տալիս դեպի գրաբարը հակամիտելու ձգտումը. ընդ որում վերջինս իրագործվում է ոչ միայն թուրքական փոխառություններից գրական լեզուն մաքրագործելու նպատակով, այլև ընդհանրապես օտար փոխառությունների դեմն առնելու ձգտումով։ Հարցի շուրջ Հ. Աճառյանի արտահայտած միտքը ճիշտ է նաև արդի մոտեցմամբ. «օտար բառերի գործածության դեմ խիստ են եղել առհասարակ արևմտահայերը, իսկ թույլատու՝ արևելահայերը։ Առաջիններն, եթե ստիպված լինեին էլ գործածել մի օտար բառ, գրում էին շեղատառով*, նոտրգիր կամ մինչև անգամ եվրոպական տառերով, եթե բառը եվրոպական է» (Հ. 401)։ Երևույթի պատճառը պետք է գտնել այն բանի մեջ, որ գրական արևմտահայերենը, ի տարբերություն գրական արևելահայերենի, միշտ գտնվել է ձուլման անմիջական վտանգի տակ և դրանով պայմանավորված՝ դիմել և դիմում է երբեմն անգամ այնպիսի ծայրահեղ միջոցների, որ հայերեն է թարգմանում յուդ, ֆլոր և այլ միջազգային ընդունելություն գտած գիտական տերմիններ։

2. Բարբառների և միջին հայերենի ճանապարհով աշխարհաբարին անցած բառաշերտ. ի տարբերություն արևելահայերենի, գրական արևմտահայերենը բարբառային բառաձևերից հեռու մնալու ձգտումը չի ունեցել։ Իբրև դրա հետևանք, արևմտահայերենում զգալի կշիռ են կազմում այն բառերը, որոնք գրական լեզվի մեջ են անցել բարբառային ոլորտից (նման բառաձևերի դիմաց գրական արևելահայերենը գործածում է հաճախ գրաբարյան բառաձևերը)։ Այսպես՝

ակռա — ատամ	խպնոտություն — ամաչկոտություն
էրիկ, էրիկմարդ — ամուսին	
էրիկմարդություն — տղամարդու-	խոֆել — ծերանալ

---

* Արևմտահայերենի այդ սովորությունը Հ. Աճառյանը համեմատում է լատիներենի հետ. «Այդ դեպքում նրանք (իմա՝ արևմտահայերը — Ա. Ս.) նման էին հին հռոմայեցիներին, որ սիրում էին հունական փոխառությունները դրել հունարեն տառերով՝ մի որևէ լատին գրության մեջ», էջ 401։

թյուն
թալլել—թալանել, կողոպտել
ժուռ—չփոթված, շվարած
ժմնել—գալ-հասնել, մեծանալ
իջնալ—իջնել
ինդոր—ինչպես
խալսել—վերջանալ
խիպ—ամոթ
խման—հարբեցող
կանանչ—կանաչ
կարգել—ամուսնացնել
կուտ—մանր դրամ
կսկլոր—բոլորովին կլոր
հանի—տատ (մեծ մայր)
մամածակ—կեղծավոր, քսու
մնձրել—այրել
մուխը մարել—քայքայել
մտիկ ընել—ունկնդրել և այլն:

Բարբառների և միջին հայերենի ճանապարհով աշխարհաբարին անցած բառաշերտում տեղ են գտել նաև փոխառյալ բառեր. օրինակ՝ խալսել-ը արաբական փոխառություն է, որ արևմտահայ բարբառների միջոցով մտել է գրական լեզվի մեջ:

Գրական արևմտահայերենի մեջ մտած բարբառային բառերից շատերը աչքի են ընկնում բառակազմական լայն հնարավորություններով, ինչպես՝ աղվոր—գեղեցիկ, աղվորություն—գեղեցկություն, աղվորցնել—գեղեցկացնել, աղվորեբես—գեղեցկադեմ և այլն:

Ստորև տրվում են գրական արևմտահայերենում կիրառվող բարբառային հիմքից անցած բառերի համառոտ շարքերը (առանձին-առանձին, ցանկերով տրվում են բառապաշարային ձևերը, ապա՝ բնութագրական տարբերություններ ունեցող բառերը):

1. Բառապաշարային տարբերություններ ունեցող բառաձևեր.

Ադ (ատ)—դա, այդ
ադիկա (ատիկա)—դա, այդ
աղբար—եղբայր
աղեկ—լավ
աղեկ մը—մի լավ
աղեկութիւն—լավ լինելը
աղեկնալ—լավանալ
աղեկցնել—լավացնել
աղվոր—գեղեցիկ
անանկ—այնպիսի
ան—նա
անիկա—նա, այն
անկուտի—աղքատ
առջի—առաջին
առջին—առջև
առտու—առավոտ/յան
աս—այս, սա
ասիկա—այս, սա
ասանկ—այսպես, այսպիսի
ասդին-անդին—այս կողմ այն կողմ
ատենով—ժամանակով
բախտուկ—խեղճ, խեղաո
բրցնել—պոկել
դեշ—վատ
դեշ ըլլալ—իրեն վատ զգալ

գնշ ղրուցիլ—չարախոսել
գնշ օդ—վատ (անբարենպաստ) եղանակ
գոց—փակ, ծածկված
գոցել—կողպել, փակել, ծածկել
դրսեցի—գավառացի, ոչ պոլսեցի
թնճուկ—հանգույց, կնճիռ, բարդություն
լման—ամբողջ, բոլոր, լրիվ
լմննալ—վերջանալ
լմնցնել—վերջացնել, լրացնել
լոլիկ—պոմիդոր, հարբած
լոլիկնալ—հարբել
խաղքություն — խայտառակություն
խել—բավական շատ
խպնել—ամաչել
կոտտալ—վերքը ցավել, մորմոքել
կլթիկ—զկռտոց, հնծկլտուք
հոդ—այդտեղ
հոն—այնտեղ
հոս—այստեղ
հիմակուհիմա—առայժմ, առժամանակ
հնհնուք—հոգս, մտատանջություն
ճիլվե—նաղանք
մեյմեկ—մեկական, մի մի
մեկիկ-մեկիկ—մեկ առ մեկ
մինավորիկ—մենակ, առանձին
մամուկ—սարդ
սպառսպուռ—բոլորովին
վերնոտ—ախտավոր, հանկարծական թալկացում
փսորհիկ—քչիկ, աննշան
քանակ—քանոն
քֆրել—հայհոյել և այլն։

2. Քերականական տարբերություններ ունեցող բառաձևեր.

դպիլ—դիպչիլ
ելլալ—ևլնել
երկննալ—երկարանալ
երկնցնել—երկարացնել
զարնել—զարկել
ըլլալ—լինել
ըլլալիք—լինելիք, արվող
ընել—անել
ընելիք—անելիք
ընքվի—հոնքեր
ըսել—ասել
իյնալ—ընկնել
ինքզինքը—ինքնիրեն
խստիլ—խստանալ
կայնել—կանգնել
կլլել—կուլ տալ
կլլեցնել—կլանել տալ, խաբել
կրնալ—կարողանալ, կարենալ
կորսնցնել—կորցնել
մթննալ—մթնել
մինակ—միայնակ
միս մինակ—միայնակ
ճաթիլ—ճաքիլ
ճաթեցնել—պայթեցնել, ճաքեցնել
ճաթռել—պատառոտվել, քրքրվել
ճանչնալ—ճանաչել և այլն։

Ինչպես նշվել է վերը, յալ-ած ձևերի կապակցությամբ, երկու դրա-

կանոնների բառապաշարի զուգադրության ժամանակ արտահայտության պլանի (ձևական) տարբերությունները հաճախ պայմանավորված են լծորդային տարբերություններով։ Այսպես, եթե ուլ-ով ձևերը կարելի է գերազանցապես հնացած համարել գրական արևմտահայերենի համար (բողոլ և մի քանի այլ ձևերի բացառությամբ), ապա միանգամայն կենսունակ են իլ-ով ձևերը։ Մեր բառարանները, որպես կանոն, հենց այդպիսի ձևերը ներկայացնում են առանց մեկնաբանության, հղելով համապատասխան -ել-ով ձևերին. մինչդեռ, այդպիսով այն տպավորությունն է առաջանում, թե իլ-ով ձևերի դիմաց նախընտրելի են ել-ով ձևերը, այն դեպքում, երբ վերջինս հատուկ է գրական արևելահայերենին, իսկ -իլ-ով ձևերը՝ արևմտահայերենին։

Ստորև բերվում է իլ լծորդության պատկանող արևմտահայերենի բայերի մի շարք (դրանց արևելահայերեն համարժեքները կազմվում են ել-ով կամ վել-ով. օրինակ՝ ախորժիլ—ախորժել, ազատիլ—ազատվել).

	խոսիլ
ախորժիլ	*խոցոտիլ*
ազատիլ	*խրիլ*
այլասերիլ	*խուսափիլ*
այրիլ	*ծաղկիլ*
ապրիլ	*ծավալիլ*
խամրիլ	*ծիծաղիլ*
խանձիլ	*ծլիլ*
խաղաղիլ	*հարձակիլ*
խլրտիլ	*հյուծիլ*
խմորիլ	*հաճիլ*
խոնարհիլ	*հավնիլ*
խորշիլ	*հակիլ*
խորհիլ	*մրկիլ և այլն։*

Ինչպես կարելի է նկատել բերված ցանկից, իլ-ել լծորդային վերջավորությունների պարզ անցումներով երևույթը չի կարելի սպառիչ նկարագրել. առաջանում են կրավորականության երևույթներ (համմտ. ծաղկիլ—ծաղկել, *խոսիլ—խոսել, բայց* խմորիլ—խմորվել, *խրիլ—խրվել և այլն)։*

Հարկ է նշել նաև, որ երբեմն իլ լծորդության բայաձևերի արևելահայերենի համարժեքները ներկայացվում են ալ լծորդությամբ։ Այդպես

է, օրինակ՝ աճիեսիլ—աճիեսանալ, ծորիլ—ծորալ, ծփիլ—ծփալ, երեկոյիլ—երեկոյանալ, երևիլ—երևալ և այլն։

Երկու գրական լեզուների բառապաշարի շերտերի զուգադրության ժամանակ առանձնանում է մի շերտ, որի մեջ մտած բառերը երկուսում էլ միևնույն հիմքից են առաջացել. արևելահայերենում մնացել են անփոփոխ, իսկ արևմտահայերենում բառաձևի տարբերություններ են առաջացել բառամիջի ձայնավորի հնչյունափոխության կամ սղման, առանձին դեպքերում էլ՝ բառասկզբի արմատական ձայնավորի փոփոխության հետևանքով։ Ընդ որում արևմտահայերենի բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ ավելի հաճախ վերականգնում է բառասկզբի արմատական ձայնավորը։ Ըստ այդմ էլ, օրինակները բերվում են երկու ցանկով՝ ա) բառամիջի ձայնավորների հետ կապված փոփոխություններով (սղումով) և բ) բառասկզբի արմատական ձայնավորի վերականգնման հետ կապված փոփոխություններով։

ա) աղոտնալ
ամչկոտ
ամչնալ
անուշնալ
ավելցնելիք
ավելցնել
ավելնալ
ատկել
գինովնալ
գիտնալ
դողնալ
դողցվել
դորեղնալ
թաթխվել
թալնել
թևթևնալ
թևթևցնել
թուլնալ
ժողվվիլ
լայննալ
լուսնալ
խաղցնել
խորվիլ
խորնալ
հիննալ
համովնալ
հասկցնել
հասկնալ
հասունննալ
հավնել
հավնեցնել
հարսնիք
հետևցնել
ճերմկել
ճերմկնալ
ճերմկցնել
մեծնալ
մեծցնել
մեղքնալ
մոռնալ և այլն։

բ) բերվող բառացանկի փակագծերում նշվում են արևելահայ համարժեքները (ինչպես նշվեց, այս շարքով ներկայացնում ենք նմուշներ՝ բառասկզբի արմատական ձայնավորի վերականգնման).

լեցնել (լցնել)
լեցվիլ (լցվել)
լեցունել (լցնել)
խուլնալ (խլանալ)
հինօրյա (հնօրյա)
ջուրոտ (ջրոտ) և այլն։

Երկու գրական լեզուների բառակազմական կաղապարների (հատկապես՝ բառաբարդման) հնարավորությունների համեմատությունը բերում է այն եզրակացության, որ մեկ գրականում կազմված նորաբանությունների (բարդությունների) գերագույն մասը խորթ չէ մյուսին։ Ուրեմն, երկու գրականների տարբերությունները նկատի ունենալով, հարկ է նշել, որ հարցը այս կամ այն հևուցթի նրանցից մեկում կամ մյուսում հնարավոր լինել–չլինելու մեջ չէ, այլ հնարավոր մի քանի ձևվերից այս կամ այն կոնկրետ ձևը իրացնելու մեջ։ Այսինքն, մեր գրականների տարբերությունների մի զգալի մասը արդյունք է նույն հնարավորությունների տարբեր իրացումների։

Անշուշտ, նշվածը վերաբերում է նաև բանաստեղծական խոսքի մեջ հանդես եկած բառաձևերին (նորաբանություններին)։ Որպես լուսաբանություն բերենք մի շարք օրինակներ՝ քաղված ինչպես բանաստեղծական խոսքից, այնպես էլ գրական արձակից.

աղերսարկու
ակնդետ
ամառնաբորբ
դժվարագուսպ
զարմանահար
նթևերաճեմ
զգուշաքայլ
թխաթույր
թոնրննկեց
լրջահոն
խարտիշագես
խարտիշուհի
խարուկահանդես
ծնրադիր
կենդանագիր
կենսախայտ
կիսակատար
կորակոր
հակընդդեմ
համեմաջուր
հարդամած
հարսներդ
հեղակարծ
հնշաօրոր
հեռապատկեր
հերախոհիվ
հերաթափ
հերապանծ
հերոսամերժ
հեքիաթունակ

Ճարտարամտություն
մահաբաղձ
մահածփալ
մարմնակարկառ
մեծասաստ
մեղմավար
մենասեր
մշտավրդով և այլն:

Բանաստեղծական խոսքի մեջ կերտված բարդությունների առանձին օրինակներ, հիրավի, ոճական առանձնահատկություններով նույնպես պայմանավորված են և միշտ չէ, որ լայնորեն գործածության մեջ են դրվում: Այսպես, Դանիել Վարուժանի լեզվական առանձնահատկություններից մեկը կարելի է նշել արփ(ի) *արմատով կազմած բարդությունների (նրա) նախասիրությունը: Այդ կաղապարով բանաստեղծը ստեղծել է՝* արփագաղջ, արփագեղ, արփագունդ, արփախայտ, արփաճամ, արփամուտ, արփավետել, արփիաթև *և այլ բարդությունները, որոնք դարձյալ խորթ չեն գրական արևելահայերենին՝ բարդությունների ընդհանուր կաղապարի տեսանկյունից:*

Երկու գրականների բառապաշարի զուգադրության ժամանակ ի հայտ են գալիս նաև բառակազմական առանձնահատկություններ, ի մասնավորի ածանցման ոլորտում: Նշենք դրանցից կարևորները. ինչպես հայտնի է, գրական արևմտահայերենում, այսպես կոչված, եղանակավորող ածանցները հատուկ են ոչ միայն ածականներին, այլև գոյականներին (ժէ. 134). փոքրացուցիչ-փաղաքշական *այնպիսի ձևեր, ինչպիսիք են* աճոթիկ *(անօգնական),* խաբրիկ *(փոքրիկ լուր),* լրճուկ, խարխլիկ *և այլն շատ սովորական են արևմտահայերենի համար և խոսքին հուզաարտահայտչական երանգ են տալիս:*

Ստորև բերվում են գրական արևմտահայերենին բնորոշ մի շարք ածանցավոր բառաձևերի օրինակներ՝

Աղվորիկ—լավիկ, սիրունիկ
աղջնակ—փոքրիկ աղջիկ
այյակ—փոքր, թևիկ ալիք
աճեցուն—աճող, աճուն
ամուրկիկ—բավական ամուր
անոքիկ—անօգնական
ավուրչեք—օրավարձ
աչվըներ—աչքեր
անտիական—դեռահաս, երիտասարդ
լրբճուկ—տրորված, կեղտոտ
խաղալիկ—խաղալիք
խելոքիկ—փղշ. հանգիստ
խարխլիկ—խարխուլ
խապրիկ—նվզ. փղշ. խապար-ի
խոշորկիկ—խոշորավուն, քիչ խոշոր
խրձիկ, խրձյակ—փոքրիկ խուրձ
խոռվանք—խռովք, հուզում
ծակտի(ք)—ծակոտի

ծնողք(ներ)—ծնողներ
կաղանդչեք—նոր տարվա նվերներ
կանուխկեկ—մի փոքր վաղ
կանաչկեկ—կանաչավուն
կարգուկ—ամուսնացած
կարմրոտի—կարմիր գույն ունեցող
կոտրտուք—սեթևեթանք
հինկեկ—մի քիչ հին
հիշոցք—հիշոց
հարսենի—հարսնության հասած
խմուկ—խմած
խլյակ—աղետի ենթարկված նավի, ժողովրդի (բեկոր, մնացորդ)
հավատչեք—կանխավճար, առգին
հաստկեկ—բավական հաստ
հանկարծույն—հանկարծ
հանկարծուստ—հանկարծակի
հայկակ—հայ մանուկ
հայեվար—հայերեն
համակերպիկ—համակերպվող
հաճոյիկ—հաճելի
կրոնք—կրոն
կուսիկ—փոքրիկ կույս
մարելիք—ուշաթափություն
մարդեղեն—մարդկային
ճանչվող—ծանոթ
մորու—խորթ մայր, մորացու
երիցագույն—ավագագույն
միջնորդչեք—միջնորդավարձ
գեղար—մանր զարդարանք
գնացք—ընթացք
դեղինկեկ—դեղնագույն
զբոսական—զբոսանքի, զվարճալի
ղմայլիկ—ղմայլելի
լայնկեկ—լայնավուն, լայն
թափառկիլ—թափառել
հրաչվի—հրաշյա
հորամույն—հոր նման
մենավորիկ—մենավոր
մեղրիկ—քաղցրիկ
մեղսակցական—մեղավոր
մեծկակ(կեկ)—մեծավուն, բավական մեծ
մեծդի—խոշոր, վիթխարի
բարեմույն—բարեհամբույր
երազամույն—երազուն (-ող)
բերողչեք—փոխադրավարձ
գինիոտ—գինոտ
գողոնք—գողացված ապրանք
երկուք—երկու
մուրիկ—մուրացկան
թանձրկեկ—քիչ թանձր, թանձրավուն
լայնշի—շատ լայն
թափառկոտ—թափառող և այլն։

Բերված բառաձևերից կարելի է նկատել, որ -շի, -կեկ, -շեք, -շի վերջածանցներով բառաձևերը հատուկ են գրական արևմտահայերենին.

1. Մեկ գրականին բնորոշ համադրական որոշ բառաձևեր մյուսում հանդես են գալիս համապատասխան վերլուծական ձևերով. այսպես՝

գողցնել—գողանալ տալ
հուսովցնել—հույս տալ և այլն։

հուսովնալ—հույս ստանալ, ձեռք բերել

2. Երկու գրական լեզուներում էլ առկա են այնպիսի բառախմբեր, որոնք իրենց մեկ կամ մյուս իմաստով նույնանալով, մյուսներով տարբերվում են: Այդպիսի բառերից, բացի վերոհիշյալ ձևերից, բերենք հետևյալ նմուշները.

Գրագետ բառը արևմտահայերենում նշանակում է գրող, արևելահայերենում՝ գրաճանաչ: Բարեկամ բառը արևելահայերենում նշանակում է լայն առումով՝ ազգական, իսկ արևմտահայերենում նշանակում է պարզապես՝ բարի կամեցող:

Անսվաղ բառը արևելահայերենի կողմից կընդունվի որպես չավաղված իմաստ արտահայտող, մինչդեռ արևմտահայերենի իմաստն է՝ անորի, խաղցած:

Մականուն բառը արևելահայերենում նշանակում է «փուք» անուն, կեղծանուն, մինչդեռ արևմտահայերենում նշանակում է ազգանուն (վերջին ձևը գրական արևմտահայերենում քիչ գործածական է):

Գրական արևմտահայերենում վայրկյան բառը արևելահայերենի րոպե-ի իմաստն է արտահայտում. նկատելի է, որ այդ և վերոհիշյալ մի շարք բառերի (մականուն, բանավոր և այլն) «զուտ» արևմտահայ կիրառությունը խրախուսվում է արևմտահայ մամուլի, կրթական հաստատությունների շրջանում:

Ջենք խոսում հանրահայտ ձգել-գցել-ի մասին, որի շուրջ մանրավեպեր (անեկդոտներ) կան ստեղծված:

Հույզ բառը գրական արևմտահայերենում նշանակում է նաև բույսերի մեջ գտնվող մածուցիկ նյութ: Այդտեղից էլ՝ լոլիկաճույզ, որ նշանակում է տոմատի հյութ:

Հով բառը արևելահայերենի զով իմաստից դուրս արևմտահայերենում ունի նաղմ, համի իմաստը:

Գործարան բառը արևմտահայերենում ունի նաև զուգարանի իմաստ. այդ իմաստով զուգարան բառի գործածությունից արևմտահայերը սովորաբար խուսափում են զուգվելու և հատկապես «զույգերի» հետ կապված իմաստային շփոթից վախենալով: Կարելի է թվարկումը շարունակել. օրինակ՝ ժուռնալ—հանդես—լրտեսագիր և այլն, բայց բավարարվենք նշվածներով:

3. Որոշ բառերի իմաստային ավելի հստակ տարբերակման գործում մեր երկու գրականներում առկա են զանազանություններ: Բերենք բնորոշ մի քանի օրինակներ՝

Պատճառով—շնորհիվ: Գրական արևմտահայերենում առաջին բառը

որոշակիորեն կապվում է բացասական երևույթների հետ, երկրորդը՝ դրական: Գրական արևելահայերենում նմանօրինակ խիստ տարբերակում չկա:

Խոշոր—մեծ: Ընդհանրապես դրանք երկու դրականներում էլ դիտվում են որպես հոմանիշներ, թեև արևմտահայերենում դրանց միջև իմաստային որոշ տարբերակում աշխատում են մտցնել. այսպես՝ մեծին տրվում է որակական արժեք, իսկ խոշոր-ին՝ քանակական արժեք: Մեծ մարդ և խոշոր մարդ բառակապակցություններից առաջինը նշանակում է արժեքով մեծ դիտանական և երկրորդում՝ հասակով, մարմնակազմությամբ մեծ:

Առված բառը դրական արևմտահայերենում ստացել է արևելահայերենի վթար բառի իմաստը և այլն:

Երկու դրական լեզուների բառապաշարային տարբերությունների մի մասը պայմանավորված է օտար բառերի փոխառությամբ կամ պատճենմամբ:

Առանձին դեպքերում երկու դրական լեզուներն էլ թարգմանել են (պատճենել) օտար բառը և այն տարբեր տեսք է ստացել նրանցում. Այսպես՝ ներուստացույց—ներատեսիլ—պատկերասփյուռ—ներացոլ և այլն: Երբեմն էլ դրական արևմտահայերենը պահպանել է դեռևս միջին հայերենով ավանդված բառաձևերը, մինչդեռ արևելահայերենը նախընտրել է ռուսերեն տարբերակը, ինչպես, օրինակ՝ ճատրակ—շախմատի, մարաչախտ—մարշալի դեպքում:

Հայոց լեզվի զարգացման ընթացքում արևելահայերենում որդեգրված միջազգային որոշ բառաձևեր տեղի ավելցին բնիկ բառաձևերին, որոնք հիմնականում համընկան արևմտահայերենում գործածվող համարժեք բառերին: Այսպես՝ ռեսպուբլիկան դարձավ հանրապետություն, դելեգատը՝ պատվիրակ և այլն:

Ստորև առանձին ցանկերով ներկայացվում են արևմտահայերեն-միջազգային և ապա արևմտահայերեն-արևելահայերեն բառային համարժեքները.

ա) արևմտահայերենում պատճենված, արևելահայերենում միջազգային ձևերով ներկայացված բառեր.

ագենտ—կենգուրու
աղեկեր—սարդին
ալեհավաք—անտենա
ախոյանություն—չեմպիոնատ
անկարգել—պարաշյուտ
առարկայական—կոնկրետ
դաշնակարան—հարմոնիկա
դրամատիրություն — կապիտա-

լիզմ
դաշնուրդ — ակորդ
դրամատուն — բանկ
երգահան — կոմպոզիտոր
երգախաղ — օպերա
նոանգ — տրիոլետ
ելևմտագետ — ֆինանսիստ
ելևմտային — ֆինանսական
բարկօղի — կոնյակ
բնալուծ — քիմիկոս
բնալուծություն — քիմիա
դաղափարաբանություն — իդեոլոգիա
գետնախնձոր — կարտոֆիլ
երաժշտանոց — կոնսերվատորիա
գերակարգություն — տակտիկա
եղր — տերմին
եղրաբանություն — տերմինաբանություն
ընկերվարական — սոցիալիստական
ընկերվարություն — սոցիալիզմ
խաղերգություն — սոլֆեջիո
կարգախոս — լոզունգ
կնդծամաշկ — դիֆթերիա
կենսանյութ — վիտամին
կիսվար — բեմոլ
կիսվեր — դիեզ
կրկնևրևույթ — միրաժ
կրկնեփ — բիսկվիթ
կաճառ — ակադեմիա
կաճառական — ակադեմիական
կաղապարատիպ — կլիշե
կայաբանություն — ստատիկա
համայնավար — կոմունիստ
համայնավարություն — կոմունիզմ
համայնավարական — կոմունիստական
համանվագ — սիմֆոնիա
համույթ — անսամբլ
հանրահաւք — տրամվայ
հյուլեագետ — ատոմագետ
հնչյակ — սոնետ
հնդախտ — խոլերա
հնդկեղեգ — բամբուկ
ձայնասփյուռ — ռադիո և այլն։

բ) արևմտահայերենում և արևելահայերենում տարբեր բառապատճենումներով, բառակերտումներով ստեղծված զուգահեռություններ.

աշխարհամարտ — համաշխարհային պատերազմ
դրամապահ — դանձապահ
դրություն — համակարգ
ապակեփեղկ — ցուցափեղկ
բանագնաց — պատգամավոր
գլանիկ — գլանակ
գործատուն — գործարան
գրատուն — գրախանութ
կոփամարտ — բռնցքամարտ
կոփամարտիկ — բռնցքամարտիկ
ընթացավարտ — շրջանավարտ
ընտրարշավ — նախընտրական կամպանիա
լուսարգել — լուսամփոփ
կեղցավ — քաղցկեղ
կենսախոս — կենսաբան
կուրաղեատապ — կույրաղիի բորբոքում
կառք — ավտոմեքենա

կորիզային—միջուկային
կորիզաբան—միջուկագետ
հեռաձայն—հեռախոս
հիմարանոց—խեղճանոց, գժատուն, գժանոց
հյուծախտ—թոքախտ
խոսնակ—հաղորդավար
շարժավար—վարորդ և այլն:

Եթե առաջին խմբի բառերը երկու գրականներում էլ հիմնականում պահպանում են իրենց «կայուն դիրքը», միմյանց հետ մրցակցության մեջ չեն մտնում՝ դուրս դնելու համար փոխառյալ ձևը (խոսքը վերաբերում է հատկապես արևելահայերենին). այսպես լոգունգ բառի փոխարեն կարգախոս ձևը արևելահայերենում տարօրինակ է հնչում. նմանապես հաճրակառք (տրամվայի փոխարեն), համայնավար (կոմունիստ) և այլ ձևերը բնորոշ են միայն սփյուռքահայ շրջանակներին:

Երկրորդ խմբի բառերը (արևելահայ և արևմտահայ կրկնակ ձևեր) լեզվի զարգացման հատկապես արդի փուլում փոխազդեցության և փոխներգործության լայն հնարավորություններ են ստացել. այդ դեպքում գրական լեզուներից մեկը նախընտրում է մյուսի ավելի կարճ, իմաստը ճշգրիտ արտահայտող բառաձևը. օրինակ՝ արևելահայերենում օգտագործվող նախընտրական կամպանիա արտահայտությունը վերջին ժամանակներս իր տեղը զիջում է ընտրարշավ համեմատաբար կարճ ձևին: Նմանապես արևելահայերենում լայն տարածում է ստանում բանագնաց բառը՝ պատգամավորի փոխարեն և այլն:

Առկա են նաև դեպքեր, երբ միևնույն ածանցով կազմությունը «չի ընդունվում» մեկում, ինչպես որ վերջինիս կազմածը՝ մյուսում. օրինակ՝ խոսնակ[2]—հաղորդավար[1] ձևերից արևելահայերենը նախընտրում է վար-ով բառը, մինչդեռ նույն վար-ով կազմված շարժավար[2] ձևի փոխարեն գործածում է վարորդը (թերևս նկատի է ունենում ոչ թե շարժման վարելը, այլ ավտո վարելը, դրա համար էլ արևելահայերենում առկա է նաև ավտովարորդ ձևը):

Բոլոր դեպքերում, երկու գրականներից «մեկի սեփական միջոցներով» կերտած բառաձևերը (ածանցավոր կամ բարդ կառույցները) խորթ չեն մյուսին և ընդհակառակն (համմտ., օրինակ՝ հիմարանոց—խեղճանոց—գժատուն—գժանոց զուգահեռ գործածվող ձևերը երկու գրականներում էլ):

Համանունություն. արևելահայերենում բառական համանունությունը համեմատաբար ավելի քիչ տարածված երևույթ է, քան արևմտահայերենում: Եվ եթե նկատի ունենանք, որ արևելահայերենի համանուններին Ե. Գևորգյանի կազմած բառարանը ընդգրկում է շուրջ 12 հազար

բառ և բառաձև, ապա պարզ կդառնա, թե որքան մեծ է համանունության դերը հայոց լեզվի բառապաշարում: Արևելահայերենի նյութի հաշվումներով Ռ. Շալունցը (ԻՐ. 74) պարզել է, որ բառական համանունները կազմում են ամբողջ համանուն բառերի 18%-ը, իսկ խառը համանունները՝ շուրջ 3%-ը:

Արևելահայերենի բաղդատությամբ, արևմտահայերենում համանուն բառերի բաշխվածությունները որակապես և քանակապես տարբեր են. եթե արևելահայերենում գերակշռում են նույնագիր համանունները (արևելահայ ուղղագրության պատճառով. հմմտ. նոտ (բույր) և նոտ (նախիր) արևմտ. նոտ. և նօտ-ի փոխարեն, հարկ (շենքի) և հարկ (հարկադրանք)-ի փոխարեն արևմտ. համապատասխանաբար յարկ և հարկ), ապա արևմտահայերենում լայն տարածում ունեն գրությամբ տարբեր, բայց նույնհունչ համանունները (պայմանավորված արևմտահայերենի հնչույթային կազմում կատարված հայտնի փոփոխություններով. հմմտ. Հնչույթաբանություն բաժինը): Այսպիսով, համանուններն համեմատաբար ավելի շատ հանդես են գալիս արևելահայ գրության, իսկ արևմտահայ արտասանության (բերանացի լեզվադրսևորման) ժամանակ: Արևմտահայերենի խոսքում համանուն բառերը իմաստային տարբերակման են ենթարկվում, բնականաբար, բառային «շրջապատով»: Այսպես. արևելահայերենում դուք անձնական դերանունը համանունությամբ չի բնութագրվում, մինչդեռ արևմտահայ հնչումով՝ puք, այն նույնհունչ է դառնում puք գոյականի հետ: Նախադասության մեջ է միայն հայտնի դառնում, թե ինչի մասին է խոսքը՝ «Puքս շորցավ» և «Խնդրեմ, Puք (puք) ըսեք»: Արևմտահայերենում զգալի թվով համանուններ են առաջանում բառի ուղիղ ձևի՝ զարի—ֆարի և այլ բառի թեքված ձևերի՝ ֆար—ֆարի հնչական նույնացմամբ: Ընդ որում եթե արևելահայերենում, համաձայն Ռ. Շալունցի տվյալների, գերիշխում են մենիմաստ համանուն բառերը (շուրջ 67 տոկոս), ապա արևմտահայերենում այդպիսի էական զանազանություն չկա, բազմիմաստ բառերի (անշուշտ, համանունների) զգալի ավելացման շնորհիվ: Արևմտահայերենում ավելի շուտ կարելի է խոսել բազմիմաստ և մենիմաստ համանուն բառերի մոտավորապես հավասարաչափ բաշխման մասին:

Մեր երկու գրականները որոշ տարբերություններ են տալիս նաև համանուն բառերի վանկաքանակության հարցում: Եթե արևելահայերենում շուրջ 40-ական % են կազմում միավանկ և երկվանկ համանուն բառերը, ապա արևմտահայերենում հարաբերաբար ավելի մեծ թիվ են

կազմում մեկուկես կամ գաղտնավանկով և եռավանկ համանուն բառերը, թեև այստեղ էլ գործում է ոչ այնքան Ռ. Շալունցի շեշտած ընդհանուր լեզվաբանական սկզբունքը, որքան ընդհանրապես հայերենին հատուկ բառի միջին երկարության արժեքը, որ անցնում է երկու վանկի սահմանը (արևելահայերենում՝ շուրջ երկուսուկես, արևմտահայերենում՝ մոտավորապես երկու. հմմտ. էջ 80)։ Այդ դեպքում ինչպե՞ս բացատրել հատկապես արևմտահայերենի համանուն բառերի հարաբերաբար երկար լինելը. ա) հնչյունափոխությամբ առաջացած լինելով (հայտնի է, որ արևելահայերենը հնչյունական փոփոխությունների հետևանքով առաջացած համանուններով հարուստ չէ), բ) թևքման միջոցով՝ կցականությամբ համանուն բառերի նոր շարքերի ստեղծումով և այլն։

Նույնահունչ բառերով հարուստ լինելը արևմտահայերենում ոճական ինքնատիպ կիրառությունների լայն հնարավորություն է տալիս՝ բառախաղերի և երկիմաստ արտահայտությունների միջոց։ Օրինակ՝ Դաս մը տուի և բաս մը տուի նույն հնչումն ունեն։ Դեռևս ժամանակին Հ. Թումանյանն անդրադառնալով արևմտահայ հնչումին, գրել է, որ գայլ մը և ձայլ մը ձևերի հնչումը նկատի ունենալով՝ ոչնչով չեն տարբերվում իրարից և միայն խոսքից կարելի է հասկանալ, թե գայլի՛ մասին է ասվածը կամ քայլի (հմմտ. Թումանյանը քննադատ)։

Գործառական ոճեր. *Հիմք ընդունելով գործառական ոճերի հետևյալ տեսակները՝ առօրյա-խոսակցական, գեղարվեստական, գիտական, հրապարակախոսական, վարչա-գործարարական, երկու գրականների գործառական ոճերի զուգադրությունից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.*

1. Արևմտահայերենի առօրյա-խոսակցական ոճը համեմատաբար ավելի մոտ է գրական-գրավոր տարբերակին, քան արևելահայերենինը։ Ընդհանուր հատկանիշներ գանց առած՝ գրական լեզուների միմյանցից ունեցած տարբերությունները պայմանավորված են հաճախ փոխառու տարբեր աղբյուրներով. արևելահայերենում փոխառությունների հիմնական մեկ աղբյուրի՝ ռուսերենի, դիմաց, արևմտահայերենում առկա է փոխառությունների մի քանի աղբյուր՝ ֆրանսերեն, անգլերեն և այլն։ Ընդ որում, եթե դարասկզբին փոխառությունների հիմնական աղբյուրը ֆրանսերենն էր, ապա արևմտահայերենի զարգացման արդի փուլում գերակշռում են անգլերենից կատարված փոխառությունները. այսպես, օրինակ՝ ամսիդան, բրաֆիկ, փարթինգ և այլն (բերվում են երթևեկության հետ կապված փոխառյալ բառեր խոսակցական տարբերակից)։

Արևելահայերենում նշված բառերի համապատասխան ձևերն են՝ վրար, խցաձում, կայանում, կանգառ: Հարկ է նշել նաև, որ եթե արևելահայերենը փոխառության ժամանակ հաճախ հիմք է ընդունում բառի գրային ձևը, ապա արևմտահայերենը հաճախ հենվում է բառի արտասանական ձևի վրա: Ընդ որում խոսակցական ոճում փոխառված բառը ունենում է հիմնականում այն տեսքը, ինչ որ ունի փոխառու լեզվի խոսակցական ոճում. այսպես, օրինակ՝ թէնիս և ոչ թե թէնիս եու, հաուտուու և ոչ թե հաու-տու-եու-տու և այլն (համմա. Հ. Գանգրունի, Ընկեր Գևրասիմ նոր աշխարհի մեջ, Բեյրութ, 1979, էջ 113):

2. Արևելահայերենում գիտական ոճի լայն հնարավորությունների և ներկա իրավիճակի համեմատությամբ, արևմտահայերենում գիտական ոճի մասին կարելի է խոսել միայն որոշակի պայմանականությամբ: Գիտական ոճին հատուկ մի շարք առանձնահատկություններ (բառերի ըստ հնարավորին մենիմաստ կիրառությունները, նախադասության մեջ պատճառահետևանքային կապերը) ավելի բնորոշ են արևելահայերենին: Արևմտահայերենի անգամ գիտական ոճը (բանասիրական, փիլիսոփայական և այլն) բնութագրվում է գեղարվեստական ոճին հատուկ գծերով և ավելի մոտ է գեղարվեստական ոճին:

3. Վարչագործարարական ոճը արևելահայերենում հստակորեն տարբերակված է: Կիրարկվելով պետական, պաշտոնական գործունեության ոլորաններում, արևելահայերենը մշակել է որոշակի կաղապարային նույնատիպ արտահայտություններ, արտահայտման որոշակի սեղմություն (հակիրճություն): Արևմտահայերենը, դժբախտաբար, զուրկ է պետական-կառավարման լեզու լինելուց, բայց այն նույնպես մշակել է և ունի ուղերձների, հայտարարությունների, դիմումների որոշակի կաղապարային ոճ: Որպես երկու գրականների վարչագործարարական ոճին հատուկ կաղապարների բաղադրիչներ օգտագործվում են գրաբարյան նախդրավոր կառույցներ (ի շահ, ի նպաստ, ի օգուտ և այլն):

4. Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում լայնորեն կիրարկվում է հրապարակախոսական ոճը (հասարակական-քաղաքական հանդեսներ, պարբերական մամուլ, հրապարակային ելույթ և այլն): Ընդ որում եթե արևելահայերենում այն համատեղում է գիտական և գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները, ապա արևմտահայերենին շատ ավելի բնորոշ է գեղարվեստական խոսքի հատկանիշներով դրսևորվելը: Ի տարբերություն արևելահայերենի հրապարակախոսական ոճի խնդիրների բազմազանության (կյանքի հրատապ

ամենաբազմազան հարցերի անդրադարձ), արևմտահայերենի համապատասխան ոճը ունի խնդիրների, հարցադրումների հասկանալի պատճառներով հարաբերաբար նեղ շրջանակ (աղդապահպանում, համայնքային կյանքի կազմակերպում և այլն)։

5. Երկու գրականներում էլ լայնորեն դրսևորվում է գեղարվեստական ոճը, որն իր մեջ ներառում է մյուս ոճերի շատ հատկանիշները։

Այսպիսով, գործառական ոճերը ավելի հստակ տարբերակվածություն ունեն արևելահայերենում. արևմտահայերենում գործառական ոճերը համեմատաբար ավելի շատ ընդհանուր գծեր են ի հայտ բերում (ընդհանրություններ). այս կամ այն ոճին բնորոշ առանձին հատկանիշներ հանդես են գալիս նաև մյուսում։

*

* *

Այսպիսով, սեփակա՞ն, թե օտարը (փոխառյալը) հարցին արևելահայերենը մոտենում է լայնախոհ ըմբռնումով, օգտվելով ինչպես լեզվի ներքին հնարավորություններից, այնպես էլ փոխառություններից (բառապաշարի հարստացման առաջին միջոցից)։ Արևմտահայերենը նույն հարցի նկատմամբ դրսևորում է որոշակի պահպանողական, ավանդապահ մոտեցում, որն ունի իր միանգամայն հասկանալի պատճառները (ձուլման վտանգը, լեզվի զարգացման ներքին միտումները և այլն)։

Պարզ և բարդ անվանողության հարցում արևելահայերենը ձգտում է հարաբերաբար բարդին (բազմաբաղադրյալ բառերին), այնինչ արևմտահայերենը հակամետ է պարզին, հնարավորին՝ չափ կարճ բառաձևերին. դրանով է պայմանավորված բառակազմության ոլորտում վերլուծականության ավելի լայն տեղ տալը արևելահայերենի նամադրականության փոխարեն։

Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ բառապաշարի ոճական տարբերակումը դրսևորվում է լայնորեն և որոշակի հստակությամբ, արևմտահայերենում բառապաշարի ոճական այդպիսի խիստ ու հստակ տարբերակում գոյություն չունի։

Ըստ բառիմաստի ծավալի, արտահայտած վերացական և կոնկրետ իմաստների, արևելահայերենը շատ ավելի ձգտում է դեպի կոնկրետը, արևմտահայերենը՝ վերացականը։

Բառի տրամաբանական և հուզարտահայտչական երանգավորումների առումով արևելահայերենը միտում է դեպի տրամաբանականը,

արևմտահայերենը՝ հուզաարտահայտչականը: Դրա համար էլ, թերևս, արևելահայ գրական խոսքին կարծեք թե ինչ-որ չափով պակասում են հուզաարտահայտչական այն կենդանի միջոցները, որ հատուկ են մեր լեզվի կենդանի-խոսակցական տարբերակին: Հուզաարտահայտչական տարրերը որոշապես զգալի են անգամ արևմտահայերենի գիտաբանասիրական ոճում: Դրանով է նաև պայմանավորված այն զգացումը, որ արևմտահայերենն ավելի հյութեղ է ու կենդանի. պարզապես տարբեր նախապատվություններ մեջ է պատճառը՝ ընդհանուր առմամբ արևելահայերենի միտվածությունը տրամաբանականին, արևմտահայերենի՝ հուզաարտահայտչականին:

Երկու գրականների ձևային և բառիմաստային տարբերություններ ունեցող բառաշերտերի առանձնացմամբ կազմվել է «Արևելահայերեն-արևմտահայերեն բառարանը» (պատրաստ է տպագրության), որ պարունակում է շուրջ 3500 բառ: Եթե արդի հայերենի բառագանձը միջին հաշվով ընդունենք հարյուր հազար բառ (զանց ենք առնում զուտ տերմինային բառաշերտը, գավառաբանությունները և նորաբանությունները), ապա կարելի է եզրակացնել, որ արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային տարբերությունները չորս տոկոսի չեն հասնում: Դա էլ հենց վկայում է բառապաշարի ընդհանրության բարձր աստիճանի մասին:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Քերականական կառուցվածքի զուգադրական-տիպաբանական ուսումնասիրության հարցերը ավելի ու ավելի լայն հետազոտության առարկա են դառնում: Մեր երկու գրական լեզուների քերականական երևույթները կարելի է զուգադրել ինչպես բովանդակության և արտահայտության, այնպես էլ՝ գործառական պլանով: Բովանդակության պլանում զուգադրվում են երկու գրականների քերականական կարգերը: Հնարավոր է քերականական կարգերի միջև անհամապատասխանության երկու տիպ. ա) երբ լեզուներից մեկը ունի տվյալ քերականական կարգը, մյուսը՝ ոչ և բ) երբ նույն քերականական կարգի առկայությունը երկու գրականներում ի հայտ է բերում որոշակի տարբերություններ, որոնք իրենց հերթին կարող են լինել հետևյալ բնույթի. ա) քերականական միևնույն կարգի ծավալի հարցում (ընդգրկման մեջ) առկա տարբերություններ (ինչպես, օրինակ՝ թե՛ արևելահայերենը, թե՛ արևմտահայերենը ունեն ի և ու հոլովումները, սակայն վերջիններս միանգամայն տարբեր ընդգրկում, ծավալ ունեն. բ) միևնույն քերականական կարգը երկու լեզուներից որևէ մեկում ունի տարբեր թվով ենթակարգեր: Այսպես. հոլովի կարգը հատուկ է երկու գրականներին էլ, սակայն արևելահայերենում այն ունի հինգ ենթակարգ, արևմտահայերենում՝ չորս (արևմտահայերենը ներգոյական հոլով չունի):

Արտահայտության պլանում զուգադրվում են քերականական կարգերի արտահայտման միջոցները, ձևերը: Այս դեպքում հիմնական ուշադրությունը կհատկացվի հետևյալ երկու խնդիրներին. ա) արտահայտության համադրական և վերլուծական ձևերի հարաբերակցությունը: Այսպես, նույն բովանդակությունն արտահայտելու համար արևմտահայերենը ավելի վերլուծական է (հիշենք, թեկուզ, ներգոյական հոլովի իմաստ արտահայտելու արևմտահայերենի վերլուծական միջոցը՝ գրքին մեջ), բ) միևնույն քերականական կարգը ունի նյութական տարբեր

դրսևորում: Վերջապես, հետաքրքիր է դիտարկել նաև գրավոր և բանավոր լեզվավիճակների հարաբերությունը երկու գրականներում:

Ինչպես և սպասելի էր, երկու գրական լեզուների տարբերությունները ի հայտ են գալիս ոչ թե քերականական կարգերի առկայության կամ բացակայության խնդրում, այլ՝ միևնույն քերականական կարգի ծավալի (ընդգրկման), ենթակարգերի թվի հարցերում:

Գործառական առումով անգամ միևնույն երևույթները (կարգերը և այլն) երկու գրականներում ունենում են հաճախ ոճական տարբեր գործառույթներ: Այսպես, միայն ի հոլովման առկայությունը շեշտելը երկու գրականներում քիչ բան է ասում հոգնակիում նրանց (լեզուների) ունեցած տարբեր դրսևորումների մասին (արևելահայերենն ունի միայն ի-ով հոգնակի, արևմտահայերենը՝ միայն ու-ով): Այդտեղից էլ անհրաժեշտություն է առաջանում հաշվի առնել գործառույթները, հնարավոր փոխանցումները, ոճական տարբեր կիրառությունները:

Քերականական և բառագիտական հարաբերությունը լեզուներում կարող է ծառայել որպես տիպաբանական ցուցիչ, իսկ դրա համար բառի քերականական փոփոխությունների հնարավոր սահմանները ճշգրիտ կերպով պարզելը խիստ կարևոր է:

Քերականական կարգերը կարելի է բաժանել (ինչպես արել է Վ. Գակը, նույն տեղում, էջ 81) զուտ քերականական և բառաքերականական կարգերի: Եթե զուտ քերականական կարգերն այնպիսին են, որոնց գործառությունը պայմանավորված չէ բառի լեքսիկական նշանակությամբ (ինչպես, օրինակ՝ հոլովը գոյականների համար, ժամանակը՝ բայի և այլն), ապա բառաքերականական կարգերն առնչվում են տվյալ խոսքի մասի միայն մեկ ոլորտին (ինչպես, օրինակ՝ երկու գրականներն էլ ունեն անեզական և անհոգնական գոյականներ, համեմատության աստիճանները հատուկ են ածականների միայն մեկ մասին և այլն):

Ինչպես կտեսնենք հետագա շարադրանքից, բառաքերականական կարգերը համեմատաբար ավելի փոփոխական սահմաններ ունեն արևմտահայերենում: Այսպես, օրինակ՝ վերացական գոյականները հնչության կամ հոգնակի թիվ ստանում և այլն:

Հարկ է նշել, որ քերականական ձևերի երկրորդային գործառույթների ուսումնասիրությունը նույնպես կարևոր է, որովհետև եթե առաջնային (հիմնական) գործառույթներով քերականական կարգերը հիմնականում համընկնում են (նույն պատկերն են տալիս), ապա երկրորդային գործառույթներով լեզուները սովորաբար ի հայտ են բերում անհամապատասխանություններ:

Միևնույն նշանակությունն արտահայտելու համար տարբեր քերականական կարգերի օգտագործումը նույնպես հատուկ ուսումնասիրության է արժանի (ո՞ր ձևերն են նախընտրաբար կիրառվում՝ համադասակա՞ն, թե ստորադասական, ի՞նչ խոսքի մասերի է նախապատվություն տրվում կիրարկության ոլորտում և այլն)։ Անկասկած, այս կամ այն կարգին նախապատվություն տալու լեզվի միտումները պարզելը կարող է ծառայել իբրև տիպաբանական ուսումնասիրության նյութ։

Կարևոր է պարզել նաև, թե քերականական արտահայտության ինչպիսի միջոցներ ինչ ընդգրկում, ծավալ ու նշանակություն են ստանում մեր երկու գրականներում։ Վերլուծականության և համադրականության քերականական արտահայտության միջոցները այնքան կարևոր են, որ, ըստ էության, ինչպես նկատել են շատերը (հմմտ. ԽԲ. ,85), բոլոր լեզվական դասակարգումները «արտացոլում են ամենից առաջ լեզվի այս կողմը»։

Արևելահայերենը և արևմտահայերենը զուգադրելով ըստ քերականական արտահայտության միջոցների, նպատակ ունենք պարզել, թե դրանցից յուրաքանչյուրը վերլուծականության և համադրականության ինչպիսի արժեքներով է բնութագրվում, որովհետև ընդհանրապես հըստակ պատկերացում չկա հայագիտության մեջ այն մասին, թե մեր երկու գրականներից որը ի՛նչ չափով է դիմում այդ միջոցներին (վերլուծականությանը և համադրականությանը)։ Հարցը չի լուծվում նշելով, որ նրանք վերլուծական են կամ համադրականության որոշ տարրեր ունեն և այլն, անհրաժեշտ է երևույթի խորազնին քննություն կատարել։ Նախքան այդ խնդրին անցնելը սկսենք մի քանի ընդհանուր դրույթների պարզաբանումից։

Սովորաբար, վերլուծականությունը կամ համադրականությունը պարզվում է ըստ այն բանի, թե 1) քերականական իմաստի արտահայտությունը պարփակվում է բառի սահմաններո՞ւմ (համադրական), թե դուրս է գալիս բառի սահմաններից (վերլուծական), և 2) քերականական ձևերի ձուլման ինչպիսի աստիճան կա (հե՞շտ է ձևույթների տրոհումը, թե ոչ)։ Եթե առաջին դեպքում խոսում ենք ձևաբանական կարգերի առկայության մասին, երկրորդ դեպքում՝ խոսքը գերազանցապես վերաբերում է շարահյուսությանը։

Ընդունում ենք քերականական արտահայտության հիմնական միջոցների հետևյալ պատկերը (ըստ Գակի, էջ 37)։

Փոփոխության բնույթը	Փոփոխության տեղը	
	բառ	նախադասություն
ավելացում	կցում	սպասարկու բառեր
փոխարկում	թեքություն, դուգաձևություն	շրջապատ
	համադրականություն	վերլուծականություն

Անհրաժեշտ է պարզել, թե երկու գրականներից յուրաքանչյուրը ինչպիսի տիպեր է կիրառում: Այդ առումով հետաքրքիր է պարզել նաև, թե արտահայտության և բովանդակության պլանների հարաբերությունը երկու գրականներում ինչպիսին է: Թեև սկզբունքորեն հնարավոր է պատկերացնել այնպիսի մի լեզու, ուր փոխադարձ և միանշանակ կերպով համապատասխանեն նշված պլանները, սակայն իրականում լեզուները սովորաբար «խախտում են» նմանօրինակ փոխադարձ միանշանակ համապատասխանությունները: Այդ խախտումները կարելի է դասակարգել երեք խմբի՝ ա) հարացուցային պլանի խախտումներ, բ) շարակարգային պլանի խախտումներ և գ) նշանաբանական պլանի խախտումներ:

Ա. Հարացուցային պլանի խախտումները (անհամապատասխանությունները) կարելի է բաժանել երկու խմբի՝ 1) հոմանշային և 2) բազմիմաստային: Առաջին դեպքում գործ ունենք միևնույն նշանակության արտահայտության տարբեր ձևերի հետ (ձևաբանության մեջ, ասենք, միևնույն ձևույթի մի շարք տարբերակների հետ): Կարելի է նշել, որ մեր երկու գրականներում էլ ձևաբանական հոմանիշները շատ են. համեմատության կարգով նրանք ավելի բնորոշ են արևմտահայերենին՝ ջուրուա—ջրրուա, տունի—տաան և այլն:

Ինչպես նշվել է հայագիտության մեջ, արևմտահայերենը համեմատաբար մոտ է միջին հայերենին, իսկ վերջինս աչքի էր ընկնում, օրինակ՝ հոլովական թեքույթների ընդգծված հոմանշությամբ (հմմտ. Լ. Հովսեփյան, Միջին հայերենի անվանական հոլովումը, «Ակնարկներ միջին գրական հայերենի», հ. 2): Հանրահայտ է, որ քերականական հոմանշությունը խոսում է լեզվի նվազ նորմավորված լինելու մասին:

Ի տարբերություն արևմտահայերենի, արևելահայերենում հոմանշությունը հաճախ պայմանավորված է հիմքով. ավյալ հիմքից կախված՝ այն ընդունում է այս կամ այն կոնկրետ թեքույթը: Կարելի է ասել, որ եթե ձևաբանական հոմանշությունը ավելի բնորոշ է արևելահայերենի գոյականին, ապա այն շատ ավելի բնորոշ է արևմտահայերենի բա-յին (արևմտահայերենում առկա չորս լծորդությունները, հիմքերի հետ կապված, թեքույթների շատ ավելի երկար հոմանշային շարքեր են կազմում): Ինչպես այլ լեզուներում, հայերենի բոլոր դրսևորումներում ևս հաբա-յուցային պլանի նմանօրինակ խախտումները դերազանցապես վերա-բերում են գլխավոր խոսքի մասերին, իսկ մյուս խոսքի մասերին (ա-ռնենք՝ ածականին) դրանք այնքան էլ բնորոշ չեն:

Բազմիմաստությունը ձևաբանական ոլորտում այն երևույթն է, երբ միևնույն հնչակապակցությունն արտահայտում է քերականական տար-բեր (զանազան) իմաստներ: Այսպես, Ի թեքույթը երկու գրականներում էլ կարող է արտահայտել սեռական-տրական հոլովի իմաստ, բայի անցյալ կատարյալ ժամանակի առաջին դեմքի իմաստ և այլն: Անշուշտ, քերականական թեքույթները կազմող հնչույթների թիվը սահմանափակ է և սպասելի էր նման երևույթ, երբ առաջանա ձևաբանական թեքույթ-ների հոմանշություն (բազմիմաստություն):

Բ. Շարակարգային պլանի խախտումները իրենց հերթին կարելի է բաժանել երկու խմբի՝ վերլուծական տոհվող ձևեր և համատեղվող նշաձակիչներ: Որպես առաջին տիպի օրինակ կարելի է բերել արևելա-հայերենի ժխտման արտահայտության երկու մասնիկները՝ ոչինչ չա-սաց (հմմտ. արևմտ. ոչինչ բսաւ): Համատեղումն այն երևույթն է, երբ նույն ձևույթը արտահայտում է մեկից ավելի քերականական իմաստ-ներ: Այսպես, երկու գրականների բերի-ի Ի-ն արտահայտում է ինչպես դեմքի, այնպես էլ թվի իմաստներ: Երկուսում էլ կիրառված միջոցների՝ վերլուծական տրոհվող ձևեր և համատեղում, միջև էական տարբերու-թյուններ չկան. այսպես, օրինակ՝ երկուսում էլ հոգնակիում թվի և հո-լովի իմաստների համար սովորաբար առանձին թեքույթներ են հան-դես գալիս (վերլուծական տրոհվող ձևեր): Հարկ է նշել, որ վերլուծա-կանության և համադրականության միանգամայն այլ ըմբռնում են ու-նեցել Պոլիվանովը, Բալին և այլք, որոնք ի մասնավորի ելել են արտա-հայտության և բովանդակության պլանների հարաբերակցությունից (հմմտ. ԽԲ. 35): Երկու գրականներում էլ համատեղումը տարածված երևույթ է, որ վկայում է նրանց զուտ վերլուծական լեզու չլինելու մասին:

9) Նշանաբանական (սեմիոտիկական) պլանի անհամապատասխանությունները, կապված արտահայտության և բովանդակության պլանների հարաբերության հետ, կարելի է դասակարգել երկու խմբի (հմմտ. եր. 93)՝ զրո նշանով և բեռականական հավելադրությամբ (պլեոնազմ)։ Առաջինը երկու գրականներում էլ նույն բնորոշումն ունի. երկուսում էլ, օրինակ՝ եղակի ուղղականը զրո ձևույթով է բնութագրվում։

Քերականական հավելադրության էությունն այն է, որ նույն արտահայտության մեջ միևնույն նշանակությունը արտահայտվում է մեկից ավելի անգամ։ Ըստ այդմ առաջին անգամ արտահայտվելուց հետո հաջորդական դրսևորումները կարելի է դիտել որպես հավելադրական ձևեր։ Ի տարբերություն քերականական սեռ ունեցող լեզուների, քերականական հավելադրությունը երկու գրականներում էլ էական դեր չունի. այն ավելի բնորոշ է կենդանի, խոսակցական տարբերակին և ոճական արժեք ունի (հմմտ. ես իմ սեփական աչքերով եմ տեսել)։ Երկու գրականներում էլ ածականը և թվականը թվով չեն համաձայնվում գոյականի հետ, իսկ դա նշանակում է, որ հայերենում նվազում է պարտադիր քերականական հավելադրության արժեքը։ Այդուհանդերձ, քերականական հավելադրությունը երկու գրականներում էլ հանդես է գալիս հաճախ բայի և դերանվան համաձայնության դեպքում՝ մենք ապրում ենք—մենք կ'ապրինք և այլն։ Արևմտահայերենում, արևելահայերենի համեմատությամբ, ավելի հաճախական են շարահյուսական կարգի դերանվանական հավելադրությունները։ Այսպես՝ ճգճավորը, ան կ'ըլլե...

Եթե ամփոփելու լինենք նշանակիչի և նշանակելիի միջև եղած վերոհիշյալ բոլոր անհամապատասխանությունների ուղադրության արդյունքները, կունենանք հետևյալ պատկերը (աղյուսակ № 18)։

Երկու գրականների անվան (գոյականի) ձևաբանական կառուցվածքը բարդ հարաբերությունների պատկեր է ներկայացնում։ Ավելի բարդ կառուցվածքով է բնութագրվում երկու գրականների բայը, հատկապես արևմտահայերենում, ուր բայը բնորոշվում է ոչ միայն լծորդությունների քանակային գերակշռությամբ (երկուսի փոխարեն չորս), այլև կրավորականության արտահայտման համեմատաբար բարդ եղանակով, որ արևելահայերենի համակարգում որոշակի և կանոնավոր արտահայտություն է ստացել և այլն։

Քանի որ վերլուծական և համադրական երևույթները բնորոշ են եր-

Անհամապատասխանության (դանդաղման) տիպ	Արևելահայերեն	Արևմտահայերեն
1. Տրոհվող ձևեր	ավելի	պակաս
2. Համաձեռում	հավասարապես	հավասարապես
3. Հոմանշություն	պակաս	ավելի
4. Բազմիմաստություն	պակաս	ավելի
5. Զրո նշան (չբնիքվող բառերի)	հավասարապես	հավասարապես
6. Հավելաղրություն	պակաս	ավելի

կու գրականներին էլ, ուստի պետք է խոսել ավելի կամ պակաս հատուկ լինելու մասին (միտումների մասին)։ Ըստ այդմ (այդ է վկայում նաև բառագիտական քննությունը) արևմտահայերենը ավելի մեծ համակում ունի դեպի վերլուծականությունը։

Ժամանակին Հ. Աճառյանն այդ բացատրել է թուրքական լեզուների ազդեցությամբ, որն, իհարկե, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը։ Վերլուծականության տարբեր հայերենի մեջ առկա են դեռևս գրաբարի դասական շրջանից (Համմ. Ա. Սարգսյան, Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը)։ Մեր երկու գրականները աստիճանաբար զարգացրել և ընդլայնել են այդ երևույթները։ Արդեն մի շարք հնդեվրոպական (և ոչ հնդեվրոպական) լեզուների զարգացման ընդհանուր ուղղվածությունը այդ է եղել՝ համադրականությունից դեպի վերլուծականություն։ Այդ նշանակում է, որ խոսելով երկու գրականների զարգացման միտումների, առանձնապես՝ արևմտահայերենի մասին, պետք է նշել, որ դրանք ներքին համակարգի օրինաչափ դրսևորումներ են։ Ընդ որում զարգացման արդի փուլի քննությունը որոշակիորեն ցույց է տալիս, որ զարգացումը միակողմանի չի եղել (համադրականությունից դեպի վերլուծականություն). այդ երևույթներին զուգընթաց, առկա է նաև հակադարձ շարժումը՝ վերլուծականությունից դեպի համադրականություն, առանձին դեպքերում, անգամ դեպի բազմահա-

մագրականություն։ Այդ երևույթի բազմաթիվ նմուշներ կարելի է բերել ինչպես արևելահայերենից, այնպես էլ արևմտահայերենից։

Եթե զուգադրելու լինենք երկու գրականների գրավոր և բանավոր խոսքի ձևաբանությունը, որն, անշուշտ, կարող է ծառայել որպես տիպաբանական հատկանիշներից մեկը, նկատելի է վերջինիս հարաբերական տարբերակվածությունը արևելահայերենում։ Համմտ. բանավոր խոսքում գործածվող հետևյալ ձևերը՝ գործ է ածում, վազ է տալիս, մոտ է գալիս և այլն, գրավոր խոսքում վերածվում են հաճախ՝ գործածում է, վազում է, մոտենում է և այլն (տե՛ս այդ մասին հատկապես «Բառագիտություն» բաժինը)։

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ձևաբանության բուն ոլորտը սահմանելու ժամանակ լեզվաբանության մեջ հաճախ այս կամ այն չափով շոշափում են նաև հարակից՝ բառագիտության (բառապաշար և բառակազմություն) և շարահյուսության (հոլովների զանազան կիրառություններ) ոլորտներին վերաբերող հարցեր։ Ձևաբանական մակարդակի սահմանների պարզաբանմանը նվիրված հայեցակետերի մանրակրկիտ քննությունը մեր խնդրից դուրս է։ Ներկա աշխատության մեջ ընդունվում է, որ ձևաբանության բաժնում համակարգայնորեն քննվում են խոսքի մասերը՝ երկու գրականներին հատուկ քերականական կարգերով՝ զուգադրվելով յուրաքանչյուրին հատուկ իմաստային և ձևական համապատասխան հատկանիշներով։ Այսպիսով, ձևաբանության հիմնական խնդիրներից է խոսքի մասերի դասակարգումը, որը հայերենի համար բառային մակարդակով է կատարվում։ Այդտեղից էլ, առաջանում է հայերենի բառի ձևաբանական վերլուծության անհրաժեշտությունը։

Անտարակույս, երկու գրական վիճակների խոսքի մասային դասակարգումը նախորդում է բուն զուգադրությանը։

Նախքան բուն զուգադրությանն անցնելը հարկ է դարձյալ շեշտել, որ խոսքի մասերի անվանումների (տերմինավորման) և դասդասման ելակետ (սկզբունք) է ընդունվում գրական արևելահայերենին նվիրված քերականագիտական ուսումնասիրություններում որդեգրված մոտեցումը։

Հիմք և վերջավորություն

Նկատի առնելով, որ հիմքի հետ կապված տարբեր ըմբռնումներ

գոյություն ունեն ոչ միայն ընդհանուր լեզվաբանության, այլև հայագիտության մեջ, համառոտակի անդրադառնանք հիմքի և վերջավորության մեր ըմբռնումին: Բնականաբար, տվյալ դեպքում խոսքը ոչ թե բառակազմական, այլ ձևաբանական հիմքի մասին է: Հիմք է ընդունվում ձևաբանական տվյալ հարացույցում վերջավորությունից առաջ ընկած մասը: Եթե անտեսենք «քարացած» հոլովաձևերը, այդ թվում նաև ներքին թեքման (ձայնավորների հերթագայությամբ) տիպերը՝ հայր—հոր, գրություն—գրության և այլն), ապա կարելի է ասել, որ երկու գրականներում էլ գոյականի հոլովակազմության մեջ գլխավոր միջոցը մասնիկավորումն է, որ իրացվում է վերջավորությունների հավելմամբ և զուգակցվող հերթագայությամբ: Ընդ որում, ինչպես կպարզվի երկու գրականների հոլովման տիպերի առանձնահատկություններից, եթե արևելահայերենում գործ ունենք ինչպես հոլովական վերջավորությունների, այնպես էլ հոլովական հիմքերի հերթագայության հետ (առն—առն—արնից և այլն), ապա արևմտահայերենում հնչույթային հերթագայությունը հատուկ է գերազանցապես վերջավորությանը:

Հաշվի առնելով ժամանակակից արևելահայերենի հոլովական վերջնամասնիկների (վերջավորությունների) բնույթն ու հաջորդականությունը, Գ. Ջահուկյանը տարբերել է կատեգվածքային չորս կաղապար (ԼԳ. 164): Ստորև ներկայացնում ենք այդ կաղապարների նմուշներն արևմտահայերենի համապատասխան կաղապարների զուգադրությամբ.

	արևելահայերեն	արևմտահայերեն
1. Aacd	քաղաք(+ներ)+ից)+ս)))	քաղաք(+ներ)+է)+ս)))
2. Abcd	բնկեր(+ոջ)+ից+ս)))	ընկեր(+ոջ)+մէ)+ս))))
3. Abcd	կան(+անց)+ից+ս)))	—
4. Aabcd	մարդ(+կ)+անց)+ից+ս))))	—

Երկու գրականներում էլ ամենագործուն կաղապարը առաջինն է: Այն կարելի է դիտել իբրև անունների (գոյականների գերակշիռ մասի, գոյականաբար առնված բոլոր թվականների ու ածականների) հոլովման բնդհանրական տիպ: Ընդ որում, ինչպես նշել է Գ. Ջահուկյանը, երկրորդ տիպին պատկանող գոյական անունները ևս կարող են ունենալ այդ տիպը՝ բնկեր(+ներ)+ից)+ս)))—բնկեր(+ներ)+է)+ս))):

Արևելահայերենին բնորոշող երրորդ և չորրորդ կաղապարները (ընդգրկում են սահմանափակ թվով գոյականներ) բնորոշ չեն արևմտա-

հայերենին. արևելահայերենի կանանցիցս նմուշը արևմտահայերենում ներկայացվում է կիներէս ձևով, իսկ արևելահայերենի ամենաբազմանդամ (ամենաշատ մասնիկներ պարունակող) կաղապարի միակ նմուշը՝ մարդկանցիցս, արևմտահայերենում ներկայացվում է մարդոցմէս—մարդերէս տարբերակներով: Այդ նշանակում է, որ ամենաբազմանդամ կաղապարը՝ մարդկանցիցս, բացառվում է արևմտահայերենում:

Այսպիսով, կարելի է ասել, որ հոլովական վերջամասնիկների մասնակաղապարներով համեմատաբար հարուստ է արևելահայերենը: Դա պայմանավորված է արևմտահայերենի հոլովման տիպերը հնարավորին չափ միօրինականացնելու, սահմանափակելու ձգտումով:

Գալով հիմքի հարցին, ամենից առաջ պետք է նշել, որ մեր երկու գրականները հոլովական հարացույցի կազմության ժամանակ բնորոշվում են հետևյալ առանձնահատկությամբ. որոշ հոլովների դեպքում հոլովական վերջավորությունները կցվում են ուղղականի, որոշ հոլովների դեպքում՝ սեռական-տրականի հիմքին:

Ընդունելով հիմքերի տիպերի Գ. Ջահուկյանի դասակարգումը, կարելի է ասել, որ առաջին կարգի հոլովանիշերով ձևավորված հիմքերով ավելի հարուստ է արևելահայերենը: Անհոլովանիշ 18 հիմքերի դիմաց արևմտահայերենում առկա է 14-ը. բացակայում են արևելահայերենին հատուկ ձևերը՝ մուր—մբան, մարդիկ—մարդկանց, կանայք—կանանց և գյուղացիք—գյուղացոց ձևերը: Վերջին ձևը, պետք է ասել, որ բնորոշ չէ նաև գրական արևելահայերենին: Ինչ վերաբերում է կանանց ձևին, ապա արևմտահայերենում լայն տարածում է գտել կիներու ձևը: Վերջապես՝ մբան, մարդկանց ձևերի դիմաց արևմտահայերենում առկա են մուրի և մարդերու ձևերը:

Ըստ էության, հիմք անվանումը հենց մատնանշում է, որ այն տրվյալ հարացույցի հիմքն է ամբողջությամբ վերցրած և ոչ թե նրա մեկ մասի (հիշեցնենք, որ երկու գրականների հոլովման ենթակա բառերը բնորոշվում են երկու հարացույցով (եղակիի և հոգնակիի): Եվ հիմք հանդիսացող որևէ բան կարող է ենթարկվել հնչյունափոխության կամ ոչ, բայց նոր ձևույթների հավելում հարացույցի կեսում չի կարող տատանալ: Տուն—տ(ր)նակ, ամուսին—ամուսնու և այլ ձևերում առկա է գրական արևելահայերենի հիմքի հնչյունափոխության տիպական վիճակը: Այդ փոփոխությունները կարելի է խմբավորել երկու մասի. 1) հիմքի վերջնավանկային ձայնավորի վերածում ր-ի (շուն—շ(ր)նից, վ-ի՝ դիրքային պայմանավորվածությամբ՝ կաու—կաովի) և 2) սղում՝ մանուկ—մանկան:

Եթե հոլովման հարացույցում առկա են հոլովական երկրորդային վերջավորություններ (ան, ոջ և այլն), ապա, բացի ներդաշնակության գործառույթով պայմանավորված յ-ից, մյուս բոլոր դեպքերում բացառվում են հոլովական համակարգի ընդհանրական կամ բաց ցուցակով (այդ մասին տե՛ս ի-ի կամ ու հոլովումներին նվիրված բաժինները) տրվող հոլովումները (արևելահայերենի համար ի-ն, արևմտահայերենի համար՝ հոգնակիի ու-ն)։ Այսինքն՝ հարացույցում երկրորդային վերջավորությունների առկայությունը կարող է տվյալ հոլովման ենթակա բառերի ցուցակի փակ (ոչ սերունդ կամ ոչ գործուն) լինելու ձևական ցուցիչ ծառայել երկու գրականների համար էլ։ Այսինքն դա ընդհանրույթ է նրանց համար, ինչպես որ հիմքի և վերջավորության հետ կապված կարելի է նշել երկու գրականներում միևնույն կցական տիպի բնորոշ լինելը։ Թեև նրանց միջև այդ հարցում կան զգալի տարբերություններ. այսպես՝ եթե գրական արևմտահայերենը բնորոշվում է հիմքի հարաբերական կայունությամբ (հիշենք տուն, ջուր և այլ ձևերը), ապա գրական արևելահայերենը աչքի է ընկնում հոլովական հիմքերը հնչյունափոխելու որոշակի միտումով (համմտ. ջուր—ջ(ը)րի, տուներու—տ(ը)ների և այլն)։

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐ

Թեև լեզուներում տարբերակվում են խոսքի մասերը, և բնականաբար տարբերվում են նաև երկու գրականներում, սակայն խոսքի մասերի բովանդակությունը (ավելի ճիշտ՝ պարունակությունը) երբեմն տարբեր է լինում և այդպես է նաև տվյալ դեպքում, որ պայմանավորված է ոչ այնքան բուն մեր երկու գրականների առանձնահատկություններով, որքան ուսումնասիրողների մոտեցմամբ, դասակարգման հիմքում դրված հատկանիշներով և այլն։ Այսպես, արևմտահայ քերականագիտության մեջ թվականը առանձին խոսքի մաս չի դիտվում, այլ մտցվում է ածականի մեջ՝ ածական թվական։ Կարելի է ասել, որ արևմտահայ քերականագիտությունը խոսքի մասերի դասակարգման ժամանակ երբեմն հետևում է եվրոպական լեզուների քերականագիտությանը, արևելահայ քերականագիտությունն էլ՝ ռուսագիտությանը։ Բնականաբար, ներկա դուգադրության ժամանակ խոսքի մասերի տարբերակումը կատարվում է միասնական սկզբունքներով և այդ նախորդում է բուն դուգադրությանը։

Ըստ իրականության արտացոլման՝ բոլոր խոսքի մասերը կարելի է դասակարգել երկու խմբի՝ հիմնական խոսքի մասեր (գոյական, բայ, ածական, մակբայ) և երկրորդական՝ դերանուն, ձայնարկություն և այլն։ Եթե հիմնական խոսքի մասերը իրականության տարրերը նշանակում են ինքնուրույն կերպով, անմիջականորեն և տրոհված կերպով (տե՛ս էջ. 97), ապա լրացուցիչ (երկրորդական) խոսքի մասերից, ասենք, դերանունը այդպիսի դեր (անվանողական) կատարում է հաճախ ոչ թե անմիջականորեն, այլ փոխանունությամբ՝ խոսքի մասնիկների հարաբերությամբ, իսկ շաղկապները ծառայում են բառերի և նախադասությունների կապակցության համար, վերջապես՝ ձայնարկությունները իրականությունն արտացոլում են չտրոհված ձևով։

Եթե աղյուսակի ձևով ներկայացնենք հիմնական և երկրորդական խոսքի մասերի հակադրական հատկանիշները, ապա այն կունենա հետևյալ տեսքը (այդ պատկերը ընդհանուր է լեզուների մեծամասնության համար)։

Բնականաբար, կարելի է խոսել համապատասխան ոլորտում եղած տիպաբանական ընդհանրության մասին.

Խոսքի մասեր	Բառն արտահայտում է իրականությունը		
	անմիջականորեն	ինքնուրույնաբար	տրոհված կերպով
հիմնական	+	+	+
դերանուն	—	+	+
կապեր, շաղկապներ	+		+
ձայնարկություն	+	+	—

Գոյականը, բայը, ածականը, մակբայը, դերանունը կազմում են իմաստակիր խոսքի մասերի խումբը, իսկ մնացած խոսքի մասերը՝ կապերը, շաղկապները, կազմում են սպասարկու բառերի խումբը։ Դրանով է պայմանավորված, որ վերջիններս նախադասության անդամ չեն համարվում։

Ըստ տարրերի արտացոլման (պատկերման) բնույթի տարբերակվում են գոյականը, բայը, ածականն ու մակբայը։ Յուրաքանչյուր ասույթ ունի երկու գլխավոր խոսքի մաս (նկատի ունենք տիպական, ընդհնրական ձևը)՝ գոյական և բայ։ Թե՛ մեկը և թե՛ մյուսը ունեն իրենց հատկանիշները (բնութագրումները), որոնք արտահայտվում են ածականով և մակբայով։

Հիմնական խոսքի մասերը տարբերակվում են իրարից երեք հատ-

կանիշների զուգորդությամբ՝ իմաստային, ձևաբանական (ըստ քերականական կարգերի) և շարահյուսական (ըստ նրանց գործառության նախադասության մեջ)։ Նշված հատկանիշներից, անտարակույս, ինչպես նշել են շատ լեզվաբաններ, կարևոր դերը պատկանում է ձևաբանական հատկանիշին (պատահական չէ, որ խոսքի մասերի տարբերակումը մըտնում է ձևաբանության բաժնի մեջ)։

Եթե բնութագրման ժամանակ որպես կարևոր հատկանիշ հաշվի առնենք այն, որ համադրական կառուցվածքի լեզուներում խոսքի մասերը հստակորեն նշույթավորված են (ունեն ձևաբանական տարբերիչ հատկանիշներ) և եթե փաստ է, որ մեր երկու գրականներում խոսքի մասերից նման հստակ բնութագրում ունի միայն բայը, ապա կարելի է ասել, որ արդի հայերենը վերլուծական և համադրական լեզվատիպերի միջև գրավում է միջակա դիրք (ամբողջապես չհատկացվելով ոչ մեկին, ոչ էլ մյուսին)։

1. Երկու գրականներում էլ ինչպես մակբայը, այնպես էլ ածականը չենթվող խոսքի մասեր են։ Երկուսում էլ ածականի և մակբայի ձևաբանական հատուկ հատկանիշներ չկան (բացառությամբ հատուկ մակբայական ածանցներ ունեցող տիպերի՝ դժկամորեն, ուրոշապես և այլն)։ Նրանց տարբերակումը կատարվում է, ըստ էության, շարահյուսական ոլորտում՝ ըստ այն բանի, թե ո՛ր խոսքի մասի հետ են կապված. գոյականի՝ ուրեմն ածական են, բայի՝ ուրեմն մակբայ են։

2. Երկու գրականներում էլ ածականի և գոյականի ելակետային ձևերը առանձնահատուկ վերջավորություններ չունեն և կարող են շփոթվել։ Երկուսում էլ առանձնապես հեշտ է ածականի անցումը գոյականի. համմտ. գեղազանց, հիվանդ և այլն։ Նմանօրինակ անցումները հիմնականում կատարվում են հետևյալ կերպ. եթե ածական + գոյական կապակցության երկրորդ բաղադրիչը բացակայում է, այսինքն՝ ածականին գոյական չի հաջորդում, ապա ածականը հեշտությամբ կարող է գոյականացվել։ Այս երևույթը շատ ավելի բնորոշ է արևելահայերենին։

Բառարաններում ներկայացվող բառամթերքի խոսքիմասային բաշխվածությանը զուգընթաց, տեքստային «հագեցվածությունը»՝ բեռնվածությունը քերականական հետաքրքիր շատ երևույթներ կարող է պարզել։ Արևմտահայերենի հաճախականության բառարանի չգոյության պատճառով, երկու գրականների խոսքիմասային «բեռնվածության» մասին առայժմ խոսել կարելի է միայն որոշ վերապահությամբ։ Այսպես, արևմտահայերենը համեմատաբար ավելի հաճախ է դիմում կա-

պերի գործածությանը. հիշենք թեկուզ, որ արևելահայերենը ներգոյական հոլովի իմաստն արտահայտում է գերազանցապես համադրական եղանակով (անձի առման դեպքում՝ վերլուծական եղանակով). արևմտահայերենում համապատասխան իմաստը կարող է արտահայտվել միայն վերլուծական եղանակով՝ գրում[1]—գիրքին մեջ[2]: Այդտեղից էլ, վերլուծականության աստիճանը արևմտահայերենի անվան ոլորտում համեմատաբար բարձր է:

Գոյական

Գոյականը որպես խոսքի մաս: Երկու գրականներում էլ գոյականը որպես խոսքի մաս հատակորեն ընդգծվում է իրեն բնորոշ իմաստային որոշակի տարբերակիչ հատկանիշով՝ առարկայի կամ որպես այդպիսին (իմա՝ առարկա) ընկալվող երևույթի անվանմամբ: Այդ առումով գոյականը տարբերվում է դերանունից նրանով, որ վերջինս ոչ թե առարկան ներկայացնում է անվանելով, այլ տարբեր հարբերություններով (դիմային՝ ես, դու, իմը, տարածական՝ սա, դա, նա և այլն):

Երկու գրականներում էլ գոյականը բառակապակցությունների մեջ հանդես է գալիս որպես առաջնային բառ (լրացյալ) և կարող է ստանալ լրացումներ:

Ինչպես արևելահայերենի, այնպես էլ արևմտահայերենի գոյականները դասդասվում են ըստ իմաստային որոշակի խմբերի, որոնցից յուրաքանչյուրին հատուկ են քերականական համապատասխան հատկանիշներ, որոնց մասին կխոսվի ստորև: Այդ խմբերն են՝ վերացական և ոչ վերացական (թանձրացական), հատուկ և հասարակ:

Երկու գրականներում էլ կարելի է հատակորեն տարբերակել բառերի համեմատաբար փոքր իմաստային խմբեր (օրինակ՝ ժամանականիշ գոյականներ, աղգականություն արտահայտող բառախմբեր և այլն), որոնք օժտված են քերականական յուրահատուկ գործածությամբ՝ յուրահատուկ հոլովում (վա), անհոգնականություն և այլն:

Հատուկ և հասարակ գոյականներ: Երկուսում էլ հատուկ անունների խմբի մեջ մտնում են՝ 1) անձնանունները (Բագրատ), 2) աշխարհագրական անուններ (Հրազդան): 3) երկրների, պետությունների և վարչական դանազան միավորումների անուններ (Իտալիա), 4) երկերի, պարբերական մամուլի անուններ («Գարուն», «Մխիթար Սպարապետ»), 5) ձեռնարկությունների, հաստատությունների, հիմնարկությունների և այլ անուններ («Անի» հյուրանոց, գյուղատնտեսական ինստիտուտ):

Վերջին կետում արևելահայերենը անհամեմատ հարուստ է բաղադրյալ հատուկ անվանումներով:

Երկու գրականներում վերացական և թանձրացական խմբերի (վերացականներ և թանձրացականներ) միջև սահմանազատումը շատ խիստ չէ. առկա է միջակա դիրք գրավող բառերի մի խումբ, ուր իմաստափոխության հետևանքով բառը կարող է հանդես գալ ինչպես վերացականների, այնպես էլ թանձրացականների ոլորտում: Համմտ. Ս. Աբրահամյանի նշած օրինակներից մեկը, որ հատուկ է գրական արևելահայերենին՝ դիմում բառը, որն իր մեկ իմաստով մտնում է թանձրացականների մեջ, մյուսով՝ վերացականների (ԻԲ. 2. 43): Արևմտահայերենում թանձրացականի իմաստով հանդես է գալիս դիմումնագիր ձևը:

Անձ/ոչ անձ (իր) ցույց տվող գոյականներ. ի տարբերություն գրական արևելահայերենի, որտեղ թանձրացական գոյականների խմբի ներսում որոշակիորեն տարբերակվում են անձնանիշ—ոչ անձնանիշ (իրանիշ) ենթախմբերը, արևմտահայերենին նմանօրինակ տարբերակում հատուկ չէ: Արևելահայերենում անձնանշության հատկանիշը հատուկ է բոլոր անձնանուններին, այլև՝ անձնանիշ հասարակ գոյականներին՝ բազաֆացի, ամուսին, ուսանող և այլն:

Ոչ անձնանշության (իրանշության) խմբի մեջ մտնում են մնացած բոլոր գոյականները:

Նշված իմաստային երկու խմբերը որոշակի քերականական դրսևորում են ունենում.

ա) Անձնանիշները, երբ հանդես են գալիս որպես կրող խնդիր, դրվում են տրականով, ոչ անձնանիշները՝ ուղղական հոլովով՝ ինչպես, օրինակ՝ Ես աստուած եմ բշնամուն—Ես աստուած եմ ձմեռը: Արևմտահայերենում երկու դեպքում էլ գոյականը հանդես է գալիս ուղղական հոլովով՝ Ես կաթեմ բշնամին—Ես կաթեմ ձմեռը: Արևմտահայերենում բացակա իմաստային այդ հակադրությունը արևելահայերենում զուգորդվում է յուրահատուկ մի տարբերակմամբ՝ շնչավորություն—ոչ շընչավորություն, որի դեպքում բառը կարող է դրվել տրական հոլովով, եթե այն անձնանիշ չլինելով հանդերձ շնչավորության հատկանիշ ունի, ինչպես՝ նա սիրում է կովին, ջրել աճասուններին (համմտ. ԻԲ. 3. 22): Անձնավորման դեպքում անշունչ առարկաները նույնպես կարող են կիրառվել անձի առումով (օր.՝ Հասոն լացացնում էր սարերին և ձորերին):

բ) Անձնանիշ գոյականների մի զգալի հասը (մասնավորապես հա-

սարակ անունները՝ եղբայր, հույր և այլն) ենթարկվում են ոչ թե ի հոլովման, այլ արտաքին թեքման ոչ և ներքին թեքման ո հոլովումներին և այլն (մեռնիմ—մեռնից):

գ) Անձնանշություն-ոչ անձնանշություն իմաստային հատկանիշով որոշակիորեն զատված երկու խմբերի մեջ փոխադարձ անցումներ թույլատրելի են, երբ իրը անձնավորվում է (ըմբռնվում է որպես անձ) և հակառակը: Համմտ. Յուզբաշյանը ուսանողներին տարավ Մոսկվա: Յուզբաշյանը ուսանողներ տարավ Մոսկվա: Վերջին դեպքում (ուսանողներ) ընդգծվում է անորոշության գաղափարը:

Գոյականի բառակազմական կարգերը (ընդհանուր դիտողություններ). երկու գրականներում էլ գոյականը բնորոշվում է հետևյալ հատկանիշներով՝ 1) թվառություն, 2) հոլովառություն, 3) հոդառություն: Ըստ այդմ էլ գոյականն ունի թվի, հոլովի և հոդառության կամ առկայացման (տարբորոշման) կարգերը:

Այս կարգերը երկու լեզուներում էլ միմիայն գոյականներին չէ, որ հատուկ են. այսպես՝ երկուսում էլ թվի կարգը հատուկ է նաև բային, հոլովի կարգը՝ դերանուններին և այլն: Թեև բոլոր դեպքերում այդ կարգերը երկուսում էլ գերազանցապես հատուկ են գոյականներին: Անգամ գոյականների ներսում նշված քերականական կարգերը միևնույն տարածվածությունը (ընդհանրականությունը) չունեն. եթե թվի քերականական կարգը հատուկ է բոլոր գոյականներին, ապա հոլովի կարգը և առավել ևս՝ առկայացման կարգը ընդգրկման տարբեր աստիճաններ ունի ոչ միայն երկու լեզուների համապատասխան ոլորտների ներսում, այլև վերջիններիս իրար հետ ունեցած բազդատմամբ. առայժմ բավարարվենք նշելով որոշյալության ենթակարգում երկու գրականների միջև եղած հետևյալ տարբերությունը. սեռական-տրականի որոշյալ հոդ առնելու ունակությունը գրական արևմտահայերենում և դրա բացառումը՝ գրական արևելահայերենում (արևմտահայերենում սեռականը հոդ չի առնում):

Թվի կարգը

Ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրական լեզուներում.

1. Գոյականի թվի կարգը ներկայանում է երկու հիմնական ենթակարգերով՝ եզակի և հոգնակի՝ միաթվության (մեկ) և անմիաթվության (մեկից ավելի) հակադրություն արտահայտելու համար:

2. Թվակազմության հիմնական միջոցը մասնիկավորումն է:

3. Եզակի թվի արտահայտության միջոցը զրո մասնիկն է, որ հոգնանիշ վերջավորությունների հետ ունեցած հակադրությամբ կազմում է մեկ անդամով անփոփոխակ։

4. Թվանիշ (հոգնակիակազմ) ձևերից բնորոշը շեշտափոխված տիպն է, երբ ի տարբերություն մաքուր հիմքի, հանդես է գալիս ձևավոր՝ անշեշտակիր հիմքը։

5. Թվակազմության ժամանակ հիմքատեսակների բնույթը պայմանավորված է վանկաքանակությամբ. երկու գրականներում էլ հատակորեն տարբերակվում են միավանկ և մեկից ավելի վանկանի (վերջիններիս մեջ՝ մեկուկես և բազմավանկ) հիմքերը։ Ըստ այդմ, առաջին դեպքում հանդես է գալիս եր հոգնակերտը, վերջին դեպքում՝ ներ-ը։ Մեկուկես վանկանի բառերի դեպքում առկա է բարդ հարաբերությունների պատկեր։ Արևելահայերենում մի խումբ միավանկ բառերի հոգնակին բնութագրվում է գրաբարյան ն-ի վերականգնումով (ձուկ—ձկներ, մուկ—մկներ և այլն)։ Արևմտահայերենում բառերի այդ շարքը հոգնակի թվում ն-ն չի «վերականգնում» (մուկ—մուկեր, ձուկ—ձուկեր և այլն)։ Արևմտահայերենի բառակազմության մեջ այդ ն-ն ներմուծվում է՝ մկնդեղ, մկնոտ, մկնիկ (կա նաև՝ մուկիկ)։ Այդ խոսում է այն մասին, որ արևմտահայերենը բառակազմության մեջ «ավանդապահ» է, ձևաբանության մեջ՝ ավանդախախտ և միօրինակության կողմնակից։

Արևելահայերենի համար միակ բացառությունը՝ ոտներ ձևը, արևմտահայերենում կանոնական թվակազմություն ունի՝ ոտեր։

Բուն եր, ներ հոգնակերտներից որոշապես տարբերվում են ամք, եմք, ոմք (ումք) հոգնակերտները. այդ առումով ճիշտ է նշում Ս. Աբրահամյանը. «Աբամեմք նշանակում է ոչ թե «շատ Աբամ», այլ «Աբամը և յուրայինները»։ Հոգնակիի այսպիսի իմաստը նման է որոշ դերանունների հոգնակիի իմաստին։ Համմմ. Մեմք չի նշանակում «շատ ես», այլ՝ ես և ուրիշները» (ԻԲ. 2)։ Այսպիսով, եմք, ոմք, ումք ավելի շուտ արտահայտում են հավաքականություն, քան թե բուն հոգնակիություն։

Եթե եր, ներ հոգնակերտները երկու գրականներում էլ բուն հոգնակին սերող մասնիկներն են, ապա մնացած հոգնակերտ վերջավորությունները՝ ք, ամք, եմք, ոմք և այլն, հանդիպում են սահմանափակ դիրքերում՝ հատուկ անուններով կազմված հիմքերի, արխայիկ ոճերի դեպքում և այլն։ Այնուամենայնիվ, արևմտահայերենում ք-ն բուն հոգնակերտներից (եր, ներ) հետո գործառական լայն դեր է խաղում (համմմ. ծնողք, տղաք և այլն)։

Իկ մասնիկով կազմված մարդիկ ձևը արևմտահայերենում ներկայացվում է նաև մարդեր ձևով։ Ի տարբերություն արևելահայերենի, մարդիկ ձևը արևմտահայերենում զուգորդվում է ը(ն) հոդի հետ, այսինքն՝ հոդառու է՝ մարդիկը։ Ոճ և ուճ հավաքականություն արտահայտող հոգնակերտները բնորոշ չեն արևմտահայերենին։ Ստորև ներկայացվում է երկու գրականների հոգնակերտ մասնիկների ընդհանրական տախտակը (∓ նշանը ունի թույլ արտահայտության իմաստը, ի հակառակ + (առկայության) և — (բացակայության) նշանների)։

	եր	ներ	իկ	այք	ք	ենք	ոնք	ունք
արևելահայերեն	+	−	+	+	∓	+	∓	∓
արևմտահայերեն	+	+	∓	+	+	+	−	−

Վերոհիշյալ թվաձևերի բոլոր հնարավոր տիպերից երևում է, որ ա) միայն արևելահայ և կամ միայն արևմտահայ գրականին հատուկ հոգնակերտ մասնիկները պայմանավորված են գերազանցապես լեզվի խոսակցական տարբերակով կամ էլ՝ առանձին դեպքերում արխայիկ կազմություններ են. բ) հակառակ հոգնակերտ մասնիկների (փոփոխակների) շատությանը, կարելի է ասել, որ բուն հոգնակիությունը իրացվում է եր, ներ-ով։ Միյուս հոգնակերտներով կազմված հոգնակիները նույնպես կարելի է ներկայացնել (փոխակերպել) համապատասխան եր, ներ հոգնակերտներով, բացառությամբ արևելահայերենի մարդ, կին, տիկին գոյականների. այսպես, օրինակ՝ տղաք[2]—տղաներ, ծնողք[2]—ծնողներ, պարոնայք—պարոններ, կանայք—կիներ[2] և այլն։ Ընդորում, եթե եր, ներ հոգնակերտները գործածության համեմատաբար լայն սահմաններ ունեն, ապա մնացած թվանիշ թերությունները գործածության որոշակի սահմանափակումներ ունեն. այնպես որ միանգամայն ճիշտ է գրական արևելահայերենի համար Գ. Ջահուկյանի նշումը, որ եր-ը և ներ-ը «ոճականապես չեզոք են, հետևաբար մյուսների համեմատությամբ ավելի գործուն և ընդհանրացած տիպեր են» (ԼԲ. 170)։

6. Արտահայտության պլանում միայն հոգնակի ձևեր ունեցող անունները (անեզականներ—pluralia tantum) խիստ սահմանափակ տարածում ունեն։ Երկու գրականներում էլ այսպիսով դրսևորվում է երկու կարգի հոգնակի՝ սովորական (բուն) հոգնակին և անեզական հոգնակին։

Անեզականների խմբում կարելի է տարբերակել՝

ա) բուն անեզականներ, որոնք եզակի ձևեր բնավ չունեն՝ գանգուրներ, ճորեր (ֆինանսներ բառը միայն արևելահայերենին է հատուկ)։

Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ ծնող բառը հանդես է գալիս թե եզակի և թե հոգնակի՝ ծնողներ ձևով, արևմտահայերենում կիրարկվում է ծնողք ձևը։

բ) Վերապրուկային ձևով մնացած՝ անք[1], ենք, ունք[1] մասնիկներով կազմված անեզականները հնատիպ են, սրանք սովորաբար աղգակցություն, կողմնակցություն, միասնություն ընդհանուր գծերով են հատկանշվում։

7. Բացի նյութականությամբ (զանգվածայնությամբ) բնութագրվող գոյականներից (օրինակ՝ հաց, ջուր, բրինձ, ppլածին և այլն) և հավաքական անուններից (nomina collectiva), հավաքականությունը դրսևորող եղեն և ուրյուն ածանցներից (բանջարեղեն, ուսանողություն), բովանդակության պլանում որոշակիորեն խմբավորվում են՝ ա) հատուկ անունների (Գանձակ, Վահագն), բ) վերացական անունների (nomina abstracta)՝ կարմրություն և այլն, գ) բնության մեջ միայն մեկ հատ դիտված առարկաների՝ արև, լուսին և այլն խմբերը, որոնց հոգնակի թիվը, ուղղակի իմաստներով կիրառության դեպքում, բնորոշ չէ։ Այս խմբերի անունները անհոգնական գոյականներ են, որոնք կառուցվածքային որոշակի և ինքնատիպ հատկանիշներով չեն բնորոշվում (համմտ. ԼՍ. 45)։ Ընդ որում եթե բուն վերացականների հոգնակին գործածական չէ, ապա հատուկ անունների հոգնակին, ինչպես նշվել է վերը, հաճախ է կիրարկվում (ԼԲ. 182)։

8. Վերոհիշյալ կետերից բխած՝ կարելի է նշել երկու դրականների եզակի և հոգնակի ձևերի բաղմարժեքությունը, իմաստային բազմաբնույթ հակադրությունը. երկու դրականներում էլ թվակազմությունը ներկայացվում է միակը և երկեղը հակադրություններով (միակեղը են, օրինակ՝ անհոգնականները)։

9. Բազմավանկ բարդ բառերի վերջին բաղադրիչների ինքնուրույն գործածություն ունեցող մեկվանկանի արմատներ լինելու դեպքում՝ ա) ներ են ստանում, երբ վերջնաբաղադրիչները բայարմատներ են՝ բեռնակիրներ, *բ) գործող անձ ցույց տվող բառեր են (հաճախորներ)։ Մնացած դեպքերում եր են ստանում։*

10. Վերջնային դիրքով հանդես եկող մեկուկես վանկանի բաղադրիչ ունեցող բարդությունները պահպանում են հոգնակիակազմության նախկին հատկությունը՝ եր-ով ձևը՝ տեառ—տեառեր—ձայնատեառեր,

ինչպես և բազմավանկ (երկվանկ և ավելի) բաղադրյալ բարդ բառերի հոգնակիակազմությունը հետևում է ընդհանուր վանկաքանակության կանոնին:

11. Բացարձակ դերակշռություն ունեն շեշտափոխ հոգնակիակազմ հիմքերը, և դա բնական է, որովհետև բացի խիստ սահմանափակ գործածություն ունեցող f հոգնակիակերտից, մյուսները միավանկ (հետևաբար՝ ձայնավոր պարունակող) ձևույթներ են, որոնց կցման հետևանքով տեղի է ունենում հիմքի ձայնավորի տեղաշարժ և շեշտափոխություն:

Այսպիսով, երկու գրականների հոգնակիակազմությունը բնորոշվում է կցական տիպաբանությամբ. ներքին թեքման և այլ կարգի երևույթները ոչ համակարգային վերապրուկային ձևեր են: Հոգնակի թվում, ըստ էության, ներքին հոլովում չկա (աշուն—աշնան, բայց՝ աշուններ—աշուններու). այսինքն՝ եղակիի հարացույցում հանդես եկող ներքին թեքման երևույթները հոգնակիում գրեթե բացառվում են (կին—կանայք ոչ համակարգային ձևերի զանցառմամբ):

Ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրական լեզուների բոլոր հոլովաձևերի հոգնակիակազմ (հոգնակերտ) հիմքը ընդհանրացած (միասնականացած) է, ինչպես որ ընդհանրացած են հոգնակերտ վերջավորությունները. ընդ որում, արևելահայերենի հոգնակերտ (թվանիշ) հիմնական թեքույթների՝ եր, ներ, զուգորդումը կատարվում է ի հոլովանիշի հետ, իսկ արևմտահայերենում՝ համապատասխանաբար և հետևողականորեն՝ ու հոլովանիշ թեքույթի հետ:

Երկու գրականներում էլ սեռացական հոգնակերտների դեպքում տարածված երևույթ է երկու հոգնակերտ մասնիկներով կազապարավորումը՝ միավանկների դեպքում: Սեռացականակազմ հոգնակերտը արևելահայերենում գործածվում է միայն միավանկների համար. արևմտահայերենում բազմավանկների դեպքում առկա է հատուկ հոգնակերտով կազապարը՝ գործ—գործեր—գործերին, մառան—մառաններ—մառաններին:

Երկու գրականներում առկա սեռացականության երևույթը կարելի է ներկայացնել հետևյալ պատկերով.

Արևելահայերեն	Արևմտահայերեն
գործ—գործեր	*գործ—գործեր*
գործս—գործերս—գործներս	*գործս—գործերս—գործերին*
քուն— ∅	*քուն— ∅*
քուն— ∅—քուններս	*քուն— ∅ —քուներին*

մառան—մառաններ *մառան—մառաններ*
մառանս—մառաններս *մառանս—մառաններդ*

Ինչպես ցույց են տալիս ընդգծված ձևերը, արևելահայերենում ստացական հոգնակի կերտելու համար գործում է ներ-ը, արևմտահայերենում՝ երնիս կամ նիս մասնիկավորման տիպերը:

Բացի վերոհիշյալ առանձնահատկությունից, հոգնակիակազմության ժամանակ երկու գրականների միջև դրսևորվում են հետևյալ (մասնակի) տարբերությունները.

1. Գրական արևմտահայերենը ձգտում է ընդհանրական հոգնակիակազմ հիմք ունենալուն. եզակի ուղղականը ոչ միայն եզակի հոլովման, այլև հոգնակիի միասնական հիմք դարձնելուն (համմտ. ԼԱ. 254—255). ինչպես՝ արևելահայ. ջուր, ջ(ը)րի, ջ(ը)րեր, ջ(ը)րերի, իսկ արևմտահայերեն՝ ջուր—ջուրի, ջուրեր—ջուրերու:

2. Գրական արևմտահայերենը ունի անհնչյունափոխ հիմքերի կայունացման որոշակի ձգտում. ընդ որում այդ միտումը ընդգծվում է հատկապես հոգնակիակազմ հիմքերի դեպքում՝ թումբ—թումբեր: Այսպես՝ ի ձայնավոր ունեցող միավանկ (փակ) հիմքերի դեպքում, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենը հիմքը պահում է անփոփոխ՝ օրինակ՝ ֆիր—ֆիրեր: Հարկ է նշել, որ առանձին դեպքերում գրական արևմտահայերենում առկա են նաև հնչյունափոխ հիմքերի օրինակներ, թեև այդ դեպքում անգամ հաճախականը ավյալ բառերի անհնչյունափոխ ձևերն են՝ դ(ը)ռներ—դուռ(ն)եր:

3. Արևմտահայերենում միևնույն բառի անհնչյունափոխ և հնչյունափոխված հիմքերի առկայությունը հաճախ իմաստային որոշակի գործառությամբ է օժտվում. այսպես՝ գլուխ, եակատ, մարմին բառերը ունեն ինչպես հնչյունափոխված՝ գլխէ, մարմնէ, եակաէ, այնպես էլ՝ անհնչյունափոխ ձևերը՝ գլուխէ, եակատէ, մարմինէ: Առաջին ձևերում խոսքը վերաբերում է մարմնի մասերին կամ էլ՝ մարմնին ամբողջությամբ. անհնչյունափոխ հիմքերի դեպքում՝ համապատասխանաբար նշանակում է՝ գրքի գլուխ, ռազմանակատ, հանձնախումբ: Նույն ձևով իմաստային զանազանություն է առկա արևմտահայերենի շաբաթ բառի հնչյունափոխված և անհնչյունափոխ ձևերի միջև. առաջին դեպքում (շաբթուան) խոսքը վերաբերում է շաբաթվա յոթ օրերին, երկրորդ դեպքում (շաբաթվան)՝ շաբաթ օրվան (համմտ. ԼՔ. 101):

4. Հոգնակիակազմ ի/ա հերթագայության արևելահայերենում առ-

կա կին—կանայք բացառիկ օրինակն անգամ արևմտահայերենում անցել է կանոնավորների շարքը՝ կին—կիներ-ու:

5. Արևելահայերենին հատուկ իմոնք, ոճոնք, իրենցը սոացական փոխանվանական ձևերի փոխարեն, արևմտահայերենում գործածական են նաև հոգնակի հետևյալ ձևերը՝ իմիններ, իրեններ և այլն:

6. Եթե արևելահայերենի ի հոլովման չպատկանող գոյականների եզակի և հոգնակի հոլովատիպերը երբեք չեն համընկնում, ապա արևմտահայերենում ու հոլովման դեպքում զուգադիպում են, ինչպես՝ ժամ—ժամու—ժամերու (բացառությամբ՝ մարդ—մարդու—մարդոց ձևի, թեև այդ դեպքում անգամ կա նաև կանոնական՝ մարդերու ձևը):

7. Միայն ձևաբանական ածանցական արժեքով հանդես եկող ք-ին զուգահեռ, որ առկա է երկու գրականներում էլ, կիրարկվում են նաև ս-ով ձևերը՝ ծախք—ծախս (ծախսեր): Արևելահայերենում մի բառի սահմաններում ինչպես ք-ի, այնպես էլ ս-ի առկայության օրինակ՝ ցանկսեր-ը (տե՛ս ԼԱ. 256):

8. Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ բարդության մեջ իրենց անկախ գործածությունից տարբեր ձևաբանական արժեք ունեցող վերջնաբաղադրիչները պահպանում են նախկին կառուցատիպը՝ գիր—գ(ը)րեր—լրագ(ը)րեր, արևմտահայերենում այդ ձևերը անցնում են ներ-ով կառուցատիպին՝ լրագիրներ, գինետուններ, սիրերգներ և այլն:

Անշուշտ, արևմտահայերենում էլ առանձին դեպքերում առկա են երկձևության (ինչպես եր-ով, այնպես էլ՝ ներ-ով) երևույթներ, ինչպես՝ իմճաշարժեր—իմճաշարժներ: Այնպես որ կարելի է ասել, որ հակառակ ընդհանուր զարգացման միտումներին, տակավին ձևաբանական որոշ երևույթներ ավարտուն ձևավորման չեն հասել:

Հոլովի կարգը

Նկատի ունենալով այն հանրահայտ փաստը, որ հոլովը պետք է որոշել հոլովական ձևի և հոլովական իմաստի հարաբերությամբ (միասնությամբ) և որ որևէ լեզվի հոլովների թիվը քանակապես չի կարող ավելին լինել, քան հոլովական հարացույցում առկա հոլովաձևերի թիվը, կարելի է ասել, որ արևելահայերենի հարացույցն ունի առավելագույնը հինգ հոլով (նշում ենք առավելագույն-ը, որովհետև առանձին գոյականական խմբեր չունեն ներգոյական հոլով). ուղղական՝ ֆար, տրական՝ ֆարի(ն), բացառական՝ ֆարից, գործիական՝ ֆարով, ներգոյական՝ ֆարում: Արևմտահայերենի հոլովման հարացույցում նախորդ

չորս ձևերը հանդես են գալիս նույնությամբ, իսկ հինգերորդ ձևը՝ բառում (ներգոյական) բացակայում է։ Այդ նշանակում է, որ արևմտահայերենը ունի չորս հոլով։

Այն հանգամանքը, որ ավանդական քերականության ներկայացուցիչները, սովորաբար, որպես սեռական հոլովի տրականից ունեցած ձևական տարբերություն, նշում են վերջինիս հոդառության հնարավորությունը, որը նախորդի նկատմամբ բացառվում է, չի կարող լուրջ կռվան հանդիսանալ, որովհետև հենց արևմտահայերենում ավանդական քերականության սեռականն էլ կարող է որոշյալ հոդ (ն) ստանալ, այնպես որ հոլովի կարգը առկայացման (հոդառության) կարգի հետ պետք չէ շփոթել։

Եթե արևմտահայերենի հատկացուցիչը կիրարկվի առանց հոդի, ապա կդիտվի որպես ածական։ Այսպես՝ մասվաճառի դանակ կապակցության մեջ, ի տարբերություն արևելահայերենի, մասվաճառի ձևը արևմտահայերենում ածականական արժեք ունի. այնպես որ վերոհիշյալ բառակապակցության արևմտահայերենը կլինի և հոդով՝ մասվաճառին դանակը (հոդերի կիրարկությունների մասին տե՛ս առկայացման կարգին նվիրված բաժինը)։

Անվիճելի է, որ հոդառական այս յուրահատկությունը հոլովի տարբերակման ցուցիչ չի կարող լինել։

Ուղղական հոլովի նման, տրականն էլ բազմիմաստ է. և դա բնական է, որովհետև այն իր մեջ ներառում է ավանդական քերականության սեռական և տրական հոլովների արտահայտած իմաստները. բացի այդ նաև որոշ չափով՝ հայցականի իմաստը (վերջինիս միայն արևելահայերենին հատուկ լինելը մատնանշելով, ասենք, որ մնացյալ դեպքերում հոլովական իմաստների և հոլովական ձևերի փոխհարաբերության նույն պատկերն առկա է երկու գրականներում էլ). ըստ այդմ էլ արևելահայերենի համար տարբերակված բուն տրական, սեռական-տրական և հայցական-տրական իմաստներից արևմտահայերենին հատուկ են առաջին երկուսը։ Տրական հոլովի հայցական տարբերակ արևմտահայերենում բացառվում է, որովհետև հայցական (ավանդական ըմբռնմամբ) և տրական հոլովների միջև ձևական ընդհանրություն չկա՝ պայմանավորված անձ—ոչ անձ (իր) հակադրության բացակայությամբ։

Բացառական և գործիական հոլովները երկու գրականներում էլ իրենց արտահայտած իմաստներով գերադանցապես համընկնում են։

Եթե արևելահայերենի համար միանգամայն հիշատ է Գ. Զահուկ-

յանի դիտումը. «Հայցական հոլովը շարահյուսական տարբերակն է ուղղականի և տրականի» (ԼԲ. 175—176), ապա արևմտահայերենի համար այն շարահյուսական տարբերակն է միայն ուղղական հոլովի:

Գոյականի հոլովները

Ուղղական հոլով: *Երկու գրականներում էլ ուղղական հոլովն ունի հետևյալ հատկանիշները.*

1. Հոլովական զրո վերջավորություն, որով հակադրվում է մասնիկավորմամբ բնորոշվող թևք հոլովաձևերին:

2. Հոդառության հնարավորություն (իկ[1], այ, ակ[1], եկ, ոկ[1], ուկ[1] հոգնակերտներով կազմված ուղղականները որոշիչ հոդ չեն ստանում):

3. Երկուսում էլ ուղղականը աչքի է ընկնում իմաստային լիածավալությամբ (համմտ. ԻԲ. 2. 52) կամ համապարփակությամբ, թեև իր արտահայտած տարբեր հարաբերություններով որոշ չափով մասնավորվում և դրանով իսկ սահմանափակում է իր իրոք լայն իմաստը:

4. Երկուսում էլ որոշապես տարբերակվում են իրենց արտահայտած իմաստներով ուղղականի երեք փոփոխակները՝ բուն ուղղական, հայցական-ուղղական և կոչական-ուղղական:

Որպես երկու գրական լեզուների ուղղականի ոլորտում դրսևորվող տարբերություն կարելի է նշել հետևյալը. ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենի հայցական-ուղղականը իր մեջ ամբողջապես ներառում է ավանդական քերականության մեջ ընդունված հայցական հոլովը իր ձևական և իմաստային միասնությամբ, մինչդեռ արևելահայերենում, ինչպես նշվեց, անձ—ոչ անձ (իր) հակադրության առկայությամբ, այն բաշխվում է տրականի և ուղղականի միջև:

Տրական հոլով: *Երկու գրականներում էլ՝*

1) հոլովական տիպերը որոշվում են այս հոլովով, որովհետև այստեղ հանդես են գալիս համապատասխան հոլովատիպերին պատկանելու ցուցիչները՝ ի, ու, ո, վա(ն), ան, ա: Այն երկուսում էլ բոլոր հոլովներից ամենաանմիօրինակն է ու բաղմաձևը:

2. Սահմանափակ թվով բառերի սեռական-տրականում տեղի է ունենում գրաբարյան ներքին թեքմանը հատուկ հնչյունական հերթագայություն՝ այ/ո, ու/ա (ինչպես՝ հայր—հոր, տուն—տան), ինչպես նաև վերջնավանկային ձայնավորի հերթագայություն (ինչպես՝ բարութիւն—

թարուրյան)։ *Բացի վերոհիշյալից գործում են նաև սահմանափակ տարածում ունեցող այլ ձևեր։*

3. Երկու գրականներում էլ եզակի տրականի ամենաբնորոշ և տարածված վերջավորությունը ի-ն է, որն ավելանում է ուղղականի հիմքին՝ վերջից (աջից) (բացառելով հոդը)[1]։ Այդ ընթացքում տեղի են ունենում ի, ու, ույ/ը, ինչպես նաև՝ ի, ու/օ, ե/ի հնչյունափոխություններ։

Երկու գրականներում էլ տարի բառաձևում վա(ն) հոլովակերտի ավելացմամբ հիմքի ի ձայնավորը սղվում է՝ տարվա(ն)։

Երկու գրականների տրական հոլովաձևերի միջև եղած տարբերություններից են.

1. Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենը միտում ունի հոլովման հիմքերը նվազ հնչյունափոխության ենթարկելու՝ գիրք—գ(ը)րքի, արևմտ. գիրք—գիրքի, ջուր—ջ(ը)րի, արևմտ. ջուր—ջուրի։

2. Ի վերջավորությամբ բազմավանկ հասարակ անունները արևելահայերենում ենթարկվում են ի-ու հնչյունափոխության (գինի—գինու)։ Այդ երևույթը արևմտահայերենին հատուկ չէ (գինիի, հոգիի և այլն)։ Որպես եզրակացություն վերոհիշյալին, կարելի է նշել արևմտահայերենի հոլովման հիմքերի հարաբերաբար հնչյունափոխության չենթարկելու ձգտումը։

3. Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենի սեռական-տրականին հատուկ է որոշյալի քերականական կարգը, ուստի և որոշյալ հոդ առնելը։

4. Եթե արևելահայերենում սեռական-տրականը կազմվում է եզակիի հիմքից, հոդնակիի ուղղականից՝ հոլովման դեպքում պահպանելով համապատասխան հոլովման ցուցիչը՝ աշակերտ-ի, աշակերտներ-ի, ապա արևմտահայերենում, ինչպես նշվեց, բոլոր հոլովատիպերի հոդնակի սեռական-տրականը ունենում է ու ցուցիչը՝ ուսանողներու (որպես բացառություն դիտվող մարդ, տղա բառերի հոդնակին լինում է մարդոց, տղոց)։ Այսինքն, հետևողական պարզ (այսինքն եզակի և հոդնակի թվերում միևնույն հոլովիչի միջոցով կազմավորված) հոլովման միակ տիպը արևմտահայերենում ու-ն է, ինչպես որ արևելահայերենում ի-ն։

Արևելահայերենում բացի ի-ից, մյուս հոլովումների հոդնակիները նույնպես ենթարկվում են կանոնական՝ ի հոլովման (բացառությամբ սահմանափակ տարածում ունեցող ց-ի)։

Բացառական հոլով։ *Բացառականը երկու գրականներում էլ ձևա-*

վորվում է առավելագույնը երկու վերջավորություններով. արևելահայերենն՝ ից, ուց, արևմտահայերենում՝ է, մէ: Երկուսում էլ հիմնական հոլովակերտներն են համապատասխանաբար՝ ից, է թեքույթները: Ուց (մէ) հոլովական վերջավորությունները սահմանափակ կիրառություն ունեն: Ընդ որում, եթե արևելահայերենի բացառականի վերջավորություններին հատուկ է բաղաձայն բաղադրիչի ընդհանրությունը (ց), ապա արևմտահայերենում հակառակը՝ ձայնավոր բաղադրիչի ընդհանրությունը (է):

Երկու գրականներում էլ.

1) Բացառականը կարող է կազմվել ինչպես ուղղականից, այնպես էլ տրականի հիմքից:

2. Առավել ընդհանրականը և տարածվածը ուղղականի հիմքից կազմվելն է, մանավանդ հոդնակի բացառականի կազմության ժամանակ: Դրան չեն հետևում, ինչպես նշվել է, եմ, ոմ, ումբ վերջավորությամբ ուղղականները, այլև արևելահայերենի կանայք և մարդիկ հոդնակիի ձևերը:

Բացառական հոլովի արտահայտած իմաստը երկու գրականներում էլ համընկնում է. «այն արտահայտում է սկզբնակետի, ելակետի իմաստ, որը կարող է մասնավորել առարկայի, տեղի, ժամանակի նկատմամբ» (հմմտ. ԻԹ. 2. 75):

Գործիական հոլով: Արևելահայերենի եզակի գործիականի ով և ը վերջավորություններից բացի, արևմտահայերենում առկա է նաև մով-ով ձևը, որը կարելի է դիտել որպես ով-ի տարբերակ: Երկու գրականներում էլ՝

1. Գոյականների գերակշիռ մասի գործիականը կազմվում է ով հոլովակերտով:

2. Ը վերջնամասնիկով գործիականը հատուկ է -ուրյուն վերջածանցով բառերին բնորոշ -ուրյան սեռական-տրականից կազմված ձևվերին: Այդ դեպքում, առնմանությամբ պայմանավորված, ը հոլովակերտի ազդեցությամբ տեղի է ունենում ն/մ հնչյունափոխությունը:

3. Գործիական հոլովի կազմման ուղղականաձև և տրականաձև հիմքերը երկու գրականներում էլ համընկնում են:

4. Հոդնակի գործիականը այն միակ հոլովաձևն է, որտեղ արևելահայերենի և արևմտահայերենի համապատասխան հոլովաձևերը կարող են համընկնել՝ ֆաղաքներով:

5. Հոդնակի գործիականին երկուսում էլ ը վերջավորությունը հատուկ չէ:

6. Գործիականի իմաստը գերազանցապես գործողության միջոց արտահայտելն է։

Որպես գործիականի ոլորտում երկու գրականների միջև դրսևորվող տարբերություն կարելի է նշել հետևյալը. թյուն վերջավորությամբ ուղղականների բ-ով գործիականին զուգահեռ արևելահայերենին հատուկ է թյունով ձևերին նախապատվություն տալը՝ նախադասությունով նախադասությամբ-ի փոխարեն, մինչդեռ վերջին ձևը արևմտահայերենում կանոնական է։

Ներգոյական հոլով։ *Այս հոլովը հատուկ է միայն արևելահայերենին. արևմտահայերենը չունի այն։ Արևելահայերենում ներգոյականը ունի կազմության որոշակի սահմանափակումներ. ներգոյական հոլով չունեն՝*

1. Վերացական գոյականների զգալի մասը (այդ թվում նաև ում-ով կազմված բայանունները)՝ կարմրություն, բարեկամություն, բախում։

2. Անձնանունները. ինչպես հատուկ՝ Վահագն, այնպես էլ ո, ոջ, ց հոլովատիպերին ենթակա գոյականները։

3. Ժամանականիշ բառերի մեծ մասը՝ ցերեկ, գիշեր և այլն։ Վերոհիշյալ դեպքերում տարածական և ժամանակային սահմանափակման՝ ներգոյականի իմաստը արևելահայերենը արտահայտում է արևմտահայերենի նման՝ նկարագրական եղանակով՝ գոյականի սեռական հոլովաձև+մեջ կապ կառույցով՝ գիշերվա մեջ։ Հարկ է նշել, որ արևելահայերենում երբեմն ժամանականիշ բառերը գործածվում են ներգոյական հոլովով. օրինակ՝ գիշերում այս անշող (ՎՏ)։

Արևելահայերենի գոյականների մի խումբ եղակի ներգոյական չունենալով հանդերձ ունի հոգնակի ներգոյականի համապատասխան ձևեր. ինչպես՝ տատանում—տատանման մեջ—տատանումներում։ Այդ խմբի մեջ մտնող հատկապես ում-ով վերջացող բառախմբի համար (ինչպես՝ մրցում) եղակի ներգոյականի բացառումը սովորաբար բացատրում են նույնատիպ կապակցությունների՝ ում-ում, կողք-կողքի գործածելուց խուսափելու ձգտումով (Հմմտ. ԻԲ. 2. 81)։

Եթե ամփոփելու լինենք երկու գրականների հոլովների միջև առկա ընդհանրություններն ու տարբերությունները, կարելի է նշել հետևյալը.

1. Երկուսում էլ հոլովական ձևերի (փոփոխականների) և բուն հոլովների (անփոփոխականների) բարդ փոխհարաբերություն է առկա, որը երկուսում էլ հիմնական գծերով նույն պատկերն է ներկայացնում։ Երկուսում էլ, եթե զանց առնենք ուղղական հոլովը, որը բնորոշվում է

հոլովական ըրո վերջավորությամբ, տրական հոլովը ամենից շատ ձևային տարբերություններ ունեցող հոլովն է։ Այսպես, միայն արևելահայերենի համար նշվում են 17 ձևեր (ԻԲ. 2. 17)։

Երկուսում էլ բացառականին միայն երկու հոլովական ձևեր են հատուկ։ Նույն պատկերն է նաև գործիականում, ուր երկու գրականներին էլ հատուկ ով, ը վերջավորություններից բացի արևմտահայերենում գործում է նաև մով հոլովական վերջավորությունը։

Ստորև տրվում է երկու գրականների հոլովական վերջավորությունների ընդհանուր պատկերը.

Արևելահայերեն	Արևմտահայերեն
Ուղղ. 0	Ուղղ. 0
Տրակ. ի, ու, վա, ո, ա, ան, ոջ, ց	Տրակ. ի, ու, վան, ո, ա, ան, ոջ
Բացառ. ից, ուց	Բացառ. է, մէ
Գործ. ով, ը	Գործ. ով (մով), ը
Ներգ. ում	

Ինչպես երևում է աղյուսակից, բազմաձև տրականի հիմնական վերջավորությունները երկու գրականներում էլ գերազանցապես համընկնում են։ Բացի տրականից, միայն գործիական հոլովի ով, ը վերջավորություններով կարող են դարձյալ համընկնել։ Մնացած դեպքերում արևելահայերենի համապատասխան վերջավորությունների փոխարեն արևմտահայերենը կամ տարբեր հոլովական թեքույթներ է օգտագործում՝ է, մէ կամ էլ՝ պարզապես տվյալ հոլովը (ներգոյական) չունի։

Քանի որ երկու գրականներում էլ հոլովական ձևերի բազմազանությունը հատկապես ի հայտ է գալիս տրական հոլովում, դրանով պայմանավորված երկու գրականներում էլ հոլովման տիպերը որոշում են հենց այդ հոլովով։ Թեև առանձին դեպքերում ուղղական հոլովն արդեն ունի հոլովատիպը որոշելու որոշակի ձևական ցուցիչ (հատկանիշ), որով հնարավոր է լինում որոշել տվյալ բառի ո՛ր հոլովմանպատկանելը ձևական ցուցիչով. այսպես՝ եմ-ով վերջացող անձնանիշները, –ություն-ով վերջացող բառերը, ումն-ով բայանունների խումբը և այլն։

Ընդհանրական, իմաստային և ձևային հոլովումներ. վերը նշված դեպքերը, երբ ուղղականի ձևից կարելի էր որոշել համապատասխան հոլովատիպերը, հնարավոր էին ձևային հատկանիշների առկայության

շնորհիվ։ Երկու գրականներում ոչ հոլովման պատկանող բառերի ցանկի զուգադրությունը հեշտությամբ կարող է հանգեցնել այն եզրակացության, որ երկուսում էլ նրանք իմաստային որոշակի հիմք ունեն՝ անձնանշություն-ազգակցություն ընդհանուր հատկանիշը։ Այդ նշանակում է, որ երկու գրականներում էլ որոշապես կարելի է տարբերակել ձևային և իմաստային հոլովախմբեր, որոնց ենթակա բառացանկերը երկու գրականներում էլ գերազանցապես համընկնում են (Հայագիտության մեջ մատնանշվել է այսպիսի դասդասման որոշ օրինակների մասնակի վերապահումներ. ինչպես, օրինակ՝ տուն, շուն բառերի համար պրոֆ. Ս. Աբրահամյանի կողմից (հմմտ. ԻԲ. 2. 83)։

Երկու գրականներում էլ ձևային հոլովումների ենթակա բառերի թիվը հարաբերաբար գերակշռություն է կազմում, ինչպես և ձևային հոլովումների 4 տիպերը՝ ա, ան, ու, ց իմաստային հոլովումների երեք հիմնական տիպերի՝ ոչ, ո, վա համեմատ։ Այսպիսի դասակարգման բացարձակության դեմ կարող է խոսել ձևային հոլովումների տիպերի մեջ հանդես եկող ց հոլովումը, որն ունի նաև իմաստային որոշակի հատկանիշ՝ անձնանշությունը։ Թեև այդ կապակցությամբ ճիշտ է նկատում Ս. Աբրահամյանը, որ «այդ ձևն ունեցող որոշ բառեր (իմոնիմ, ոնոնիմ) կարող են ցույց տալ ոչ միայն անձ, այլև իր, բայց միևնույն է, սրանք ևս պատկանում են ց հոլովման։

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում առկա է բառերի որոշակի խումբ, որ մեկից ավելի հատկանիշներով բնութագրվելով՝ ենթարկվում է տարբեր հոլովումների. հմմտ. արևմտահայերեն գլուխ բառը, որը կարող է ունենալ գլուխի կամ գլխու հոլովաձևերը. բան այդմ թե մարդու գլուխ է նշանակում, թե գրքի (վերջին դեպքում գործածվում է միայն գլուխի ձևը) (հմմտ. ԻԲ. 85)։

Երկու գրականներում քննվող հարցի առումով կարելի է նշել հետևյալ ընդհանրությունը. միաժամանակ տարբեր հոլովումների պատկանող բառերի գերակշիռ մասը, որպես հոլովման տիպերից մեկը, ունենում է ի հոլովումը, որն ատիճանաբար կարողանում է իրեն ենթարկել իմաստային խմբերի պատկանող մի շարք բառեր (ինչպես՝ տուն, շուն բառերը արևմտահայերենում վերածվել են տունի, շունի ձևերի, արևելահայերենում ժամ բառը ժամի՝ ժամվա-ի փոխարեն և այլն)։

Հոլովումների վերոհիշյալ դասդասման մեջ չէր նշված Ի հոլովումը, որը պայմանավորված է երկու գրականներում վերջինիս ունեցած տարածվածությամբ։ Ըստ էության, երկու գրականներում էլ առկա է

բնդհանրական հոլովման մեկ տիպ՝ ի հոլովումը, որի ձևային կամ իմաստային այս կամ այն խմբին (տիպին) միայն վերագրելը բացառվում է։ Եթե կարելի է ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ գրական լեզուների համար բացի ի-ից, մյուս հոլովատիպերի ենթակա բառերի ցանկերը համարել փակ, նկատի ունենալով, որ կարելի է տալ ավյալ հոլովման պատկանող բառերի սպառիչ ցանկը, ապա ի հոլովման դեպքում գործ ենք ունենում, այսպես ասած, բաց ցուցակի հետ. այսինքն՝ ոչ թե նկատի է առնվում այս տիպին պատկանող բառերի բացարձակ գերակշռությունը, այլ այն, որ յուրաքանչյուր նորակազմ գոյական կամ նորագույն փոխառություն որպես կանոն մտցվում է ի հոլովման ենթակա բառերի ցանկի մեջ. այստեղից կարելի է եզրակացնել, որ սերման առանձնահատկությունների հաշվառմամբ, ի-ն երկու գրականներում էլ առաջին տեղն է գրավում։

Առանձին դեպքերում (արևելահայերենում ի-ով վերջացող բազմավանկ բառերի ու-ով հոլովման հնարավորություն է ստեղծվում) փոխանցման հնարավորություն ստանում է միայն ու հոլովումը։

Անդրադառնալով երկու գրականների արտաքին և ներքին հոլովումների ընդհանուր բնութագրմանը, նշենք, որ երկուսում էլ գերակշռում է արտաքին թեքումը, երբ հոլովական վերջավորություններն ավելանում են հիմքի վերջից։ Ըստ այդմ, կարելի է կցական հոլովական ձևերը համարել առաջնային և ներքին թեքման ձևերը՝ երկրորդային։ Վերջինիս անվանման դեպքում նկատի ունենք, որ այս խմբի մեջ մտնող բառերը հատուկ են որոշակի նեղ շրջանակների, որի կազմում հանդես եկող միավորները ամենից առաջ բնութագրվում են իմաստային ընդհանրությամբ։ Եվ ապա՝ երկրորդային (ներքին թեքման) ձևերի հնարավոր փոխանցումները երկու գրականներում, ինչպես՝ արևմտահայերենի վերոհիշյալ տուն, շուն ձևերը ներքին թեքման տան, շան-ի փոխարեն, այլև երկու գրականներին էլ հատուկ՝ երկրորդային (ներքին թեքման) ձևերի հոգնակիի բոլոր արտահայտությունների առաջնային (կցական) հոլովումներին հատուկ կազմավորում ունենալը՝ ոտյր—ոտրոջ—ոտյրեր։

Երկու գրականների հոլովման տիպերի խմբավորման ժամանակ պետք չէ ելնել տարժամանակյա սկզբունքներից (հաշվի առնելով գրաբարյան ձևերը և այլն). այդ դեպքում այնքան էլ ճիշտ չէր լինի ոչ միայն մուկ—մ(ր)կան, այլև գինի—գինու հոլովական փոփոխությունները քննելը արտաքին թեքման մեջ, որովհետև մի դեպքում ակնհայտ է գրաբարյան մուկն—մկան երևույթը, մյուս դեպքում հիմքի ձայնավորի՝ ի-ի

ադման երևույթը, մի բան, որ արտաքին որակել (երբ այն տեղի է ունենում արմատի ներսում, կամ եզրային դիրքում) չենք կարող։ Այդ սկզբունքով երկու գրականների բուն ներքին թեքման արտահայտություններ են՝ այ/ո, ու/ա հնչյունական հերթագայությունները հետևյալ ձևերում՝ մայր/մոր, տուն/տան (վերջինս արևմտահայերենին հատուկ չէ)։

Առաջնային հոլովումներ

Ի հոլովում

Ինչպես նշվեց, երկու գրականների ընդհանրական հոլովը ի-ն է, որն իր տարածվածությամբ բացարձակ տեղ է գրավում։

Երկու գրականներում էլ տարբեր հոլովումների ենթակա բառախմբերի ներսում փոխանցումները (իմա՝ անցումները) կատարվում են միշտ հօգուտ ի հոլովման։ Հայոց լեզվի հոլովման համակարգի զարգացման արդի փուլում որոշակի է մյուս հոլովատիպերի պատկանող բառերի ի հոլովման կողմից իրեն ենթարկելու միտումը։

Ի հոլովման ժամանակ երկու գրականներում հանդես են գալիս հետևյալ տարբերությունները.

1. Ի հոլովման պատկանող գոյականները արևելահայերենի հոգնակիի ձևերում նույնպես ենթարկվում են նույն հոլովման՝ ի, արևմտահայերենում կանոնավոր կերպով փոխանցվում են ու հոլովման։

2. Արևելահայերենի բառավերջի ու ձայնավորը մի շարք դեպքերում հոլովական վերջավորությունից առաջ հնչյունափոխվում է վ-ի (ինչպես՝ կատվի), արևմտահայերենին հատուկ չէ՝ կատուի։

3. Եթե արևելահայերենը ընդհանրապես խուսափում է նույն ձայնավորի կամ երկու ձայնավորի անմիջական հաջորդականությունից, ինչպես՝ գինի—գինու, ապա արևմտահայերենը, ընդհակառակն, այդպիսի դեպքերում էլ հնչյունափոխության չի դիմում՝ գինիի։

Արևելահայերենի համար մասնավոր դեպք է հատուկ անունների (տեղանունների և անձնանունների) այս երևույթից ունեցած շեղումը՝ Թբիլիսիի, Պագանիենի և այլն։ Նկատելի է, որ զարգացման արդի փուլում արևելահայերենում նույնպես սկսել է լայն տարածում գտնել ի ձայնավորով վերջացող հիմքերի անհնչյունափոխ լինելը (հատկապես նորագույն փոխառությունների ժամանակ. համմ. ԻՔ. 2. 89)։

4. Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում այս հոլովման կարող են պատկանել նաև այնպիսի բառեր, որոնք նախոր-

դում միմիայն մեկ հոլովատիպի կարող են պատկանել (ինչպես՝ տուն, շուն, տունի, շունի և այլն)։

Ի հոլովում

Այս հոլովման պատկանող բառերը երկու գրականներում էլ սեռական-տրականում ունենում են ու հոլովակերտը։ Այս տիպարին պատկանող երկու գրականների բառերի ընդհանուր ցուցակը պարունակում է՝ 1) մարդ, ձի բառերը, 2) անորոշ դերբայների ցանկը՝ բերել—բերելու և այլն։

Գոյականաբար գործածվելու դեպքում արևմտահայերենի անորոշ դերբայի իլ, ուլ լծորդները փոխվում են ել-ի. ինչպես՝ բողոլ—բողելու, խոսիլ—խոսելու և այլն։

Մնացած դեպքերում կամ արևելահայերենի ու հոլովման պատկանող բառերը արևմտահայերենում այլ հոլովումների (գերազանցապես՝ ի-ի) միջև են բաշխվում. ինչպես՝ աճկողին, ամուսին, ասպված բառերը (վերջինս՝ նաև ո հոլովման) և կամ էլ՝ հակառակը, արևելահայերենում գերազանցապես ի հոլովման ենթակա բառերը արևմտահայերենում ենթարկվում են ու հոլովման. ինչպես, օրինակ՝ հայ, կով, ծով, հավ, ճավ, հով, մաճ, չին, այգ, ժամ, էշ, բի, արջ, գաճ, պաճ. մաճչ դար։ Հետաքրքրությամբ կարելի է նկատել, որ նշված բոլոր բառերն էլ միավանկ են։ Այսինքն՝ գործում է վանկաքանակության օրենքը։ Նշված ձևերով կազմված բարդություններում, եթե այդ միավանկները հանդես են գալիս վերջնային դիրքում, դարձյալ ենթարկվում են ու հոլովման՝ ռուսահայ—ռուսահայու։

Այսպիսով, ու հոլովումը երկու գրականներում ունի բառ-ոլորտային տարբերություններ։ Բացի այդ, այդ հոլովման ոլորտում երկու գրականների միջև առկա են նաև հետևյալ տարբերությունները։

1. Ինչպես արդեն նշվել է, արևելահայերենին հատուկ ի-ով վերջացող (գինի, օղի և այլն) ի/ու հերթագայության փոխարեն արևմտահայերենում անհնչյունափոխ ձևը՝ գինիի։ Բացի վերը թվարկված երկու դեպքերից՝ անձնանուններից, այս երևույթը հատուկ է նաև արևելահայերենին ցուցակով տրվող հետևյալ բառերին՝ աճդրի, ժյուրի, հոգնակի և այլն։

Ակնհայտ է, որ արևմտահայերենում ու հոլովման ենթակա բառերի թիվը շատ ավելի է արևելահայերենի համեմատությամբ։ Ուրեմն, ու-ն գործուն հոլովատիպերից է արևմտահայերենում։

Երկու գրական լեզուների միջև հոլովման հարացուցում դրսևորվող հիմնական առանձնահատկություններից է հոգնակի թվում միայն մեկ թեքման հարացույց (կաղապար) ունենալը՝ արևելահայերենում Ի-ով, արևմտահայերենում՝ Ու-ով. բոլոր հոլովատիպերին ենթակա, անգամ անկանոն հոլովումների բառերը հոգնակիում կանոնավոր կերպով ստանում են արևել. Ի, իսկ արևմտ. Ու հոլովական վերջավորություններ: Այսինքն, ըստ էության երկու գրականների հոգնակի թվում առկա է հոլովման մեկ միասնական կաղապար:

Գրական արևմտահայերենում Ու հոլովման ենթակա բառերի մի մասը կարող է հոլովվել նաև Ի հոլովմամբ: Այդ կրկնակ ձևերի մեջ, սակայն, առկա է իմաստային զանազանման (տարբերակման) սկզբունքը. այսպես՝ շահ և պապ բառերը, երբ խոսքը Պարսկաստանի շահի և Հռոմի պապի մասին է, հոլովվում են Ի հոլովմամբ, այլապես՝ Ու-ով՝ Շահի, բայց շահու[2]:

Հարկ է նշել, որ գրական արևելահայերենում Ու հոլովման գրաբարյան որոշ ձևեր դեռևս պահպանում են իրենց կենսունակությունը, ինչպես՝ Հովհաննու ավետարան և այլն: Այդ ձևերը կարելի է որակել որպես «հնացած», նկատի ունենալով, որ դրանք, նախ, զուրկ են հոլովման կանոնավոր հարացույցից (այդ ձևերն ունեն հիմնականում սեռական-տրական հոլովը՝ ելից, ծննդոց, վարագա, սրբոց և այլն, և այն էլ գործածվում են գոյականների միայն սահմանափակ խմբի հետ, բոլոր դեպքերում ունենալով արխայիկ շրջանի որոշակի հետքեր, այսինքն, նրանց գործածության ոլորտները և բաշխումը (շրջապատը) խիստ սահմանափակված է՝ Գիրք ելից, Գիրք ծննդոց, Վարագա վանիք, վարք սրբոց և այլն: Ահա այդպիսի ից, ոց, ա «հնացած» հոլովական թեքույթները հանդիսանում են բուն՝ կանոնական, հոլովական վերջավորությունների համար լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ գտնվող միավորներ:

Ան հոլովում

Երկու գրական լեզուներում էլ Ան հոլովումը հատուկ է հետևյալ բառերին՝

Ա) ում ածանցով բաղադրված բայանուններին՝ ուսում, բաժանում և այլն: Ընդ որում, երկու գրականների մեջ էլ այդ բառերի մի խումբ կարող է հանդես գալ նաև ընդհանրական հոլովմամբ՝ Ի-ով՝ բաժանումի—բաժանմամբ և այլն:

բ) գրաբարյան ն կորցրած մի շարք միավանկ բառեր՝ դուռ (դրան—դռան), լեռ (լերան—լեռան), բեռ (բեռան), թոռ (թոռան), առաջին երկու օրինակներում կրկնակ ձևերից առաջինը հատուկ է արևմտահայերենին, վերջիններըը՝ արևելահայերենին։

գ) մանուկ բառը, որ տրականում լինում է՝ մանկան։

Երկու գրականներում էլ միավանկ հիմքերը ենթակա են հնչյունափոխության, երբ հանդես է գալիս ու ձայնավորը (դուռ—դ(ը)ռան. տեղի է ունեցել ու/ը հնչյունափոխությունը)։ Սովորաբար հիմնային ա և ո ձայնավորներն աչքի են ընկնում հարաբերական կայունությամբ։

Վերջնավանկային ու ձայնավոր ունեցող բազմավանկ հիմքերի դեպքում տեղի է ունենում ու-ի սղում (խոսքը փակ վանկի մեջ հանդես եկող ու-ի մասին է)՝ աղկում—աղկման և այլն։

Ա.ն հոլովման ոլորտում երկու գրականների միջև հանդես եկող տարբերություններից կարելի է նշել հետևյալը.

1. Ա.ն հոլովման են պատկանում՝ ա) արևմտահայերենի աղջիկ բառը, բ) զուտ արևմտահայերենի էրիկ (էրկան), կնիկ (կնկան) բառերը։ Ընդ որում եթե մանուկ բառը դուռ, լեռ-ի նման կարող է գործածվել նաև ի-ով (դուռի, մանուկի), ապա էրիկը և կնիկը ենթարկվում են միայն ան հոլովման, կարծես թե իմաստային որոշակի դաշտ կազմելով՝ ամուսիններ։

2. Արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, տարվա եղանակների անունները ան հոլովման չեն պատկանում, այլ ի։ Ձիշտ է, կան նաև աշնան, գարնան ձևերը, բայց կանոնական ձևեր են դիտվում՝ աշունի, գարունի հոլովաձևերը (հմմտ. ԺԳ. 155)։

Այս առնչությամբ նշենք նաև, որ արևելահայերենի ամառ և ձմեռ ձևերն էլ ավելի հաճախ ենթարկվում են վան հոլովման՝ ամառվան, ձմեռվան։

3. Արևելահայերենի ան հոլովման ենթակա միավանկ բառերի հետևյալ շարքը՝ գառ, եզ, բոռ, ծոռ, ձուկ, մուկ, նուռ արևմտահայերենում կանոնավոր կերպով ենթարկվում է ի հոլովման։ Բնականաբար, ան հոլովման ժամանակ արևելահայերենին հատուկ ու/ը հնչյունափոխության դեպքերը (մուկ—մ(ը)կան), արևմտահայերենում չեն գործում՝ մուկ—մուկի։

Արևելահայերենի աղջիկ բառը դասվում է այլաձև հոլովումների շարքին, որպես արտաքին թեքման ա-ի միակ օրինակ։

4. Ի տարբերություն գրական արևելահայերենի, որտեղ տրական և

գործիական հոլովներում ան վերջավորությունը ավելանում է ուղղականի հիմքի վրա, իսկ բացառական հոլովի դեպքում, բացի ում-ով կազմված բայանուններից, տրականի հիմքին՝ ինչպես՝ աշնանից, գարնանից, գրական արևմտահայերենում, բացառական հոլովի կազմավորման յուրահատկությամբ պայմանավորված, բոլոր թեք հոլովաձևերի համար հիմք է ծառայում ուղղականը՝ դուռէ (արևելահայերենի՝ դռնից-ի դիմաց)։

վա (ն) հոլովում

Գրական արևելահայերենի ժամանականիշ բառերին հատուկ վա հոլովմանը համապատասխանում է արևմտահայերենի վան հոլովումը։

Վա վերջավորությամբ բառերը արևմտահայերենում ածականական արժեք ունեն, վանը՝ գոյականական։

Երկու գրականներում էլ այս հոլովատիպին են պատկանում հետևյալ բառերը՝

1. or, այսօր, կեսօր, տարի, ամիս, շաբաթ, վաղը, գիշեր։

2. Որոշ ձևական տարբերություններ ունեցող բառեր՝ առտու—առտուան, առավոտ—առավոտվա, ցոռեկ—ցոռեկուան, ցերեկ—ցերեկվա։

3. Միայն արևմտահայերենին հատուկ ժամանականիշ բառաձևեր՝ ատեն—ատենուան, հիմակ—հիմակուան։

4. Արևելահայերենում բարբառային-խոսակցական մակարդակում կիրարկվող հերու—հերվան ձևը գրական արևմտահայերենի կանոնական ձևերից է։

5. Երկու գրականներում էլ տրականի վա(ն) վերջավորությունը ավելանում է գերազանցապես անհնչյունափոխ հիմքի վրա (ժամանակ-վա(ն), գիշերվա(ն) և այլն, բացի տարի և ամիս բառերից, որտեղ համապատասխանաբար տեղի է ունեցել ի ձայնավորի սղում՝ տարվա(ն), ամսվա(ն)։

6. Արևելահայերենի բացառական հոլովի վերջավորությունից առաջ ընկած մասը համընկնում է արևմտահայերենի համապատասխան մասին, որովհետև արևելահայերենի տրականի վերջավորության և հիմքի միջև հանդես է գալիս ն բաղաձայնը՝ գիշերվա-ն-ից (արևմտ. գիշերուրնէ)։

7. Երկու գրականներում էլ ժամանականիշ բառերի մի որոշ խումբ կարող է հավասարապես ենթարկվել նաև ի հոլովման. ինչպես՝ գիշերի, ժամանակի, օրի և այլն։

Երկու գրականների միջև եղած մասնակի տարբերություններից են.

1. Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ գործիականը կարող է կազմվել տրականի հիմքից (ինչպես՝ երեկ-վա-ն-ով), արևմտահայերենում գործիականը կազմվում է ուղղականի հիմքից՝ երեկ—երեկ-ով և այլն:

2. Արևմտահայերենում ամիս, անգամ, առեն, ժամանակ, կեսօր, շաբաթ բառերի բացառականի կանոնական ձևերը ուղղականի հիմքից կազմվածներն են՝ ամիսէ, առենէ և այլն, այն դեպքում, երբ արևելահայերենում նրանց համապատասխան ձևերը կարող են ունենալ նաև տրականի հիմքից կազմված բացառականի ձևեր, ինչպես՝ ամսվանից (*հմմտ. ԻՒ. 2. 95*):

ՈՉ հոլովում

Ի տարբերություն մյուս հոլովումների, ոչ հոլովման ենթակա բառերի ցուցակները երկու գրականներում էլ բացառապես համընկնում են. երկուսում էլ այդ հոլովման են պատկանում անձնանիշ (գերազանցապես՝ ազգականություն ցույց տվող) բառերի մի որոշակի շարք, ինչպես՝ աեր, կին, տիկին, հայր, տալ, աներ, ընկեր բառերը:

Ոչ հոլովման են պատկանում նաև երկու գրականներում բառաձևային որոշ տարբերություններ ունեցող հետևյալ օրինակները՝ արևելահայ. տեգր, սկեսուր, արևմտահայ. տագր, կեսուր բառերը: Ազգականանիշ հիմնաբառերով ձևերը՝ դասընկեր, տաճառեր և այլն նույնպես ենթարկվում են ոչ հոլովման: Այսինքն՝ բարդությունների մեջ ևս ոչ իմաստային հոլովումը պահպանում է իր ուժը:

Արևմտահայերենում ոչ հոլովատիպին է պատկանում նաև ներ բառը, որը արևելահայերենում գործածական չէ:

Երկու գրականներում էլ ոչ հոլովական վերջավորությունից առաջ ընկած հիմքը կարող է՝

1. մնալ անփոփոխ. ինչպես՝ տալ—տալոջ, ընկեր—ընկերոջ,

2. ենթարկվել այլազան փոփոխությունների. ընդ որում որպես երկու գրականների տվյալ հոլովման ոլորտում հանդիպող հնչյունափոխությունների օրինակներ կարելի է նշել հետևյալները.

ույ/ը	*քույր—քրոջ*
ու/∅	*(ս)կեսուր—(ս)կեսրոջ*
ի/ը	*կին—կնոջ*

ի/∅	*տիկին—տիկնոջ*
(է) և/ի	*տեր—տիրոջ (տէր)*

Երկու գրականներում էլ ոջ հոլովման ենթակա բառերի զգալի մասի բացառական և գործիական հոլովները կազմվում են տրականից. քնականաբար, արևելահայերենին հատուկ ից-ի փոխարեն արևմտահայերենում մէ վերջնամասնիկով՝ կնոջից—կնոջ+մէ: Այդ դեպքում ոջ հոլովակազմիչը հանդես է գալիս որպես հիմքի տարր և ստանում համապատասխան բուն հոլովական վերջավորությունները. ինչպես ոջ+ից կամ ոջ+մէ:

3. Ոջ հոլովման ենթակա որոշ բառերի բացառական և գործիական հոլովները կազմվում են ոչ թե տրականի հիմքից, այլ ուղղականի. ինչպես՝ արևելահայերենի տեգր, տալ—տեգրից, տալից, արևմտահայերենի տագրէ, տալէ: Նշված բառերի ոջ հիմքով հոլովաձևերը կանոնական չեն գրական արևելահայերենի համար (հմմտ. ԻԲ. 2. 99):

4. Երկուսում էլ (ս)կեսուր և տալ բառերը կարող են հոլովվել նաև ի հոլովմամբ՝ կեսուրի, տալի:

Երկու գրականների ոջ հոլովման ոլորտում հանդես են գալիս հետևյալ մասնակի տարբերությունները.

1. Կին բառի արևելահայերենին հատուկ կանայք (կանանց) հոդնակիի փոխարեն արևմտահայերենում կանոնավոր ձևերին հատուկ է կիներ (կիներու) ձևերի գործածությունը:

Տիկին բառը արևելահայերենում այժմ միատում ունի ենթարկվելու ի ընդհանրական հոլովման՝ տիկիններ (հմմտ. ԻԲ. 2, 100):

2. Երկու գրականներին հատուկ գործիականի ով ընդհանուր վերջավորության փոխարեն ոջ հոլովման ենթակա բառերի արևմտահայերենում մով թեքույթով կազմվելը՝ կին—կնոջ—կնոջմով:

Երկրորդային հոլովումներ

Ա. հոլովում

Երկու գրականներում էլ ու/ա հոլովման պատկանում են՝

1. Ուրյուն վերջածանց ունեցող գոյականները՝ երջանկություն, հիմարություն և այլն:

2. Տուն և շուն բառերը, որոնք արևմտահայերենում գործածվում են նաև տունի, շունի ձևերով:

Երկու գրականներում էլ տրականում ուրյուն վերջավորության փոփոխությամբ առկա է ուրյան ձևը:

Բացառական հոլովը արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, կազմվում է տրականի ձևից՝ գիտութենէ—գիտությունից. արևելահայերենում այն կազմվում է ուղղականի հիմքից:

Եթե գրական արևելահայերենում գործիական հոլով կարելի է կազմել գործիականի երկու վերջավորությունների՝ ով և ք միջոցով՝ պայմանավորված կամ ուղղականի (ով-ի դեպքում), կամ տրականի (ք-ի դեպքում) հիմքի ընտրությամբ, ապա արևմտահայերենում, թերևս լեզվի տնտեսման, նվազագույն ճիգի օրենքով պայմանավորված, առաջնությունը տրվում է տրականի հիմքից կազմված ձևերին. ինչպես՝ նախադասությամբ և մանավանդ հոգնակիում՝ նախադասություններու:

Ո հոլովում

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում այս հոլովման են ենթարկվում սահմանափակ թվով՝ ազգակցություն ցույց տվող միևնույն բառերը՝ հայր, մայր, եղբայր և դրանցով բաղադրված այն բարդությունները, որտեղ նշված ձևերը հանդես են գալիս վերջնային դիրքում, ինչպես, օրինակ՝ տիրամայր, կնքահայր և այլն:

Թեև գրական արևելահայերենն ունի ներգոյական հոլով, բայց երկու գրականների Ո հոլովման պատկանող բառերին այդ հոլովը հատուկ չէ. անձնանիշ գոյականները սովորաբար ներգոյական հոլով չեն ունենում:

Բոլոր թեք հոլովներում առկա է հիմքի ներսում կատարվող այ/ո հերթագայությունը:

Երկու գրականներում էլ բացառական և գործիական հոլովները կազմվում են տրականի հիմքից, յուրաքանչյուրին հատուկ հոլովական վերջավորություններով՝ ից—մէ, ով—մով: Դրանով էլ պայմանավորված՝ առաջանում են ձևային որոշ տարբերություններ. ինչպես արևելահայերեն՝ հոռով—արևմտ. հոռմով: Առանձին դեպքերում արևմտահայերենի ձևերը նույնանում են արևելահայերենինի հետ՝ Աստված հոռով մոռով պահէ (*հմմտ. խբ. 155*):

Յ հոլովում

Այս հոլովման ենթարկվում են աւիւ, եւիւ, ուիւ հավաքականություն արտահայտող գոյականները: Թեք հոլովներում տեղի է ունենում ի/ց

հերթագայությունը։ Օր.՝ Աշոտենք—Աշոտենց, Վարդանանք—Վարդանանց *(հնացած ձև է)։*

Երկու գրական լեզուների հոլովման համակարգերի հիմնական տարբերությունները են.

1. Արևելահայերենում արտաքին թեքման Ո հոլովման միակ օրինակ սեր—սիրո-ի (լույս, սուգ, հույս բառերի լուսո, սգո, հուսո հոլովաձևերն այժմ դիտվում են հնացած և գրքային) դիմաց, որ սովորաբար ներկայացվում է այլաձև հոլովումների շարքում, արևմտահայերենում արտաքին թեքման Ո հոլովումը կազմում է հոլովման որոշակի տիպար, որի մեջ մտնում են հետևյալ գոյականները.

ա) աստված, սեր, Պոլիս *բառերը (կ. Պոլսոյ)*

բ) ԻԱ *վերջավորությամբ տեղանունները՝* Ասիա—Ասիոյ, Իտալիա—Իտալիոյ *(ինչպես տեսնում ենք, տեղի է ունենում հիմքի վերջում հանդես եկող ա-ի հերթագայություն Ո-ի)։ Նույն* ԻԱ *վերջավորությամբ անձնանունները արևելահայերենում կանոնավոր կերպով ենթարկվում են* Ի *հոլովման՝* Անանիա—Անանիայի։

գ) Առանձին տեղանուններ՝ Մուշ, Կարին (Մշո, Կարնո) *և այլն։*

2. Գրաբարյան մի շարք տրականներ՝ մարմնոյ, հաշվոյ, թվոյ, *թեև գրական արևմտահայերենում գործածական են, կանոնականը ընդհանրական* Ի *հոլովմամբ տրականի ձևերն են՝* մարմնի, հաշվի, թվի։

Հարկ է նշել, սակայն, որ դարձյալ առանձին դեպքերում հոլովման կրկնակ ձևերից յուրաքանչյուրին գործառական որոշ տարբերություն են հատուկ. ինչպես մարմնի (մարդու) *և* մարմինի *(վարչական միավորի, ղեկավարման կենտրոնի)։*

Երկու գրականներում էլ որպես գրաբարյան «մեռած» ձև գործածվում է պատվո(յ) *ձևը. արևելահայերենում* պատվո պահակ, պատվո տախտակ *արտահայտությունների, այլև* պատվոգիր *բառի մեջ։ Մյուս դեպքերում այն թեքվում է* Ի-ով՝ պատվի համար։

Թեև երկու գրականների հոլովման համակարգերում էլ հոգնակին ձգտում է կանոնավոր մեկ հոլովման տիպարի՝ արևելահայերենում՝ Ի-ով, *արևմտահայերենում՝* ու-ով, *կան, այնուամենայնիվ, առանձին բացառություններ. արևելահայերենի համակարգի բացառություններն են* մարդ, կին *բառերը, արևմտահայերենի համակարգում՝* մարդը, *քանի որ* կին *բառը հոգնակիում ենթարկվել է հոլովման կանոնավոր տիպարին՝* կիներու։ *Պետք է նշել նաև, որ* մարդ *բառի հոգնակին երկու գրականներում տարբեր ձևեր է ունենում՝ արևելահայ.* մարդիկ—մարդկանց, *արևմտահայ.* մարդիկ—մարդոց։ *Վերջին ձևին է հետևում նաև արևմտա-*

հայերենի տղա բառի հոգնակին՝ տղամ—տղոց: Արևմտահայերենում հնարավորություն է ստեղծվել հոգնակի թվի դեպքում հասնել հոլովման ընդհանրական կաղապարից եղած բացառությունների առավելագույն սահմանափակման:

Նշենք նաև, որ մարդ և տղա բառերի ոչ կանոնավոր հոգնակիի ձևերին զուգահեռ արևմտահայերենում կիրարկվում են նաև հոգնակիի կանոնավոր ձևերը՝ մարդերու, տղաներու:

Երկու լեզուների հոլովի և թվի քերականական կարգերի քննությունից միանգամայն ակնհայտ է դառնում հոլովական կաղապարների մեջ համեմատաբար միանշանակ հոլովական թեքույթների և թվային վերջամասնիկների հիմնական տիպերի միջև եղած ընդհանրությունը, այսինքն՝ միևնույն կցական տիպին պատկանելը:

Հոդային կամ առկայացման կարգ

Երկու գրականներում էլ հոդային կամ առկայացման (տարորոշման) կարգը գոյականներին բնորոշ կարգերի թվին է պատկանում: Երկուսում էլ՝

1. Հոդերին հատուկ է բազմարժեքությունը. իմաստային բազմարժեքությանը զուգընթաց՝ նրանք բնորոշվում են հետևյալ հիմնական ընդհանրությամբ՝ գոյականների (կամ որպես այդպիսին առնված բառային այլ կարգերի) առկայացման կամ տարորոշման հատկանիշով:

2. Հոդային կամ առկայացման կարգը երկու գրականներում էլ դրսևորվում է (բացի մի—մը անորոշ հոդից) մենահնչյուն մասնիկներով՝ ս, դ, ն, (ը): Կցականությամբ արտահայտվող հոդային կարգը հայերենում ունի հետևյալ հիմնական ենթակարգերը՝ որոշյալության /անորոշության, ցուցականության, դիմորոշության, սեռականության:

Որոշյալություն–անորոշություն

Իրարբերություն անորոշ առման, որոշյալությունը նշում է խոսքի գործընթացում առարկայի հայտնի լինելը՝ ն, ը հոդերով (խոսքն, անշուշտ, ոչ թե իմացաբանական, այլ քերականական առումով հայտնի, որոշյալ լինելու մասին է): Նշված հոդերը հանդես են գալիս որպես միևնույն ենթակարգի (որոշյալության) դիրքային տարբերակներ՝ պայմանավորված հնչյունական որոշակի կախվածություններով: Որպես ը և ն հոդերի դիրքային տարբերակներ լինելու ապացույց կարող է ծա-

ռայել նաև արևմտահայերենի հետևյալ օրինակը՝ փողոցներէն—փողոցները, ուր ը և ն հոդերը դիրքային տարբերակներ են՝ պայմանավորված բառի ձայնավորահանգ կամ բաղաձայնահանգ լինելով։

Երկու գրականներում էլ ձայնավորահանգ բառերից հետո հանդես է գալիս ն առկայացուցիչը՝ Ավո(ն), բաղաձայնահանգներից հետո՝ ը-ն՝ վարդան-ը։ Թույլ դիրք կարելի է դիտել բաղաձայնահանգ բառ+ձայնավորով սկսվող բառ կապակցության մեջ ը-ի դիրքը, որը կարող է վերածվել ինչպես ն-ի, այնպես էլ՝ մնալ անփոփոխ՝ պայմանավորված լինելով ինչպես ոճական, արտասանական յուրահատկություններով, այնպես էլ շարահյուսական, հնչերանգային երևույթներով (հմմտ. ԻԲ. 2 108)։

Գրական արևելահայերենի համար նկատված երևույթը (երբ վերոհիշյալ կառուցատիպի միջև արտասանական դադար չկա և կամ աննշան է, գրվում է ն հոդը, մինչդեռ որոշակի շեշտվածության և դադարի դեպքում գրվում է ը հոդը) միանգամայն տիպական է նաև գրական արևմտահայերենի համար։

Թեև հոդային կամ առկայացման կարգի ամենատարածված ենթակարգը որոշյալության է, որոշյալություն/անորոշություն հակադրությունը երկու գրականներում էլ ոչ բոլոր հոլովներին են հատուկ և այն էլ՝ վերջիններիս ոչ բոլոր փոփոխականներին, ինչպես ուղղականի կոչական տարբերակը որոշյալ հոդից զուրկ է։ Մինչդեռ անորոշ առման դեպքում՝ անորոշության ցուցիչը՝ մի—մը օժանդակ բառ-մասնիկը երկու գրականներում էլ կարող է հանդես գալ բոլոր հոլովների հետ. այսինքն՝ դիրքային սահմանափակում չունի։

Եթե որոշյալությունը դրսևորվում է մասնիկավորմամբ, ապա անորոշության համար երկու գրականներն էլ դիմում են կամ զրո ձևույթին՝ ձևային ցուցչի բացակայության կամ մի/մը օժանդակ բառ-մասնիկին։ Այդ հարցում երկու գրականներում առաջանում են որոշակի ձևային և կիրառության ոլորտների ու կապակցման հնարավորությունների տարբերություններ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

1. Արևելահայերենի մի-ին համապատասխան արևմտահայերենի մը-ն ունի գործածության համեմատաբար լայն ոլորտներ։ Նշելի է մը-ի ազատ կիրառությունը ոչ միայն գոյականների (նյութական, վերացական և այլն), այլև այլ խոսքի մասերի հետ. հմմտ. կամացուկ մը, շատ մը և այլն (տե՛ս ԼՍ. 194—195)։ Այսպես, եթե արևելահայերենում անորոշի մի-ն փոխանուններին հետ սակավ է հանդես գալիս, ապա գրա-

կան արևմտահայերենում մր-ն ազատորեն կիրարկվում է նշված բառերի հետ, ինչպես՝ զատիլ մը, վազողի մը կը նմանէր և այլն։

2. Երկու գրականների համապատասխան ցուցիչների միջև առկա է փիրքային տարբերություն. արևմտահայերենի մր-ն, ի տարբերություն արևելահայերենի մի-ի, վերջադաս է՝ մի մարդ[1]—մարդ մը[2] և այլն։

3. Թեև մի և մր անորոշության ցուցիչները երկու գրականներում էլ կապակցվում են եղականաձև գոյականների հետ՝ մի գիրք—գիրք մը. սակայն որպես արևմտահայերենի յուրահատկություն կարելի է նշել մր+հոգնակի կաղապարի առկայությունը՝ գործեր մը, բաներ մը և այլն։

Քերականագիտները ճիշտ են նկատում, որ արևելահայերենում այդ իմաստները արտահայտվում են սովորաբար անորոշ դերանունների կամ եղանակավորող որոշ բառերի օգնությամբ՝ գործեր մր-ին համարժեք է՝ ինչ որ գործեր։

Արևմտահայերենի հատուկ անուն+մր կաղապարի (Փափազյան մը) դիմաց արևելահայերենում առկա է եղանակավորող բառ+հատուկ անուն կառույցը՝ ոմն Փափազյան։

Այսպիսով, արևմտահայերենի մր-ն աչքի է ընկնում գործառական ղղալի բեռնվածությամբ. դրանով էլ պայմանավորված՝ արևմտահայերենի խոսքի մեջ տարածված երևույթ է մր-ի կուտակումը։ Կարելի է ասել, որ եթե արևելահայերենի անորոշ առման հիմնական ցուցիչը զրո ձևույթն է և դրանով պայմանավորված՝ անորոշության հիմնական իմաստը արտահայտվում է ոչ թե մի բառ-մասնիկով, այլ հոդային վերջավորության բացակայությամբ, ապա արևմտահայերենում ընդհակառակն, անորոշության ենթակարգի հիմնական ցուցիչն է մր-ն և որպես տարբերակ միայն հանդես է գալիս զրո ձևույթը. այսպես, այն դեպքում, երբ արևելահայերենը հաճախ դիմում է անորոշության զրո ձևույթով արտահայտության միջոցին, արևմտահայերենը միևնույն իմաստն արտահայտելու համար դիմում է մր-ի կիրառությանը։ Օրինակ՝ սխալ մը չըլլայ—արևելահայ.՝ սխալ չլինի (մի սխալ չլինի ձևը արևելահայերեն համապատասխան իմաստն արտահայտելու համար ճիշտ չէ, որովհետև խոսքը թվային արժեքի մասին չէ, այլ անորոշության)։

Հարկ է նշել, որ ընդհանրապես որևէ տիպի հոդ չունենալը դեռևս չի նշանակում զրո ձևույթի առկայություն (զրո ձևույթով հոդ), որովհետև այդպիսին նա կարող է լինել միայն հակադրության մեջ, ինչպես՝ տուն+0—տունը, մինչդեռ, ասենք, կոչականները երբեք որոշիչ հոդ չեն

ստանում և հետևաբար հոդի բացակայությունը դեռևս անորոշ առում չի նշանակում:

Հոդի կապակցելիությունը տարբեր հոլովների հետ տարբեր է: Արևվելահայերենում սեռական, բացառական, գործիական հոլովները հոդառու չեն: Արևմտահայերենում, ինչպես նշվեց, սեռականը հոդառու է:

Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում բացառական հոլովը կարող է հոդ առնել և այն էլ միայն և հոդը, քանի որ այն միշտ հաջորդում է հոլովանիշ է ձայնավորին՝ աշակերտեերէն:

Շեշտի հարցում նույն բացասական բնութագրում (անշեշտ) ունեցող մասնիկների՝ մի–մը, տարբերությունները միայն շարադասությամբ (նախադաս և վերջադաս) չի պայմանավորված. արևմտահայերենին հատուկ է մը անորոշին և մասնիկի հավելման երևույթը՝ մարդ մը+ն և ն, որը պայմանավորված է ձայնավորային հորանջից խուսափելու ձգտումով՝ մարդ մը+ն ալ: Եվ քանի որ այդպիսի դիրք (երկու ձայնավորների հաջորդականություն) ստեղծվում է էական բայից և ալ շաղկապից առաջ, ապա կարելի է ասել, որ մըն ձևը դիրքային պայմանավորվածություն ունի: Այդ է վկայում մ'ն, սղումով ձևը, ուր վերանում է նշված երևույթը:

Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում հոդառության երևույթը հատուկ անուններին խնդրում որոշակի կայունացման (նորմավորման) չի հասել. սովորական են ինչպես հոդով, այնպես էլ առանց հոդի կիրառությունները. ինչպես՝ Վահէ եկաւ և Վահէն եկաւ: Այդուհանդերձ ի հայտ են գալիս հոդառության հետ կապված հետևյալ մասնավոր դեպքերը:

Ենթակայի պաշտոնով դրված հատուկ անունները սովորաբար հոդ են ստանում. Սոսին եկավ. սակայն, երբ նույն նախադասության մեջ առկա է խնդրի պաշտոնով դրված մի ուրիշ անձնանուն, առաջին որոշիչ հոդը սովորաբար չնջվում է, ինչպես՝ Գևորգ կ'ատէ Վահանը և Գևորգը կ'ատէ...

Թևերս դարձյալ ձայնավորական հորանջից խուսափելու համար, երբ ձայնավորահանգ անձնանուն+ձայնավորակիզբ բառ է լինում, երկուսի միջև միշտ հանդես է գալիս հոդը. ոչ թե՝ Մարի եկավ, այլ՝ Մարին եկավ: Մինչդեռ բաղաձայնահանգ անունների դեպքում հոդի դուրգորման հնարավորությունները միանգամայն ազատ են՝ Տիգրանը բերավ, Տիգրան բերավ: Արևմտահայերենում սովորաբար հեղինակների անունների դեպքում որոշյալ հոդ չի դրվում՝ Զոհրապի գիրքը: Իսկ երե

պատկանելություն է ցույց տրվում, այդ դեպքում հոդը դրվում է՝ Ջոն-րապին գիրքը:

Արևմտահայ քերականները որոշյալ հոդի կիրարկության հետևյալ դեպքերն են մատնանշում. եթե ենթական հատուկ անուն (անձնանուն) է և հանդես է գալիս ստորոգյալից հետո, որոշիչ հոդ առնում է, ինչպես՝ Վարդան (Վանիէ) եկավ—եկավ Վարդանը (Վահեն). նույնն է պարագան նաև լրացում ունեցող ենթակայի դեպքում, եթե այդ լրացումը բացահայտիչ չէ. ինչպես՝ մեր նզոր հայրենիքը:

Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում հատկացուցիչը սովորաբար հոդառու է, ինչպես, օրինակ՝ մսավաճառին դանակը: Այլապես՝ առանց հոդի գործածվելու դեպքում տվյալ բառը ածականական արժեք կունենա՝ մսավաճառի դանակը:

Արևելահայերենի վա հոլովման համապատասխանող արևմտահայերենի վան-ի մեջ ն-ն հոդ չէ. այնպես որ վաղվան ձևի մեջ ն-ն որոշյալության ցուցիչ չէ և սխալ են վաղվա կամ վաղվանը ձևերը:

Եթե արևելահայերենում իր ստացականը հոդ չի ստանում և հոդառու է միայն իրեն փոխանունը՝ իրենը, արևմտահայերենում սովորական երևույթ է նաև իր-ի հոդառությունը՝ իր (իրենը): Հակառակ դրա ինք-ը արևմտահայերենում կիրառվում է նաև առանց հոդի՝ ինք պսակ:

Բացի նշված տարբերություններից, արևմտահայերենում փոխանուն սեռականի հոգնակի ձևերը համեմատաբար լայն տարածում ունեն՝ մերիններ, ձերիններ և այլն: Թեև գրական բարձր ոճի դեպքում այդ ձևերը նախընտրելի չեն:

Երկու գրականներում էլ՝

1. Նկատվում է որոշիչ հոդի կիրառության որոշ սահմանափակություն (մանավանդ արևելահայերենում բացառական և գործիական հոլովների դեպքում):

2. Կապակցությունների մեջ նախադաս լրացումների (որոշիչ, հատկացուցիչ և այլն) ուղղականաձև լրացյալները որոշիչ հոդ ստանում են՝ Պետրոսի հայրը: Գրական արևմտահայերենում լրացումը նույնպես որոշիչ հոդ է ստանում՝ Պետրոսին հայրը: Նույն երևույթն է առկա նաև դերանվանական առկայացուցիչների դեպքում (ինչպես՝ այս—աս, այդ—ատ. այս մարդը—աս մարդը և այլն):

3. Գոյականաբար գործածվելու դեպքում այլ խոսքի մասերը (դերբայները և այլն) ամենից առաջ ստանում են որոշյալության առկայա-

ցուցիչը՝ ր կամ ն (հնչյունական հաջորդականության վերոհիշյալ սկզբունքներով)՝ բեռել—բեռելը, լավ—լավը, հինգ—հինգը և այլն։

Հ. Պետրոսյանն իր «Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության» գրքում գրում է. «Առհասարակ «որոշյալ» կամ առկայացման իրազրության մեջ եղած լրացյալը միշտ հոդառու չէ» (էջ. 151)։ Այնուհետև բերվում են միայն այնպիսի օրինակներ, որտեղ հիմնականում գործիական հոլովաձևեր են և վան—յան հոլովման ոչ տիպական (բնորոշ) ձևեր, քանի որ դրանք ընդհանրապես հոդառու չեն։

Ստացականություն

Երկու գրականներում էլ ստացականությունը դրսևորվում է գերազանցապես ս, դ. ը(ն) հոդերով, որոնք դիրքային և հոլովական սահմանափակություն չունեն, ազատորեն կարող են հանդես գալ բոլոր հոլովների ինչպես եզակի, այնպես էլ հոդնակի թվերի հետ։ Առաջին դեմքի հետ կապված ստացականությունը դրսևորվում է ս հոդով, երկրորդ դեմքինը՝ դ հոդով։ Երրորդ դեմքի ստացականությունը, ըստ էության, արտահայտվում է ոչ այնքան ը-ի առկայությամբ (Ս. Աբրահամյանի կարծիքով ստացականության ցուցիչ չէ այն) (ԻԹ. 2. 114), այլ երրորդ դեմքի պատկանելությունը որոշվում է նախորդ երկու դիրքերին հատուկ ս, դ առկայացուցիչների բացակայությամբ։ Ուրեմն, ճիշտ կլիներ ընդունել ստացականության երեք ենթակարգ՝ ս, դ և զրո ձևույթ, որի ձևական արտահայտությունն է ը(ն)։

Ստացականության հարցում երկու գրականների միջև հանդես են գալիս հետևյալ տարբերությունները.

1. Ստացական հոդի առկայության դեպքում ստացական դերանունները սովորաբար վերանում են՝ խոսմս—իմ խոսքը. երկուսի առկայությունը զուտ գրական ոճի տեսակետից խորթ է արևելահայերենին, այն դեպքում, երբ այն բնորոշ երևույթ է գրական արևմտահայերենի համար՝ իմ խոսմս (ԳՋ, ևժ, 1,4)։ Հ. Աճառյանը այս կապակցությամբ գրել է. «Ոմանք գտնում են, որ արևմտահայոց այս կրկնակ ձևը ավելորդություն է. երբ ս դիմորոշը (sic) կա, պետք չէ դնել իմ, իսկ եթե իմ կա, պետք չէ դնել ս դիմորոշը (sic)»։ Աճառյանն այս երևույթը բացատրում է լեզվի ընդունած ձևերից մեկով՝ հավելադրությամբ։

2. Արևմտահայերենին հատուկ երկրորդային փոխանունություններում՝ ֆուկը—ֆուկիենդ, հանդես է գալիս արևելահայերենին ոչ հատուկ կ

հիմքակազմիչ տարրը։ Վերջինս ի հայտ է գալիս ոչ միայն հոգնակիի երկրորդ, այլև եզակի երկրորդ դեմքի ձևերում՝ ունկինեներդ, ու-կ-դ։ Արևմտահայ քերականների կողմից այդ կ-ն դիտվում է որպես ձայնակապ (հմմտ. ԺԹ. 155)։

Արևմտահայերենի խոսակցական-բարբառային ոճին հատուկ են այդպիսի ձևերի կրկնությունը՝ իմին չոջուխս իմին (Շ. Շահնուր, Նահանջը)։

3. Ստացական ս, դ հոդերը կրկնակ հոգնակերտների հետ կազմում են հետևյալ կաղապարները՝

Ա. Միավանկ հիմք+եր+ների+ստացական *հոդ. ինչպես* տուն+եր+ների+ս, *եթե մի կողմից սխալ է տուներիս ձևը, մյուս կողմից էլ հանձնարարելի չեն տուներնիս-ի կաղապարով կազմված ձևերի փոխարեն մեր տուր և այլն քերականական զուտ գրական ձևերը։ Նշենք, որ բացի ուղղականից, մյուս հոլովաձևերում հանդես է գալիս նի-ի հնչյունափոխական տարբերակը՝ ն, տուն+եր+ն+է+ն։*

Բ. Բազմավանկ հիմք+ների+ստացական *հոդ կաղապարը՝* բարեն+ների+դ։

Գ. Ստացյալի հոգնակերտության դեպքում գործում է ներ–նի *(զույգ հոգնակերտով)+ս զուգորդման կաղապարը։ Այս մասին Հ. Պետրոսյանը գրել է. «Հ. Աճառյանը նկատում է, եթե ստացյալը հոգնակի է, գործածական է՝ ներ+նի+ս զուգորդումը, միևնույն այդ կաղապարով հնարավոր է արտահայտել նաև եզակի ստացյալը» (ԼԱ. 104) (ընդգծումը մերն է—Ա. Ա.)։ Որպես հիմնավորում Հ. Պետրոսյանը բերում է հետևյալ օրինակները՝* հագուստ–նիճ, սրտերնուս, հոգիներուս, *որոնք նշանակում են նաև՝ մեր հագուստը, մեր սիրտը, մեր հոգին, ինչպես պնդում է Հ. Պետրոսյանը (լ. 105)։*

4. Արևելահայերենի ուղղական հոլովի համար գործում է հոգնակիակազմ հիմք+ստացականհակազմ հոգնակերտ+ստացական հոդ, *հոգնակի թվի դեպքում՝* հոգն. հիմք+հոգնակերտ+զրո հոլովակերտ+ստացական հոդ՝ գործներս *կաղապարը (արևմտ.* գործերնիս-ի *դիմաց)։ Արևելահայերենի ինչպես բաշխական, այնպես էլ խնդրառական հոգնակիում առկա են* ներ–ս, ներ–դ *կաղապարները։*

Երկու գրականներում էլ՝ 1) առկա են հոդի կրկնությամբ (իճ+իճ) *ձևերը՝* իրենիճ+իճ, *2) ստացական հոդերը ինչ-ինչ պատճառներով (հարաստություն և այլն) կապակցություններում կարող են կրկնվել, ինչպես՝* ճաշս ուտելուս պես *և այլն։*

Երկու գրականների բոլոր կարգի հոդային մասնիկները հանդես են

գալիս վերջնային դիրքում և իրենք կարող են հաջորդել մյուս կարգերի բոլոր թեքույթներին, բայց իրենց ոչ մի կարգի թեքույթ չի կարող հաջորդել։ Այսինքն՝ նրանք դրվում են թվահոլովանիշ թեքույթներից հետո և քանի որ բոլոր դեպքերում բաղկացած են մեկ բաղաձայն հնչյունից, ապա վերջիններիս կցումով, բառաձևը շեշտափոխության չի ենթարկվում։ Բացառություն է կազմում, թերևս, փոխանուն տրականը, երբ հոլովական վերջավորությունները դրվում են որոշիչ հոդերից հետո միայն (հմմտ. լբ. 212)։

Դիմորոշություն

Առկայացման կարգի (տարորոշման) ենթակարգերից մեկն էլ դիմորոշությունն է, որը երկու դրականներում էլ դրսևորվում է ս, դ հոդերով։ Ս-ն դարձյալ առաջին դեմքի համար, դ-ն՝ երկրորդ։ Առաջին դեմք ասելով կարելի է հասկանալ նաև մեկից ավելի մարդկանց այնպիսի խումբ, որն իր մեջ ներառում է նաև խոսողին՝ չորս էլ կարվեցիք (մենք՝ չորս...)։

Քանի որ դիմորոշությունը անմիջականորեն կապված է անձնանշության հետ, այդտեղից էլ՝ երկու դրականներում դիմորոշ հոդ են ստանում.

1. Գերազանցապես անձնանիշ անունները (բնականաբար, իրերի անունները ևս, եթե դրանք կիրարկվում են անձի անվամբ, կարող են հոդառու լինել)։

2. Անձերին վերաբերող հատկանշանիշ բառեր (ինչպես՝ մեղավորս, ելլասաս)։

Հարակատար և ենթակայական դերբայները նույնպես դիմորոշ հոդ ստանում են, քանի որ մատնանշում են գործածություն կատարողին՝ հաջողածներդ։

Երկու դրականներում էլ դիմորոշ հոդի արտահայտած իմաստը այնքան ուժեղ չի ընդգծվում, որ հարկ լինի դիմելու լրացուցիչ միջոցի՝ անձնական դերանուններին կիրառությանը. ինչպես՝ մենք՝ հոգարարձուներս, մենք՝ ուսանողներս, այսինքն՝ կիրարկվում է բացահայտիչ+բացահայտյալ կառույցը։

Հայագետների կողմից հաճախ որոշակի սահմանափակությամբ բնութագրվող հոդերի շարքում դրվում է նաև ն-ն, նշելով հանդերձ վերջինիս «թույլ արտահայտությունները» հիմքերի հետ (լ. 80)։

Թեև հիմնական գծերով դիմորոշության հետ կապված նույն երև-

վույթն է առկա երկու գրականներում էլ, այնուամենայնիվ ի հայտ են դալիս մասնակի տարբերություններ, որոնցից կարելի է նշել այն, որ ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում առկա է դիմորոշ հոդով հոգնակիակազմության հետևյալ կաղապարը՝ եղուկ+ներս:

Դիմառական հոդառության հատուկ է հոլովական հարացույցի բոլոր միավորներին՝ արևելահայերենում՝ 5, արևմտահայերենում՝ 4: Երկու գրականներում էլ առկա է դիմառական և ստացան հոդառական հակադրությունների չեզոքացում:

Ցուցականություն

Ցուցականության իմաստի արտահայտման միջոցն է ս-ն, որը սահմանափակ ոլորտ է ընդգրկում: Ցուցական առման հոդ ս-ն կցվում է գերազանցապես ժամանականիշ գոյականների (վայրկյան, րոպե, ժամ և այլն) բառերին՝ հայերենի առկայացուցիչների ընդհանրական տիպաբանությամբ՝ կցում վերջնային դիրքով:

Երկու գրականներում էլ ցուցականությունը շատ ավելի ոճաբանահայտչական միջոց է (համմտ. ոչ կանոնական արևելահայ. այս րոպեիս ձևը): Եթե գոյականը ստանում է ցուցական հոդ, ապա այս ցուցական վերադիրը բացառվում է:

Գրական արևելահայերենի համար Ս. Աբրահամյանի նկատած երևույթը (ԻԲ.2.121) (տարի, ժամանակ, վերջ ժամանականիշ բառերի հոգնակի ձևերի ցուցական հոդ առնելը) հատուկ է նաև արևմտահայերենին:

Ինչպես տեսանք, գոյականը որպես խոսքի մաս, երկու գրականներում էլ բնութագրվում է ընդհանուր իմաստային հատկանիշներով, ունի նույն քերականական կարգերը, և հիմնական տարբերությունները ի հայտ են գալիս միևնույն հնթակարգի կամ կարգի տարածման ոլորտի, ընդգրկման ծավալի և ոճական կիրառությունների առումով: Առանձին դեպքերում նրանց միջև եղած տարբերությունները բնութագրվում են հատկանիշի գրաված դիրքով, ինչպես, օրինակ՝ անորոշության համար, երկուսում էլ առկա է մասնիկավոր ձևը՝ մի—մը, սակայն մեկում մի-ն առաջադաս կիրառություն ունի (արևելահայերենում), իսկ մը-ն՝ ետադաս (արևմտահայերենում):

ԱԾԱԿԱՆ

Ածականը գոյականից կարելի է տարբերել թեքվելու և չթեքվելու հատկանիշով (ածականը հոլովվում է այն դեպքում, երբ կիրառվում է գոյականաբար): Ածականի հիմնական գործառությունը երկուսում էլ

գոյականը բնութագրելու մեջ է և իրականում նա ունի գոյականի լրացում դառնալու հիմնական հատկանիշը: Երկուսում էլ գոյականաբար կարող են առնվել ոչ բոլոր ածականները. այսպես՝ հարաբերական ածականները չեն հոլովվում, ինչպես՝ փայտյա, երկաթյա:

Որպես խոսքի մաս, ածականի բնորոշ հատկանիշներից մեկը համեմատության աստիճաններ ունենալն է: Երկուսում էլ այդպիսիք ունեն միայն որակականները: Ընդ որում երկու գրականներում էլ որակական ածականը հարաբերականի չի վերածվում, բայց հարաբերական ածականը, իր արտահայտած առարկայական իմաստի մթագնմամբ, կարող է վերածվել որակականի, այդպիսով սառնալով համեմատության աստիճաններ: Օրինակ՝ մարդկային հարաբերական ածականը (մարդկային հասարակություն) որակական աստիճաններ չունի, բայց որակական ածականի իմաստով կիրառվելով՝ կարող է սառնալ (մարդկային մոտեցում—ամենամարդկային մոտեցում և այլն): Նմանապես արմատական, բնական, բնկերական և այլն (համմտ. Ս. Աբրահամյան, ժամանակակից գրական հայերեն, 168): Որակական թե՞ հարաբերական ածական լինելը բացահայտող ցուցիչ կարող է ծառայել ան- ժխտական մասնիկ սառնալու կամ չսառնալու հատկությունը: Հարաբերականները երբեք ան ժխտական չեն սառնում (չենք ասում՝ փայտյա—անփայտյա), իսկ որակականները սառնում են՝ ուշադիր—անուշադիր, համեստ—անհամեստ: Ընդ որում եթե ան չեն սառնում, նշանակում է առկա է դրական ածականի հատկանիշը. համմտ. գեղեցիկ>անգեղեցիկ>տգեղ, մեծ—անմեծ—փոքր: Այդ դեպքում դարձյալ գործ ունենք ժխտման երևույթի հետ, արտահայտված կամ այլ ժխտական ածանցով, կամ հականշությամբ:

Երկու գրականները ածականի դրական և բաղդատական աստիճանների կազմության (արտահայտության) և բովանդակության պլաններում շոշափելի տարբերություններ չունեն: Տարբերություններն ի հայտ են գալիս գերադրական աստիճանում: Թեև առերևույթ երկուսում էլ գերադրական աստիճանը կազմվում է ամենա- և -գույն ածանցներով, սակայն նրանց գործառական բնույթային, կապակցելիության պայմանները որոշապես տարբեր են: Գ. Ջահուկյանը զուգադրելով արևելահայերենի ամենա- և -գույն ածանցներով կազմված ածականները, նշել է, որ գործառական առումով դրանք կարելի է փոխարինել՝ ամենամեծ—մեծագույն, ամենալավ—լավագույն: Այսինքն, ածականի գերադրական աստիճանը արևելահայերենում «ներկայացվում է երկու կա-

ղապարով (a+)A և A(+a)՝ ամենա(ա)մեծ և մեծ-(ա)գույն: Այս կաղապարների համեմատությունը ցույց է տալիս, որ առաջին կաղապարն ավելի ընդհանրական է և ոճականորեն չեզոք. երկրորդ կաղապարը գործում է միայն որոշ կարգի՝ հնից եկող (գրաբարին ևս հատուկ), բայց ոչ ժողովրդական-բարբառային ածականների դեպքում. չաղագույն, ազիզագույն տիպի ձևեր հնարավոր չեն» (ԺԳ. 311):

Ասվածը միանգամայն ճիշտ է արևելահայերենի համար: Արևմտահայերենում գույն-ով գերադրականները զգալիորեն տարածված են. ըստ էության ամենա-ով ձևը գրական արևմտահայերենի համար չի կարելի որակել իբրև ոճականորեն չեզոք: Հարկ է ավելացնել նաև, որ արևելահայերենի ամենա-ով ձևի փոխարեն արևմտահայերենը գերադասում է վերլուծական կառույց՝ ամենէն+ածական՝ ամենէն արդարամիտ, ամենէն ազնիվ և այլն:

Արևմտահայ ժողովրդախոսակցականում կիրառվում է նաև էն+ածական կառույցը՝ էն լավը, որ գրական բարձր ոճում մերժելի է համարվում (էն-ին փոխարոյալ լինելու հանգամանք վերագրելու պատճառով):

Լեզվի զարգացման արդի փուլում արևելահայերենի ամենա- և -(ա)գույն ածանցները առանձին վերցրած ինչ-որ տեղ կարծես կորցնում են գերադրականության աստիճանին բնորոշ «առավելագույն» հատկանիշը և սկսվել են կիրառվել երկու ձևերն էլ միաժամանակ՝ իրենց բնորոշ առաջնային և վերջնային դիրքերով: Այսինքն, սկսում է գործել (a+)A(+a) կաղապարը՝ ամենալավագույն, ամենամտերմագույն և այլն, հակառակ քերականագետների այն պնդումին, որ «սխալ է գերադրական աստիճանի երկու ածանցների համատեղ գործածությունը նույն բառի մեջ» (Ս. Աբ., ԺԲ, 167): Այդուհանդերձ նշված կառույցը կանոնական մակարդակում թույլատրելի է համարվում մարզական առանձին տերմինների դեպքում՝ օր. ամենաբեթևագույն ֆաշ:

Գերադրական աստիճանի երկու ածանցների կրկնադիր կիրառության մեջ թերևս ազդել է նաև այն հանգամանքը, որ արևելահայերենում «-ագույն ածանցով կազմված գերադրականը կարող է արտահայտել պարզապես հատկանիշի բարձր աստիճան: Օր.՝ Ջրոսաճիից մեճ մեծագույն բավականություն ստացաճ» (Ս. Աբ. ԺԲ, 167): Ահա այդ բարձր աստիճանը քիչ համարելով, բուն գերադրականության իմաստ արտահայտելու համար սկսել է կիրառվել նաև ամենա-ն. այդ դեպքում պետք է ընդունել, որ լավագույն ձևից է առաջացել ամենալավագույն-ը

և ոչ թե հակառակը՝ ամենալավ—ամենալավագույն: Տվյալ դեպքում գործ ունենք գերադրականության իմաստի «սաստկացման» երևույթի հետ, որ բացառվում է արևմտահայերենում: Դա պայմանավորված է նաև նրանով, որ արևմտահայերենում գույն-ը ունի որոշակի ընդգծված ծայրագույն (գերադրական) իմաստը: Այսպիսով, կարելի է ասել, որ եթե արևելահայերենում գերադրականության չեզոք ոճին բնորոշ ածանցը ամենա-ն է, ապա արևմտահայերենում՝ գույն-ն է:

Վերջապես, երկու գրականներում էլ առարկայի հատկանիշի տարբեր չափերը արտահայտվում են ոչ միայն ձևաբանորեն, այլև շարահյուսական միջոցներով՝ առանձին բառերով և բառակապակցություններով, նկարագրությամբ՝ վերին աստիճանի, խիստ, պակաս, սակավ, նվազ և այլն: Համեմատության աստիճանի կառույցները թեև երկու գրականներում էլ նույն տեսքն ունեն (ձևաբանական առանձնահատկությունները զանց առած)՝ բացառական հոլով+ածական (բեզանից լավ[1]—բեզմէ լավ[2]), ածական+(օժանդակ բայ)+բան՝ բարի (է) բան վաճառը և այլն, սակայն դրանց գործածության, տարածվածության աստիճանը երկուսում տարբեր է: Այսպես, արևմտահայերենին շատ ավելի բնորոշ է սակավ, նվազ և այլ բառերով կազմված համեմատության աստիճանը: Եթե արևելահայերենը նախընտրում է վերին աստիճանի արտահայտությունը, ապա արևմտահայերենը՝ ծայր աստիճանը և այլն: Բոլոր դեպքերում գործ ունենք համեմատության աստիճանի շարահյուսական եղանակով դրսևորման հետ, որ կարելի է դիտել իբրև տվյալ ոլորտում երկու գրականների ունեցած ընդհանրություններից մեկը. ի տարբերություն մի շարք լեզուների, մեր երկու գրականները ածականի բաղդատական աստիճանի համադրական եղանակով արտահայտություն չունեն. այն ներկայացվում է միայն վերլուծական կաղապարով:

ԹՎԱԿԱՆ

Արևմտահայ քերականագիտության մեջ թվական անունը ավանդաբար դրվում է ածական խոսքի մասի մեջ որպես ածական որոշիչ: Ներկա ղուգադրության ժամանակ, բնականաբար, հետևում ենք արևելահայ քերականագիտության սկզբունքներին և երկու գրականներում էլ թվականը ածականից առանձնացնում ենք: Անշուշտ, բավարար թվով քերականական հատկանիշներ դժվար է գտնել թվականների համար առանձին խոսքի մաս ընդունելու դեպքում: Հայտնի է, օրինակ, որ ինչ-

պես ածականները, այնպես էլ թվականները չեն թեքվում (չեն հոլովվում)։ Անկախ անվանումից և առանձին խոսքի մաս ընդունել-չընդունելուց, ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում որոշապես առանձնացվում են առարկաների թվային կարգ, հաջորդականություն, բաշխում ցույց տվող բառերի շարքերը, որոնք ի հայտ են բերում երկու գրականներում ինչպես ընդհանրություններ, այնպես էլ տարբերություններ։ Ստորև կներկայացվեն նրանց միջև եղած տարբերությունները։

Թվային կարգ նշելու համար արևմտահայերենը հաճախակի է դիմում մեսրոպյան այբուբենի կիրառմանը. այնտեղ, որտեղ արևելահայը գործածում է «Հինգերորդ դարի մատենագրություն» նախադասությունը, արևմտահայը նախապատվաբար կիրառում է «Ե. դարու հայ մատենագրություն» արտահայտչաձևը։ Այդպես է, թերևս, միայն պարզ թվականների դեպքում. բաղադրյալ թվականները նախընտրաբար ներկայացվում են թվանշային տարբերակներով։ Այսպիսով, ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում դասական թվականները ներկայացվում են տառային արտահայտությամբ. օրինակ՝ վեցերորդ դասարան[1]—Ջ. դասարան[2]։

Դասական թվականներից տասնմեկերորդ ձևից հետո, 12, 13, 14 թվականների կազմության ձևը երկու գրականներում տարբեր է, այսպես.

	արևելահայերեն	արևմտահայերեն
12	տասներկուերորդ	տասներկրորդ
13	տասներեքերորդ	տասներեւրդ
14	տասնչորսերորդ	տասնչորրորդ։

Արևելահայերենում ժամանակը նշվում է սովորաբար կոնկրետ թվականների օգնությամբ, օրինակ՝ ժամը հինգն անց է տասնհինգ րոպե, Հինգն անց է քառասունհինգ րոպե և այլն։ Արևմտահայերենում ժամանականշության դեպքում հաճախ են դիմում քառորդին. այսպես՝ ժամը հինգը քառորդ կանցնի, հինգին քառորդ մնացած և այլն։ Արևելահայերենում քառորդ-ը հիմնականում վերաբերում է ուսումնական տարվա որոշակի հատվածին կամ աշխատանքային դրույքին. օրինակ՝ Քառորդ դրույք դաս տվեցին։ Եթե արևելահայերենում տարածված է օրերը նշել կոնկրետ թվականներով՝ սեպտեմբերի 15-ին, օգոստոսի 28-ին և այլն, ապա արևմտահայերենում սովորաբար ամենից առաջ նշվում է շաբաթվա ո՛ր օր լինելը՝ երեքշաբթի, 28-ը օգոստոսի։

Արևելահայերենում գործում է բաշխական թվականների կազմության երկու մասնակազապար՝ բանակական թվական+ական (երեք+ական, վեցական) և բանակական թվական+բանակական թվական (կըրկնությամբ՝ հինգ-հինգ, վեց-վեց և այլն)։ Ինչպես նշվել է, վերջին ձևը բարդ և բաղադրյալ թվականների վրա չի տարածվում և ապա բնորոշ չէ գրական լեզվին. այն ավելի տարածված է ժողովրդախոսակցականում։ Հարկ է նշել, որ արևմտահայերենում այն բնորոշ չէ նաև ժողովրդախոսակցականին, ուր կիրառվում են -ական-ով կազմությունները (հազարական, վեցական)։

Ինչպես գրական, այնպես էլ ժողովրդախոսակցական արևմտահայերենում լայնորեն կիրառվում են գրաբարատիպ թվականներով կազմված արտահայտություններ, ինչպես, օրինակ՝ մեռասաներորդ ժամուն (այսինքն՝ վերջին վայրկյանին, շատ ուշ)։ Թեև «Հայոց լեզվի նոր բառարան»-ը իբրև գործածական բառ ներկայացնում է նաև մեռասան թվականը (տասնմեկ), բայց իրականում այն առանձին չի կիրառվում և հանդես է գալիս իբրև վերոբերյալ մեռասաներորդ ժամուն արտահայտության բաղադրիչ։

ԴԵՐԱՆՈՒՆ

Երկու գրականներում էլ դերանուն խոսքի մասը նույն տարբերակներով է ներկայանում և ունի միևնույն առանձնահատկությունները՝ այլ խոսքի մասերի համեմատությամբ։ Այդ դծերն են. 1) հոգնակիի ձևերի տարահիմքությունը և տարարմատությունը, 2) ընդհանրապես հայերենի հոգնակիին բնորոշ մասնիկների փոխարեն ֆ-ի կիրառությունը 3) թեք հոլովների դեպքում ուղղականից տարբեր թվային արտահայտությունը և այլն (հմմտ. արևելահայերենի համար ԼԳ. 213)։

Որպես երկու գրականների դերանվանը բնորոշ գիծ կարելի է նշել նաև, որ ըստ էության, այսպես կոչված, դերանվանական հոլովումը գործում է մինչև հայցական հոլովը. այնուհետև հոլովումը նման է դոյականների հոլովմանը։

Սակայն նույն կազմության տիպաբանությունն ունենալով հանդերձ երկու գրականներն իրենց հայտ են բերում ձևավոր հիմքերի կազմության տարբերի տարբերություններ. եթե արևելահայերենը այդպիսիք կազմում է ն-ով (ինձ-ն-ով, մեզ-ն-ով և այլն), ապա արևմտահայերենը կազմում է մ-ով՝ մեզ-մ-ով է, ինձ-մ-է, ձեզ-մ-է)։

Դերանվանը հատուկ քերականական հիմնական կարգը հենց դիմքի կարգն է, որ երկու գրականներում էլ արտահայտվում է նույն եղանակով և միջոցներով (նկատի ունենք արտահայտության սուպլետիվ ձևը, երբ դիմային տարբերությունները արտահայտվում են ոչ թե հոդերով, ներկայանալով դերանունից դուրս, այլ հենց դերանվան մեջ)։

Արևելահայերենի համեմատությամբ արևմտահայերենի դերանունը բնութագրվում է մի շարք մրցակից ձևերի առկայությամբ. դրանց մեջ կան հնացած ձևեր, ինչպես՝ գԷզ, գնա և այլն, որոնք գրական լեզվի խոսակցական տարբերակում խիստ հազվադեպ կիրառություն ունեն և ընդհանրապես դուրս են մղվում դերանվանական համակարգից։

Որպես դերանվան ոլորտում առկա երկրորդ տարբերություն պետք է նշել անդրադարձ դերանվան հատուկ ձևերի առկայություն, որոնք բացակայում են արևելահայերենում ընդհանրապես. դրանք են՝ իմ-զիմս (ես—զիս), իմզիմինիս (մենք—մեզ), իմզիմիդ (դուն—քեզ, իմզիմինիդ (դուք—ձեզ) և իմզիմի՛/ իմզիմինին (իրեմ—զիրեմ՛) ձևերը։

Բացի արևելահայերենին նույնպես հատուկ փոխադարձ դերանվան իրար ձևից, արևմտահայերենում կա նաև զ-ով՝ զիրար ձևը։ Առկա է նաև ոևէ անձնանիշ դերանունը։

Երկու գրականներից արևմտահայերենում դերանունը հարաբերաբար ավելի հաճախական կիրառություն ունի, մանավանդ ստացական դերանունները։

Նախադասության կառուցվածքում դերանունը հաճախ ծառայում է ընդգծման համար, ինչպես, օրինակ՝ Կտեսնես զայն, գեղեցիկ ճեռասուանը...

Բարդ ստորադասական նախադասություններում, երբ երկրորդական նախադասությունը առաջադաս է, արևմտահայերենում հարաբերաբար ավելի հաճախ կիրառվում են դերանվանական ձևեր, որոնք ոճական երանգավորում են տալիս խոսքին։

Ամփոփելով դերանվան ղուգադրությունը, կարելի է ասել, որ ինչպես ընդհանրապես այլ լեզուներում, երկու գրականներում էլ դերանունները փակ ցուցակով տրվող բառերի այնպիսի շարքեր են, որոնք հակառակ իրենց թվային սահմանափակությանը, գրեթե բոլոր լեզուներում աչքի են ընկնում բարձր հաճախականությամբ։ Այդպես է նաև մեր երկու գրականներում։ Բերենք արևելահայերենի վիճակագրական մի քանի տվյալներ (ըստ Բ. Ղազարյանի «Հաճախականության բառարանի»)։

Ես—33282 Դու—18944 Նա—42189 Ինքը—11138

Ինչպես երևում է բերված տվյալներից, հայերենի խոսքի կառուցվածքում երրորդ դեմքի դերանունը ավելի լայն տեղ ունի, քան առաջին և երկրորդ դեմքերի դերանունները: Եթե նա և ինքը դերանունների արժեքները գումարենք, ապա ավելի մեծ թիվ կստանանք, քան ես և դու դերանունների արժեքների գումարը: Մի շարք լեզուներում, ինչպես, օրինակ՝ ռուսերենում, առաջին տեղն ըստ հաճախականության գրավում է առաջին դեմքի անձնական դերանունը, այնինչ հայերենում՝ երրորդ դեմքի անձնական դերանունն է ավելի հաճախական: Ի միջի այլոց, հարկ է նշել Բ. Ղազարյանի բառարանի հետևյալ բացը. անձնական դերանունների միայն եզակի թիվն է նշվում՝ ըստ վիճակագրական արժեքների: Պետք է ենթադրել, որ հոգնակի թվերի արժեքները ընդգրկված են եզակի ձևերի տակ: Դա այնքան էլ ճիշտ չէ: Մեր ձեռքի տակ այլ լեզուների համապատասխան տվյալներն առանձին-առանձին ունենալով հանդերձ (ես—մեմ, դու—դուք և այլն) չենք կարող համեմատել արևելահայերենի տվյալների հետ, հստակ տարբերակված արժեքներ չունենալու պատճառով:

Եթե համեմատելու լինենք արևմտահայերենի գոյական անունը և դերանունը, ապա կարող ենք ասել, որ գոյական անվան դեպքում գործ ունենք կանոնավորելու, միօրինակացնելու ընդհանուր ձգտումի հետ. այնինչ դերանվան դեպքում կարծեք առկա է եթե ոչ հակառակ միտումը, ապա գոնե ձուզաձևություններ, բազմաձևություններ պահելու ձգտումը. հմմտ. ատ(ադ)—ատիկա, աև—աևիկա, աս—ասիկա, այս—աս, այդ—ադ, այն—աև և այլն: Անշուշտ, դրանց միջև արևմտահայերենը ոճաարտահայտչական տարբերակվածություն է դնում, բայց բոլոր դեպքերում առկա են նույն իմաստն արտահայտող մի շարք տարբերակներ, զուգահեռ ձևեր, որոնց մի մասը գործածության մեջ հաճախ շփոթ է առաջացնում. հմմտ., օրինակ՝ զայն—զինքը, ինչ—զինչ (անշուշտ, լեզվին տիրապետելու դեպքում այդ շփոթի մասին ավելորդ է խոսելը, բայց այդպիսի «սայթաքումներ» տեղ են գտնում նաև գրականության մեջ):

Բայ

Երկու գրականներում քերականական ամենաբարդ (հարուստ) կառուցվածք ունեցող խոսքի մասը բայն է: Այն առանձնապես հարուստ է արևմտահայերենում և անհամեմատ կանոնավորված՝ արևելահայերենում: Բայ խոսքի մասը ներկայացնելիս ամենից առաջ պետք է նշել,

որ այստեղ ավելի ցայտուն է ի հայտ գալիս արդի հայերենի վերլուծականության միտումը։ Այսպես, ենթ հոլովումը, ինչպես նշել է Գ. Ջահուկյանը (ԼԲ. 220), կարելի է ներկայացնել համադրական բառի սահմաններում, ապա այդ գրեթե անհնար է բայական համակարգը ներկայացնելու ժամանակ։ Այստեղ վերլուծական ձևերը զգալի կշիռ ունեն և առանց այդ ձևերի ուղղակի անհնար է ներկայացնել երկու գրականների խոնարհման համակարգը։

Առաջին նրբերանգային տարբերությունը, որ ի հայտ է գալիս երկու գրականների բայի զուգադրությունից, այն է, որ արևմտահայերենն, այնուամենայնիվ, ավելի համադրական է, քան արևելահայերենը (հմմտ., օրինակ, ներկա ժամանակի կազմությունը երկուսում. գրում եմ[1], կարդում եմ[1]—կը գրեմ[2], կ'ընթերցեմ[2]. արևմտահայերենում վերլուծական ձևի փոխարեն առկա է համադրական (կցական-մասնիկավոր) ձևը։ Ընդ որում, ձայնավորից առաջ կ(ը)-ն ներկայացվում է կից գրությամբ, բաղաձայնից առաջ՝ անջատ, բայց բոլոր դեպքերում գործ ունենք համադրականության հետ։

Երկու գրականներում էլ բայի հիմնական հատկանիշներից մեկը ստորոգման հիմնական ցուցիչ ծառայելն է, բացի գործողության, եղելության կամ վիճակի ցուցիչ լինելուց (հմմտ. ԼԳ. 225)։

Բայը բնութագրող հիմնական քերականական կարգը հայերենում սեռի քերականական կարգն է։

Երկու գրականների բայակազմության ժամանակ էական դեր են խաղում ածանցների այն շարքերը, որոնք ընդհանուր անունով կոչվում են բայածանցներ։ Ստորև ներկայացնում ենք հայերենի բայածանցների շարքը ըստ երկու գրականների (առկայությունը նշանակվում է +, բացակայությունը՝—նշանով).

	ան	են	ն	չ	ատ	ոտ	տ	ց(ն)	վ	
արևելահայերեն	+	+	+	+	+	+	+	+	+	
արևմտահայերեն	+	+	+	+	+	+	+	+	∓	(ու)

Վերոբերյալ բոլոր բայածանցներն էլ գրավում են միջակա դիրք՝ բայարմատի և վերջավորությունների միջև։

Ինչպես երևում է աղյուսակից, արևելահայերենի կրավորական վ ածանցի փոխարեն արևմտահայերենում հանդես է գալիս ու-ն (իլ լծորդության միանալով՝ ուիլ (ջարդուիլ)։ Ջանց առնելով բաղադրական-քերականական ածանցները (ածանցների շարքի առաջին չորսը), մնացած ածանցները զուտ քերականական բնույթ ունեն։

Երկու գրականների բայակազմության և բայափոխության մասին անհնար է ամբողջական պատկերացում կազմել, առանց բայական լծորդությունների քննության: Լծորդությունները որոշվում են ըստ անորոշ դերբայի: Արևելահայերենի անորոշ դերբայը կարող է ունենալ լծորդ ձայնավորների երկու տիպ՝ ե, ա, ըստ այդմ՝ երկու լծորդություն, ուստի երկու խոնարհում՝ Ե և Ա. (պայմանականորեն դրանք հաճախ կոչվում են առաջին (Ե) և երկրորդ (Ա.) խոնարհումներ):

Արևմտահայերենում հարաբերաբար բարդ է բայերի բաշխման պատկերը ըստ խոնարհիչների: Նախ, ի տարբերություն արևելահայերենի, գործում են չորս լծորդություններ. հետևաբար կարելի է տարբերակել չորս խոնարհումներ՝ Ե (Ել), Ի(Իլ), Ա.(Ալ) և Ու (Ուլ): Արևմըտահայերենի որոշ ձևնարկներում ընդունվում է երեք լծորդություն, ըստ այդմ էլ՝ երեք խոնարհում, սոսկ այն պատճառաբանությամբ, որ Ու խոնարհման պատկանում են խիստ սահմանափակ թվով բայեր (այդպես է, օրինակ՝ Գ. Ջահուկյանի և Ֆ. Խլղաթյանի «Հայոց լեզու» դասագրքում. էջ 34, տե՛ս նաև Բ. 142. «Այս բայերը սակավաթիվ ըլլալուն համար որպես առանձին խոնարհում նկատի չենք առած...»): Ճիշտ է, Ու խոնարհման պատկանում են շուրջ 20 բայեր, բայց որ այդ բայերը ամենահաճախականներից են, ուրույն տեղ են գրավում բայի խոնարհման հարացույցում, անժխտելի է: Անգամ որպես առանձին խոնարհում չընդունողները ի վերջո ստիպված են լինում այդ ձևերը ներկայացնել խոնարհման ընդհանուր պատկերի մեջ (հմմտ. Բ. 80):

Մեր կարծիքով, Ու-ն որպես առանձին խոնարհում ընդունելը և միանգամից այդ խոնարհման տակ ոչ լծորդության բայերը ներկայացնելը կլիներ հարցի հեռևողական և ճիշտ լուծումը:

Երկու գրականներում էլ չկան որոշակի իմաստային տարբերակված հատկանիշներ, ըստ որոնց բայական այս կամ այն խմբերը ստանում են տվյալ լծորդ ձայնավորները (որոշ ենթախմբերի բացառությամբ. ինչպես, ասենք՝ երկու գրականներում Ա. խոնարհման պատկանող բայերի զգալի մասը չեզոք սեռի իմաստ է արտահայտում):

Երկու գրականներում էլ դերակշռում է Ե խոնարհման պատկանող բայերի թիվը: Արևելահայերենում դրանք կազմում են բայերի ընդհանուր թվի 3/4-ը (հմմտ. Ա, ԻՒ. 2. 258): Բնականաբար, մնացած 1/4-ն էլ ա խոնարհման բայերն են:

Պատկերացում կազմելու համար, թե արևմտահայերենում ինչպիսի բաշխում ունեն բայերն ըստ լծորդությունների, վիճակագրել ենք գրա-

կան արևմտահայերենի բառապաշարն ամփոփող «Հայոց լեզուի նոր բառարան»-ը: Ստորև տրվում են վիճակագրության արդյունքները.

Հնդրդուժ.թյուններ	Եվ	Իվ	ՈՒվ	Ավ	Ընդամենը
Բայաձևեր	2544	986	19	723	4372

Քննված բառարանի ընդհանուր բառապաշարի շուրջ 15%-ը բայեր են, որոնցից շուրջ 60%-ը կազմում են ե խոնարհման բայերը (հարաբերաբար ավելի քիչ, քան արևմտահայերենում): Դա միանգամայն հասկանալի է, որովհետև արևմտահայերենում բայաձևերի մնացած մասը բաժանվում է ոչ թե մեկ, այլ երեք խոնարհումների միջև: Բաշխումը կատարվում է հետևյալ կերպ. 22,6%-ը կազմում են ի խոնարհման բայերը, 16,5%-ը՝ ա խոնարհման բայերը և միայն շուրջ 0,5%-ը՝ ու խոնարհման բայերը: Ըստ այդմ կարելի է ու խոնարհման բայերը դիտել որպես փակ ցուցակով տրված և ներկայացնել՝ զուգադրելով նրանց համապատասխան արևելահայերենի ձևերին.

Ու խոնարհման բայերի ցանկը արևմտահայերենում	Արևելահայերենում նրանց համապատասխան բայաձևերը
արտահեղուլ	*արտահեղել*
երդնուլ	*երդվել*
զբոսնուլ	*զբոսնել*
զգածնուլ	*հագնվել, փաթաթվել*
զգենուլ	*հագնվել*
զեղուլ	*զեղել, թափել*
զննուլ	*մորթել*
ընթեռնուլ	*ընթերցել*
թողուլ	*թողնել*
լեսուլ	*փշրել, մանրել*
հեղձնուլ	*խեղդվել*
հեղուլ	*թափել, թափվել*
յեղուլ	*փոխել*
յենուլ	*հենվել, վստահել*
յեռուլ	*հագցնել, կազմել, մեջը*
ոստնուլ	*ցատկել անցկացնել*
պակնուլ	*վախենալ*

պշնուլ	սևեռել, ուշադիր նայել
ջեռնուլ	տաքանալ, բորբոքվել

Միայն արևմտահայերենին հատուկ ձևերի կողքին տրվում են արևելահայերենի համարժեքները, որոնք գրեթե առանց բացառության տակա են նաև արևմտահայերենում որպես ու խոնարհման ենթակա վերոհիշյալ բայերի հոմանիշ ձևեր։ Ընդ որում ներկա սերնդի մոտ ու խոնարհման լիակատար ձևեր ունեցող միակ բայը բողոլ-ն է։ Մյուս բայաձևերի փոխարեն արդի արևմտահայը նախընտրում է այնպիսի ձևեր, որոնք, ըստ էության, ընդհանուր են երկու գրականների համար։

Ա. խոնարհման բայերը երկու գրականներում էլ ի հայտ են բերում մի շարք ընդհանրություններ։ Բացի չեզոք սեռի իմաստ արտահայտելուց, այդ խոնարհման պատկանող բայերի գերակշիռ մասը բնաձայնական բառեր են (ոչ մշակութային)՝ բշշալ, զզզալ, մկկալ, փռշտալ[1]—փռնգտալ[2] *և այլն. ընդ որում երկուսում էլ ա-ն հանդես է գալիս որպես այդպիսի բառերի միակ լիահունչ ձայնավորը (նրան նախորդող արմատում հանդես է գալիս միայն Ը ձայնավորը)։*

Ինչպես նշվել է վերը, արևելահայերենում ալ լծորդությունից առաջ հանդես եկող աև, եև սոսկածանցները արևմտահայերենում, սղումի հետևանքով, ներկայացված են և-ով, ինչպես՝ մոռանալ—մոռնալ, գիրանալ—գիրնալ *և այլն։*

Առանձին դեպքերում, արևելահայերենի ե լծորդության բայի փոխարեն արևմտահայերենը ունի ա լծորդության բայ (հնչյունափոխության հետևանքով)՝ ընկնել[1]—իյնալ[2]։

Արևելահայերենի ա լծորդության որոշ բայերի արևմտահայերենի համարժեքները պատկանում են ի լծորդության. այսպես՝ երևալ[1]—երևիլ[2], թուալ[1]—թուիլ[2]։ *Պետք է նշել, որ դրանց թիվը փոքր է։ Արևմտահայերենի ի լծորդության պատկանող բայերի գերակշիռ մասը արևելահայերենում ունի ե լծորդը, ինչպես՝* ապրիլ[2]—ապրել, խոսիլ[2]—խոսել[1], ճաճդիպիլ[2]—ճաճդիպել[1], կպչիլ[2]—կպչել[1], ճստիլ[2]—ճստել[1] *և այլն։*

Մի կողմ թողնելով բայերի լծորդային անցումները, որպես ա խոնարհման պատկանող բայերի հիմնական տարբերություններից մեկը կարելի է նշել այն, որ եթե արևելահայերենում այդ խոնարհման պատկանող ածանցավոր բայերը կարող են կազմվել միայն աև, եև ածանցներով, ապա արևմտահայերենում, վերոհիշյալ սղումի պատճառով, ա խոնարհման բայերը կազմվում են նաև նախկին աև, եև ածանցներից

առաջացած և միջածանցով. ինչպես, օրինակ՝ գիրնալ, նասկնալ և այլն։

Գործածության զուգահեռ ձևեր ունեցող բայերի թիվն անհամեմատ ավելի մեծ է արևմտահայերենում։ Արևելահայերենում, բնականաբար, այդպիսիք կարող են լինել երկու խոնարհմամբ՝ ե և ա։ Արևմտահայերենում նման զուգահեռ ձևերի առկայություն է ստեղծվում նաև մյուս լծորդությունների դեպքում։ Հարկ է չմոռանալ, սակայն, որ արևմտահայերենում ե և ի լծորդությունների միջև սեռային (կրավորականություն—ոչ կրավորականություն) որոշակի իմաստ է արտահայտվում։

Ստորև զուգադրությամբ ներկայացվում են երկու գրականների զուգաձև բայերի տիպերը.

Աղյուսակ № 19

Զուգաձև բայերի տիպեր	Արևելահայերեն	Արևմտահայերեն
ե—Ա	ափսոսել—ափսոսալ տրոփել—տրոփալ ոստոստալ—ոստոստալ փրփրել—փրփրալ	փնչել—փնչալ ճանչել—ճանչնալ ծռմել—ծռմռնալ յամել—յամենալ
ե — Ի		թափել—թափիլ
ե — ՈՒ		զբոսնել—զբոսնուլ
Ի — Ա		ծարավիլ—ծարաւնալ
Ի — ՈՒ		հեղձիլ—հեղձնուլ
Ի — Ա — ե		ծորիլ—ծորալ—ծորել
Ա — Ի		կակուղնալ—կակղիլ

Ինչպես տեսնում ենք աղյուսակից, արևմտահայերենը աչքի է ընկնում ոչ միայն զուգահեռ ձևերի քանակով, այլև տիպային բազմազանությամբ։ Ընդ որում առկա են նաև երեք լծորդությամբ կիրառվող ձևվեր, ինչպես՝ ծորիլ, ծորալ, ծորել։ Չենք խոսում արդեն երեք զուգահեռ այնպիսի ձևերի մասին, որոնցից երկուսը նույն խոնարհման են պատկանում, հիմքի հնչյունական տարբեր կազմությամբ՝ կակուղնալ—կակուղանալ—կակղիլ։

Որպես երկու գրական լեզուների բայակազմության հիմնական

տարբերություն պետք է նշել արևմտահայերենի հիմքի անկայունությունը (հնչյունական կազմի փոփոխակների հարաբերությունը). այսպես՝ զուրցել—զրուցել, լաւացնել—լաւցնել, լոզանալ—լոգնալ, լուսանալ—լուսանալ, խածանել—խածնել, խլանալ—խուլնալ, խուպանիլ—խպնիլ, ծուլանալ—ծուլնալ, կատաղիլ—կատղիլ, կարեճալ—կրճալ, կարճնալ—կարճանալ, կարօտանալ—կարօտնալ, կլորանալ—կլորնալ, կոպտանալ—կոպիտնալ, կուրանալ—կուրնալ, փաքրտիլ—փարթարտիլ և այլն: Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, փոփոխակներ են ստեղծվում հիմնականում արևելահայերենին հատուկ ա ձայնավորով հիմքի փոխարեն սղված (առանց ա-ի) հիմքով կազմված ձևերով:

Ընդ որում վերջիններս (սղված ձևերը) արևմտահայերենին ավելի բնորոշ և գործածական բուն ձևերն են: Բացի այդ, փոփոխակներ են առաջանում նաև դարձյալ արևելահայերենին բնորոշ հիմքակազմության եղանակով և հնչյունափոխված հիմքով կազմված ձևերով՝ ինչպես վերոհիշյալ կոպտանալ—կոպիտնալ, խլանալ—խուլնալ և այլն:

Ինչպես տեսնում ենք, հիմքի անկայունության երևույթը հատուկ է ինչպես ե, այնպես էլ ի, ա խոնարհումներին, ու-ի մասին չենք խոսում հատուկ, որովհետև նրանք թվապես խիստ սահմանափակ են (շուրջ 20 բայ):

Վերոհիշյալ բոլոր զուգահեռ ձևերը իմաստային տարբերություն չեն արտահայտում: Բացի այդ ձևերից, երկու գրականներին էլ հատուկ են այնպիսի զուգահեռ բայաձևեր, որոնք որոշակի իմաստային տարբերակում են տալիս: Արևելահայերենի համար այդպիսի զուգահեռ ձևերն արտահայտում են ե-ով բայերը՝ ներգործականի և ա-ով ձևերը՝ չեզոք բայերի սեռային իմաստը՝ ծխել—ծխալ, թվել—թվալ, երերել—երերալ և այլն: Արևմտահայերենում այդ առումով խիստ բնորոշ է ներգործականի ե-ով և կրավորականի ի-ով ձևերի բայիմաստային հակադրությունը՝ այրել—այրիլ, ազատել—ազատիլ, խոճաբնել—խոճաբնիլ, ծռել—ծռիլ, կոտրել—կոտրիլ, ուր կրավորականը կազմվել է իլ-ով և ոչ թե ընդհանրապես արևմտահայերենին բնորոշ ու+իլ-ով (սիրուիլ, մոռցուիլ և այլն):

Կրավորականության իմաստը արևելահայերենում հատակորեն ձևականացված է և արտահայտվում է առանձին բայածանցով՝ վ-ով: Այդ նշանակում է, որ եթե արևելահայերենում լծորդ ձայնավորները սեռային սահմանափակ իմաստային հակադրություն կարող են արտահայտել՝ ներգործական-չեզոք, ապա արևմտահայերենում ամենից աքսոր

լծորդ ձայնավորները (հատկապես ի-ն) արտահայտում են կրավորականություն/ոչ կրավորականություն սեռային հակադրությունը. այսինքը՝ բացի եղանակների կազմությունից կրում են նաև բայասեռային որոշակի իրազեկում: Վերոբերյալ օրինակներին ավելացնենք թափել—թափիլ, մաշել—մաշիլ և այլն:

Բայի սեռի կարգը

Սեռի կարգին նվիրված մի շարք ուսումնասիրություններում սեռի ենթակարգերի, սեռային տարբերակման հատկանիշների վերաբերյալ միասնական կարծիք առայժմ գոյություն չունի: Այսպես, դպրոցական դասագրքերում սովորաբար ընդունվում է երեք սեռ՝ ներգործական, կրավորական և չեզոք: Ահա թե ինչ է գրում այդ մասին Ն. Պառնասյանը. «Ժամանակակից հայերենի դպրոցական դասագրքերում, ինչպես նաև մի շարք մենագրական աշխատություններում, պատճառական բայերը չեն դիտվել իբրև առանձին սեռ, այլ մտցվել են ներգործական սեռի մեջ, որպես նրա ածանցված տարբերակը՝ հիմք ընդունելով պատճառական բայերի՝ ուղիղ խնդիր առնելու հատկանիշը: Այսինքն սեռի սահմանները որոշելիս հաշվի են առնվել միայն գործողության հարաբերումը ուղիղ խնդրին: Անտեսվել է բայերի սեռը որոշելու մի կարևոր կողմը՝ գործողության հարաբերումը գործողություն կատարողին» (ԻԲ. 2. 284): Այդպիսով, Ն. Պառնասյանը պատճառական բայերը համարում է առանձին սեռ· Նույն ձևով ոմանք առանձնացնում են անդրադարձ սեռը, իսկ արևմտահայ քերականները՝ նաև փոխադարձ սեռը (օրինակ՝ ճամակցիլ):

Սեռի քերականական կարգը որոշելիս հայագիտության մեջ միշտ չէ, որ հստակ կերպով առանձնացվում են շարահյուսական և ձևաբանական հատկանիշները: Այդտեղից էլ դասակարգման տարբերությունները, սեռերի տարբեր քանակ ընդունելը և այլն: Ի միջի այլոց, սեռի խնդրում նման «անհամաձայնությունները» կարելի է ընդունել որպես հնդեվրոպական մի շարք լեզուների համար ընդհանուր հատկանիշ (ընդհանրություն): Նույն վիճակն է, օրինակ՝ ֆրանսերենում, ռուսերենում և այլն (համմտ. ԽԲ. 158):

Ոչ մի կասկած չկա, որ բայի սեռը շարահյուսական որոշակի կառուցվածքի պահանջ է առաջացնում, ուստի կապվում է հաջորդ՝ շարահյուսական մակարդակի հետ: Ահա թե ինչու սովորաբար բայերը դա-

սակարգելիս նախ առանձնացնում են անցողական և անանցողական բայերը (ըստ ուղիղ խնդիր առնելու / չառնելու հատկանիշի)։ Անշուշտ, նման դասակարգումը ձևաբանական ոլորտից դուրս է։ Նմանօրինակ դասակարգումների մեջ սխալ է ոչ միայն այն, որ անանցողական բայերի շարքն են դասվում չեզոքներից բացի, նաև կրավորականները, որոնք իսկապես (ինչպես նկատել է Ն. Պառնասյանը, ԻՐ. 285) պետք է մտցվեն անցողականների շարքը, այլև վերջինի մեջ պետք է դրվեն նաև պատճառականները և այլն, քանի որ ի վերջո առարկա են պահանջում, որի վրա գործողությունն անցնի։

Ստորև աղյուսակով ներկայացնենք բայերի իմաստային հարաբերությունների հնարավոր տիպերը (Ե տառով նշանակվում է իմաստաբանական ենթական, Ա տառով՝ օբյեկտը (խնդիրը), իսկ սլաքի ուղղությունը ցույց է տալիս գործողության ուղղությունը)։

Աղյուսակ № 20

	Հարաբերության տիպը	Արևելահայերեն	Արևմտահայերեն
Ե→Ա.	Ներգործական	պատռել	պատռել
Ե←Ա.	Կրավորական	պրվել	պրուիլ
ԵԱ.↷	Անդրադարձ	լվացվել	լուացուիլ
Ե↔Ա.	Փոխադարձ	համբուրվել	նամակցիլ
Ե→Ա.→	Պատճառական	պարմացրի	պարմացուցի

Ինչպես տեսնում ենք, բոլոր նշված տիպերը վերաբերում են անցողական բայերին և, ըստ էության, սեռի մասին խոսելիս էլ իսկապես պետք է նկատի ունենալ միայն անցողականները, քանի որ, հակառակ դեպքում, քերականական սեռը ոչ թե կբնութագրվի ձևաբանական մակարդակում, այլ շարահյուսական, որ այնքան էլ նպատակահարմար չէ։

Ձևաբանական տարբերակված արտահայտության ձևի տեսակետից երկու գրականներում էլ ընդգծվում են պատճառականները իրենց ընդհանուր ացն, եցն, ցն ածանցներով։ Հատուկ ձևաբանական ցուցիչներին զուգընթաց, երկու գրականներում էլ պատճառականների առանձին խմբեր կարող են դրսևորվել շարահյուսորեն՝ տալ բայով՝ գրել տալ։ Այսինքն, երկուսում էլ համադրական ձևին զուգահեռ գործում է նաև վերլուծական կաղապարը։

Սեռի քերականական կարգը երկու գրականներում էլ ոչ միայն պատճառականների համար, այլև, ընդհանրապես, արտահայտվում է

բայածանցման միջոցով՝ սեռային հակադրություններ ստեղծելով ածանցավոր և ածանցազուրկ ձևերով։ Բնական է, որ եթե ձևաբանական մակարդակում սեռային հատուկ ձևային հատկանիշներ չլինեին, ապա այդպիսիք կբնութագրեին միայն շարահյուսության մեջ։

Սեռանիշ ածանց չունեցող բոլոր բայերը երկու գրականներում էլ կարող են լինել ներգործական կամ չեզոք (ինչպես՝ ուտել, ճնել)։ Ընդորում ներգործականը այդ վիճակով ոչ թե հակադրվում է չեզոքին (ձևով), այլ կրավորականին, իսկ չեզոքն արդեն փոխակերպակ չունի, այն մնում է որպես ընդհանրապես բոլոր մյուս բայասեռերի հակադրության նյութ։ Այդտեղից էլ առաջանում է սեռի կարգը աստիճանական դասակարգմամբ ներկայացնելու անհրաժեշտություն (հմմտ. ԻԲ. 284).





Ներգործական սեռ—չեզոք սեռ հակադրությունը արտահայտության պլանում նշույթավորված չէ. այդ հակադրությունը դրսևորվում է բովանդակության պլանում, հատուկ սեռածանցներ առնելու կամ չառնելու ունակությամբ։

Երկու գրականներում էլ ներգործական և չեզոք սեռի բայերի հիմնական տարբերությունը ուղիղ խնդրով դրված օբյեկտ (առարկա) առնելու կամ չառնելու մեջ է։

Եթե ներգործական սեռի բայերը արևելահայերենում ընդունում են վ կրավորական ածանցը, ապա չեզոքները զուրկ են այդ հնարավորությունից և այդ ևս ծառայում է որպես ցուցիչ կրավորական սեռ—չեզոք սեռ հակադրության։

Ձևական արտահայտության առումով շատ ավելի բարդ է վիճակն արևմտահայերենում, ուր ձևական հստակ տարբերակում չունեն ներգործական և չեզոք, ներգործական և կրավորական բայերը։

Երկու գրականներին էլ հատուկ է այն երևույթը, երբ տեղի է ունենում սեռային հակադրության չեզոքացում. այսպես, օրինակ՝ պատել —պատվել[2] (վերջին ձևը կրավորական է ըստ ածանցի, բայց, օրինակ՝ «Լուսինը պատվում է» նախադասության մեջ այն չեզոք է՝ ըստ բովանդակության։ Այսպիսի ձևերը հայագիտության մեջ կոչվում են կրավորաձև չեզոք սեռի բայեր (հմմտ. ԻԲ. 2. 281)։

Գ. Ջահուկյանը արևելահայերենի համար առանձնացնում է երկու սեռանիշ վերջնամասնիկներ՝ /ե, ա/ց/ն/ր/ և վ: Այդ մոտեցմամբ արևմտահայերենում առկա են հետևյալ սեռանիշ վերջնամասնիկները՝ /ե, ի, ա, ու/ց/ն/ր և ու/իլ/: Ջանց ենք առնում կրավորաձև չեզոքների առաջին ենթախումբը, որն իբրև բնորոշ առանձնահատկություն ցույց է տալիս ենթակայի այնպիսի գործողություն, որ առնչվում է առարկայի դիրքի, դրության, վիճակի, այլն՝ հոգեվիճակի, փոփոխության հետ (տե՛ս ԻՐ. 2. 295): Բերենք այդպիսի բայերից մի շարք արևմտահայերենի ղուգահեռ ձևերով.

արևելահայերեն	արևմտահայերեն
բացվել	բացուիլ
շփոթվել	շփոթիլ
վրդովվել	վրդովիլ և այլն:

Ենթակայի գործողության ուղղությամբ՝ ներգործական սեռի հականառակ ուղղություն ունեցող այն բայերը, որոնց կատարած գործողության տերը նույն ինքը ենթական է արևմտահայերենում, ինչպես նաև արևելահայերենի առանձին քերականություններում, ընդունվում են որպես առանձին սեռ՝ անդրադարձ:

Երկու գրականներում էլ այս խմբին պատկանում են բացարձակապես նույն բայերը՝ լվացվել[1]—լուացուիլ[2], հագնվել—հագուիլ[2] սանրվել[1]—սանրուիլ[2], կոնկվել[1]—կոնկուիլ[2] և այլն:

Խիստ սահմանափակ է այս խմբին պատկանող բայերի թիվը արևվելահայերենում և արևմտահայերենում: Երկուսում էլ (այդպես է նաև մի շարք այլ լեզուներում) անդրադարձ խմբին պատկանող բայերի ենթական բնութագրվում է շնչավորության հատկանիշով:

Շնչավորության հատկանիշը հատուկ է նաև բայերի մեկ այլ խմբի, դրանք փոխադարձ (սեռի) բայերն են: Այս բայերը ցույց են տալիս մեկից ավելի անձերի միմյանց հետ առնչվող գործողություն, ինչպես՝ համբուրվել[1], գրկախառնվել[1] և այլն: Արևմտահայերենում փոխադարձ բայերն ունեն ձևական ցուցիչ՝ ի յծորդությունը (կից+իլ)՝ ճամակցիլ, թղթակցիլ, գործակցիլ, այլև՝ կռուրտիլ և այլն:

Ինչպես անդրադարձ, այնպես էլ փոխադարձ բայերն արևմտահայերենում ունեն խոնարհման այն առանձնահատկությունը, որ ստանում են կրավորականի վերջավորություններ. ինչպես՝ «Քույրիկս ամառուեցաւ» կամ՝ «Բագրատ և Վահագն կռուրտեցան» և այլն:

Վերջապես, երկու գրականներում էլ կան կրավորաձև չեզոք բայերի այնպիսի նմուշներ, ուր կրավորականությունն արտահայտող արեւելահայերենի վ-ն և արևմտահայերենի ի(յ)-ը ունեն, այսպես կոչված, բայակազմական-բաղադրական դեր (հմմտ. ԻՒ. 2. 297). օրինակներ՝ քենակվել[1]—քենակիլ[2], գանգատվել[1]—գանգատիլ[2], գժվել[1]—գժուիլ[2], ճարճակվել[1]—յարձակիլ[2] և այլն:

Երկու գրականների էական ընդհանրությունը դրսևորվում է պատճառականների ինչպես համադրական ձևերում (ածանցներով), այնպես էլ վերլուծական կառույցներում (տալ հարցադրությամբ)՝ մոռեցնել, բերել տալ, գրել տալ և այլն:

Այսպիսով, կարելի է ասել, որ չնայած սեռային արտահայտության ձևային տարբերություններին (կրավորականի վ ածանցի փոխարեն ուիլ, իլ-ի առկայություն և այլն), սեռային խմբերը երկու գրականներում էլ բնութագրվում են ընդհանուր բայաբաշխմամբ, բայի արտահայտած իմաստային ընդհանրություններով պայմանավորված:

Որոշակի ընդհանրություններ են առկա նաև երկու գրականների բազմապատկական ածանցների արտահայտության և բովանդակության պլաններում՝ միևնույն ածանցներն են դործում նույն իմաստներով՝ -ատ-, -ոտ-, -կոտ-, -տ: Դրանք կոչվում են ոչ միայն բազմապատկական, այլև սաստկական, քանի որ որոշակիորեն սաստկացնում են դործողության գաղափարը: Երկու գրականներում էլ բազմապատկական-սաստկական ածանցները միջին դիրք են գրավում բայական վերջավորությունների և բայարմատի միջև: Երկուսում էլ բազմապատկական-սաստկական իմաստը պարտադիր չէ, որ ածանցմամբ արտահայտվի, այն կարող է դրսևորվել նաև բառաբարդմամբ (արմատի կրկնությամբ՝ գոռգոռալ, զնգզնգալ, ճաճճել և այլն):

Երկու գրականների քերականություններում բայի դասակարգումը դիմավոր և անդեմ ձևերի կատարվում է նույն սկզբունքով: Ինքման ենթակա բայերն ըստ այդմ կոչվում են դիմավոր ձևեր (բայեր), իսկ ոչ եղանակային ձևերը, որոնք չունեն եղանակի, ժամանակի, դեմքի և թվի կարգերը՝ դերբայներ:

Ստորև ներկայացնում ենք երկու գրականների դերբայները՝ ըստ իրենց վերջավորությունների (աղյուսակ № 21):

Հաշվի առնելով դերբայների քերականական արժեքն ու բնույթը, սովորաբար տարբերակվում է երկու խումբ՝ բուն կամ անկախ դերբայներ և ձևակազմիչ կամ կախյալ դերբայներ (հմմտ. Ս. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, 196): Բուն (կամ անկախ) դերբայ-

ները չեն մասնակցում եղանակային ձևերի կազմությանը և կարող են փոխանցվել այլ խոսքի մասերի, այնինչ ձևակերպիչ կամ կախյալ դեր-

Աղյուսակ № 21

Դերբայները	Արևելահայերեն		Արևմտահայերեն			
անորոշ	դրել	կարդալ	մտածել	խօսիլ	խաղալ	թողուլ
անկատար	դրում	կարդում	—	—	—	—
ապառնի	դրելու (դրելիք)	կարդալու (կարդալիք)	մտածելու մը-տածելիք	խօսելու խօսելիք	խաղալու խա-ղալիք*	թողուլու թողելիք
վաղակատար	դրել	կարդացել	մտածեր	խօսեր	խաղցեր	թողեր
հարակատար	դրած	կարդացած	մտածած	խօսած	խաղցած	թողած
ենթակայական հարակցական	դրող	կարդացող	մտածող	խօսող	խաղցող	թողող
ժխտական	դրելիս դրի	կարդալիս կարդա	— մտածեր	— խօսեր	— խաղար	— թողեր

*Խաղալիք բառը արևմտահայ ուղղագրությամբ տարբեր է՝ խաղալիկ. այնպես որ համանունություն չի առաջանում:

բայները դիմային ձևակազմության բաղադրիչներ են: Ստորև առանձին աղյուսակներով ներկայացվում են երկու դրականների անկախ և ձևակազմիչ դերբայները.

Աղյուսակ № 22

Անկախ դերբայներ		Անորոշ դերբայ				Ենթակայական		Հարակցական		Հարակատար	
լեզու	լծորդություն	I լծ.	II լծ.	III լծ.	IV լծ.	ներ	ում եմ	ող	ում եմ	ած	եմ
Արևելահայերեն		+	+	—	—	+	+	+	+	+	∓
Արևմտահայերեն		+	+	+	+	+	+	∓	∓	(+)	(+)

Բուն (անկախ) դերբայներից արևելահայերենում, արևմտահայերենի համեմատությամբ, լայն գործածություն ունեն հարակցական դերբայի ձևերը՝ գրելիս, կարդալիս: Արևելահայերենի հարակատար դերբայը կարծեք միջակա դիրք է գրավում ձևակազմիչ (կախյալ) և բուն դերբայ-

Լեզու	Կախյալ (ձևակազմիչ) դերբայ	Անկատար դերբայ		Ապառնի դերբայ		Վաղակատար դերբայ		Հարակատար		Ժխտական	
		ըբ-բում	կբ-դում	դրե-լու	կբ-դալու	դրել դրեր[2]	կբ-դացել կբ-դացեր[2]	դրած կարդացած		դրի (դրէ[2]) կարդա	
Արևելահայերեն	+	+	+	+	+	+	∓	∓	+	+	
Արևմտահայերեն	—	—	+	+	+	+	+	+	+	+	

ների միջև (միայն սահմանափակ թվով բայաձևեր են մասնակցում խոնարհման հարացույցում), այն դեպքում, երբ արևմտահայերենում հարակատար դերբայը մտնում է ձևակազմիչ դերբայների կազմի մեջ: Երկու գրականներում էլ երկրորդական վերլուծական ժամանակների կազմության մեջ մտնում են նաև հարակատարի ձևերը՝ ինած է լինում[1]— ինացած կ'ըլլայ[2]:

Ինչպես երևում է աղյուսակից, անորոշ դերբայն արևմտահայերենում բոլոր մյուս դերբայական ձևերի համեմատությամբ աչքի է ընկնում խոնարհիչների առավելագույն քանակով՝ 4 լծորդություն երկուսի փոխարեն: Երկու գրականներում էլ անորոշ դերբայը հոլովվում է, ենթարկվելով դ հոլովման և անորոշ դերբայի հոլովաձևերը ստանում են գոյականին հատուկ պաշտոններ: Հարակցական (կամ ընթացակցական) դերբայը թեև չի կապվում որևէ ժամանակաձևի, սակայն հանդես է գալիս բայի տարբեր ժամանակային ձևերի հետ, արտահայտելով հարակից գործողության իմաստ՝ աշխատելիս եղում է[1], ճանճնելիս դողում է[1] և այլն:

Ինչպես երևում է ձևակազմիչ դերբայների աղյուսակից, արևելահայերենին հատուկ անկատար դերբայը (գրում, կարդում) բացակայում է արևմտահայերենում: Երկու գրականների վաղակատար դերբայն ունի ձևային տարբերություն՝ արևելահայերենի լ-ի փոխարեն արևմտահայերենում հանդես է գալիս ր-ն՝ գրել—կարդացել[1] և գրեր—կարդացեր[2]: Այդպիսով, եթե արևելահայերենում անորոշ և վաղակատար դերբայները ե խոնարհման բայերի դեպքում ունեն ձևական ընդհանրություն (նույնատիպ վերջավորություններ՝ գրել—գրել), ապա արևմտահայերենում բոլոր դեպքերում վաղակատարը տարբերակված է անորոշ դերբայից՝ գրել—գրեր:

Երկու գրականներում էլ ապառնի դերբայը ունենալով հանդերձ ձևային ընդհանրություններ, հանդես է գալիս քերականական տարբեր եղանակներում. արևելահայերենում այն կազմում է սահմանական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ժամանակները (գրելու է, էր, կարդալու է, էր), արևմտահայերենում այն արտահայտում է հարկադրականության իմաստ՝ գրելու է (նշանակում է պետք է գրել):

Որպես երկու գրականների քերականական էական տարբերություն պետք է նշել նաև այն, որ եթե արևելահայերենում հարակատար դերբայ ունենում են չեզոք և կրավորական բայերը (վիճակային ներկա և անցյալ անկատար), ինչպես, օրինակ՝ ընած եմ, գրված էր և այլն, ապա արևմտահայերենում ներգործականները նույնպես կազմում են հարակատարի համապատասխան ձևեր, ինչպես՝ բերած եմ, տեսած եմ և այլն: Դա մի այնպիսի բնորոշ հատկանիշ է, որով կարելի է տարբերել արևմտահայի խոսքը արևելահայից. ի միջի այլոց, արևելահայ խոսակցության մեջ նմանօրինակ ձևերի «սպրդումը» անմիջապես վկայում է խոսողի արևմտահայ ծագումը:

Ինչպես երևում է բուն և ձևակազմիչ դերբայների վերոբերյալ աղյուսակից, բայի անդեմ ձևերի մեջ մտնում են այնպիսի միավորներ, որոնք, ըստ էության, տարբեր երևույթներ են մատնանշում. այսպես, օրինակ՝ եթե անորոշ դերբայը մոտ է բայանվանը (անուն խոսքի մասին. այն կարող է հոլովվել, գործածվել որոշյալ և անորոշ առումներով և այլն), ապա, ասենք, արևելահայերենի հարակատարը մոտ է ածականին (բայածական տերմինը արդեն խոսում է այդ մասին): Բոլոր դերբայների ընդհանուր և մեկ խմբի մեջ միավորող հատկանիշը դործողության նկատմամբ դեմքի հարաբերության ցուցիչի բացակայությունն է, մի կողմից, և բայահիմքի հիմնական հատկանիշների առկայությունը՝ մյուս կողմից: Հարկ է նշել, որ բայական և անվանական հատկանիշների համակցման (խաչավորման) բնույթը երկու գրականներում միշտ չէ, որ համընկնում է: Գրական լեզուների զարգացման առանձին փուլերում եղած ընդհանուր հատկանիշները կարող են աստիճանաբար վերանալ՝ նրանցից մեկի զարգացման տարբեր ուղղությամբ պայմանավորված. օրինակ՝ մեր դարասկզբի արևելահայերենում էլ, ինչպես արդի արևմտահայերենում, հարակատարի ձևերը, առանց որոշակի սահմանափակման, օժանդակ բայի համապատասխան ձևերի զուգակցմամբ կազմում էին բայաժամանակներ (ինչպես՝ գրած եմ, բերած եմ, տեսած եմ և այլն): Արևելահայերենի զարգացման արդի փու-

լում այդ երևույթը խիստ սահմանափակվել է, և հարակատարի ձևերը դերազանցապես ածականական արժեք են ձեռք բերել՝ ընած է, ունի գրեթե նույնպիսի իմաստ, ինչ, ասենք, ուրախ է, արթուն է և այլն։ Այսպիսով ստացվում է, որ միևնույն ընած է ձևը լինելով հանդերձ երկու գրականներում, արևմտահայերենում բայաժամանակ է, արևելահայերենում՝ ոչ։ Կա՞, արդյոք, ձևական մի ցուցիչ այս երևույթը բացատրելու համար. այդպիսի դեր կարող է կատարել ժխտական կառույցը. կախված այն բանից, թե ի՛նչ դիրք է ստանում օժանդակ բայը, կարելի է որոշել՝ բայի՞ հետ գործ ունենք, թե ոչ։ Բայերի ժխտականի դեպքում չ-ն միանում է օժանդակ բային և անցնում բայահիմքից առաջ։ Այդպես է, օրինակ՝ գրել է—չի գրել[1], բերել է—չի բերել[1] և այլն։ Հարակատարի դեպքում արևմտահայերենում գործում է այդ օրինաչափությունը՝ գրած է—չէ գրած։ Իսկ ահա արևելահայերենում նման դեպքերում գործում է այն օրինաչափությունը, ինչ որ բաղադրյալ ստորոգյալների դեպքում՝ դեղին է—դեղին չէ, նմանապես՝ ընած է—ընած չէ. այնինչ արևմտահայերենում՝ ընած է—չէ ընած։ Ահա թե ինչու, նույն ձևային ընդհանրությամբ հանդերձ, արևելահայերենի հարակատարի ձևերը ածականական արժեք ունեն, արևմտահայերենինը՝ բայական (այս մասին տե՛ս Շարադասություն բաժինը)։

Երկու գրականների անկախ և ձևակազմիչ դերբայներն ունեն հետևյալ ընդհանուր գծերը. 1) անորոշ դերբայն ունի ելակետային արժեք, որով տարբերակվում են լծորդությունները։ Որպես բայի սկզբնաձև, անորոշում հանդես են գալիս բայական համակարգում եղած բոլոր բայածանցները։ Եվ հենց անորոշ դերբայի վերջավորությունն է, որ բառակազմական արժեք ունի, որի միջոցով (-ել, -ալ) այլ խոսքի մասերից կազմվում են բայեր՝ կաճաչ—կաճաչել, վատ—վատաճալ և այլն։ 2) Անորոշը չի մասնակցում բայի խոնարհմանը, մինչդեռ մասնակցում է հոլովմանը (հոլովվում է)։ Ընդ որում, ի տարբերություն, ասենք, ածականների, թվականների և այլն, անորոշը հոլովվում է ոչ թե փոխանվանական կերպով գործածվելիս, այլ ուղղակի։ Այդ է վկայում նաև անորոշ դերբայի ինչպես որոշյալ, այնպես էլ անորոշ առումներով հանդես գալը։

Հարկ է նշել, որ արևմտահայերենի քերականություններում դեռևս գործում է ավանդական քերականության սխեման. տարբերակվում է, այսպես կոչված անորոշ եղանակ. աներևույթ՝ վազել, խոսիլ, կարդալ, ներկա ընդունելություն՝ վազող, խոսող, կարդացող, անցյալ ընդունե-

լություն՝ վազած, վազեր, խոսած, խոսեր, կարդացած, կարդացեր, *ապառնի ընդունելություն՝* վազելիք, վազելու, խոսելիք, խոսելու, կարդալիք, կարդալու:

Որպես երկու գրականների անորոշում առկա նրբերանգային տարբերություն կարելի է նշել այն, որ եթե արևելահայերենի անորոշին այնքան էլ բնորոշ չէ ցուցաստացական հոդով անորոշի հոդնակի ձևը (դրանք հատուկ են մասնավորապես արևելահայ խոսակցականին), ապա արևմտահայերենում դրանք ավելի լայն ոլորտ են ընդգրկում և ավելի հաճախ ներթափանցում գրական լեզվի մեջ: Օրինակ՝ գալներս, գնալներս[1]—գալերնիս, երթալնիս, բերելնիս[2] *և այլն:*

Ի տարբերություն արևելահայերենի հարակատարի, արևմտահայերենի դերբայը, ինչպես նշվեց, ձևաբանական դեր ունի, այն օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերով կազմում է հարակատար ներկա և հարակատար անցյալ ժամանակներ, ինչպես՝ վազած եմ, խոսած եմ, կարդացած եմ, վազած էի, խոսած էի, կարդացած էի *և այլն: Արևելահայերենում այդ իմաստը արտահայտելու համար կիրառվում են, սովորաբար, վաղակատարի համապատասխան ձևերը՝* վազել եմ, խոսել եմ, կարդացել եմ:

Եթե արևմտահայերենում հարակատարը մասնակցում է նաև հիմնական ժամանակային ձևերի կազմմանը, ապա արևելահայերենում այն մասնակցում է միայն երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմմանը՝ եկած կլինեմ, բերած պետք է լինի *և այլն:*

Երկու գրականներում էլ ենթակայական դերբայը չունի ձևաբանական արժեք, չի մասնակցում խոնարհման համակարգին: Ի տարբերություն ենթակայական դերբայի, հարակցական դերբայը երկուսում էլ մասնակցում է խոնարհմանը, կազմելով երկրորդական վերլուծական ժամանակներ՝ աշխատելիս է եղել[1], աշխատելիս եղեր է[2]: Իս-ով *դերբայը ընդունված էր մի ժամանակ անվանել անկատարի մի տարբերակ: Աղայանն այն առանձնացրեց անվանելով ժամանակային դերբայ, Ս. Աբրահամյանը՝* հարակցական, *Ն. Պառնասյանը՝* զուգընթացական:

Արևելահայերենում անկատար դերբայը մեծ դեր է կատարում սահմանական եղանակի անկատար ներկա և անցյալ ժամանակների կազմման գործում՝ օժանդակ բայի հետ միասին այն կազմում է սահմանականի բայաձևերը, հանդես գալով որպես բայական մեկ բառաձև (վերլուծական բառաձև): Արևմտահայերենը ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում է ըղձական եղանակի ձևերի և կը եղանակիչի միջոցով (համադրական եղանակով):

Երկու գրականներում էլ բայի եղանակային կամ դիմավոր ձևերում դրսևորվում են ընդհանրապես հայերենի բային հատուկ քերականական կարգերը՝ եղանակի, ժամանակի, կերպի, դեմքի և թվի:

Երկու գրականներում էլ բայի դեմքի կարգը ունի արտահայտության և բովանդակության պլանների բացարձակ ընդհանրություն (տարբերակում ըստ երեք դեմքի, համապատասխան դիմային վերջավորություններով): Նմանօրինակ ընդհանրության մասին կարելի է խոսել նաև բայի թվի կարգի ժամանակ, ուր նույնպես եղակի / հոգնակի ընդհանուր հակադրության առկայությունը վկայում է տիպաբանական միասնական կաղապարի մասին՝ ընդհանուր թվային վերջավորություններ և այլն: Բայց ահա բայի ժամանակի քերականական կարգը երկու գրականներում ի հայտ է բերում ոչ միայն բովանդակության, այլև արտահայտության պլանների զգալի տարբերություններ:

Նախ անդրադառնանք ժամանակի կարգի դրսևորման միջոցներին: Երկու գրականներում էլ բայի ժամանակի արտահայտումը երկու եղանակ ունի՝ վերլուծական և համադրական: Եթե վերլուծական ժամանակային ձևերը (դերբայ + օժանդակ բայ կազմությունները) գերակշռում են արևելահայերենում, ապա արևմտահայերենի խոնարհման համակարգում, ընդհակառակը, գերակշռում են համադրական ժամանակային ձևերը (բայահիմք + բայական վերջավորություն): Կարելի է բերել հետևյալ թվային համեմատությունը. եթե արևելահայերենում համադրական կազմություն ունեն սահմանականից միայն անցյալ կատարյալ ժամանակը, ըղձական և ենթադրական եղանակների ապառնի և անցյալ ժամանակները և, բնականաբար, հրամայականը (գրեցի, գրեմ, գրեի, կգրեմ, կգրեի, գրիր), ապա արևմտահայերենում միայն սահմանականում համադրական ժամանակային ձևեր են՝ ներկան, անցյալ անկատարը, անցյալ կատարյալը:

Որպես երկու գրականների միջև առկա էական տարբերություն, պետք է նշել, որ արևելահայերենի կ(ը) և պիտի եղանակիչները (անունն արդեն մատնանշում է) ոչ թե ժամանակների, այլ եղանակների կազմության մեջ դեր ունեն. այնինչ արևմտահայերենում այդ մասնիկները հանդես են գալիս միայն սահմանականի խոնարհման հարացույցում և ժամանակային ձևեր են կազմում՝ կը-ն ներկայի և անկատարի, պիտի-ն ապառնի ժամանակի: Ուրեմն, կ(ը) և պիտի մասնիկները արևելահայերենում եղանականիշ են, արևմտահայերենում՝ ժամանականիշ: Արևմտահայերենի սահմանական եղանակի ժամանակային ձևերի հա-

բացույցում կը-ի խաղացած դերը մեծացնում է համագրականության ցուցիչը: Այսպիսով, նույն ձևական մասնիկները երկու գրականներում միանգամայն տարբեր գործառույթություններով են բնութագրվում՝ եզանականիշ կամ ժամանականիշ: Եթե արևելահայերենում ժամանակային տարբերությունները դրսևորվում են վերջավորությունների միջոցով, ապա արևմտահայերենում այդ առումով զգալի դեր ունեն նախամասնիկները՝ կը և պիտի-ն:

Երկու գրականներում էլ կարելի է, ըստ Գ. Ջահուկյանի մեթոդի, առանձնացնել ոչ հրամայական ձևերի մասնակազապարային երկու դաս (առաջին խումբը ակնառու հիմքի համար և երկրորդը՝ կատարյալ): Աղյուսակ № 23-ում ներկայացվում են մասնակազապարային երկու դասերը՝ դիրքային տարբերակներով:

Աղյուսակ № 23

Վերջավորություն	Դիրքային տարբերակներ					
	Ե-ի խումբ		Ա-ի խումբ		Ի-ի խումբ	Ու-ի խումբ
	արևել	արևմտ.	արևել.	արևմտ.	արևմտահայերեն	
I խումբ (Մ-ի խումբ)	եմ	եմ	ամ	ամ	իմ	ում
	ես	ես	աս	աս	իս	ուս
	ի	է	ա	ա	ի	ու
	ենք	ենք	անք	անք	ինք	ունք
	եք	եք	աք	աք	իք	ուք
	են	են	ան	ան	ին	ունե
II խումբ (Ր-ի խումբ)	ի	ի	ա	ա	ա	ի
	իր	իր	ար	ար	ար	իր
	1 — 2 հց	1 — 2 հց	ավ	ավ	ավ	—
	ինք	ինք	անք	անք	անք	ինք
	իք	իք	աք	աք	աք	իք
	ին	ին	ան	ան	ան	ին

Ինչպես երևում է աղյուսակից, եթե արևելահայերենում, ըստ այդ հիմքերի հետ զուգորդման, վերջավորությունների երկու խումբ (դիրքային տարբերակներ) են առանձնացվում, ապա արևմտահայերենում նրանք չորսն են: Դիրքային տարբերակների բազմազանությունը արևմտահայերենում պայմանավորված է պարզապես չորս լծորդություններով: Հակառակ դրան, երկու գրականներում էլ բուն վերջավորությունները նույնն են. առաջին խմբի համար դրանք են՝ մ, ս, երրորդ դեմ-

քում զուտ վերջավորություններ չլինելով՝ հանդես են գալիս լծորդները և ըստ այդմ էլ արևելահայերենն ունենում է երկու տարբերակ (Ի-ի և Ա-ի), արևմտահայերենը՝ չորս (է, Ա, Ի, Ու), հոգնակիի թվում՝ -ճի, ի, ն: Երկրորդ խմբում լծորդ ձայնավորները հանդես են գալիս առաջին դեպքում դիմային վերջավորությունների արժեքով. ըստ այդմ արևելահայերենում առկա են Ի և Ա, արևմտահայերենում՝ նույնը չորս լծորդությունների համար: Երկրորդ դեմքը երկուսում էլ լինում է եղրային Ր-ով. երրորդ դեմքը Ե խոնարհման բայերի համար երկու գրականներում էլ երկու ձևի վերջավորություններ կարող է ունենալ՝ զրո վերջավորությունն և -եց, արևմտահայերենում դրան պետք է գումարել նաև եցալ: Հոգնակի թվի բուն եղրային միավորները երկու գրականներում ոչ միայն համընկնում են ըստ լծորդությունների, այլև ըստ անկատարի և կատարյալի հիմքերի:

Այսպիսով, երկու խմբերի ա-ի համար կարելի է նշել այն ընդհանրությունը, որ երկու գրականներում էլ այդ դեպքում գործ ունենք ձևային (արտահայտության) բացարձակ նույնության հետ (աճի, աի, ան ձևվերը հանդես են գալիս ինչպես Մ-ի խմբի (անկատարի) հոգնակիում, այնպես էլ Ր-ի խմբի (կատարյալի) հոգնակիում): Այդ դեպքում երկու գրականների հիմքային տարբերությունները՝ ն/ց (ինչպես՝ մոռենալ—մոռեցաճի և այլն) հանդես են գալիս որպես ժամանականիշ և կերպանիշ թեքույթներ (համմ. ԼԲ. 273):

Երկու գրականներում էլ դիրքային տարբերակները (բացառությամբ եց-ի և ավ-ի) արտահայտվում են ձայնավորների հերթագայությամբ: Ընդ որում, եթե արևելահայերենում հանդես են գալիս միայն ե և ա (եզակի թվում), ի և ա (հոգնակի թվում) ձայնավորները, ապա արևմըտահայերենում ի ձայնավորը առկա է նաև եզակի թվում, ուր հանդես է գալիս նաև ու-ն (որոշակի սահմանափակությամբ): Կարելի է ասել, որ արևմտահայերենում վերջավորությունների համանունության ավելի բարձր աստիճան գոյություն ունի (համմ., օրինակ՝ ի և ա խոնարհման բայերի երկրորդ խմբի ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի ձևերը, որոնք բացարձակապես համընկնում են):

Անցնելով ժամանակային բուն ձևերի ձևաիմաստային կիրառություններին, նշենք հետևյալ ընդհանրություններն ու տարբերությունները՝ ըստ բայաժամանակների:

Ներկայի ձևերը երկու գրականներում էլ ունեն ինչպես իմաստային, այնպես էլ ձևական տարբերություններ: Ամենից առաջ, արևմտա-

հայերենն ունի ներկայի մի ձև (շարունակական ներկա), որ բացակայում է արևելահայերենում (կու գայ կոր, կը մնայ կոր և այլն)։ Ինչպես տեսնում ենք, այն կազմվում է վերլուծական կոր մասնիկով։ Շարունակական ներկայի մասին Ս. Անթոսյանը գրել է. «Ընդհանրապես այն սխալ տպավորությունը կա, որ շարունակական ունի միայն խոսակցական արևմտահայերենը, և շարունակականի միակ մասնիկն է կոր, որը ըստ Այտընյանի, իբր փոխառնված է թուրքերենից» («Հայոց լեզվի պատմական քերականություն», ժողովածու, էջ 193)։ Այնուհետև Ս. Անթոսյանը ցույց է տալիս, որ շարունակական ունեն նաև արևմտահայ բարբառները, հայտնելով այն կարծիքը, որ «ըստ երևույթին, Այտընյանի թյուր ենթադրությամբ պետք է բացատրել գրական արևմտահայերենի քամահրանքը կոր մասնիկի գործածության հանդեպ» (անդ)։ Բացատրությունը համոզիչ չէ, որովհետև լեզուն արդյունք է բնականոն զարգացման և ոչ թե «թյուր ենթադրության»։ Ընդունելի է Հր. Աճառյանի եզրահանգումը. շարունակական ներկան արևմտահայերենում առաջացել է «տաճկերենի ազդեցությամբ, բայց ոչ փոխառությամբ»։ Պետք է ասել, որ թեև շարունակականի ձևերը ներթափանցել են նաև գրական լեզվի մեջ, բայց առ այսօր որոշ զգուշություն կա այդ ձևերը գրական մշակված լեզվում գործածելու ժամանակ։

Երկու գրականների բայաժամանակների կազմության մեջ հիմնական տարբերությունը ի հայտ է գալիս ներկայի ձևերում, գրական արևելահայերենում ներկան կազմվում է անկատար դերբայով և օժանդակ բայի ներկայի ձևերով, արևմտահայերենում ներկան կազմվում է կը (կու) նախամասնիկով և ըղձականի ձևերով (կը-ի տարբերակներն են՝ ձայնավորից առաջ կ՝ և միավանկ մի խումբ բայերի համար կու՝ կու տամ, կու լամ, կու գամ)՝ կը բերեմ, կ'ըսեմ։

Կը եղանակիչի (հիշեցնենք, որ այն եղանակիչ է արևելահայերենի համար, արևմտահայերենի համար կը-ն բնավ եղանակիչ չէ, այլ ժամանակային ձևեր կազմող մասնիկ) մասին հայագիտության մեջ եղած կարծիքները միակողմանի լինելու վտանգ ունեն, քանի որ խոսելով այդ մասնիկի մասին, հաճախ նկատի են ունենում ապառնիությունն արտահայտելը, մի բան, որ հատուկ չէ արևմտահայերենին։ Ահա ինչու կը եղանակիչի մասին է. Մակաևի դիտողությունները այդ հանգամանքն ըստ էության հաշվի չառնելու նմուշ կարող են ծառայել (հմմտ. նրա «Համեմատական լեզվաբանության ընդհանուր տեսություն» (ռուս.)

գրքի 149—154 էջերը՝ «Եղանականիշ կը մասնիկի ծագումը հայերենում» բաժինը)։

Ինչպես որ կը-ն արևելահայերենում լինելով եղանականիշ մասնիկ, արևմտահայերենում ժամանականիշ է, նույնպես և պիտի-ն, որ արևելահայերենում հարկադրականի եղանակիչն է, արևմտահայերենում՝ ապառնի ժամանակ կազմող մասնիկ։

Այսպիսով, կարելի է ասել, որ արևելահայերենի եղանականիշ բոլոր մասնիկները արևմտահայերենում առաջին հերթին ժամանականիշ են։ Եթե արևելահայերենում բայասկիզբը եղանականիշ մասնիկների տեղն է (հիշենք պայմանական, հարկադրական եղանակների կազմությունը), ապա արևմտահայերենում այդ դիրքում հանդես են գալիս ժամանականիշ մասնիկները։

Որպես երկու գրականների ներկայի տարբերություն պետք է նշել, որ արևմտահայերենում սահմանափակ թվով բայեր ներկա են կազմում առանց կը նախամասնիկի, ինչպես գիտեմ, կամ, կրնամ, ունիմ։

Նույն ձևով առանց նախամասնիկ կը-ի անցյալ անկատար ժամանակն են կազմում բայերի վերոբերյալ ձևերը՝ գիտեի, կայի, կրնայի, ունեի։

Ներկա ժամանակի արտահայտած հիմնական իմաստներից բացի, երկու գրականներում առկա է ներկան ապառնիի (նաև անցյալի ապառնիի) իմաստով կիրառելու հատկանիշը, ինչպես՝ Մայիսին Մոսկվա եմ գնում (գնալու իմաստով) և արևմտահայերենում՝ Մայիսին Հայաստան կերթամ—պիտի երթամ իմաստով։

Որպես արևմտահայերենին բնորոշ հատկանիշ պետք է նշել այն, որ սահմանական և պայմանական եղանակների ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի ձևերը համընկնում են։

Եթե երկու գրականներում էլ ներկան և անկատարը հարաբերաբար քիչ են կիրառվում ապառնիի իմաստով, ապա ավելի հաճախ են կիրառվում անցյալում տեղի ունեցած-ավարտված գործողության իմաստով (պատմական ներկա), մանավանդ բանավոր խոսքում։ Հիշենք ինչպիսի լեզվական արտահայտչամիջոցներով են կազմվում երկու գրականների հեքիաթները, զրույցները՝ թագավորի տղան գնում է տեսնում՝ —Թագավորին տղան կերթա կտեսնե[2]...

Երկու գրականներում էլ հարակատար ներկա և անցյալի հարակատար ժամանակները վերլուծական կազմություն ունեն՝ համապատասխան դերբայ+օժանդակ բայ։ Հիմնական տարբերությունը ի հայտ է գալիս

կիրառության ոլորտներում. եթե արևմտահայերենում, ինչպես նշվեց դերբայների մասին խոսելիս, այս ժամանակը կիրառության լայն ոլորտ ունի (սահմանափակում չկա), ապա արևելահայերենում հարակատարի (ժամանակային) ձևերը հատուկ են միայն կրավորական սեռի բայերին և ցուցակով տրվող (սահմանափակ թվով) չեզոք սեռի բայերին՝ հոգնել, կաճգնել, նստել, պառկել և այլն:

Այնտեղ, ուր արևելահայերենը նախընտրում է վաղակատար ժամանակը, արևմտահայերենը դիմում է հարակատարի ձևերին: Ըստ այդմ, երբ արևելահայն ասում է՝ գնացել է, արևմտահայը նախընտրում է՝ գացած է ձևը (հաշվի առնելով արևելահայերենի վերոհիշյալ սահմանափակումը): Տեսած եմ, կտրած եմ, բերած եմ ձևերը, որ երբեմն տեղ են գտնում արևմտահայի արևելահայ խոսքի մեջ, գրական կանոնով անհանձնարարելի ձևեր են, որոնք միանգամայն համապատասխանում են արևմտահայ կանոնականին:

Սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակների զուգադրությունը ցույց է տալիս, որ արևելահայերենի վերլուծական ձևերի փոխարեն (գնալու եմ, գնալու էի և այլն), արևմտահայերենը դարձյալ կիրառում է նախամասնիկավոր ձևեր՝ պիտի սիրեմ, պիտի սիրեի: Արևելահայերենն այդ ձևերը կիրառում է հարկադրական եղանակի համար, ինչպես որ արևմտահայերենը սիրելու է, գնալու է ձևերը հիմնականում կիրառում է հարկադրականի ապառնու համար: Ստացվում է, որ երկու դրականներում էլ առկա են նույն բայաձևերը, սակայն միանգամայն հակառակ իմաստներով՝ մեկի հարկադրականը մյուսի սահմանականն է և հակառակը: Այսպիսով, կարելի է ասել, որ երկու դրականների բայաժամանակային ձևերի նույնությունը (ձևային) իմաստային տարբեր բնութագրություն է կրում. այսինքն՝ միևնույն լեզվական առաղձը բովանդակության պլանում տարբեր իմաստային հակադրություններ է ստեղծում: Ընդ որում երբեմն եղանակային և ժամանակային ընդունված իմաստները վիճաբանության առարկա կարող են դառնալ: Հմմտ., օրինակ, Ս. Անթոնյանի տեսակետը. «Մի թե՞ հավասար չափով օգտագործելի չեն՝ «Այս տարի երեխան դպրոց պիտի գնա», «Այս տարի երեխան դպրոց է գնալու», «Այս տարի ծովափ ենք գնալու», «Այս տարի ծովափ պիտի գնանք» և այլն, և այլն: Այսօր արևելահայերեն խոսող ո՞ր հայը այս ձևերից հատկապես այս մեկը կամ այն մեկը կօգտագործի՝ հետևելով գործողության հարկադրականությանը և ոչ հարկադրականությանը: Պիտի եղանակիչով կազմությունների հարկադրականությունը այսօր, թվում է, ըստ բառաձևի ծա-

գումնաբանության ավելի շուտ քերականական սերտած հասկացություն է, քան լեզվական կենդանի իրողություն. մենք դպրոցական դասագրքերից միայն գիտենք, որ պիտի հարկադրականություն է արտահայտում» (էջ 250)։ Ասվածը վկայում է, որ ժամանակային և եղանակային տարբերակումը երկու գրականներում էլ վիճարկելի հարցեր ունի։

Աղյուսակ № 24-ում տրվում է հայերենին հատուկ բայական եղանակների և ժամանակների ցանկը ըստ երկու գրականների համապատասխան ոլորտներում նրանց առկայության/ բացակայության և կազմության եղանակի։ Ինչպես տեսնում ենք, երկու գրականների սահմանական եղանակը բովանդակության պլանում ունենալով ընդհանրությունների նշանակալից աստիճան (երկուսում էլ ժամանակային արտահայտության նույն ձևերն են առկա), արտահայտության պլանում տարբերվում են վերլուծական և համադրական միջոցների կիրառման աստիճանով։ Այսպես՝ նիկ արևելահայերենում միայն անցյալ կատարյալն է կազմվում համադրական եղանակով, ապա արևմտահայերենում համադրությամբ արտահայտվող բայաժամանակների թիվը զգալիորեն ավելի է (երիքը վեցի հարաբերությամբ)։ Ուստի կարելի է ասել, որ երկու գրականների սահմանական եղանակի արտահայտության պլանների զուգադրությունը վկայում է արևմտահայերենի համեմատաբար ևամադրական լինելը։

Արևմտահայերենում բացակայում է ենթադրական եղանակը. հարկադրական եղանակի առկայության մասին էլ կարելի է խոսել որոշ վերապահությամբ (դրա համար էլ այն թեև արևմտահայերենի համար նշվել է դրական նշանով, առնվել է փակագծերի մեջ)։

Եթե համեմատենք վերոհիշյալ եղանակների արտահայտության միջոցները, ապա կարելի է նշել, որ երկու գրականներում էլ (հատկապես՝ արևելահայերենում) կիրառվում են միայն համադրական ձևեր, արևմտահայերենում հարկադրականության իմաստը դրսևորվում է վերլուծական եղանակով (ըներ է[2], խաղալու է[2] նշանակում է պիտի աճի, պիտի խաղա)։

Երկու գրականներն էլ հարուստ են երկրորդական վերլուծական ձևերով (տեսած եմ լինելու[1], տեսած ըլլալու եմ[2])։ Արևելահայերենում այդպիսի ձևերը սովորաբար հետևյալ կազմությունն ունեն՝ դերբայական ձև+օժանդակ բայ+լինել՝ գնացած եմ եղել, արևմտահայերենում՝ դերբայական ձև+ըլլալ+օժանդակ բայ՝ մոռցած ըլլալու է։ Արևմտահայերենն ավելի հաճախ է դիմում երկրորդական բաղադրյալ ժամանակ-

Եղանակ	Արևելահայերեն		Արևմտահայերեն	
	արտահայտության ձևը	եղանակը	արտահայտության ձևը	եղանակը
Սահմանական*				
Ներկա	գրում եմ, կարդում եմ	վերլուծական	կ՚երգեմ, կ՚կարդամ, կ՚խոսիմ, կ՚ծաղուիմ	համադրական
Անցյալ անկատար	գրում էի, կարդում էի	վերլուծական	կ՚երգէի, կ՚կարդայի, կ՚խոսէի	համադրական
Վազակատար	գրել եմ, կարդացել եմ	վերլուծական	երգեր եմ, կարդացեր եմ, խոսեր եմ	վերլուծական
Անցյալ վազակատար	գրել էի, կարդացել էի	վերլուծական	երգեր էի, կարդացեր էի, խոսեր էի	վերլուծական
Հարակատար	կորած ենք*, փրկված ենք*	վերլուծական	երգած եմ, կարդացած եմ, խոսած եմ	համադրական
Անցյալ հարակատար	կորած էի,* փրկված էի*	վերլուծական	երգած էի, կարդացած էի, խոսած էի	վերլուծական
Ապառնի	գրելու եմ, կարդալու եմ	վերլուծական	պիտի երգեմ, պիտի կարդամ, պիտի խոսիմ	վերլուծական
Անցյալ ապառնի	գրելու էի, կարդալու էի	վերլուծական	պիտի երգէի, պիտի կարդայի, պիտի խոսէի	վերլուծական
Անցյալ կատարյալ	գրեցի, կարդացի	համադրական	երգեցի, կարդացի խոսեցա	համադրական
Ղղձական Ապառնի	գրեմ, կարդամ	համադրական	երգեմ, կարդամ, խոսիմ	համադրական
Անցյալ ենթադրական	գրեի, կարդայի	համադրական	երգեի, կարդայի, խոսեի	համադրական
Ապառնի	կգրեմ, կկարդամ	համադրական		
Անցյալ	կգրեի, կկարդայի	համադրական		
Հարկադրական				
Ապառնի	պիտի գրեմ, պիտի կարդամ	վերլուծական	(գրելու եմ, կարդալու եմ)	վերլուծական
Անցյալ	պիտի գրեի, պիտի կարդայի	վերլուծական	(գրելու էի, կարդալու էի)	վերլուծական
Հրամայական				
Ապառնի	գրի՛, կարդա՛, աճեցրո՛ւ, վերցրո՛ւ, ա՛ռ, դի՛ր	համադրական	երգե՛, կարգա՛, խոսէ՛, աճեցո՛ւր, վերցո՛ւր, ա՛ռ, դի՛ր	համադրական

* Աղյուսակում չի մտցված արևմտահայերենի շարունակական ներկան՝ վիճելի լինելու պատճառով. արևելահայերենի հարակատարը և անցյալ հարակատարը ասուդասիրով են ներկայացվել, նկատի ունենալով նրանց որոշակի սահմանափակությունը: Արևմտահայ ձևերը բերվում են արևելահայ ուղղագրությամբ:

ներին (կը գրեմ եղեր, պիտի գրեմ եղեր և այլն)։ Վերջապես նշենք, որ երկու գրականներում էլ այդ ձևերը գործածության համեմատաբար լայն շրջանակ ունեն բանավոր-խոսակցական տարբերակում։

Կարելի է նշել բայակազմության առանձին տարբերություններ ևս, որոնք բացի մասնակի երևույթներ լինելուց, կապված են յուրաքանչյուր լեզվի ներքին օրինաչափությունների իրացման հետ, ինչպես, ասենք՝ երկու գրականների պատճառական բայերի խոնարհման ձևերի առանձին տարբերություններ. օրինակ՝ բարձրացնել—բարձրացրու[1]—բարձրացուր[2], մոտենալ—մոտեցրու[1]—մոտեցուր[2]։ Երկուսում էլ պատճառականների նմանականությամբ լցնել, ճարցնել և դարձնել բայերը խոնարհվում են նույն կաղապարով՝ լցրու[1]—լցուր[2], ճարցրու[1]—ճարցուր[2], դարձրու[1]—դարձուր[2]։ Այստեղ երկու գրականներում էլ դեր է խաղացել նշված բայերի եզրային ց-ի առկայությունը։ Ուրեմն, կարելի է ասել, որ բայակազմության միջոցները երկու գրականներում էլ այնպիսի ընդհանրություն են ի հայտ բերում, որ անգամ կանոնից շեղումները նույնպես հաճախ համընկնում են։

Որպես բայական համակարգի շեղումներ կարող են դիտվել այսպես կոչված անկանոն բայերը, որոնք սովորաբար լեզվի զարգացման նախորդ փուլերից մնացած «ժառանգություն» են։ Նկատված է, որ լեզուներում ամենահաճախական բառերն են դրսևորում քերականական ձևերի կանոնական թեքումից շեղումներ։ Այդպես է նաև մեր երկու գրականներում։

Անկանոն բայեր

Բայի խոնարհման կանոնական ընթացքից շեղում, տարբերություն ունեցող բայերը կոչվում են անկանոն։ Անկանոն բայերի մեջ են սովորաբար մտցվում նաև պակասավոր և հավելավոր բայերը։ Կանոնական խոնարհումից շեղումները հիմնականում դրսևորվում են անցյալ կատարյալի հիմքից առաջացած ձևերում, ինչպես նաև հրամայականում։ Արևելահայերենում միայն երեք բայի դեպքում է, որ անկանոնությունը ի հայտ է գալիս անկատարի հիմքում (գալ, լալ, տալ)։ Ստորև ներկայացնում ենք երկու գրականներում անկանոն բայերի խմբում եղած ինչպես բուն անկանոն, այնպես էլ պակասավոր և հավելավոր որակված բայաձևերը (տե՛ս էջ 238)։

Ինչպես տեսնում ենք, երկու գրականների անկանոն բայերը գերազանցապես համընկնում են, չնայած ձևային տարբերություններին

Արևելահայերեն		Արևմտահայերեն	
Ագնել	արեցի, արավ	Ընել	ըրի, ըրավ
Դնել	դրի, դրեց	Դնել	դրի, դրավ
Տանել	տարա, տարավ	Տանիլ	տարի
Լինել	եղա, եղավ	Ըլլալ	եղա
Թողնել	թողի, թողեց	Թողուլ	թողի
Գալ*	եկա (անկ. գալիս)	Գալ	եկա, եկո՛ւր
Լալ*	լացեցի (անկ. լալիս)	Լալ	լացի
Տալ*	տվեցի (անկ. տալիս)	Տալ	տվի
Ուտել	կերա	Ուտել	կերա
Ասել	ասացի	Ըսել	ըսի
		Իյնալ	ինկա, ինկի՛ր
Զարկել	զարկեցի	Զարնել	զարկի
Բերել	բերեցի	Բերել	բերի
Բանալ	բացեցի	Բանալ	բացի
Դառնալ	դարձա	Դառնալ	դարձա
Ելնել	ելա, ե՛լ (հրամ.)	Ելլել	ելա, ե՛լ
Առնել	առա, ա՛ռ (հրամ.)	Առնել (առնուլ)	առի, ա՛ռ
Տեսնել	տեսա, տե՛ս	Տեսնել	տեսա, տե՛ս
Լվանալ		Լվալ	լվացի
Լվալ	լվացի	Կենալ	կեցի՛ր
Կենալ	կաց	Հուսալ	հուսամ
Հուսալ	հուսամ		ցանկամ
Ցանկալ	ցանկամ	Ցանկալ	եմ, էի,
եմ, կամ	եմ, էի, կամ, կայի	եմ, կամ	կամ, կայի
պիտեմ	պիտեմ, պիտի		պիտեմ, պիտէ
արժեմ	արժեմ, արժի	պիտեմ	
		արժեմ	արժեմ, արժէ
		Ծնանիլ	ծնա,
			ծնո՛ր և այլն:

(ինչպես՝ թողնել—թողուլ, լինել—ըլլալ և այլն)։ Արևմտահայերենի քերականության մեջ անկանոններից առանձնացվում են զարտուղի բայերը։ Նկատի ունենալով, որ այս դեպքում ևս գործ ունենք բուն խոնարհման ուղուց եղած շեղումների հետ, այդպիսիք մենք ներկայացնում ենք ընդհանուր՝ անկանոն բայերի, խմբի մեջ։ Հարկ է նշել նաև, որ արևմտահայ քերականության մեջ զգալիորեն մեծ է զարտուղի բայերի թիվը (հմմտ. Հ. Գազանճյանի քերականությունը. ԺԹ՝ գտնել, մրտնել, բխնել, պագնել, խածնել, հարցնել, ցուցնել, լեցնել, աճցընել, կոտնցնել և այլն)։ Նշված ձևերի մեծամասնությունը կամ արևելահա-

յերևնին հատուկ չէ, կամ հանդես է գալիս ձևափոխված և կանոնավորված, ինչպես, օրինակ՝ pfեել[2]—pfել[1], խածնել[2]—կծել[1] և այլն։ Բաճալ և բառնալ անկանոն բայերը, որոշ քերականների ըմբռնմամբ, «ժամանակակից լեզվում (իմա՝ արևելահայերենում—Ա. Ս.) փոխարինվելով բացել և բարձել ձևերով՝ վերածվել են կանոնավոր բայերի» (տե՛ս Մ. Աասարյան, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գ. Գ, էջ 98)։ Կարելի է ասել, որ եթե հոլովման հարացույցում արևմտահայերենը ձգտում է «ազատվել անցյալի ժառանգությունից»՝ կանոնականի տակ դնելով բացառություններն էլ (հմմտ. մուկ—մուկի, կին—կիներու և այլն), ապա խոնարհման հարացույցում ակա է հակառակ երևույթը։ Այս դեպքում էլ արևելահայերենն է ձգտում ազատվել անկանոնությունից։ Ուրեմն, կանոնավորման, միօրինականացման միտումն էլ հատուկ է արևելահայերենի բայական համակարգին։

Երկու գրականների բայաձևերի պլեսավոր ձևային տարբերությունները հիմնականում տեղայնանում են բառի կենտրոնական մասում (արևմտահայերենին հատուկ ձայնավորների սղման, հիմքի փոփոխության հետևանքով) և մեկ էլ՝ վերջում (երկու լծորդությունների փոխարեն չորսն ունենալու հետևանքով)։

Սովորաբար քերականություններում տարբերակում են հաստատական և ժխտական բայաձևեր, ըստ այդմ էլ՝ հաստատական և ժխտական խոնարհումներ։ Արևմտահայ քերականագիտության մեջ (հմմտ. Իչ. 67) տարբերակվում է բայերի չորս վիճակ՝ հաստատական, ժխտական, հարցական և ժխտական-հարցական։ Եթե հարցականի քննությունը շատ ավելի կապված է հնչերանգային փոփոխությունների հետ, ապա հաստատական և ժխտական ձևերը խոնարհման տարբեր հարացույցներ են կազմում և առանձին հարացույցներով էլ ներկայացվում են ինչպես դասագրքերում, այնպես էլ գիտական ուսումնասիրություններում։

Երկու գրականների ժխտական խոնարհման հարացույցների զուգադրությունը ցույց է տալիս, որ ժխտականի մասնիկը երկուսում էլ ընդհանուր է. այն է չ-ն, որ երկուսում էլ առաջադիր է (նախադաս)։ Որպես ժխտական խոնարհման ոլորտի էական տարբերություն պետք է նշել, որ արևելահայերենում, եթե ներկայի և անցյալ անկատարի ժխտականը կազմվում է չ+օժանդակ բայ+անկատար դերբայ (չեմ գնում), ապա արևմտահայերենում՝ չ+օժանդակ բայ+ժխտական դերբայ՝ չեմ երթար, չեմ գրեր և այլն։

Արևմտահայերենում ժխտական խոնարհման ժամանակ չ-ն, ըստ գրական կանոնական մակարդակի, ավելացվում է ոչ թե պիտի մասնիկին, այլ բային՝ պիտի չգրեմ, պիտի չերթամ և ոչ թե՝ չպիտի գրեմ, չպիտի երթամ և այլն։ Այնինչ արևելահայերենում հենց այդպես է. չ-ն ավելանում է պիտի եղանակիչին։ Պետք է նշել, սակայն, որ արևմտահայ գրականության մեջ այդ կանոնին միշտ չէ որ հետևում են, և կարելի է գտնել վերջինիս խախտման բազմաթիվ օրինակներ։

Որպես երկու գրականների ժխտական խոնարհման ոլորտում եղած էական տարբերություն կարելի է նշել, որ հարկադրական ապառնիի ձևերում արևմտահայերենում չ մասնիկն ավելանում է օժանդակ բային և մնում վերջադաս դիրքում՝ գրելու չէի, գրելու չեմ, ի տարբերություն արևելահայերենի, ուր այն նախադաս դիրք է գրավում՝ չէի գրելու, չեմ գրելու և այլն։

Եթե զուգադրելու լինենք երկու գրականների թեքվող և չթեքվող խոսքի մասերը, ապա կտեսնենք, որ էական տարբերություններն ի հայտ են գալիս այսպես կոչված գլխավոր խոսքի մասերի ոլորտում (հատկապես՝ բայի)։

Ըստ կազմության և բաղադրիչների կապի բնույթի՝ երկու գրականների բայերը դասակարգվում են համադրական և հարադրական խմբերի։ Քանի որ, փաստորեն, բային նվիրված շարադրանքում ցայժմ ներկայացվեց գերազանցապես համադրական տիպը, այժմ ներկայացնենք բայի հարադրական տիպը։

Հարադրական բայեր. երկու գրականներն էլ հարուստ են հարադրական բայերով։ Երկուսում էլ հարադրական բայը ներկայացվում է երկու մասնակազապարով՝ ա) ոչ բայական բաղադրիչ+բայ (աչքի ընկնել[1], աչքի զարնել[2], ձեռ բերել[1]—ձեռ ձգել[2], գլուխ պահել[1] և այլն) և բ) բայ+բայ (զուգադրական հարադրության տիպ՝ գնալ գալ[1], երթալ գալ[2], մեռնել պրծնել[1] մեռնիլ ազատիլ[2], ֆշել տաճել, ուտել խմել և այլն)։

Հարադրական բայերի վերջին տիպը (բայ+բայ) առաջին տիպի համեմատությամբ այնքան էլ հարուստ չէ։

Երկու գրականների հարադրական բայերն ունեն հետևյալ բնորոշ գծերը.

1. վերջնային բաղադրիչը բոլոր դեպքերում բայն է։ Պետք է ասել, որ ընդհանրապես բային հատուկ է այն երևույթը, որ այն բնութագրվում է եղրայնությամբ. անպայման բարդության վերջին բաղադրիչը բայ պետք է լինի. այդ երևույթի հետ կապված մեջբերենք Ս. Աբրա-

Համյանի հետևյալ դիտարկումը. «Ի տարբերություն գոյականի, որի վերջավորությունների հերթականությունը շատ որոշակի է, և վերջից սկսած կարող ենք պակասեցնել վերջավորություններն ու դարձյալ առանալ գոյականի քերականական իրական ձև (համմտ. ուսուցիչ+ներ+ից+ս), բայի հետ այդպես վարվել հնարավոր չէ: Մասնավորապես անորոշ դերբայի կազմության մեջ վերջին մասնիկը (ել, ալ) բայից անջատելու դեպքում այլևս բայ (իսկ հաճախ էլ բառ) չենք ունենա (համմտ. թռչկոտեցն(ել), թռչկոտ(ել)): Ինչ վերաբերում է ածանցյալ հիմքի մասնիկներին, ապա դրանք կարելի է վերջից աստիճանաբար մեկ-մեկ հանել, և դարձյալ կստանանք բայի քերականական ձև. համմտ. թռչ+կոտ+եցն+ել, թռչ+կոտ+ել, թռչ+ել» (ԺԹՀ, 187—188):

2. Ոչ բայական բաղադրիչ+բայ տիպի հարադրություններում բաղադրիչների դիրքը ամրակայված է, և տեղաշարժի դեպքում այլևս հարադրության մասին չի կարելի խոսել, ինչպես, օրինակ՝ ձեռ բերել[1]—բերել ձեռ, ձեռ ձգել[2]—ձգել ձեռ և այլն:

3. Բայ+բայ հարադրություններում նույնպես բաղադրիչների հաջորդականությունը ամրակայված է, սակայն հնարավոր են նաև դրա-փոխության դեպքեր, որի հետևանքով միանգամայն տարբեր իմաստներ են առաջանում. օրինակ՝ ֆշել տաճել[1]—տաճել ֆշել[1], մեռնել պրծնել[1]—պրծնել մեռնել[1], պրծիլ մեռնիլ[2] և այլն:

Երկու դրականների հարադրական բայերի առանձնահատկությունները դրսևորվում են գերազանցապես վերջնային բաղադրիչում (բայի առանձնահատկություններով պայմանավորված), ինչպես, օրինակ՝ ոռֆ մեկնել[1]—ոռֆ մեկնիլ[2], աչֆ փակել[1]—աչֆ գոցել[2] և այլն: Առանձին դեպքերում տարբերությունները դրսևորվում են բայական բաղադրիչում. ինչպես, օրինակ՝ իրենից դուրս գալ[1]—իրմե ելլել[2]:

Այսպիսով, երկու դրականների ձևաբանական մակարդակների զուգադրությունից պարզվում է, որ բովանդակության պլանում երկու դրականները բնութագրվում են գրեթե նույն քերականական կարգերի առկայությամբ (տարբերությունները մասնակի են), սակայն քերականական միևնույն կարգերը նրանցում տարբեր ստորակարգումներ, հնթակարգեր ունեն: Արևելահայերենը աչքի է ընկնում գոյականի հարաբերաբար ավելի բարդ կառուցվածքով, նույնը կարելի է ասել արևմտահայերենի դերանվան վերաբերյալ: Արևմտահայերենի բայական համակարգը զգալիորեն բարդ է և միօրինակացման-պարզեցման առումով զիջում է արևելահայերենին: Ինչպես գոյականի, այնպես էլ բայի ոլոր-

տում առանձին դեպքերում քերականական ենթակարգերի առկայության կամ բացակայության հետ գործ ունենք՝ անձնանշությունի/իրանշությունի արևելահայերենում, շարունակական ներկա՝ արևմտահայերենում և այլն։

Արտահայտության պլանում արևելահայերենի ձևաբանությունն աչքի է ընկնում համեմատաբար ավելի մեծ վերլուծականությամբ (հատկապես բայը), քան արևմտահայերենը։ Վերլուծականությունը երկու գրականներում էլ դրսևորվում է ամենից առաջ նախադրությունների և եռադրությունների, սպասարկու բառերի լայն կիրառությամբ, այլև հատկապես բայական ձևերում դիմաթվային հատուկ ձևերի արտահայտման եղանակով (օժանդակ բայով)։ Այդ հարցում, ինչպես նշվեց, արևելահայերենը շատ ավելի վերլուծական է։

Երկու գրականների ձևաբանական կառուցվածքները բնութագրվում են կանոնարկվածության տարբեր աստիճանով. եթե գրական արևելահայերենում որոշակի է, ձևաբանական տարբերակների ճշգրտմամբ ու սահմանափակմամբ, առկա զուգաձևությունների հնարավորին չափ վերացման միտումը, ապա գրական արևմտահայերենի կանոնարկման գործընթացը համեմատաբար թույլ է, որը դրսևորվում է ոչ միայն քերականական տարբերակների բազմազանությամբ, հարստությամբ (հմմտ., օրինակ՝ լծորդությունների զուգահեռ ձևեր, ղարտուղի, անկանոն բայերի մեծ թիվ և այլն), այլև փոփոխված և անփոփոխ հիմքերի նորմայով թույլատրվող զուգահեռ կիրարկությամբ, որն էլ վկայում է արևմտահայերենի կանոնարկվածության համեմատաբար ցածր աստիճանի մասին։ Երկու գրականների ձևաբանական ոլորտների զուգադրության ժամանակ ի հայտ են գալիս ոչ միայն ընդհանուր լեզվական (համահայկական) երևույթներ, այլև, կարելի է ասել, լեզվական ընդհանրույթներ, ինչպես՝ ածականի և մակբայի սովորաբար տարբերակված չլինելը, բայական ժամանակային ձևերի կազմման մեջ դերբայների գերակշիռ դերը և այլն։ Այդուհանդերձ, նշված ոլորտներում երկու գրականներն ունեն այնպիսի տարբերություններ, որ խիստ կասկածի տակ է դնում այն գրույթը, թե մեր երկու գրականների միջև տարբերությունները շատ ավելի հնչույթային բնույթի են։

Եթե մեկը, որ չգիտի մեր երկու գրականները, գործ ունենա նրանց արտահայտության պլանների (մանավանդ՝ գրաբանության) հետ, ապա առաջին հայացքից նրան կթվա, թե գրեթե բոլոր լեզվական միջոցները համընկնում են (ասենք՝ երկուսում էլ կան կը, պիտի մասնիկնե-

րը և այլն). իրականում, ինչպես տեսանք, մանավանդ խոնարհման համակարգը քննելիս, նույն ձևական տեսքն ունեցող մասնիկները հաճախ միանգամայն տարբեր բովանդակություն ունեն (օր. կը, պիտի մասնիկները արևելահայերենում եղանականիշ են, արևմտահայերենում՝ ժամանականիշ)։ Մեկ խոսքով մեր գրականները կարող են ծառայել նույն լեզվական միջոցներով միանգամայն տարբեր բովանդակություն արտահայտելու բնորոշ օրինակ։

Կիրառելով Ջ. Գրինբերգի ձևաբանական տիպաբանական մեթոդը, երկու գրականների համար ստացվել են հետևյալ տվյալները.

	Համադրութ. ցուցիչ	Բառաբարդման ցուցիչ	Նախածանցման ցուցիչ	Վերջածանցման ցուցիչ
Արևելահայերեն	2,20	1,22	0,03	0,23
Արևմտահայերեն	2,11	1,19	0,03	0,18
Գրաբար	2,08	1,06	0,01	0,13

Ինչպես տեսնում ենք, գրաբարի համեմատությամբ, երկու գրականներում էլ մեծացել են ինչպես համադրության, բառաբարդման, այնպես էլ ածանցման արժեքները, ընդ որում, արևելահայերենի համապատասխան արժեքներն ավելի բարձր են։

Ձևաբանական կառուցվածքների զարգացման ուղղվածությունը ճշտելու նպատակով քննվել են արդի հայերենի տարբեր փուլերի (անցյալ դարի վերջ, XX դ. սկիզբ, 60—70-ական թթ.) գրական նմուշներ։ Պարզվեց, որ եթե երկու գրականների բառապաշարը բնութագրվում է մերձեցման (փոխներթափանցման) որոշակի միտումներով, ապա ձևաբանական կառուցվածքների միջև նկատելի մերձեցում չի եղել։ Ավելին, XIX դ. վերջի գրական արևելահայերենի բայական մի շարք ձևեր (օր.՝ գտնվեցար, լավեցավ, պատահեցավ, փոխվեցավ, չխաճգարե և այլն) հետագայում դուրս են մղվել և այժմ առկա են միայն արևմտահայերենում։ Ուրեմն, բառապաշարային ակնկալելի ներթափանցումներին զուգընթաց, ձևաբանական կառուցվածքների միջև շոշափելի մերձեցում չի արձանագրվել, եթե չխոսենք ընդհանրությունների նվազման մասին։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Մի շարք լեզուների քննության արդյունքներից պարզվել է, որ ինչքան շատ են ղուգադրության ենթակա լեզվական միավորները, այնքան համեմատաբար քիչ են նրանց միջև էական տարբերությունները։ Այդ առումով հետաքրքիր է քննել, թե մեր երկու գրականների վրա արդյոք տարածվո՞ւմ է նշված սկզբունքը, քանի որ, ինչպես պարզվեց նախորդ գլուխներից, արևելահայերենն ու արևմտահայերենն ավելի շատ տարբերություններ ի հայտ բերեցին ձևաբանական կառուցվածքում, քան հնչույթայինում (ընդ որում արևմտահայերենի ձևաբանության մեջ տարբերություններն ըստ էության ավելի դերակշիռ էին)։

Հարկ է նշել, որ շարահյուսական մակարդակում երկու գրականների ընդհանուր գծերը շատ ավելի ցայտուն են բովանդակության պլանում։ Չկա շարահյուսական որևէ կարգ, որ առկա լինելով մեկում, բացակայի մյուսում և հակառակը։ Բայց ահա որոշակի շարահյուսական տարբերություններ են առկա նույն միավորների գործառության, նրանց կապակցելիության, բառերի կարգի (շարադասության) հարցում։

Ինչպես հայտնի է ղուգադրական քերականություններից՝ լեզուներում հնարավոր են շարահյուսական կապերի հետևյալ տիպերը (հմմտ. նր. 175).

1. A+B *դրո տիպ. այս այն դեպքն է, երբ կապակցվող միավորները մնում են անփոփոխ և նրանց միջև եղած հարաբերությունը արտահայտվում է առդրությամբ։ Ինչպես, օրինակ՝* fur սիրտ, կապույտ ծով, կանաչ ծաղիկ։

2. A(x)+B(x). *սա ձևաբանական տիպ է, ուր բառերի միջև եղած հարաբերությունը արտահայտվում է նրանց փոփոխությամբ։ Կարելի է առանձնացնել երեք ենթատիպ. ա) Փոփոխվում է կախյալ բառը՝* orն–նել եղբոջը, մոտենալ պատուհանին *և այլն։ Երկու գրականներում էլ*

այս երևույթը հատուկ է անվանական և բայական խմբերին: բ) Փոփոխվում է միայն գլխավոր բառը՝ Ax+B. հայերենում այն արտահայտվում է, օրինակ՝ բայի և մակբայի կապակցության դեպքում, երբ բայը թևքվում է, օրինակ՝ գնաց արագ: գ) Փոփոխվում են կապակցության երկու բաղադրիչներն էլ՝ Ax+Bx, համաձայնություն: Հայերենում այս տիպին է պատկանում թվի համաձայնությունը (հմմտ. մարդը խոսում է—մարդիկ խոսում են):

3. A+x+B —վերլուծական տիպ, երբ կապն արտահայտվում է տվյալ միավորները միացնող (կապակցող) սպասարկու բառով: Վերլուծական տիպի դեպքում երկու գրականներում էլ իբրև կապակցվող տարր կարող են հանդես գալ. ա) սպասարկու բառերը, ինչպես՝ նախադրությունները,ետադրությունները, օրինակ՝ գնալ (դեպի) անտառ: Ինչպես արևելահայերենն, այնպես էլ արևմտահայերենը հարուստ են սպասարկու բառերով. համոզվելու համար բավական է աչքի անցկացնել արևելահայերենի (ԼԲ, 329) և արևմտահայերենի համար (ԺԹ, 97—98) ներկայացված շարքերը Գ. Ջահուկյանի և Հ. Գազանճյանի կողմից: բ) Նյութական իմաստ արտահայտող այնպիսի բառեր, որոնք տվյալ կապակցության մեջ շարահյուսական հարաբերություն են արտահայտում և զրկվում են իրենց նյութական իմաստից: Այդ երևույթը նույնպես երկու գրականներում գործել է ընդհանուր կաղապարով, այլև կոնկրետ իրացման նույն շարքերն է տվել. հմմտ., օրինակ՝ շնորհ(ք)—շնորհիվ, պատճառ—պատճառով[1], պատճառաւ[2] և այլն:

Հեշտ է նկատել, որ եթե Վ. Գակի վերոհիշյալ դասակարգման սխեման այլ լեզուների կառուցվածքների զուգադրության ժամանակ կարող է իրագեկման էական աղբյուր դառնալ, ապա մեր երկու գրական լեզուների շարահյուսական կառուցվածքների զուգադրությունը հենց միայն այդ գծապատկերով շատ բան չի տա. այսպես, օրինակ՝ շարահյուսական շատ երևույթներ չպարզաբանված, չմեկնաբանված կթողնի. չի պարզվի մասնավորաբար, թե կապակցության նույն տիպերի ներսում ստորադասության ինչպիսի հարաբերություններ ի՛նչ ոլորտային բաշխվածություն ունեն, ինչպիսի ենթատիպերով են բնութագրվում և այլն:

Մինչև շարահյուսական կառուցվածքների բուն զուգադրական քննությանն անցնելը, նշենք, որ եթե գրական արևելահայերենի շարահյուսությունը մանավանդ վերջին տասնամյակներում հատուկ ուշադրության առարկա է դարձել (լույս են տեսել Վ. Քոսյանի «Հայերենի բա-

ռակապակցությունները», «Հայերենի շարահյուսության մի քանի հարցեր», Բ. Վերդյանի «Բարդ ստորադասական նախադասություն...», ինչպես նաև «Ժամանակակից հայոց լեզու» ակադեմիական հրատարակության 3-րդ հատորը, որը նվիրված է շարահյուսությանը), ապա գրական արևմտահայերենի շարահյուսությունը գրեթե չուսումնասիրված բաժիններից է։ Արևմտահայերենի շարադասությունը հատուկ քննության առարկա չի եղել ոչ միայն առկայական տրոհման սկզբունքների կիրառմամբ, այլև ավանդական մեթոդներով։

Սույն զուգադրության ընթացքում կիրառվում են ինչպես ավանդական, այնպես էլ առկայական տրոհման և Ջ. Գրինբերգի առաջարկած շարահյուսական տիպաբանության մեջ կիրառվող մեթոդները։

Բառակապակցություն. բառակապակցությունը պետք է տարբերել բառերի կապակցությունից լայն առումով։ Եթե բառերի կապակցումը կատարվում է ինչպես համադասության, այնպես էլ ստորադասության ճանապարհով, ապա բուն բառակապակցությունները երկու գրականներում էլ հանդես են գալիս ստորադասության եղանակով։ Ընդ որում երկու գրականներին հատուկ ստորադասական կապակցության երեք միջոցներից՝ համաձայնություն, խնդրառություն և առդրություն, բառակապակցություններում կիրառվում են վերջին երկուսը։

Մեր խնդրից դուրս է այժմ տալ բառակապակցության սահմանումը. նշենք միայն, որ բառակապակցությունը գտնվում է նախադասության և բառի միջակայքում. նախադասությունից այն տարբերվում է ստորոգման, եղանակավորման, հատուկ հնչերանգի (հմմտ. ԻԲ. 3. 9) բացակայությամբ, իսկ բառից՝ առնվազն երկու բառային միավոր պարունակելով։

Հարկ է նշել, որ հայագիտության մեջ ընդունելով հանդերձ, որ բառակապակցությունները բնութագրվում են ստորադասությամբ, նշվում է նաև հետևյալը. «Բառակապակցություն պետք է համարել միայն վերնագրային-անվանողական արժեք ունեցող համադասական հարբերությամբ կապակցված մի շարք անվանական կապակցություններ, ինչպես՝ «գիտությունը և կյանքը», «դպրոցը և արուեստը», «ինստիտուտը և հասարակական կազմակերպությունները» և այլն (տե՛ս ԻԲ. 3. 9)։

Այդպիսով ստացվում է, որ թեև շեշտվում է բառակապակցությունների միայն ստորադասական հարաբերություն ունենալը, հետո, կամ թե ակամա, ընդունվում է նաև համադասական հարաբերությամբ բառակապակցությունների գոյությունը։ Ընդ որում բառակապակցություն

չեն դիտվում այդպիսի հարաբերությամբ բնութագրվող հարադրությունները, ինչպես, օրինակ՝ տուն ու տեղ, հայր ու մայր և այլն։

Բառակապակցությունը, զուրկ լինելով ստորոգումից, ունի միայն անվանողական արժեք։

Երկու գրականներում էլ՝

1. Բառակապակցությունները բաժանվում են անվանական և բայական խմբերի, ըստ կապակցության գլխավոր անդամի գոյական կամ բայ լինելու։ Երկուսում էլ, եթե անվանական կապակցություններին հատուկ է գերազանցապես ստորադասության եղանակը, ապա բայական բառակապակցություններին՝ խնդրառությունը։

2. Բառակապակցությունների մեջ փոփոխվող (հոլովվող, խոնարհվող) մասը գերադաս բառն է. ինչպես, օրինակ՝

արևելահայերեն	արևմտահայերեն
ավեր տուն—ավեր տան	ավեր տուն—ավեր տունի
երիտասարդ կանայք—երիտասարդ կանանց	երիտասարդ կիներ—երիտասարդ կիներու և այլն։

3. Բառակապակցությունների միավորների՝ բառերի, շարադասությունը ավելի որոշակի ու կայուն է, քան նախադասությանը ընդհանրապես (համմտ. ԻԲ. 3. 15)։

4. Բառակապակցությունների ընդունված դասակարգման սխեման առանձին տարբերություններ չի տալիս, ուստի բավարարվենք այն սկզբունքների մատնանշումով, որոնց հիման վրա կարելի է դասակարգել հայերենի բառակապակցությունները.

Ա. Գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության հիման վրա տարբերակվում են, բացի գոյական և բայ գերադաս անդամով բառակապակցություններից, նաև ածական և մակբայ գերադաս անդամ ունեցող բառակապակցություններ. ընդ որում, երկու գրականներում էլ վերջին երկուսը բառակապակցությունների ընդհանուր տեսակարար կշռի մեջ փոքր թիվ են կազմում։

Բ. Բառակապակցության միավորների (բաղադրիչների) կապակցելիության կայունության աստիճանով տարբերակվում են ազատ և կայուն բառակապակցություններ։ Վերջինիս հիմքի վրա ստեղծված դարձվածքներն ու հարադրությունները բառագիտական արժեք են ձեռք բերել և ընդհանրապես քննվում են բառագիտության բաժնում. ինչպես, օրինակ՝ գլուխ բերել, ձեռից գնալ[1], գլխէ ճանել[2], միտքեն ելլել[2] և այլն։

Գ. Ըստ բառակապակցությունների բաղադրիչների քանակային կազմի, տարբերակվում են պարզ և բարդ բառակապակցություններ։ Եթե առաջին դեպքում (պարզ բառակապակցությունների ժամանակ) գործ ունենք երկու միավորից (բառից) բաղկացած կապակցության հետ, ապա բարդ բառակապակցությունների դեպքում առկա են երկուսից ավելի լիիմաստ (նյութական իմաստ արտահայտող) բառեր։

Երկու գրականներում էլ լայնորեն տարածված են ինչպես պարզ, այնպես էլ բարդ բառակապակցությունները։ Ինչպես որ սպասելի էր, գրական լեզվի գրավոր տարբերակում բարդ բառակապակցություններն ավելի լայն տեղ են գրավում, քան գրական լեզվի բանավոր տարբերակում։

Բարդ բառակապակցությունների հիմնական ենթախմբերը երկու գրականներում էլ նույն կաղապարներն ունեն։ Այսպես, օրինակ.

ա) ստորադաս անդամ բառակապակցություն—գերադաս անդամ

արևելահայերեն	արևմտահայերեն
վայրի ծաղիկների սիրահար	*վայրի ծաղիկներու սիրահար*

բ) գերադաս անդամ+ստորադաս անդամ կապակցություն

մեռնել հերոսի մահով	*մեռնիլ հերոսի մահով*

Նմանօրինակ կապակցությունները երկու գրականներում էլ բնութագրվում են ստորադասական կապակցության ենթատորադասության հատկանիշով։

Գերադաս անդամ+I ստորադաս անդամ+II ստորադաս անդամ

վերցնել գիրքը սեղանից	*առնել գիրքը սեղանէն*

(Ի միջի այլոց, արևմտահայերը հաճախ ղարմանքով նկատում են, որ արևելահայերը առնելու փոխարեն գործածում են շատ անգամ վերցնել-ը, որ արևմտահայերենում վեր բարձրացնելու իմաստով է կիրարկվում)։

I Ստորադաս անդամ+գերադաս անդամ+II ստորադաս անդամ

Հայարտությամբ նայել	*Հպարտությամբ նայիլ*
հակառակորդին	*հակառակորդին*

Անհրաժեշտ է նշել, որ երկու գրականներում էլ նմանօրինակ բառակապակցությունները կարելի է ծավալել, ավելացնելով նորանոր ստորադաս բաղադրիչներ. այսպես, օրինակ՝ Օրինական հպարտությամբ նայել պարտված հակառակորդին և այլն։ Բնականաբար, ինչպես հայտնի է (տե՛ս ԻԲ. 2. 20—21), նմանօրինակ ծավալումը պայմանավորված է արժութայնությամբ (բաղադրիչների կապակցելիության հնարավո-

բուքյամբ) և ի վերջո ունի իր որոշակի սահմանները (հմմտ. է. Միրաքյանի «Ինգվեի հիպոթեզի ստուգումը հայերենի նյութի հիման վրա» (ռուսերեն) աշխատանքը)։

Գերադաս անդամ + ստորադաս անդամ բառակապակցություն

Կապակցության այս ձևը երկու գրականներից հատկապես բնորոշ է արևմտահայերենին. արևելահայերենում նման կառույցով կապակցությունները հնաբույր են դիտվում։ Այսպես, օրինակ՝ անկումն Արշակունյաց հարստության։ Արդի արևելահայերենը կնախընտրեր «Արշակունյաց հարստության կործանումը» բառակապակցությունը, գերադաս անդամը տանելով բառակապակցության վերջը։ Նմանապես՝ ակադեմիայի գիտական նստաշրջանը և ոչ թե՝ նստաշրջանը...։

Շարադասություն *տերմինի տակ նկատի է առնվում բառերի կարգը (հաջորդականությունը)։ Բառերի կարգ ենք ասում և ոչ թե նախադասության անդամների, որովհետև նկատի ունենք ոչ միայն նախադասության անդամ հանդիսացող բառերը, այլև այնպիսիք, որոնք ավանդական քերականագիտության մեջ նախադասության անդամ չեն դիտվում (հմմտ., օրինակ՝ կապերը, շաղկապները և այլն. տե՛ս ԻԲ. 3. 412)։*

Հարկ է նշել, որ հայերենագիտության մեջ շարադասության եղած սահմանումները այնքան էլ հստակ և ընդունելի չեն։ Ահա դրանցից մեկը. «Շարադասությունը բառական միավորների դասավորության ընդունված կարգն է նախադասություններում և բառակապակցություններում, այն որպես քերականական արտահայտման միջոց իր դերով նպաստում է նախադասության մտքի և բառակապակցությունների իմաստի ձևավորմանը» (ԻԲ. 3. 412)։ Նախ, տրված սահմանման մեջ լեզվական միավորների թվարկման ժամանակ հարկ էր սկզբում դրվեր բառակապակցություն բառը և հետո՝ նախադասություն, որովհետև բառակապակցությունները դառնում են նախադասության միավորներ, ստորակարգվում են նախադասությանը և եթե ընթանանք ստորակարգության սկզբունքով, ապա նախ պետք է դիտվեր բառակապակցությունների բաղադրիչ միավորների կարգը (շարադասությունը), հետո միայն ավելի բարձր միավորի՝ նախադասության, շարադասությունը։

Մինչդեռ հայերենագիտության մեջ միշտ չէ, որ հստակորեն տարբերակվել է բառակապակցության և նախադասության շարադասության քննությունը։ Այսինքն, հաճախ խոսվել է բառերի կայուն և ազատ շարադասության մասին, առանց պարզաբանելու, թե ի՛նչ միավորների հետ գործ ունենք՝ բառակապակցության կազմի մեջ մտնող միավորների՞, թե՞ նախադասության անդամների։

Անհրաժեշտ է հստակորեն տարբերել բառակապակցության մեջ մտնող լեզվական միավորների շարադասությունը ընդհանրապես նախադասության անդամների շարադասությունից, քանի որ, ինչպես ցույց կտրվի հետագա շարադրանքում, ինչպես արևելահայերենի, այնպես էլ արևմտահայերենի շարադասությունը բառակապակցությունների ներսում ավելի կայուն է, քան նախադասության անդամների միջև:

Լեզվաբանության մեջ հայտնի ըմբռնում է, որ ազատ շարադասությունը բնորոշ է թեքական, կցական տիպաբանությամբ բնութագրվող լեզուներին, իսկ կայուն շարադասությունը՝ վերլուծական, անջատական կառուցվածքի լեզուներին: Հայտնի է, որ հնդեվրոպական լեզուների մեծ մասում զարգացումը ընթացել է թեքականությունից դեպի կցականություն, համադրականությունից դեպի վերլուծականություն:

Այդ առումով շրջած ձևով է ներկայացվում պատկերն արևելահայերենի շարադասությանը նվիրված ուսումնասիրության մեջ. «Ուսումնասիրողները ցույց են տալիս, որ ինչքան լեզուները անջատական վիճակից անցնում են դեպի կցականը կամ թեքականը, այնքան շարադասության դերը նվազում է, և բառերի դասավորությունը նախադասության մեջ դառնում է ազատ» (ԻԲ. 3. 413):

Իրականում ինչպես մի շարք լեզուների, այնպես էլ մեր երկու գրականների զարգացումն ընթացել է ոչ թե անջատականությունից դեպի թեքականությունը, այլ թեքականությունից դեպի կցականությունը (առանձին հակումներով. համմտ., օրինակ՝ բառակազմությունը):

Գրական արևելահայերենի շարադասության ուսումնասիրության ժամանակ սովորաբար հեշտ լուծում է դառնում խնդիրը այն «փաստարկումով», որ արևելահայերենում «այն օժտված է մեծ ազատությամբ և ճկունությամբ» (նույն տեղում): Մի բան, որ այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Այդ է վկայում, օրինակ՝ ոչ հայերի հայերեն խոսքում շարադասական բնույթի սխալների հաճախությունը (համմտ. ես գնում եմ տուն, ես տուն եմ գնում և օտարախոսի՝ ես տուն գնում եմ):

Հայերենի շարադասության «մեծ ազատությունն ու ճկունությունը» (ԻԲ. 3. 413) անվերապահորեն ընդունողներն անգամ նշում են, որ այդ «բոլորովին էլ չի նշանակում, թե շարադասությունը մեր լեզվում զուտ ձևական դեր է կատարում» (նույն տեղում): Թեև հենց հաջորդ էջում շեշտվում է արդեն հետևյալը. «Ճիշտ է, մեր լեզվում շարադասությունը

գերազանցապես ոճական արժեք ունի, բայց և այնպես ոճական բազմապիսի դրսևորումների հետ այն ունի նաև շարահյուսական հարաբերություններ արտահայտելու բավականաչափ մեծ դեր» (ընդգծումը մերն է. ԻԲ. 414)։

Պետք է նշել, որ ահա հենց այդ «բավականաչափ մեծ դերը» հայերենի շարահյուսությանը նվիրված գործերում առայժմ բավարար հստակությամբ չի ներկայացված։ Ըստ այդմ, եթե գրական արևելահայերենի շարադասության ուսումնասիրության արդի վիճակը դեռևս ինչ-որ չափով կարելի է բավարար համարել, ապա գրական արևմտահայերենի համապատասխան ոլորտը առայժմ քննության չի ենթարկվել։ Շարադասության ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն վերը նշված պահանջը (բառակապակցությունների ներսում բառերի կարգի հստակորեն տարբերակելը ընդհանրապես նախադասության անդամների շարադասությունից), այլև քննության ընթացքում միայն պարզ նախադասության շարադասությամբ չբավարարվելը և, վերջապես, վիճակագրական քննության անհրաժեշտությունը։ Ճիշտ է, արևելահայերենի շարադասությանը նվիրված Ա. Բադիկյանի վերոհիշյալ աշխատանքում վիճակագրական քննության մի փորձ կատարված է, սակայն անհրաժեշտ է քննություն կատարել ավելի ծավալուն ընտրանքով։

Այն, որ հայերենի (ինչպես արևելահայերենի, այնպես էլ արևմտահայերենի) բառերի կարգը այնքան էլ ազատ չէ, ինչպես հաճախ կարծվում է, կարող է վկայել հետևյալ փաստը. որոշակի դիրքերում բառի գրաված դիրքից կարելի է որոշել նրա խոսքիմաստային պատկանելությունը, ըստ այդմ էլ՝ պաշտոնը. այսպես՝ լավ վազել—լավ գիրք։ Այդ նշանակում է, որ բառերի հաջորդականությամբ պայմանավորված (կախված այն բանից, թե լավ բառին ինչ է հաջորդում) գործ ենք ունենում ածականի կամ մակբայի հետ։ Կամ՝ SVO տիպի նախադասություններում, երբ ենթական և խնդիրը նմանօրինակ ձևական արտահայտություն ունեն (ավյալ դեպքում ինչպես ենթական, այնպես էլ խնդիրը դրված են ուղղականով), ապա միայն բառերի կարգով են որոշում, թե ենթակայի՞ հետ գործ ունենք, թե՞ ուղիղ խնդրի։ Այսպես՝

ՓողՆշանակում է կյանք—Կյանք նշանակում է փող։

Փողոցը փակում է տեսարանը—Տեսարանը փակում է փողոցը։

Կյանքը իմաստավորում է մահը—Մահը իմաստավորում է կյանքը։

Առաջարկը ծածկում է պահանջարկը—Պահանջարկը ծածկում է առաջարկը և այլն (հմմտ. ԻԲ)։

Նմանօրինակ նախադասություններն ավելի շատ են, բնականաբար, արևմտահայերենում՝ պայմանավորված վերջինիս քերականական կառուցվածքով՝ ի մասնավորի ձևաբանությամբ: Այսպիսի նախադասություններում ենթական առաջինը դրված բառն է, իսկ ստորոգյալին հաջորդող բառը՝ ուղիղ խնդիրն է: Այսպես՝

Պողոսը ծեծեց Պետրոսը—Պետրոսը ծեծեց Պողոսը:

Հայկ կ'ատե Արամը—Արամ կ'ատե Հայկը և այլն:

Քանի որ, անձի և իրի առման բացակայությամբ պայմանավորված՝ արևմտահայերենում ենթակայի և ուղիղ խնդրի ձևական նույնացում է տեղի ունեցել, ուստի նման տիպի նախադասություններում ենթակայի և խնդրի տարբերակման միակ դերը ստանձնել է շարադասությունը, ուր վերջինս արդեն զուտ քերականական գործառնություն ունի:

«Շարադասության քերականական դերը» հատվածում Խ. Բաթիկյանը, բերելով գրական արևելահայերենից «Արտադրությունը պայմանավորում է սպառումը» նախադասությունը և նշելով, որ ենթակայի և խնդրի տեղերը փոխելիս փոխվում են նրանց պաշտոնները, նախադասության միտքը, ավելացնում է. «Նման կառուցվածքի ոչ բոլոր նախադասություններում է հնարավոր շրջել: Այսպիսի դեպքերի համար որպես օրինակ սովորաբար բերվում է «Կեցությունն է որոշում գիտակցությունը» նախադասությունը, որը հնարավոր չէ շրջել, որովհետև կեցությունն ու գիտակցությունը փոխադարձաբար պայմանավորված չեն իրարով. կեցությունը ավելի ակտիվ է, ավելի ներգործող, քան գիտակցությունը: Հենց այս է պատճառը, որ կեցություն ենթական չի կարելի դարձնել ուղիղ խնդիր, իսկ գիտակցությունը ուղիղ խնդիրը՝ ենթական» (ԻԲ. 3. 414): Այստեղ անհրաժեշտ են որոշ պարզաբանումներ, ճշտումներ: Նախ և առաջ՝ պետք է տարբերել բերականորեն ճիշտ և տրամաբանորեն ճիշտ նախադասությունները, որ ժամանակակից լեզվաբանության մեջ վաղուց հայտնի սկզբունքներից է: Այդտեղից էլ, եթե անդամ ըստ «իմաստի», այսինքն՝ ըստ տրամաբանության, գիտենք, որ կեցությունն է առաջնայինը, ապա ոչ թե պետք է պնդել, որ նախադասությունը հնարավոր չէ շրջել, այլ նշել, որ նախադասության անդամների փոփոխության դեպքում անդամ ոչ թե պաշտոնների փոփոխություն է առաջանում, այլ շրջուն շարադասության:

Վերոհիշյալ սկզբունքի կիրառումը հայերենի շարադասության ուսումնասիրության ժամանակ (տրամաբանորեն ճիշտ և քերականորեն ճիշտ կառուցներ) որոշապես կնպաստի բուն շարադասության ինչպես

քերականական, այնպես էլ ոճական առանձնահատկությունների բացահայտմանը: Ներկա քննության դեպքում մեր նպատակը պետք է լինի երկու գրական լեզուների այդպիսի առանձնահատկությունների բացահայտումը:

Նշված հարցին կանդրադառնանք նախադասության առկայական տրոհման ժամանակ, իսկ այժմ արձանագրենք միայն այն իրողությունը, որ գրական արևմտահայերենում SVO կառույցի քերականական արժեքը գրական արևելահայերենի համեմատությամբ նշանակալիորեն մեծ է վերոհիշյալ պատճառներով:

Հայտնի է, որ բառերի կարգի փոփոխությունները սովորաբար հետևյալ պայմաններով են պատճառաբանված՝ նախադասության միավորի (խոսափոխում ենք անդամ բառից) բառաքերականական բնույթով և բառի շարահյուսական կապերով, շարահյուսական կախվածությունների հնարավորություններով: Շարահյուսական ավելի բարդ հարաբերությունների մեջ է գտնվում բայը (ստորոգյալը) և հակառակը, ամենաքիչ շարահյուսական արժույթով բնութագրվում է ածականը (որոշիչը), որը սովորաբար կապակցվում է գոյականի (որոշյալի) հետ: Ըստ այդմ, ընդունված է այն կարծիքը, որ կայուն շարադասություն ունեն սովորաբար ավելի լայն շարահյուսական կապեր ունեցող միավորները, տվյալ դեպքում՝ ստորոգյալները (բայերը): Ընդ որում բայերի մեջ անգամ տարբեր խմբեր շարադասության տարբեր աստիճանի կայունություն են ունենում. այսպես, ներգործական սեռի բայերի դիրքը ավելի կայուն է, քան չեզոք, անանցողական բայերինը: Այդ առումով հետաքրքիր է քննել երկու գրականներում բառերի կարգի կառուցվածքային գծերն ու գործառույթները: Պետք է նշել, որ ցայժմ շարադասության երևույթների քննությունը չի կատարվել նրանց ամբողջական, կառուցվածքային միասնության մեջ, որպես ներփակ համակարգ: Այսպես, հատակորեն չեն առանձնացվել շարադասության քերականական և ոճական արժեքները, առավել ևս, չի քննվել շարադասության կառուցվածքային գործառույթների դրսևորումը և հատկապես գործառույթների չեզոքացումը: Օրինակ՝ հայտնի է, որ հայերենում (տվյալ դեպքում այդպես է երկու գրականներում էլ) ընդհանուր հարցման դեպքում բառերի ուղիղ և շրջուն կարգը կատարում են միևնույն շարահյուսական և իմաստային գործառույթները, այս տիպի հարցումը կարող է արտահայտվել բառերի ինչպես ուղիղ, այնպես էլ շրջուն կարգով՝ դու գնո՞ւմ ես— գնո՞ւմ ես դու—դուն կերթա՞ս—կերթա՞ս դուն: Այդ նշանակում է, որ

ավյալ դեպքում շարադասությունը որպես հարցման քերականական միջոց կորցնում է իր դերը և այն կատարում է միայն հարցական հընչերանգը։

Պետք է հստակորեն տարբերել նախադասության գծային կարգը (հաջորդականությունը) կառուցվածքային կարգից։ Մանավանդ եթե նկատի ունենանք, որ այն մեծ դեր ունի լեզվի համակարգում բառերի կարգի ունեցած տեսակարար կշռի որոշման հարցում։ Նախադասության կառուցվածքային ծառերի քննությունից պարզ է դառնում, որ բառերի կառուցվածքային հարաբերությունները ոչ միշտ են համընկնում բառերի հաջորդականության (կարգի) հետ։ Բառերի գծային կարգը կարող է փոխվել, այնինչ կառուցվածքային կարգը կմնա անփոփոխ։ Այսպես, օրինակ՝ որոշիչ-որոշյալի դիրքի փոփոխությունը (նախադաս կամ հետադաս) քերականական հարաբերությունների մեջ ոչ մի փոփոխություն չի մտցնում, քանի որ տվյալ միավորների միջև եղած կառուցվածքային հարաբերությունները նույնն են մնում։ Նախադասության բառերի կարգի բազմակողմանի ուսումնասիրությունը կարող է վեր հանել կառուցվածքային, գործառական, ոճական շատ առանձնահատկություններ, որոնք մեծ դեր ունեն լեզուների տիպաբանական բնութագրման գործում։ Այդպիսի բնութագրումների ժամանակ սովորաբար ընդունվում է լեզուների երկու խումբ. ա) լեզուներ, որտեղ բառերի կարգը բարձրացող է, այսինքն՝ որտեղ որոշյալը նախորդում է որոշչին և բ) իջնող, որտեղ որոշիչն է նախորդում որոշյալին։ Այս և մի շարք այլ հատկանիշներ ծառայում են որպես լեզուների տիպաբանական դասակարգման չափանիշներից մեկը։ Նմանօրինակ դասակարգումների ժամանակ, ինչպես նշվեց, հստակորեն պետք է տարբերել բառերի գծային և կառուցվածքային կարգերը. եթե բառերի գծային կարգը ընկնում է ոճական տարբերակման մեջ, ապա կառուցվածքային կարգը՝ քերականական։ Սովորաբար, ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բառերի գծային կարգի փոփոխությունը շարահյուսական հարաբերությունների ստորակարգության մեջ փոփոխություն չի մտցնում, այսինքն՝ նախադասության ծառը մնում է նույնը։ Այդ նշանակում է, որ շարադասության մեջ կատարվող փոփոխությունը ծառայում է որպես հուղարարահայտչական (ոճական) միջոց։ Ընդ որում բառերի ոճական կարգը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, ինչպես գրական ոճով (արձակ, չափածո), այնպես էլ հատվածի բնույթով (համատեքստով)՝ երկխոսություն, պատմողական ոճ, նկարագրություն և այլն։ Բառերի կարգի ավանդական տերմինաբանությունը՝

պրոգրեսիվ (կամ՝ ուղիղ) և ռեգրեսիվ (կամ՝ շրջուն) այժմ սովորաբար կիրառվում են որպես «զուտ անվանումներ» և շարադասության ոլորտում կիրառվում է առկայական տրոհման մեթոդը։

Իհարկե, մնում են որոշ հարցեր, որոնք հետագա պարզաբանման, ուսումնասիրման կարոտ են. այսպես, քիչ է ուսումնասիրվել այն հարցը, թե ինչպիսին է բառերի կարգը դարձվածքներում, ի՛նչ հարաբերություններ գոյություն ունեն ուղիղ և շրջուն կարգերի միջև ըստ նախադասության աստիճանական բարդացման. ասենք՝ սկսած նվազագույն երկկազմ, երկանդամ նախադասությունից մինչև ծավալուն պարզ նախադասությունը, այլևս չենք խոսում բարդ նախադասության մասին (իբրև առաջին փորձերից կարելի է նշել Ն. Մելիքյանի աշխատանքը. ԿԲ)։ Այդ գործում վիճակագրությունը հսկայական դեր կարող է խաղալ վերջնական պատասխան տալու համար, թե, օրինակ, բառակապակցությունների, նախադասության առանձին միավորների, դարձվածքների միջև կայուն շարադասության ինչպիսի ցուցիչներ կան։

Բառերի ուղիղ կարգի և շրջուն շարադասության ընտրության գործում որոշակի դեր են խաղում ոչ միայն ներգործական, անցողական և ոչ անցողական բայերի առկայություն/բացակայությունը, այլև ընդհանրապես բայի եղանակային, ժամանակային ձևերը։ Այս կարգի հետաքրքիր ուսումնասիրություն է կատարվել ֆրանսերենի ստորադասական նախադասության ոլորտում (ՕԵ)։ Պարզվել է, որ բառերի ուղիղ կամ շրջուն կարգ ունենալու գործում բայաձևը որոշակի դեր ունի. պարզ բայերի դեպքում շրջուն շարադասություն ունենալու հավանականությունը ֆրանսերենի համար մեծանում է և հասնում 84,3%-ի, այնինչ բաղադրյալ բայերի դեպքում նվազում է՝ 51%, իսկ եթե ստորոգյալն ունի նաև անորոշ դերբայով կառույց, ապա շրջուն շարադասության հավանականությունը նվազում է մինչև 37%-ի։ Թեև կան երևույթներ, որոնք արդեն կարելի է կանխագրել այլ լեզուների ունեցած տվյալների հիման վրա. այսպես՝ հայերենում ևս, իր բոլոր տարբերակներում, շրջուն շարադասությունը (ոչ թե SV, այլ VS) համեմատաբար բարձր է նվազագույն երկկազմ նախադասության մեջ և նախադասության ծավալմանը զուգընթաց շրջուն շարադասության արժեքները նվազում են։

Սովորաբար նշվում է, որ հայերենում ենթական դրվում է նախադասության սկզբում, մինչդեռ դա տիպական է այն ժամանակ, երբ ենթական չունի լրացումներ։ Ուրեմն, պետք է ճշտել, հայերենում (այդ-

պես է երկու գրականներում էլ) ենթական անվանական կապակցության (ենթակայի խմբի) վերջին բաղադրիչն է ըստ դերքի՝ բացի բացահայտիչից։ Օրինակ՝ Վահանի հինգ գեղեցիկ գրքերը վաճառվեցին[1]—Վահանին հինգ գեղեցիկ գիրքերը վաճառվեցան[2]։ Ասվածն, անշուշտ, վերաբերում է չեզոք ոճին։ Այսպիսով, չեզոք ոճում երկկազմ նախադասության մեջ ենթական անվանական կապակցության ավարտի ազդանշան կարող է ծառայել (բացահայտիչը միակ լրացումն է, որ դրվում է ենթակայից հետո)։

Ենթակայի և ստորոգյալի շարադասության հետ կապված Ն. Բադիկյանը գրում է. «Ենթական ստորոգյալից առաջ է դրվում նաև այն դեպքում, երբ արտահայտվում է դիմավոր բայով, մակբայներով, շաղկապներով, այլ բառերով և նույնիսկ առանձին նախադասություններով (փոխանվանական գործածությամբ)։ Դրանք այդ դեպքում սովորաբար ստանում են «ը» կամ «ն» որոշիչ հոդը։ Օրինակներ՝ Այս «չեմ հիշում»-ը ինձ այնքան վշտացրեց...» (ԻԲ, 3. 425)։ Նախ ասենք, որ բերված նախադասությունը ամբողջական նախադասության տպավորություն չի թողնում, կարծես թե կիսատ է մնում միտքը։ Բայց ամենակարևորը՝ կախված հաղորդման բովանդակությունից, կարելի է ասել նաև հակառակ շարադասությամբ. այսպես՝ «Ինձ այնքան վշտացրեց այդ «չեմ հիշումը»։ Երկիմաստ և անորոշ ձևակերպումներից խուսափելու միջոց է տալիս նախադասության առկայական տրոհումը։

SV տիպի նախադասություններում, եթե V-ն բայ է, ապա շրջուն շարադասությունը երկու գրականներում էլ նույն արտահայտությունն է ունենում (հմմտ. առկայական տրոհման համապատասխան հատվածը)։ Եթե SV նախադասություններում V-ն բաղադրյալ ստորոգյալ է և նրան նախորդող ենթական արտահայտված է հարաբերական դերանվամբ (S հարաբ. դերանուն + օժանդակ բայ), ապա հատատատական բնույթի նախադասությունների համար պարտադիր է դերբայ + օժանդակ բայ կարգը արևելահայերենի համար՝ ով բերել է, ոչ թե՝ ով է բերել, որ հարցական երանգ է տալիս նախադասությանը, երբեմն էլ՝ բացականչական (հմմտ. ԻԲ, 3. 418)։ Արևմտահայերենում նախադասության շարադասությունը նույնն է մնում և հարցական իմաստն արտահայտվում է համապատասխան հնչերանգով։ Զուգադրենք.

արևելահայերեն	արևմտահայերեն
ով բերել է	*ով բերեր է*
ով է տարել	*ով տարեր է*

Եթե արևելահայերենում օժանդակ բայը շարժվում է դերբայից առաջ, ապա արևմտահայերենում այն պահպանում է բոլոր դեպքերում իր վերջնային դիրքը: Նույն երևույթն է առկա նաև բաղադրյալ ստորոգյալների դեպքում.

ով հիմար է	ով հիմար է
ո՞վ է հիմար	ո՞վ հիմար է

Արևելահայերենին հատուկ այդ երևույթը առկա է նաև անկատար ներկա, անկատար անցյալ ժամանակներում՝ ո՞վ է գրում—ով գրում է, ո՞վ էր գրում—ով գրում էր: Արևմտահայերենում այդ երևույթը բացառվում է բայաժամանակային կազմությամբ պայմանավորված՝ ներկան կազմվում է կը նախամասնիկով, ուստի միավորների տեղաշարժի մասին խոսք լինել չի կարող՝ ով կ'երթայ—ո՞վ կ'երթայ, ով կ'երթար, ո՞վ կ'երթար և այլն:

Հայ քերականագիտության մեջ ընդունված է նախադասության հետևյալ կառուցվածքային պատկերը.

Հատկացուցիչ /որոշիչ/ ենթակա /բացահայտիչ/ պարագա /ստորոգյալ/ խնդիր

Հայագիտության մեջ բազմիցս նշվել է նաև, որ ստորոգյալի լրացումները (բացառությամբ ուղիղ խնդրի) շարադասության համեմատաբար մեծ ազատություն ունեն, թեև «մեր լեզվին ավելի հատուկ է «ենթակա-ստորոգյալ-ուղիղ խնդիր» կառուցվածքը, քան «ենթակա-ուղիղ խնդիր-ստորոգյալ» կառուցվածքը (ԻԲ. 3. 438):

Եթե ենթակայի լրացումների համար ասվածը համոզիչ է, ապա ստորոգյալի և նրա լրացումների համար ասվածն, ըստ էության, լուծվել է ներքին զգացողությամբ (առանց վիճակագրության ճշգրիտ տվյալների, իսկ որ ավելի կարևոր է՝ առանց ոճական հստակ տարբերակման, չեզոք ոճի առանձնացման և նրա տվյալների վրա հենվելու): Որպես ասվածի լավագույն ապացույց կարող է ծառայել հենց ԺՀԼ-ի երրորդ հատորի շարադասությանը նվիրված բաժինը, ուր արձակից և չափածոյից խառը բերվում են բազմաթիվ օրինակներ, առանց որոշակի դասդասման, իսկ երբեմն էլ արձակից բերված նմուշները որոշապես բանաստեղծական երանգավորում են ունենում. ինչպես, օրինակ՝ Բակունցից բերված որոշ օրինակներ (հմմտ. նույն տեղում): Հանրահայտ է, որ շրջուն շարադասությունը հատուկ է հատկապես հուզաարտա-

հայտնականորեն երանգավորված (բանաստեղծական) խոսքին։ Ճիշտ կլիներ, եթե շարադասության հետ կապված հարցերի քննության ժամանակ արձակը ոչ միայն հստակորեն առանձնացվեր չափածոյից, այլև տարբերակվեր արձակի այն տարատեսակը, որ արձակ բանաստեղծություն է հիշեցնում (կամ՝ է)։

Եթե երկու բառից կազմված նախադասության մեջ սովորական շարադասությունից բացի հնարավոր է նաև մեկ՝ շրջուն շարադասության տարբերակ, ապա նախադասության բառերի թվի ավելացմամբ կաճեք, ինքնըստինքյան, ավելանում են նաև շրջուն շարադասության տիպարները (հմմտ., օրինակ՝ շարադասական տարբերակների թվի՝ բառերի թվից կախված ճշտումն ըստ մաթեմատիկական բանաձևի (ԻԲ. 3. 420—421)։ Սակայն, ինչպես այլ լեզուների ուսումնասիրություններն են վկայում (օրինակ՝ ֆրանսերենի. տե՛ս Ծե), միշտ չէ, որ նախադասության մեջ բառերի թվի ավելացմամբ մեծանում է նաև շրջուն շարադասության հնարավորությունը. ընդհակառակն, ինչպես վկայում են ուսումնասիրությունները, նախադասության ծավալմանը զուգահեռ նվազում են շրջուն շարադասության հարաբերական արժեքները։ Բերենք երկու գրականներից մեկական նախադասություններ ցույց տալու համար ասվածը.

արևելահայերեն	արևմտահայերեն
—Տիկին, այսքան հիվանդությունից հետո կարծես բնավ հիվանդ եղած չլինեիք։	—Տիկին, այսքան հիվանդութենե ետք, կարծեք բնավ հիվանդ եղած չըլլայիք։

Այսման հիվանդությունից հետո *և նրա համարժեք*՝ այսման հիվանդութենե ետք *բառակապակցություններում* շրջուն շարադասության հնարավորություն չկա, ինչպես որ չկա բնավ հիվանդ եղած չլինեիք *և նրա արևմտահայերեն զուգահեռը*՝ բնավ հիվանդ եղած չըլլայիք-ի դեպքում։ Ամբողջ նախադասության մեջ (ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում) միայն տիկին *և* կարծեք *բառերն են, որ* հարաբերաբար ազատ տեղաշարժի հնարավորություն ունեն։ Եվ դա բնական է, որովհետև, ինչպես ասվեց վերը, շարահյուսական նվազ կապերով բնութագրվող միավորները ավելի ազատ են շարադասության առումով։

Վերջապես, հետաքրքրությամբ կարելի է տեսնել, որ բերված նախադասության մեջ նույնպես շարադասությունը համեմատաբար ազատ է կապակցությունների միջև և ոչ թե կապակցությունների ներսում։ Այս-

պես, կարող են տեղաշարժել (տեղափոխել) բառակապակցությունները նախադասության կազմում՝ «Տիկին, կարծես բնավ հիվանդ եղած չի-ներիք, այսոր հիվանդությունից հետո» և այլն։

Ընդհանրապես, ինչպես նշվեց, բառերի ուղիղ և շրջուն կարգի հարաբերության ցուցիչները (արժեքները) կախված են նախադասության բայաձևի ընտրությունից։ Հետաքրքիր է պարզել, թե մեր երկու գրական լեզուներում բայաձևի ընտրությունը ինչպես է ազդում շրջուն շարադասության արժեքների վրա։ Գրական արևելահայերենի համար նկատված է (ԻՒ. 3. 420), որ շարադասական տարբերակների ամենամեծ թիվը լինում է պարզ ժամանակով դրված (գերազանցապես անցյալ կատարյալով) ստորոգյալի առկայության դեպքում, ինչպես նաև՝ պայմանական և հարկադրական եղանակների բայաձևերի առկայության դեպքում։ Ինչպիսին է ճշգրիտ տվյալներով այդ հարաբերությունը, մանավանդ բաղադրյալ ժամանակների դեպքում, հայերենի նյութի հիման վրա առայժմ չի ուսումնասիրվել։ Ինչ խոսք, նման ուսումնասիրությունը հետաքրքրական շատ երևույթներ կարող էր պարզել։ Վերցնենք, օրինակ՝ երկրորդական բաղադրյալ ժամանակներով դրված ստորոգյալի բաղադրիչների շարադասության հարցը արևելահայերենում և արևմտահայերենում։

Արևելահայերեն	Արևմտահայերեն
Ես գնացած եմ եղել	Ես գացած եղեր եմ
Ես եմ գնացած եղել	Ես գացած եղեր եմ
	(Ես գացած եմ եղեր)

Համեմատությունը ցույց է տալիս, որ արևմտահայերենում բաղադրիչները կայուն դիրք ունեն (անշուշտ, օժանդակ բայը կարող է անցնել բայահիմքից առաջ) և ոչ թե նրանց շրջմամբ են զանազան իմաստներ լեզվական ձևավորում ստանում, այլ համապատասխան հնչերանգով։ Այդպիսով, հնչերանգը արևմտահայերենում ավելի մեծ բեռնվածություն ունի։ Ահա թե ինչու լսողական բնութագրմամբ, արևմտահայերենը ավելի մեղեդիական է թվում, քան արևելահայերենը, ուր հնչերանգը համեմատաբար նվազ բեռնվածություն ունի։

Արևելահայերենի շարադասության ուսումնասիրության մեջ Ա. Բադիկյանի նշած հետևյալ երևույթները հատուկ են նաև արևմտահայերենի շարադասությանը։ Ստորոգյալ+ենթակա (շրջուն կարգ) շարադասությունն առկա է հետևյալ պայմանների դեպքում. ա) երբ շեշտվում է

ոչ թե գործողություն կատարողը, այլ բուն գործողությունը, բ) բնության նկարագրություններում (գեղարվեստական խոսքում), գ) խոսքին յուրահատուկ ռիթմ տալու համար, դ) ժողովրդական ստեղծագործություններում, որ Ե. Բադիկյանը անվանում է «ավանդական» (հնքիաթներ, զրույցներ, լեգենդներ). օրինակ՝ լինում է մի սար, ե) թատերական գործի հեղինակային նշագրումներում։

Երկու գրականներում էլ, երբ բաղադրյալ ստորոգյալի հանգույցը չի արտահայտվում, ապա ստորոգյալը որպես կանոն հոդաս է. այսպես՝

արևելահայերեն	արևմտահայերեն
Բագրատը գրում է, իսկ Վահագնը՝ ջնջում։	*Բագրատ գրեր է, իսկ Վահագն՝ ջնջեր։*

Երկու գրականներում էլ ածականով, թվականով, դերանվամբ և այլն արտահայտված բաղադրյալ ստորոգյալները գերազանցապես հոդաս են կիրառվում։

Երբ շեշտելու անհրաժեշտություն է առաջանում, ապա գրական արևելահայերենում օժանդակ բայն անցնում է դերբայից առաջ. այս երևույթն արևմտահայերենին այնքան էլ հատուկ չէ, որովհետև բայաժամանակների կազմությունն այլ է. այսպես՝ գալիս է—կու գայ, բերում է—կը բերէ և այլն։ Վերջին ձևերում շրջուն շարադասությունը պարզապես բացառվում է։ Այսպիսով.

արևելահայերեն	արևմտահայերեն
դու գալիս ես—դու ես գալիս	*դուն կու գաս—դուն կու գաս*
Նա բերում է—նա է բերում	*ան կը բերէ—ան կը բերէ։*

Բաղադրյալ ստորոգյալի ժխտական կառույցները երկու գրականներում ի հայտ են բերում որոշակի ընդհանրություններ և առանձնահատկություններ. նեն անկատարի (միայն արևելահայերենում), վաղակատարի ձևերում օժանդակ բայը չ մասնիկի հետ միասին անցնում է դերբայից առաջ, ապա հարակատարի դեպքում օժանդակ բայն արևելահայերենում մնում է հոդաս դիրքով, իսկ արևմտահայերենում այն դարձյալ տեղափոխվում է։ Ասվածը ներկայացնենք օրինակներով.

արևելահայերեն	արևմտահայերեն
գնում է—չի գնում	*գացեր է—չէ գացեր*
գնացել է—չի գնացել	*(գացած է—չէ գացած)*

*Սահակը պառկած է՝—Սահակը պառկած չէ**

Սահակը պառկած է—Սահակը չէ պառկած

Արևելահայերենում Սահակը պառկած է, *այսինքն՝ հարակատարով ձևերը խոնարհման հարացույցից դուրս են դրվել և միանգամայն իրավամբ, որովհետև նրանք այլևս կորցրել են բայի հիմնական հատկանիշները։ Դա կարելի է դիտել նաև շարադասության կիրառմամբ. բայական ստորոգյալի ժխտականի դեպքում տեղի է ունենում ժխտական մասնիկի + օժանդակ բայաձևի տեղաշարժ՝* գրում է—չի գրում, խաղում է—չի խաղում, *այնինչ բաղադրյալ (գոյականով, ածականով և այլն արտահայտված) ստորոգյալի դեպքում այդպիսի տեղաշարժ չի կատարվում՝* մկրատ է—մկրատ չէ, կարմիր է—կարմիր չէ *և այլն։ Այդպես է նաև հարակատարով ձևերի դեպքում՝* fնած է—fնած չէ։ *Արևմտահայերենում այդպես չէ՝* Գրիգորը գրած է—Գրիգորը չէ գրած *և այլն ապացույց են այն բանի, որ արևմտահայերենում իրոք գործ ունենք բայաձևի հետ, քանի որ արևմտահայերենում օժանդակ բայի տեղաշարժը աղդանշան է նրան հաջորդող դերբայական ձևի բայական հատկանիշ ունենալու (համմտ.* Զևաբանության բաժինը)։

Բնականաբար, աստղանիշով ներկայացված վերոհիշյալ ձևերը պայմանականորեն են նշվում իբրև հարացուցային (կամ ժամանակային) ձևեր արևելահայերենում։ Որպես անվանական կապակցության տիպական մասնակազապար երկու դրականների համար կարելի է ներկայացնել հետևյալ ընդհանուր պատկերը՝

Հատկացուցիչ /ոռոշիչ/ ենթակա/ բացահայտիչ

Բերենք օրինակներ երկու դրականներից՝

Նրա գեղեցիկ մազերը՝ գլխի զարդը... *արևելահայերեն*

Անոր գեղեցիկ մազերը՝ գլխուն զարդը... *արևմտահայերեն*

Երկու դրականներում էլ նախ դրվում է հատկացուցիչը, ապա որոշիչը. չենք ասում՝ գեղեցիկ նրա դիմագիծը (գեղեցիկ անոր դիմագիծը), *այլ* նրա գեղեցիկ դիմագիծը—անոր գեղեցիկ դիմագիծը...

Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բացահայտիչ-բացահայտյալի շարադասությունը քերականական գործառույթամբ է պայմանավորված։ Նախադաս դրվողը միշտ բացահայտյալ է, վերջադասը՝ բացահայտիչ։ Ըստ այդմ՝ Դուրյանը՝ Սկյուտարի սոխակը *կապակցության մեջ* Դուրյանը *բացահայտյալ է,* Սկյուտարի սոխակը՝ *բացահայտիչ։*

Շրջենք կապակցությունը՝ Սկյուտարի սոխակը՝ Դուրյանը... և կստանանք. Սկյուտարի սոխակը՝ *բացահայտյալ*, իսկ Դուրյանը *բացահայտիչ*:

Այդ նշանակում է, որ բացահայտիչ-բացահայտյալի դեպքում շրջուն շարադասություն գոյություն ունենալ չի կարող: Այդտեղից էլ բացահայտյալը անվանական կապակցության եզրային միավորն է և անվանական կապակցության ավարտի ազդանշան կարող է ծառայել:

Ի տարբերություն վերոհիշյալի, երկու գրականներում էլ առկա է, այսպես կոչված, մասնական բացահայտիչը, որ դրվում է ինչպես բացահայտիչից առաջ, այնպես էլ հետո: Այսպես, օրինակ՝

արևելահայերեն	արևմտահայերեն
Համբարյանը, որպես դեկավար, *գործունյա էր*:	*Օտյան*, որպես երգիծաբան, *տաղանդավոր է*:
Որպես դեկավար, *Համբարյանը գործունյա էր*:	Որպես երգիծաբան, *Օտյան տաղանդավոր է*:

Ինչպես նշվել է, ստորոգյալի լրացումների շարադասությունը համեմատաբար ազատ է (ԻԲ. 3. 438): Այստեղ պետք է ճշտում կատարել. խոսքը ինչի՞ մասին է՝ խնդիրների՞, թե պարագաների և անգամ խնդիրների ոլորտում՝ ուղի՞ղ խնդրի, թե անուղղակի, որովհետև նրանց միջև ազատ շարադասության տարբեր աստիճաններ են առկա և եթե առաջը վերաբերում է, օրինակ, ուղիղ խնդրին, ապա այնքան էլ ճիշտ չէ:

Երկու գրականների համար տիպական է համարվում ենթակա-ստորոգյալ-խնդիր հաջորդականությունը.

արևելահայերեն	արևմտահայերեն
Արամը սիրում է Հրանուշին:	*Արամ կ'սիրե Հրանուշը*:

Անուղղակի խնդիրների մեջ ավելի կայուն դիրք ունի անջատման անուղղակի խնդիրը (հմմտ. անդ): Այն սովորաբար նախադաս է.

արևելահայերեն	արևմտահայերեն
Արամը վահանից նամակ ստացավ:	*Արամ վահանէն նամակ առավ*:

Անգամ հարաբերական ազատ շարադասություն ունեցող պարագաների առանձին տիպեր նույնպես կայուն կարգ են ունենում. այսպես, երկու գրականներում էլ անորոշ դերբայի տրական հոլովով արտահայտված նպատակի պարագան կայուն՝ վերջադաս, դիրք ունի: Այսպես,

օրինակ՝

արևելահայերեն	արմատահայերեն
Ես գնացի քնելու։	*Ես գացի քնելու։*

Երկու գրական լեզուների շարադասության ոլորտում հետաքրքիր է պարզել, թե այլ լեզուների (օրինակ՝ ֆրանսերենի) համար նշված միտումը՝ բայական խմբի կառուցվածքային ամբողջականությունը պահպանելը առկա է՞ արդյոք արևելահայերենում և արևմտահայերենում։ Պետք է ասել, որ երբ նախադասության սկզբում դրվում են բայական խմբի լրացումներից, ապա մեծանում է ստորոգյալի նախադաս դիրքում հանդես գալու հնարավորությունը։

Որպեսզի պարզվի հայերենի բառերի կարգի քերականական և ոճական գործառույթների սահմանները, անհրաժեշտ է նախ և առաջ պարզել, թե ո՛րն է նախադասության յուրաքանչյուր միավորի տեղը ըստ լեզվական կանոնի։

Ենթակա + ստորոգյալ *հաջորդականության հարցը կարևորություն ունի ոչ միայն տվյալ կոնկրետ լեզվի կամ լեզուների, այլև ընդհանուր լեզվաբանության առումով։*

Ստորև տրվում են այն պայմանները, որոնց հետևանքով փոխվում է ենթակայի դիրքը նախադասության մեջ. ա) ենթակայի խմբի ծավալը (որոշիչների, հատկացուցիչների և այլն առկայությունը-բացակայությունը), բ) բառի բառիմաստային առանձնահատկությունները (չեզոք, ներգործական և կրավորական բայերի դեպքում շրջուն շարադասության տարբեր հնարավորությունների բացահայտումը), գ) բայի խմբի ծավալը (խնդիրների, պարագաների առկայությունը, քանակից կախված բառերի կարգի փոփոխությունը) և այլն։

Նշված պայմանները լեզվում հաճախ հանդես են գալիս ոչ թե առանձին-առանձին, այլ փոխկապակցված։ Սովորաբար առանձնացվում են, ըստ շարադասության, լեզուների հետևյալ տիպերը.

1. Լեզուներ, որոնք բնութագրվում են բացարձակ ազատ շարադասությամբ, այդ դեպքում թույլատրվում է ինչպես ենթակա + ստորոգյալ, այնպես էլ՝ ստորոգյալ-ենթակա հաջորդականությունը։

2. Լեզուներ, որտեղ բառային կարգը կապված է, կայուն է, թեև այնուամենայնիվ առկա են տեղաշարժի, դրափոխության տարբերակներ։

3. Լեզուներ, որտեղ բառերի կարգը ամրակայված է և բացառվում է շարադասության փոփոխությունը։

Առաջին հայացքից հայերենի շարադասությունը շատ ավելի ազատ է թվում, քան իրականում կա: Հարցի մեջ խորանալով, աստիճանաբար պարզ է դառնում, որ այդ ազատությունը ինչ-որ տեղ երևութական է: Լեզուն թույլ է տալիս ստեղծելու շարադասական տարբերակներ, բայց նրանցից յուրաքանչյուրը ունի ամրակայված որոշակի բովանդակություն. այնպես որ հայերենը դասել վերոհիշյալ դասակարգման առաջին խմբի լեզուների շարքը, ճիշտ չի լինի:

Հայերենի շարադասության ցայժմ նշած ուսումնասիրությունները հիմք են տալիս մեր երկու գրականները մտցնել երկրորդ խմբի մեջ. ընդ որում արևմտահայերենը համեմատաբար ավելի մոտ է երրորդ խմբին:

Այժմ ներկայացնենք արևելահայերենի և արևմտահայերենի շարադասությունն ըստ առկայական տրոհման:

Շարադասության ենթությունն ըստ առկայական տրոհման. ի՞նչ է նախադասության առկայական տրոհումը: Հանրահայտ է, որ խոսքում շարադասությունը սերտորեն առնչվում է այն բանի հետ, թե հաղորդողը (խոսողը) ի՛նչ նոր տեղեկություն է հաղորդում: Ըստ այդմ, նախադասությունը կարելի է բաժանել երկու մասի՝ թեմայի և ռեմայի: Եթե թեման, ինչպես անվանումից է բխում, հաղորդում է առարկան, նյութը, ապա ռեման՝ տեղեկություն է տալիս թեմայի մասին, ուրեմն՝ ռեման հաղորդման նորությունն է: Նախադասության տրոհումը թեմայի և ռեմայի կոչվում է նախադասության առկայական տրոհում:

Վերցնենք «Այսօր Պողոսը բացակայեց» նախադասությունը: Այստեղ նոր տեղեկությունը բացակայեց-ն է: Այսօր Պողոսն ի՞նչ արեց— բացակայեց: Երբ փոխվում է հաղորդման նպատակը, փոխվում է նաև նախադասության առկայական տրոհման պատկերը: Այսպես, օրինակ՝ Այսօր բացակայեց Պողոսը նախադասության մեջ արդեն նոր տեղեկությունը Պողոսն է (ո՞վ այսօր բացակայեց): Ըստ այդմ Պողոսը դարձավ նախադասության ռեման: Այսպիսով տարբ է դառնում, որ նախադասության թեման և ռեման մեկընդմիշտ տրված բաներ չեն, այլ փոխվում են ըստ այն բանի, թե ինչ նոր բան է ընդգծվում ավյալ նախադասության մեջ՝ շարադասության միջոցով: Ինչպես տեսնում ենք, նախադասության առկայական տրոհումը իրագործվում է բառերի տարբեր շարադասությամբ:

Հայերենի (իմա՝ արևելահայերենի) բառերի գծային կարգը քննողները սովորաբար գործածում են ազատ, ճկուն և այլ բնորոշումներն,

առանց հաճախ հստակություն մտցնելու այն խնդրում, թե ինչպիսի սահմանափակումներ կան հայերենի շարադասության ոլորտում:

Երբեմն խոսվում է նախադասության բաղադրիչների տեղաշարժի, շրջուն շարադասության մասին, մոռացությամբ տալով այն իրողությունը, որ ստացված նախադասություններն իմաստային առումով համարժեք չեն:

Երկու գրական լեզուներում շարադասությունն ազատ է ասելով՝ քիչ բան հայտնած կլիներնք, որովհետև երկուսում էլ, ըստ էության, երբ փոփոխվում է բառերի կարգը, հիմնականում փոխվում է նաև նախադասության (ասույթի) բովանդակությունը: Ուստի անհրաժեշտություն է առաջանում գտնել այն սահմանափակումները, որոնք գործում են երկու գրականների շարադասության ոլորտում: Այսպես, օրինակ՝

Վարդանը բացեց դարակը:
Դարակը Վարդանը բացեց:
Դարակը բացեց Վարդանը:

Վերոբերյալ երեք նախադասությունները միանգամայն տարբեր տրամաբանական շեշտավորում ունեն: Հայերենի շարադասության քննության ժամանակ խոսքի ոճական երանգավորումը ցայժմ հստակորեն չի առանձնացվել: Ճիշտ է, շարադասության քննության ընթացքում տարբերակվել են բեռականական իմաստ արտահայտող և ոճաիմաստային շերտերը, բայց որոշակիորեն չի առանձնացվել արտահայտչականորեն չեզոք խոսքը հուզարտահայտչականից:

Ներկա ուսումնասիրության ժամանակ շարադասությունը քննվում է երկու որոշակիորեն տարբերակված խմբերով՝ չեզոք խոսք և հուզարտահայտչականորեն երանգավորված խոսք: Այդ երկու «ոճերի» տարբերակումը առանցքային նշանակություն ունի մի շարք հարցերի պարզաբանման տեսակետից (շրջուն շարադասության, թեմայի և ռեմայի պարզաբանման և այլն):

Շարադասությունը չեզոք (հուզականորեն չերանգավորված) խոսքում. չեզոք խոսքի լավագույն նմուշ են գիտական, գրագրային (գործավարական) ոճերը: Այս ոճերին միանգամայն խորթ են շրջուն շարադասության այնպիսի նմուշներ, ինչպես, օրինակ՝ «հետազոտությունը մարմինների դատաքննչական», որ կանոնի խախտում է. կիրառելի է միայն «դատաքննչական մարմինների հետազոտությունը» շարադասու-

թյունը։ Կամ՝ «մեր ստացած տվյալները փորձերի» (փոխանակ միակ ճիշտ ձևի՝ փորձերի տվյալները) և այլն։

Երկու գրականներում էլ հուզաարտահայտչականորեն չերանգավորված խոսքում (չեզոք ոճում) թեման նախորդում է ռեմային։ Այս երևույթը կարելի է դիտել որպես հնդեվրոպական լեզուների համար տիպաբանական ընդհանրույթ։ Նախադասության նմանօրինակ շարադասության դեպքում թեման աչքի է ընկնում տոնի որոշ բարձրացումով, այնինչ ռեման բնութագրվում է տոնի և շեշտի նշանակալից իջեցումով։ Երկու գրականներում էլ այդպիսի հնչերանգը հատուկ է պատմողական նախադասություններին։ Վերջապես, նմանօրինակ դեպքերում (նախադասություններում) տրամաբանական շեշտը և շարույթային շեշտը համընկնում են վերջին վանկի վրա (հմմտ. արևելահայերենի շեշտի ուսումնասիրությանը նվիրված Ռ. Թոխմախյանի աշխատանքները (տե՛ս ԺՉ)։ Ուրեմն, որպեսզի նախադասությունն ունենա բառերի կանոնական կարգ, անհրաժեշտ է ճշտել թեման և ռեման և այնպես անել, որ թեման դրվի ռեմայից առաջ։ Նախադասությունների առկայական տրոհման ժամանակ թեմայի և ռեմայի բացահայտմանը մեծապես նպաստում է հարցը։ Այսպես՝ Քննությունը ձախողեց Աշիկը նախադասության համար հարց ենք տալիս՝ ո՞վ ձախողեց քննությունը։ Պատասխանի ժամանակ նախադասության այն մասը, որ արդեն առկա էր հարցական նախադասության մեջ, կազմում է թեման (հայտնի բանը), իսկ հայտնվող նորությունը՝ (տվյալ դեպքում՝ Աշիկը) ռեման։ Բերենք մեկ այլ նախադասություն՝ Մանուկյանը գիրք է գրում։ Հարց ենք տալիս՝ ի՞նչ է անում Մանուկյանը—(Մանուկյանը) գիրք է գրում։ Գիրք է գրում-ը կազմում է ռեման, իսկ Մանուկյանը՝ թեման։ Ստորև բերվում են մի քանի նախադասություններ ինչպես արևելահայերեն, այնպես էլ արևմտահայերեն (բերվող նախադասություններում ռեման ընդգծվում է)։

Արևելահայերեն	Արևմտահայերեն
Սահակի դարակում գրքեր կան։	*Սահակին դարակին մեջ գիրքեր կան։*
Դիրեկտորի պաշտոնակատարը դասի է։	*Տնօրենին պաշտոնակատարը դասի է։*
Նա տուն է գնացել հանգստանալու համար։	*Ան տուն գացեր է հանգստանալու։*
(Ինչպես է իրեն զգում Տիգրանը)	
Տիգրանն իրեն ավելի լավ է զգում։	*Տիգրան ինքզինքը աւելի լաւ կը զգայ։*

Ինչպես տեսնում ենք, բերված նախադասություններից վերջինում ռեման ընդմիջարկված է թեմայի մեջ։

Ծավալուն (ընդարձակ) մենախոսական պատմողական խոսքում յուրաքանչյուր հաջորդ նախադասություն իմաստով կապվում է նախորդի հետ, ուստի նախադասության առկայական տրոհման համար անհրաժեշտ է բացահայտել նախորդ նախադասության հետ ունեցած նրա իմաստային կապերը։ Այդ անհրաժեշտ է հաջորդ նախադասության ռեման գտնելու համար։ Ահա հենց այդ առումով հայերենի շարադասությանը նվիրված աշխատանքները որոշ չափով թերի են, որովհետև այնտեղ շարադասությունը քննվում է գերազանցապես մեկ նախադասության սահմաններում պարփակված։

Վերցնենք մի փոքրիկ հատված և այն ներկայացնենք ըստ առկայական տրոհման (բերվող նախադասություններում ռեմաներն ընդգծվում են).

Ես գնում եմ մեր տուն։ Մեր տունը երկհարկանի է։ Երկրորդ հարկը գեռևս բավական բարձր է։

Ինչպես ընդհանրապես այլ լեզուներում, երկու գրականներում էլ երկխոսությունների դեպքում հարցականին հաջորդող պատասխան խոսքերը սովորաբար պարունակում են միայն ռեման, իսկ այն, ինչ արդեն արտահայտվել է թեմայում, ուղղակի դուրս է ընկնում (ավելի ճիշտ՝ չի կրկնվում)։ Այսպես՝

արևելահայերեն	արևմտահայերեն
—Ո՞ւր ես գնում...	*Ո՞ւր կ՚երթաս...*
—Տուն...	*Տուն...*

Կարելի է շարունակել երկխոսությունը, բայց արդեն իսկ պարզ է, որ նմանօրինակ երևույթները շատ ավելի բնորոշ են բանավոր խոսքին։ Ընդ որում իբրև հարցական նախադասության պատասխան՝ երկխոսության մեջ հանդես եկող նախադասությունները հաստատում կամ ժխտում են որևէ փաստ, եղելություն և այլն։ Սովորաբար, այդպիսի նախադասություններ բնութագրվում են զրո թեմայով (թեմայի բացակայությամբ)։ Այդ երևույթը հատուկ է խոսակցական լեզվին և հուզաարտահայտչականորեն լիրանգավորված է։ Ուստի նմանօրինակ երևույթները քննվելու են հաջորդ հատվածում։

Քանի որ նախադասության առկայական տրոհումը կախված է նրանից, թե խոսողն ի՛նչ է ընդգծում, ուստի միանշանակ առկայական տրոհման համար անհրաժեշտ է բնագրի մանրակրկիտ քննություն։ Այ-

լապես բնագրից դուրս, առանց իրավիճակը պարզաբանելու, հնարավոր է նախադասության երկակի առկայական տրոհում: Ինչպես՝

Ձմեռն ընտանիքով Ծաղկաձոր ենք գնալու:

և Ձմեռն ընտանիքով Ծաղկաձոր ենք գնալու:

Առաջին նախադասության դեպքում հարցը դրվում է այսպես՝ ձմեռն ի՞նչ ենք անելու: Երկրորդ դեպքում՝ Ձմեռն ընտանիքով ի՞նչ ենք անելու:

Այժմ համառոտակի անդրադառնանք առկայական տրոհման բաղադրիչների կազմին: Ինչպես հայտնի է, առկայական տրոհման ժամանակ որպես թեմա և ռեմա կարող են հանդես գալ նախադասության ամենատարբեր անդամներ:

Երկու գրականներում էլ որպես թեմա կարող են հանդես գալ՝ ենթական.

արևելահայերեն	արևմտահայերեն
Մհերը ձախողել էր գործը:	Գիշերն անուշ է, գիշերն ինչտագին:
ստորոգյալը.	
Հաղթեցին ալյումինագործները:	Չէր կրնար քալել ան:
պարագաները (հատկապես տեղի և ժամանակի).	
Պարտեզում վարդ է բացվել:	Պոլիս կ'ապրէին մեր գրողները:
Այսօր ֆուտբոլի խաղ կա:	Այսօր տոն է, խնդություն:
խնդիրները.	
Ինձ չհասավ:	Ինձի ըսաւ:
Փողոցը բարեկարգեցին:	Բանակատեղին ոչնչացուցին:

Որպես ռեմա կարող է հանդես գալ նախադասության ցանկացած միավորը (ոչ միայն անդամները, այլև ուղածդ բառը).

ենթակա.

Մրցանակը շահեցին երևանցիները: Ասանկ կ'ըսե հաճախան:

ստորոգյալ.

«Արարատը» հաղթեց: «Զարթոնքը» լույս տեսավ:

խնդիր.

Բագրատը կերել է տանձ ու խնձոր: Վահագնը բերեր է գիրք մը:

Տարբեր պարագաներ.

Բագրատը վերադարձավ առավոտյան: Վահագնը եկավ կեսօրեն ետք:

Բագրատը քայլում է դանդաղո- *Վահագնը կ'վազե արագ:*
րեն:

Երեխան արթնացավ աղմուկից: *Ծանր հիվանդը մեռեր է:*

Նախադասության թե՛ թեման, թե՛ ռեման կարող են արտահայտվել ոչ միայն մեկ բառով, այլև ծավալուն բառակապակցություններով: Ինչպես՝

Առավոտյան տաքացրած թեյը սառեց: *Ծանր հիվանդը մեռեր է:*

Ռեման մեկից ավելի բառերով է արտահայտված նաև «Սկսվեց ֆուտբոլի խաղի հաղորդումը» նախադասության մեջ. ռեման արտահայտված է երեք բառով՝ ֆուտբոլի խաղի հաղորդումը: Այսպիսով, ինչպես թեման, այնպես էլ ռեման կարող են արտահայտվել ստորոգյալի կամ ենթակայի խմբով: Ուստի ռեման և թեման կարող են բաղկացած լինել նախադասության մեկ և մեկից ավելի անդամներից: Ընդորում, ինչպես թեման, այնպես էլ ռեման կարող է իր մեջ պարունակել միաժամանակ թե՛ ենթական (կամ՝ ենթակայի խումբը), թե՛ ստորոգյալը (կամ՝ ստորոգյալի խումբը) միասին վերցրած: Կարող է ռեման բաղկացած լինել նաև միայն պարագայից, խնդրից և այլն, այն դեպքում, երբ թեմայի մեջ են մտել ենթական, ստորոգյալը և այլն միասին վերցրած (համմտ. ԽՀ):

Այժմ համառոտակի ներկայացնենք չտրոհված (պրո) թեմայով նախադասությունները: Ինչպես տեսանք, բոլոր նախադասություններն ըստ առկայական տրոհման բաժանվում են թեմայի և ռեմայի: Բայց առանձին դեպքերում գործ ենք ունենում այնպիսի նախադասությունների հետ, որտեղ հաղորդվում է ինչ-որ բանի (կամ՝ ինչ-որ մեկի) գոյության, առկայության մասին, կամ էլ՝ հաստատվում կամ ժխտվում է որևէ փաստ: Այսպես՝

արևելահայերեն	արևմտահայերեն
Անձրևում է:	*Կ'անձրևէ:*
Աշուն էր:	*Աշուն էր:*
Լռություն:	*Լռություն:*

Այսպիսի դեպքերում ամբողջ իրազեկումը կարևոր է. դրա համար էլ ամբողջ նախադասությունը դիտվում է իբրև ռեմա: «Նշանակո՞ւմ է արդյոք, որ այդպիսի նախադասությունները,—գրել են Հ. Կռիլովան և Ս. Խավրոնինան,—չեն թույլատրում առկայական տրոհում: Բացարձա-

կապես՝ ոչ: Առկայական տրոհումից դուրս նախադասություններ չեն կարող լինել, քանի որ չի կարող լինել ասույթ առանց նպատակամղման: Կարելի է ասել, որ այդպիսի նախադասություններում թեման հավասար է զրոյի, նախադասության ամբողջ բառաշարքը ռեման է կազմում: Թեմայի բացակայությունը հղելության և լինելության հատկանիշ է» (ԽՀ. 25):

Շարադասությունը բառակապակցություններում

Պատմողական նախադասություններում հուզականորեն չերանգավորված խոսքում թեման պետք է նախորդի ռեմային: Իսկ ինչպիսի՞ն է երկու գրականներում բառերի կարգը թեմայի և ռեմայի մեջ, երբ այդպիսիք ծավալուն են՝ բաղկացած են երկու և ավելի բառ-միավորներից:

Ինչպես մի շարք լեզուներում (համմտ. ռուսերենում, ԽՀ. 30), ենթակայի և ստորոգյալի խմբերի հաջորդականությունը կախված է թեմայի և ռեմայի հաջորդականության ընդհանուր կանոնից, այն դեպքում, երբ բառակապակցությունների ներսում բառերի կարգը ոչ թե անմիջականորեն նույն սկզբունքներով, այլ զուտ բառակապակցություններում գործող կանոններով է բնութագրվում:

Կախյալ (որոշիչ) բաղադրիչով կապակցություններ

Ինչպես մի շարք հնդեվրոպական (և ոչ հնդեվրոպական) լեզուներում, երկու գրականներում էլ կախյալ (որոշիչ) բաղադրիչը դրվում է գլխավոր (որոշյալ) բաղադրիչից առաջ. այսպես՝

արևելահայերեն	արևմտահայերեն
կաշվե պայուսակ	*կաշիէ պայուսակ*
իմ տղան	*իմ տղան*
երկրորդ այցելություն	*երկրորդ այցելութիւն*

Եթե կախյալ բաղադրիչները մեկից ավելի են, ապա չեզոք ոճում նրանք բոլորն էլ նախորդում են գլխավոր բաղադրիչին.

կաշվե մեծ պայուսակը կաշիէ մեծ պայուսակը և այլն:

Մեկից ավելի կախյալ բաղադրիչների միմյանց նկատմամբ ունեցած կարգը կապված է այդ բաղադրիչների ձևաբանական բնութագրից. եթե այդպիսիք միևնույն ձևաբանական հատկանիշներով են բնութագրվում (նույն խոսքի մասն են և այլն), ապա նրանց միմյանց նկատմամբ դիրքն աղատ է. այսպես՝

Մի մեծ լուսավոր փողոց[1]	*Մեծ լուսաւոր փողոց մը*[2]
Մի լուսավոր մեծ փողոց	*Լուսաւոր մեծ փողոց մը*
Լուսավոր մի մեծ փողոց	—

Արևելահայերենի բանաստեղծական խոսքին բնորոշ է նաև լուսավոր մեծ մի փողոց կարգը: Համմտ., օրինակ՝ ինձամյա հին մի երազ...

Տարբեր ձևաբանական հատկանիշներ ունեցող կախյալ բաղադրիչները սովորաբար հետևյալ հաջորդականությունն են ունենում.

ա) որակական ածականները սովորաբար հաջորդում են հարաբերականներին՝

մի փայտե մեծ տուն[1]	*փայտե մեծ տուն մը*[2]

բ) դերանունը սովորաբար դրվում է ածականից առաջ՝

նրա գեղեցիկ տունը[1]	*անոր գեղեցիկ տունը*[2]

Երկու գրականներում էլ թույլատրելի են հետևյալ կարգերը՝

քո գեղեցիկ տունը	*քու գեղեցիկ տունը*
գեղեցիկ քո տունը	*գեղեցիկ քու տունը*

Վերջին դեպքում գործ ունենք հուզաարտահայտչականորեն երանգավորված խոսքի հետ:

գ) Դերանունները իրենց հերթին ունենում են հետևյալ կարգը.

որոշյալ դերանուն—ցուցական դերանուն. օրինակ՝

բոլոր այդպիսի մարդկանց	*բոլոր ասանկ մարդոց*

որոշյալ (անորոշ)—սահմանական. օրինակ՝

յուրաքանչյուր իմ արարքը	*յուրաքանչյուր արարքն իմ...*

դ) որոշյալ-ցուցական-սահմանական.

բոլոր մեր այդ խնդրանքները	*բոլոր մեր այդ խնդիրքները*

Բառերի կարգը խնդրառական կապակցություններում

Երկու գրականներում էլ կախյալ բաղադրիչը դրվում է գլխավոր բաղադրիչից հետո (երբ գլխավոր բաղադրիչն անորոշ է). այսպես՝

գբաղվել սպորտով, մեկնել Մոսկվա[1]	*գբաղիլ մարզանքով, մեկնիլ Մոսկվա*[2]

Գլխավոր բաղադրիչի որոշյալ առման դեպքում առաջանում է կախյալ բաղադրիչ—գլխավոր բաղադրիչ բառերի կարգը՝ սպորտով զբաղվելը[1], մարզանքով զբաղիլը[2], Մոսկվա մեկնելը[1], Մոսկվա մեկնիլը[2]: Այսպես, օրինակ՝

Մոսկվա մեկնելը հետաձգվեց:	*Մոսկվա մեկնիլը հետաձգուեցաւ:*
Դաս սովորելու ժամանակն է:	*Դաս սորվելու առեն է:*

Բառերի կարգը առդրությամբ բառակապակցություններում

Որպես առդրվող բաղադրիչներ բառակապակցություններում հանդես են գալիս չթեքվող բառերը՝ մակբայները, ածականները և այլն. ինչպես, օրինակ՝

արևելահայերեն	արևմտահայերեն
դժկամորեն կատարել	*դժկամորեն կատարել*

Բային առդրվող անորոշը գլխավոր անդամի հարաբերությամբ (դիրքով) եղադաս է (դրվում է նրանից հետո)։ Օրինակներ՝

արևելահայերեն	արևմտահայերեն
ցանկացավ տեսնել	*ցանկացավ տեսնել*
խնդրից չմերժել	*խնդրից չմերժել*

Անորոշը նախադաս լինելու դեպքում տրամաբանական շեշտ է առնում (տեսնել ցանկացավ)։

Արևմտահայերենում հարաբերաբար ազատ է դերադաս անդամի և կախյալ անդամի հաջորդականության կարգը. համմտ. փափաքեցավ նայիլ—նայիլ փափաքեցավ և այլն։

Երկու գրականներում էլ թեք հոլովով դրված անորոշը նախադրվում է ածականին.

արևելահայերեն	արևմտահայերեն
սիրելու կարող	*սիրելու առակ*
օգնելու անընդունակ	*օգնելու անպետ (անատակ)*

Ստորև տրված աղյուսակում ներկայացվում են առդրվող անդամներն ըստ բառակապակցություններում ունեցած կարգի.

Բառակապակցությունների բաղադրիչների վերոբերյալ կարգը կա-

Բառակապակց. առդրվող բաղադրիչ	*Գլխավոր բաղադրիչի նկատմամբ ունեցած դիրքը*			
	Բայ	*Գոյական*	*Ածական*	*Մակբայ*
Մակբայ	*Նախորդ.* —	*Նախորդ.*	*որակ. նշանակ. հաջորդ. քանակ. նշ. նախ.*	*Նախորդ.* —
Ածական	*Նախորդ.*	*Նախորդ.*		
Անորոշ	*հաջորդ.*	*հաջորդ.*	*հաջորդ.*	*հաջորդ.*
Դերբայ	*Նախորդ.*			

րելի է փոփոխել կամ պահպանել անփոփոխ, կախված այն բանից, թե ինչպիսին է նախադասության առկայական տրոհումը: Մի դեպքում ամբողջ բառակապակցությունը որպես շարահյուսական մեկ միավոր մըտնում է նախադասության կազմի մեջ, առկայական տրոհման ժամանակ հանդիսանալով թեմա կամ ռեմա: Այդ դեպքում բառերի կարգը մնում է անփոփոխ, այլ դեպքերում՝ բառակապակցությունը որպես շարահյուսական միավոր «քայքայվում է» նախադասության մեջ:

—Սրտոտ մարդը վախ չունի:

—Ո՞վ...

—Սրտոտ մարդը...

—Ո՞ր մարդը...

—Սրտոտ...

Վերջին դեպքում առկա է բառակապակցության առկայացման երեվույթը:

Բառերի կարգի հիմնական տարբերակները պարզ պատմողական նախադասություններում:

Ոչ միայն բառերի կարգն է կախված առկայական տրոհումից, այլև բառակապակցության բաղադրիչների (միավորների) կարգը: Ինչպես և նախորդ դեպքում, երկու գրականների բառակապակցություններում թեման նախորդում է ռեմային: Առանձնացվում են պարզ նախադասություններում բառերի կարգի հետևյալ տարբերակները.

Տարբերակ № 1

Խոսողի նպատակը այնպիսի գործողություն նշելն է, որի կատարողը հայտնի է: Այս տիպի նախադասությունների առկայական տրոհումը հետևյալ պատկերն է տալիս.

թեմա—ենթակա (նշում է կատարողին)

ռեմա—ստորոգյալ (ցույց է տալիս գործողությունը)

Պատասխանում է ի՞նչ է անում (ի՞նչ կ'ընէ[2]) հարցին: Բառերի կարգն է՝

ենթակա—ստորոգյալ

Աշոտը գրում է: Վարդանը երգում է: Աշոտ կը գրէ: Վարդան կ'երգէ:

Այսպիսի նախադասությունների առկայական տրոհումը հետևյալ պատկերն ունի.

ենթակայի խումբ—ստորոգյալի խումբ

թեմա ռեմա

Գերազանցիկ Աշոտը կատարում է տնային աշխատանքները:

Տարբերակ № 2

Ի հակառակ առաջին տարբերակի, այս դեպքում հայտնի է գործողությունը (կամ՝ հատկանիշը), իսկ հաղորդման նպատակն է պարզել, թե ո՞վ է (ի՞նչն է) գործողությունն կատարողը (հատկանիշ կրողը)։ Այդ դեպքում թեման ստորոգյալն է, իսկ ռեման՝ ենթական։ Այդպիսի նախադասություններում հարցը դրվում է այսպես՝ ո՞վ է աղմկում, ի՞նչն է աղմկում, պատասխանողն ո՞վ է, ո՞վ գնաց և այլն։ Օրինակներ՝

Աղմկում է գետը։ Գնաց Սահակը։ Կը նահանջէ լեռուն։

Այսպիսի նախադասությունների առկայական տրոհման գծապատկերն է.

ստորոգյալի խումբ—ենթակայի խումբ

թեմա ռեմա

Աղմկում է գետը

Կը նահանջէ լեռուն

Տարբերակ № 3

Եթե նախադասության մեջ գործողության հետ կապված պարագաները (տեղի, ժամանակի և այլն) հայտնի են, ապա նախադասության առկայական տրոհումը տալիս է հետևյալ պատկերը.

պարագաներ—ստորոգյալ—ենթակա

թեմա ռեմա

Օրինակ՝ Երևանում տեղի ունեցավ գիտաժողով։ Այսպիսով, ենթական և ստորոգյալը միասին վերցրած կազմում են ռեման, ընդ որում ստորոգյալը, որպես կանոն, պարտադիր կերպով նախորդում է ենթակային. այսինքն ոչ թե՝ Երևանում խորհրդակցություն տեղի ունեցավ, այլ՝ Երևանում տեղի ունեցավ խորհրդակցություն։ Մեկ այլ օրինակ՝ Աշխատավարձի բարձրացումով բարելավվում է ժողովրդի կենսամակարդակը։

Ստորոգյալի նախադաս դիրքը թեև պայմանավորված է նրանով, որ պարագայական անդամները ստորոգյալի խմբի մեջ մտնելով՝ կապակցությունը չի ընդմիջարկվում, այլ անմիջապես պարագաներին հաջորդում է ստորոգյալը։ Այսպես՝

Պատուհանից դուրս փոթորկում էր ծովը[1]։

Պատուհանէն անդին կը փոթորկէր ծովը[2]։

Եթե հաղորդման թեման դեմք է (կամ առարկա), որ ինչ-որ իրադրության մեջ է և ասույթի նպատակն է հայտնել, թե ինչ է կատարվում այդ դեմքի (առարկայի) հետ տվյալ իրադրության մեջ, հայտնի պայմաններում, այդպիսի նախադասությունները տրոհվում են բարդ թեմայի և ռեմայի: Այսպես՝ բարդ թեման իր մեջ է ներառում ոչ միայն իրավիճակի պարագայի անվանումը (պայմանի, ժամանակի, տեղի և այլն), այլև գործող անձի անունը (կամ հատկանիշը կրողի անունը): Առկայական տրոհումն այդպիսի նախադասություններում այսպիսի տեսք ունի՝ պարագաները ենթակայի հետ միասին կազմում են թեման, իսկ սաորոդյալը՝ ռեման: Այդպիսի նախադասությունները պատասխանում են հետևյալ հարցերին. ի՞նչ է կատարվում անձի հետ տվյալ պայմաններում, ի՞նչ է անում Վարդանը Երևանում, ինչպի՞սին է եղանակը Գուգարքում գարնանը, ի՞նչ արեց Աստղիկը անձրևի պատճառով: Օրինակներ՝ Վարդանը երեկ մեկնեց: Վարդանը Երևանում բուժվում է: Գուգարքում գարնանը սաճչելի եղանակ է լինում: Աստղիկը անձրևի պատճառով մրսեց:

Նախադասությունների կառուցվածքն ըստ առկայական տրոհման հետևյալն է.

պարագա + ենթակա — սաորոդյալ
թեմա ռեմա

Առավոտյան Վահագնը մեկնեց:

Գրական արևելահայերենում ենթակայի որոշյալ լինելու դեպքում շարադասության մեջ հետևյալ կարգն է բնորոշ՝ պարագա — բայ — ենթակա՝ Միջանցքում դրված է հեռախոսը: Պատից կախված է Այվազովսկու նկարը և այլն:

Եթե ենթական անորոշ առմամբ է դրվում, ապա կատարվում է հետևյալ դրափոխությունը՝ պարագա — ենթակա — սաորոդյալ՝ Միջանցքում հեռախոս է դրված: Պատից նկար է կախված (Համմտ. ԻԲ. 3):

4-րդ տարբերակի ժամանակ որպես ենթակա հանդես են գալիս հաճախ հատուկ անունները կամ անձնական դերանունները: Վերջինս պայմանավորված է նրանով, որ գործող անձը (առարկան) արդեն հայտնի է խոսողին, իսկ հաճախ նաև՝ լսողին (կամ պարզապես անվանվել է արդեն, կամ էլ հայտնի է իրադրությունից): Այսպես՝ Երևանից ես մեկնեցի Մոսկվա:

Եթե խոսողը (կամ գրողը) ուզում է ճշտել ինչ-որ փաստ, տեղ, ժամանակ և այլն, ապա ամբողջ նախադասությունը, բացառությամբ պարագայական լրացումի, մտնում է թեմայի մեջ, իսկ երկրորդական անդամը կազմում է ռեման և պարտադիր կերպով դրվում է նախադասության վերջում: Այսպես՝

Երևան ժամանեցին առավոտյան: Գյուղ հասան գիշեր ատեն:

Հովսեփյանը մեկնեց Ուրգնի: Արամ մեկնեց Հայրենիք:

Ճամփան ցեխոտ էր անձրևից: Ճամփան ցեխոտ էր անձրևէն:

Այս նախադասությունների առկայական տրոհման գծապատկերն այսպիսի տեսք ունի.

նախադասության ամբողջ կազմը պարագա երկրորդական անդամը (բացառությամբ պարագա երկրորդական անդամի)

թեմա ռեմա

Զբոսաշրջիկների ամբողջ խումբը

գյուղ հասավ գիշերով[1] (գիշեր ատեն)[2]:

Քանի որ այդպիսի նախադասություններում թեման բաղկացած է մի քանի անդամներից, ուստի հնարավոր է դառնում այդ բառերի մի քանի կարգի դասավորություն, բայց բոլոր տարբերակներում էլ վերջնային դիրքում դրվում է ռեման (պարագան).

Այն ժամանակ նա ապրում էր վառնով:

Նա այն ժամանակ ապրում էր վառնով:

Ապրում էր նա այն ժամանակ վառնով:

Խնդիրների դիրքը նախադասության մեջ. կարևոր է պարզել ուղիղ և անուղղակի (կամ, ըստ արևմտահայ քերականության՝ բնության և սեռի) խնդիրների շարադասությունն ըստ առկայական տրոհման: Խնդիր լրացումը լինելով բայական կառույցի անդամ, սովորաբար մտնում է ռեմայի մեջ և ռեմայի կազմում դրվում է ստորոգյալից հետո՝ Զինվորները վերադառնում են տուն[1]: Այրեր կը մեկնին զինուորութեան[2]:

Բառակապակցությունների մեջ սովորաբար խնդիրը ստորոգյալից առաջ է՝ ճեխաք պատմել, տուն գնալ (երթալ[2]) և այլն: Խնդիր լրացմամբ նախադասությունների դեպքում կարելի է առանձնացնել 5 տարբերակ.

1. Խնդիրը ստորոգյալի հետ միասին մտնում է ռեմայի մեջ.

«Արարատը» բացեց հաշիվը[1]: Մալխասյան կնքեց մահկանացուն[2]:

2. Խնդիրը ստորոգյալի հետ միասին կազմում է թեման: Այդ դեպ-

քում այն դրվում է ռեմայից (ենթակայից) առաջ.

Ամեն բանում օգնեցին Վարդանի ծնողները[1]: Ամեն բանով օգտակար եղան Վարդանին ծնողքը[2]:

3. Խնդիրն առանձին վերցրած կազմում է թեման և դրվում նախադասության սկզբում, ինչպես, օրինակ՝ Բեռները տեղափոխում են եր.. կաթպղպայիններ[1]:

4. Խնդիրը ենթակայի հետ միասին կազմում է բարդ թեմա, իսկ ստորոգյալը՝ ռեմա (բառերի կարգը նման կառույցներում հետևյալ տեսքն ունի).

Խնդիր + ենթակա	ստորոգյալ
թեմա	ռեմա

Օրինակ՝ Բոլոր պարտավորությունները արտադրամասը կատարեց:

5. Խնդիրը կազմում է ռեման և դրվում նախադասության վերջում, ինչպես, օրինակ՝ Ես ստացել եմ գրքերը: Երեխան խմում է կաթը[1]: Երեխան կը խմէ կաթը[2]:

Բառերի կարգը հարցական նախադասություններում

Հարցական նախադասությունների առկայական տրոհման ժամանակ կիրառելով Օ. Կոխլովի և Ս. Խավրոնինի մոտեցումը՝ բոլոր հարցական նախադասությունները բաժանում ենք երկու խմբի. առաջինի մեջ դրվում են այնպիսի հարցական նախադասությունները, որոնց մեջ հարցումը բառային ձևով չի արտահայտված, այլ միայն հնչերանգով, ինչպես՝ Դուք Հայաստա՞ն եք մեկնում[1]: Դուք Հայաստա՞ն կը մեկնիք[2]: Երկրորդ խմբի մեջ դրվում են այն հարցական նախադասությունները, ուր բացի հարցական հնչերանգից, առկա են նաև հարցման բառ-մասնիկներ:

Միայն հնչերանգով դրսևորվող հարցական նախադասություններում բառերի կարգը սովորաբար կարող է չփոփոխվել, քանի որ հարցման գործառույթը կատարվում է հնչերանգի միջոցով: Նմանօրինակ նախադասություններում ռեման երկու դրականներում էլ որոշվում է տոնի կտրուկ բարձրացմամբ: Օրինակ՝ Փո՞ղ է պետք, տամ, մեքենա՞ ես ուզում, գնեմ...[1]

Հարցական նախադասություններում, ինչպես և պատմողականների դեպքում, ռեման կարող է լինել ցանկացած բառ: Սովորաբար երկու դրականները հարցական նախադասությունների սկզբնային դիրքում դնում են հարցական դերանունները, հարցական բառ-մասնիկները և այլն: Ինչպես, օրինակ՝ Ո՞ւր էր Հայոց Աստվածը[2], ի՞նչու է աղմկում

գետը[1] և այլն։ Կարելի է առանձնացնել հարցականների այն տիպը, երբ նախադասության մեջ առկա են երկբայական-հարցական բառեր, ինչպես՝ մի՞թե, արդյո՞ք և այլն։

Հարցական դերանուններով սկսվող նախադասություններում, որպես կանոն, հարցական բառերից հետո անմիջապես հաջորդում է ստորոգյալը.

Ի՞նչ է անում Աշոտը։ Ի՞նչ կ՚ընէ Աշոտ։

Առանձին դեպքերում հարցական իմաստ ունեցող բառին կարող է հաջորդել ոչ թե ստորոգյալը, այլ ենթական (այն դեպքում, երբ հարցական և պատմողական նախադասությունների բառային կարգը համընկնում է). այսպես՝ Ինչո՞ւ է «Ադարատը» վատ խաղում[1]։ Ինչո՞ւ «Ադարատ» վատ կը խաղայ[2]։ Հարցադրումն ըստ բնույթի տարբեր կարող է լինել. օրինակ՝ կարելի է հարցադրումը տալ այնպես, որ այն վերաբերի իրադարձությանն ամբողջությամբ կամ էլ՝ միայն գործողությանը։ Առաջին դեպքում կունենանք Ինչո՞ւ է աղմկում գետը շարադասությունը, երկրորդ դեպքում՝ Ինչո՞ւ է գետն աղմկում։

Երկու գրականների համար ընդհանրություն է այն, որ հարցական բառերին սովորաբար հաջորդում է հայտնին (թեման), ուստի հարցական բառերին հետևում են դերանունները. համմա., օրինակ՝ Ինչո՞ւ եմ դուխ գնում, ինչո՞ւ եմ դուխ մնալու։ Արդյո՞ք, մի՞թե և այլ հարցում-բառերի դեպքում ընդհանուր է այն, որ նրանք հաճախ անմիջապես նախորդում են ռեմային (նորությանը).

Արդյո՞ք կհամաձայնվի վարդանը[1]։ Արդյո՞ք կը համաձայնի Վարդան[2]։

Մի՞թե, իսկապե՞ս և այլ բառերի կարգը հետևյալն է. նրանք կամ նախադասության սկզբում են դրվում, կամ հաջորդում են կոչական բառերին։ Այսպես՝ Աշո՛տ, իսկապե՞ս լուր չունես։ Մի՞թե Սահակի ասածր ճիշտ է։

Այսպիսով, հարցումը երկու գրականներում դրսևորվում է հետևյալ միջոցներով.

	արևելահայերեն	արևմտահայերեն
1. Հնչերանգ	+	+ +
2. Բառաբաղադրիչներ		
ա) հարցական բառեր	+ +	+ +
բ) մասնիկներ	+ +	+ +
3. Շարադասություն	+	∓

Հնչերանգը շատ ավելի մեծ դեր է խաղում արևմտահայերենում, քան արևելահայերենում: Շարադասության միջոցը արևելահայերենի հարցական նախադասության մեջ համեմատաբար ավելի մեծ դեր ունի: Երկու գրականներում էլ հարցական նախադասության հաղորդակցական տիպը, բացի բուն հարցումից, արտահայտում է նաև տարակուսանք, կարեկցանք, ահաբեկում, զարմանք: Այսպես, օրինակ՝

ա) տարակուսանք կամ զարմանք՝ Ի՞նչ ես ասում—Ի՞նչ կ'ըսես,

բ)ահաբեկում՝ Ջե՞ս նշանակում: Ջե՞ս ընդուներ[2]:

գ) զարմանք՝ Իսկապե՞ս: Իրա՞ւ[2]:

Վերջապես նշենք, որ արևելահայերենում համեմատաբար ավելի հաճախ է կիրառվում ժխտական-հարցական նախադասության տիպը՝ Ջե՞ս ուզում գնալ:

Հեղինակային խոսքի շարադասությունը ուրիշի ուղղակի խոսքի ժամանակ առանձին ուսումնասիրության առարկա է եղել տարբեր լեզուների նյութի վրա: Այդ առումով հետաքրքիր է պարզել երկու գրականների հեղինակային խոսքի շարադասությունը ուրիշի ուղղակի խոսքում: Հնարավոր է երեք տարբերակ. 1) երբ հեղինակային խոսքը նախորդում է ուղղակի խոսքին, 2) երբ հաջորդում է և 3) երբ հեղինակային խոսքը միջակա դիրք է գրավում: Ըստ այդ դիրքերի, փոխվում է նաև հեղինակային խոսքի ենթակայի և ստորոգյալի խմբի շարադասությունը:

Ինչպես և մի շարք լեզուներում, երկու գրականներում էլ, եթե հեղինակային խոսքը նախորդում է ուրիշի ուղղակի խոսքին, ապա ունենում է բառերի հետևյալ կարգը. ենթակայի խումբ + ստորոգյալի խումբ. Հմմտ. Սարյանն ասել է. «Սիրեցեք բնությունը»[1], Դուրյան գրած է. «Է՛հ, մնաք բարով, աստղե՛ր և արև՛»[2]: Նման կառույցի դեպքում, երբ հեղինակային խոսքը ամբողջությամբ նախորդում է, ենթակայի խմբից առաջ կարող են դրվել պարագաներ (ինչպես այլ լեզուներում՝ հատկապես տեղի և ժամանակի պարագաները). այսպես, օրինակ՝ Այսօր Վարդանն ասաց. «Լավ չեմ արել», Երևանից հեռագիրը հաղորդեց. «Պլանը կատարված է»:

Մյուս երկու դեպքերում, երբ ուրիշի ուղղակի խոսքը կամ նախորդում է հեղինակային խոսքին, կամ ընդմիջարկվում է, ունենում է նախորդի հակառակ կառույցը: Պարտադիր կերպով նախ դրվում է ստորոգյալի խումբը և ապա միայն՝ ենթակայինը. օրինակ՝ «Ինչո՞ւ ես այդպես կարծում»—ասաց Միսակը[1]: «Լաւ, կ'երթամ»,—գոչեց Տիգրան[2]: «Առավոտյան,—ասաց Վանիան,—մարզական լուրեր հաղորդեցին»[1]:

Արևելահայերենի շարադասությանը նվիրված աշխատանքում (ԻՊ. 3) այդ երևույթը ճիշտ է մեկնաբանվել, բայց ներկայացվել է այնպես, որ իբր ուրիշի խոսքին հաջորդելու դեպքում է հանդես գալիս նման կառույցը: Հարկ էր շեշտել հստակորեն, որ ոչ միայն ամբողջական խոսքին հաջորդելու դեպքում, այլև բոլոր այն դեպքերում, երբ նախադասությունը սկսվում է ուրիշի խոսքով (թեկուզ ուրիշի ուղղակի խոսքի մեկ բառով) հեղինակային խոսքի շարադասությունը ստանում է նախորդ կառույցի հակառակ տեսքը՝ ստորոգյալի խումբ+ենթակայի խումբ: Այս օրինաչափությունը երկու գրականներում էլ գործում է առանց բացառության: Բերենք օրինակներ.

արևելահայերեն	արևմտահայերեն
Դու,—ասաց Վահանը,—շուտ եկար:	Դուն,—ըսաւ Վահան,—կանուխ եկար:
Երեկ,—ասաց նա,—ոչինչ չստացվեց:	Երէկ,—ըսաւ ան,—ոչինչ ըրի:
Մի՞թե,—հարցրեց աղջիկը,—չեմ կարող գալ:	Մի՞թէ,—հարցուց աղջիկը,—չեմ կրնար երթալ:

Հուլգաարտահայոյականորեն երանգավորված խոսքի շարադասությունը անհրաժեշտ է, ինչպես նշվեց վերը, հստակորեն տարբերել չեզոք ոճի (հուլգաարտահայոյականորեն չերանգավորված) բառակարգից: Եթե վերջին դեպքում բառերի կարգը դիտվում է սովորաբար որպես օբյեկտիվ շարադասություն, ապա շրջուն շարադասության մասին կարելի է խոսել հուլգաարտահայոյականորեն երանգավորված խոսքի դեպքում: Ոճավորումը գերազանցապես գեղարվեստական խոսքին հատուկ երևույթ է: Սովորաբար տարբերակում են պատմական ոճավորումը արդիականից: Բոլոր լեզուներում, այդ թվում և մեր երկու գրականներում, ոճավորված խոսքը հուլգաարտահայոյական տիպին է պատկանում: Բառերի շարադասությունը ստանում է ոճաարտահայոյական միջոց և տեղի է ունենում չեզոք ոճի շարադասության փոփոխություն: Կարող են փոխվել. 1) առկայական տրոհման բաղադրիչները (թեման, ռեման), 2) թեմայի և ռեմայի ներսում եղած բառերի կարգը և 3) վերջապես, դրո թեմայով կամ չտրոհվող ասույթներում բառերի հաջորդականությունը:

Նախ պարզենք առկայական տրոհման բաղադրիչների (թեմայի և ռեմայի) կարգը հուլգաարտահայոյականորեն երանգավորված խոսքում:

Եթե չեզոք խոսքում նախադասության գծապատկերն ունենում է հետևյալ տեսքը՝ թեմա—ռեմա, ապա տվյալ դեպքում այդ կարգը (այսինքն՝ ուղիղ) դառնում է շրջուն՝ ռեմա—թեմա՝ Դոփում են, դոփում են, դոփում են ձիերը:

Բացի այդպիսի ամբողջական տեղաշարժից, երբ թեման լիովին անցնում է ռեմայից հետո, երկու գրականներում տարածված է այն դեպքը, երբ մեկ բաղադրիչի (թեմայի կամ ռեմայի) միավորները (բառերը կամ բառը) ընդմիջարկվում են մյուսի բառերով (կամ բառով): Այդ երևույթը, ի տարբերություն շրջուն կարգի, կարելի է անվանել տարածական տեղաշարժ. Օրինակներ՝ Նա ինձ է ուզում[1]: Երաժշտությունն եմ ես բնության: Մեխակներ են աճում այգում և կակաչներ գեղեցիկ:

Հիշենք Շիրազի տողը. Դու շրթունքներ ունես կարմիր և աչիկներ գեղեցիկ:

Շրջուն շարադասություն է առեղծվում նաև թեման ռեմայի մեջ տեղադրելուց. այսպես՝ Ունիմ ես ցան անոր (ՎՎ):

Ինչպես այլ լեզուներում, մեր երկու գրականներում նույնպես բառերի ուղիղ (սովորական) կարգը շրջունի վերածելու դեպքում հաճախադում է տեղի ունենում, այն էլ հիմնականում նույն անդամի՝ ենթակայի: Օրինակ՝

—Դու գնալո՞ւ ես...	—Դուն պիտի երթա՞ս...
—(Ես) գնալու եմ...	—(Ես) պիտի երթամ...

Կարևոր է նշել հետևյալ հանգամանքները. նույն բառային կազմն ունեցող նախադասությունները, որոնք բառերի տարբեր կարգ ունեն, միայն այն դեպքում են հակադրվում որպես չեզոք և երանգավորված ոճեր, երբ միևնույն իմաստն են արտահայտում, այսինքն առկայական տրոհմամբ նույն թեման և ռեման են ունենում: Հակառակ դեպքում փոխվում է առկայական տրոհումը և ոչ թե ոճական երանգավորումը (Համմտ. ԽՀ. 139): Ըստ էության, շրջուն շարադասության մասին կարելի է խոսել այն դեպքում, երբ առկա է նաև հուզաարտահայտչական ոճին հատուկ հնչերանգ: Ահա հենց այդ առումով հայերենի շարադասության ուսումնասիրության ժամանակ նշված հանգամանքները անտեսվում են և բառերի շրջուն կարգ են դիտվում նաև այնպիսիք, որ իմաստային որոշակի տարբերակում կա ուղիղ կարգի համեմատությամբ (այսինքն՝ թեման և ռեման փոխված են): Ստորև ներկայացնում ենք շրջուն կարգի կառուցվածքային տիպերը.

Տարբերակ № 1

Ջեղոք ոճի (ուղիղ) կարգը — *շրջուն կարգը*

Ենթակայի խումբ (Ե)—ստորոգյալի խումբ (Ռ.) Ստորոգ. խ. (Ռ.) —Ե.խ. (Ե)

Նա հիմար է[1]։ — *Հիմար է նա*[1]։

Այն ժամանակները վաղուց անցել են[1]։ — *Վաղուց անցել են այն ժամանակները*[1]։

Ան հիմար է[2]։ — *Հիմար է ան*[2]։

Այն առեններ վաղուց անցեր են[2]։ *Վաղուց անցեր են այն առեններ*[2]։

Շրջուն շարադասության ժամանակ նկատելի է, որ նախադասությունները սովորաբար բացականչական բառեր են պարունակում։ Օրինակ՝ Ջա՜ն, գնում ենք մենք ճամբար։

Տարբերակ № 2

Այս տարբերակի դեպքում նախադասությունն ունենում է հետևյալ կառուցվածքը. ստորոգյալի խումբ (Ե)—ենթակայի խումբ (Ռ)։

—Բժշկականում սովորողը մե՞ծ տղան է...

—Ո՛չ, փոքրը...

—Ո՞վ է թույլ տվել նևրս մտնել...

—Պահակն է թույլ տվել... (հետաքրքիր է նկատել, որ կարելի է նախադասությունը ներկայացնել միայն պահակը բառով, որովհետև նախադասության միակ նորություն արտահայտող բառն է այն (ռեման)։

Տարբերակ № 3

Այս տարբերակի դեպքում գործ ունենք նախադասության հետևյալ կառուցվածքի հետ. երկրորդական անդամ (Ե)+ենթակա—ստորոգյալ (Ռ)։ Օրինակներ՝ «Այսօր «Արարատը» կհաղթի» բառերի ուղիղ կարգն ունեցող կառուցվածքը 3-րդ տարբերակի դեպքում կներկայանա հետևյալ ենթատարբերակներով.

ստորոգյալ+ենթակա—պարագա	*և*	*ենթակա+ստորոգյալ—պարագա*
Ռ Ե		*Ռ Ե*
Կհաղթի «Արարատն» այսօր։		*«Արարատը» կհաղթի այսօր։*
Շաչում է հողմը հեռվում[1]։		*Հողմն է շաչում հեռվում*[1]։
Ծաղկել են ծառերը նոր քում[1]։		*Ծառերը ծաղկել են նոր քում*[1]։
Մենք կ'երթանք հայրենիք[2]։		*Կ'երթանք մենք հայրենիք*[2]։

Առանց նախադասության կառուցվածքի փոփոխության, ենթական և ստորոգյալը կարող են տեղափոխվել այդ տիպի նախադասություններում, ինչպես, օրինակ՝ «Սիրտս ցավում է եղածի համար»—«Ցավում է սիրտս եղածի համար» և արևմտահայերենի՝ «Սիրտս կը ցաւի եղածին համար»—«Կը ցաւի սիրտս եղածին համար»: Ետադաս ենթակայի դեպքում երկու գրականներում էլ նկատվում է տոնի իջեցում:

Տարբերակ № 4

երկրորդական անդամ + ենթակա — ստորոգյալ

Բ—Ռ

Այս կառուցվածքը վերը նշված ընդմիջարկված տիպին է պատկանում: Այս դեպքում, ինչպես նշվել է, կամ թեման, կամ էլ ռեման ընդմիջարկվում է: Ուստի կարելի է ներկայացնել այս տիպը հետևյալ տարբերակներով՝ Ռ—Բ—Ռ կամ՝ Բ—Ռ—Բ: Ինչպես, օրինակ՝ Ուրախ է նա այսօր: Մեծ է Երևանն ու գեղեցիկ: Բառերի նման կարգը երկու գրականներում էլ ավելի հաճախ հանդիպում է նախադասության բազմակի (համասեռ) անդամների դեպքում:

Համազոր լրացումները (անդամները) այդ դեպքում նույն հնչերանգն ու ուժգնությունն են ունենում: Հմմտ. Հառում են ձիերը, փնչում:

Տարբերակ № 5

Այս տարբերակում նախադասություններն ունենում են հետևյալ կառուցվածքը.

Նախադասության ամբողջ բառային կազմը — այդ երկրորդական անդամը (բացի մեկ երկրորդական անդամից)

Բ — Ռ

և շրջելով ստացվում է ռեման (այսինքն՝ այդ երկրորդական անդամը) նախադասության սկզբում և բոլոր մյուս անդամները՝ նրանից հետո: Բնականաբար, ռեման որոշապես ընդգծվում է հնչերանգով, հմմտ.

Առագուրյամբ մտավ տուգանային հրապարակ:

Հանկարծ վարդանը սայթաքեց:

Այժմ անդրադառնանք բառերի կարգի փոփոխությանը բառակապակցություններում: Երկու գրականներում էլ տարածված է այն երևույթը, երբ նախադասության առկայական տրոհման առումով ռեման և թեման չեն փոխվում, բայց բառակապակցությունների ներսում փոխվում է բառերի կարգը: Հիշեցնենք, որ նկատի են առնվում այնպիսի

նախադասությունները, ուր հաղորդակցական ոլորտում փոփոխություն չկա, առկայական տրոհման տեսակետից նույնպես, պարզապես խոսքն ավելի հուզաարտահայտչական է դառնում և կրում որոշակի հնչերանգային փոփոխություն։ Օրինակ՝ Պապիկը ցախ է ջարդում (ջարդում է ցախ)։ Գիրք եմ կարդում—կարդում եմ գիրք *և այլն։ Այսպիսի շրջումը հատուկ է ոչ միայն բանաստեղծական խոսքին, այլև խոսակցական լեզվի պատմողական ոճին, բանահյուսական լեզվին (առակներին, զրույցներին և այլն)։ Օրինակ՝* Տուն է գալիս, ձին չկա։ Ետ է դառնում, ապրանքն են տարել *և այլն։*

Կամ՝ Կապտեցին կարմիր կողերը լեռան *(ՀՍ)։*

Հարցական նախադասությունների առկայական տրոհումը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, մանավանդ եթե այդպիսի նախադասությունները քննվում են ըստ գրական և խոսակցական տարբերակների զուգադրության։ Այդ դեպքում ի հայտ են գալիս որոշ հնչերանգային տարբերություններ, բառային յուրահատուկ կիրարկություններ և այլն։ Այսպես՝ խոսակցական-գրական ոճում, սովորաբար արևելահայերենում, նախադասությունը սկսում են իսկ շաղկապով.

Իսկ դու ի՞նչ ասացիր։ Իսկ Վարդանը կա՞ր և *այլն։*

Նմանապես նախադասության սկզբում են դրվում՝ ինչի՞ց է, ինչո՞ւ, որտեղի՞ց *և այլ հարցական ձևերը։ Հաճախական է նաև* չէ՞, էլ ինչո՞ւ *և այլ ձևերի կիրառությունը նախադասության սկզբում։*

Նախադասությունների հաղորդակցական տիպերի զուգադրության ժամանակ ի հայտ եկած էական տարբերություններից մեկը պատկանում է ժխտական նախադասությունների ոլորտին։ Եթե նախադասության մեջ առկա է ժխտական բառ, ապա արևելահայերենում պարտադիր է ժխտական մասնիկի առկայությունը (կրկնակի ժխտում)՝ ոչ ոք չասաց։ *Արևմտահայերենում նման դեպքերում այլևս ժխտական մասնիկ չի դրվում (մեկ ժխտում)՝* ոչ ոք ըսաւ։ *Այսպիսով, եթե արևելահայերենը պատկանում է կրկնակի ժխտմամբ լեզուների խմբին, ապա արևմտահայերենը դասվում է մեկ ժխտմամբ լեզուների խմբին։ Կրկնակի ժխտականը արևմտահայերենում ընկալվում է իբրև դրական՝* ոչինչ չըլլայ—ամեն ինչ ըլլայ։ *Արևմտահայերենի զարգացման արդի փուլում (թերևս արևելահայերենի կամ ֆրանսերենի ազդեցությամբ) մեկ ժխտման սկզբունքը սկսել է խախտվել։ Օրինակ՝* ...ոչ ոք օգնության չի հասնիր ան*որ... (ՇՇ)։*

Արևելահայերենի և արևմտահայերենի շարահյուսական կառուց-

վածքների ամբողջական ղուգադրական քննության համար անհրաժեշտ է կիրառել նաև Ջ. Գրինբերգի առաջարկած շարահյուսական կառուցվածքները բնութագրող տիպաբանական մեթոդը: Խոսքը «բառերի հիմնական կարգի տիպաբանություն» անվանումը կրող մեթոդի մասին է (համմս. ԿԲ, 139, այլև՝ ԼՋ. 348):

Ինչպես հայտնի է, Ջ. Գրինբերգի այս մեթոդը խարսխվում է ընդամենը երեք հատկանիշի վրա. դրա համար էլ այն իսկապես կարող է ծառայել միայն որպես լեզուների տիպաբանական դասակարգման սկզբնական շրջանում կիրառվող միջոց: Այդ երեք հատկանիշներից առաջինը բացահայտում է բառերի հիմնական կարգը: Ջ. Գրինբերգը 30 լեզուների տվյալների հիման վրա եզրակացրել է, որ սովորաբար օգտագործվում են բառերի դասավորության երեք հիմնական ձևեր՝ *I* VSO, *II* SVO, *III* SOV (S—ենթական, V—ստորոգյալ, O—խնդիր):

Երկրորդ հատկանիշը բացահայտում է սպասարկու բառերի հաջորդականությունը: Այն դեպքում, երբ սպասարկու բառերը դրվում են գլխավոր (դերադաս) բառից առաջ, գործ ունենք նախադրություններ հետ (Pr-preposition), հետո դրվողները կոչվում են հետադրություններ՝ P_o (postposition):

Երրորդ հատկանիշը վերաբերում է ածականների դիրքին: Գոյականից առաջ դրվող ածականը նշանակվում է A տառով, հետոն՝ N տառով:

Ջ. Գրինբերգի դասակարգման աղյուսակը 12 վանդակ ունի (3×2×2): Հարկ է նշել, որ հնարավոր ոչ բոլոր ձևերն են իրացվում. այսպես, օրինակ, ինչպես ցույց է տալիս № 25 աղյուսակը, VSO գլխավոր հաջորդականության P_o—A, P_o—N վանդակները դատարկ են մնացել:

Ջ. Գրինբերգի աղյուսակում երկու գրականների դիրքը ճշտելու համար անհրաժեշտ է քննել հայերենի կապերը:

Դիտարկենք կապերի (նախադասությունների և հետադրությունների) դերը հայերենում. ինչպես նշվեց, Ջ. Գրինբերգի դասակարգման մեջ որոշակի տեղ է տրված լեզվական այն հատկանիշին, թե լեզուն նախադրությունների՞ն է ավելի հաճախ դիմում, թե՞ հետադրություններին և ըստ այդմ էլ տվյալ լեզուն մտնում է P_r կամ P_o խմբի մեջ. անհրաժեշտ է պարզել հայերենի կապերի տարածվածության և բաշխման աստիճանը:

«Նախադրությա՞նը, թե՞ հետադրությանն է նախապատվություն տա-

լիս հայերենը»—գրել է Ն. Մելիքյանը (ԿԲ. 130) և ապա բերել առանձին-առանձին նախադրությունների և հոդրությունների սահմանափակ թվով ցանկեր ըստ զանազան տեքստերում ունեցած հաճախականության (հիմք ունենալով Բ. Ղազարյանի «Ժամանակակից հայոց լեզվի հաճախականության բառարանը»)։ Բերված ցանկերը եթե համեմատելու լինենք Գ. Ջահուկյանի կազմած ցանկերի հետ (ԼԲ. 326—327), իսկույն կպարզվի, որ Ա. Մելիքյանինը պակասավոր ցանկեր են. ընդամենը 6 նախադրություն՝ 26-ի դիմաց և 22 հոդրություն՝ 63-ի դիմաց։ Այդուհանդերձ, բերված թերի և չտարբերակված ցանկերից անդամ Ն. Մելիքյանը գալիս է այն ընդհանուր առմամբ ճիշտ եզրակացության, որ հոդրությունները թվապես շատ են և ավելի հաճախական, «թեև նախադրությունները պահպանում են իրենց սկզբունքային նշանակությունը լեզվի համակարգում» (ԿԲ. 131)։

Անշուշտ, հարկ է բերել նախադրությունների և հոդրությունների ըստ հնարավորին ամբողջական շարքերը՝ համապատասխան վիճակագրական տվյալներով (քաղած նույն բառարանից) և փորձել մեկնաբանել այդ արժեքները։ Ստորև տրվում են հայերենի նախադրությունները և հոդրությունները (արևմտահայերենում ձևաիմաստային տարբերություններ ունեցող կապերը ներկայացվում են համապատասխան նշումով)։

Նախադրություններ	Հոդրություններ	
Առանց—1703/82	*Անց—128/29*	*Անդին*[2]
Բացի—705/77	*Անցած—*	*Ասդին*[2]
Դեպի—2571/82	*Անունից*[1]	
Ընդդեմ—95/29	*Անունով*[1]	
Ըստ—1003/65	*Առընթեր—31/11*	
Ի—12/2	*Առթիվ—199/44*	
Ի դեմս—10/7	*Ասջև—709/69*	
Ի հաշիվ	*Գծով*	
Ի հեճուկս	*Դեմ—1457/77*	
Ի նշան	*Դեպքում*[1]	
Ի փառս	*Դիմաց—407/67*	
Իբրև—1217/62	*Դուրս—1917/86*	
Ինչպես—6445/87	*Հրևսից*[1]	*Սաք*[2]
Հակառակ—380/65	*Ջատ—38/20*	
Համաձայն—322/55	*Ջուգընթաց—65/21*	

Հանձին—15/11
Հանձինս
Հանուն—158/44
Հօգուտ
Մինչև—2602/83
Նախքան—101/29
Նայած
Շնորհիվ—428/53
Որպես—2213/78
Չհաշված[1]
Չնայած[1]
Ջգրու[1]
Փոխանակ *փոխարեն*[2]
Ընթացքում[1]
Ժամանակ—4841/89
Ի վար—101/14
Ի վեր—211/40
Կից—143/29
Կողմ—2810/86
Կողմից[1]
Համապատասխան—514/46
Համար—9629/85
Համեմատ—55/24
Հանդեպ—267/46
Հանդերձ—182/46
Հանդիման—23/10
Հավասար—780/69
Հետու—1676/80
Հետ—7682/86
Հետո—4244/82
Հետևանքով
Հիման վրա—146/26
Ձեռքով[1] *ձեռքեն*[2]
Ձեռքից[1]
Մասին—3881/85
Մեջ—12847/86
Միջոցին
Միջոցով *միջոցաւ*[2]
Միջև—782/55
Մոտ—3457/85
Ներս—688/72
Ներքո—82/31
Ներքև—298/50
Նկատմամբ—914/60
Նման—2699/87
Նպատակով *նպատակաւ*[2]
Շուրջ (ը) 1024/78
Ջափ—1117/80
Պատճառով *պատճառաւ*[2]

Պես—2265/69
Սկզբում[1]*—*
Վերաբերմամբ—
Վերաբերյալ—266/39
Վերջում[1]
Վերև—545/61
Վրա—8465/87
Տակ—3652/87
Տեղ—3540/87
Փոխարեն—454/71
Ուղղությամբ—
Օրոք քով[2]

Նկատելի է, որ մի շարք կապերի դեպքում չեն տրվում վիճակագրական արժեքներ, որովհետև, ցավոք, այդպիսիք ներկայացված չեն բառարանում. այսպես, օրինակ՝ կողմից հատկությունը չկա բառարանում, թեև կողմ բառի մեջ է «մտցվել» նաև կողմից-ի վիճակագրական արժեքը. չկան նաև միջոցին, միջոցով կապերի արժեքները, որոնք նույն մոտեցմամբ կարծեք «միավորվել են» միջոց-ի մեջ: Վերջապես, նույն սկզբունքով ելատակով-ը չի առանձնացվել ելատակից:

Հավանաբար, որպես ընդհանուր սկզբունք, հոլովաձևերից առաջացած կապական բառերը առանձին չեն վիճակագրվել:

Բ. Ղազարյանի հաճախականության բառարանում համար բառը ներկայացված է 9629 (85) արժեքով: Ն. Մելիքյանը իր ներկայացրած ցանկում համար հատկության համար բերում է հենց այդ արժեքը: Բայց առաջին իսկ հայացքից հարց է առաջանում, թե ո՞ր համար-ն է նկատի առնվել. չէ՞ որ համանուններ են համար գոյականը, համար կապը... Ցավոք, բառարանը տարբերակված տվյալներ չի տալիս, ուստի հայտնի չէ, թե բերված այդ «ընդհանրական» տվյալում ի՛նչ արժեք ունի կապը (չմոռանանք, որ համար գոյականն, օրինակ՝ արտահայտում է տասնյակ տարբեր իմաստներ և այսպիսով որոշապես անկարելի է ասել, թե 9629 արժեքի ո՞ր մասն է հատկացվում համար գոյականին, որը՝ կապին, նմանապես չեն տարբերված հետ կապը և հետ մակբայը (համմտ. «Հետ դառ, հետ, իգիր, հետ դառ աճիրավ» ՀԲ):

Ն. Մելիքյանը, նկատելով բառարանի այդ թերությունը, ծանոթագրության մեջ գրել է. «Դժբախտաբար, բառարանը համանունության

առկայության դեպքում (եռադրություն-գոյական, եռադրություն-ածական, եռադրություն-մակբայ) չի նշում բառույթի կոնկրետ կիրառության թիվը եռադրության դերում» (ԿԲ. 155)։ Այնուհետև Ն. Մելիքյանը, նշելով հանդերձ, որ համանուն բառույթները ցանկում նշվում են աստղանիշով, մի շարք դեպքերում բաց է թողել աստղանիշը։ Այսպես, համար բառն այդ ցանկում բերված է առանց աստղանիշի։ Առանց աստղանիշի են բերվում նաև դեմ-ը (գոյական, կապ), պես-ը (մակբայ, կապ), կից-ը (ածական, գոյական, կապ) և այլն։ Ի միջի այլոց, արևմտահայերենում կից-ը (կից տալ, կից զարնել) ամենից առաջ նշանակում է՝ ափացի (տալ)։

Ն. Մելիքյանը ըստ նվազող հաճախականության, բերված ցանկում առաջին տեղը հատկացնում է դեպի նախադրությանը (2571), այնինչ հայերենի ամենահաճախական նախադրությունն է (ըստ հենց նույն բառարանի) մինչև-ը՝ 2602։ Նմանապես զարմանք է պատճառում եռադրությունների ցանկում մեջ-ի բացակայությունը, այն դեպքում, երբ մեջ-ը ամենահաճախական կապն է հայերենում՝ 12 847։ Ցանկում բերված մինչև նախադրությունը ներկայացված է իբրև ըստ հաճախականության 5-րդ տեղը գրավող կապ (ընդամենը 369 հաճախականությամբ), այնինչ մինչև-ի հաճախականությունն է՝ 2602։ Փաստացի է, որ հայերենի եռադրությունները քանակապես երեք անգամ ավելի են նախադրություններից, սակայն եռադրությունների քանակային առավելությունը դեռևս բավարար հիմք չէ նրանց բացարձակ գերակշռություն ունենալու. այսպես՝ վեց եռադրության (անց, առնթեր, առիվ, զուգընթաց, հանդիման, ներո) ընդհանուր արժեքը կազմում է ընդամենը 528, որ զգալիորեն փոքր է միջին արժեքներով բնութագրվող բացի նախադրությունից՝ 705։ Հարկ է նշել նաև, որ երբ որևէ եռադրության արժեքը բարձրանում է 3000-ից, իսկույն կարելի է եզրակացնել, որ գործ ունենք համանունության հետ (բացառությամբ վրա, մասին կապերի)։ Այնինչ, բարձր հաճախականությամբ բնութագրվող նախադրությունները միմիայն նախադրություններ են և համանունության մասին խոսք լինել չի կարող։

Երկու գրականներում էլ, ինչպես երևում է բերված ցանկից, կապերը էական տարբերություններ չեն դրսևորում։ Միայն արևելահայերենին, կամ միայն արևմտահայերենին հատուկ կապերը պայմանավորված են ձևաքերականական առանձնահատկություններով (համմտ., Օրինակ՝ արևելահայերենին հատուկ նախադրությունները չհաշված, չնայած, կամ եռադրություններից՝ դեպում, երեսից, կողմից, ձեռով,

ձեռիից, վերջում)։ Բացի նշված ձևերից, մնացած բոլոր նախադրություններն ու նախադրությունները հատուկ են երկու գրականներին հավասարապես։ Անհրաժեշտ է նշել նաև արևմտահայերենի կապերի մի առանձնահատկությունը. որոշ կապեր արևմտահայերենում հանդես են գալիս կրկնակ, զուգահեռ ձևերով, այսպես՝ պատճառով—պատճառաւ, նպատակով—նպատակաւ։ Բերված ձևերից վերջիններն հատուկ են գրքային ոճին։ Առանձին դեպքերում արևելահայերենի գրքային ոճով բնութագրվող կապերը արևմտահայերենում պատկանում են չեզոք ոճին։ Այսպես, օրինակ՝ հանդերձ կապը արևելահայերենում «որոշ չափով գրքայնության, հնաբանության կնիք է կրում» (ՍԱբ., ԺԳՀ, 342), մինչդեռ արևմտահայերենում այն չեզոք ոճին է պատկանում։ Այդպես, արևելահայերենի ջգրուն բնութագրվում է ժողովրդախոսակցական ոճի հատկանիշներով, իսկ համապատասխան ի հեճուկս դիտվում է գրքային բառաձև, այնինչ արևմտահայերենում ի հեճուկս կապը դարձյալ պատկանում է չեզոք ոճին։

Ներկայացված 90 կապերից և կապական բառերից միայն արևելահայերենին հատուկ ձևերը ընդամենը 13-ն են, միայն արևմտահայերենին հատուկները՝ 9-ը։ Ուստի, կարելի է նշել զուտ արևմտահայերենին կամ զուտ արևելահայերենին բնորոշ կապերի սահմանափակ լինելը։

Երկու գրականների ընդհանրություններից է նաև այն, որ խիստ սահմանափակ է նաև ազատ շարադասություն ունեցող կապերի թիվը. դրանք ընդամենը վեց են՝ անկախ, բացի, հակառակ, համաձայն, շնորհիվ, սկսած (սկսեալ[2])։ Նշելով հանդերձ բերված կապերի ազատ շարադասությունը, հարկ է ավելացնել, սակայն, որ դրանք լեզուներից մեկում կամ մյուսում ունեն առավելաբար նախադաս կամ հետադաս դրծածվելու հատկությունը. այսպես, օրինակ՝ բացի, սկսած կապերը արևելահայերենում ավելի հաճախ գործածվում են նախադաս, արևմտահայերենում (բացի, սկսեալ)՝ հետադաս։

Երկու գրականների ազատ շարադասությամբ բնութագրվող իմաստային նույնարժեք զույգերի միջև առաջանում են ձևային տարբերություններ՝ հետադաս դիրքում. այսպես՝ ի հաշիվ—հաշվին[1]—հաշվույն[2], ի պատիվ—պատվին[1] և պատվույն[2], ի սեր—սիրուն և սիրույն[2]։ Այս տարբերություններն, ինչպես նշվեց, ձևաքերականական են և շատ սահմանափակ թիվ են կազմում։

Հարկ է անդրադառնալ նաև հայերենի նախադրությունների և հետ-

դրությունների գործածության մի արմատական տարբերությանը, որ նշել է Գ. Ջահուկյանը. «Եթե «նախադրություն+խնդիր» կապակցության բաղադրիչներն անփոփոխ են մնում, ապա «խնդիր+հետադրություն» կապակցության որոշ տիպեր կարող են փոփոխվել՝ հոլովվել. այս դեպքում փաստորեն հոլովվում է ոչ թե ինքը կապը որպես անկախ գոյական, ինչպես ընդունված է ասել մեր քերականության մեջ, այլ ողջ կապակցությունը» (ԼՔ. 324)։ Համմտ. գրաբարյան ի վերայ սեղանոյ անհոլովելի կապակցությունը արդի հայերենի սեղանի վրա, սեղանի վրայի, սեղանի վրայից[1]—սեղանի վրայէն[2] և այլն։ Այս երևույթը, ինչպես նշել է Գ. Ջահուկյանը, զուգահեռ ունի հին ու նոր մի շարք լեզուներում։

Պետք է նշել, որ հայերենի հետադրությունները թվային (քանակային) որոշակի առավելությամբ բնութագրվելով հանդերձ (շուրջ երկուսուկես անգամ ավելի են նախադրություններից), խոսքում (շարակարգում) բացարձակ գերակշռություն չեն ստանում։ Անտարակույս, հետադրություններն ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն, բայց վերջին շրջանում հատկապես արևելահայերենում աշխուժացում են ապրում նախադրություններից ի-ով կազմությունները՝ ի շահ, ի նպաստ, ի գին, ի պատասխան և այլն։ Անշուշտ, դրանում իր դերն ունի նաև ռուսերենի կառուցվածքային առանձնահատկությունը (մի գիծ, որ բնորոշ էր նաև հին հայերենին)։ Նախադրությունների լայն գործածությամբ է բնութագրվում նաև արևմտահայերենը։ Այս բոլորով հանդերձ, եթե Ջ. Գրինբերգի դասակարգման գծապատկերում հայերենի դիրքը ճշտելու լինենք՝ Pr, թե՞ P$_o$, պետք է նախապատվությունը տալ P$_o$ -ին, իբրև համեմատաբար ավելի տարածուն միջոցի։

Թեև SOV տիպը նույնպես խորթ չէ հայերենին, հատկապես՝ արևելահայերենին, այնուամենայնիվ մեր երկու գրականները մտնում են P$_o$—A *II* SVO խմբի մեջ։ Բնականաբար, Ջ. Գրինբերգի մեթոդի հիմնական թերությունն այն է, որ պարունակում է խիստ սահմանափակ հատկանիշներ. լեզվակառուցվածքներն ամբողջական բնութագրման ենթարկել ընդամենը մի քանի հատկանիշով, գրեթե անկարելի է։

Անկախ այդ մեթոդից, այնտեղ բավարար հստակությամբ չեն կարող արտացոլվել, թե հնարավոր ի՛նչ միջոցներից որոնք են նախընտրաբար կիրառվում տարբեր լեզուներում։ Մի խոսքով, բացարձակապես հաշվի չեն առնվում լեզվաշարահյուսական ոճաբանության տվյալները։ Ինչպես նշել է Ա. Լոսևը (ԽԲ. 221—225), լեզվաբաններն առայժմ գործ-

	I VSO	II SVO	III SOV
$P_{\circ}$—A		էստոներեն, արևելահայերեն, արևմտահայերեն	հինդի, բենգալի, տիբեթական լեզուներ
$P_{\circ}$—N		աֆրիկյան մի շարք լեզուներ	շումերերեն, ավստրալիական լեզուներ, դասական տիբեթերեն
Pr—A	նահուատլը և մի քանի այլ լեզուներ	անգլերեն, գերմաներեն, ռուսերեն	ամհարերեն
Pr—N	եբրայերեն, արաբերեն, պոլինեզիական լեզուներ	դրաբար, իսպաներեն, ֆրանսերեն	պարսկերեն, ակկադերեն

նականում լեզվի ոճական կաղապարներին քիչ ուշադրություն են դարձնում:

Ջուգադրական ոճագիտության սկզբունքների մասին խոսելիս Յու. Ստեպանովը (ԿԱ) նշել է, որ ամենից առաջ հարկ է պարզել, թե ի՛նչ հնարավորություններ ունեն լեզուները և այդ հնարավորություններից որոնք են կանոնավոր կերպով կիրառվում խոսքում: Դրանից հետո պետք է պարզել լեզուների «նախասիրությունները», նոր միայն անցնել երևույթների զուգադրությանը:

Այժմ համառոտակի անդրադառնանք շարահյուսական ոճաբանության մի քանի հարցերի: Արևելահայերենը սովորաբար նախադասության սկզբում է դնում այն բառը (անդամը), որի մասին իրազեկում է հաղորդվում: Արևմտահայերենը հաճախ ավյալ բառը (անդամը) տանում է նախադասության վերջը: Այսպես՝ Դոնեն անցած պահուն մեկեն եռն դարձավ Պիեր[2] (ՇՇ) նախադասությունը արևելահայերեն կներկայացվեր այսպես՝ Պիեր դռնից անցնելու պահին հանկարծ եռն դարձավ: Կամ՝ Այո, պիտի աղեկնա աճ[2] (ՇՇ)—Այո, նա պիտի լավանա[1]:

Բերենք մի նախադասություն ևս «Նահանջի» նույն էջից (162). «Նրբանցքին խորը, անկյուն մըն էին կծկտած երկուքը, շունչ շունչի»: Ինչպես տեսնում ենք, երկուքը ենթական գնացել է նախադասության խորքը:

Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ Լ. Բաշալյանի, Ա. Ծառուկյանի արձակ գործերից, բայց բավարարվենք մի քանի նմուշներով: Ստորև նախ տրվում են բնագրային օրինակները, ապա դրանց արևելահայ համարժեքները.

արևմտահայերեն	արևելահայերեն
Ծաղկոցի մտերիմս Խաչիկն էր: (ԱԾ)	Խաչիկը մանկապարտեզի մտերիմս էր:
Ահա ոտքի կելլե պառավը: (ԼՔ)	Պառավն ահա ոտքի կելլե:

Արևմտահայերենը սովորաբար նախադասությունը սկսում է մասնավոր հատկանիշների մատնանշումով և միայն ամենավերջում դնում այն բառը, որին հատկացվում են, վերաբերում այդ հատկանիշները: Այսպես, օրինակ՝

արևմտահայերեն	արևելահայերեն
Գնդեցիկ, ճերմակ տեսքով, փափուկ, բարի, խելացի տղա մըն էր Հովհաննես: (ԱԾ)	Հովհաննեսը գնդեցիկ, ճերմակ (սպիտակ) երեսով, փափուկ, բարի, խելացի մի տղա էր:

Հաճախ նախադասության սկիզբը են տարվում բոլոր երկրորդական անդամները, իսկ ենթական և ստորոգյալը տեղափոխվում են նախադասության վերջ: Օրինակ՝ «Սանդուղի մը տակեն, նրբանցքի մը խորեն, չես դիտեր որ հարկեն զարթուցիչ մը կճչա» (ՇՇ): Զարթուցիչ մը կճչա (ենթակա+ստորոգյալը) դրվել են նախադասության վերջում: Արևելահայերենում այդ կառույցը ավելի հաճախ կներկայացվեր շրջված տեսքով՝ նախ ենթակա+ստորոգյալ, հետո միայն մանրամասներ:

Այսպիսով, արևմտահայերենը նախադասության սկիզբն է բերում տեղի, ժամանակի և այլ պարագաները (լրացումները), այն դեպքում, երբ արևելահայերենը նախընտրում է այդպիսիք տանել նախադասության վերջ: Այսպես՝

արևմտահայերեն	արևելահայերեն
Իր ծերունի ծնողներուն և ամուրի քրոջ հետ կապրեր:	Ապրում էր իր ծերունի ծնողների և ամուրի քրոջ հետ:
Մեր աղմուկեն արթնցած էր մայրիկը:	Մայրիկը արթնացել էր մեր աղմուկից:
Հաղթական և բավարարված ելանք դուրս: (ԱԾ)	Դուրս ելանք՝ հաղթական և բավարարված:

Արևմտահայերենը նախադասության սկզբում նախընտրաբար դնում է խոսողին ավելի մոտ առարկան, հետո միայն անցնում նախադասության բուն ենթակայի մատնանշմանը: Այսպես, «Առաջին մտերիմս եղավ մեր դասարանի պզտիկ Հովհաննեսը»[2] (ԱԽ)—«Մեր դասարանի պզտիկ Հովհաննեսը եղավ իմ առաջին մտերիմը»:

Մեկ այլ օրինակ՝ «Գ. Սյունիի կյանքին ու երաժշտական գործունեության վերլուծումը կընծր ծանոթ երաժշտական ճնճղատ՝ Ռուբեն Թերլեմեզյանն» (Յ. Գույումջյան, Գ. Սյունի երաժշտագետը և մարդը): Արևելահայերենը կնախընտրեր «Ծանոթ երաժշտական ճնճղատ Ռուբեն Թերլեմեզյանը» կառույցը տանել նախադասության սկիզբը:

Թվում է, կարելի է ասել, որ արևմտահայերենի խոսքը կառուցվում է որոշ չափով «նսակենտրոն» կամ «անհատակենտրոն» (սուբյեկտիվ) սկզբունքներով՝ ամենից առաջ խոսվում է խոսողին (արտահայտվողին) մոտ (ծանոթ, հարազատ) առարկաների, անձերի և այլնի մասին:

Վերջապես, արևմտահայերենը գնում է մասնակի փաստից դեպի ընդհանուրը, այնինչ արևելահայերենը նախընտրում է միանգամից նշել կարևոր փաստը, իրադարձությունը, գործողության հեղինակին:

Վերոբերյալը ոչ թե այն մասին է, որ, ասենք, որևէ երևույթ հատուկ է միայն մեկ լեզվին և մյուսում բացառվում է: Բնավ: Ինչպես նշել է Յու. Ստեպանովը «Նշանագիտության» գրքում (95), ցանկության դեպքում մեկ լեզվի որևէ իրական ասույթ կարելի է նույն ձևով արտահայտել նաև մյուս լեզվով և հակառակը: Խնդիրը միայն նախընտրության մեջ է: Նրանցից՝ այդ լեզուներից, մեկը գերադասելիս նախընտրում է ավյալ արտահայտաձևը, մյուսը՝ այլ: Այսինքն՝ կիրառվում են լեզվառճական զանազան կառույցներ: Ասվածը ամենից ավելի բնորոշ է մեր երկու գրականներին, ուր, կարելի է ասել, ընդհանուր հայկական հնարավոր տարբերակների այլազան իրացումներով է պայմանավորվում առկա առանձնահատկությունների լիագումարը: Մեր ազգային լեզվի երկու թևերը սնունդ են ստացել մի ընդհանուր «արյունատար համակարգից»՝ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻՑ և հանդիսանում են նրա կենդանի երկու գրական վիճակները՝ պետական լեզվի աստիճանի բարձրացած ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԸ և իր գոյապայքարում, մաքառումների ճանապարհին ներկայումս նրան ապավինող ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԸ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուների ներկա զուգադրական քննությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

Հնչույթային կառուցվածք. ձայնավորական ոլորտների համեմատությամբ, բաղաձայնական ոլորտներն աչքի են ընկնում էական տարբերություններով։ Ամենից առաջ դրանք դրսևորվում են արևելահայերենի եռաշարք բաղաձայնական հակադրությունների դիմաց բաղաձայնական շարքերի երկանդամ հակադրություններով (պարզ խուլերի վերացմամբ) արևմտահայերենում։ Արևմտահայերենի համար երկշարք բաղաձայնական հակադրությունների մասին խոսելիս նկատի է առնվում գրական կանոնական մակարդակը, որովհետև արևմտահայերենի զարգացման հատկապես արդի փուլում, տարբեր լեզվատարածքների ազդեցությամբ, խոսակցական արևմտահայերենի հնչման մեջ կարելի է դնել պարզ խուլերի առկայության օրինակներ։ Արևմտահայերենում պարզ խուլերի վերացմամբ առաջացել են համանունության, նմանաձայնության լայն հնարավորություններ, թեև համանունության աստիճանը սպասվածից ցածր է։ Այդ խնդրի հետ կապված հարկ է նշել, որ հնդեվրոպական քառաստիճան բաղաձայնական համակարգից հին հայերենի համակարգին անցնելով՝ նմանաձայնության շոշափելի երևույթ չի առաջացրել։ Այդ է վկայում ակադեմիկոս Գ. Ջահուկյանի «Ակնարկներ նախագրային հայերենի» աշխատությունը։ Թեև, նախագրային հայերենի համեմատությամբ, արևմտահայերենում եռաշարքից երկշարք բաղաձայնական համակարգին անցնելիս համանունության որոշապես ավելի բարձր արժեքներ են ստացվել։

Արևմտահայերենի բաղաձայնական ոլորտում ընդհանրապես հայերենին բնորոշ ձայնեղություն-խլություն հակադրությունը ներկայացվում է շնչեղություն հատկանիշով զուգակցված, այսինքն՝ այն «մաքուր» ձևով չի դրսևորվում, ուստի արևմտահայերենի համար էական դեր չունի շնչեղություն-ոչ շնչեղություն հակադրությունը։

Երկու գրականների հնչույթային կառուցվածքների զուգադրությունը վիճարկելի է դարձնում հայագիտության մեջ առկա այն կարծիքը, որ մեր երկու գրականների հիմնական տարբերությունները դրսևորվում են հնչույթային մակարդակում և քանի գնում ենք դեպի «վերին» մակարդակները (ձևաբանություն, շարահյուսություն), տարբերությունները նվազում են: Ինչպես պարզվում է հետագա շարադրանքից, նվազ առանձնահատկություններով չեն բնութագրվում, օրինակ՝ երկու գրականների հոլովման համակարգերը, բայի խոնարհման համակարգը և այլն:

Լեզվաբանական տիպաբանական տվյալների հաշվառմամբ, մեր երկու գրականները հնչույթների քանակի, ձայնավոր-բաղաձայն հարաբերության հատկանիշներով միջին դիրք են գրավում աշխարհի լեզուների շարքում, թեև արևելահայերենի բաղաձայնական ոլորտի համեմատությամբ, արևմտահայերենի համապատասխան ոլորտն ազքատ է: Ր. Միլևսկու մեթոդի կիրառմամբ ստացած տվյալներով երկու գրականներն էլ դասվում են բաղաձայնական խմբին. նշելի է, սակայն, որ արևմտահայերենը հարաբերաբար ավելի մոտ է ձայնավորական խմբին: Եթե համակարգում եղած հնչույթային միավորների հարաբերակցությամբ դատելու լինենք, կարելի է կարծել, որ արդի հայերենի երկու վիճակները պատկանում են լեզուների ծայրահեղ-բաղաձայնական տիպին (համակարգում բաղաձայններն 80%-ից ավելի են), այնինչ լեզվի իրացված, կենդանի վիճակում այն ստանում է ընդհանրապես հայերենին հատուկ 43—57 հարաբերակցության պատկերը, որն արդեն երկու գրականները դասում է բաղաձայնական լեզուների խմբակցության մեջ ձայնավորամետ խմբին: Վիճակագրական քննությունը հաստատում է այն կարծիքը, որ համակարգում եղած բաղաձայնների տոկոսային արժեքը (83) չի համընկնում տեքստում նրանց ունեցած արժեքին (58): Համապատասխանաբար, ընդամենը 17% կազմող ձայնավորները տեքստում ստանում են շուրջ 42%-ի արժեք:

Վիճակագրությամբ պարզվել է, որ երկու գրականների հնչավիճակագրական պատկերը հիմնական գծերով նույնն է: Երկուսում էլ ամենահաճախական հնչույթներն են, ըստ նվազող հաճախականության՝ Ա—Ն—Ե—Ր: Ընդ որում ամենահաճախական առաջին յոթ հնչույթները կազմում են տեքստի շուրջ 52%-ը: Վիճակագրական արժեքների շեղումները հիմնականում կես տոկոսից փոքր են: Դա վկայում է երկու գրականների հնչույթային բնևնվածության համեմատաբար կայուն պատկեր ունենալու մասին:

Ամենահաճախական հնչույթների պատկերը խոսում է Ռ. Միլևսկու առաջարկած՝ աշխարհի լեզուների հնչույթների առաջնային շարքի օգտին, որ հատակորեն դրսևորվել է նաև հայերենում, ուր հանդես են գալիս ոչ միայն Ա—Ի—ՈՒ—է ձայնավորային հակադրությունները, այլև Ն—Ր առաջնային հնչույթային միավորները:

Հնդեվրոպական լեզուների բաղաձայն հնչույթների հաճախականության պատկերը (խուլերի գերակշռությունը ձայնեղների նկատմամբ) երկու գրականներում որոշ տարբերություններ է տալիս. ճիշտ է, ամենուրեք խուլ հնչույթներն ավելի հաճախական են, քան ձայնեղները, բայց արևմտահայերենում շնչեղ խուլերի շարքը համաչափ բաշխում ունի ձայնեղների համեմատությամբ (արևելահայերենի 15:4 հարաբերության փոխարեն շուրջ 10% արևմտահայերենում):

Ներկա քննությամբ պարզվում է նաև, որ գոյություն ունեն հաճախականության կայուն արժեքներով բնութագրվող հնչույթային ոլորտներ: Ըստ այդմ, եթե տվյալ ոլորտի միավորներից մեկը (որևէ հնչույթ) դուրս է գալիս կամ ցածր արժեքներ է ստանում, ապա նրա վիճակագրական բեռնվածությունը բաշխվում է տվյալ ոլորտի մյուս միավորների վրա:

Բաղաձայնական կապակցությունների հարցում երկու գրականները որոշակի սահմանափակումներ են դնում. ընդ որում արևելահայերենը ավելի հարուստ է բաղաձայնական կապակցություններով: Այդպիսիք արևմտահայերենում «վերացվում են» ը ձայնավորի միջամտությամբ: Որպես երկու գրականների տիպաբանական ընդհանրություն, պետք է նշել այն իրողությունը, որ նրանցում ավելի հաճախ գործ ունենք բաղաձայնական հաջորդականությունների (տարբեր վանկերի սահմաններում), քան բուն կապակցություններին հետ: Երկուսում էլ որոշակի միտում է նկատվում ձայնավորական և բաղաձայնական խմբերի համամասնական պարզեցման՝ կից վանկերի միջև բաշխելու սկզբունքով: Այդպիսով, բաղաձայնական կապակցություններից խուսափելու միտումը երկու գրականների տիպաբանական ընդհանրություններից է: Այն ավելի զորավոր է դրսևորվում արևմտահայերենում, մինչդեռ արևելահայերենում, հատկապես արդի փուլում, հայերենին բնորոշ «ավանդական» այդ օրինաչափությունը երբեմն խախտվում է: Ընդ որում, հաճախ, երբ բառավերջի դիրքում արևմտահայերենը տվյալ կապակցությունը չունի, ազդանշան կարող է ծառայել արևելահայերենում տվյալ բառի փոխառյալ լինելու (համմտ. տակտ, Օմսկ և այլն):

Բաղաձայնական սահմանափակ զուգորդումներով պայմանավորված, երկու գրականներն էլ աչքի են ընկնում հնարավոր վանկատիպերի որոշ սահմանափակությամբ: Ընդամենը ինը վանկատիպերի մեջ թեև բաց վանկատիպերը կազմում են շուրջ 33%, տեքստում նրանց գերակշռությունը բացահայտ է (երկուսում էլ այդպիսիք կազմում են 67%):

Թեև բաց վանկին նախապատվություն տալու ընդհանրապես հայերենին հատուկ ձգտումը գործում է երկու գրականներում էլ, որ հաստատվում է վիճակագրական տվյալներով, արևելահայերենում նկատվում է նաև հակառակ միտումը. զգալի թվով փակ վանկատիպերի հնարավորությունների ստեղծմամբ, հատկապես փոխառությունների ճանապարհով (հիշենք թեկուզ -իզմ, -իստ և այլ գործուն ածանցները):

Գերմանական լեզուների քննությամբ Պ. Մենցերատի և Վ. Մայեր-Էպլերի այն դիտարկումը, որ բառի երկարացմամբ փոքրանում է հընչույթներ-վանկեր հարաբերության ցուցիչը, հայերենի վրա չի տարածվում: Ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում բառի միջին երկարությունը տեքստում ավելին է, քան բառարանում (արևելահայերենի տեքստի 2,4-ի փոխարեն բառարանի 1,97 և արևմտահայերենում համապատասխանաբար 2,2-ի փոխարեն 1,89): Ընդ որում արևմտահայերենում բառի միջին երկարությունը կես տոկոսով կարճ է: Հարկ է նշել, որ մի շարք հնդեվրոպական լեզուներում առկա է հակառակ երևույթը: Հայերենի տվյալը պայմանավորված է երկու գրականների կառուցվածքում կցականության ունեցած էական դերով (հոլովման, խոնարհման ոլորտներում մասնիկավորման ունեցած վճռական նշանակությամբ): Այսպիսով, մեր երկու գրականներն էլ բնութագրվում են բառի կառուցվածքի կցականությամբ:

Ի տարբերություն արևելահայերենի, որ հիմնական գծերով պահպանում է գրաբարի հնչյունափոխության դրությունը, արևմտահայերենը ի հայտ է բերում որոշակի տարբերություններ. թեման (հատկապես հոլովման ժամանակ) հիմքը անփոփոխ պահելու ձգտումը (օրինակ՝ տուն—տուներ—տուներու և այլն):

Արևելահայերենում առկա, այսպես ասած, բարացած ձևերը արևմտահայերենում հիմնականում ենթարկվում են գործուն օրինաչափություններին (օրինակ՝ մարդիկ—մարդկանց, կին—կանայք—կանանց ձևերի փոխարեն արևմտահայերենում առկա են մարդ—մարդեր—մարդերու, կին—կիներ—կիներու ձևերը): Փաստորեն, արևմտահայերենը լեզվի քարացած դրսևորումներն աշխատում է դնել գործուն մեխանիզ-

մի տակ, այն դեպքում, երբ արևելահայերենը այդ հարցում հանդես է գալիս «ավանդապահի» դերով:

Երկու գրականների հնչաբաժի սահմանները միշտ չէ, որ համընկնում են վանկի սահմանների հետ: Պետք է նշել, սակայն, որ արևմտահայերենում բառային ամբողջությունները ավելի հստակ են առանձնացվում և հնչարտասանական տարբերակները հարաբերաբար սահմանափակ են: Թեև երկու գրականներում էլ բառը հնչյունականորեն կայուն միավոր է, այդուհանդերձ արևելահայերենում ազատ տարբերակներ թույլատրվում են ավելի լայն չափերով, քան արևմտահայերենում:

Երկու գրականներում էլ բառային շեշտը հիմնականում սահմանազատիչ դեր ունի. այն ազդանշան է բառի ավարտի և իմաստազատիչ դեր չունի: Երկուսում էլ շեշտն ընկնում է բառի վերջին վանկի վրա (ցանկով տրվող բացառություններով): Շեշտակիր և անշեշտ վանկերի միջև եղած տարբերություններն արևմտահայերենում ավելի զգալի են, քան արևելահայերենում: Տոնի փոփոխության երևույթը նույնպես արևմտահայերենում հարաբերաբար մեծ դեր ունի:

Արևմտահայի խոսքում շարույթների և ֆրազների միջև եղած դադարներն ավելի հստակ են ընդգծվում (դոնե ավելի ցայտուն են), քան արևելահայի, թեև շարույթներն երկուսում էլ հնչվում են գրեթե նույն արագությամբ: Ուրեմն, պետք է ընդունել, որ արևմտահայերենի տեմպը արևելահայերենի համեմատությամբ որոշ չափով դանդաղ է: Վերջինիս խոսքի տեմպը ունի արտասանական որոշակի առանձնահատկություններով բնութագրվող իր տարբերակները (արագ, դանդաղ). արագ տեմպի ժամանակ, օրինակ՝ դանդաղ տեմպի Ը-երի Ն հնչելը որոշակի երևույթ է. համմա. Աւամը երեկ եկավ (դանդաղ տեմպ) և Աւամն երեկ եկավ (արագ տեմպ):

Արևելահայերենի բարձրացող-իջնող հնչերանգի փոխարեն արևմտահայերենին բնորոշ են՝ բարձրացող-իջնող-բարձրացող կամ իջնող-բարձրացող հիմնական տոնի շարժման կորագծերը: Այդ նշանակում է, որ արևմտահայերենում վերջին վանկի ինտենսիվությունը զգալիորեն աճում է: Վերոհիշյալ հատկանիշներով պայմանավորված՝ արևմտահայերի խոսքը ավելի երաժշտական լինելու տպավորություն է թողնում: Դրան է նպաստում արևմտահայերենի խոսքի մեղեդույթի հարաբերաբար լայն բազմազանությամբ բնութագրվելու հանգամանքը:

Տարբեր հնչույթային քանակ ունենալով հանդերձ, երկու գրականներն ունեն նույն գրային միավորների քանակը, աննշան տարբերություններով: Ընդ որում եթե արևմտահայերենը պահպանել է գեր-

դանցապես մեսրոպյան ուղղագրությունը, ապա արևելահայերը (նկատի չունենք պարսկահայերին) որդեգրել են ուղղագրական նոր սկզբունքներ, թեև երկու գրականներում էլ ուղղագրության սկզբունքները հիմնչույթային են։

Ի տարբերություն արևելահայերենի, արևմտահայերենում գրային և հնչույթային համակարգերի զգալի անհամապատասխանություն գոյություն ունի։ Արևելահայերենի համեմատությամբ, արևմտահայերենը բնութագրվում է գրանշանային ավելուրդայնությամբ։

Բառագիտություն. *բառերի նույն շարքի առկայությունը (բառերի արտաքին կողմի նույնությունը) երկու գրականներում բոլորովին էլ չի նշանակում, թե գործ ունենք համարժեք միավորների հետ։ Այդ կարելի է հավաստել միայն բառերի իմաստային դաշտի ճշգրտմամբ։ Բնականաբար, այդ ասպարեզում ինչպես արևելահայերենի, այնպես էլ մանավանդ արևմտահայերենի բառապաշարի քննության առումով շատ բան կա անելու։*

Անվանողության ներքին միջոցներից երկու գրականներում գերիշխում է բառակազմական եղանակը (ածանցումը և բառաբարդումը)։ Բառակապակցությամբ նոր իմաստ արտահայտելու եղանակը հավելյալ կամ ծայրահեղ միջոց է երկու գրականների համար էլ։ Այնպես որ կարելի է ասել, որ ինչպես արևելահայերենում, այնպես էլ արևմտահայերենում գերիշխում է բառակազմության կաղապարների նամադրականության եղանակը, ի հակակշիռ վերլուծականության։ Անգամ դարասկզբին կիրարկվող վերլուծական մի շարք ձևեր (կիր առնել, գործ ածել) վերջին 2—3 տասնամյակի ընթացքում զարգացել են դեպի համադրականություն՝ կիրառել, գործածել և այլն։ Վերլուծական ձևերից համադրականության անցնելու հարցում արևմտահայերենը հարաբերաբար ավելի պահպանողական է։

Բառակազմության ասպարեզում երկու գրականներում էլ լայն տեղ է գրավում մասնիկավորումը, որ կցականության ցուցիչ է։ Արևելահայերենը տերմինաշինության, դիտության և տեխնիկայի բուռն զարգացման արդի փուլում ավելի հաճախ է դիմում բառաբարդման բազմանամադրական եղանակին (հմմտ. նաստոցագործիքաշինական, դիմաթվաժամանակային և այլն)։ Այդպիսով, եթե երկու գրականների համար էլ պետք է առանձնացնել բարդ բառ կառուցվածքային տիպը, ապա հարկ է նշել, որ արևելահայերենում շատ ավելի մեծ դեր է խաղում բազմանամադրական բարդության տիպը։ Բարդ բառի վերլուծական և նամադրական տիպերի զուգադրությունը երկու գրականներում ցույց է

տալիս, որ նրանցում առկա է բառակազմական տեխնիկայի ընդհանրություն. այսինքն՝ երկու գրականներից որևէ մեկում կազմված նորաբանություն-բարդությունը իր կառուցվածքային հատկանիշներով միանգամայն հարազատ է մյուսին: Բառակազմության ոլորտում ի հայտ եկած տարբերությունները գերազանցապես արդյունք են միևնույն հնարավորությունների տարբեր իրացումների (հմմտ. հեռատեսիլ, հեռացույց, հեռուստացույց, հեռացոլ և այլն):

Երկու գրականների բառաբարդման էական ընդհանրություններից է բարդ բառի վերջնային բաղադրիչի ձևաբանական-ձևակազմական կենաորոն լինելը: Այսպիսով, որոշակի է երկու գրականների բառակազմական ոլորտի բառաբարդման ընդհանուր տիպաբանություն ունենալը (արևելահայերենի հարաբերաբար ավելի հարուստ բառաբարդման դիմաց արևմտահայերենի այդ միջոցի որոշ չափով սահմանափակ կիրառությամբ):

Բառակազմական ամենալայն հնարավորություններով օժտված միջոցը երկու գրականներում էլ ածանցումն է:

Արևելահայերենի և արևմտահայերենի ածանցների ցանկի համեմատությունը հավաստում է, որ նրանք ածանցման ոլորտում գերազանցապես նույն պատկերն ունեն:

Հարկ է նշել ընդհանրապես բայերին հատուկ միջածանցման երևույթը: Երկու գրականներում էլ ածանցների ընդհանուր թվի միայն 1/10-ն է հատկացվում նախածանցներին: Այդ նշանակում է, որ երկու գրականներն էլ բնութագրվում են ածանցների վերջադասությամբ (վերջածանցներով): Վերջին շրջանում, հատկապես արևելահայերենում մասնագիտություններ և այլն մատնանշելու համար լայնորեն կիրառվում են ածանցակերպ մի շարք կազմություններ (հմմտ. -գործ, -բան և այլն), որոնք արևմտահայերենում լայն կիրառում չեն գտել պարզապես արտալեզվական պայմաններից ելնելով: Դրանով պայմանավորված, արևմտահայերենը գրեթե չի օգտվում բառակազմական այնպիսի միջոցից, ինչպիսին նապավումն է, այն դեպքում, երբ արևելահայերենը լայնորեն դիմում է հապավման միջոցին:

Այսպիսով, երկու գրականների ածանցումը և բառաբարդումը հավաստում են բառավերջի ոչ միայն բերականական, այլև բառակազմական իրազեկման կենաորոն լինելը (բառավերջում են տեղայնանում շեշտը, հոլովման և խոնարհման վերջավորությունները, որոշվում բառի խոսքիմաստային պատկանելությունը և այլն):

Բառակազմական ոլորտում արևելահայերենը շատ ավելի հակվում է համադրականության, արևմտահայերենը՝ վերլուծականության: Բառիմաստի ծավալի տեսակետից արևելահայերենը միտում է կոնկրետին, արևմտահայերենը՝ վերացականին: Բառի տրամաբանական և հուզաարտահայտչական երանգավորումների առումով՝ արևելահայերենը միտում է դեպի տրամաբանականը, արևմտահայերենը՝ հուզաարտահայտչականը:

Տերմինային արժեք ունեցող բառապաշարային շերտերի զուգադրությունը հաստատում է այն դրույթը, որ տերմինակազմության մեջ արևելահայերենը լայնորեն դիմում է ինչպես բառակերտման սեփական միջոցներին, այնպես էլ փոխառություններին, այն դեպքում, երբ արևմտահայերենը խիստ սահմանափակում է փոխառյալ բառերի մուտքը լեզվի մեջ (արտալեզվական մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ ձուլման վտանգ և այլն):

Արևելահայերենը ձգտում է տերմինների միաձևանակության և միաձևության (թեև միշտ չէ, որ դա հաջողվում է նրան), այն դեպքում, երբ արևմտահայերենում առկա է տերմինային բազմաձևության և հոմանիշության երևույթը: Այդ նշանակում է, որ նորմավորման տեսակետից արևելահայերենն ավելի կանոնավորված է:

Փոխառությունների ժամանակ երկու գրականներն էլ հենվում են փոխառու լեզվում բառի ունեցած ինչման վրա և ոչ թե գրության: Քանի որ արևելահայերենը փոխառում է սովորաբար ռուսերենից, իսկ արևմտահայերենը՝ ֆրանսերենից, առաջանում են բառաձևային (ուղղագրական, արտասանական) տարբերություններ: Դրանք հատակորեն արտացոլվում են աշխարհագրական անունների, քիմիական տարրերի և այլ կարգի անվանումների ոլորտներում:

Եթե արևելահայերենում գերակշռում են նույնագիր հոմանիշները՝ արևելահայ ուղղագրությամբ պայմանավորված (հմմտ. հոտ—հօտ, սէր—սեր և այլ բառերի միաեռակ գրությունը), ապա արևմտահայերենում գերակշռում են նույնահունչ (գրությամբ տարբեր, բայց հնչումով նույնը) հոմանիշները՝ պայմանավորված արևմտահայերենի հընչույթային կառուցվածքում կատարված հայտնի փոփոխություններով:

Գործառական ոճերը նկատի ունենալով՝ հարկ է նշել, որ արևմտահայերենի առօրյա-խոսակցական ոճը հարաբերաբար ավելի մոտ է գրական-գրավոր տարբերակին, քան արևելահայերենինը: Արևելահայերենում կարելի է խոսել գիտական ոճի գեղարվեստականից ավելի

հստակ տարբերակված, կանոնավորված դրսևորման մասին, այն դեպքում, երբ արևմտահայերենում այն որոշակի սահմանափակությամբ հանդես գալուց բացի, ունի նաև գեղարվեստական ոճին հատուկ մի շարք հատկանիշներ։ Գործառական ոճերը համեմատաբար ավելի հրաստակ տարբերակվածություն ունեն արևելահայերենում։

Ձևաբանություն. երկու գրական լեզուների հիմնական տարբերությունները ի հայտ են գալիս ոչ թե քերականական կարգերի առկայության կամ բացակայության խնդրում, այլ միևնույն քերականական կարգի ծավալի (ընդգրկման) սահմաններում, ենթակարգերի թվի հարցում և այլն։ Այսպես, Ի հոլովման առկայությունը երկուսում էլ դեռևս չի նշանակում, որ նրանց բեռնվածությունը, գործառույթները նույնն են, քանի որ, եթե արևելահայերենում անունների գերակշիռ մասը եզակի թվում ենթարկվում է այդ հոլովման, իսկ հոգնակիում բոլոր հոլովումների պատկանող բառերն անցնում են նույնպես Ի հոլովման, արևմտահայերենում գործում է այլ օրինաչափություն՝ հոգնակի թվում բոլոր հոլովումների պատկանող բառերն անցնում են Ու հոլովման։ Այսինքն՝ հոգնակի թվում արևելահայերենի բացարձակ Ի հոլովմանը հակադրվում է արևմտահայերենի նույնպես բացարձակ Ու հոլովումը։

Եթե նկատի ունենանք այն, որ ինչքան ձևաբանական հոմանիշները շատ են, այնքան լեզուն քիչ է կանոնավորված, ապա կարելի է ասել, որ այդպիսիք հարաբերաբար ավելի շատ են արևմտահայերենում (հմմտ. առնի—տան, ջուրռա—ջրրոս և այլն)։ Դա պայմանավորված է մասամբ նաև հետևյալ հանգամանքով. արևմտահայերենը շատ ավելի մոտ է միջին հայերենին, իսկ վերջինս աչքի է ընկնում քերականական հոմանշության «առատությամբ»։

երկու գրականներում էլ գերիշխում է արտաքին թեումը. հոլովական վերջավորություններն ավելանում են հիմքի վերջից։ Ըստ այդմ, երկուսում էլ կցական հոլովական ձևերը կարելի է դիտել առաջնային ձևեր, իսկ ներքին թեքման ձևերը՝ երկրորդային կամ «մնացորդային», իբրև ժառանգություն լեզվի զարգացման նախորդ շրջաններից։

Դրաբարից մնացած, այսպես ասած, «նստվածքային» ձևերն իբրև վերապրուկային երևույթներ (հոլովական հարացույցի ամբողջականությունը կորցրած ձևեր) ավելի շատ են արևմտահայերենում (հմմտ. Գիրք ելից, վարք սրբոց *և այլն)։*

Երկու գրականների հոլովի և թվի քերականական կարգերի քննությունից միանգամայն ակնհայտ է դառնում նրանց կցական տիպարա-

ներքյամբ բնութագրվելը։ Հոլովման համակարգում երկու գրականների հիմնական տարբերությունները դրսևորվում են արևմտահայերենում ներգոյական հոլովի, անձի/իրի առման հակադրության բացակայությամբ։ Շատ ավելի խոր և էական տարբերություններ կան երկու գրականների բայի կառուցվածքում (սկսած լծորդությունների քանակային տարբերակվածությունից, մինչև բայասեռային դրսևորման եղանակները)։

Բայի համակարգն անհամեմատ կանոնավորված է արևելահայերենում։ Արդի հայերենի վերլուծականության միտումը ավելի ցայտուն է ի հայտ գալիս հենց այդ համակարգում։ Այսպես, եթե հոլովման նկարագրության ժամանակ կարելի է մնալ ներական բառի սահմաններում, ապա բայական համակարգի պատկերը տալու համար անհրաժեշտ է դուրս գալ համապրական բառի սահմաններից։ Թեև ինչպես արևելահայերենն, այնպես էլ արևմտահայերենը բնութագրվում են վերլուծական ձևերի ղգալի կշռով, այնուամենայնիվ արևմտահայերենն ավելի հակված է համադրականության (հմմտ., օրինակ, ներկայի կազմության համադրական եղանակը՝ կ'երթամ, կ'ըլնեմ և այլն, արևելահայերենի գնում եմ, աճում եմ ձևերի հետ)։

Արևելահայերենի երկու լծորդությունների (–ել, –ալ) դիմաց արևմտահայերենում առկա են չորսը՝ –ել, –իլ, –ալ, –ուլ։ Հարկ է նշել նաև, որ արևմտահայերենում աչքի է ընկնում լծորդությունների զուգահեռ ձևերի քանակով և տիպային բազմազանությամբ (հմմտ. ծորիլ, ծորալ, ծորել)։

Բայի սեռի հարցում արևելահայերենի հարաբերաբար կանոնավոր և հետևողական պատկերի դիմաց (հմմտ. արևելահայերենում հատուկ կրավորանիշ ածանցի շնորհիվ հստակ ձևային հակադրությունների առկայությունը՝ գրել—գրվել) արևմտահայերենն աչքի է ընկնում հարաբերաբար բարդ և խճճված հակադրությունների պատկերով։ Ընդհանուր առմամբ սեռի քերականական կարգը երկու գրականներում էլ արտահայտվում է բայածանցման միջոցով՝ սեռային հակադրություններ ստեղծելով բայի ածանցավոր և ածանցազուրկ ձևերով։

Արևմտահայերենի դերբայների շարքը հարաբերաբար աղքատ է. բացակայում է անկատար դերբայը, սահմանափակ կիրառություն ունի հարակցական դերբայը։ Արևմտահայերենի առանձնահատկություններից է ներգործական սեռի բայերի համար հարակատարի համապատասխան ձևեր ունենալը (հմմտ. բերած եմ, տեսած եմ, արևելահայերենի բերել եմ, տեսել եմ ձևերի փոխարեն)։

Արևմտահայերենին հատուկ է անորոշ դերբայի ցուցաստացական հոդով հոգնակի ձևերի խիստ տարածվածությունը (հմմտ. խնդալնիս, բերելնիս և այլն), որ ինչ-որ չափով արտահայտվում է խոսակցական արևելահայերենում, բայց ոչ գրականում:

Որպես երկու գրականների միջև եղած էական տարբերություն, պետք է նշել, որ եթե արևելահայերենում կ(ը) և պիտի եղանակիչները դեր ունեն եղանակների կազմության մեջ, ապա արևմտահայերենում, ընդհակառակն, այդ մասնիկները խոնարհման հարացույցում ժամանակային ձևեր են կազմում՝ կը-ն ներկայի և անկատարի, պիտի-ն՝ ապառնի ժամանակի: Այսպիսով, միևնույն ձևական մասնիկներն երկու գրականներում միանգամայն տարբեր գործառություններով են բնութագրվում. արևելահայերենում՝ եղանականիշ, արևմտահայերենում՝ ժամանականիշ: Եթե արևելահայերենում ժամանակային տարբերությունները դրսևորվում են վերջավորությունների միջոցով, ապա արևմտահայերենում այդպիսի դեր ստանձնում են կ(ը), պիտի նախամասնիկները:

Երկու գրականներում էլ բայաձևերի դիրքային տարբերակները զուգադրաբար կապվում են լծորդ ձայնավորների հետ:

Բայի ժամանակային ձևերի ոլորտում արևմտահայերենն ունի շարունակական ներկայի ձև (հմմտ. կու գամ կոր), որ բացակայում է արևելահայերենում: Թեև վիճարկելի է եղել այդ ժամանակաձևի առկայությունը գրական արևմտահայերենում, բայց ներկայումս իրողությունն այն է, որ շարունակական ներկայի ձևերը լայնորեն հանդես են գալիս գրական լեզվում:

Այնտեղ, ուր արևելահայերենը նախընտրում է վաղակատար ժամանակը (գնացել եմ), արևմտահայերենը լայնորեն կիրառում է հարակատարի ձևերը (գացած եմ):

Երկու գրականների եղանակների արտահայտության պլանների զուգադրությունը վկայում է, որ արևելահայերենի վերլուծականության դիմաց արևմտահայերենը միջակա դիրք է գրավում վերլուծական և համադրական լեզուների շարքում:

Հարկ է նշել նաև, որ բայական համակարգում երկու գրականների շեղումներն անգամ հիմնական գծերով համընկնում են, որ ի վերջո պայմանավորված է, անշուշտ, լեզվական մեկ աղբյուրից սերված լինելով:

Երկու գրականների բայի գլխավոր ձևային տարբերությունները

տեղայնանում են բառի կենտրոնական (միջակա) մասում՝ արևմտահայերենին հատուկ ձայնավորների սղման, հիմքի փոփոխության հետևանքով և բառավերջում՝ լծորդային տարբեր բաղադրիչներով պայմանավորված։

Չքնքվող խոսքի մասերի ոլորտում երկու գրականները հարաբերաբար նվազ տարբերություններ են դրսևորում։

Երկու գրականների ձևաբանական կառուցվածքների ամբողջական զուգադրությունը հանգեցնում է այն հիմնական եզրակացության, որ արևելահայերենի ձևաբանական կառուցվածքը հարաբերաբար ավելի միօրինակացված՝ կանոնավորված (նորմավորված) է, քան արևմտահայերենինը. հմմտ., օրինակ՝ մի շարք թեքույթների զուգահեռ կիրառության լայն հնարավորություններն արևմտահայերենում, գրական կանոնական մակարդակով թույլատրվող՝ հոլովման և խոնարհման զուգաձևությունները և այլն։

Երկու գրականների հնչյունական թաղանթը, լեզվական արտաքին կերպավորումը հայերենագիտության մեջ տեղ գտած այն թյուր կարծիքին կարող է հանգեցնել, որ ձևաբանական կառուցվածքում տարբերություններն ավելի քիչ են, քան հնչույթային կառուցվածքում, այնինչ պարզվում է, որ միևնույն լեզվական «ատաղձի» միջոցով (հմմտ., օրինակ՝ կ(ը), պիտի նախամասնիկների մասին ասվածը) միանգամայն տարբեր, հաճախ ուղղակի հակադիր իմաստներ են արտահայտվում։ Փաստերը բերում են այն հիմնական եզրակացության, որ ձևաբանական կառուցվածքում արևելահայերենն ու արևմտահայերենը նույն մասնիկների մեջ բոլորովին տարբեր «բովանդակություն» են դնում։ Անցյալ դարի վերջից մինչև մեր դարի 60—70-ական թթ. ընկած ժամանակաշրջանում մեր երկու գրականների ձևաբանական կառուցվածքների զարգացման ուղղվածությունը մերձեցման որոշակի գծեր ի հայտ չի բերել, ի տարբերություն բառապաշարի, ուր ակնհայտ են փոխներթափանցման միտումները։

Շարահյուսություն։ Սովորաբար հայերենի շարադասությանը նվիրված ուսումնասիրություններում շեշտվում է արևելահայերենի բառերի կարգի «մեծ ազատությունն ու ճկունությունը» (ԻՊ. 3. 413)։ Այդուհանդերձ, ընդգծվում է արևելահայերենի շարադասության միայն ոճական դեր չունենալը։ Արևմտահայերենի շարադասությունը քերականական որոշակի դեր ունի։

Երկու գրականներում էլ՝

1. Բառակապակցությունների մեջ փոփոխվող (հոլովվող, խոնարհվող) մասը գերադաս բառն է՝ ավեր առն—ավեր առան[1], ավեր առնի[2]:

2. Բառերի կարգը բառակապակցություններում ավելի կայուն է, քան բառակապակցությունների միջև կամ ընդհանրապես նախադասության մեջ:

Ընդունված է լեզուների տիպաբանական երկու խումբ ըստ այն բանի, թե որոշյալը նախորդո՞ւմ կամ հաջորդում է որոշչին: Նախորդելու դեպքում գործ ունենք. բարձրացող կարգի հետ, հաջորդելու դեպքում՝ իջնող: Երկու գրականներն էլ դասվում են որոշիչը որոշյալին նախորդող խմբին: Երկուսում էլ շարադասության մեջ կատարվող փոփոխությունը գերազանցապես ծառայում է որպես հուզաարտահայտչական միջոց: Պետք է նշել, սակայն, որ արևելահայերենի բառերի համեմատաբար ազատ կարգի փոխարեն, արևմտահայերենը բնութագրվում է շարադասության որոշակի կայունությամբ՝ պայմանավորված ձևաբանական կառուցվածքի առանձնահատկություններով (օրինակ՝ անձի-իրի առման բացակայությամբ պայմանավորված՝ արևմտահայերենում ենթական և խնդիրը որոշվում են միայն շարադասությամբ. բային նախորդողը ենթական է. համմտ. Բազրատ կը սիրե Վահագը և Վահագը կը սիրե Բազրատը): Այդպիսով, եթե արևելահայերենում թույլատրելի են SVO և OVS կառույցները, ապա արևմտահայերենում OVS-ը բացառվում է, երբ ենթական և խնդիրը անձնանիշ գոյականներ են: Այլապես արևմտահայերենում նույնպես հնարավոր է OVS տիպի իրացում. «Վերջալույսը կ'առներ ան»: Երկու գրականներում էլ՝

1. Շրջուն շարադասության հնարավորությունը համեմատաբար բարձր է կարճ նախադասություններում և նախադասության ծավալմանը զուգընթաց որոշ չափով նվազում են շրջուն շարադասության հնարավորությունները:

2. Չեզոք ոճում բացահայտյալը (ենթական) անվանական կապակցության ավարտի ազդանշան կարող է ծառայել:

3. Ինչպես առհասարակ լեզուներում, շարահյուսական նվազ կապերով բնութագրվող միավորներն ավելի ազատ են շարադասության առումով (օրինակ՝ պարագաները):

Երկու գրականների շարադասության զուգադրական քննությունն ըստ առկայական տրոհման բացահայտում է հիմնական կառույցների ընդհանրությունները. առանձին ենթատիպերի տարբերությունները պայմանավորված են երկու գրականների ձևաբանական առանձնահատուկ-

բյուններով։ Եթե չեզոք (ոճականորեն չերանգավորված) խոսքում նախադասության գծապատկերը ունենում է հետևյալ տեսքը՝ թեմա+ռեմա, ապա հուզաարտահայտչականորեն երանգավորված խոսքում այդ կարգը շրջվում է՝ ռեմա+թեմա (օրինակ՝ ձիերը դոփում են, բայց Դոփում են, դոփում են, դոփում են ձիերը)։

Թեև երկու գրականներն էլ, ըստ Ջ. Գրինբերգի դասակարգման սկզբունքների, դասվում են P_o—A *II* SVO խմբին, արևելահայերենում SVO կառույցը փոխարկելի է OVS-ի, այն դեպքում, երբ, ինչպես նշվեց, արևմտահայերենում շարադասությունն ունի որոշակի քերականական գործառույթ։

Ինչպես այլ լեզուներում, մեր երկու գրականներում էլ երկխոսությունների հարցականին հաջորդող պատասխան խոսքում թեման չի կրկնվում, զեղչվում է՝ Ո՞ւր ես գնում—Տուն...[1] և Ո՞ւր կ'երթաս... Տուն[2])։

Մեկից ավելի կախյալ բաղադրիչների շարադասությունը երկու գրականներում էլ հարաբերաբար ազատ է (օրինակ՝ մի մեծ լուսավոր փողոց—մի լուսավոր մեծ փողոց[1] և մեծ լուսավոր փողոց մը—լուսավոր մեծ փողոց մը[2])։

Շարադասության ընձեռած տվյալներով կարելի է լուծել հայերենի քերականական հետևյալ խնդիրը։ Ինչպես հայտնի է, հարակատարի մի շարք ձևեր արևելահայերենի խոնարհման համակարգից իրավամբ դուրս են դրվել՝ բայական ձևեր չդիտելով (ինչպես, օրինակ՝ պառկած է, ճված է և այլն)։ Դրանք համարժեք են դիտվում ածականական ձևերին և այդպիսի ստորոգյալները՝ բաղադրյալ։ Այդ նույն ձևերը (պառկած է, ճված է և այլն) արևմտահայերենում բայական ձևեր են և մտնում են խոնարհման հարացույցի մեջ։ Կարելի է խնդիրը պարզաբանել շարադասության միջոցով։ Բայական միավորների հետ գործ ունենալու դեպքում արևելահայերենում, իբրև կանոն, ժխտական ձևեր կազմելիս տեղի է ունենում օժանդակ բայի տեղաշարժ (ինչպես, օրինակ՝ գնում է—չի գնում, գնացել է—չի գնացել)։ Ինչ վերաբերում է հարակատարի ձևերին (պառկած է, ճված է և այլն), ապա այդպիսի տեղաշարժ չի կատարվում՝ պառկած է—պառկած չէ, ճված է—ճված չէ և այլն. ճիշտ այնպես, ինչպես բաղադրյալ ստորոգյալի դեպքում՝ խելացի է—խելացի չէ, ուսանող է—ուսանող չէ և այլն։ Ուրեմն, իրոք, տվյալ դեպքում արևելահայերենի հարակատարի ձևերը կորցրել են բայական այդ կարևոր հատկանիշը, այն դեպքում, երբ արևմտահայերենում հա-

մապատասխան հարակատարով ձևերում գործում է վերոբերյալ մեխանիզմը (այսպես՝ գացած է—չէ գացած, fնած է—չէ fնած և այլն)։

Այսպիսով, ժխտական ձևերում օժանդակ բայի տեղաշարժվելու հատկանիշը կարող է ձևական տարբերիչ հատկանիշ ծառայել բայական և ոչ բայական ձևերը դասակարգելիս։

Եթե արևելահայերենում հարցականի հնչերանգային հատկանիշից բացի փոխվում է նաև նախադասության շարադասությունը (օժանդակ բայի դիրքը) սահմանական եղանակի ներկայի և այլ ժամանակներում (օրինակ՝ ով բերել է—ո՞վ է բերել, ով գրում է—ո՞վ է գրում և այլն), ապա արևմտահայերենում այդ երևույթը բացակայում է, ինչպես բայաժամանակային կազմության առանձնահատկություններով պայմանավորված (ներկան կազմվում է կ(ը) մասնիկով, ուստի ստորոգյալի բաղադրիչների տեղաշարժի մասին խոսք լինել չի կարող), այնպես էլ օժանդակ բայի կայուն (անփոփոխ) դիրքով (ով բերեր է—ո՞վ բերեր է, ով գրած է—ո՞վ գրած է)։ Այդպիսով, արևմտահայերենում բառերի հարաբերաբար ավելի կայուն կարգով պայմանավորված, համաստատաբերիչ և հուզաարտահայտչական ավելի մեծ բեռնվածություն է ստանում հնչերանգը։ Դա էլ արևմտահայերենի խոսքին հուզաարտահայտչական ղգալի երանգավորում է տալիս։

Ձուգադրության ընթացքում բացահայտվել են շարահյուսական ոճաբանության որոշ առանձնահատկություններ։ Այսպես՝

1. Եթե արևելահայերենը նախընտրում է նախադասության իրագևկման կենտրոնական միավորը դնել նախադասության սկզբում, ապա արևմտահայերենը սովորաբար այն տանում է վերջը։ Այսպես, օրինակ՝ Խաչիկը ծաղկոցի մտերիմս էր[1]—Ծաղկոցի մտերիմս Խաչիկն էր[2]։

2. Արևմտահայերենը սովորաբար նախադասությունը սկսում է մասնավոր հատկանիշների մատնանշումով, վերջում դնելով այն բառը, որին հատկացվում, վերաբերում են այդ հատկանիշները։ Այսպես՝ օրինակ՝ Գեղեցիկ, ճերմակ տեսքով, բարի, խելացի տղա մըն էր Հովհաննես։ Արևելահայերենը նախընտրում է հակառակ դասավորումը՝ Հովհաննեսը գեղեցիկ, ճերմակ տեսքով, բարի մի տղա էր։ Կամ՝ Մեր աղմուկեն արթնցած էր մայրիկը[2]—Մայրիկը արթնացել էր մեր աղմուկից[1]. Հաղթական և բավարարված՝ ելաւ դուրս[2]—...Դուրս ելաւ[1] և այլն։

Ըստ այդմ, արևմտահայերենը նախադասության սկզբում սովորաբար դնում է խոսողին ավելի մոտ առարկան և հետո միայն անցնում

նախադասության բուն ենթակայի մատնանշմանը (օրինակ՝ Առաջին մտերիմս եղավ մեր դասարանի պզտիկ Հովհաննեսը)։ Կարելի է ասել, որ եթե արևելահայերենը նախընտրում է միանգամից, ավելի առաջ նշել կարևոր փաստը, իրադարձությունը, գործողության հեղինակին, ապա արևմտահայերենը սովորաբար գնում է մասնակի փաստից դեպի ընդհանուրը։

Ինչպես լեզվի նախորդ մակարդակներում, շարահյուսության մեջ նույնպես, բացի էական տարբերություններից, ի հայտ են գալիս ընդհանրապես հայերենին հատուկ մի շարք տարբերակներից այս կամ այն ձևին նախապատվություն տալու հետևանքով առաջացած տարբերություններ։

Առանձին մակարդակներում ահա տարբերությունները փոխկապակցված են իրար հետ. հնչույթային առանձնահատկություններով պայմանավորված՝ բառային ոլորտներում ի հայտ են գալիս որոշակի տարբերություններ, ձևաբանական կառուցվածքը «նախանշում է» շարահյուսական որոշակի առանձնահատկություններ և այլն, մի բան, որ խոսում է մակարդակների փոխկապակցվածության, լեզվի կառուցվածքի տարբեր մակարդակների համասեռության մասին։

Արևելահայ և արևմտահայ գրական լեզուները լավագույն օրինակ են այն բանի, թե միևնույն լեզվական «աստաղձը» ինչպիսի «շինության» կարելի է վերածել, ուր հիմնական տարբերությունները ոչ թե կառույցի բաղադրիչների առկայության/բացակայության մեջ են, այլ միևնույն, արտաքին նմանություն ունեցող լեզվական միավորների՝ բաղադրիչների խորքային տարբեր «լցվածության»՝ հագեցվածության մեջ։

Ահա լեզվական առանձնահատկություններն, այնուամենայնիվ, չեն ժխտում ՄԵԿ ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՎԻ՝ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ գոյությունը երկու կենդանի գրական ներկայացուցիչների հանգամանքով։

ВОСТОЧНОАРМЯНСКИЙ И ЗАПАДНОАРМЯНСКИЙ ЛИТЕРАТУРНЫЕ ЯЗЫКИ

(сопоставительно-типологическое исследование)

(Резюме)

Результаты предпринятого нами сопоставительного исследования западноармянского и восточноармянского литературных языков позволяют сделать следующие выводы.

Фонологическая система. При общей идентичности вокализма, наблюдаются существенные различия в области консонантизма. Прежде всего они заключаются в трехчленной консонантной оппозиции в восточноармянском в противоположность западноармянскому, где данная оппозиция двучленна (отсутствие чистых глухих). При этом, говоря о двучленности консонантной оппозиции в западноармянском, следует иметь в виду литературно-нормативный уровень, особенно на современном этапе развития западноармянского, так как под влиянием различных языков в разговорном западноармянском обнаруживаются случаи произношения чистых глухих. С исчезновением простых глухих в западноармянском возникли предпосылки омонимии, точнее омофонии, хотя реально степень ее развития ниже ожидаемой.

В связи с этой проблемой необходимо отметить, что с трансформацией индоевропейской четырехчленной консонантой оппозиции в трехчленную в древнеармянском языке омофония ощутимых изменений почти не претерпела. Этот факт отмечен Г. Б.Джаукяном в книге «Очерки о дописьменном периоде армянского языка».

Консонантной системе западноармянского свойственной армянскому языку в целом оппозиция по признаку «звонкости-глухости» представлена в паре с оппозицией по признаку «придыхательность-непридыхательность», то есть представлена не в чистом виде, вследствие чего для западноармянского оппозиция по призна-

ку «придыхательность-непридыхательность» не оказывается существенной.

Сопоставление фонологических систем двух литературных языков ставит под сомнение принятую в арменистике точку зрения о том, что разница между западноармянским и восточноармянским языками в основном существенна на фонологическом уровне, а на более высоких уровнях (морфологическом, синтаксическом) различия несущественны. Однако, как будет видно из последующего изложения, различия в области склонения и спряжения нельзя признать несущественными.

По данным типологического языкознания наши два литературных языка по количеству фонем и наличию оппозиций по глухости-звонкости занимают среднее положение среди языков мира. Хотя и в сравнении с консонантной системой восточноармянского, соответствующая область западноармянского окажется более бедной. Согласно результатам, полученным применением метода Т. Милевского, оба языка относятся к консонантной группе. Примечательно, однако, что западноармянский язык более близок к вокальной группе.

Если судить о соотношении единиц системы, на первый взгляд может показаться, что оба исследуемых языка в современном состоянии относятся к исключительно консонантному типу (количество согласных превышает 80%), однако, при более детальном исследовании фактической реализации в живом языке оказывается, что отношение согласных к гласным составляет 43—57%, что в целом свойственно армянскому языку и позволяет отнести оба литературных варианта к вокальнообразной группе. Статистическое исследование подтверждает мнение о том, что удельный вес согласных в тексте (58%) не соответствует общему количеству согласных в системе (83%). Соответственно небольшое количество гласных в системе (17%) реализуется в тексте с возрастанием до 42%.

Статистика выявляет приблизительно равное количественное соотношение гласных и согласных в звуковых системах обоих языков, в которых наиболее употребительными (в порядке убывания частотностей) являются фонемы *ա—ե—ը—ո*, причем наиболее частотные первые семь фонем составляют 52% текста. Величина относительной ошибки измерения не превышает преимущественно 0,5%. Это свидетельствует об относительно устойчивой функциональной нагрузке фонем в двух литературных языках. Состав наиболее употребительных фонем говорит в пользу теории Т. Милевского о наличии в звуковых системах языков мира ведущих фонем, что довольно рельефно отобразилось и в армянском, ко-

торый характеризуется ведущей позицией не только гласных Ա—Ո—ՈՒ—Է, но и сонорных Ն—Ր.

Универсальная черта консонантных фонем индоевропейских языков (преобладание глухих над звонкими) в обоих литературных языках проявляется по-разному. Если в восточноармянском глухие действительно высокочастотны, то в западноармянском мы можем говорить только о приблизительной равночастности глухих и звонких (соответственно 9,8 и 9,9%). Статистическое исследование позволяет выяснить, что оба литературных языка имеют фонетические подсистемы, которые отличаются устойчивой частотностью: если выпадает одна из фонем такой подсистемы, или ее частотность падает, то ее функциональная нагрузка распределяется между остальными членами данной подсистемы.

На сочетаемость согласных оба языка накладывают определенные ограничения, причем в восточноармянском сочетаний согласных больше. Последние устраняются в западноармянском с помощью интерконсонантного гласного Ը. Как общую типологическую черту надо выделить то, что и в западноармянском и в восточноармянском более часты последовательности согласных (особенно в пределах разных слогов), чем собственно сочетания согласных. В обоих языках наблюдается тенденция к упрощению групп гласных и согласных по принципу распределения их между соседними слогами.

Таким образом, тенденция к освобождению от скоплений согласных является общей типологической чертой двух литературных языков. Более четко эта тенденция проявляется в западноармянском, в то время как в восточноармянском—особенно на современном этапе—эта в целом традиционная для армянского закономерность иногда нарушается. При этом отсутствие данного звукосочетания в западноармянском иногда может говорить о том, что слова с указанными звукосочетаниями в восточноармянском являются заимствованными (ср. տակտ, Օմսկ и др.).

Оба литературных языка отличаются ограниченным количеством типов слогов, что обусловлено ограниченностью консонантных сочетаний.

Хотя из 9-ти типов слогов открытые составляют всего 33%, их преобладание в тексте очевидно (67%). В обоих литературных языках наблюдается свойственная в целом армянскому тенденция к открытости слога, однако статистическое исследование позволяет выявить и обратную тенденцию в восточноармянском, где образуется много закрытых слогов в основном в результате заимствований (ср., например, продуктивные суффиксы *-изм*, *-ист* и др.).

Как в западноармянском, так и в восточноармянском средняя длина слова в тексте больше, чем в словаре (в восточноармянском 2,4 в тексте и 1,97 в словаре и в западноармянском соответственно 2,2 и 1, 89), причем средняя длина слова в западноармянском короче на 0,5%. Следует отметить, что в ряде индоевропейских языков наблюдается противоположная тенденция. Данные армянского языка обусловлены существенной ролью аглютинативности как в западноармянском, так и в восточноармянском языках.

Таким образом, оба литературных языка характеризуются аглютинативной структурой слова.

В противоположность восточноармянскому, который сохраняет в основных чертах звукоизменения, характерные для грабара, в западноармянском наблюдается тенденция при склонении сохранить без изменений словоизменительную основу (տուն—տուներ—տուներու и т. д.).

Имеющиеся в восточноармянском так называемые «застывшие формы» в западноармянском подверглись действующим закономерностям. Например, вместо восточноармянских форм մարդիկ—մարդկանց, կանայք—կանանց в западноармянском выступают формы մարդեր—մարդերու, կիներ—կիներու, տուներ—տուներու. Фактически в западноармянском происходит выпрямление застывших форм, и в этом смысле восточноармянский более «традиционен».

В обоих литературных языках границы такта и слога не всегда совпадают. Однако, в западноармянском фразы произносятся более четко, а количество вариантов произношения ограничено. Несмотря на то, что в обоих языках слово является устойчивой звуковой единицей, в восточноармянском количество допустимых вариантов больше, чем в западноармянском.

В обоих литературных языках словесное ударение в основном играет роль показателя границы слова и не имеет смыслоразличительной нагрузки. Ударение закреплено на последнем слоге (за исключением случаев приводимых списков). Разница между безударными и ударными слогами более существенна в западноармянском. Изменение тона также имеет относительно большое значение в западноармянском языке.

В речи западного армянина паузы между единицами звукового потока более четки (во всяком случае выражены), чем в речи восточного армянина, хотя такты и фразы в обоих языках произносятся почти с одинаковой скоростью. Однако следует признать, что темп в западноармянском все же более медленный, чем в восточноармянском, вследствие чего в последнем наблюдаются различные варианты, характерные для быстрого и медленного темпа. Например, при быстром темпе финальный ը заменяется

—Ն (ср.: *Արամը երեկ եկավ*—медленный темп и *Արամն երեկ եկավ*—быстрый темп).

Восточноармянскому свойственна восходяще-нисходящая интонация, а западноармянский характеризуется восходяще-нисходяще-восходящей или нисходяще-восходящей интонацией основного тона. Отсюда можно сделать вывод, что интенсивность последнего слога в восточноармянском возрастает. Вышеуказанными фактами обусловлено то, что в целом слово западноармянского языка на слух более мелодично. Это привело к наличию разнообразных описаний мелодики западноармянского слова.

Имея различный звуковой состав, оба литературных языка используют для обозначения звуков одинаковое количество графем с незначительными вариациями. Если западные армяне сохранили традиционные принципы орфографии (в соответствии с принципами Месропа Маштоца), то восточные армяне (за исключением персидских армян) приняли новые принципы правописания, хотя основной принцип орфографии в обоих языках—фонологический.

В отличие от восточноармянского в западноармянском письменная и устная формы значительно различаются. По сравнению с восточноармянским западноармянский характеризуется значительной графемной избыточностью.

Лексическая система. Наличие одинаковых рядов слов (адекватность внешней структуры слов) в обоих литературных языках отнюдь не означает, что мы имеем дело с равноценными единицами. В этом можно убедиться, уточнив принадлежность слов к тому или иному семантическому полю. В этой области предстоит еще много сделать как в восточноармянском, так и в западноармянском.

Наиболее развитым способом новой номинации в языках является словообразование (аффиксация и словосложение). Употребление словосочетаний для обозначения новых понятий носит в обоих языках либо избыточный характер, либо является вынужденной мерой. Так что можно утверждать, что в восточноармянском, как и в западноармянском превалируют синтетические словообразовательные модели при факультативности аналитических. Даже употребительные в начале века аналитические модели (**կիր առնել, գործ ածել**) в последние два-три десятилетия развились в синтетические (**կիրարկել, գործածել** и т. д.). Процесс перехода аналитических словообразовательных конструкций в синтетические в западноармянском происходит значительно медленнее, чем в восточноармянском языке. В последнее время, особенно в области терминообразования, в связи с бурным научно-техническим прогрессом, восточноармянский часто прибегает к многокомпонент-

ным словосложениям (ср.: հաստոցաշինական, դիմաթվաժամանակային). В целом понятие «сложное слово» типично для обоих языков, но в восточноармянском таковые преобладают. Сопоставительный анализ сочинительных и подчинительных (как синтетических, так и аналитических) моделей сложных слов обнаруживает адекватный словообразовательный механизм обоих языков, то есть, неологизм-композит, созданый в одном из языков, вполне приемлем для другого. Различия в области словообразования в основном связаны с различными реализациями одинаковых потенций двух систем. (ср.: հետադարձույց—հետադրոշ—հետադեպ—հետադրույց и т. п.). Общей чертой в области словосложения является то, что словообразовательно-словоизменительным ядром сложения в обоих языках является последний компонент.

Таким образом, налицо общие типологические черты в области словосложения обоих языков, при высокой активности этого способа в восточноармянском и ограниченном его употреблении в западноармянском. Широкие словообразовательные возможности в обоих языках имеет аффиксация.

Сопоставление аффиксов восточноармянского и западноармянского языков позволяет сделать вывод о тождестве их аффиксальных систем.

Обоим языкам свойственно явление глагольной инфиксации. В каждом из языков лишь 1/10 всех аффиксов составляют префиксы. Это значит, что оба литературных языка характеризуются преимущественной постпозитивностью аффиксов. В последнее время в восточноармянском для обозначения лиц по профессиональным занятиям, а также в некоторых других случаях (nomina agentis вообще) широко используются суффиксоиды (ср.: *գործ, բան* и др.), которые употребляются редко в западноармянском в основном в силу экстралингвистических факторов. В силу тех же факторов заподноармянский редко использует аббревиацию, в то время как в восточноармянском количество аббревиатур все возрастает.

Таким образом финальная часть как аффиксальных, так и сложных слов в восточноармянском и западноармянском литературных языках является ядерным носителем словообразовательной и словоизменительной информации (на конец слова падает ударение, находят место личные и падежные окончания, именно по концу слова определяется частеречная его принадлежность). В области словообразования восточноармянский больше склоняется к синтетизму, а западноармянский—к аналитизму. Восточноармянский язык стремится к конкретному значению, а западноармянский—к абстрактному. В плане понятийного и эмоционально-экспрессивного содержания слова восточноармянский и запад-

ноармянский противоположны: восточноармянский стремится к понятийности, а западноармянский—к эмоциональности и экспрессивности.

Сравнение разных пластов терминологической лексики показывает, что восточноармянский, кроме терминообразования на базе собственных словообразовательных возможностей, очень часто прибегает к заимствованиям, в то время как западноармянский их избегает (что обусловлено рядом экстралингвистических факторов). В восточноармянском наблюдается стремление к унификации терминов, их однозначности (хотя не всегда это удается), западноармянский, напротив, характеризуется многозначностью терминов. Это свидетельствует о том, что восточноармянский является языком более нормированным и упорядоченным. При заимствовании оба языка ориентируются на звучание того или иного слова в языке—источнике, то есть транскрибируют заимствованное слово.

Восточноармянский преимущественно заимствует из русского языка, а западноармянский—из французского. При заимствовании из разных источников в обоих языках возникают орфографические и орфоэпические несоответствия. Это явление с наибольшей полнотой отражается при заимствованиях в области географических имен и названий химических элементов. Если в восточноармянском превалируют омографы (ср.: ֆոտո—ֆոտո, ուբր—ուբր), то в западноармянском, в силу традиционной орфографической системы, преобладают омофоны (ֆոտո—ֆօտօ, ուբր—ուբր).

Относительно функциональных разновидностей следует отметить, что обиходно-разговорный стиль западноармянского намного ближе письменно-литературному варианту, чем разговорный стиль восточноармянского к его нормированному варианту.

Можно говорить о нормированности и многообразии научного стиля в восточноармянском, в то время как соответствующие в западноармянском не только ограничены узкими сферами употребления, но и обладают некоторыми свойствами, которые присущи художественному стилю. Таким образом, функциональные стили в восточноармянском более дифференцированы.

Морфологическая система. Различия в двух языках на уровне морфологии заключаются не в наличии или отсутствии тех или иных морфологических категорий, а в объеме и охвате грамматических категорий, их границ, количестве подсистем и т. д. Так, наличие в обоих языках склонения на *h* еще не является свидетельством их одинаковой функциональной нагрузки и употребительности. Если в восточноармянском большинство имен в единственном числе относятся к данному склонению, а слова, относящиеся к другим склонениям, во множественном числе также скло-

няются по данному образцу, то в западноармянском действует другая закономерность—во множественном числе все слова, относящиеся к разным склонениям, переходят в склонение на *ՈՒ*. То есть в восточноармянском абсолютному склонению на *Ի* имен во множественном числе в западноармянском противопоставлено такое же абсолютное склонение на *ՈՒ*. Имея в виду, что большое количество морфологических вариантов означает низкую нормированность языка, отметим обилие таких вариантов в западноармянском (ср.: **տուճի—տաճ, ջուրտ—ջրտ** и т. п.). Отчасти это объясняется тем, что западноармянский очень близок к среднеармянскому, который характеризовался сильным развитием грамматической синонимии, что отмечено в арменистике с достаточной четкостью.

Обоим литературным языкам свойственна внешняя флексия, то есть падежные окончания непосредственно присоединяются к соответствующим основам. В соответствии с этим можно считать агглютинирующие типы склонения первичными (для современного этапа развития двух литературных языков), а типы, характеризующиеся внутренней флексией—вторичными или остаточными, доставшимися в наследство от предыдущих этапов развития языка. Таких остаточных типов сравнительно больше в западноармянском (ср.: **գիրք եղից, վարք սրբոց** и т. д.). Агглютинативная характеристика двух литературных языков подтверждается сопоставительным исследованием их грамматических категорий падежа и числа. Если основные различия систем склонения в западноармянском сводятся к отсутствию местного падежа и отсутствию оппозиции «лицо—не лицо», то различия глагольных систем гораздо более существенны.

Система глагола гораздо нормированнее в восточноармянском. Именно в пределах этой системы наиболее четко проявляются агглютинативные тенденции современного армянского языка. Так, если при описании системы склонений можно ограничиться данными в пределах синтетического слова, то при выяснении полной картины глагольной системы этого явно недостаточно. И хотя оба языка характеризуются превалированием аналитических форм, западноармянский все же в большей мере склоняется к синтетизму (ср.: **կ'երթամ, կ'ընեմ** с восточноармянскими формами **գնում եմ, անում եմ**).

Вместо двух видов окончаний инфинитива (*ել, ալ*) в восточноармянском, в западноармянском имеем четыре: *ել, իլ, ուլ, ալ*. Следует отметить, что западноармянский характеризуется параллельным употреблением данных окончаний с той же глагольной основой (ср.: **ծորիլ—ծորալ—ծորել**).

В области глагольного залога вместо регулярной и последо-

вательной системы восточноармянского языка (ср. наличие в восточноармянском оппозиции действительного и страдательного залогов, благодаря специализированному суффиксу -վ: գրել—գրվել), в западноармянском имеем сравнительно нерегулярные и непоследовательные оппозиции. В целом грамматическая категория залога в обоих литературных языках выражается с помощью глагольных суффиксов. Залоговая оппозиция создается противопоставлением суффиксального и бессуффиксного глагола.

Система причастий западноармянского относительно бедна: отсутствуют причастия настоящего времени несовершенного вида (*գրում, կարդում*). Кроме того, в западноармянском активно употребляются формы прошедшего результативного времени (*բերած եմ, տեսած եմ*), а восточноармянский предпочитает формы прежде-прошедшего времени (*բերել եմ, տեսել եմ*).

Для западноармянского характерно активное употребление неопределенного причастия с указательно-притяжательным послелогом во множественном числе (ср.: *խնդալնիս, գրելնիս* и т. д.). Эти формы в какой-то мере представлены и в восточноармянском, но характерны лишь для разговорной речи.

Как существенную контрастивную черту двух языков следует выделить роль модальных частиц *կ(ը-)* и *պիտի* в образовании наклонений в восточноармянском и образование с их помощью временных форм в западноармянском (с помощью *կ(ը)*—настоящее и несовершенное, *պիտի*—будущее время). Таким образом, одни и те же морфемы имеют разную функциональную нагрузку: в западноармянском они образуют время, а в восточноармянском—наклонение. Если в восточноармянском время выражается с помощью окончаний, то в западноармянском такими показателями являются морфемы *կը* и *պիտի*.

В обоих литературных языках варианты личных глагольных форм преимущественно связаны с гласными, получающими наращение *(ն)*.

В западноармянском есть продолженное настоящее время (*կու գամ կ՚ըլլայ*), которое в восточноармянском отсутствует. Существование этой временной формы как литературной нормы оспаривалось, однако сейчас продолженное настоящее довольно активно употребляется в современном западноармянском языке.

Там, где восточноармянский предпочитает давнопрошедшее время (*գնացել եմ*), западноармянский употребляет прошедшее результативное (*գացած եմ*).

Сопоставление плана выражения изъявительного наклонения двух языков свидетельствует об аналитизме восточноармянского языка, в то время как западноармянский занимает срединное положение между аналитическими и синтетическими языками.

В обоих литературных языках главные видовые различия глаголов локализованы в центральной (внутренней) части слова (вследствие свойственных западноармянскому выпадений гласных, изменений основы) и в финальной части благодаря различным наращениям.

Различие в области неизменяемых частей речи в двух литературных языках незначительно.

Полное сопоставление морфологических систем двух литературных языков позволяет заключить, что восточноармянский в этом плане является языком более упорядоченным, нормированным, регулярным. Ср., например, наличие в западноармянском ряда флексий, которые могут употребляться как допустимые литературной нормой варианты, параллелизм типов склонений и спряжений и т. д.

Особенности фонетических систем двух языков и внешнее языковое оформление могут на первый взгляд подтвердить мысль о том, что различия в области морфологии менее существенны, чем в области фонетики и фонологии (мысль, которая довольно распространена в армянском языкознании). Между тем выясняется, что одно и то же «общее» языковое средство выражает различные, подчас противоположные значения (ср., например, все, что было сказано выше о морфемах *կ(ը-)*, *պիտի*). Сказанное подтверждается таким обилием примеров из двух наших литературных языков, что позволяет прийти к заключению, что западноармянский и восточноармянский на грамматическом уровне, широко используя характерные для армянского в целом основы и аффиксы—т. е. морфемы, часто придают им разное содержание, и это приводит к тому, что под внешне одинаковыми системами скрываются функционально различные единицы. Именно это ставит под сомнение положение о том, что различия между восточноармянским и западноармянским ограничены лишь их фонетической структурой.

Синтаксис. В исследованиях, посвященных порядку слов в армянском, обычно отмечают «бóльшую свободу и гибкость» порядка слов в восточноармянском (*ԽԲ, 3*, 413). Вместе с тем, если для восточноармянского указывают лишь то, что порядок слов важен не только с точки зрения стилистики, то для порядка слов западноармянского следует безоговорочно признать определенные грамматические функции. В обоих литературных языках 1) в составе словосочетаний склоняемая и спрягаемая часть является опорной (*ավեր տուն—ավեր տան*[1]*—ավեր տունի*[2] и т. д.); 2) порядок слов в пределах словосочетания более устойчив, чем между словосочетаниями и в предложениях. В соответствии с позицией определяющего по отношению к определяемому языки принято под-

разделять на две типологические группы. В случае препозиции налицо восходящий порядок, в случае постпозиции—нисходящий. В этом смысле оба литературных языка относятся к препозитивной группе, т. е. характеризуются восходящим порядком. Изменение порядка слов в обоих литературных языках преимущественно является экспрессивно-эмоциональным средством. Следует отметить, однако, более устойчивый порядок слов западноармянского, что обусловлено его определенными морфологическими особенностями (вследствие отсутствия категории «лицо—не лицо», в западноармянском подлежащее и дополнение определяются в соответствии с порядком слов—подлежащее всегда предшествует глаголу: ср., *Բագրատը կը սիրե Շուշը և Շուշը կը սիրե Բագրատը).*

Таким образом, если в восточноармянском допустимы модели SVO и OVS, то в западноармянском последняя исключается при одушевленности субъекта и объекта. В других случаях тип OVS возможен. *«Վերջալոյսը կ'ատեր ան»:*

В обоих литературных языках; 1) обратный порядок слов (VS вместо SV) больше характерен для коротких предложений и реже встречается в распространенных предложениях;

2) в нейтральном стиле определяемое (подлежащее) может сигнализировать конец номинативного словосочетания; 3) позиции единиц, характеризующихся слабой синтаксической связью, как и в большинстве индоевропейских языков, более свободны (например, обстоятельств). Сопоставительное исследование актуального членения в обоих языках выявляет общность основных структурных типов. Специфичность отдельных подтипов обусловлена морфологическими особенностями двух языков. Если в нейтральной (неакцентированной речи) структура предложения строится в соответствии с моделью «тема+рема», то в экспрессивно-эмоциональной акцентированной речи наблюдается обратный порядок—«рема+тема» (например, *Ձիերը դոփում են*, но *Դոփում են, դոփում են, դոփում են Ձիերը*). Хотя оба литературных языка по Дж. Гринбергу и относятся в принципе к группе P_0A II SVO, тем не менее, как указывалось выше, в восточноармянском модели OVS, SVO взаимозаменяемы, в западноармянском же такая замена в какой-то мере грамматикализована.

Как и в других языках, диалогическая речь восточноармянского и западноармянского языков характеризуется усечением темы в предложении—ответе, если она известна из предыдущего вопроса (например, *Ո՞ւր ես գնում— Տուն*[1], *Ո՞ւր կ'երթաս...— Տուն*[2]):

Порядок слов сравнительно свободен в обоих литературных языках только в распространенных конструкциях, имеющих более одного зависимого члена (ср.: *մի մեծ լուսավոր փողոց*[1], *մեծ լուսավոր փողոց մը— լուսավոր մեծ փողոց մը*[2]):

Настоящие данные относительно порядка слов позволяют разрешить следующую проблему.

Как известно, ряд форм результатива не включается в систему спряжения восточноармянского языка, т. е. не относится к глагольным формам (например, случаи типа, *պառկած է, քնած է, բերած է* и т. п.). Эти случаи приравниваются к адъективным формам, а соответствующие сказуемые признаются составными. В западноармянском же аналогичные формы признаются глагольными и включаются в систему временной парадигмы. Вопрос проясняется, если учитывать порядок слов. В восточноармянском при отрицании происходит изменение порядка слов *(գնում է— չի գնում, գնացել է—չի գնացել)*. Что же касается форм результатива, то здесь такой перестановки не наблюдается (ср.: *պառկած է—պառկած չէ, քնած է—քնած չէ* и т. п.). Точно так, как в случае с составным именным сказуемым *(խելացի է—խելացի չէ, ուսանող է—ուսանող չէ* и т. п.*)*. Отсюда можно заключить, что данные формы результатива в восточноармянском действительно утеряли черты глагольных форм, в то время, как в соответствующих формах результатива в западноармянском глагольный «механизм» продолжает действовать *(գացած է—չէ գացած, քնած է—չէ քնած, բերած է—չէ բերած* и т. п.).

Таким образом, изменение порядка слов в отрицательных конструкциях (перемещение вспомогательного глагола) может служить формальным критерием разграничения глагольных и именных форм.

Если в вопросительных конструкциях восточноармянского языка (кроме изменения интонации) меняется порядок слов в связи с перемещением вспомогательного глагола в настоящем времени изъявительного наклонения и в других временах (например, *ով բերել է—ո՞վ է բերել, ով գրում է—ո՞վ է գրում, ով ուզում է—ո՞վ է ուզում* и т. п.), то в западноармянском данное явление отсутствует, что связано как с особенностями образования времен (настоящее время образуется с помощью частицы *կ(ը)-կու*, вследствие чего о перемещении частей не может быть и речи), так и с неизменяемой позицией вспомогательного глагола. Более устойчивым порядком слов обусловлено то, что в западноармянском интонация имеет смыслоразличительную и экспрессивно-эмоциональную нагрузку. Это и приводит к большей эмоциональной окрашенности западноармянской речи.

В результате сопоставления выявлены некоторые синтаксические и стилистические особенности. Так, если восточноармянский предпочитает препозицию центральной информативной еди-

ницы предложения, то в западноармянском эта единица обычно выступает в конце предложения. Например, *Աչէիկը ծաղկոցի մտերիմ էր*[1]—*ծաղկոցի մտերիմը Աչէիկն էր*[2]:

В западноармянском предложение обычно начинается указанием на частные особенности, а слово, к которому эти особенности относятся, ставится в конце предложения (например, *Դեղեցիկ, ճերմակ տեսքով, բարի, խելացի տղա մըն էր Հովհաննես*): В восточноармянском, предпочтительнее обратный порядок: *Հովհաննեսը գեղեցիկ, ճերմակ տեսքով, մի բարի տղա էր*): Или: *Մեր աղմուկեն արթնցած էր մայրիկը*[2] —*Մայրիկը արթնացել էր մեր աղմուկից*[1], *Հաղթական և բավարարված ելանք դուրս*[2] —*Դուրս ելանք հաղթական և բավարարված*[1]:

Вследствие этого в западноармянском в начале предложения обычно выступает предмет наиболее близкий говорящему и только после этого указывается собственно подлежащее данного предложения (например, *Առաջին մտերիմս եղավ մեր դասարանի պզտիկ Հովհաննեսը*):

Можно утверждать, что восточноармянский в начале предложения предпочитает сразу указать факт, действие, о котором будет идти речь, либо действующее лицо; в противоположность этому западноармянский движется от частного к общему.

Как и на других языковых уровнях, на синтаксическом уровне кроме существенных различий выявляются различия, которые обусловлены выбором разных вариантов, свойственных в целом армянскому языку. Кроме того, под внешне похожими соответствиями часто скрываются различные содержания.

Различия на каждом из исследованных уровней тесно взаимосвязаны: определенные *различия* на словарном уровне обусловлены фонологическими *различиями,* морфологическая структура обусловливает ряд синтаксических особенностей и т. д.—все это говорит в пользу языкового изоморфизма.

Западноармянский и восточноармянский литературные языки—наилучший пример того, какое оформление может получить одна и та же языковая система, когда основное различие заключается не в наличии или отсутствии каких-то структурных единиц, а в разном их «наполнении» и функциональной нагрузке при внешне почти одинаковом наборе этих единиц.

Существующие языковые особенности тем не менее не отрицают существования *одного национального литературного армянского языка* с учетом двух его живых проявлений (вариантов).

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ ՍՏ

Ց Ա Ն Կ

ՆՇՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ*

Ա Աբրահամյան Ա., *Բայը ժամանակակից հայերենում, հ. 1, Երևան, 1962։*

Բ Աբրահամյան Ս., Վերդյան Բ., Քոսյան Վ., *Հայերեն լեզվի դասագիրք, Երևան, 1966։*

Գ Աղայան Է., *Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976։*

Դ Աղայան Է., *Գրաբարի քերականություն, Սինխրոնիա, 1Ա, Երևան, 1964։*

Ե Աղայան Է., *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ս., 1967։*

Զ Աճառյան Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 1—6, Երևան, 1953—1971։*

Է Անեմյան Վ., *Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1972։*

Ը Այտընյան Ա., Զալըխյան Վ., *Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866։*

Թ Անթոսյան Ս., *Խոնարհման համակարգի զարգացման ընթացքը, Հայոց լեզվի պատմական քերականություն, Երևան, 1974։*

Ժ Ասատրյան Մ., *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, գիրք Ա—Բ, Երևան, 1973—75։*

ԺԱ Ավետիսյան Տ., *Ժամանակակից հայոց լեզվի բառի կառուցվածքը, Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1975։*

ԺԲ Բեղիրյան Պ., *Ժամանակակից հայոց լեզվի դարձվածաբանություն, Երևան, 1973։*

ԺԳ Գալշոյեան Հ., *Նոր քերականություն արդի հայերեն լեզվի, Իսթանպուլ, 1958։*

ԺԴ Գույումճյան Մ., *Ընդարձակ բառարան հայերեն-անգլիերեն լեզվի, Բեյրութ, 1970։*

ԺԵ Իլյան Ս., *Ածանցները ժամանակակից հայերենում, Ե. 1963։*

ԺԶ Թոխմախյան Ռ., *Ժամանակակից հայոց լեզվի բառային շերտի բնույթը, Երևան, 1972։*

ԺԷ Թոխմախյան Ռ., *Հայերենի շեշտաբանությունը, Երևան, 1983։*

ԺԸ «*Լեզվի և ոճի հարցեր*», պրակ 3, Երևան, 1975։

ԺԹ «*Լեզվի և ոճի հարցեր*», պրակ 4, Երևան, 1977։

Ի Խաչատրյան Ա., Թոխմախյան Ռ., Ջահարյան Հ., *Հայերենի խոսքի տեմպը, «Վրաբեր հասարակական գիտություններին», 1974, № 6։*

* *Արդի հայերենին նվիրված ուսումնասիրությունների լիակատար ցանկը տեղի սղության պատճառով չի ներկայացվում։*

ԻԱ Ալպաթյան Ֆ., Բառարան-տեղեկատու. Նոր բառեր և իմաստներ, Երևան, 1982։
ԻԲ Ղազարյան Բ., Հաճախականության բառարանի մի քանի հարցեր, Լրաբեր հասարակական գիտությունների, 1967, № 9։
ԻԳ Ղազարյան Բ., Հայոց լեզվի հաճախականության բառարան, Երևան, 1983։
ԻԴ Ղարագյուլյան Թ., Ժամանակակից հայերենի ուղղախոսություն, Երևան, 1974։
ԻԵ Մելիոնյան Զ., Գործնական քերականություն արդի հայերեն լեզվի, Բեյրութ, 1970։
ԻԶ Մկրտչյան Ռ., Հայերենի բարդ բառի բաղադրիչների իմաստաբանական հարաբերությունը, Լեզվի և ոճի հարցեր, պրակ 4, Երևան, 1977։
ԻԷ Մուրադյան Մ., Բառագիտություն, Հայոց լեզվի պատմական քերականություն, Երևան, 1976։
ԻԸ Նալուցց Ռ., Համանուն բառերը ժամանակակից հայերենում, Լեզվի և ոճի հարցեր, պրակ 4, Երևան, 1977։
ԻԹ Պառնասյան Ն., Աբրահամյան Ս., Օհանյան Հ., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, 2, 3, Երևան, 1974—1979։
Լ Պետրոսյան Հ., Ակնարկներ հայերենի պատմական ձևաբանության, Երևան, 1975։
ԼԱ Պետրոսյան Հ., Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972։
ԼԲ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի տեսության հիմունքները, Երևան, 1972։
ԼԳ Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969։
ԼԴ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972։
ԽԵ Ջահուկյան Գ. Ալպաթյան Ֆ., Հայոց լեզու, Երևան, 1978։
ԼԶ Սարգսյան Ա., Դասական գրաբարի տիպաբանական բնութագիրը, Հայոց լեզվի կառուցվածքը, Երևան, 1975։
ԼԷ Սևակ Գ., Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948։
ԼԸ Տեր Խաչատուրյան Ա., Գանգրունի Հ., Տոնիկյան Փ., Հայոց լեզվի նոր բառարան, Բեյրութ, 1968։
ԼԹ Տեր Խաչատուրյան Ա., Ուղղագրական ուղեցույց, Բեյրութ, 1970։
Խ Փոսյան Վ., Հայերենի բառակապակցությունները, Երևան, 1978։
ԽԱ *Бородина М. А.*, К вопросу о различии между близкородственными языками и вариантами одного языка. Генетическое родство и структурные различия между языковыми системами..., Тезисы докладов. М., 1969.
ԽԲ *Гак В. Г.*, Сравнительная типология французского и русского языков, Л., 1977.
ԽԳ *Гамкрелидзе Т. В.*, Индоевропейская «Глоттальная теория» и система древнеармянского консонантизма (тезисы докладов). Международный симпозиум по армянскому языкознанию, 1982.
ԽԴ *Джаукян Г. Б.*, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982.
ԽԵ *Джаукян Г. Б.*, Очерки дописьменного периода армянского языка, Ереван, 1967.
ԽԶ *Катагошина Н. А.*, О современном французском произношении, М., 1974.
ԽԷ *Кацнельсон С. Д.*, Типология языка и речевое мышление, Л., 1972.
ԽԸ *Крылова О., Хавронина С.*, Порядок слов в русском языке, М., 1976.
ԽԹ *Лосев А. Ф.*, Материалы для построения современной теории художественного стиля, Контекст, 1975.

Մ *Макаев Э. А.*, Отбор констант для построения типологической грамматики германских языков,—В сб.: «Структурно-типологическое описание современных германских языков», М., 1966.

ՄԱ *Мелкумян М. Р.*, Исходные данные и статистико-комбинаторное выделение парадигмы первого морфологического типа в армянском языке,—В сб.: «Статистико-комбинаторное моделирование языков», М., 1965.

ՄԲ *Милевский Т.*, Предпосылки типологического языкознания,—В сб.: «Исследование по структурной типологии», М., 1963.

ՄԳ *Москович В.*, Глубина и длина слов в естественных языках, Вопросы языкознания, 1957. № 5.

ՄԴ Новое в лингвистике, вып. 3. М., 1963.

ՄԵ *Нордель Х.*, Инверсия и прогрессия в относительном подчиненном предложении современного французского языка, Реф. жур., 74.02.063.

ՄԶ *Пешковский А. М.*, Десять тысяч звуков. Опыт...—В сб.: «Методика родного языка. Лингвистика. Поэтика, Л. 1925.

ՄԷ *Плоткин В. Я.*, Количественный аспект фонетического моделирования словарных единиц современных германских языков,—В сб.: «Структурно-типологическое описание современных германских языков», М., 1966.

ՄԸ *Ревзин И. И.*, О соотношении структурных и статистических методов в современной лингвистике,—В сб.: «Вопросы статистики речи», ЛГУ, 1958.

ՄԹ Принципы описания языков мира. М., 1976.

Ն *Степанов Ю.*, Семиотика, М., 1971.

ՆԱ *Степанов Ю.*, Французская стилистика (сопоставления французского языка с русским). М., 1965.

ՆԲ *Степанов Ю.*, Основы языкознания. М., 1963.

ՆԳ *Трубецкой Н. С.*, Основы фонологии, М., 1960.

ՆԴ *Торсуева И. Г.*, Теория интонации, М., 1974.

ՆԵ *Туманян Э. Г.*, Армянский язык. Языки народов СССР, т. 1, М., 1966.

ՆԶ *Хинчин А. Я.*, Основные понятия математики и математ. определения в средней школе, М., 1940.

ՆԷ Martinet, Language et fonction, P., 1969.

ՆԸ *Milewski T.*, Comparaison de systèmes phonologues des langues caucasiennes et americanes, „Lingua Poznaniensis". № 5. 1955.

ՆԹ *Меликян Н. А.*, К вопросу о левосимметричности синтаксической структуры простого предложения в армянском языке,—В сб.: «Сопоставительный анализ русского и армянского языков» вып. 2, Е., 1982.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ—Ա. Բակունց
ԱԻ—Ավ. Իսահակյան
ԱՇ—Ա. Շառուխյան
ԳԶ—Գ. Զոհրապ
ԴԴ—Դ. Դեմիրճյան
ԴՎ—Դ. Վարուժան
ԵԶ—Ե. Չարենց
ԶՈ—Զ. Որբունի
Թ—Թեմա
ԺԴՀ—Ժամանակակից դրական հայերեն
ԺՀԼ—«Ժամանակակից հայոց լեզու»
ԼԲ—Լ. Բաշալյան
ԼՈՀ—«Լեզվի և ոճի հարցեր»
ՀԹ—Հ. Թումանյան
ՀՍ—Հ. Սահյան
ՆԴ—Նար-Դոս
Շ—Շիրվանզադե
ՇՇ—Շ. Շահնուր
ՊԲՀ—«Պատմա-բանասիրական հանդես»
Ռ—Ռեմա
ՍԱԲ—Ս. Աբրահամյան
ՎՎ—Վ. Վահյան
ՎՏ—Վ. Տերյան
ՎՓ—Վահրամ Փափազյան
ЯН СССР—„Языки народов СССР"

Բառավերջում դրվող Ճ նշանը ցույց է տալիս, որ այն հատուկ է արևելահայերենին, Շ-ը՝ արևմտահայերենին: Արևմտահայերենի օրինակները, բացի առանձին դեպքերից, բերվում են արևելահայ ուղղագրությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

Գլուխ առաջին

Հնչույթաբանություն և գրաբանություն 17

Գլուխ երկրորդ

Բառագիտություն 86

Գլուխ երրորդ

Ձևաբանություն 165

Գլուխ չորրորդ

Շարահյուսություն 244

Եզրակացություններ 295

Ցանկ նշված գրականության 324

Համառոտագրություններ 327

ԱՐՏԵՄ ԵՂԻՇԵԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

(Զուգադրական—տիպաբանական ֆենոմեն)

Հրատ. խմբագիր Զ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ
Նկարիչ Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ
Գեղ. խմբագիր Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՀՅԱՆ
Տեխ. խմբագիր Լ. Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրբագրիչ Ա. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ИБ № 950

Հանձնված է շարվածքի 6.06.1984 թ.։ Ստորագրված է տպագրության 28.12.1984 թ.։ ՎՖ 04753։ Չափը 60×84¹/₁₆, թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 19,06 մամ., տպագր. 20,5 մամուլ։ 19,06 ներկ. մամուլ։ Հրատ.-հաշվարկ. 18,25 մամուլ։ Տպաքանակ 2000։ Հրատ. 6150։ Պատվեր № 479։ Գինը 3 ռ. 10 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բագրամյան պող. 24 գ.։

Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 378310, ք. Էջմիածին։

Типография Издательства АН АрмССР, 378310. г. Эчмиадзин



A II 71966